

ISSN 1829-4340

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԵՐ
XIV



JOURNAL OF ORIENTAL STUDIES
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

01
2h-86
h2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

6098

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Նվիրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
հիմնադրման 50-ամյակին

№ 14



ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

*Посвящается 50-летию основания факультета востоковедения
ЕГУ*

№ 14

Ереван
Издательство ЕГУ
2018

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Dedicated to the 50th anniversary of the foundation of the faculty
of Oriental Studies of YSU*

№ 14

YEREVAN
YSU PRESS
2018

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

- Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., պրոֆեսոր (խմբագիր)
 Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
 Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
 Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
 Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
 Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
 Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
 Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
 Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
 Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
 Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
 Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
 Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
 Բեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
 Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
 Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
 Բյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)
 Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
50-ԱՄՅԱ ՀՈՒՐԵԼՅԱՆԻՆ.....* 11-12

ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Սկրտոսյան Գայանե
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿ-
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԴԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԿՅԱՆՔՈՒՄ.....* 14-27

*Ռաֆայելովա Քրիստինե
ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐԱԲ ԵՎ ՀԱՅ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ.....* 28-39

*Ikilikyan Sona
ARAB-IRANIAN RELATIONS IN THE CONTEXT
OF THE PERSIAN GULF NAMING DISPUTE.....* 40-54

ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռամազյան Սամվել
«ԲՅՈՒՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ ԵՎ XVII ԴԱՐԻ
ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....56-94

Հակոբյան Տաթևիկ
ԱԲԴՈՒԼ ՀԱՍԻԴ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԵՂՊԱՐԻ
ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՄԵԼԻՄ
ԴԵՐԻՆԳԻԼԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....95-110

Մարգարյան Տաթևիկ
ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՕՍՄԱՆՅԱՆ ՎԵՐՋԻՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՋԱՎԵՆ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆ.....111-123

Արրահամյան Մհեր
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԲՈՆԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.....124-137

Պողոսյան Նաիրա
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՑ ՀԱԼԻԴԵ
ԷԴԻՓ ԱԴԸՎԱՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ.....138-151

Մելքոնյան Ռուբեն
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐ-ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐ. ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....152-165

Գևորգյան Արշակ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ-
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԱՐՉԱՊԵՏ ԱԴՆԱՆ ՄԵՆԴԵՐԵՄԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ
ՏՐԱՊԻՉՈՆՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....166-178

Հովսեփյան Լևոն
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՂՈՒՄԸ.....179-205

Դարբինյան Հայկ
«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՋՈՒԳԱԿՅՈՒՄԸ «ԿՈՇՏ ՈՒԺԻՆ»
ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՆԱԼԻՉԱՅՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ.....206-219

Գևորգյան Արշակ
«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՈՒՄ» ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ
ԿԱՅԱՅՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ.....220-230

Հովհաննիսյան Գոռ
ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-
ԱԿԱՆՆԵՐԻՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ.....231-240

Հարությունյան Ավետիք
2015 թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ..... 241-250

Մարգարյան Հայկ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԹՈՒՐԿԱԿԱՆ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ..... 251-263

Պետունց Արեն
ԱԶԳԱՅՆԱՍՈՒԿԱՆ ՆՈՐ ՈՒԺԻ ԲԵՄԵԼԸ
ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ 2018 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ..... 264-278

Մելքոնյան Մարիամ
ԿԼՈՋ ԷՄԱՆՄԻՊԱՅԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ ՄԻՂԻ
ՀԱԹՈՒՆԻ «ԱՂԵՐՄԱԳՐՈՒՄ»..... 279-288

Պետրոսյան Ամայրա
XVIII ԴԱՐԻ ԹՈՒՐԿՄԵՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ..... 289-298

Խաչատրյան Շուշան
ՄՈՒԽԹԱՐ ԱՌԻԵՋՈՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ..... 299-314

Մովսիսյան Լիլիթ
ԱՐԴԻ ՀԱՅ ԵՎ ԱՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԼԵԶՎԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ..... 315-328

Хабидуллина Эмира *
ЛИНГВИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ПЕРЕВОДОВ
ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЫ С ТАТАРСКОГО
ЯЗЫКА НА ТУРЕЦКИЙ..... 329-335

Քոչարյան Հայկ, Գևորգյան Աննա
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ԱՅԴ
ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ
ՇԱՀԵՐԻ ՎՐԱ..... 336-356

ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Vardanyan Aharon
SOME REMARKS ON THE SOCIOLINGUISTIC
SITUATION IN XALXĀL..... 358-365

Տոնյան Արսյոյմ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ ԲՈՒՆ ԱՊԱՌՆԻ
ՏՄՄԱՆԱԿԱԶԵՎԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ..... 366-380

Բյուրջյան Հասմիկ
ՄԵՅՅԵՂ ՄՈՀԱՄՄԱԴ ԱԼԻ ԶԱՄԱԼԶԱԴԵԻ ԴԵՐԸ 19-Ը
ԴԱՐԻ ՎԵՐՋԻ և 20-Ը ԴԱՐԻ ՄԿՋՔԻ ՊԱՐՄԻՑ
ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՆՈՐԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ..... 381-392

Խաչատրյան Զարուհի
ԹՅՈՒՐԿԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՁԻԱՆՈՒՆՆԵՐԸ
ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ..... 393-402

Դավթյան Սոնա
ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ
ՊԱՐՄԿԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԲՈՒՄԱՆՎԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ..... 403-419

Կոստանյան Վահան
ԱՅՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՄՊԵԼՆԵՐԸ
ԵՎ ՑԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 420-430

Գեղամյան Աստղիկ
ՄԻՐԱՅԻՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ «ՇԱՀՆԱՄԵ»-ՈՒՄ..... 431-440

Պետրոսյան Լիանա
ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ
Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (2005-2013 ԹԹ.)..... 441-449

Կոստանյան Վահան
ԱՅՐՈՒՄԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 450-456

Брутян Ануш
ПЕРСПЕКТИВЫ РОССИЙСКО-ИРАНСКОГО
СОТРУДНИЧЕСТВА ПОСЛЕ ПОДПИСАНИЯ СВПД..... 457-471

Khorikyan Hovhannes
ON THE LOCATION OF THE NEPHTHALITES..... 472-486

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐՄԵՆ ՄԱՐԳՍԵԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
50-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ

Սիրելի արևելագետներ,
 Հարգելի բարեկամներ,

Նախ, թույլ տվեք շնորհավորել բոլորիդ այս հրաշալի հոբելյանի առթիվ:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը 50 տարեկան է: Փայլուն, հանճարեղ գիտնականներ են առնչություն ունեցել այս ֆակուլտետի հետ, այդ թվում՝ Հրաչյա Աճառյան, Գրիգոր Ղափանցյան: Ես բախտ եմ ունեցել իմ երիտասարդության, ուսանողության տարիներին հենց արևելագիտության ֆակուլտետում լսել Ջոն Կիրակոսյանի դասախոսությունները:

Արևելագիտության ֆակուլտետը ոչ միայն ակադեմիական բարձր որակ ուներ և ունի, ոչ միայն իրական ակադեմիական գիտելիք, այլև՝ յուրահատուկ ոգի: Ընդհանրապես, արևելագիտության հայկական դպրոցը փառահեղ անցյալ ունի: Հիշենք, որ Հայաստանի գիտությունների ակադեմիան 75 տարի առաջ հիմնադրվել է արևելագետի՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու կողմից:

Այսօր, երբ Հայաստանը բնականորեն ունի առաջ գնալու մեկ ճանապարհ՝ աշխարհի հետ շփվելու, համագործակցելու բաց համակարգը, արևելագիտությունը շատ ավելի խորը հասկացություն է դառնում: Մասնավորապես, ես կարծում եմ, որ այն ավանդական երեք ամբիոնները, որ ունենք՝ արաբագիտություն, թուրքագիտություն և իրանագիտություն, հավանաբար պետք է ընդլայնել: Ինձ համար արևելագիտությունը

ինքնին նաև խաչմերուկ է, որովհետև այսօրվա արևելագիտությունը չի սահմանափակվում միայն գիտական, ակադեմիական հետազոտություններով: Արևելագիտության ֆակուլտետի շրջանավարտները այսօր մեծ հաջողությամբ և՛ պետական ծառայության մեջ են, և՛ բանակում, և՛ ամենուր:

Ես հույս ունեմ, որ արևելագիտության ֆակուլտետի հիման վրա մի շարք հզոր կառույցներ կստեղծվեն: Հայաստանը կենտրոնն է Մետաքսի ճանապարհի: Հայաստանը տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկ է: Հայաստանը կենտրոնն է քաղաքական հսկայական իրադարձությունների, և Հայաստանը պետք է իր դերը ստանձնի: Այդ դերի մեջ հսկայական նշանակություն ունեն արևելագետները և արևելագիտությունն ընդհանրապես:

Թույլ տվեք կրկին շնորհավորել և լավագույն մաղթանքներս հղել բոլորիդ, բոլոր արևելագետներին, ովքեր այսօր ներկայացնում են մեր երկիրը, մեր ժողովրդին հայրենիքում և հայրենիքից դուրս:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐՄԵՆ ՄԱՐԳՍԵԱՆ**

ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մկրտումյան Գայանե՝

ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿ-
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԴԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԿՑԱՆՔՈՒՄ

Բանայի բառեր՝ հրովարտակ-պայմանագիր, մուսուլման իշխող, քրիստոնյաների իրավունքներ, հարկերի վճարում, արաբերեն ձեռագիր, Այի Մանշուր, պայմանագրի վերահաստատում, արաբական նվաճում, մուսուլմանական տիրապետություն, գլխահարկ

Մուսուլմանական տիրապետության տակ գտնվող քրիստոնյա բնակչության (զիմմի) հարաբերությունները մուսուլման իշխողների հետ դարեր շարունակ կարգավորվել են հրովարտակ-պայմանագրերի միջոցով: Վերջիններիս հիմքում ընկած է դեռևս Մուհամմադ մարգարեի օրոք Արաբական թերակղզու քրիստոնյա և այլակրոն բնակչությանը տված պայմանագրերի իրողությունը, որի մասին հիշատակում է մուսուլմանական և քրիստոնեական միջնադարյան պատմագրությունը: Արաբական նվաճումների ընթացքում էլ նվաճված երկրների բնակչությանը տրվեցին պայմանագրեր, որոնցով ամրագրվում էր նրանց վերջնական հպատակեցումը արաբական իշխանություններին և որոշվում նրանց հետագա կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունների շրջանակը: Այդ փաստաթղթերի միջուկն Ալլահի առաքյալի և նրա հաջորդների հանդուրժողականությունն էր և հովանավորությունը քրիստոնյաների նկատմամբ, որոնք մասնավորապես

ՆՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ., էլ. փոստ՝ Gmkrtumyan@ysu.am

արտահայտվեցին 632թ. Մուհամմադի կողմից Արաբական թերակղզու Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչությանը շնորհած պայմանագրում: Նշվում էր, որ քաղաքը, նրա շրջակայքը, եկեղեցիները անցնում էին Ալլահի հովանավորության տակ՝ վայելելով Ալլահի մարգարե ու առաքյալ Մուհամմադի պաշտպանությունը: Վերջինս երաշխավորում էր, որ չեն փոխվի նրանց սովորություններն ու կենսակերպը, չի հեռացվի եպիսկոպոսը՝ իր եպիսկոպոսությունից, վանականը՝ իր վանականությունից: Նաջրանցիները պարտավորվում էին վճարել հարկ՝ 2 հազար հազուստ:¹ Նշենք, որ բացի պայմանագրի այս տարբերակից, որը պահպանվել է 9-12-րդ դարերի մուսուլմանական պատմագիրների երկերում, առկա է ևս մեկ տարբերակ, որը գետեղված է անանուն «Նեստորական պատմության» մեջ, այն կազմվել է հիջրայի 265 (878-879) թվականին:

Այս տարբերակը նշանակալիորեն տարբերվում է նախորդ տարբերակից իր կառուցվածքով և ոճով: Ի տարբերություն պայմանագրի «մուսուլմանական» տարբերակի, որը նախատեսված էր միայն Նաջրան քաղաքի համար, այստեղ Մուհամմադն Ալլահի ու իր անունից պայմանագիր է կնքում բոլոր նրանց հետ, ովքեր դավանում են քրիստոնեություն: Այն կնքվում է մուսուլմանական հաջորդ սերունդների համար ևս, որպեսզի նրանք ճանաչեն քրիստոնյաների իրավունքները և վերջիններիս հովանավորեն: Այս պայմանագրում հարկի չափը սահմանվում է 4 դիրհեմի չափով, հարկերից ազատվում էին հոգևորականները, մազե հազուստ հազնողները (ձգնավոր): Արգելվում էր քրիստոնյաներին բռնի դավանափոխ անելը, խոսվում է նաև

¹ Al-Balazuri, Futuh al-buldan, Bairut, 1983, p. 71.

քրիստոնյաների ու մուսուլմանների ամուսնության մասին:² Պայմանագրի պայմանները քրիստոնաամետ են: Ըստ հետազոտողների, այս տարբերակի կազմման ժամանակագրական սահմանները ձգվում են 7-րդ դարի կեսից մինչև 9-րդ դարի առաջին կեսը:³

Արաբական նվաճումների ընթացքում էլ նվաճված քաղաքների բնակիչները գլխահարկ վճարելու պայմանով ձեռք բերեցին կյանքի, գույքի, դավանանքի ազատություն: «Գրքի ժողովրդի» նկատմամբ մուսուլմանական համայնքի պաշտպանության ու հովանավորության մասին դրույթի առկայությունը պայմանագրերում հիմնականում հեշտացրեց նվաճումների ընթացքը, երբ շատ դեպքերում բնակչությունը նախընտրում էր առանց դիմադրության անձնատուր լինել արաբներին: Այսպես, Միջագետքի, Միրիայի բնակչությանը տրված պայմանագրերում շեշտվում էր, որ արաբները չեն ավերի նրանց եկեղեցիներն ու տաճարները, ամրոցները, պայմանով, որ նոր եկեղեցիներ չկառուցվեն, բնակիչները հարկեր վճարեն, սուտ ցուցմունքներ չտան և այլն:⁴ Նշենք, որ շատ հաճախ պայմանագրերը նվաճված երկրների բնակչության հետ արաբները կնքում էին ըստ նրանց առաջարկների, փորձելով սիրաշահել նրանց, որպեսզի շրջակա քաղաքների բնակիչներն էլ շտապեին իրենք հետ պայմանագիր կնքել:⁵ Պայմանագիրը աստիճանաբար դառնում էր արաբ նվաճողների ու նվաճված բնակչության միջև

² Histoire Nestoienne (Chronique de Seert), seconde partie (II), publee et traduite par Addai Sher, Paris, 1918, p. 601-617.

³ Колесников А. Две версии договора Мухаммада с христианами Наджрана, Палестинский сборник, вып. 28(91), Ленинград, 1986, и. 32-33.

⁴ Al-Balazuri, Futuh al-buldan, p 133, al-Tabari, Tarikh al - rusul wa al - muluk, III, al-Kahira, 1962, 1/2158.

⁵ Արու Յուսուֆ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունը՝ Ս. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 110-112:

փոխհարաբերությունները կարգավորող դիվանագիտական մեթոդ, որտեղ մեծ դեր ուներ հանդուրժողականությունը այլակրոն բնակչության նկատմամբ:

637 թ. երկարատև պաշարումից հետո գրավվեց Երուսաղեմը: Քաղաքի բնակչության խնդրանքով հաշտության պայմանագիրը տրվեց անձամբ խալիֆա Օմար իբն ալ-Խաստաբի (634-644) կողմից, բնակիչները ստացան կյանքի, գույքի ապահովություն, խոստացվում էր խաչերի անձեռնմխելիություն⁶: Տեղին է նշել, որ առանձին պայմանագրեր տրվեցին Օմարի կողմից քաղաքի քրիստոնյա այլ համայնքների, ինչպես հայերին և վրացիներին: Արաբական արշավանքների նախօրյակին Երուսաղեմի հայ հոգևորականները կայուն դերակատարում ունեին քաղաքի հոգևոր և տնտեսական կյանքում, նրա իրավասության տակ էին մի շարք սրբավայրեր: Այս հանգամանքը աննկատ չէր կարող մնալ արաբ նվաճողների համար: Ինչպես փաստում են Երուսաղեմի հայ գիտականները, հայոց Աբրահամ պատրիարքը, տեսնելով իսլամի հաջողությունները Մուհամմադի օրոք 626 թ. որոշեց անձամբ գնալ իսլամի մարգարեի մոտ Մեքքա քրիստոնյաներից կազմված պատվիրակության հետ, ցանկանալով նրանցից ստանալ հայկական համայնքի անվտանգությունը ապահովող փաստաթուղթ: Մարգարեն ընդառաջեց նրա ցանկությունը, տալով իր ձեռքի դրոշմը կրող մի հավաստագիր «վասնզի ինքը անգրագետ էր»⁷: Պայմանագրում թվարկվում են Երուսաղեմի հայկական համայնքին տրված բոլոր սրբավայրերը՝ Ս. Հարություն տաճարը, Ս. Հակոբ եկեղեցին, Ձիթենյաց վանքը և այլն, որոնք հետագայում վեճի առարկա դարձան հայ և հույն

⁶ Al-Tabari, Tarikh al-rusul waal-muluk, III, 1/2405, -1/2406,

⁷ Մաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղեմի, հատոր I, Երուսաղեմ, 1931, էջ 261:

եկեղեցիների միջև: Աբրահամ պատրիարքը պարտավորվեց հարկ վճարել: Ըստ Տ. Մավալանյանի, այժմ Երուսաղեմի պատրիարքարանի դիվանատանը չկա հիշյալ հավաստագիրը, այլ կա նրա պատճենը, գրված հին թղթի վրա: Եվ երբ 637 թ. Օմարը մտավ Երուսաղեմ, նա հայկական համայնքին Մուհամմադի կողմից տված այս պայմանագիրը ամրագրեց նոր դաշնադրությամբ, համոզվելով, որ այդ փաստաթուղթը իսկական է⁸:

Հետագա դարերի ընթացքում Երուսաղեմի հոգևոր առաջնորդները ձգտում էին նման փաստաթղթերով մուսուլման իշխողներից առաձնաշնորհներ և արտոնություններ ստանալ անվտանգ դարձնելու իրենց համայնքի կյանքը: Այսպես, 1311-ին Երուսաղեմի աթոռակալ Սարգիսը (1281-1313) հայ համայնքի իրավունքները պաշտպանելու և իր դիրքերը ամրապնդելու համար դիմեց Եգիպտոսի սուլթան Նասր Մուհամմադին՝ ցույց տալով նրան Օմարի այս պայմանագիրը: Մուլթանը 1312-ին նոր հրովարտակով հաստատեց այն: 1187-ին, երբ Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինը մտավ Երուսաղեմ, նրա մոտ եկավ քաղաքի հայոց պատրիարք Աբրահամը իր հպատակությունը հայտնելու և ցույց տալու նրան Մուհամմադի, Օմարի կողմից հայերին շնորհած հրովարտակները: Սալահ ալ-Դինը հաստատեց այդ պայմանագրերը՝ նոր հրովարտակ շնորհելով հայկական համայնքին, որով հաստատվում էին վերջինիս իրավունքները մի շարք սրբավայրերի նկատմամբ⁹: Մուհամմադ մարգարեի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տված պայմանագիրը մուսուլմանա-հայկական շփումների ամենավաղ ապացույցն է և մատնանշում է հայերի՝ մուսուլմանների հետ փոխհամաձայնության գալու առաջին փուլը: Նշենք, որ Երուսաղեմի վրացական համայնքն էլ իր հերթին

⁸ Նույն տեղում, էջ 271:

⁹ Նույն տեղում, էջ 408-413:

Օմարից ստացավ իր անվտանգությունը երաշխավորող պայմանագիր:

Այսպես, արաբական նվաճումների ընթացքում քրիստոնյա բնակիչներին տրված պայմանագրերը երաշխավորում էին նրանց անվտանգ կեցությունը արաբների հովանու ներքո: 652 թ. Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի միջև կնքվեց մի դաշնագիր, որով Հայաստանը 3 տարով ազատվում էր Խալիֆայությանը հարկ վճարելուց, որի չափը 3 տարին անցնելուց հետո թողնվում էր հայերի հայեցողությանը, Հայաստանը կարող էր ունենալ 15 հազարանոց հեծելազոր, արաբները պարտավորվում էին չմիջամտել երկրի ներքին գործերին, զորք չմտցնել այստեղ¹⁰: Հայաստանը, այսպիսով, ստանում էր ներքին ինքնավարություն, հայ նախարարները թեև համարվելու էին Խալիֆայության հպատակները, սակայն պահպանելու էին իրենց հողատիրական ժառանգական իրավունքները: Խալիֆայության այս մեղմ զիջողական վերաբերմունքը հայերի նկատմամբ պայմանավորված էր նրանով, որ արաբները հակամարտության մեջ էին Բյուզանդական կայսրության հետ և ձգտում էր թուլացնել նրա ազդեցությունը Հայաստանի վրա: Այս պայմանագիրը բացառիկ նշանակություն ունեցավ հայերի համար, չնայած որ հետո Հայաստանը նվաճվեց արաբների կողմից, սակայն շնորհիվ այս պայմանագրի հայ նախարարները հետագայում էլ պահպանեցին իրենց իրավունքները, և այս պայմանագիրը նախադրյալներ ստեղծեց հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման համար, նվաճված և ոչ մի երկիր չունեցավ այն իրավունքներն ու արտոնությունները, ինչ Հայաստանը արաբական նվաճումների շրջանում:

¹⁰ Պատմության Սերեոսի, Երևան, 1979, էջ 164:

Ըստ հետազոտողների, 652-ին կնքված այս դաշնագիրը, 654-ին Դվինի բնակչությանը Հաբիբ իբն Մաալամայի տված պայմանագիրը պետք է դիտարկել որպես դաշնագրերի (սեղ) ավանդույթի շարունակություն, որի հիմքը դրվել էր դեռևս Մուհամմադի օրոք՝ նրա գործունեության մեղինյան շրջանում (622-632 թթ)¹¹: Ըստ այդ ավանդույթի՝ վերոհիշյալ բոլոր պայմանագրերը Երուսաղեմի հայկական համայնքին Մուհամմադի կողմից տված պայմանագրի վերահաստատումներն են: Այս առումով կարևորվում են նաև հայկական միջնադարյան մատենագրության մեջ հայտնի երկու հրովարտակները՝ «Մեծ մանշուրը» և հրովարտակի «Փոքր մանշուրը», որոնք ունեին կրոնական ուղղվածություն: «Մեծ մանշուրի» մասին առաջին անգամ հիշատակում է 12-րդ դարի հայ մատենագիր Մամվել Անեցին: Նա համառոտակի անդրադառնում է դեպի Հայաստան արաբական արշավանքներին և նշում, որ Մուհամմադը՝ «գլուխ վաճառականացն եգիպտացոց... հաստատեալ էր աղանդովն Արիոսի և Կերինթոսի», արգելեց սուտը և նրան հնազանդվեց տիրեզերքի մեծ մասը և «ամնոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ համարձակ ունենալ գրքիստոնեութիւն և վաճառեաց նոցա զհաւատս նոցա» որոշակի քանակով հարկ վճարելու պայմանով¹²: Քահանաները և հեծելագորը ազատվում էին հարկերից: Մամուել Անեցին չի լուսաբանում, թե ինչ հանգամանքներում է հայերին տրվել այս պայմանագիրը: Հայ գիտնականների կարծիքով Մամուել Անեցին այս փաստաթղթում Օմայյան զորավար Մուհամմադ իբն Մրվանի անունը շփոթել էր իսլամի հիմնադրի անվան հետ, և հետագայում հայ պատմագրության մեջ ամրագրվել է ավանդությունը այն մասին,

¹¹ Dadoyan S., *The Armenians in the medieval islamic world vol 1*. Sondon, 2011, p. 60

¹² Մամուել Անեցի, *Հաւաքմուտք ի գրոց պատմագրաց յաղագս զիւտի ժամանակաց անցելոց մինչև ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1983, էջ 82:*

որ Մուհամմադ մարգարեն պայմանագիր է տվել հայերին, վերջիններիս իրավունքները ճանաչելու մասին¹³: Այս պայմանագրի կետերը համապատասխանում են արաբական եվաճումների ընթացքում նվաճված բնակչությանը տրված պայմանագրերի պայմաններին, դրանք հակիրճ են և որոշակի: Մույն պայմանագիրը հայերին է տրվել հավանաբար 7-րդ դարի վերջին, 8-րդ դարի սկզբին Մուհամմադ իբն Մրվանի կողմից, որով ամրագրվում էր Հայաստանի վերջնական նվաճումը արաբների կողմից:

Մամուել Անեցին հավանաբար փորձել է վաղեմություն հաղորդել վերոհիշյալ պայմանագրին՝ վերագրելով այն ավելի վաղ շրջանին՝ մասնավորապես արաբական նվաճումների եախօրյակին: Դրանով նա փորձել է ընդհանրական իմաստ հաղորդել պայմանագրին: Այս միտումը նկատվում է նաև հետագա դարերի հայ պատմագիրների մոտ: «Փոքր մանշուր» պայմանագրի մասին հիշատակում է 14-15-րդ դարերի հեղինակ Գրիգոր Տաթևացին¹⁴: Պայմանագիրը հայերին է տրվել 8-րդ դարի սկզբին Մուհամմադ իբն Մրվան զորավարի կողմից, որի տեքստը մեզ չի հասել:

Այսպես, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում պահվում են Մուհամմադ մարգարեի և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անուններով պարսկերեն, արաբերեն, թուրքերեն մի շարք վավերագրեր և պայմանագրեր, դրանց հայերեն թարգմանությունները, որոնց անդրադարձել են հայ հետազոտողները: Այս պայմանագրերը համակարգել է հայագի գիտնական Հ. Անասյանը ըստ իրենց սկզբաղբյուրների՝

¹³ Тер-Гевондян А., *Армения и Арабский халифат*, Ереван, 1977, с. 186:

¹⁴ Գրիգոր Տաթևացի, *Ընդդեմ տաճկաց*, Երևան, 2009, էջ 53:

արաբերեն, թուրքերեն, պարսկերեն: Դրանք հիմնականում կրկնօրինակվել են 16-19-րդ դարերում: Անդրադառնալով Մուհամմադի անունով պայմանագրերին, շ. Անասյանը գրում է, որ Հայաստանում արաբական, պարսկական և թուրքական տիրապետությունների շրջանում հայերը բարյացակամ վերաբերմունք և որոշ արտոնություններ ստանալու համար աշխատել են ժամանակ առ ժամանակ այս պայմանագրի վավերացված օրինակներ ձեռք բերել մուսուլման իշխողներից¹⁵:

Մեր կողմից ուսումնասիրվել են Մուհամմադ մարգարեի անունով № 2622, 2826, 6984 ձեռագրերը (հայերեն թարգմանություններ պարսկերենից), որոնց բովանդակությունները համընկնում են միմյանց: Այս դաշնագրերում նշվում է, որ դրանք տրվել են քրիստոնյա և այլ ազգերի: Մուհամմադի հովանավորության տակ են անցնում քրիստոնյաների եկեղեցիները, աղոթատները, քրիստոնյաները կարող են նորոգել իրենց եկեղեցիները մուսուլմանների օգնությամբ¹⁶: Եթե քրիստոնյան հանցանք կատարի, ապա մուսուլմանը պարտավորվում է օգնել նրան, քրիստոնյաները պարտավորվում են որպես զլխահարկ վճարել 4 դինար, իսկ եթե «ի ծովու հանող մարգարիտաց իցե և կամ ցամաքի»՝ 12 դիրհեմ¹⁷: Քրիստոնյաները չպետք է պատերազմեն մուսուլմանների թշնամիների դեմ: Չնայած այս ձեռագրերը բառային ձևակերպումներով տարբերվում են իրարից, սակայն ունեն բովանդակային ընդհանրություններ միմյանց և արաբատառ տարբերակների հետ: Ուսումնասիրել ենք նաև Մատենադարանի արաբատառ ֆոնդի Մուհամմադ մարգարեի անունով 2 ձեռագիր: № 358 ձեռագիրը երկլեզվյա է՝ գրված արաբերեն, տողատակում՝

¹⁵ Անասյան Յ., Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 627:

¹⁶ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 2622, էջ 116բ:

¹⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 6984, էջ 304ա:

պարսկերեն և ընդօրինակված հավանաբար 17—րդ դարում: Այս դաշնագրի պայմանները համընկնում են վերոհիշյալ ձեռագրերի և Լաջրանի բնակչության պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի հետ: Մուհամմադ մարգարեն հավատում է, որ չի հեռացվի եպիսկոպոսը իր եպիսկոպոսությունից, վանականը՝ իր վանականությունից¹⁸: Մյուս № 272 ձեռագիրը պարսկերեն է, որտեղ կրկնվում են վերոհիշյալ փաստաթղթերի պայմանները: Գարևորվում են նաև Մատենադարանի՝ Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անունով № 357 պարսկերեն ձեռագիրը, որտեղ կրկնվում են Լաջրանի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի պայմանները: Այս բոլոր պայմանները, կրկնօրինակելով 16-19-րդ դարերում, իրենց ազդեցությունն են թողել միջնադարի մուսուլման բարձրաստիճան հոգևորականների՝ հայ համայնքին վերաբերող մի շարք խնդիրների վերաբերյալ դրական որոշումներում:

Մուհամմադ մարգարեի անունով այս պայմանագրերը իրենց բովանդակային հիմնական հատկանիշներով, ձևակերպումներով համընկնում են նաև Եգիպտոսի Թուր վանքի վանականներին, դպտիններին, ասորիներին Մուհամմադի անունով տրված դաշնագրերի հետ, որոնց մասին հիշատակում են մուսուլման պատմաբանները¹⁹:

Մուհամմադ մարգարեի և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անունով պայմանագրերը շատ դեպքերում օգնել են հայերին՝ պաշտպանելու իրենց իրավունքները մուսուլման իշխողների

¹⁸ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի արաբատառ ձեռագիր № 358:

¹⁹ Nameha wa pimanhaye siyasi hadrate Muhammad, Tehran, 1990, p. 625-637: Այս վերոհիշյալ պայմանագրերի վերլուծության մասին տե՛ս Մկրտումյան Գ., Հրովարտակ-պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր (VII-XII դ.դ.), Երևան, 2017:

(պարսիկ, թուրք) ոտնձգություններից: 16-րդ դարի առաջին քառորդին, երբ Արևմտյան Հայաստանը անցավ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ, և քրդական շատ ցեղերի պարագլուխներ ընդարձակ տիրույթներ ստացան, ծայր առան հայ բնակիչների հարստահարությունները նրանց կողմից: Կ. Պոլսի հայ հոգևորականները, ավելի մոտ կանգնած լինելով արքունիքին, նման պայմանագրերով փորձում էին սանձահարել նրանց:

Այսպես, 17-րդ դարի հայտնի եկեղեցական գործիչ Գրիգոր Դարանաղցին, խոսելով այլակրոն բնակչության նկատմամբ Օսմանյան կայսրության գործադրած դաժան քաղաքականության մասին, հիշատակում է այս փաստաթղթի՝ «յալէ՛ մեծ մանշուրի» մասին: 17-րդ դարավերջին Օսմանյան կայսրության տարբեր մասերում ապստամբություններ են սկսվում, երբ ոտնահարվում են քրիստոնյաների, մասնավորապես հայերի իրավունքները: Վերջիններս դիմում են Դարանաղցուն, որ օգնի իրենց: Գրիգոր Դարանաղցուն հաջողվում է ձեռք բերել ալի մանշուրը (հրովարտակ) և այն ներկայացնել դատավորին: Վերջինս վերցնում է այդ հրովարտակը, բարձրաձայն ընթերցում է այն և սուկում այդ զարմանակերպ գրից, գրված 3 լեզվով, քուֆի գրով՝ արաբերեն և թուրքերեն: Ըստ հեղինակի, ներկա գտնվող մուսուլմանները, որոնք հայերի հանդեպ բարկությամբ էին լցված, «զատամունք կրճտեցին վերայ մեր», սուկացին և ընդունեցին այն²⁰: Նա նկարագրում է, թե ինչպես թուրք բարձրաստիճան պաշտոնյաները հավատում էին դրան և ընդունում որպես սրբազան գիր, համբուրում այն, դնում իրենց աչքերի վրա: Կամ երբ Ամիդի թուրք պաշտոնյան հարկերով նեղում էր հայերին, սուլթան Մուրադին է ներկայացվում «յալէ գիրը»: Այսպես, 18-րդ դարում Կ. Պոլսի հայոց Ավետիք պատրիարքը, ցանկանալով

²⁰ Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցիոյ կամ Դարանաղցիոյ, Երուսաղէմ, 1915, էջ 151:

պաշտպանել հայերին, Մտամբուլի հոգևոր առաջնորդ շեյխ ուլ-խալամի մոտ ասում է, որ Մուհամմադն ու Օմարը, երբ տիրեցին ամբողջ աշխարհով, հայ մեծավորները խնդրեցին նրանց հարկ (խարաջ) դնել իրենց վրա, որպեսզի իրենք քրիստոնյական կրոնը ազատորեն դավանեն: Վերջիններս երդմամբ ուխտ և դաշինք տվեցին հայ մեծավորներին: Եվ երբ շեյխ ուլ-խալամը հարցնում է, թե որտեղ են այդ փաստաթղթերը, Ավետիք պատրիարքը ասում է, որ իր մոտ է Օմարի հրովարտակի ոսկետառ պատճենը, իսկ բնագիրը Երուսաղեմում է²¹:

Այսպիսով, ակնհայտ է դառնում այն իրողությունը, որ հետագա դարերում, երբ մուսուլմանական տիրապետության տակ գտնվող քրիստոնյա հպատակների իրավունքները ոտնահարվում էին, Մուհամմադի անունով շրջանառության մեջ են դրվում քրիստոնյաների շահերին և իրավունքներին միտված փաստաթղթեր:

РОЛЬ МУСУЛЬМАНСКИХ МАНИФЕСТОВ-ДОГОВОРОВ В ЖИЗНИ ХРИСТИАНСКОГО НАСЕЛЕНИЯ

Մկրտումյան Գայանե
(Резюме)

В настоящей статье предметом рассмотрения стала важная роль манифестов-договоров, выданных христианскому населению со стороны мусульманских правителей в разных эпохах. Внимание было уделено договорам, выданным в течение арабских завоеваний во второй половине седьмого века населению Сирии, Месопотамии, на основе которых лежал договор, выданный пророком Мухаммедом

²¹ Լեռ, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, 1969, էջ 120:

христианам Еменского города Наджран в 632г. Важное внимание было уделено также договору, выданному последним армянской общине Иерусалима, которое в дальнейшем утвердили Омар Ибн Ал-Хаттаб халифа и следующие мусульманские правители, завоевавшие город, и которыми местное армянское духовенство в течение веков смогло сохранить свои права в отношении нескольких церквей в Иерусалиме, улучшая состояние армянского населения. В связи с данным вопросом были изучены хранившиеся в Матенадаране имени Месропа Маштоца рукописи и документы на имя Мухаммеда пророка на арабском, персидском языках, составленные в 16-19 веках, которые предназначены на сохранение защиту прав христиан, в частности – армян, под владычеством мусульман и приобретение привилегий от мусульманских правителей. О важной роли данных манифестов свидетельствуют также авторы армянской хронологии.

THE ROLE OF MUSLIM MANIFESTS-CONTRACTS IN THE LIFE OF THE CHRISTIAN POPULATION

Mkrtumyan Gayane
(Summary)

In this article, the important role of manifestos-treaties issued to the Christian population by Muslim rulers in different eras has been the subject of consideration. Attention was paid to treaties issued during the Arab conquests in the second half of the seventh century to the population of Syria, Mesopotamia, on the basis of which lay the agreement issued by the prophet Muhammad to the Christians of Najran city of Yemen in 632. Important attention was also paid to the treaty issued to the Armenian community of Jerusalem by the latter, which was later approved by Omar Ibn Al-Khattab of the Caliph and the following Muslim rulers who conquered the city, and with whom the local Armenian clergy for centuries managed to preserve their rights in relation to several churches in Jerusalem, improving the state of the Armenian population. In connection

with this issue, the manuscripts and documents kept in the Matenadaran named after Mesrop Mashtots named after Mohammed the prophet in Arabic and Persian languages, compiled in the 16th and 19th centuries, designed to preserve the protection of the rights of Christians, in particular Armenians, under Muslim rule and the acquisition of privileges from Muslim rulers. The authors of Armenian chronology also testify to the important role of these manifestos.

*Ռաֆայելյան Քրիստինե**

**ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐԱԲ ԵՎ ՀԱՅ ԼԵԶՎԱՍՇԱԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ**

*Բանալի բառեր՝ լեզվամշակույթ, մեթոդ, գիտափորձ,
մտածողություն, լեզվակիր, գիտակցություն, վերլուծություն,
հոգելեզվաբանություն*

Համեմատվող լեզուների լեզվական միավորների գուգադրական ուսումնասիրությունը զանազան գրավոր աղբյուրների հիման վրա (գեղարվեստական, ֆոլկլորային, զանգվածային լրատվամիջոցներ և այլն) հիմնականում թույլ է տալիս համակարգված լեզվական մակարդակում պատկերացում կազմել *ընդհանուրի* և *տարբերակիչի* վերաբերյալ: Որոշել, թե ինչ է տեղի ունենում «խոսելու և հասկանալու» ընթացքում՝ հոգելեզվաբանական խնդիր է: Այսպիսի ուսումնասիրությունները բավականին հարստացնում են լեզվաբանական աշխատությունները:

Ժամանակակից հոգելեզվաբանությունը փորձում է համապատասխան մեթոդներ գտնել թաքնված լեզվաճանաչողական մեխանիզմների հայտնաբերման համար: Այդպիսի մեթոդներից է ազատ իմաստային զուգորդումը (առցիացիան), որը հնարավորություն է տալիս տեսնել անհատի լեզվական գիտակցության իրական պատկերը և հայտնաբերել

* Բ. Գ. Թ., Վ. Բրյուսովի անվ. ԵՊԼՀ, ասիական լեզուների ԳՈՒ կենտրոն, դասախոս, էլ. փոստ՝ rkristine@bk.ru

երա լեզվական մտածողությունը ղեկավարող ազդակները: Զուգորդական գիտափորձը, որպես ուսումնասիրության միջոց, իրեն արդարացրել է գիտության տարբեր ոլորտներում՝ սկսած հոգեբանությունից մինչև լեզվաբանություն: Այն կիրառվել է մասնավորապես տարբեր լեզվակիրների մոտ զուգորդային պատկերների ստեղծման¹, լեզուների փոխազդեցության առանձնահատկությունների ուսումնասիրության² և այլ նպատակներով: Անկասկած, զուգորդական գիտափորձը (կամ ազատ իմաստային զուգորդումների մեթոդը) կարող է ծառայել որպես ինֆորմացիայի կարևոր աղբյուր տվյալ ազգին բնորոշ հոգելեզվաբանական ազդակների ուսումնասիրության համար:

Ելնելով այն հանգամանքից, որ հոգելեզվաբանական գիտափորձը օգնում է մարդու բառապաշարում լեզվական միավորների իրական նշանակության մասին պատկերացում կազմել, մենք փորձել ենք նույնօրինակ հարցում անցկացնել՝ հիմք ընդունելով հայերենի և արաբերենի համեմատական միավորները (այսուհետև՝ ՀՄ): ՀՄ-ները յուրաքանչյուր հասարակության լեզվում յուրահատուկ լեզվական ֆենոմեն և կարևոր գործոն են հանդիսանում: Գունեղ արտացոլելով լեզվական մտածողությունը, կյանքի փիլիսոփայությունը և ժողովրդի հոգևոր արժեքները՝ ՀՄ-ները մեծ տեղ են զբաղեցնում ինչպես առանձին ժողովուրդների, այնպես էլ ողջ մարդկության լեզուներում և մշակույթում առհասարակ՝ ներկայացնելով զանազան իրավիճակներ և

¹ Ершова Т. А., Русско-немецкие ассоциативные портреты (опыт интерпретации): автореф. дис. ... канд. филол. наук : 10.02.19 «Теория языка» / Т. А. Ершова. – М., 1998.

² Грабска М., Русскоязычный потенциальный словарь в языковом сознании польских учащихся: Теорет. и эксперим.-эмпирич. исслед. : дис. ... д-ра пед. наук : 13.00.02 «Теория и методика обучения и воспитания» / М. Грабска. – М., 1994.

ավանդույթներ: Տարբեր լեզուներում ՀՄ-ների զուգադրությունը թույլ է տալիս գաղափար կազմել աշխարհի ժողովուրդների ազգային լեզվամշակութաբանական առանձնահատկությունների մասին:

Սույն ուսումնասիրության նյութերն իրենցից ներկայացնում են հարցաթերթիկներ, որոնք ներառում են մարդուն և նրա արտաքինը նկարագրող (անթրոպոլոգիական) ՀՄ-ների մաս պարունակող արտահայտություններ: Ըստ Վ. Ա Մալովայի, առհասարակ, մարդուն նկարագրելու հիմնական կատեգորիաները ունիվերսալ են, բայց դրանք պարունակող մեթոդները տարբերվում են էթնոմշակութային առանձնահատկություններով³: Այս դրույթն իր հերթին բխում է Ի. Մեյիի հայտնի կանխադրույթից, ըստ որի բոլոր լեզուների ներքին բովանդակությունը փորձի ինտուիտիվ իմացությունն է: Միայն արտաքին ձևն է անսահման փոփոխական⁴:

Հոգելեզվաբանական գիտափորձը անցկացվել է Երևանի պետական համալսարանի բանասիրության և Կահիրեի համալսարանի մանկավարժության ֆակուլտետներում: Մասնակիցների խմբերը ամեն լեզվում կազմել են 3-րորդ և 4-րորդ կուրսերի հարյուրական ուսանող, որոնց արաբերենով և հայերենով առաջադրվել են մի խումբ բառ-խթանիչներ: Նրանք պետք է շարունակեին համեմատական կառույցը՝ առաջինը իրենց մտքին եկած բառերով: Օրինակ՝ «բարձրահասակ ինչպես...», «հարուստ ինչպես...»: Ստացված արդյունքների հիման վրա ստեղծվել է տվյալների բազա, որտեղ գրանվել են

³ Маслова В. А., Лингвокультуралогия / В. А. Маслова. – М.: АCADEMIA, 2004, с. 152.

⁴ Сепир Э., Избранные труды по языкознанию и культурологии / Э. Сепир. – М.: Прогресс, 1993, с. 193.

հարցաթերթիկում ներկայացված համեմատական կառույցներին վերաբերվող բոլոր պատասխանները:

Միանման զուգորդային ազդակները համեմատաբար տիպային են դիտարկվել ոչ միայն տվյալ արաբալեզու կամ հայալեզու խմբերի, այլ նաև այդ լեզուները կրող ժողովուրդների համար ընդհանրապես:

Մարդու արտաքին տեսքը նկարագրելու համար գործածվել են բառ-խթանիչների հետևյալ խմբերը՝

- Ֆիզիկական հատկանիշներ (*բարձր, ձկուն* և այլն)
- Ֆիզիկական վիճակ (*հոգնած, սոված*)
- Սոցիալական կարգավիճակ (*աղքատ, հարուստ*)

Գիտափորձի մասնակիցներին առաջադրվել են հետևյալ բառ-խթանիչները՝ *բարձր ինչպես..., ձկուն ինչպես..., կարճ (կարճահասակ) ինչպես..., փափուկ ինչպես..., սլացիկ ինչպես..., նիհար ինչպես..., հոգնած ինչպես..., սոված ինչպես..., աղքատ ինչպես..., հարուստ ինչպես....*: Այս արտահայտությունները թարգմանվել են արաբերեն:

Գիտափորձի համար տրվել է 15 րոպե:

Ստացված արդյունքները հանրագումարի բերելով՝ կարելի է ասել, որ մարդու արտաքին տվյալները բնութագրելու համար առաջադրվել է 10 բառ-խթանիչ, որոնց հիման վրա ստացվել է 600 պատասխան արաբալեզու և 600՝ հայալեզու ուսանողների խմբերից: Ընդհանուր առմամբ վերլուծության է ենթարկվել է 1200 պատասխան:

Գենդերային քաղաքականության տեսակետից, որը չի եղել մեր ուսումնասիրության բուն առարկան, պետք է նկատել, որ արաբական լսարանում ավելի շատ էին արական սեռի ներկայացուցիչները, քան հայկականում: Տարիքային առումով հայ լեզվակիրները կազմում էին մոտ 20-22 տարեկան

երխտասարդների խումբ: Նույնը չի կարելի ասել արաբ մասնակիցների մասին, որոնք տարիքով ավելի մեծ էին՝ ամենակրտսերը՝ 26 տարեկան, ավագը՝ 45:

Գիտափորձի արդյունքները ցույց են տալիս, որ երկու լեզվամշակույթների ներկայացուցիչները մարդու արտաքինը համեմատում են 10 իրողությունների հետ: Դրանք են՝

Բուսանուններ (լուիկ, կիլկաս, բարդի, արմավենի և այլն)՝ *‘աշնան տերևի պես հոգնած՝ չինարի պես բարձր (բարձրահասակ); հասած միրգի պես փափուկ;՝ չինարի պես սլացիկ՝*, արաբ. *ta‘b mitla qara‘t asajara almuħmila ‘hոգնած, ինչպես բերքատու ծառի ճյուղեր՝, ‘nahif mitla xallat šaytāniya՝, ‘ատամի չոփի պես նիհար՝ ʔawīl mitla anaxla, būs՝ ‘արմավենու, եղեգի պես բարձրահասակ՝* և այլն:

Կենդանուններ (մուկ, ավանակ, առյուծ, ուղտ, եղնիկ, մրջյուն) արաբ. *jā‘i mitla aljamal ‘ուղտի պես սոված՝, rašiq mitla anna‘āma՝ ‘սլացիկ ինչպես ջայլամը՝, ġani mitla alasad՝ ‘առյուծի պես հարուստ՝; faqīr mitla anamla՝ ‘մրջյունի պես աղքատ՝*, հայ. *‘շան պես հոգնած, սոված՝, ‘ծտի ոտքերի պես կարճ՝, ‘օգոստոսի աղվեսի պես նիհար՝:*

Արտեֆակտեր (ըստ Արիստոտելի, այն, ինչ ստեղծվել է մարդու կողմից՝ թել, զինի, մետաքս և այլն) արաբ. *ʔawīl mitla burj al‘arab՝ ‘Արաբական աշտարակի պես բարձր՝, marin mitla almalban՝ ‘ռահատ լոխումի պես ճկուն՝* հայ. *Էյֆելյան աշտարակի պես բարձր, փափուկ ինչպես բարձ, բամբակ:*

Բնական նյութեր, քարեր (ավազ, կավ) արաբ. *nā‘im mitla ašilsāl՝ ‘փափուկ ինչպես կավը՝, jā‘i՝ mitla aramāl՝ ‘սոված ինչպես ավազը՝:*

Բնության օբյեկտներ, (ծով, գետ, լեռ, անապատ) հայ. *սարի պես բարձր*, արաբ. *nā‘im mitla alma՝ ‘ջրի պես փափուկ՝:*

մայր Բնության երևույթներ (անձրև, մայրամուտ, քամի, զեփյուռ) հայ. *ձյան պես փափուկ*, արաբ. *nā‘im mitla nasamāt arabi՝ ‘գարնան բամու պես փափուկ՝:*

Մարդիկ (մայր, ընկեր, երեխա) արաբ. *jā‘i՝ ‘mitla atfāl ašawāri՝, ašā‘im՝ ‘փողոցի երեխաների, պասս պահողի պես սոված՝*, հայ. *հոգնած մեռնել:*

Ազգություն (ամերիկացի, եգիպտացի և այլն) արաբ. *faqīr mitla almasri՝ ‘եգիպտացու պես աղքատ՝, ġani mitla alamriki՝ ‘ամերիկացու պես հարուստ՝* և այլն:

Մասնագիտություն (պարուհի, մոդել, տուրիստ) արաբ. *marin mitla arajul asiyāsi՝ ‘քաղ. գործիչի պես ճկուն՝; faqīr mitla al‘abd, albawāb՝ ‘դոնապանի, ստրուկի պես աղքատ՝*, հայ. *‘արվեստագետի պես աղքատ՝, ‘ոստիկանի պես հարուստ՝, ‘բանվորի, տուրիստի, ուսանողի պես հոգնած՝:*

Հատկապես հատկանշական է Ֆոլկլոր և դիցաբանություն, հայտնի դեմքեր բաժինը (Կարուն, Լուսինե Թովմասյան, Օնասիս): Օրինակ՝ հայ. *Լուսինե Թովմասյանի պես սլացիկ, ‘Մանթաշովի, Օնասիսի պես հարուստ, Ղազարոսի պես աղքատ՝*, արաբ. *qašīr mitla ra‘īs kuria ašmāliya՝ ‘Հյուսիսային Կորեայի նախագահի պես ցածրահասակ՝, nahif mitla ‘abd allah ibn mas‘ūd՝ ‘Արդ Ալլա իբն Մասուդի պես նիհար՝, faq īr mitla ‘ali ben abi ʔālib՝ ‘Ալի բեն Աբի Տալիբի պես աղքատ՝; ġani mitla qārūn, alfara‘ūn՝ ‘Կարունի (ըստ Ղուրանի՝ Կարունը բացասական կերպար է, Մովսես Մարգարեի ժամանակակիցը, որն իր հարստությունը ձեռք էր բերել զիտելիքի շնորհիվ), Փարավոնի պես հարուստ՝, ‘abd arahman ben ‘auf՝ ‘հարուստ ինչպես Աբդու Ռահման բեն Աուֆը՝ (Մուհամմեդի զինակիցներից, որը մեծ դեր է կատարել Իսլամի տարածման գործում՝ հավանաբար նկատի ունեն հոգեկան հարստությունը) և այլն:*

Հայերենի և արաբերենի թեմատիկ խմբերի քանակական հարաբերակցությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Հայերենի և արաբերենի թեմատիկ խմբերի հարաբերակցությունը

Թեմատիկ խմբեր	Արաբերեն		Հայերեն	
Բուսանուններ	113	18,7 %	93	15,5%
Կենդանուններ	110	18,2 %	150	25 %
Արտեֆակտեր	146	24,3 %	147	24,6 %
Բնության օբյեկտներ	21	3,5 %	48	8 %
Բնական նյութեր, քարեր	9	1,5 %	8	1,4 %
Բնության երևույթներ	55	9,1 %	27	4,4 %
Մարդիկ	55	9,2 %	56	9,3 %
Ազգություն	15	2,5 %	18	3 %
Մասնագիտություն	54	9 %	30	5 %
Ֆոլկլոր և դիցաբանություն	22	3,7 %	23	3,8 %

Գիտափորձի արդյունքում ամենահաճախ հանդիպող պատասխանները ըստ էթնոմշակութային առանձնահատկությունների կարելի է բաշխել հետևյալ կերպ. Բարձրահասակ մարդուն և հայերը և արաբները համեմատում են բուսանունների հետ: հայ. *բարդու պես բարձրահասակ* և արաբ. *արմավենու պես բարձրահասակ*: Ճկուն մարդը ավելի հաճախ համեմատվում է արտեֆակտերի հետ՝ հայ. *ոետինի պես ճկուն*, արաբ. *կաուչուկի պես ճկուն*: Հայերենի և արաբերենի համեմատական կառույցներում ամենահաճախ գործածված պատկերների հարաբերակցությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Հայերենի և արաբերենի համեմատական կառույցների ամենահաճախ գործածված պատկերների հարաբերակցությունը

Հատկանիշ	Հայերեն	Արաբերեն
Բարձրահասակ	Բարդի/չինար 43%	Արմավենի 40%
Ճկուն	Ռետին 9%	Կաուչուկ 15%
Կարճ	Թզուկ 14%	Թզուկ 15%
Փափուկ	Բամբակ 40%	Մետաքս 46%
Սլացիկ	Բարդի /չինար 40%	Վիթ 36%
Նիհար	Աղվես 10%	Ձեռնափայտ 24%
Սոված	Գայլ 82%	Առյուծ 25%
Հոգնած	Շուն 36%	Ուղտ 21%
Աղքատ	Մուրացկան 38%	Մուրացկան 49%
Հարուստ	Արքա 22%	Կարուն 20%

Եվ այսպես, համեմատական կառույցների զուգորդային հասկացութաբանաստարանական բովանդակության տեսանկյունից և արաբ, և հայ լեզվակիրների պատասխաններում գերակշռում են կարծրատիպային պատկեր-տալոնները (չափանիշ), այսինքն՝ այնպիսիք, որոնք համապատասխանում են տվյալ լեզվական համակարգում գոյություն ունեցող ՀՄ-ներին: Հետաքրքրական է, որ գիտափորձի մասնակիցների երկու խմբերն էլ համեմատության ավանդական պատկերների հետ մեկտեղ առաջարկում են շատուշատ ժամանակակից և անսպասելի օրինակներ, որտեղ արտացոլվում են ուսանողների տարիքային հետաքրքրությունները, օրինակ՝ հայ. *Նաոմի Քեմբլի, Լուսինե Թովմասյանի պես սլացիկ, հարուստ ինչպես Բիլլ Գեյթսը*, արաբ.

Մինա Շելքիի (եզիպտացի դերասանուհի) պես սլացիկ, Նազիր Մավրիսի (եզիպտացի ձեռնարկատեր) պես հարուստ և այլն:

Կառացվածքային տեսանկյունից գիտափորձի արդյունքում ստացված պատասխանները հիմնականում պարզ են, բաղկացած մեկ բառից, բայց հանդիպում են նաև բարդ արտահայտություններ, Օրինակ՝ արաբ. *nahif mitla raqabat anna'ama 'ջայլամի վզի պես նիհար'*, հայ. *'ցամաք ձորի աղվեսի պես նիհար'*: Կառուցվածքով բարդ արտահայտությունները հայերենում ավելի շատ են: Դրանք կազմում են մոտ 66 օրինակ, հիմնական պատասխանների մոտ 11%-ը, իսկ արաբերենում՝ 51 օրինակ, համապատասխանաբար՝ 8,5 %:

Հիշատակվում են նաև համեմատական փոխաբերությունների կազմության մի շարք այլ դեպքեր, որոնք կազմում են ինքնարուխ ասոցիացիաներ, ինչպիսիք են՝ արաբ. *alqalb alxāli min alqurān 'աղքատ, ինչպես մարդը, ում սրտում չկա Ղուրան'*, *alhadīqa allati la tu'ti tamaran 'աղքատ ինչպես անպտղաբեր այգի'*, հայ. *'աշխարհի պես հարուստ, ծոխ ոտքերի պես կարճ'* և այլն:

Բերված օրինակներում հանդիպում են այնպիսի ՀՄ-ներ, որոնք արտացոլում են լեզվական էնանտիոսեմիայի երևույթներ, այսինքն արտահայտում են հակառակ իմաստը: ինչպիսիք են՝ *էշի չափ փող (հարուստ), էշի ոտք, էշի բոյ* (բարձրահասակ) և այլն: Չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից արաբերենը շատ հարուստ է այդօրինակ բառային միավորներով⁵, օրինակ *rā'ī'un* (հրաշալի/սարսափելի), *ṭala'a* (հայտնվել / անհայտանալ), *kulun* (ամեն/բոլոր), և այլն, բայց նայնպես արաբական լսարանի ներկայացրած արդյունքներում այդպիսի ՀՄ-ների օրինակներ չեն հայտնաբերվել:

Երկու ազգերի ներկայացուցիչների կողմից ՀՄ-ների կազմավորման եղանակների ընդհանրությունն ու տարբերությունն ի հայտ են գալիս՝ ա) համեմատությունների կազմում կերպարների գործածման մեջ (օրինակ՝ մրջյունի, մեղվի, աղվեսի, ավանակի և այլ կերպարներ ակտիվորեն գործածվում են երկու խմբերում էլ), բ) ՀՄ-ներում գործածված պատկերների փոխաբերական զուգորդումների առանձնահատկություններում (մեղվի կերպարը հայերի մոտ մարմնավորում է ոչ միայն աշխատասիրությունը (նույն զուգորդումները արաբների և այլ ժողովուրդների մոտ ևս կան), այլ նաև մաքրասիրությունը, կամ ավանակի կերպարը մարմնավորում է ոչ միայն հիմարությունն ու համառությունը, այլ նաև ծուլություն, տոփանք նաև հնազանդություն՝ քրիստոնեական աշխարհիկ կյանքում: Աղվեսի կերպարը մարմնավորում է ոչ միայն խորամանկություն այլ նաև չափազանց նիհարություն: Արաբական մշակույթում ուղտը դիմացկունության հետ միասին մարմնավորում է հնազանդություն և չափավորություն, արմավենին, սլացիկության հետ մեկտեղ, մարմնավորում է կյանք, փառք, հաղթանակ և այլն:

Եվ այսպես, հողվածում ընդգրկված են երկու լեզուներում գիտափորձի արդյունքում ստացված ՀՄ-ների ամենացայտուն օրինակները և մինևույն ժամանակ, մասամբ նշված են դրանց տարբերությունների հնարավոր պատճառները: Շատ ՀՄ-երը նման են, բայց զանազանվում են գործածման եղանակներով, որը կարելի է բացատրել աշխարհընկալման և ազգային սովորություններով պայմանավորված առանձնահատկություններով: Դա հաստատում է այն փաստը, որ համեմատություններն ինքնին իրենցից ներկայացնում են աշխարհի արժեհամակարգի ընկալման յուրահատուկ ձև և ծառայում են որպես

⁵ Ромачев Б.Н., Подход к энантиосемии в современном арабском языке // Арабская филология. Вып. 2. М., 2004. - с. 154-161.

հասարակությունում տվյալ լեզվամշակույթի նեկայացուցիչների ներքին վարվելակերպի արտահայտման միջոց:

**ПСИХОЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ
КОМПАРАТИВОВ ХАРАКТЕРИЗУЮЩИЕ ФИЗИЧЕСКИЕ
КАЧЕСТВА И СОЦИАЛЬНОЕ ПОЛОЖЕНИЕ ЧЕЛОВЕКА В
АРАБСКОЙ И АРМЯНСКОЙ ЯЗЫКОВЫХ КУЛЬТУРАХ**

**Рафаелова Кристинэ
(Резюме)**

В статье сопоставляются сравнительные обороты армянского и арабского языков, которые были проанализированы в ходе этнопсихолингвистического эксперимента. Материалом эксперимента прослужили слова-стимулы характеризующие физические качества и состояние, а также социальное положение человека. Полученный материал позволяет сделать вывод, что сравнительные обороты являются носителями важной информации о национальной своеобразности мировосприятия обоих народов.

**PSYCHOLINGUISTIC FEATURES OF THE FORMATION OF
COMPARATIVE, CHARACTERIZING THE PHYSICAL
QUALITIES AND CONDITION, AS WELL AS THE SOCIAL
STATUS OF HUMAN IN ARABIC AND ARMENIAN LANGUAGE
CULTURES**

**Rafaelova Kristine
(Summary)**

The article deals with investigation of comparative constructions in the Arabic and Armenian languages, witch were analyzed in the ethnopsycholinguistical experiment. There were used the words, characterizing the physical qualities and condition, as well as the social status of human. For the analyse we investigated the words which are most

typical for the certain group of polled. And the cultural experience of this linguistic community within the framework of linguistic picture of the world is reflected in the comparative constructions. The received material makes us sure that comparative constructions are very important as a holder of information on national peculiarities in worldviews of both nations.

ARAB-IRANIAN RELATIONS IN THE CONTEXT OF THE PERSIAN GULF NAMING DISPUTE

Keywords: Arab-Iranian relations, geopolitical rivalry, Arab-Islamic expansion, Persian Gulf, Arabian Gulf, naming dispute, Gulf States, Gulf Cooperation Council

The body of water between Iran and the Arabian Peninsula, which is historically known as the “Persian Gulf”, has an area of 240,000 square kilometers (92,500 square miles) and extends for 984 kilometers (615 miles) from the mouth of the Shatt al Arab River in the northwest to the Strait of Hormuz in the southeast. In classical geographies this projection of water is known as *Sinus Persicus*¹.

No written deed has remained since the era before the Pars Empire but in the oral history and culture the Iranians have called the southern waters: *Jam Sea, Iran Sea, Pars Sea*. Greek geographers Strabo and Ptolemy utilized the expression *Sinus Persicus* to specify the body of water between the Arabian Peninsula and the Iranian Plateaus. From among the writings of others in the same period, there is the inscription and engraving of Darioush the Great, installed at junction of waters of Arabian Gulf (*the Red Sea*), Nile river and Rome river (current Mediterranean) which belongs to the 5th century BC where, Darioush, the king of Pars Empire has named the Persian Gulf Water Channel *Pars Sea*. Also a map has remained from Herodotus, the great historian of Greece (425-484 B.C.) which introduces the Red Sea as the Arabian Gulf. However, in more than 30 geographical,

* Ph.D. Applicant, Southern Federal University, E-mail: sonaik82@mail.ru

¹ United Nations Working Paper Group of Experts On Geographical Names, “Historical, Geographical and Legal Validity of the Name: Persian Gulf” <http://unstats.un.org/unsd/geoinfo/gegn23wp61.pdf> (accessed November 29, 2018).

historical and literary books the Muslims and Arab scientists have described the Persian Gulf.²

The principal geopolitical characteristics that have distinguished the Persian Gulf as an especial region are: the particular geographical position of the Persian Gulf region; the huge fossil energy resources; and the geostrategic ambitions of the major powers of the world.

The Persian Gulf sometimes was wrongly considered as a subfield of so called Middle East. Nations in this region are very different in cultural, political, economical and religious aspects.³

The geopolitical significance of the Persian Gulf may be measured by the fact that it is situated at the cross-roads between the East and the West, to wit, in the area where Europe, Africa and Asia meet, which denotes that the region is directly affected by events in those continents.

From the geostrategic perspective the Persian Gulf is also significant, as it has been an important military pathway to access other regions. These are the most essential factors making the region important to major powers of the world.

The Persian Gulf region has its importance as well in its particular geo-economic situation. During the 18th century the region had become strategically more significant due to its crucial economical role in communication between Asia and Europe. Almost 65 percent of the proven oil reserves in the world and more than 40 percent of the global natural gas reserves are located in the Persian Gulf region. Moreover, 20 percent of the world's oil trade is done through this region. Besides these factors, the principal geopolitical feature of the region is its highest volume of fossil fuel exports to the world. Proven crude oil reserves of the Persian Gulf coastal states of Iran, Iraq, Saudi Arabia, Kuwait, Qatar, the United Arab Emirates, Oman and Bahrain stand almost two thirds of the world's total oil

² Kamyar A., “The Name Game: The Persian Gulf, Archaeologists, and the Politics of Arab-Iranian Relations” in *Selective Remembrances: Archaeology in the Construction Commemoration and Consecration of National Pasts*, ed. Philip L. Kohl and others (Chicago: The University of Chicago Press, 2007), 221

³ Mohammad Z., Pour G., Shamani Y. and Ebrahimi E., “Hidden Perspectives of Convergence in Persian Gulf Region,” *Journal of American Science* 9, no. 4 (2013): 145.

reserves and more than one third of the global oil supplies. Saudi Arabia has nearly 25 percent of the world's crude oil reserves, followed by Iran, Iraq, Kuwait and the UAE.⁴

By and large, the Persian Gulf represents a significant part of the world, because of its geopolitical and geostrategic situation and oil wealth. In this regard, the region has been the focus of regional and extra-regional powers throughout the course of history. The region witnessed the Iran-Iraq War of 1980-1988, The Gulf War of 1990-1991 and the Iraq War of 2003, resulting in regional and global instability. The fall of Iraq made Iran more powerful in the region, and as a domination strategy, Iran launched its nuclear program. Iran is considered to be a major power in the region; it can destabilize the regional balance as Iran's nuclear program is threatening the stability of the Gulf region.⁵

During the 1980s, the Gulf region experienced major developments and progress, moving the region toward a new era of challenges. For the sake of having a coordinated resistance against outside intervention, the Arab Gulf states realized that they had to react collectively to be able to achieve stability and security in the region. As they shared a common culture and had similar socioeconomic and political structures, the Arab states were ready to cooperate and establish an organization that would help them to coordinate and protect their common interests.⁶

On March 10, 1981 at Muscat, Oman, the Gulf Cooperation Council (GCC) was shaped as a regional economic and defense organization.⁷ The members of Gulf Cooperation Council are: the Kingdom of Saudi Arabia (KSA), Kuwait, Bahrain, Oman, United Arab Emirates (UAE) and Qatar, which are known collectively as the Gulf States.⁸ The member nations of

⁴ Mirhosseini S. M., Rasoulisaniabadi E. "The Milestones of the Persian Gulf Security Developments," *Sociology and Anthropology* 3, no.2 (2015): 117-118.

⁵ Al Kaabi Y. H. and Al Kaabi Kh. M., *The Iranian Century: The Tension Between Iran and The Gulf States*, <https://calhoun.nps.edu/handle/10945/10720> (accessed Apr. 15, 2018).

⁶ Al Hamad T., "Will the Gulf Monarchies Work Together?," *The Middle East Quarterly* 4, no. 1 (1997): 47-48.

⁷ Jessup J. E. *An Encyclopedic Dictionary of Conflict and Conflict Resolution, 1945-1996* (Westport: Greenwood Press, 1998), 262.

⁸ Europa Publications, *The Middle East and North Africa, Volume 50* (New York: Routledge, 2003), 1318.

the Gulf Cooperation Council reflect "the historic, geographic, economic, cultural, political and strategic realities of the Gulf."⁹ Nowadays Gulf Cooperation Council countries require a comprehensive regional strategy to deal with Iranian ambition. The Gulf Cooperation Council countries should work to enhance the collective defense capability and share the burden of security in the region in order to achieve stability. More cooperation and coordination while working with the Gulf Cooperation Council system can help the Gulf States counter Iran's ambitions and play a stronger role in the region. The Gulf States must develop a unified policy, which could ensure to prevent any possible attempts by Iran to destabilize the region and allow them to rely less on help from the external actors. The Gulf Cooperation Council countries' highest priority is to free the Gulf region from weapons of mass destruction. The stability in the Gulf region depends on the dynamic relationship between the Gulf States and Iran in addition to external actors like the United States and other superpower countries.¹⁰

The socio-cultural significance of the Persian Gulf region is unique, because it has a very long history of civilized society and human conflict; it was also the center of a great empire of history. The Persian Gulf is often regarded as a part of the Middle East crossroads of three continents and an intricate part of the Arab and Muslim world. The Persian Gulf region links the three continents of Asia, Europe and Africa. It is as an arm of the Indian Ocean and a bridge of trade between three continents. The advent of Islam took place in the Arabian Peninsula that was located in the coastal borders of the Persian Gulf region, which now is known as the center of the Muslim world. Because of its strategic location, for a long time, the Persian Gulf region has been the center of attention for traders and the superpowers. Since the beginning of human history as evidences shows, the Persian Gulf

⁹ Najem T. and Hetherington M., *Good Governance in the Middle East Oil Monarchies* (New York: Cengage Learning, 2003), 30.

¹⁰ Al Kaabi Y. H. , Al Kaabi Kh. M., "The Iranian Century: The Tension Between Iran and The Gulf States," <https://calhoun.nps.edu/handle/10945/10720> (accessed April 15, 2018).

has been a valuable waterway as well as the center of the great civilizations of the ancient east; it has a background of several millennia.¹¹

Islam, promoted by Muhammad in Arabia in 610 A.D., played a crucial role in social, political and cultural life of the region, changing its religious and socio-linguistic picture. Arabia was in the middle of the major ancient world civilizations and routes. It participated, transferred, and contributed to it prior to and after the advent of Islam in Makkah in 610 CE.¹² The Arabian Peninsula is the cradle of Islam. Islam was "born" in it, and "grew up" in it, and was already "full-grown" when it came out of it. It was in the Arabian cities of Makkah and Medina that the classic Islamic identity was evolved, and Islam actually "jelled".¹³

The area that constitutes the present-day Persian Gulf states was on the immediate periphery of the rise of Islam. The early Islamic polity was intensely expansionist, fueled both by fervor for the faith and by economic and social factors. After gaining control of Arabia and the Persian Gulf region, conquering armies swept out of the peninsula, spreading Islam. By the end of the eighth century, Islamic armies had reached far into North Africa and eastward and northward into Asia.¹⁴

Hence, Islam played an important role in shaping the socio-cultural picture of the Gulf region. Saudi Arabia is the centre of the Islamic world, where the two holiest places in Islam, Makkah and Medina are situated. Some scholars emphasize the geopolitical and economic importance of the Gulf to both global and Islamic history.¹⁵ Thus, history of Islamic civilization traces its development from its beginnings in seventh century Arabia to its wide and varied presence in the globalised world of today.¹⁶

¹¹ Mirhosseini R., "The Milestones of the Persian Gulf Security Developments," 117.

¹² Natana J. DeLong-Bas, *The Oxford Encyclopedia of Islam and Women*, Vol 2 (Oxford:Oxford University Press, 2013), 711.

¹³ Sayed A., Razwy A. *A Restatement of the History of Islam and Muslims CE 570 to 661* (United Kingdom: World Federation of KSI Muslim Communities United Kingdom, 1996), 451.

¹⁴ Metz H. Ch., *Persian Gulf States : country studies* (Washington: Library of Congress. Federal Research Division.,1994), 9.

¹⁵ Kennet D., "Islamic archeology in the Gulf," *Hadith Ad-Dar* 33 (2010): 28.

¹⁶ Chase F. Robinson, *The New Cambridge History of Islam: the Formation of the Islamic World Sixth to Eleventh Centuries* (Cambridge: Cambridge University Press, 2011), 171.

Arab-Iranian geopolitical rivalry has deep roots. It began from the early Islamic period and was closely associated with Arab-Islamic large-scale expansion.

The Prophet Muhammad argued that the Arabs and all other people needed to look beyond their tribal, ethnic, or city loyalties to understand that they were all one community under Allah, and that this recognition would bring peace and equality to all. He had achieved great things, with the western areas of the Arabian Peninsula united under Islam and the leadership of the messenger of Allah.¹⁷

The first Islamic century began in 622 of the Common Era with the *hijra*, Muhammad's "emigration" from Mecca to the town of Yathrib, which later was called "the Prophet's city" or "the city" (Medina). The *hijra* thus marked a new beginning for Muhammad and his followers. It also illustrates a striking feature of Islamic history. In the long term the campaigns grew into the conquest armies of the 640s and 650s (and beyond), which would overrun much of the Byzantine and all of the Sasanian Near East.¹⁸

During the first two centuries after the appearance of Islam, the Arab Muslims created a vast empire that stretched from Spain and North Africa all the way to the borders of China and India. Iraq and the Iranian plateau were among the first to be conquered. In 636 CE, Sa'd b. Abi Waqqas crushed the Persians in the Battle of Qadesiyya and took over their capital, Ctesiphon. The reasons for the success of the Arab Muslims included organization and determination, effect of their religion on their moral and spiritual mobility, their ability to recruit forces as they expanded, gain of resources as they took over more lands to better equip themselves.¹⁹

In the wake of the Arabs' conquest of most of the Near East, the new religion became identified more sharply as a monotheism for the Arab

¹⁷ Bowen H. W., *The History of Saudi Arabia* (London: Greenwood press, 2008), 157.

¹⁸ Robinson, *The New Cambridge History of Islam*, 172-173.

¹⁹ Zarrinkub Abd Al-Husain, "The Arab Conquest of Iran and its Aftermath," in *The Period from the Arab Invasion to the Saljuqs in The Cambridge History of Iran*, ed. Richard N. Frye (Cambridge: Cambridge University Press, 1975), 1.

people. During the second half of the seventh and the beginning of the eighth centuries the Muslims' religious identity was being established in the region, which became the most powerful unifying force for all the nations of Arab Caliphate. The formation of this distinct religious identity and the consolidation of the empire dominated by Arabs, were really the culmination of the longer-term process by which the Arabs of the peninsula were incorporated into the dominant social and cultural patterns of the Near East.²⁰

The spread of Islam was one of the cultural contact experiences in the world history from its initial base in the Arabian Peninsula and the Middle East to a host of areas in Africa, Asia and Europe. Islam unified people of various societies and cultures and brought important changes as a result of contact.

The religion in Iran before Islam was Zoroastrianism. Formation of the Arab Caliphate and the process of Arabization completely changed the cultural, religious and lingual picture of conquered nations, starting from the 7th century. With Islam Arabic culture, language and customs were spread.

As the Qur'an is written in Arabic and may not be translated for religious practice, so that knowledge of Arabic is important for all Muslims. Hence, the Arabic language became the most essential language and medium of local pre-existing cultures in the whole empire. The term "Arab" became associated with speakers of Arabic rather than being confined only to the original inhabitants of the Arabian Peninsula.²¹

Two of the most prominent ethnic elements in the Middle East, Arabs and Iranians have been in contact with each other, and at times have had their fortunes intertwined, for some three millennia. It is improbable that centuries of contacts between the Arabs and Persians, above all in eastern Arabia, should not have left behind some legacy in the fields of thought and culture, but such a legacy is not easy to quantify or to evaluate.

²⁰ Berkey J. P., *The Formation of Islam: Religion and Society in the Near East, 600-1800* (Cambridge: Cambridge University Press, 2003), 71.

²¹ *The Spread of Islam*, Yale University Press, <http://www.usislam.org/pdf/Spread-of-Islam.pdf> (accessed April 22, 2018).

in centers like Ctesiphon the Arabs acquired some familiarity with the externals of Persian life – the impressive buildings, the court ceremonial, the ceremonies and practices of Zoroastrianism, – yet these had no penetrating effect on society within the Arabian peninsula. The most lasting result of Arab-Persian contacts in these centuries was an influx of Persian words into the classical *arabīya*, especially those with religious and cultural references. Subsequent borrowings are also discernible in the Jāheli (pre-islamic) poets and in the Qur'an itself, where they were evaluated by later Muslim philologists.²²

Adopting Islam, however, the Persians didn't tolerate Arab domination, truly realizing the privilege they had, as they were inheritors of Ancient Persian civilization and rich cultural traditions.

The Arab-Islamic conquests in the seventh century and series of epoch-making events following the advent of Islam have been variously seen in Iran: by some as a blessing, the advent of the true faith, the end of the age of ignorance and heathenism; by others as a humiliating national defeat, the conquest and subjugation of the country by foreign invaders. Both perceptions are of course valid, depending on one's angle of vision. Iran was indeed Islamized, but it was not Arabized. Persians remained Persians. And after an interval of silence, Iran reemerged as a separate, different and distinctive element within Islam, eventually adding a new element even to Islam itself. Culturally, politically, and most remarkable of all even religiously, the Iranian contribution to this new Islamic civilization is of immense importance. The work of Iranians can be seen in every field of cultural endeavor, including Arabic poetry. Some scholars assert that in a sense, Iranian Islam is a second advent of Islam itself.

Thus, Arab-Iranian Geopolitical Rivalry started with the Arab-Islamic conquests in the seventh century, which completely changed the cultural, religious and lingual picture of conquered nations, widely spreading Islam, Arabic culture, language and customs. Persians, however,

²² *Arabs and Iran in the Pre-Islamic Period*, Encyclopedia Iranica, <http://www.iranicaonline.org/articles/arab-i> (accessed April 25, 2018).

didn't tolerate Arab domination, truly realizing the privilege they had, as they were inheritors of Ancient Persian civilization and rich cultural traditions.

Since the early 1960s, there has been a naming dispute in regards to the Persian Gulf which gained more significance during the rise of Arab nationalism and growing political tensions between Iran (formerly known as Persia) and its surrounding Arab neighbours. Roderic Owen, an employee of the Anglo-Iranian Oil Company and British government officer, in 1958 published a book titled "The Golden Bubble: Arabian Gulf Documentary". This book constituted the first literary work of any significance to popularize the term "Arabian Gulf". Sir Charles Belgrave, the British advisor to the emir of Bahrain, was the first westerner to use and advocate the name "Arabian Gulf" in the journal "Soat al-Bahrain" (Voice of Bahrain) in 1955. He wrote a book in 1966 about the southern coasts of the Persian Gulf and declared that Arabs prefer to name the gulf "Arabian Gulf".²³

By the 1960s, all Arab states passed laws and issued decrees making the use of the name Arabian Gulf mandatory in their publications and communications with the rest of the world. Despite signing the 2 United Nations documents (UNAD 311/ Gen on March 5, 1971 and UNLA 45.8.2 (C) on August 10, 1984), Arab states, especially those bordering the Persian Gulf, continued to use and promote the name Arabian Gulf or a simple reference to "The Gulf." The common use of the name of Persian Gulf owes much to the fact that for most of the past twenty-five hundred years Iran (ancient Persia) has been the major regional power in the Persian Gulf littoral.²⁴

Iran uses the term "Persian Gulf" exclusively and does not recognize alternate forms such as the "Arabian Gulf" or "The Gulf", arguing that it's a historical name and on almost all maps printed before 1960, in most

²³ Levinson M. H. "Mapping the Persian Gulf Naming Dispute," ETC.: A Review of General Semantics 68, no 3 (2011): 279.

²⁴ Abdi K., "The Name Game: The Persian Gulf, Archaeologists, and the Politics of Arab-Iranian Relations" in Selective Remembrances: Archaeology in the Construction Commemoration and Consecration of National Pasts, ed. Philip L. Kohl and others (Chicago: The University of Chicago Press, 2007), 225

modern international documents this body of water is known as the "Persian Gulf". Arabian Gulf for Iran means the Red Sea and the "Arabian Gulf" name may create confusion with the Red Sea, so it's better to use the name "Persian Gulf". Iran argues that if the Arabian Gulf gets its name from the fact that more Arab countries are surrounding it, then Indian Ocean should also change its name because India has a smaller border with it than other countries.²⁵

On the international level the Iranian government endeavored to apply pressure on Arab states to deny the name "Arabian Gulf". There are some vivid examples of Iran's pressure: in 2006 the *Economist* magazine was banned in Iran for the simple fact that a published map referred to the Persian Gulf region as merely "The Gulf;" *National Geographic* magazine, in 2004, was forced to republish a map that referred to the region as the "Arabian Gulf" after a vigorous campaign by Iranian academics worldwide. *National Geographic* was eventually forced to include a parenthesis next to the region noting that only "some" individuals refer to the Persian Gulf region as the "Arabian Gulf" rather than the "Persian Gulf."²⁶

In 2012 Iran threatened legal action against Google for not labeling the Persian Gulf on its maps.²⁷ Now Google Maps shows both terms, with Arabian Gulf in parentheses. But Google will show either Arabian or Persian Gulf to local users, depending on geolocation and language settings²⁸.

In 2005, Iran proclaimed April 30th as "National Persian Gulf Day" (April 30th corresponds with the anniversary of Shah Abbas' successful seventeenth-century military campaign, which drove Portugal's navy from

²⁵ Levinson, Mapping the Persian Gulf Naming Dispute, 279.

²⁶ Naimi A., "Naming Dispute: The Persian Gulf" https://www.academia.edu/744772/Naming_Dispute_Persian_Gulf (accessed April 29, 2018).

²⁷ Levs J., "Iran threatens to sue Google for not labeling Persian Gulf," CNN, May 18, 2012, <https://edition.cnn.com/2012/05/17/world/meast/iran-google-gulf/index.htm> (accessed May 02, 2018).

²⁸ Zraick K., "Persian (or Arabian) Gulf Is Caught in the Middle of Regional Rivalries," New York Times 2 June 2016, <https://www.nytimes.com/2016/01/13/world/middleeast/persian-gulf-arabian-gulf-iran-saudi-arabia.html> (accessed August 17, 2018).

the Strait of Hormuz, the narrowest point in the Persian Gulf). In 2006, the top rank of the Iranian soccer league was named the Persian Gulf Cup to advance the Persian label.²⁹ By calling this body of water "Arabian Gulf", Arabs seem to be trying to signal the end of Iran's regional supremacy and to emphasize their own rising star.

The following are some arguments that have been made by Arab supporters for the use of the term "Arabian Gulf":

- The name "Persian Gulf" is linked to the Persian Empire that does not exist any more. The Mediterranean Sea used to be called the Roman Sea and had the Roman Empire lasted that's what we would call it today.

- The people who live around the gulf are mostly Arabs, hence by virtue of demography it should be called the Arabian Gulf.

- Likewise by virtue of geography: six Arabian countries surround the gulf (Saudi Arabia, Kuwait, Iraq, Bahrain, Qatar, and the United Arab Emirates) compared to one Iran and they encompass 70% of the coastline.³⁰

Nay, using the term "Persian Gulf" is impolite at least for Gulf Cooperation Council countries and nationals, whereas, Iran and many Iranians find the term "Arabian Gulf" offensive.³¹

According to analysts, the name can be a source of friction even in diplomatic encounters.³²

Before Iran's revolution of 1979, which led to the establishment of an Islamic Republic, the name "Persian Gulf" still maintained its official credibility. However, after the political isolation of Iran in the post-revolution period and with the decreasing influence of Tehran on the political and economic priorities of the English-speaking Western World, including petroleum-related businesses, there has been an increasing

acceptance of omitting "Persian" from the name on maps or even renaming it "Arabian Gulf".³³

Some atlases and media outlets have taken to referring to "The Gulf" without any adjectival qualification. In the mid-1970s the BBC decided to adopt the neutral term "the Gulf" for the waterway. The British press followed the BBC in adopting "the Gulf" as the primary point of reference. In due course some media on the European continent and a small minority of media and publications in North America adopted the BBC approach in stripping the Persian Gulf of its identity.³⁴

During the naming issue discussion of the United Nations Group of Experts on Geographical Names held in Vienna in 2006 (the 23rd session), the Convenor noted "that countries could not be prohibited from using or creating exonyms."³⁵

The United Nations website only uses the term "Arabian Gulf" when presenting transcripts of speeches by Arab delegates, arguing that the use of "Arabian Gulf" is faulty.³⁶

The United Kingdom government's Permanent Committee on Geographical Names for Official British Use (PCGN) has endorsed the term 'The Persian Gulf' as the correct term for the body of water. PCGN recommends using the name Persian Gulf on UK products, as this has long been considered the English language conventional name for this body of water, which is a high seas feature, extending beyond the territorial limits of any recognized sovereignty. According to PCGN, the Arabian Gulf is an

²⁹ Boghrati N., "Omission of " Persian Gulf" Name Angers Iran," Wordpress, Dec. 28, 2006, <http://www.worldpress.org/Mideast/2616.cfm> (accessed August 07, 2018).

³⁰ Mahan A., "All at Sea over "the Gulf," Asia Times, Dec 9, 2004, http://www.atimes.com/atimes/Middle_East/FL09Ak03.html (accessed August 15, 2018).

³¹ Economic and Social Council, United Nations, Report of the United Nations Group of Experts on Geographical Names on the work of its twenty-third session, Document E/2006/57, New York, 2006.

³² Mostashari A., Factsheet on the Legal and Historical Usage of the "Persian Gulf", Iranian Studies Group at MIT, 2004, <http://web.mit.edu/isg/persiangulf/factsheet.pdf> (accessed August 08, 2018).

²⁹ Levinson M. H., Mapping the Persian Gulf Naming Dispute, 280.

³⁰ Levinson, Mapping the Persian Gulf Naming Dispute, 279.

³¹ Persian Gulf Naming Dispute, Howling Pixel https://howlingpixel.com/wiki/Persian_Gulf_naming_dispute#cite_note-21 (accessed May 02, 2018).

³² Zraick K., "Persian (or Arabian) Gulf Is Caught in the Middle of Regional Rivalries," New York Times 2 June ,2016, <https://www.nytimes.com/2016/01/13/world/middleeast/persian-gulf-arabian-gulf-iran-saudi-arabia.html> (accessed August 17, 2018).

English language version of the name applied by Arabs to this body of water and should not be used.³⁷

Due to increased cooperation with Arab states of the Persian Gulf the USA prefers to use the term "Arabian Gulf". According to the Persian Gulf affairs director at the National Security Council, "the terminology shifted along with geopolitics". So the terms used by American officials had become more nuanced, and that more officials now say "Arabian Gulf" or simply "the Gulf".³⁸

In conclusion we can emphasize that the impact of this naming dispute is of immense importance, because it has definitely had a considerable influence on many political, socio-cultural processes and identity construction of the region. The relations between Iran and the Gulf states impact the situation in the Gulf region, evidently. The Gulf Cooperation members have different attitudes towards Iran. At the same time most of them are confident that Iran is a big threat for the region due to its hegemonic ambitions. This is considered to be one of the major obstacles to normalization of relations with Iran, building a balance of power and effective relationship.

The possible future resolving of this dispute depends on many different factors, such as the geopolitical situation in the region, historical basis of the dispute, the position of external actors and their own interests, hegemonic goals of the regional powers, the religious factor, etc.

There have been suggestions of using other name variants for this region, such as "Islamic Gulf" or "Muslim Gulf"³⁹, "Gulf of Iran", "Gulf of Ajam", "Gulf of Basra", "Persian-Arabian Gulf".⁴⁰

³⁷PCGN geographical names guidance https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/318465/Iran_Toonymic_Factfile_2012.pdf (accessed August 08, 2018).

³⁸ Zraick K., "Persian (or Arabian) Gulf Is Caught in the Middle of Regional Rivalries," New York Times 2 June ,2016, <https://www.nytimes.com/2016/01/13/world/middleeast/persian-gulf-arabian-gulf-iran-saudi-arabia.html> (accessed August 17, 2018).

³⁹ Goodarzi J., Syria and Iran: Diplomatic Alliance and Power Politics in the Middle East(London: Tauris Academic Studies, 2006), 297.

⁴⁰ National Geospatial-Intelligence Agency <https://www.nga.mil/Pages/Default.aspx> (accessed August 05, 2018).

Obviously, the both sides need to reach a mutually agreed compromise for further cooperation and normalization of relations. However, this issue is under the dispute, which makes Arab-Iranian relations more complicated in contemporary times.

ԱՐԱՔԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՐՍԻՑ ԾՈՑԻ ՏԵՂԱՆՎԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Իկիլիկյան Սոնա (Ամփոփում)

Արաքա-իրանական աշխարհաքաղաքական մրցակցությունը խոր արմատներ ունի: Այն սկիզբ է առնում դեռևս վաղ իսլամական դարաշրջանից և պայմանավորված է արաքամուսուլմանական լայնածավալ էքսպանսիայով: VII դարից սկսած՝ Արաքական խալիֆայության կազմավորումը և արաքականացման գործընթացը մեծապես փոխեցին նրա կազմի մեջ ընդգրկված նվաճված ժողովուրդների մշակութային ու կրոնական բնութագիրը: Մասնավորապես Իրանում գրադաշտականությանը եկավ փոխարինելու իսլամը: Պարսիկները, իսլամ ընդունելով, այնուամենայնիվ չէին հանդուրժում արաքական գերիշխանությունը, քանզի քաջ գիտակցում էին իրենց առավելությունն արաքների նկատմամբ՝ հանդիսանալով հազարամյակներ շարունակ գոյություն ունեցող քաղաքակրթության ու հարուստ պատմամշակութային ավանդույթի կրողներ:

Արաքա-իրանական փոխհարաբերությունները շարունակում են մնալ բարդ ու հակասական նաև արդի ժամանակաշրջանում: Այստեղ զգալի դեր է խաղում Պարսից ծոցի տեղանվան գործոնը՝ որպես արաքա-իրանական աշխարհաքաղաքական մրցակցության խորհրդանիշ: Արաքա-իրանական աշխարհաքաղաքական մրցակցությունն ու ծավալվող հակասություններն անշուշտ մեծ

ազդեցություն են թողնում տարածաշրջանի քաղաքական ու մշակութային մի շարք կարևոր գործընթացների վրա:

АРАБО-ИРАНСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ СПОРА О НАЗВАНИИ ПЕРСИДСКОГО ЗАЛИВА

**Икиликян Сона
(Резюме)**

Персидский залив имеет важное геополитическое и социокультурное значение, благодаря своему расположению между Востоком и Западом и богатым энергоресурсам. Важное стратегическое расположение и фактор энергоресурсов превращают регион в арену столкновения интересов и соперничества мировых держав.

Арабо-иранская конкуренция имеет глубокие корни и сложилась на региональном пространстве Ближнего Востока еще в первые века ислама в результате арабо-мусульманской экспансии. Отношения Ирана с арабскими государствами остаются сложными и в новейший период истории. На современном этапе в арабо-иранских отношений особое значение приобретает топоним Персидского залива, отражая символику этого противостояния. Это оказывает огромное влияние на многие современные политические и социокультурные процессы Персидского залива, превращая его в арену столкновения интересов и соперничества.

ԹՅՈՒՐԷՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռամագյան Մամվել

«ՔՅՈՈՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ XVII ԴԱՐԻ ՀԱՅ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ «Քյոոզլի» էպոս, հայ պատմագրություն, Գզիբոզլի Մուստաֆա, Քոսա Մաֆար, Թանդրի Թանխնազ, Դելի Հասան

«Քյոոզլի» էպոսն ուշ ժամանակաշրջանի (XVII դ.) ստեղծագործություն լինելով՝ թյուրքական մյուս էպոսների ու հերոսական ասքերի համեմատ իր տարածվածության տեսակետից նախադեպ չունի, այն համընդհանուր ընդունելության է արժանացել ամենատարբեր ազգերի շրջանում՝ Տյան-Շանից մինչև Բալկաններ, Կասպից ծովից մինչև Սիբիր: Հետազոտողների մեծամասնության կարծիքով (Վ. Մ. Ժիրմունսկի, Բ. Ա. Կարրին, Ն. Փ. Բորաթավ նն), «Քյոոզլի» էպոսի ձևավորումը սկսվել է XVIIդ.-ից և մինչև XIXդ. վերջերն այն ենթարկվել է գեղարվեստական բազմաբնույթ մշակումների ու փոփոխությունների: Էպոսի արևմտյան խմբում ընդգրկված տարբերակները (թյուրքական, ադրբեջանական, հայկական, քրդական, վրացական, դադստանյան նն) հիմնականում հանգում են ատրպատականյան (կամ, այսպես կոչված, «վաղադրբեջանական») «Քյոոզլու» էպոսին: Դրանք հիմնավորապես պահպանելով պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, սկզբնավորվելով անմիջական պատմական հենքից՝ ճշմարտացիորեն են վերարտադրել Փոքր Ասիայում XVI-XVIIդդ. տեղի ունեցած անցքերը, այն է՝ ջալալիների (ջելալիների) ապստամբությունները:

Էպոսի գրառումից ի վեր հետազոտողներին մշտապես զբաղեցրել են դրանում արտացոլված իրադարձությունների և գործող անձանց, մանավանդ, Քյոոզլու կերպարի պատմականության, էպոսի ձևավորման ժամանակաշրջանի և տարածաշրջանի հարցերը: Նմանօրինակ հարցեր քննարկվել են XIX դ. վերջի և XX դ. սկզբի ոուս և եվրոպացի բազմաթիվ հեղինակների աշխատություններում (Վ. Գորդլևսկի, Վ. Սմիռնով, Վ. Ռադլով, Ա. Կրիմսկի, Ի. Բերեզին, Ի. Կունոշ, Է. Սոսսի, Օ. Շայց, Գ. Մեսարոշ, Ժ. Դյումեզիլ և այլք), սակայն դրանք մեծամասամբ համապարփակ ուսումնասիրություններ չլինելով՝ լիովին չեն լուսաբանել վերը նշված հարցերը: Պատմական իրականությունից դուրս դիտարկվելով՝ երբեմն ժխտվել է նաև էպոսի ինքնօրինակությունը: Հայ և օտարազգի հետազոտողների կողմից փորձեր են արվել Քյոոզլու և Արշակ Բ-ի, Քյոոզլու և Աշոտ Երկաթի զրույցների միջև ծագումնաբանական ու տիպաբանական զուգահեռներ անցկացնելու (Ի. Շոպեն, Ս. Կանայանց, Ժ. Դյումեզիլ, Հ. Պերպերյան նն):

¹ Քյոոզլու և Աշոտ Երկաթի զրույցների միջև առկա համանմանությունների մասին Ի.Շոպենի գրությունը նվազ հանրաճանաչ է (И.Шопен, Кеп-Оглу. Татарская легенда, - «Маяк современного просвещения и образованности. Труды ученых и литераторов, русских и иностранных», ч. III, с. 12-25, СПб., 1840, с. 22): «Մասնա ծներ» էպոսի պատմամերի ուսումնասիրության վերաբերմամբ Ս.Կանայանցը հավատարիմ իր ոճին, ժամանակին մի շարք նույնացումներ է արել, ինչպես Քյոոզլուն Արշակ Բ-ի, Դրոաթը Տիրան արքայի ճարտուկ ճանճկենի կամ Քոտկիկ Ջալալու, Քյոոզլու Ջուֆիդար թուրը Թուր Կեձակիի կամ «հավլունի թրի» հետ նն (Ս Կանայեանց, Ջոջանց տուն կամ Մասնայ ծներ վեպի երեք փոփոխակ, Վաղարշապատ, 1910, էջ 2, ԺԳ, ԺԵ, Ի): Ժ.Դյումեզիլը մի հատուկ ուսումնասիրություն է նվիրել հայերի կուրացման և որդիական վրեժխնդրության մասին Փոքր Ասիայում, Հյուսիսային և Հարավային Կովկասում տարածված, այսպես կոչված, «կույրի զավակի» զրույցի (առասպելային) համեմատական վերլուծությանը (G.Dumézil, Les légendes de «Fils d'aevglés» au Caucase et autour du Caucase, «Revue de l'Historie des Religions», Vol.

Ավելի ուշ, ընդ որում, հիմնականում Թուրքիայի հանրապետական շրջանում նմանատիպ հարցերին անդրադարձած թուրք հետազոտողների կողմից (Մ.Ֆ.Քյոնիքյույուզադե, Վելիդ նև) «Քյոնոլլին» դիտարկվել է որպես գուտ «թուրքական հանճարի» արտահայտություն, առաջ են բաշվել ծայրահեղ այլ հակազիտական տեսակետներ: Ընդամենը, մի շարք այլ հեղինակներ (Ն.Փ.Բորաթավ, Ա.Ս.Լենեդ, Մ.Ս.Սեդեդեր) բազմիցս նշել են էպոսի գլխավոր հերոսի կերպարի երկատման և երկվիեղկման միտքը: Իբր, շփոթ առաջանալով՝ նույնացվել են XVIIդ. ապրած երկու նույնանուն անձինք՝ ջալալի առաջնորդը և բանաստեղծ-աշուղը, կամ, իբր, իրականում գոյություն ունեցած բանաստեղծ Քյոնոլլուի ստեղծագործություններին են ձուլվել

117, p. 50-74, E. Leroux, Paris, 1938): Նրա կարծիքով, գրույցի հնագույն ձևը Հերոդոտոսի (Ք. ա. Վդ.) մոտ պահպանված սկյութական առասպելն է (Հերոդոտոս, գր. 4, 1-4), ապա Փավստոս Բուզանդից և Մովսես Խորենացուց ավանդված «Պարսից պատերազմ» հերոսավեպը, մասնավորապես, Շապուհի կողմից ձուլ պատճառով Տիրան թագավորի կուրացման և նրա որդի Արշակ Բ-ի վրիժառության ու մահվան դրվագները: Ամենաուշ խմբագրություններն օտարտական, սվանական և թուրքական («Քյոնոլլի») ասքերն են: Սկյութական, հայկական և թուրքական տարբերակներում հայերի կուրացման պատիժն անպայմանորեն կապված է ձիաբուծության հետ, ինչը որ ավելի հստակ ու տրամաբանական է ներկայացված Արշակ Բ-ի վեպում: Վերջինիս և «Քյոնոլլի» էպոսի միջև հյուսված ընդհանրական համանունություններ է նշում, ի վերջո, հնարավոր համարելով դրանց ընդհանուր կապը, բայց ոչ անպայման ծագումնաբանական:

Հյուսվածի այս տեսությունը զարգացնելով՝ ֆրանսահայ բանասեր Հ.Պերպերյանը ևս մի քանի համանունություններ է նշում և դրանց առկայությամբ հիմնավորում, որ «Քեոնոլլուի գրույցին մեկ մասը Արշակի վեպն սերած է: Այս մասը նախապես պետք է որ անջատ եղած ըլլայ և պատմական Քեոնոլլուի անուան շուրջ կազմուած դիւցազնավեպէն վերջ ձուլուած անոր հետ» (Հ.Պերպերյան, Արշակ Բ. և Քեոնոլլու, Փարիզ, 1938, էջ 40): Պերպերյանի կարծիքով, «Արշակ առած է Ռուշան կամ Քեոնոլլու-Ռուշան անունը», իսկ երկու վեպերի ձուլումը կատարվել է հայ աշուղների կողմից: Սակայն որոշ վերապահությամբ գտնում է, որ «Եթէ ընդունուի որ Քեոնոլլուի դիւցազնավեպին մեկ մասը սերած է Արշակի վեպէն, պետք է ընդունիլ նաեւ թէ այս վերջինը իր գոյութիւնը պահած է անուան ինչն ժ.Ձ. դար» (անդ, էջ 43):

առավել-խոռվարար Քյոնոլլուի մասին այլ ասացողների հորինած առասպելներն ու երգերը: Թուրք բանասիրության մեջ հայտնի է նաև այլ կարծիք, ինչի համաձայն Քյոնոլլին XVIIդ. վերջին ապրած երաժիշտ-բանաստեղծ է, սակայն հենց ինքնին հերոսի բուն անունը հեքիաթային-առասպելական ծագում ունի և վաղնջական ժամանակներից հանրահայտ է եղել թուրքերի շրջանում: Իբր, հենց այդ տարածված անունն է վերցրել երաժիշտ-բանաստեղծը²:

Թեև նման իրարամերժ և հակասական կարծիքներ հայտնվել են խորհրդային շրջանի ուսումնասիրողների կողմից ևս (Բ.Պետրուշևսկի և այլք), սակայն հնարավորություն ունենալով վերահասու լինել պատմական (հիմնականում՝ հայկական) աղբյուրներին և օգտագործելով դրանք՝ լրացվել է այն բացը, որն առկա է հիշատակված հեղինակների գործերում: Սույն հանգամանքն էլ հենց թույլ է տվել կատարել և ամրագրել մի շարք իրավացի եզրահանգումներ էպոսում արտացոլված պատմական իրադարձությունների, էպոսի ստեղծման և ձևավորման ժամանակաշրջանի, ինչպես նաև գլխավոր հերոսների պատմականության և այլ հարցերի վերաբերյալ:

Համեմատության համար նշենք, որ անհրաժեշտ բավականաչափ տեղեկություններ օտար աղբյուրներում չեն հանդիպում: Միայն XVIIդ. օսմանյան պատմիչ Էվլիյա Չելեբին է իր ուղեգրություններում («Սեյահեթ-նամե») հաղորդում Քյոնոլլու մասին որոշ տեղեկություններ, որոնք հիմնականում աղոտ ակնարկներ լինելով՝ բազմաթիվ թյուր կարծիքների տեղիք են տվել: Վերջինիս վկայության համաձայն, Քյոնոլլին հոչակված է եղել որպես «հայդութ» (ավազակ): Միաժամանակ XVIIդ. երկրորդ

² Б.Каррыев, Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов. М., 1968, с. 79-80.

կեսին պատահած դեպքերի առթիվ պատմիչը հիշատակում է նշանավոր աշուղ Քյոոզլուն՝ առանց նշելու սակայն, թե երբ է նա ապրել և ստեղծագործել: Հետաքրքիր է, որ տվյալ դեպքում ոչ մի խոսք չկա «դեստանի» մասին:

Վիպական Քյոոզլու և նրա զինակիցների պատմական նախատիպերի, ինչպես նաև նրանց գործունեության տարածքի հարցը որոշելու տեսանկյունից առավել արժանահավատ և վավերական պատմական աղբյուրներ են հանդիսանում Օսմանյան կայսրության պետական արխիվներում պահվող և XVIդ. վերջով թվագրվող փաստաթղթերը (Mühimme Defterleri), որոնք հիմնականում հրամանագրեր են և նահանգային իշխանությունների զեկույցներ: Ընդամին, 1579-1581 թթ., 1588թ. և 1593-1595 թթ. Բոլիի, Գերեղեյի, Իչելի, Կարամանի, Անատոլիայի այլ շրջանների բարձրաստիճան պաշտոնյաներին հասցեագրված հրամանագրերում նկարագրվում են Քյոոզլու և նրա գործակիցների ավագակային գործողությունները, նշվում դրանց վերացման և Քյոոզլու ձերբակալության անհրաժեշտությունը: Առանձնահատուկ շեշտվում է, որ Քյոոզլի անվամբ ավագակը քարավաններ է կողոպտել, պատանիներ առևանգել ևն, ինչը միանգամայն համահունչ է էպոսի այուժեյին³: Նշված փաստաթղթերի համաձայն, Քյոոզլին ակտիվ է եղել Անատոլիայի հյուսիս-արևմուտքում, մասնավորապես, Բոլու և Գերեղե շրջաններում (ներկայիս Թուրքիայի Բոլու նահանգում): Ավելին, փաստաթղթերից մեկում նույնիսկ նշվում է, թե Քյոոզլին Գերեղեյին մերձակա Սայրք (Սոյուք) գյուղից է: Մեկ այլ

փաստաթղթով վկայվում է, որ Իրանի հետ պատերազմի ընթացքում Քյոոզլին և իր գործակիցները 200 հոգանոց հրոսակախմբով հակակառավարական ավագակային գործողություններ են իրականացրել մինևույն Բոլու և Գերեղե շրջաններում⁴: Օսմանյան շրջանի տվյալ փաստաթղթերի հայտնի հետազոտողներից թուրք պատմաբան Մ.Արդալի կարծիքով, ընդհանրապես, պատմական Քյոոզլին ջալալիական ապստամբությունների ռահվիրաներից է⁵:

Առավել իրական է թվում Խ.Կորոզլու ենթադրությունը, որի կարծիքով, «ակնհայտ է, որ Քյոոզլուն (կամ Ռոուշանը քյոոզլու տոհմից, Ռոուշան Քյոոզլուն) առաջին անգամ հայտնվել է Բոլի նահանգում, ուր և ցայժմ բնակվում են թուրքմենական ցեղերը: Այստեղ նա հավաքել է մեծ ուժեր, այստեղից սկսել իր շարժումը՝ տարածելով այն ողջ Անատոլիայում, դարձել ջալալիների զլխավոր առաջնորդներից մեկը: Առաքել Թավրիզեցու (Դավրիժեցու), Էվլիյա Չելեբիի մոտ և փաստաթղթերում հիշատակվող Քյոոզլուն ակնհայտորեն մինևույն անձն է⁶:

Հատկանշական է, որ վերը նշված պատմական վավերագրերում Քյոոզլու խաղերի մասին որևէ հիշատակություն չկա:

Օսմանյան պետական գրագրության մինևույն փաստաթղթերում բազմիցս հիշատակվում է նաև Քյոոզլու մերձավոր գործակից Գզիրոլի Մուստաֆան, որպես Մալաթիայի և Սվազի միջև գործած ավագակապետ, ընդ որում, մինչև բուն ջալալիական ելույթների սկզբնավորումը (ինչը որ վկայված է հայ

³ P.N.Boratav, L'épopée et la «hikaye», Philologiae Turcicae Fundamenta, T. 2, p. 11-44, Wiesbaden, 1965, p. 26; F. Sümer, Köroğlu, Kızıroğlu Mustafa ve Demircioğlu İle İlgili Vesikalar, Türk Dünyası Araştırmaları, Şubat, İstanbul, 1987, s. 9-46; X.Короглы, Туркменский эпос «Гер-оглы» и особенности его историзма, Специфика фольклорных жанров. М., 1973, с. 144.

⁴ M.Akdağ, Türk Halkının Dirlik ve Düzenlik Kavgası. «Celali İsyanları», Cem Yayınevi, İstanbul, 1995, s. 265, 298.

⁵ Անդ, էջ 298-299:

⁶ Короглы 1973, с. 144.

պատմագրության կողմից): Մասնավորապես, 1588 թ. մայիսի 25-ով թվագրված Մալաթիայի, Տիվրիկի և Արաբկիրի դատավորների ուղղված փաստաթղթում մանրամասն նկարագրվում են տվյալ և այլ գավառներում Գզիրոլու (բնագրում՝ Գեզիրոլու) Մուստաֆայի ավագակային գործողությունները⁷: Նմանապես Գզիրոլուն (այլ տարբերակով՝ Գազիրոլու, Քիզիրոլու) հիշատակվում է նաև 1588-1589 թթ. օսմանյան պետական գրագրության այլ փաստաթղթերում⁸: Մեկ այլ փաստաթղթով նշվում է վերջինիս ավագակայսմբի անդամների թիվը, այն է՝ 250 հեծյալ⁹:

Ընդհանրապես, օսմանյան պետական արխիվների ուսումնասիրության արդյունքների համաձայն, Քյոոզլին և Գզիրոլի Մուստաֆան համարվում են նախաջալախական շրջանի ավագակապետեր, որոնք անհնազանդություն սկսել են ցուցաբերել դեռևս մինչև բուն ջալալիական առաջին ապստամբությունները՝ 1582-1584 թթ.-ից սկսած:

Ինչպես արդեն նշվել է, էպոսի հիմքում ընկած պատմական գլխավոր իրադարձություններն առնչվում են XVI-XVII դդ. շուրջ 20 տարի Օսմանյան կայսրությունը ցնցած ջալալիների (ջելալիների) ապստամբություններին: Դրանք մի իսկական պատուհաս են եղել կայսրության ժողովուրդների, հատկապես, քրիստոնյաների և հայերի համար: Օգտվելով թուրք-իրանական պատերազմների ընձեռած հնարավորությունից և պետության թուլությունից՝ ջալալիներն ավարի ու ավերի են մատնել ողջ Փոքր Ասիան, Հայաստանը, Միջագետքը, Միրիան, Լիբանանը, ավերվել են բազում քաղաքներ, ինչպես Սեբաստիան և Թոխատը (Եվդոկիա),

⁷ I. Aslanoğlu, Kızıroğlu Mustafa Bey, FÜ Firat Havzası Folklor ve Etnografya Sempozyumu 24-27 Ekim 1985, Elazığ, 1992, s. 7.

⁸ Անդ, էջ 7-8:

⁹ Akdağ 1995, s. 317.

բնակչությունը կոտորվել է, գերեվարվել, մանավանդ, հայության գզալի մասը հարկադրված գաղթի ճանապարհն է բռնել:

Հայ մատենագրության էջերում առկա են բազմաթիվ հաղորդումներ ջալալիների արշավանքների մասին: Ընդհանրապես, XVII դ. հայ պատմագրությունը կարողացավ հաղթահարել հայ պատմագրական մտքի՝ նախորդած անկման հարյուրամյակը, բերելով դասական մատենագրության ավանդույթներն ու նոր շրջանի գրական ընկալումների նախնականությունը մեկտեղած մի սերունդ¹⁰: Տվյալ ժամանակաշրջանի պատմության կարևոր սկզբնաղբյուրներն են XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը» (*«Գիրք պատմութեանց»*), Գրիգոր Դարանաղցու (Կամախեցի) «Ժամանակագրութիւնը», Երեմիա Չելեբի Քյոնուրճյանի «Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» աշխատությունը, Ազարիա Մասնեցու ողբը (*«Ողբ ի վերայ հարուածոց արեւելեան գաւառացն եւ աշխարհին հայոց ի ձեռաց Ճելալեանց»*), ինչպես նաև XVI-XVIIIդդ. մանր ժամանակագրություններն ու ձեռագիր հիշատակարանները: Ընդամին, Քյոոզլու և նրա զինակիցների մասին հիշատակությունների հարցին անդրադառնալիս ուսումնասիրողները հայ մատենագիրներից մշտապես նշել են միայն Առաքել Դավրիժեցուն և լավագույն դեպքում նաև Եղիա Մուշեղյանին: Այնինչ, այդ կերպ անտեսվել են մանր ժամանակագրությունների հեղինակները, որոնցից հաճախ օգտվել են հենց Առաքել Դավրիժեցին, Գրիգոր Դարանաղցին և այլք:

¹⁰ Գ.Այվազյան, Երեմիա Չելեբի Քյոնուրճյանի ձեռագրական ժառանգությունը, «Բանբեր Մատենադարանի», թ. 20, էջ 349-398, Երևան, 2014, էջ 349:

Հատկանշական է, որ ունենալով դարերի ընթացքում ձևավորված կայուն պատմագրական ավանդույթ՝ և պահպանելով այն նույնիսկ հայության համար դժվարին և ծանր ժամանակաշրջանում՝ հայկական աղբյուրներն ի տարբերություն վերը նշված օտար աղբյուրների՝ ոչ միայն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում, այլև թույլ են տալիս պատասխանել էպոսի ուսումնասիրության հետ կապված բազմազան հարցերի: Հայ մատենագիրների երկերում համապատասխան տեղեկություններ կան ինչպես Քյոռոզլու, այնպես էլ էպոսի պատմական նախատիպեր ունեցող մյուս գործող անձանց (Գգիրոզլի Մուստաֆա, Քոսա Սաֆար, Թանդրի Թանիմագ, Դելի Հասան ևն) մասին:

Ստորև ամփոփ կերպով կներկայացվեն վերջիններիս վերաբերյալ առկա տեղեկությունները՝ բացառությամբ Դելի Հասանի, ով, որպես ջալալիական ապստամբության ղեկավար, առավել հանրահայտ պատմական անձնավորություն է, քան մյուսները¹¹: Վերջինիս մասին ծավալուն հաղորդումներ կան ինչպես վերը նշված հայկական բոլոր աղբյուրներում, այնպես էլ թուրք պատմիչների երկերում:

¹¹ Եղբոր՝ Կարա Յազըջիի մահից հետո (1602 թ. սկիզբ) գլխավորելով ջալալիների ապստամբությունը՝ Դելի Հասանը մի քանի հաղթական կռիվներ է մղում կառավարական գործերի դեմ: Մայիսին նրա գործերը ներխուժում են Թոխատ, ինչի մասին ի տարբերություն թուրքական աղբյուրների՝ առավել ընդարձակ տեղեկություններ են հայտնում հայկական աղբյուրները, մասնավորապես, այդ առթիվ Ստեփանոս Թոխատեցու, Հակոբ Բաթուկեցի գրած չափածո ողբերը: 1603 թ. կեսերին սուլթանի կողմից ներման արժանանալով՝ Դելի Հասանը ստանում է Բուլդուֆի սանջաքը (Բոսնիա), ուր ևս բնակչությունը սկսում է ենթարկվել կողոպուտի և բռնությունների: Հանդուզն ջալալին նույնիսկ բանակցությունների մեջ է մտնում Վենետիկի հանրապետության և Հռոմի պապի հետ՝ 100 հազար ոսկով ծախելով Դալմաթիայի Դեսնե բերդը: Սակայն դրանից հետո ձեռքակալվում է պետական դավաճանության մեղադրանքով և 1605 թ. գլխատվում Բելգրադում:

Մինևույն նկատառումներով չեն ներկայացվի նաև ապստամբության ժամանակակից օսմանյան մեծ վեզիր և գորահրամանատար Ջիդալագադե (Ջիդալոլի) Յուսուֆ Մինան փաշային¹² վերաբերող վկայությունները: Վերջինս բացառապես թուրքմենական պատումներից հայտնի Ջիդալի-բեկի (Ջիդալի-Քյոռ) կերպարի պատմական նախատիպն է, որը «Գյոռոզլի» էպոսում հանդես է գալիս որպես գլխավոր հերոսի հայր կամ պապ¹³:

Ստաբել Դավրիժեցու հաղորդումները

Ուշ միջնադարի հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Ստաբել վրդ. Դավրիժեցու (XVI դ. 90-ական թթ. - 1670) «Գիրք պատմութեանց» երկը, որն ընդգրկում է 60 տարվա բուռն ռազմաքաղաքական իրադարձությունների պատմությունը (1602-1662 թթ.), գրվել է 1651-1662 թթ. ընթացքում: Երկում պատմիչը հաճախ հանդես է գալիս որպես անմիջական ակնաստես, ինչն ավելի է արժևորում նրա հաղորդումները:

¹² Օսմանյան մեծ վեզիր Ջիդալագադե Յուսուֆ Մինան փաշան իսլամ ընդունած մի ջենովացի էր, Չիկալա (Cicala) անվամբ: Սույն փաստը նշվում է նաև տվյալ ժամանակաշրջանի հայկական աղբյուրներում, օրինակ, Բարսեղ Վարագեցու մոտ. «...գլուխ գորացն զՎանայ փաշէն զՋոլալ օլլին որ էր յազգէն Ֆոանկաց» (Դիւան հայոց պատմութեան [ԴՀՊ], գր. Ժ, Մանր մատենագիրք ԺԵ-ԺԺ դար, կենսագրական տեղեկություններով և ծանօթություններով, հրատարակեց՝ Գիւտ քահ. Աղանեսեց, Թիֆլիս, 1912, էջ 36): 1596 թ. Կերեստեշի (Հունգարիա) ճակատամարտից հետո փախստականների նկատմամբ հենց նրա գործադրած խիստ միջոցներն են առիթ հանդիսանում ջալալիների ապստամբության թափ առնելուն: Այնուամենայնիվ, 1605թ. նրան հաջողվում է պարսից գործերի դեմ ձեռնարկած արշավանքում սիրաշահելով ներգրավել որոշ ջալալի առաջնորդների: Ուրմիռ լճի մերձակայքում տեղի ունեցած ճակատամարտում պարտվելով և նահանջելով՝ նույն թվականի դեկտեմբերին Մինան փաշան մահանում է Դիարբեքիրում (որոշ հայկական աղբյուրների վկայությամբ, ինքնասպան է լինում):

¹³ Каррмев, с. 19.

Դավրիժեցին մի ամբողջական ընդարձակ գլուխ է նվիրել ջալալիների արշավանքների և դրանց հետևանքների նկարագրությանը (գլուխ է, «Յաղագս յայտնելոյ ջալալոցն եւ սաստիկ սովուն եւ մարդակեր գայլոցն, եւ այլ եւս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի»): Մասնավորապես, նշվում է. «...Ջալալիքն, որք էին յաւուրսն յայնոսիկ ի կողմանս երկրին Օսմանցոց, գերագոյնք քան զնոսա աւերիչք: Եւ սոքա էին արք անուանիք՝ և յաղթողք՝ և քաջ պատերազմողք՝ և անպարտելի այնոյեան: Եւ զի էին Ջալալիքս յայտքիկ բազումք, վասն որոյ հարկաւոր համարիմ շարադրել զանուանս նոցա, որով մարթասցիս վերահասու լինիլ աւերման աշխարհաց՝ որ ի նոցունց եղև. թէ որքան եղեալ է և գոր ինչ լուսաբ յականատես պատմողաց՝ զայն գրեմք»¹⁴:

Այս պարբերությունից անմիջապես հետո պատմիչը հերթականությամբ թվարկում է ջալալիների առաջնորդներին. «Նախ Դարայ Եազիչին բազում հեծելօք, որ ի ՌևԷ. {1598} թուին ապստամբեցաւ ի թագաւորէն...

Հուսէյին փաշա՝ ՌևԸ {1599} թուին ապստամբեցաւ ի թագաւորէն: Քոսայ Սաֆար ՌևԸ. {1599} թուին ապստամբեցաւ... Թաւուլն ԺԲՌ. {12.000} մարդով ՌՄԲ. {1603} թուին ապստամբեցաւ: Այս Թաւուլիս եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք: Մահմատ փաշայ ԻՌ. {20.000} մարդով: Մանօղլի: Ջանփօլատօղլի Ալի փաշայ: Սորին եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք: Քօնօղլի¹⁵, այս այն Քօնօղլին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշդներն եղանակեն: Գզիթօղլի Մուստաֆայ բէկ Ռ. {1.000} մարդով. և սա ևս ընկեր է Քօնօղլոյն՝ զոր յոլով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ:

¹⁴ Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ.Նանլարեանի, Երևան, 1990, էջ 107:

¹⁵ Դավրիժեցու երկի մեզ հասած մյուս ձեռագրերում Քյոնօղլու անունն այս հատվածում վկայված է նաև «Քօնօղլի» և «Քօրօղլի» ձևերով (անդ, էջ 108):

Միս Մուստաֆայ բէկ: Դարադաշ: Դալունասիպ: Եօլայ Սըդմագ, Թանդրի Թանհմագ: Գօկապախան: Չրփլախ: Քեասաքեաս: Քրլու: Դարասահաթ: Աղաջդանփիթի: Սոքա ամենէքեան Ջալալիք էին, որք ոչ հնազանդէին թագաւորին. և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք. և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածսն հրդեհեալ այրէին:

Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև ցԵրեւան քաղաք. ի Բաղդատայ մինչև ցԴամուրդափուն¹⁶, զՍպիտակ ծովու մէջն և զՍեաւ ծովու մէջն. այս եզերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և ապականութիւն դարձուցին»¹⁷:

Դավրիժեցու այս մեկ տողը՝ «այս այն Քօնօղլին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշդներն եղանակեն», ուսումնասիրողներին սկզբնապես հնարավորություն է տվել հաստատելու Քյոնօղլու իրական պատմական անձ լինելը¹⁸: Սա

¹⁶ Դամուրդափուն (թրք.՝ բառացի «երկաթե դուռ», հայկական աղբյուրներում՝ «Ճորայ պահակ») ներկայիս Դերբենդն է: Էպոսում այն հաճախ է հիշատակվում տարբեր առիթներով:

¹⁷ Անդ, էջ 107-108:

¹⁸ Դեռևս 1874 թ. Դավրիժեցու երկի Սանկտ-Պետերբուրգի ֆրանսերեն հրատարակության մեջ (Livre d'histoires, composé par le Vartabied Arakel de Tauriz.- Collection d'historiens arméniens, t. 1, S.-Pbg, 1874, p. 311) արևելագետ Մ.Բրոսսեն սխալ է թարգմանել այս տողը («Karh-Oghli, l'auteur mme de beaucoup de mauvais tours, chantés par les romansiers»), որից հետևում է, թե աշուղներն են Քյոնօղլու մասին երգեր հորինել, այսինքն՝ ապստամբ խոռվարարն ինքը երգերի հեղինակ, հետևաբար և աշուղ չէ (Դարիժեցի, էջ 508): Հնդսմին, Բրոսսեի թարգմանության մեջ սխալ է տառադարձվել նաև «Քօնօղլի» անձնանունը (Karh-Oghli), այսինչ, այն իր ուղիղ ձևով առկա է Դավրիժեցու երկի առաջին հրատարակության մեջ (Ամստերդամ, 1669 թ.):

Հիմնվելով հենց սույն սխալ թարգմանության վրա (այլ ոչ թե Խ.Մամվելյանի, տե՛ս Քյոն-Օղլի, ժող. վիպ., էջ 29) Բ.Պետրուշևսկին ևս ճիշտ չէ հաղորդել Դավրիժեցու միտքը. «Кёр-оглу – это тот, о котором сложено много песен, ныне распеваемых ашугами» (И.Петрушевский, Очерки по истории феодальных отношений в

Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Л., 1949, с. 328): Պատմիչի միտքն աղավաղված է նաև Գզիրոլի Մուստաֆա-բեկին վերաբերվող հատվածի թարգմանության մեջ. «*Мустафа-Бек Гэир-оглу с 1000 мучами, - это товарищ Кёр-оглу, часто упоминаемый в песнях*» (անդ): Այնինչ Դավրիժեցին միանգամայն պարզ է նշում՝ «*բազում խաղ է սասցեալ*», որոնք այժմ էլ երգում են աշուղները, և որոնցում Քյոոզլին բազմիցս հիշատակում է իր ընկեր Գզիրոլի Մուստաֆա-բեկին (մանրամասն՝ Լ.Դանեղյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVIIդ. պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978, էջ 124-125): Ըստ երևույթին, հիմնվելով այս աղավաղված հատվածի վրա և տուրք տալով ավելի վաղ հայտնված նմանատիպ կարծիքներին՝ Պետրուշևսկին արել է հետևյալ եզրակացությունը. «*Դժվար է ասել, սակայն, թե ինչքանով է առնչվում այս պատմական Քյոոզլուն ժողովրդական ասքերի հերոսին... Հնարավոր է, որ ջալալիական շարժման առաջնորդներից մեկն ընդունած լինի ավելի վաղ ստեղծված առասպելի շնորհիվ հանրածանոթ Քյոոզլու անունը*» (Петрушевский, с. 328):

Պատմիչի վկայության հավաստիությանը կասկածելով՝ սույն կարծիքը ընդունելի են համարել նաև Ս. Ջուլայանը (Ջուլայան, էջ 184) և Վ.Հակոբյանը: «*Ուրեմն ըստ Դավրիժեցու Քյոոզլին ջալալի էր, - գրում է վերջինս, - ապա ինչպես բացատրել այն փաստը, որ ժողովրդը խորշելով ջալալիներից՝ Քյոոզլու նկատմամբ հարգանքով էր վերաբերվում և նրա անձնավորության շուրջ երգեր ստեղծելով տարածում էր դրանք... Այս փաստերը մեզ ենթադրել են տալիս, որ Առաքել Դավրիժեցին, հավանաբար, շփոթել է աղբյուրական ժողովրդական էպոսի հերոս Քյոոզլուն ջալալիներից որևէ մեկի հետ, որ Քյոոզլին ավելի հին է, քան ջալալիների շարժումը... Ջալալիների ժամանակակիցների՝ Մունշիի, Ազարիա Մասնեցու վկայություններում Դավրիժեցու այս տեղեկությունը հաստատող փաստեր չկան: Հետևապես ճիշտ է Բ.Պ. Պետրուշևսկին...» (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ [ՀԶՀ], կազմեցին Վ.Հակոբյան, Ա.Հովհաննիսյան, հտ. Ա, Երևան, 1974, էջ Ժ, հմմտ. Մանր ժամանակագրություններ XIII-XVIIIդդ. [ՄԺ], կազմեց Վ.Հակոբյան, հտ. Բ, Երևան, 1956, էջ 535): Լախ, նման փաստարկներով անհնար է հերքել պատմական արժեք ունեցող վկայությունը: Դավրիժեցին և մյուս հայ մատենագիրները ևս (բացի Եղիա Մուշեղյանից) որոշակիորեն չեն նշում Քյոոզլու շահատակությունների մասին, սակայն նկարագրելով, ընդհանրապես, ջալալիների չարագործությունները Գառնիում և Գեղարքունիքում՝ պատմիչը միաժամանակ նրանց անթարսյց բնութագրում է որպես «*արք անուանիք՝ և յաղթողը՝ և քաջ պատերազմողը՝ և անպարտելի ախոյեան*» (Դավրիժեցի, էջ 107): Ավելին, հենց էպոսում որպես Քյոոզլու զինակիցներ հանդես եկող Դելի Հասանը և Գզիրոլի Մուստաֆան հայ և օտար աղբյուրներում հիշատակվում են որպես նզովյալ չարագործներ, սակայն ասքերում նրանք դրական կերպարներ են դարձել: Իսկ ինչ վերաբերվում է Էսքանդար-բեկ Մունշիի, Ազարիա Մասնեցու և այլոց մոտ Քյոոզլու անվան հիշատակության բացակայությանը, ապա նշենք, որ, այնուամենայնիվ, միայն*

միաժամանակ պատմագրության մեջ Քյոոզլու մասին մեզ հայտնի հնագույն հիշատակությունն է:

Ուշագրավ է, որ ապստամբության գլխավոր առաջնորդ Կարա Յազըջիից հետո ոմանց ապստամբվելու տարեթիվը և գորքերի քանակը, ոմանց էլ լոկ անվանապես նշելով՝ Դավրիժեցին առանձնապես մանրամասն է անդրադառնում Քյոոզլուն և նրա զինակից Գզիրոլի Մուստաֆա բեկին: Պատմիչը թեև այստեղ չի նշում նրանց ապստամբվելու տարեթիվերը, սակայն իր հաղորդմամբ հաստատում է Քյոոզլու՝ երգերի (խաղերի) հեղինակ լինելը, նրա ստեղծագործությունների տարածված լինելը աշուղների շրջանում: Ըստ այդմ, ակնհայտ է, որ հենց Դավրիժեցու օրոք՝ XVIIդ. առաջին կեսին Քյոոզլու խաղերն արդեն իսկ հորինված և երգվում էին¹⁹: Սույն հաղորդումը կարևորում է ինչպես էպոսի ստեղծման և ձևավորման ժամանակի հարցը որոշելու, այնպես էլ պատմական Քյոոզլու միաժամանակ և՛

Դավրիժեցին չէ, որ վկայում է ջալալի առաջնորդի մասին, և որ առավել էական է, միայն Դավրիժեցին չէ, որ նշում է նրա աշուղ լինելը:

¹⁹ Հիմք ընդունելով Դավրիժեցու հաղորդումը՝ Ա.Ալպոյաճյանը ևս գտնում է, որ «*Քեոռ Օղլու ժող. բազմաթիւ բանահիւսութեանց հերոսը... իր գործունէութեան շրջանին ալ արդէն դիւցազնավէպի նիւթ դարձած պիտի ըլլայ*» (Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հտ. Ա, Գահիրէ, 1937, էջ 603-604): Բանասերների գնահատմամբ, Քյոոզլուն վերագրվող մինչև մեր օրերը հասած խաղերի լեզուն հիմնականում բնորոշ նմանություն ունի XVI-XVIIդդ. փոքրասիական աշուղների խաղերի լեզվի հետ, դրանց մի մասը գրառված է հենց տվյալ ժամանակահատվածում գործածված թուրքերենով, ինչը որ հաստատում է Դավրիժեցու և մյուսների վկայություններն ու էպոսի կազմության թվականի մասին արված եզրակացությունը: Քյոոզլու խաղերի վերաբերմամբ որոշ եզրահանգումներ են արվել Բորաթավի ժամանակակից թուրք ուսումնասիրողներ Ռիզա Նուրի և Ահմեդ Քուլսիի կողմից, որոնք որպես հերոսի պատմականության ապացույց մատնանշում են իրենց հրատարակած և 1593-ով թվագրվող Քյոոզլու անվամբ հասած մի քանի խաղեր: Ռ.Նուրի գրառած մի թուրքական ավանդության համաձայն, Քյոոզլին ծնունդով Անի քաղաքից է (Պերպերեան, էջ 36):

ջալալի առաջնորդ, և՛ աշուղ-բանաստեղծ լինելու իրողության տեսակետից²⁰:

Այսպիսով, Քյոոզլին ինքը խաղերի հեղինակ է, ինչը հասակ կերպով վկայում է պատմիչը: Էպոսի արևմտյան (մասամբ՝ արևելյան) խմբի բացառապես բոլոր տարբերակներում «դալիների» առաջնորդը հանդես է գալիս նաև որպես աշուղ, ով տարբեր առիթներով բազմաթիվ երգեր է հորինում և երգում: Ամեն անգամ, երբ որպես աշուղ ծաղկավազվում է Քյոոզլին հյուրընկալվում է որևէ մեծատոհմիկի ուստանում, անպայման խնդրում են կատարել իր իսկ հորինած խաղերը: Այսինքն, էպոսում իսկ վկայված է, որ Քյոոզլին նշանավոր էր ոչ միայն որպես խոտվարար-ավագակ, այլև հանպատրաստից բանաստեղծ-աշուղ: Թուրքմենական «Գյոոզլի» էպոսում նույնիսկ պատմվում է հերոսի՝ աշուղական արվեստը սովորելու և տիրապետելու մասին: Միանգամայն իրավացի է Բ.Կարրիևը, որ «*Քյոոզլին միաժամանակ կարող էր լինել և՛ բանաստեղծ, և՛ ռազմիկ: Արևելքի նշանավոր բանաստեղծները հաճախ են խիզախ ռազմիկներ եղել*»²¹:

Այսպիսով, որևէ պատճառ չկա չնույնացնելու էպոսի գլխավոր հերոսին և պատմական Քյոոզլու անձը: Առավել ևս, ինքըստինքյան, հերքվում են Քյոոզլու անձի երկատման

²⁰ Ավելի ուշ Խ.Արքովյանին հասած գրույցներում Քյոոզլին, ըստ երևույթին, առավելապես աշուղ է ներկայացվել, ինչը որ թույլ է տվել նրան բնութագրելու որպես «սիրեկան աշուղ, լավ խաղ ասող, ոտանավոր շինող մարդ» (Արքովյան 1981, էջ 44): Քյոոզլուն Արքովյանն անդրադառնում է նաև իր արձակ երկերից մեկում («Զվարճալի և կարճ պատմություններ»): «*Էսօր էլ ազգը ինչ խաղ որ ասում են, ինչ առակ իրանց միջում գործ են ածում, բոլոր Թուրքերեն ա: Ինչպես իմանա ողորմելի գեղըցին կամ քաղաքացին էլ, թե ի նչ մարդիք են էլել իրանց միջումը, որ սիրտը վառվի... Թող ամեն մարդ իր երեխությունը միտքը բերի, թե ի նչպես ա մարդ վառվում, երբ աշուղները Քյոո-Օղլուն, Քյարամին և այլն էնպես գովում են*» (Խ.Արքովյան, Երկերի լիակատար ժողովածու (8 հատորով), հտ. 4, ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1947, էջ 99):

²¹ Карриев, с. 80.

վերաբերյալ որոշ ուսումնասիրողների ավելի վաղ արտահայտված անհիմն կարծիքները:

Առավել կարևոր են նաև Առաքել Դավրիժեցու կողմից ջալալի առաջնորդներ Քոսա Սաֆարի, Գզիրօղլու Մուստաֆայի և Թանդրի Թանիմազի հիշատակությունը, որոնք էպոսում կերպավորվում են որպես Քյոոզլու զինակիցներ: Խ.Կորոզլին իրավացիորեն հիմք ընդունելով պատմիչի վկայությունը՝ նրանց համարում է ջալալիական ապստամբությանը մասնակից իրական պատմական անձինք²²:

Թանդրի Թանիմազին (Թանրը-Թանրմազ, թրք. բառացի՝ «աստված չճանաչող», «անաստված») Դավրիժեցին լուր անվանապես է հիշատակում: Նրա կերպարը հատուկ է էպոսի միայն արևմտյան խմբի տարբերակներին: Քոսա Սաֆարին (Քյոսե Սեֆեր) հիշատակելով ապստամբության ղեկավարներ Կարա Յազըջիից և Հուսեյին փաշայից անմիջապես հետո, ինչն ինքնին վկայում է նրա ևս ակնառու դերակատարության մասին, պատմիչը նշում է ապստամբվելու տարեթիվը՝ 1599թ.²³: Քոսա Սաֆարի

²² Корозлы 1983, с. 184.

²³ Թուրք պատմաբան Մ.Աքդաղը Դավրիժեցու սույն հաղորդումը վկայակոչելով՝ նշում է Քոսա Սաֆարի ապստամբության, իբր, Ուրֆայից սկզբնավորված լինելը (Akdağ 1995, s. 386), այնինչ հայ պատմագիրը նման որևէ հիշատակություն չունի: Խ.Կորոզլու կարծիքով, «Գյոոզլի» թուրքմենական էպոսի հերոսներից Քոսա Սաֆարի (Սաֆար-Քոսե) պատմական նախատիպը XIVդ. բյուզանդական տարեգրություններում հիշատակված ոմն թուրքմեն Սաֆարն է, ով կնության էր արել Կոնստանդնուպոլիսի հարստության արքայադստրերից մեկին (Корозлы 1983, с. 216): Սա չի համընկնում ո՛չ պատմական և ո՛չ էլ գեղարվեստական առումով: Ըստ երևույթին, Սաֆար-Քոսեի կերպարը ևս պետք է դասել ոչ միայն թուրքմենական, այլ, ընդհանրապես, թուրք վիպական ավանդության մեջ տարածված խորամանկ և ճարպիկ «քոսա»-«քոսեների» (թրք. «անբեղ-անմորոք») շարքը, ինչպես, օրինակ, թուրքմենական հեթիաթների հերոս Ալդար-Քոսեն ևս (P.N.Boratav, Le conte et la légende, Philologiae Turcicae Fundamenta, T. 2, p. 44-67, Wiesbaden, 1965, p. 47):

կերպարն առկա է էպոսի արևմտյան խմբի գրեթե բոլոր տարբերակներում, իսկ թուրքմենական և տաջիկական տարբերակներում պատումներում նա հայտնի է որպես կենսուրախ, երբեմն էլ խորամանկ ու ճարպիկ զինակից՝ հանդես գալով մի քանի այլ անուններով (Սափար-Քոսե, Սաֆար-Բեհրամ, Սաֆար-Մեհրամ, Սաֆար-Մերգեն ևն): Ընդ որում, թուրքմենական պատումներից մեկում Քոսա Սաֆարը (Սաֆար-Մեհրեմ) ավագ հերոսների շարքում է, Քյոոզլու հոր՝ Ջիդալի-Բեկի կուրացումից հետո նա է ստանձնում Չանդրբիլի կառավարումը²⁴:

Առավել արժեքավոր է Դավրիժեցու վկայությունը Գզիրոզլի Մուստաֆա բեկի մասին, որի՝ Քյոոզլու զինակից լինելն ի տարբերություն էպոսում գլխավոր հերոսի հետ հանդես եկող մյուս ապստամբ առաջնորդների՝ նշվում է ուղղակիորեն (*«սա ևս ընկեր է Քոոզլույն»*): Պատմիչը հստակ նշում է նաև նրա գորքերի քանակը (*«Տ. [1.000] մարդ»*), ինչպես նաև փաստը, որ Քյոոզլին շատ տեղերում իր խաղերի մեջ հիշատակում է նրան: Սա չափազանց կարևոր է, քանի որ մեկ անգամ ևս պարզ վկայվում է, որ Դավրիժեցու օրոք Քյոոզլու խաղերը բավականին տարածված էին, և պատմիչն ինքը քաջածանոթ էր դրանց:

Էպոսի արևմտյան խմբի գրեթե բոլոր տարբերակներում Գզիրոզլի (Խիզրոզլի, Կիզիրոզլի) Մուստաֆան կենտրոնական կերպարներից է, հասկապես, Քյոոզլու որդեգիր Այվազի՝ մահապատժից փրկելու մասին «Բադդադի արշավանքը», «Կոունկի փետուրները» գլուխներում²⁵: Թուրքական և ադրբեջանական պատումներում ասվում է, թե նրա հայրը «գզիր»,

²⁴ Каррыев, с. 147.

²⁵ Անատոլիայում 1970-ական թթ. գրառված պատումներից մեկում Քյոոզլու քաջերը հրաշք-թոչնի (այլ տարբերակով՝ կոունկի) փետուրները բերելու համար ոչ թե Բադդադ են գնում, այլ Վանա լճի Ադթամար (Աքդամար) կղզին (M.Gökarp, Kiziroğlu ve Köroğlu, Türk Folklor Araştırmaları, Sy. 279, s. 6445-6447, Erzurum, Ekim 1972, s. 6445):

խմա՝ պետական պաշտոնյա (օսմանյան ժամանակահատվածում՝ ցուղապետի օգնական) է եղել և սուլթանին (Խունկար)²⁶ ընդդիմանալու արդյունքում կախաղան հանվել: Դրանից հետո Մուստաֆան իր 40 հեծյակներով (բոլոր պատումներում հանդիպող խորհրդանշական թիվ) քաշվում է լեռները՝ վրեժխնդիր լինելով հոր թշնամիներից: Ուժով չափվելով և պարտվելով Քյոոզլուց՝ նրանք եղբայրանում են: Դյուցազնական մենամարտի և եղբայրացման դրվագն առկա է նաև թուրքմենական «Գյոոզլիում», ուր հերոսը կրկին կարևոր դեր է ունենում Օվեզին (Այվազ) և մյուս զինակիցներին գերությունից ազատելու գործում («Օվեզի ազատումը», «Օվեզը նեղացած»): Թուրքմենական էպոսի համահավաք բնագրում, որի հիմքը Փելվան բախշու ասացած տարբերակն է, Գիջիրոզլի Մուստաֆան Խունկարին՝ թուրքական սուլթանին է ծառայում (ինչպես քրդական և այլ պատումներում), քաջ փահիլան է և «իր սուր լեզվի ու հանդգնության համար» ստացել է «Գայրը» (բառացի՝ «օտար») մականունը²⁷: Այլ պատումներում նա ծնունդով Սպահանից է և հորից պատգամ ունենալով գտնել ու ընկերանալ Ադրբեկի որդի Գյոոզլու հետ՝ լքում է վերջինիս դեմ պատերազմի պատրաստվող, առժամապես նեղացած որդեգրի՝ Օվեզի ճամբարը, և կրկին ավանդական մենամարտից հետո եղբայրանում հերոսի հետ: Առանց Գիջիրոզլու Օվեզը չի համարձակվում արշավել դեպի Չանդրբիլ և մեղա գալով՝ վերադառնում է Գյոոզլու մոտ²⁸:

²⁶ Խունկար, Խունխար, Խուսկար և Խունդկար ձևերը թուրքական աղավաղումներն են պարսկերեն «խուղավեղիզար» բառի, որ նշանակում է «տեր», «տիրակալ»: Այն օսմանյան փառիշահների տիտղոսը դարձավ սուլթան Մուրադ Ա-ի (1360-1389) օրոք:

²⁷ Гёр-оглы, Туркменский героический эпос, составитель Б.Каррыев, М., 1983, с. 528.

²⁸ Каррыев, с. 171.

Գզիրոզլի Մուստաֆա բեկին նվիրված և Քյոոզլուն վերագրվող բազմաթիվ խաղեր են պահպանվել ինչպես արևմտյան խմբի տարբերակներում, այնպես էլ թուրքմեն բախշների երգացանկում, որոնք հասել են մինչև մեր օրերը: Այս փաստը ևս մեկ անգամ հաստատում է Դավրիժեցու հաղորդումների վավերականությունն ու արժանահավատությունը:

Ջալալի առաջնորդների շարքում Առաքել Դավրիժեցին լույս անվանապես հիշատակում է նաև Աղաջղանփիրին (Աղաջղանփիրի, թրք.՝ «ծառի ոջիլ», «փայտոջիլ»), որն էպոսի որոշ տարբերակներում Քյոոզլու «ղալիներից» է (Ուրմիայի բարբառով գրառված հայկական տարբերակում՝ Աղաջ-Փիրի): Կեսարիայի շրջանում մինչև 1606թ. գործած ջալալի առաջնորդի և նրա ղեկավարած ավազակախմբի շահատակությունների մասին բավարար հիշատակություններ կան օսմանյան աղբյուրներում²⁹:

«Գիրք պատմութեանց» ջալալիներին վերաբերող միևնույն է գլխում ուշագրավ է պատմիչի վկայությունն ավազակների շարքերում քրիստոնյաների (տվյալ դեպքում, ըստ ամենայնի, մեծամասամբ հայերի) առկայության մասին. «Եւ ոչ միայն այս Ջալալիքն այսպէս առնէին. գոյին և այլք Ջալալիք՝ ոմանք յոլով՝ և ոմանք սակաւք. որք ի տեղիս տեղիս զկայ առեալ և որջացեալք էին՝ զայսպիսի գործս գործէին: Այլ և ի քրիստոնէից ազգէ՝ արք ոմանք, որք ոչ ունէին զերկիւղն Աստուծոյ յինքեանս. իբրև տեսանէին թէ այլազգիքն այսպէս առնեն, ինքեանք ևս սկսան

այսպէս առնել. վասն զի այժօք տեսին և սրտիս յօժարեցան. եթէ յայտնի յափշտակութեամբ՝ և թէ զաղտնի գողութեամբ այնպէս առնէին. քանզի երկիրն անտէր և ամայի էր յաշխարհակալ բռնաւորաց. և ամենայն որ զախորժակս կամաց իւրոց կատարէր»³⁰:

Ս. Ջուլայյանի կարծիքով, խոսքն այստեղ, մասնավորապես, Արարատյան դաշտավայրի հայերի մասին է³¹, թեև Դավրիժեցու վկայությունն ընդհանուր բնույթ է կրում: Ընդամին, չի բացառվում «ջալալի Քյոոզլու խմբերին հայերի մասնակցության հարցը», ինչը, սակայն, որևէ հիմնավորում չունի³²: Թեև Վ.Հակոբյանը որոշակիորեն անստույգ է համարում այս եզրակացությունն արևելահայերի վերաբերմամբ, այնուամենայնիվ, իր հերթին մատնանշում է XVIIդ. մատենագիր Երեմիա Քյոմուրճյանի ուղղակի հաղորդումն, ընդհանրապես, հայերի մասնակցության փաստի առթիվ³³, ինչին դեռևս կանդրադառնանք:

Այս տեսակետից բնավ էլ պատահական չէ հայկական կերպարների և, ընդհանրապես, հայերի հետ կապված դրվագների առկայությունը, մանավանդ, թուրքական պատումներում, ինչը որ,

²⁹ Անդ, էջ 107: Հմմտ. Մ.Չամչեանց, Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թուականը), Գ հրատ., հտ. Գ, Երևան, 1984, հտ. Գ, էջ 559:

³⁰ Ջուլայյան, էջ 183:

³¹ Ս.Ջուլայյանի ենթադրությունն ավելի շուտ ժամանակին ընդունված ընդհանուր թեզերին տուրք տալու արդյունք է: Մասնավորապես, նշվում է, թե «Առ. Դավրիժեցու վկայությունից երևում է, որ պատմական Քյոոզլին գործել է Հայաստանում և Ադրբեջանում» (Ջուլայյան, էջ 184), այնինչ նման որևէ վկայություն Դավրիժեցին չունի, իսկ Ադրբեջանի հիշատակությունն, ընդհանրապես, որևէ կապ չունի պատմական իրականությունն հետ: Ընդամին, եզրակացվում է. «Ուստի և ջալալի Քյոոզլու խմբերին հայերի մասնակցության հարցը բացառված չէ, քանի որ նրա ղեկավարած շարժումը եղել է և՛ սոցիալական, և՛ ազատագրական (տվյալ դեպքում թուրքերի և պարսիկների դեմ)» (անդ, էջ 184):

³² ՀՀԸ, էջ ԺԱ-ԺԲ:

²⁹ Akdağ 1995, s. 475-477: Հայ մատենագիրներից որևէ մեկը (ներառյալ Դավրիժեցին) Քյոոզլու զինակից ոչ մի ջալալի առաջնորդի չեն հիշատակում, բացի Գզիրոզլի Մուստաֆայից: Տվյալ դեպքում անհասկանալի է Ա.Ռահմանիի պնդումը, ինչի համաձայն, իբր, Աղաջղանփիրին ևս «Առաքել Դավրիժեցին դասում է Քյոոզլու և նրա մերձավոր ընկեր Գզիրոզլի Մուստաֆա-բեկի զինակիցների շարքը» (А.Рахмани, «Тарих-и алам арай-и Аббаси», как источник по истории Азербайджана. Баку, 1960, с. 156): Մինչդեռ պատմիչն այս ջալալու մասին որևէ տեղեկություն չի հայտնում՝ բավականանալով լույս անվանական հիշատակությամբ (Դավրիժեցի, էջ 108):

մեր կարծիքով, միայն մասամբ կարելի է վերագրել թուրքալեզու հայ աշուղների ազդեցությանը, ինչպես ժամանակին ենթադրել է Ն. Փ. Բորաթավը³⁴: Հայ վաճառականի հայտնի կերպարից բացի, Ն. Փ. Բորաթավը, հատկապես, Մարաշում գրառված պատումներում ընդգծում է հայկական կերպարների և հատուկ անունների հետ կապված առատությունը: Մի առիթով նշվում է նույնիսկ, թե Կայսերիի (Կեսարիա) վալիից խույս տալով՝ Քյոոզլու մոտ են ապաստանում 17 վանականներ³⁵: Տարբեր պատումներում, մասնավորապես, Կեսարիայի, հայ են ներկայացվում անգամ Քյոոզլու որդեգիր Այվազը և Քեչել Համգան (Քիչել Հեմգե), որը երբեմն որպես «Էրմենի Համգա» է հիշատակվում³⁶:

Քրիստոնյա կերպարներ հանդիպում են նաև Կենտրոնական Ասիայում տարածված տարբերակներից համեմատաբար էպոսի պատմական միջուկը և տարբերը պահպանած թուրքմենական «Գյոոզլու» ամենատարբեր պատումներում (Բեզիրգեն, Այսուլթան, Լեկե-Գյուլ-Ռուհ և այլք): Այստեղ էլ, ինչպես արևմտյան խմբի որոշ տարբերակներում, Քյոոզլին հաճախ որպես քրիստոնյաների պաշտպան և բարեկամ է հանդես գալիս: Վերոհիշյալ ենթադրության օգտին կարող է խոսել նաև այն փաստը, որ Քյոոզլու Չամլիբել ամրոցի տեղադրության հավանական տարբերակները հանգում են պատմական Հայաստանի տարածքին³⁷:

Մասնավորապես, Արևելյան Հայաստանում ջալալիների առանձին խմբեր դեռ երկար ժամանակ պահպանել են իրենց գոյությունը, ըստ ամենայնի, ընդհանուր զարգացումներից

կտրված լինելով և առանձնակի պայմաններում վերարտադրվելով: XVIIդ. պատմագիր Ջաքարիա սարկավազ Քանաթեոցին նրանց հիշատակում է նույնիսկ 1630թ. հետո³⁸:

Դավրիժեցին ջալալիներին անդրադառնում է «Գիրք պատմութեանց» նաև այլ էջերում և, մասնավորապես, ՕՋ անխորագիր գլխում, որը 561 թ.-ից մինչև 1666 թ. ընդգրկող մի յուրօրինակ ժամանակագրություն է: Այն հեղինակի կազմած բանաբաղությունն է (կոմպիլիացիա), ուր տարբեր աղբյուրներից ժողովված ժամանակագրական տեղեկություններն ի մի բերվելով՝ ըստ կարգի շարադրվել ու լրացվել են: Հիշատակարանում այդ մասին վկայում է պատմիչն ինքը³⁹: Հենց այս հանգամանքով պետք է բացատրել այն փաստը, որ ի տարբերություն է գլխի՝ Քոսա Մաֆարի և Գզիրոլի Մուստաֆայի անունների կողքին չեն հիշատակվում Քյոոզլին և Թանդրի Թանիմազը:

Քոսա Մաֆարի մասին պատմիչի վկայությունն անփոփոխ է մնացել. «Դարձեալ ի սոյն թուին [Թուին ՌԽԸ.] ապստամբեցաւ Քոսայ Մաֆարն»⁴⁰: Իսկ ահա Գզիրոլի Մուստաֆայի մասին որոշ հավելյալ տեղեկություններ կան. «Թուին ՌԽ. [1591] Գզիրոլիին ելաւ ջալալի քուրդ ազգաւ»⁴¹: Անվանական հիշատակության այս

³⁸ Ջաքարեայ սարկավազի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 8, 18:

³⁹ Դավրիժեցի, էջ 466: Անխորագիր այս գլուխը հայ պատմագրության մեջ լայն տարածում գտած մանր ժամանակագրությունների ժանրին է պատկանում: Հայագիտությանը հայտնի են դեպքեր, երբ պատմիչները մանր ժամանակագրությունները կորստից փրկելու համար դրանք կցել են իրենց երկերին:

⁴⁰ Անդ, էջ 476-477:

⁴¹ Անդ, էջ 475: Այս հատվածը բազմիցս սխալ է թարգմանվել որոշ հեղինակների մոտ («Քյոոզլի» էպոսի քրդական պատումները, գրառում, թարգմ. և ներածություն Հ.Ջևղիի, Երևան, 1953, էջ 25, Карпов, с. 68) կարծվելով, թե խոսքը կոնկրետ քրդական ջալալի ցեղի մասին է: Այդպես է նաև Վ.Առաքելյանի աշխարհաբար թարգմանության մեջ՝ «ազգությամբ ջալալի քուրդ» (Առաքել

³⁴ P.N.Boratav, Koroğlu Destanı, Bütün Eserleri - 6, BilgeSu, Ankara, 2016, s. 126.

³⁵ Անդ:

³⁶ Անդ, էջ 45, 54, 71 նն:

³⁷ Մ.Ռամազյան, Քյոոզլի (հողված հինգերորդ), «Իրան-Նամե» արևելագիտական հանդես, թ. 29-31/1-3, էջ 72-85, Երևան, 1998, էջ 73-75:

խայտաբղետությունը (Գզիբողլի և Գզիբողլի Մուստաֆա), ըստ էրևույթին, ևս բանաբաղության արդյունք է: Այս հաղորդմամբ ճշտվում է Քյոտողլու զինակցի ապստամբության տարեթիվը, ինչը ժամանակով ավելի առաջ է, քան հենց Կարա Յազըջիի ղեկավարությամբ սկսված բուն ջալալիական ապստամբությունները: Նշվում է նաև նրա ազգությամբ քուրդ լինելը, ինչը որ վկայված է էպոսի արևմտյան խմբի գրեթե բոլոր տարբերակներում և, մանավանդ, քրդական պատումներում:

Ուշագրավ է նույն գլխում մեջբերված հաստատված լեզուբանդա պատմիչի վկայությունը մեկ տարի առաջ Երզնկայում տեղի ունեցած քրդերի խռովության մասին. «Թուին ՌԼԹ. {1590} Բուրդն գլուխ քաջնաց եկեալ յԵզնկայ»⁴²: Արդյո՞ք մասնակից է եղել Գզիբողլի Մուստաֆան այդ դեպքերին. այս և այլ հարցերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ են հայտնում մյուս հայ մատենագիրները, որոնց կանդրադառնանք ստորև:

Ջալալիներին Դավրիժեցին մասամբ անդրադառնում է նաև Ը գլխում («Յաղագս առման քաղաքացն Գանջայու և Շամախու»), ուր հիշատակում է էպոսի որոշ տարբերակներում որպես Քյոտողլու զինակից հանդես եկող Ջընջիլդանին. «Այլ և փաշայն

Դավրիժեցի, Պատմություն, աշխարհագր թարգմ.՝ Վ.Առաքելյանի, Երևան, 1988, էջ 494): Սա, հավանաբար, կապված է այն մտայնության հետ, թե ապստամբների ինքնավանդումը ծագում է քրդական համանուն ցեղից (Մ.Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Կ.Պոլիս, 1914, էջ 2305, նաև՝ Բ.Բալայն, К вопросу общности этногенеза шахсеван и кашкайцев, Востокведческий сборник, N 1, с. 331-378, Ереван, 1960, с. 340 նն): Իրականում սկզբնապես ջալալի (ջելալի) էին կոչվում Թոխատի մերձակայքում իրեն որպես քարայրից դուրս եկած «մեղի» ներկայացնող շեյխ Ջալալի ղեկավարությամբ XVIդ. առաջին կեսին սկսված ապստամբության մասնակիցները, որոնց բեկորները վերջինիս գլխատվելուց հետո ապաստանելով Էլ-Բոսթանիի և Սեբաստիայի շրջաններում՝ դեռ երկար ժամանակ շարունակում էին դիմադրել կառավարական զորքերին: Ընդհանրապես, ջալալի հետագայում սկսում են անվանել հակապետական խռովությունների մասնակիցներին:

⁴² Դավրիժեցի, էջ 475:

Գանջայու անկեալ էր ի պատերազմին՝ որոյ անունն էր Ջընջիլդան Ալի փաշայ»⁴³: Օսմանյան նշված ռազմական և քաղաքական գործիչը, նույնիսկ Ջինջիրքընան (թրք.՝ «շղթա կտորոդ») Ալի փաշան ջալալիական ապստամբությանը հարելուց գառ զբաղեցրել է մի շարք պետական պաշտոններ, ինչպես Դիարբեքիի վալի 1606 թ. ևն: 1603 թ. մայիսին Սեֆնյան Իրանի դեմ պատերազմի ժամանակ վերջինս Թավրիզի բեյլերբեյն էր, իսկ Դավրիժեցու նկարագրած իրադարձությունների ժամանակ՝ Գանձակի: Հայկական աղբյուրներում առկա են այլ հիշատակություններ ևս տվյալ գործի («Ձենճիր զրոան») մասին, որոնց կանդրադառնանք ստորև⁴⁴:

Ջինջիրքընանի կերպարը հանդիպում է էպոսի թուրքական, մասնավորապես, Ուրֆայի պատումներում, ուր վերջինս Քյոտողլու «ղալիների» խմբից է: Ն.Փ.Բորաթավն, ըստ ամենայնի, հիմք ընդունելով զուտ անվանական-գործառության ինքնությունը՝ հավանական է գտնում Ջինջիրքընանի նույնացումը որպես Քյոտողլու մեկ այլ զինակից հանդես եկող Դեմիրչիօղլույի (թրք.՝ «ղարբնի որդի») հետ⁴⁵, ինչը բացառվում է տիպաբանական վերլուծությամբ: Բացի այդ, Դեմիրչիօղլու կերպարը մեծամասամբ նույնանում է Դելի Հասանի հետ (Դեմիրչիօղլու Դելի Հասան), ինչը որ առկա է Ուրմիայի բարբառով զրառված հայկական տարբերակի պարագային ևս:

Հարկ է նշել, որ նույնանշանակ «Ջընճիլ Խըռան» անվամբ օտարածին մի անձանոթ կերպար է հանդիպում «Մասնա ծոերի» որոշ պատումներում, ինչն, ընդհանրապես, բնորոշ չէ հայկական

⁴³ Անդ, էջ 113:

⁴⁴ Երեմիա Քեօմիլբեան, Պատմություն համառոտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրութեամբ Ժ.Աւետիսեանի, Երևան, 1982, էջ 168:

⁴⁵ Boratav 2016, s. 103.

Էպոսին: Ըստ ամենայնի, տվյալ դեպքում խոսքը թյուրքական վիպական ավանդությունից ներմուծված կերպարի մասին է⁴⁶:

Էպոսին առնչվող Դավրիժեցու հաղորդումներին հայ բանասիրությունը վաղուց է անդրադարձել՝ նշելով դրանց հավաստիությունը⁴⁷: Օտար մի շարք հեղինակներ ևս ընդգծում են դրանց ճշմարտացի արժեքը⁴⁸: Թեև իր հաղորդած տեղեկությունների հակիրճ և ամփոփ լինելուն, ցայսօր էլ Դավրիժեցու երկը՝ կապված «Քյոոզլի» էպոսի ուսումնասիրության հետ, մնում է հնագույն վավերական և հավաստի պատմական աղբյուրը:

Գրիգոր Դարանդցու և մանր ժամանակագիրների հաղորդումները

Քյոոզլու և նրա զինակիցների մասին հիշատակությունների հարցին անդրադառնալիս ուսումնասիրողները հայ մատենագիրներից մշտապես նշել են միայն Առաքել Դավրիժեցու

և լավագույն դեպքում նաև Եղիա Մուշեղյանի անունները: Այնինչ, այդ կերպ անտեսվում են մանր ժամանակագրությունների հեղինակները, որոնցից հաճախ օգտվել է Դավրիժեցին ինքը:

Ջալալիների առաջնորդներին մանր ժամանակագիրներից հականե-հանվանե հիշատակում է XVII-XVIII դդ. հեղինակ Ավետիքը կամ Ավետիք Տիգրանակերտցին (Ավետիք Ամդեցի, Ավետիք Պաղտասարյան), իր «*Ժամանակագրություն կամ գաւազանագիրք, աշխատասիրեալ յԱւետիքայ ումեմնէ*» երկում, որը հայտնի է նաև «*Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք*» վերնագրով: Թեև Ավետիքի ժամանակագրության ջալալիներին վերաբերող երկրորդ մասի և Դավրիժեցու «Պատմութեան» համապատասխան հատվածի միջև բազմաթիվ նմանություններ կան, այնուամենայնիվ, ինչպես կարծում է Վ.Հակոբյանը, այն մի առանձին բնագիր է և կապ չունի պատմագրի երկի հետ⁴⁹: Ավետիքը ևս նշում է ապստամբած Քյոոզլու աշուղ լինելը, Գզիրօղլի Մուստաֆայի՝ նրան ընկեր լինելը, Քոսա Սաֆարի ապստամբվելու միևնույն (1599թ.) տարեթիվը, նաև հաստատում ջալալի առաջնորդներից Թանդրի Թանիմազի պատմականությունը: Սա չափազանց կարևոր է, քանի որ, փաստորեն, միայն Դավրիժեցին չէ վկայում վերոհիշյալ իրողությունների մասին: Դրանով իսկ ավելի է ընդգծվում նրա հաղորդումների հավաստիությունն ու վավերականությունը:

Ջալալիների ապստամբության պատմության արժեքավոր սկզբնաղբյուր է նաև XVIIդ. հայ մյուս նշանավոր պատմագիր Գրիգոր վրդ. Դարանադցու (Կամախեցի, 1576-1643 թթ.) ժամանակագրությունը («*Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարանադցույ*»): Թեև

⁴⁶ «Մասնա ծոերի» որոշ պատմություններում, որոնք գրառել է Կ.Մելիք-Օհանջանյանը 1932 թ., սասունցի վիպասաց Առաքել Մարուխանյանից (Մասնա ծոեր, հտ. Բ, խմբագրությամբ Մ.Աբեղյանի, աշխատակցությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1944, պատում Զ, էջ 199-223), հանդես է գալիս էպոսի այլ պատմություններին անծանոթ և ոչ-բնորոշ «*Ջրնճիլ Խրոսան*» անվամբ կերպարը: Վերջինս «*երբեմն ստանձնում է Ձենով Օհանի դերը, կերպարին յուրահաստուկ երանգավորումով*», կամ Ձենով Օհանի հետ ներկայացվում որպես Մասունցի Դավթի հորեղբայր: Լույն գրույցներում առկա է նաև նրան աղերսվող այլ կերպար՝ «*Ջրնճիլ Խրոսանի գնիզ*» (Մասնա ծոեր, հտ. Դ, նոր պատմությունների գրառումը, բնագրի պատրաստումը Ս.Հարությունյանի և Ա.Սահակյանի, Երևան, 1999, էջ 40, 427, 542): Միանշանակ խոսքն օտարամուտ կերպարի մասին է, որն ունի իր պատմական նախատիպը ջալալիների թվից: Հարկ է նշել նաև, որ Զինջիրքըռանների տոհմը մինչ այժմ էլ գոյություն ունի Թուրքիայում:

⁴⁷ Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողությունք, «Փորձ» հանդես, ք. IV, II տարի, էջ 321-368, Տիդիս, 1877-78, էջ 327, Պերպլերեան, էջ 34-35, Ալպոյաճեան, էջ 604, {Մամունյան} Քյոո-Օղլի, ժող. վիպ., էջ 13:

⁴⁸ В.Жирмунский, Народный героический эпос, М.-Л., 1962, с. 214; Каррыев, с. 5, Гуругли, Таджикский народный эпос, составитель И.Брагинский, М., 1987, с. 21; Boratav, L'épopée et la «hikaye», 1965, p. 26 նև:

⁴⁹ ՄԾ, հտ. Բ, էջ 506-507:

Դարանաղցին չի հիշատակում Քյոոողլուն և էպոսի մյուս կարևոր գործող անձանց, սակայն արժեքավոր տվյալներ է հաղորդում Գզիրոլլի Մուստաֆայի մասին⁵⁰: Վերջինիս, ինչպես նաև խնդրո առարկա ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների մասին հակիրճ տեղեկություններ է հաղորդում XVIIդ. երկրորդ կեսի նշանավոր մատենագիր Վարդան վարդապետ Բաղիշեցին, 1659 թ. իր կազմած ժամանակագրության մեջ⁵¹: Քյոոողլու այս զինակցի մասին մանր ժամանակագրություններին բնորոշ արձանագրային ոճով հակիրճ տեղեկություն են հաղորդում նաև Գրիգոր Դարանաղցու խմբագրած XVIIդ. ժամանակագրությունը⁵², XVIIIդ. հեղինակներից Ղևոնդ Տոսպեցին⁵³, «Երուսաղեմի ժամանակագրությունը»⁵⁴:

Ուշագրավ է, հատկապես, Հարություն քահանա Խալֆայանի վկայությունը զինակցի ջալալի առաջնորդների մասին. «ՈՒՄ [1591] Քոո օղլին, Գզիր օղլին և այլ բազումք եղեն Ջալալիք»⁵⁵: Նույնը բառացիորեն կրկնվում է նաև Անանուս Վանեցու տարեգրության մեջ⁵⁶: Ինչպես արդեն նշվել է, օսմանյան պետական գրագրության փաստաթղթերում Քյոոողլու առանձին ավագակային գործողություններ հիշատակվում են դեռևս 1579 թ.-ից, Քյոոողլին ինքը համարվում է 1582-1584 թթ. ժամանակահատվածից ավագակային գործունեություն ծավալած նախաջալալիական

շրջանի հրոսակներից: Առավել հավանական է թվում, որ Խալֆայանն ի նկատի ունենալով Գզիրօղլի Մուստաֆայի և Քյոոողլու զինակցության հանգամանքը, ինչը նրան կարող էր հայտնի լինել իր իսկ օգտագործած աղբյուրներից, ուղղակի նույնացրել է նրանց ապստամբության ժամանակահատվածները՝ իրար կցելով երկու տարբեր ժամանակագրական հաղորդում⁵⁷:

Ազարիա Սասնեցու հաղորդումները

Ջալալիների ապստամբության պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է նաև XVIIդ. հայ տաղասաց, աստղագետ և տոմարագետ Ազարիա վրդ. Սասնեցու (ծն. թ. անհտ. – 1628 թ.) «Ողբ ի վերայ հարուածոց արեւելեան գաւառացն և աշխարհին հայոց ի ձեռաց ձելալեանց» չափածո երկը, որն, ամենայն հավանականությամբ, գրվել է 1611թ.:

Ազարիայի ողջ ընտանիքն ու գերդաստանը զոհ են գնացել ջալալիների ասպատակություններին («ոչ ունիմ ի մարմնաւորաց յազգս իմ»), իսկ ինքը՝ զերեվարվել, այնպես որ նա իր նկարագրած դեպքերի մեծ մասի անմիջական ականատեսն է եղել. «Կամիմ և ձեզ ծանուցանել զդառնութիւն ժամանակիս և բազմազան զանցս աղետի, որ ևս աչօք իմովք տեսի...»⁵⁸:

⁵⁰ Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարանաղցույ, հրատարակեց Մեսրոպ վրդ. Նշանեան, Երուսաղեմ, 1915, էջ 32-33:

⁵¹ ՄԺ, հտ. Բ, էջ 394, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք ԺԵ-ԺԹ դար, կենսագրական տեղեկություններով և ծանօթագրություններով, հրատարակեց Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 72:

⁵² Անդ, էջ 3:

⁵³ ԴՀՊ, էջ 502:

⁵⁴ Ժամանակագրություն (XI-XVIIIդդ.), տպագրության պատրաստեց Ն. էպո. Պողարյան, «Բանբեր Մատենադարանի», թ. 9, էջ 257-282, Երևան, 1969, էջ 257:

⁵⁵ ԴՀՊ, էջ 124, ՄԺ, հտ. Բ, էջ 482:

⁵⁶ ՄԺ, հտ. Ա, էջ 355:

⁵⁷ Առավել մանրամասն տե՛ս Ս.Ռամագյան, «Քյոոողլի» էպոսի պատմական հեերը և XVII-XVIIIդդ. հայերեն ժամանակագրությունները, «Բանբեր Մատենադարանի», թ. 25, էջ 277-290, Երևան, 2018:

⁵⁸ Ազարիա Սասնեցին մահացել է 1628 թ.. Անտիոքից Եգիպտոս ուղևորվող նավում, ինչից հետո դիակը ծովն է նետվել, ըստ Գրիգոր Դարանաղցու: Այն Տրիպոլիսի մոտ հայտնաբերել են մարունիք հոգևորականները և հուղարկավորել: Ազարիան բավական հարուստ ժառանգություն է թողել, մասնավորապես, պատմությանը, աստղագիտությանը, տոմարագիտությանը և երկրաչափությանը նվիրված աշխատություններ (Ն.Ակիևեան, Ազարիա վ. Սասնեցի, աստղագետ, տոմարագետ և տաղասաց, «Հանդես անսօրեայ», թ. 7-9, էջ 315-320, 324-325, Վիեննա, 1936, էջ 320):

Եթե մանր ժամանակագիրները վկայում են առավելապես Քյոոողլու և Գզիրողլի Մուստաֆայի մասին, ապա Ազարիան երկու տասնյակ ջալալի առաջնորդների հականե-հանվանե հիշատակելով՝ էպոսի պատմական նախատիպեր ունեցող գործող անձանցից միայն Դելի Հասանին («Հասան պէկ») և Քոսա Սաֆարին է նշում նրանց թվում: Ահա նրա վկայությունը վերջինիս վերաբերյալ.

*Եւ չորրորդն Քոսա Սաֆար,
Ի յԱյնթափու եղև ելեալ,
Քսան հազար զօրս կազմեալ,
Եւ զամս եօթ զերկիրս զերեալ:
Ի յԱյնթափու մինչ յԱրզրում,
Անթիւ բազում արար զուլում,
Յետոյ եղև հնազանդեալ,
ՋԱրզրումա(յ) սանճախն առեալ:
Յորժամ ճղալ օղլին եկեալ,
Եւ ընդ շահին պատերազմեալ,
Մա ընդ նրմա եղև զնացեալ,
Պարսից զօրացն սատակեալ...
Զօրս անթիւ նա կոտորեալ,
Եւ այլք զերծեալ ի յետ փախեալ,
Բանակն ամէն շահին եղեալ,
Եւ աւարաւ բազում լցեալ⁵⁹:*

Ազարիան արժեքավոր տեղեկություններ է հայտնում՝ նշելով Քոսա Սաֆարի ապստամբության Այնթափից սկզբնավորվելը, նրա զորքերի քանակը (20.000), որն, անշուշտ, մյուս ջալալի ղեկավարների զորքերի համեմատությամբ մեծ թիվ է կազմում, ինչպես նաև Այնթափից Էրզրում ընկած տարածքում նրա գործած

⁵⁹ Անդ, էջ 333, 222, հտ. Ա, էջ 446:

ասպատակությունները: 1603թ. հուլիսին, ինչպես վկայում են թուրքական աղբյուրները, սուլթանը ներում է շնորհում ջալալի ղեկավարներից Դելի Հասանին և նրա վեց մերձավոր աջակիցներին, ինչից հետո Հասանն ստանում է Բուդումի (Բոսնիա) սանջաքը: Հայ տաղասացն իր հերթին հաստատում է, որ նույն կերպ է հնազանդվել նաև Քոսա Սաֆարը՝ ստանալով Էրզրումի սանջաքը, ինչն, ընդհանրապես, հանրահայտ փաստ է թուրք պատմագրության մեջ⁶⁰:

Ազարիան վկայում է նաև թուրք-իրանական պատերազմի ժամանակ օսմանյան զորահրամանատար Ջիդալազադե (Ջդալօղլի) Յուսուֆ Սինան փաշայի ձեռնարկած 1604-1605 թթ. արշավանքներին Քոսա Սաֆարի մասնակցելու, ինչպես և այդ կոնիվներում նրա զոհվելու մասին: Թուրք պատմագիրներ Իբրահիմ Փեչևիի և Քյաթիբ Չելեբիի հաղորդմամբ նա, Էրզրումի վալի Քյոսե Սեֆեր փաշան մասնակցել է տվյալ արշավանքին և զոհվել դրա ընթացքում: Եթե ընդունենք, որ Քոսա Սաֆարի գործունեությունը յոթ տարի է տևել, ինչպես վկայում է տաղասացը, ապա նրա ապստամբության սկիզբը պետք է համարել 1598-1599 թթ., ինչը որ համընկնում է մյուս աղբյուրների տվյալներին:

Երեմիա Քյոմուրճյանի հաղորդումները

Քյոոողլուն և էպոսում հիշվող մյուս ջալալի առաջնորդներին հիշատակում է նաև XVIIդ. նշանավոր հասարակական-քաղաքական, մշակութային գործիչ, բանաստեղծ և պատմագիր Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը (Երեմիա Կոնստանդնուպոլսեցի, 1637-1695 թթ.)՝ իր «Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն» չափածո պատմական երկում, որը գրվել է 1675-1678 թթ.: Չորս մասից բաղկացած այս աշխատությունն ամփոփում

⁶⁰ Akdağ 1995, s. 433.

է օսմանյան կայսրության 400 տարիների պատմությունը և հիմնականում բանաբաղային բնույթ ունի: Հեղինակն ինքը ծանոթ է եղել և օգտվել է Առաքել Դավրիժեցուց, Գրիգոր Դարանաղցուց, Ազարիա Մասնեցուց, Ավետիք ժամանակագրից, Վարդան Բաղիշեցուց, ինչպես նաև թուրքական աղբյուրներից⁶¹:

Հայ մատենագրության մեջ Քյոմուրճյանն ավելի շատ ջալալի առաջնորդների է հականե-հանվանե հիշատակում (60 հոգու), քան որևէ մեկ այլ հեղինակ: Հիմնականում միայն անվանապես հիշատակելով հայտնի ջալալիներին՝ Քյոմուրճյանը համապատասխան մակդիրներով է բնութագրում նրանց.

Յորոց բազմաց տեղեկացաք՝

միայն զանուանսն ի շար եղեալ, Չչարքն չարեօք յիշատակեմք,
որք նախնեաց մեր զչարիս ածեալ...

Զէնճիր գրոան Ալի փաշայն,
քան զանճոռնիսըն ցասուցեալ...

Գրգիր օղլին գոռոզացեալ,
և Հասան պեկն հարըստարեալ... Քեօսէ Սէֆէրըն փասքուսեալ
և Քէսէքէսըն սրածու լեալ:

Չըպլաղն ժանտ դրժպըհեցեալ
և Քեօր օղլին ժըպըրհացեալ...

Թիւրքճէ Պիլմեզն դարանակալ,
Թօփուզի Ոյունկն կատաղեալ, Թանդրի Թանմազն

անընզգամեալ,
Ղևալի օղլին էր ըրփըրեալ... Սոքա գըլուխք պեկլերպէկիք,

սանճաղ պէկիք, նդ քէտխօտայսն այլ
Ի մեջ սոցա փոքր գրտանին

պօլուկ պաշիքըն կոչեցեալ:
Էւ այլ բազում պօլուկ պաշիք,

⁶¹ Քեոմուրճյան, էջ 41:

որոց ընդդէմ ոչ որ եկեալ,
Այլ եկեալքն տկարանային,
և բընակիչք ոչինչ օգտեալ⁶²:

Քյոռօղլու մասին հիշատակությունը լուրջ անվանական բնույթ է կրում՝ «ժըպըրհացեալ» մակդիրի հավելմամբ: Նման բացասական մակդիրներով են հիշատակվում նաև էպոսից հայտնի մյուս ջալալի առաջնորդները՝ Գզիրօղլի, Թանդրի Թանըմազ, Քոսա Մաֆար ևն: Քյոմուրճյանն իր հերթին ևս վկայում է, որ ջալալի ապստամբ պարագլուխների մեծ մասն Օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաներ, խոշոր ավատատերեր և զինվորական հրամանատարներ էին (բեկլերբեկի, սանջաքբեկի, բոլուկբաշի ևն)⁶³: Բացառված չէ, որ մեզ հետաքրքրող որոշ ջալալի առաջնորդներ՝ «Քյոռօղլի» էպոսի գործող անձանց պատմական նախատիպերը ևս պատկանած լինեն նրանց շարքին: Մասնավորապես, ջալալի առաջնորդների թվում Քյոմուրճյանը հիշատակում է նաև էպոսի որոշ պատումներում որպես Քյոռօղլու զինակից հանդես եկող Զընջիլդոանին, նույնինքն՝ Զինջիրքըռան Ալի փաշան, որի վախճանի մասին առկա է Առաքել Դավրիժեցու վկայությունը⁶⁴:

Ուշագրավ է պատմագրի հիշատակությունը Թյուրքչեբիլմեզ (բառացի՝ «թուրքերեն չիմացող») տարօրինակ անվամբ ջալալի առաջնորդի մասին, որի վերաբերյալ մեկ այլ վկայության ենք

⁶² Անդ, էջ 167-169:

⁶³ «Պեկլերպէկի» (բեկլերբեկի)՝ օսմանյան բարձրաստիճան պաշտոնյա, էյալեթի քաղաքական վարչության կառավարիչ և զինուժի հրամանատար, «սանճաղ պէկի» (սանջաքբեկի)՝ սանջաք վարչական միավորի կառավարիչ և զինուժի հրամանատար, «քէտխօտա» (քեթխուդա)՝ տնտեսական գործերի կառավարիչ, վերակացու, «պօլուկ պաշի» (բոլուկբաշի)՝ գորամասի (բոլուք) հրամանատար, զինվորական կոչում:

⁶⁴ Դարիժեցի, էջ 113:

հանդիպում «Պատմութիւն համառօտի» մյուս էջերում: Քյոմուրճյանը նշում է նաև վերջինիս սպանվելը Երևանի բերդի պաշարման ընթացքում, 1616 թ. թուրք-իրանական պատերազմի ժամանակ.

Ուր ի զաշտն Ընվանու ըրազումք կոտորեցան, եէնիչերոց աղայն անկեալ,

Եւ խոցեալ Թիրքճէ Պիլմէզն,

Եւ այլքն անդուստ յետրս փախեալ⁶⁵:

Ըստ ամենայնի, Թյուրքչեքիլմեզն էլ էր այն ջալալիներից, ովքեր, ի վերջո, հնազանդվելով սուլթանին՝ ներման էին արժանանում և որևէ պաշտոն ստանալով՝ մասնակցում պարսից դեմ ձեռնարկված պատերազմական գործողություններին:

Նույն անձնավորությանն է ավելի վաղ՝ 1610 թ. դեպքերի առթիվ հիշատակում Առաքել Դավրիժեցին «Գիրք պատմութեանց» երկի բանաբաղային բնույթ կրող ՕՁ անխորագիր գլխում՝ առանց նշելու, սակայն, նրա մասնակցությունը ջալալիական ապստամբություններին. «*Դարձեալ ի սոյն թուին [Թուին ՌՕԹ.] Յուլիսի երեսուն և մէկն, օրն երկուշաբթի, Սօֆին եկն յԱրզրում խիստ կոխ արար հետ Թուրքչաբիլմազին՝ հետ թաթարին, ել Օզոստասի երեքն՝ գնաց օրն ուրբաթ, տեղույս տէրն Հասան փաշայն էր*»⁶⁶:

⁶⁵ Քեովիրճեան, էջ 184:

⁶⁶ Դավրիժեցի, էջ 479: Թյուրքչեքիլմեզի անունն աղավաղված է Դավրիժեցու երկի աշխարհաբար թարգմանության մեջ. «...Սոֆին եկավ Կարին (՛), թուրք Չաբիլմազի՝ թաթարի դեմ ուժեղ կոխ տվեց» (Դավրիժեցի, էջ 498): Ըստ ամենայնի, սխալը գալիս է դեռևս Դավրիժեցու «Պատմութեան» ձեռագրերից մեկում տեղ գտած միևնույն ձևից («*թուրք Չաբիլմազ*»), ինչը թուրքերենի չիմացության արդյունք է: Այլ տարբերակով առկա է նաև «*թուրքչայրիլմազ*» ձևը (Դավրիժեցի, էջ 479):

Իր աշխատության մեջ իրավացիորեն քննադատելով թուրք պատմագրության էջերում առկա այն թուր տեսակետը, ըստ որի «բուն թուրքերի» (Esas Türkler) և ծագումով ոչ-թուրքերի (Gayr-i Türkler) միջև տեղի ունեցած անվերջ պայքար է

էպոսի ադրբեջանական տարբերակում նույնանշանակ համարժեք անվամբ հիշատակվում է Քյոռօղլու «ղեկիբաշիներից» Դիբիլմեզը (բառացի՝ «լեզու չիմացող»): Պատմվում է, որ երբ Չեկիբեղում հավաքվում են 777 (կրկին խորհրդանշական թիվ է՝ առկա նաև արևելյան խմբի տարբերակներում) ապստամբներ, Քյոռօղլին նրանց բաժանում է ջոկատների և հրամանատարներ կարգում, որոնց թվում Դելի Հասանը, Դելի Մեհթերը, Չոփուր Սաֆարը, Դելի Մեհթին, Ալայիոզանը, Թըփոզազդանը, Թոխմազվուրանը, Գերիդոնմազը, Թանըթանըմազը, Դիբիլմեզը, Գյուրջուօղլուն, Գորխուզանմազը, Բելլի Ահմեդը և Իսաբալան⁶⁷:

Համանման և համահունչ ջալալիական բնորոշ վայրիվերո մականուններով բազմաթիվ ապստամբ պարագլուխների է հիշատակում նաև Քյոմուրճյանը, ինչպես, օրինակ, «*Քէսէքես*» (կտրի հա կտրի), «*Չըպլաղ*» (մերկ), «*Քեօր Ղայա*» (կույր ապառաժ), «*Թօփուզի Պոյուկ*» (մեծ մահակավոր, զավազանակիր), «*Թանդրի Թանմազ*» (անաստված), «*Ապուխանչէր*» (դաշույն պահող), «*Քաֆիր*» (անհավատ կամ արյունարբու), «*Եօլա Սըղմազ*» (ճանապարհին չտեղավորվող), «*Միքի Պոյուկ*» և այլն, «*որոնք*

դիտարկվում Թուրքիայի ողջ պատմությունը, և որ, իբր, հենց, այսպես կոչված, «էջների» ու «ղեշիրմե» բարձրաստիճան իշխանավորների կամայականություններն են հրահրել ջալալիական ապստամբությունները, Մ.Ջուլայյանը մատնանշում է նման ոչ-թուրք տարբերի գոյությունն անմիջապես ջալալիների շարքերում: Մակայն սխալմամբ «Թյուրքչեքիլմեզը» որպես բնութագրող մակդիր մեկնելով՝ ենթադրում է ջալալի այս առաջնորդի «ղեշիրմե» ֆեոդալ լինելը (Ջուլայյան, էջ 138): Նախ, «ղեշիրմեի» (հայկական աղբյուրներում՝ «մանկահավաք», «մանկածողով», «տղայածողով») միջոցով հավաքագրված անձը եվագ հավանական է, որ նման մականուն կրեր՝ նկատի ունենալով հետագա խիստ դաստիարակությունը թուրքական միջավայրում, և հետո Դավրիժեցին պարզորոշ նշում է նրա թյուրքական ծագումը (թաթար):

⁶⁷ Кероглу, составитель М.Г.Тухмасиб, Баку, 1959, с. 45.

խոսում են այն մասին, թե ինչպիսի չարագործություններ կարող էին գործել նրանք»⁶⁸:

Ինչպես արդեն տեսանք, վերոհիշյալ գործող անձանցից Դելի Հասանը, Չուիուր Սաֆարը (Քոսա Սաֆար) և Թանրըթանըմազը (Թանդրի Թանիմազ) իրենց նույնանուն պատմական նախատիպերն ունեն: Այնպես որ, ինչ վերաբերվում է Թյուրքչեֆիլմեզին և ադրբեջանական էպոսի Դիլիլմեզին, ապա խոսքը պետք է որ միևնույն անձնավորության մասին լինի: Միանգամայն հնարավոր կարելի է համարել հայ պատմագիրների հիշատակած ջալալի առաջնորդի և վիպական Քյոոզլու «դելիբաշի» այս նույնացումը:

Երեմիա Քյոմուրճյանն իր երկում հիշատակում է ջալալիների արշավանքներին նաև հայերի մասնակցության վերաբերյալ.

Եւ զՃէլալիսն, գոր վեր յիշեալ,

կողմ կողմ եղեալ եւ շատացեալ...

Օճաղից տեարք առ այնս դիմեն,

զի մի լիցին նոցուն սպանեալ,

Ջտունս եւ զկալուածս ի յետս ձրգեն՝ զկինս եւ զգաւակս ի բաց լըքեալ:

Շատք ի Հայոց զայս արարին

և ոչ միայն գտունսրն թողեալ,

Եւ սո՛ւրբ հաւատն ուրանային՝

զանմեղ զարիւնս հեղուլ փութալ»⁶⁹:

Եթե Դավրիժեցու համանման վկայությունն ընդհանուր բնույթ է կրում՝ վերաբերվելով, ընդհանրապես, քրիստոնյաներին, ապա Քյոմուրճյանն ուղղակիորեն նշում է ջալալիների ավազակային գործունեությանն հավատուրաց, իմա՝ մահմեդականացած հայերի մասնակցությունը: Այս փաստը ևս որոշակիորեն կարող է խոսել

⁶⁸ Ջուլայյան, էջ 165:

⁶⁹ Քեօմիւրճեան, էջ 162-163:

Քյոոզլու կամ նրա գործակիցների խմբերում հայերի հնարավոր մակայության մասին արված ենթադրության օգտին, մանավանդ, որ Քյոոզլին ինքն, ըստ ամենայնի, նաև պատմական Հայաստանի տարածքում (Կիլիկիա, Փոքր Հայք) գործած ջալալի առաջնորդներից է եղել⁷⁰:

Հիմնականում գրեթե անվանապես միայն հիշատակելով ջալալի առաջնորդներին՝ Քյոմուրճյանը նշում է, որ նրանց շատ համառոտ է անդրադարձել և, որ մի առանձին գիրք է գրել նրանց մասին.

Տաս՛ւ երկու տարի այսպէս

զասացեալ երկիրդ ապականեալ,

Պատմագրութեան ոճով գիրք մի վասն այսոցիկ եղէ գրեալ:

Ջգործսն զարարս եւ զգօրութիւնս

և զսէրտարացն անաջողեալ

Ջայս համառօտ իբր անցուցի,

միայն զանուանսն ըստորագրեալ»⁷¹:

Քյոմուրճյանի երկի 1695 թ. կազմված արձակ և հակիրճ տարբերակում՝ «Պատմութիւն համառօտ թագաւորացն օսմանցոց» աշխատության մեջ հեղինակը դարձյալ շեշտում է այս միտքը. «Ժ

⁷⁰ Օսմանյան պաշտոնական գրագրության մեջ (Mühimme Defterleri) նախաջալալիական շրջանի ավազակապետերի շարքում Քյոոզլու հետ միասին հիշատակվում է միևնույն տարածաշրջանում գործած ոմն էրմենաբլու Շեյդի (Ermenâklu Seydi) (Akdağ 1995, s. 519), իմա՝ պատմական Կիլիկիայի էրմենաք կամ էրմենեկ գավառակից (հնագույն Գերմանիկոպոլիս) սերող և վիպական «դալիներին» համահունչ «շեյդի» (արաբ.՝ «գիժ», «խելագար») մականվամբ: Հաշվի առնելով, որ նշված բնակավայրը դեռ Կիլիկյան Հայաստանի ժամանակներից մինչ 1915 թ. ցեղասպանությունը գերազանցապես հայաբնակ է եղել (Ադանայի նահանգի Իչելի գավառի կազմում), ապա խոսքն, ամենայն հավանականությամբ, Քյոմուրճյանի (ավելի վաղ նաև Դավրիժեցու) հիշատակած հավատուրաց քրիստոնյա ջալալիներից մեկի մասին է:

⁷¹ Քեօմիւրճեան, էջ 167:

սորա ժամանակին Անաստոյ ճէլայիքն յայտնեցան, զոր պապքն մեր փախեան ի նոցունց և պատմէին մեզ ի ժամանակ տղայութեան մերում և չեղն պարտումն ամպարշտացն այնոցիկ ի ժամանակի սորին, այլ զոր ինչ և կամացն զործեցին անխտիր: Վասն սոցա զգիրք մի գրեալ եմ ուրոյն պատմութեամբ լի»⁷²: Հիշատակված երկը, սակայն, հայտնի չէ և չի նշվում հեղինակի գրական ժառանգության ուսումնասիրողների կողմից: «Հեղինակներ կան, - գրում է Լեոն, - որոնք բախտի խորթ զավակներ են: Այդպիսիներից մեկն է և Քեոմուրճյանը»⁷³: Հնարավոր է, որ այս երկը ևս, ինչպես Քյոմուրճյանի ստեղծագործությունների մեծ մասը, կամ չի պահպանվել և կորսվել է, կամ էլ դեռևս հայտնաբերված չէ: Անշուշտ, այն բավական առատ փաստեր կմատակարարեր խնդրո առարկա հարցերի և, ընդհանրապես, ջալալիների ապստամբությունների վերաբերյալ:

Ամփոփելով նյութը՝ նշենք, որ Քյոոզլու մասին հիշատակությունները հայ մատենագրության մեջ միայն XVII դ. աղբյուրներով չեն սահմանափակվում: «Քյոոզլի» էպոսի հետ կապված բազմազան արժեքավոր տեղեկություններ է հայտնում XVIII դ. հայ մատենագիր Եղիա Մուշեղյանը (Եղիա Կարնեցի), իր՝ 1721 թ. Թավրիզում գրված «Գիրք խաղից երաժշտականաց» տաղարանում, որում ամփոփված են հայատառ թուրքերենով գրառված և Քյոոզլուն վերագրվող 13 խաղեր⁷⁴: Սակայն առանձնակի պատմական-աղբյուրագիտական արժեք է ներկայացնում տաղարանում միջանկյալ կարգով գրի առնված «Ասմունք Քոոզլուն» հատվածը, որում Եղիան ամփոփ կերպով արձանագրել է ժողովրդի մեջ Քյոոզլու վերաբերյալ շրջող

⁷² Անդ, էջ 321, ՄՄ թ. 1786, էջ 52:

⁷³ Լեո, Երկերի ժողովածու, հտ. Ե, Երևան, 1986, էջ 274:

⁷⁴ Ա. Աբրահամյան, Դ. Գաբրիելյան, Քյոո-ոզլու նորահայտ երգերը, Հայկ. ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ, թ. 9, էջ 71-93, Երևան, 1954:

զրույցները⁷⁵: Քյոոզլու մասին ասքերին ծանոթ է եղել նաև XVIII դ. հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Հովսեփ Էմինը, ինչի մասին առկա են համապատասխան հիշատակություններ նրա ինքնակենսագրական երկում⁷⁶: Սակայն սա արդեն այլ ժամանակահատված է և այլ ուսումնասիրության նյութ:

ВОПРОСЫ ИЗУЧЕНИЯ ИСТОРИЗМА ЭПОСА «КЕРОГЛЫ» И АРМЯНСКАЯ ИСТОРИОГРАФИЯ XVII ВЕКА

Рамазян Самвел

(Резюме)

Основы историзма эпоса «Кероглы» в целом касаются джелалийским восстаниям в Османской империи конца XVI в. и начала XVII в. Имея многовековую стабильную традицию, армянская историография XVII в. сохранила важные и уникальные сведения об этих исторических событиях, в т.ч. о предводителях джелали, исторических прототипах эпоса - Кероглы, Гзироглы Мустафа, Коса Сафар и др. Особенную важность в изучении историзма эпоса представляют не только труды армянских историков XVII в. Аракела Даврижеци, Григора Даранагци (Камахеци) и Еремия Кеомурчяна, но и мелкие хроники и колофоны (памятные записи) рукописей того же периода. Данные армянские источники передают сведения как о персонажах эпоса, так и об некоторых исторических событиях, которые отражены в эпосе.

⁷⁵ Անդ, էջ 72-74:

⁷⁶ Յովսեփ Էմինի կեանքն ու արկածները (անգլերեն բնագրեն), Պեյրուք, 1958, էջ 344, 424:

**THE QUESTIONS OF STUDYING OF THE HISTORISM OF THE
EPIC OF “KOROGLU” AND THE ARMENIAN
HISTORIOGRAPHY OF THE XVII CENTURY**

Ramazyan Samvel
(Summary)

The bases of the historism of the epic of “Koroglu” generally concerns the Jelali Revolts (Celali Rebellions) in the Ottoman Empire at the end of the 16th century and the beginning of the 17th century. Having a centuries-old stable tradition, the Armenian historiography of the 17th century saved an important and unique information about these historical events, also about the leaders of Jelali, the historical prototypes of the epic - Koroglu, Kiziroglu Mustafa, Kosa Safar etc. The particular importance in the studying of the historism of the epic presents not only the works of Armenian historians of the 17th century Arakel Davrizhetsi (Arakel of Tabriz), Grigor Daranaghtsi (Kamakhetsi) and Eremia Komurjian (Jeremiah Keomurjian), but also small chronicles and colophons (memorable records) of manuscripts of the same period. These Armenian sources transmit information about the personages of the epic, as well as about some historical events which are reflected in the epic.

*Հակոբյան Տաթևիկ**

**ԱԲԴՈՒԼ ՀԱՍԻԴ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԻ
ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐԿԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(ՄԵԼԻՄ ԴԵՐԻՆԳԻԼԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ)**

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, թուրքական պատմագրություն, Աբդուլ Համիդ II-րդ, կարմիր սուլթան, օսմանյան խորհրդանիշներ, իսլամ, կրթություն, հայկական կոտորածներ, համիդիե գեղեր, արխիվային փաստաթղթեր

Աբդուլ Համիդ 2-րդի երեսուներեք տարի տևած գահակալությունը Օսմանյան պատմության ամենահակասական շրջաններից է, որի վերլուծությունը տարիներ շարունակ եղել և այժմ էլ մնում է ոչ միայն թուրք, այլև արտասահմանցի ուսումնասիրողների հետաքրքրության ծիրում: Ընդ որում ո՛չ Թուրքիայում, ո՛չ նրա սահմաններից դուրս սուլթանի կերպարը միանշանակ չի ընկալվում: Պատմաբանները, ծայրահեղությունից ծայրահեղություն ընկնելով, նրան մերթ «կարմիր սուլթան» և «բռնապետ» են որակում, մերթ «մեծ տիրակալ» հռչակում: Ուշագրավ է, որ այս երկվությունն ի հայտ է եկել դեռ նրա գահակալման տարիներին: Կայսրության անկումից հետո Թուրքիայի Հանրապետության գոյության առաջին շրջանում, երբ

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ tatevik.hakobyan@ysu.am

պատմագիտությունը որպես կարևորագույն ոլորտ հայտնվեց նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի անմիջական վերահսկողության տակ, և մի քանի տարվա ընթացքում ստեղծվեց Թուրքիայի նոր՝ քեմալիզմի դրույթներին համապատասխանող պատմություն, Համիդյն իր իսլամամետ քաղաքականությամբ, նոր օսմանների և երիտթուրքերի դեմ հալածանքներով դրական վերաբերմունքի չէր կարող արժանանալ: Սուլթանի անձի նկատմամբ բացասական մոտեցումներում փոփոխությունները սկսվեցին 1950 թ.¹ Ժողովրդավարական կուսակցության իշխանության գալուց հետո: Հետագա տարիներին Համիդի գործունեության գնահատականների բացասականից դրական աստիճանական փոխակերպումը նոր փուլ մտավ Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալուց հետո: Խալիֆի դերի կարևորման և կրոնական նախաձեռնությունների նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար Համիդը որպես խորհրդանշական կերպար դարձավ պատմագրության, պատմավեպերի և ֆիլմերի կիսադիցական հերոս, իսկ նրա կյանքն ու գործունեությունը՝ գիտական ուսումնասիրությունների, քննարկումների առարկա: Արդուլ Համիդի կերպարի վերաժնորման այս փուլում կարևոր դեր ունեն Թուրքիայի առաջատար կրթական հաստատություններից մեկի՝ Ստամբուլի Բողազիչի համալսարանի պրոֆեսոր Մելիմ Դերինգիլի աշխատանքները:

Ի տարբերություն այլ գիտնականների՝ Դերինգիլը պարզապես չի գովում Համիդին, այլ փորձում է վերլուծել սուլթանի կերպարը քաղաքագիտական-սոցիոմշակութային երևույթների համատեքստում: Արժե շեշտել, որ Դերինգիլը ժխտում է Օսմանյան կայսրության յուրահատկության, «էկզոտիկության» թեզը և նշում, որ այն առնաձևապես չէր տարբերվում իր ժամանակի այլ կայսրություններից՝ օրինակ

ուսականից կամ ավստրոհունգարականից: Սակայն միևնույն ժամանակ չի էլ մոռանում բազմիցս շեշտել, որ Օսմանյան կայսրությունը միակ մուսուլմանական տերությունն էր, որը կարող էր այս կամ այն չափ խառնվել եվրոպական երկրների կողմից որոշումների կայացման գործընթացին: Այս համատեքստում պատմաբանը Արդուլ Համիդի դերը կարևորում է «էկզոտիկության» մասին միֆերի վերացման և մյուս կողմից կայսրությունից դեպի ազգ-պետություն անցման համար նախադրյալների ստեղծման տեսանկյունից: Այս ճանապարհին Դերինգիլը ընդգծում է սուլթանի կողմից մի շարք խորհրդանշանների առաջ քաշումը, առաջին հերթին սուլթան-խալիֆի անձի սրբության հետ կապված նշանների՝ օսմանյան զինանշանի, սուլթանի թուղրայի կամ կրոնական մոտիվների կիրառումը տարբեր հանրային վայրերում: Սրա վառ օրինակն է Համիդի գահակալության 25-րդ տարեդարձին ընդառաջ երկրի բոլոր բնակավայրերում զինանշանով ժամացույցի աշտարակների կառուցումը², կամ պետական կառույցներում ու շենքերում «Կեցցե մեր փառիշահը» գրությամբ զարդանախշավոր պաստառներ կախելը³: Օսմանյան խորհրդանշանների մյուս խումբը ներառում է որպես փառիշահի ողորմության նշան շնորհած մեդալներ, նվիրաբերված Ղուրաններ, հատուկ դրոշներ կամ հիլաթ³: Երբորդ խումբն են կազմում իսլամի կարևորությունն ընդգծելու համար պետության կողմից գնված սուրբ մասունքները: Չորրորդ,

¹ Մանրամասն տե՛ս Tuncer H., Sultan II. Abdülhamid Dönemi Saat Kuleleri, Din ve Hayat Dergisi, Sayı 32, 2017, s. 109-113:

² Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, İstanbul, 2007, s. 57-58.

³ Թանկ կտորից կամ մորթուց կարված վերնագգեստ, որ սուլթանը նվիրում էր հատուկ ծառայության կամ հավատարմության դիմաց:

մյուսներին փոքր-ինչ տարբերվող տեսակն են Աբդուլ Համիդի շրջանի փաստաթղթերում անընդհատ կրկնվող բառերը, արտահայտությունները⁴:

Դերինգիլը շեշտում է, որ պետական խորհրդանիշների ներդրման միջոցով Աբդուլ Համիդը պայքարում էր «կարմիր սուլթանի» և «սարսափելի թուրքի» կերպարի դեմ⁵: Մինևայն ժամանակ հեղինակն ընդունում է, որ որոշ դեպքերում «խորհրդանիշների մրցավազքը» տարօրինակ դրսևորումներ էր ստանում: Օրինակ, ամեն կերպ ձգտելով խուսափել Թուրքիայում այլ պետությունների սխմվուների առկայությունից, Յըլդըզ պալատը հրամայել էր արգելել կայսրության տարածք մտնող փայտեթների ու ծանրոցների վրա այլ պետությունների զինանշանների առկայությունը: Սրա հետ մեկտեղ զինանշանի պատկերումը պարտադիր Յըլդըզ պալատի թույլտվությամբ պետք է իրականացվեր: Օրինակ, 1885 թ. հոկտեմբերի 24-ին սաղրագամ Բյամիլ փաշան տեղեկացնում է, որ Ստամբուլի Բյույուքդերե թաղամասում հայկական կաթոլիկ եկեղեցու շենքի վրա, «սուլթան Աբդուլ Համիդի օրոք է կառուցվել» գրությամբ մարմարե ցուցանակ է փակցվել: Որպես հավատարմության նշան փակցված այս ցուցանակն աննախադեպ երևույթ էր, ուստի նախաձեռնությանն Աբդուլ Համիդը կասկածամտորեն է վերաբերում, մտահոգություն հայտնում, որ քրիստոնեական աղոթավայրում նման ցուցանակը իսլամի տեսանկյունից տգեղ է: Արդյունքում, սակայն, եկեղեցու ներքին բակում հայերեն տառերով գրված «հզոր, ուժեղ սուլթան Աբդուլ Համիդի ժամանակաշրջանում է կառուցվել» ցուցանակը

⁴ Deringil S., İktidarın Sembolleri ve İdeoloji. II Abdülhamid Dönemi (1876-1909), İstanbul, 2002, s. 35, տե՛ս նաև Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 57:

⁵ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 91.

մտում է: Ավելին, այս դեպքից հետո Համիդը թույլ է տալիս, որ սուլթանի թուղթան և նրա իշխանության այլ դրսևորումները պատկերվեն ոչ մուսուլմանների այլ աղոթատեղերում ևս⁶: Օսմանյան կարևոր խորհրդանիշներ էին դառնում սուլթանական դամբարանները: Գահ բարձրացող նոր սուլթանը որպես գահակալման արարողակարգի բաղկացուցիչ մաս այցելում էր իր պապերի դամբարան: Ավելին, նոր փառիշահը, իր նախկինի դամբարանը կառուցելով, «օսմանյան դինաստիայի օրինականության ու հարատևության» կոթող էր ստեղծում⁷:

Մշտապես զուգահեռներ տանելով օսմանյան Թուրքիայի, նրան ժամանակակից, ինչպես նաև առավել վաղ շրջանում գոյություն ունեցած կայսրությունների հետ, Դերինգիլը փաստորեն փորձում է ցույց տալ, որ Աբդուլ Համիդը կայսրության կառավարչի դասական կերպար էր, նրա որոշումները կայսերական քաղաքականության արդյունք էին և ստեղծված դրության պայմաններում անխուսափելի:

1878 թ. Բեռլինի կոնգրեսի որոշումներով քրիստոնյաներով բնակեցված տարածքներից զրկվելու արդյունքում Համիդը սկսեց «ճիշտ գաղափարախոսություն ունեցող վստահելի ժողովուրդ ստեղծել»: Այս ճանապարհին կարևորագույն գործիք էր իսլամը, որն ըստ Դերինգիլի դարձավ թուրք ժողովրդի ազգային գիտակցության ձևավորման անկյունաքարերից մեկը: Պետք է հստակեցնել, որ թուրք ժողովրդի որպես միասնական ուժի ընկալումը թերևս պատկանում է հանրապետական շրջանին: Քեմալական ռեֆորմների մեծ մասն ուղղված էր հենց այս

⁶ Deringil S., Invention Of Tradition as Public Image in the Late Ottoman Empire, 1808-1908, Comparative Studies in Society and History, Volume 35, Issue 1, (1993), p. 8.

⁷ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 65.

ազգաստեղծ գործունեությանը: Սակայն քաղաքականության հիմքերը դրվել են դեռ Համիդի ժամանակաշրջանում: Բացի ներքին գործառույթից, այն պետք է նպաստեր նաև ամբողջ աշխարհի մուսուլմանների կողմից օսմանյան սուլթան-խալիֆի գերակայության ընդունմանը: Օսմանյան սուլթանի՝ որպես բոլոր մուսուլմանների խալիֆի դերը վերաբժնորում ստացավ հատկապես Համիդի գահակալության տարիներին: Քարոզչական բոլոր միջոցներով իսլամական կերպարն ամրապնդող Համիդն օսմանյան գործերին նույնիսկ մուսուլմանական երկրների միջամտությունը կանխելու նպատակով ձեռնարկում էր հնարավոր բոլոր միջոցները: Դերինգիլի կարծիքով օսմանյան խալիֆայությունը Աբդուլ Համիդի գահընկեցությամբ ավարտվեց, քանի որ նրանից հետո գահակալած խալիֆները պարզապես խամաճիկ էին ձեռքում:

Թե՛ ներքին քաղաքական-հասարակական, թե՛ արտաքին պաշտպանական-քարոզչական նպատակներին էր ծառայեցվում նաև կրթությունը: Կրթական համակարգում Աբդուլ Համիդի կատարած բարեփոխումների բնույթին մանրամասն չանդրադառնալով՝ Ս. Դերինգիլն գրում է, որ «ազգի սոցիալական ճարտարապետության» ճանապարհին Աբդուլ Համիդն ակտիվորեն կիրառել է դպրոցների միջոցով իրեն ձեռնտու գաղափարների ներդրումը հասարակության մեջ: Այս ճանապարհին գլխավոր խոչընդոտ համարելով միսիոներական դպրոցները՝ նա մի կողմից փորձել է նվազեցնել դրանց քանակը կամ չեզոքացնել ազդեցությունը, մյուս կողմից ավելացրել թուրքական տարրական դպրոցների, մասնագիտական լիցեյների, բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը: Շատ մեծ գործ էր պետք անել համատարած անգրագիտության խնդիրը

լուծելու համար⁸: Այնուամենայնիվ հարյուրամյակի ավարտին հաջողվեց զրագիտության մակարդակի աճ ապահովել, չնայած այն հանգամանիքին, որ կրթական մակարդակը եվրոպական չափանիշներով շարունակում էր ցածր մնալ: Մյուս կողմից միսիոներական ոճով և մեթոդներով փորձել է տարածել օսմանյան ազդեցությունը սեփական տարածքում բնակվող մուսուլմանների՝ արաբների, քրդերի, լազերի, ապա նաև աֆրիկյան և ասիական երկրների, ավելի պակաս չափով էլ Ռուսական կայսրության մուսուլմանների շրջանում՝ այս կերպ նպաստելով պանիսլամիզմի գաղափարախոսության տարածմանը: Օրինակ, մի ֆրանսիական աղբյուրից տեղեկանում ենք, որ օսմանյան կրթության նախարարությունը Ցեյլոն կղզու մուսուլմանական դպրոցներում կազմակերպված Ղուրանի ընթերցման մրցույթի հաղթողներին Ղուրան է նվիրել⁹: Այս նույն միտումի այլ դրսևորումն է երկրի լավագույն դպրոցներում սովորել ցանկացող օսմանահպատակ ոչ թուրք, ինչպես նաև օտարերկրացի մուսուլմանների պետության, որոշ դեպքերում էլ անձամբ փաղիշահի հաշվին կրթելը¹⁰: Փաստորեն «ուղեղի լվացման» յուրօրինակ միջոց, անարյուն ուժացման մեթոդ հանդիսացող այս դպրոցների թվի ավելացմանը զուգահեռ սուլթանը խստացրել է ոչ մուսուլմանական և հատկապես միսիոներական դպրոցների նկատմամբ տարվող քաղաքականությունը, քանի որ միսիոներական դպրոցները երկրի անվտանգությանն ուղղված մարտահրավեր են: Եթե կրթական բարեփոխումների հետ Դերինգիլը համաձայն է, ապա բնակչության միատարր դարձնելու մեկ այլ մեթոդը՝ համիդիե

⁸ Deringil S., İktidarın Sembolleri ve İdeoloji. II Abdülhamid Dönemi (1876-1909), s. 121

⁹ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 33.

¹⁰ Նույն տեղում, էջ 32:

գնդերը միանշանակ չեն գնահատվում: Դերինգիլը գրում է, որ սուլթանի կողմից այդ գնդերի ստեղծումը միաժամանակ երկու նպատակ էր հետապնդում՝ քրդերից հավասարիմ տարր ձևավորել և հայկական անկախության շարժման դեմ նրանց միջոցով պայքարել: Առաջին գաղափարը չիրագործվեց, իսկ երկրորդը միայն լրացուցիչ խնդիրներ առաջ բերեց:

Դերինգիլը շեշտում է՝ ի սկզբանե հայտնի էր, որ այս ուժերը «հայկական չեթեների» դեմ են օգտագործվելու: Հետևաբար, նրա խոսքով, հայ պատմաբաններն իրավացի են, երբ համիդիե գնդերի առաջնային թիրախ են համարում հայերին: Հիմնականում սուննիներից բաղկացած համիդիե գնդերը, սակայն, չբավարարվեցին միայն անպաշտպան հայերի վրա հարձակումներով, սկսեցին դաժանորեն պատերազմել նաև այլ քրդերի, հատկապես ալևիների դեմ¹¹: Համիդիե գնդերի հաջողությունը պայմանավորված էր նրանով, որ վերջիններս ծառայության ընթացքում ազատվում էին բոլոր հարկերից: Դերինգիլը գրում է՝ այս գնդերի ստեղծումից կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ նրանց վրա պետական վերահսկողության սահմանումը խնդրահարույց է: Արդեն 1887 թ. զեկույցների համաձայն պետության կողմից զինված աշիրեթները սկսել էին ապստամբել: Գրեթե բոլոր արևելյան վիլայեթներից գալիս էին տեղեկություններ գնդերի նմանատիպ գործողությունների մասին: Օրինակ, 1889 թ. մարտի 2-ի մի զեկույցում էրգրումում գտնվող երեք համիդիե սպաների անուններ են հիշատակվում, ովքեր հարձակվել են գյուղերի վրա և սպանել գյուղացիներին: Ընդ որում, զեկույցվող դեպքերի մեծ մասը կապված է մուսուլմանների հետ, քրիստոնյաների նկատմամբ հարձակումները չեն զեկույցվում, կամ հնարավոր է նույնիսկ որպես հարձակում չեն դիտարկվում:

¹¹ Նույն տեղում, էջ 104:

Համիդիե գնդերի հետ կապված բողոքներում նշվում է նաև, որ «մի հրամանատար էրգրումում գտնվող ռուսների դեմ ծայրահեղ գործողություններ է անում», ինչը կարող է միջազգային բախումների պատճառ դառնալ¹²: Օրըստօրե ավելանում էր այն զինվորական պաշտոնյաների թիվը, ովքեր անօգուտ դարձած գնդերի լուծարումն էին պահանջում: Բացի այդ, ըստ Դերինգիլի, համիդիե գնդերը ակտիվացրեցին ուժեղ աշիրեթական կապերի վրա հիմնված հին համակարգը, և Համիդի սպասած ուժացմանը հակառակ արդյունք գրացվեց: Փաստորեն աշիրեթները զինելով և պետության հաշվին կրթելով՝ նրանցից բխող վտանգը առավել մեծ դարձավ: 1909 թ. Աբդուլ Համիդին գահընկեց արած երիտթուրքերը քրդական քաղաքականությունը նույն կերպ շարունակեցին: Համիդիե գնդերը «աշիրեթական գնդեր» անունով պահպանվեցին մինչև Առաջին համաշխարհային պատերազմ: Համիդիե նախագիծը հաճախ համարվում է Համիդի անհաջողության օրինակ, քանի որ սուննիներից կազմված զորամիավորումները հնարավորություն ստացան կոտորել ալևիներին, շիա և գազա քրդերին: Ավելին, ըստ որոշ զիտնականների համիդիե գնդերը 1891-1914 թթ. քրդական ազգայնականության առաջացման կարևոր հիմք ստեղծեցին¹³:

Դերինգիլի կարծիքով հենց Համիդի ժամանակ ձևավորված կադրերը դարձան Թուրքիայի Հանրապետության ակունքներում կանգնած գործիչներ: Ուշագրավ է, որ Օսմանյան կայսրություն-երիտթուրքեր-հանրապետություն շրջայի վերլուծության հարցում Դերինգիլը փոքր-ինչ հեռանում է իրեն հատուկ մեղմ ոճից և տալիս բավականին կտրուկ գնահատականներ: Շեշտելով, որ ըստ

¹² Նույն տեղում, էջ 105-106:

¹³ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 107-108.

տարածված տեսակետի թուրքիայի Հանրապետությունը հնացած կայսրության մոխիրներից ծնված փյունիկ է, որի հիմնադիրները ամեն ինչ արել են վերոնշյալ կայսրության հետ կապերն ամբողջապես կտրելու համար, Դերինգիլը նշում է, որ անժխտելի է հանրապետության առաջին կադրերի կապը օսմանյան անցյալի հետ: Հանրապետության առաջին տարիներին թուրքիայի բազմաթիվ քաղաքական գործիչներ մեծապես աբդուլհամիդյան շրջանի կրթության արդյունքն էին¹⁴: Ինչպես Իլբեր Օրթայլըն է գրում. «Կայսրությունը երիտասարդ հանրապետությանը խորհրդարանի, խորհրդարանականի, քաղաքական կուսակցության և մամուլի պես ավանդույթներ ու կառույցներ է պարգևել: Հանրապետության բժիշկները, փաստաբանները, գիտնականները, պատմաբանները և լեզվաբանները օսմանյան կայսրության մտավորականներն էին»¹⁵: Դերինգիլը գրում է, որ Բարձր դռան ոսկեգոծ սենյակներից դեպի Անկարայի մեջլիսի կիսաքանդ շենք մի ուղիղ զիծ է գնում, իսկ Աբդուլ Համիդն ու Մուսաթաֆա Քեմալը շատ ընդհանրություններ ունեն¹⁶:

Անդրադառնալով հայերին ու Հայկական հարցին Մելիմ Դերինգիլի գնահատականներին՝ պետք է նշել, որ Աբդուլ Համիդին վերաբերող հոդվածներում հայերի մասին անդրադարձները ի սկզբանե շատ չէին: Հեղինակը նշում է, որ դրա պատճառը 1980-1990-ականներին այս խնդրի մասին հանգիստ խոսելու անհնարինությունն էր, ապա հավելում՝ Օսմանյան կայսրության ուշ շրջանի պատմությամբ զբաղվող թուրք պատմաբանի համար Հայկական հարցն ուսումնասիրելու խիզախություն ցուցաբերելը նշանակում է գիտակցված հայտնվել ականապատ դաշտում: Այդ

¹⁴ Նույն տեղում, էջ 266:

¹⁵ Ortaylı İ., İmparatorluğun En Uzun Yüzyılı, İstanbul, 1983, s. 25.

¹⁶ Deringil S., İktidarın Sembolleri ve İdeoloji. II Abdülhamid Dönemi (1876-1909), s. 192-193.

մարդն իր հայրենակիցների կողմից դավաճան է հռչակվում, հայ պատմաբանների կողմից էլ՝ «ժխտող»: Եվ որ ամենահետաքրքիրն է նույն մարդու վերաբերյալ միաժամանակ երկու մեղադրանքն էլ կարող են հնչել: Մակայն թուրքիայում քաղաքական իրավիճակի հարաբերական ազատականացմանը զուգահեռ նկատվեցին Հայկական հարցի տարուի վերացման միտումներ: Դերինգիլը գրում է. «Հետաքրքիր է, որ ներկայումս չնայած այս հարցը շատ ավելի քաղաքականացված է և խիստ բևեռացված ճամբարներ են ի հայտ եկել, գուցե հենց դրա շնորհիվ է, որ խնդիրը ավելի հանգիստ կարելի է քննարկել»¹⁷: 2005 թ. մի հարցազրույցում Դերինգիլը ասել է, որ Հայկական հարցի մասնագետ չէ և միայն Աբդուլ Համիդ 2-րդի ժամանակաշրջանի վերաբերյալ ուսումնասիրություններին զուգահեռ է մասամբ անդրադարձել այդ խնդրին: Պատմաբանը նշում է՝ Օսմանյան կայսրությունը կազմակերպել է տեղահանություն, սակայն դա ցեղասպանություն է թե ոչ՝ իրավական խնդիր է, իսկ ինքը, որպես պատմաբան, իր բարոյական պարտավորությունն է համարում ոչ թե իրադարձությանը անուն տալը, այլ խնդիրը քննարկման ներկայացնելը¹⁸:

Խոսելով արխիվային փաստաթղթերի մասին՝ Դերինգիլը նշում է. «... փաստաթուղթը կամ արխիվը ինքն իրենով ոչինչ չի արտացոլում: Կախված նրանից, թե որ փաստաթուղթը կընտրեք և այն ինչպես կմեկնաբանեք, արխիվին կարող եք ստիպել, որ ասի

¹⁷ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 16.

¹⁸ Թուրքերը թուրքերի մասին, հատոր 3 (կազմ. և խմբ.՝ Ռ. Մելքոնյան), Երևան, 2011, էջ 29:

ձեր ուզածը»¹⁹: Շեշտելով, որ 1890-ականներին տեղի ունեցած հայկական դեպքերը սպիտակեցնելու նպատակ բնավ չունի²⁰, և հայկական ողբերգության նկատմամբ անարգանք կամ անտարբերություն ցուցաբերելը վերջին բան է, որ կուզեր անել²¹՝ Դերինգիլը սկսում է հայերին առնչվող մի շարք փաստաթղթերի քննություն: Փորձելով անաչառ դատավորի դերում հանդես գալ՝ հեղինակը ներկայացնում է արխիվային նույն փաստաթղթի մեկնաբանման հնարավոր մի քանի տարբերակ: Անդրադառնալով 19-րդ դարավերջին հայ որբերի խնդիրներին՝ գրում է, որ 1899 թ. ապրիլի 4-ին ներքին գործերի նախարարությանը տրված հրամանով Համիդը պահանջում է իմանալ օտարերկրյա միսիոներների մոտ հայ որբերի թիվը և նրանց համար այլընտրանք գտնել. «Հայ որբերի խնամքն ու կրթությունը մարդասիրական խնդիր է, եթե Բարձր դուռն այս կարևոր պարտականությունն ուրիշներին չթողնելով իր վրա վերցնի, ասելիք չի մնա»: Ընդգծելով վերջին նախադասությունը՝ Դերինգիլը նշում է, որ այս խոսքերով կառավարությունն ի նկատի ունի արտաքին ճնշումը: Պատմաբանը նշում է, որ վատատեսական մեկնաբանության դեպքում կարելի է պնդել, թե երեխաներին հավաքում էին իսլամացնելու կամ նույնիսկ սպանելու համար: Առավել սթափ, ոչ դրամատիկ մոտեցման պարագայում կարելի է հետաքրքրվել արդյոք այս ծրագիրը կյանքի կոչվեց և, եթե այո, ապա ինչպես երեխաներին վերցրեցին օտարերկրյա միսիոներներից²²: Ինչպես նշում է Դերինգիլը, փաստաթղթային ապացույցները ցույց են տալիս, որ 1890-ականների վերջին մեծ

¹⁹ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 17.

²⁰ Deringil S., İktidarın Sembolleri ve İdeoloji. II Abdülhamid Dönemi (1876-1909), s. 15.

²¹ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 221.

²² Նույն տեղում, էջ 234-235:

թվով որբերի խնդիրը Բարձր Դռան ամենալուրջ անհանգստություններից էր: Վախենում էին, որ և՛ հայ, և՛ մուսուլման որբերը կհայտնվեն բողոքական միսիոներների ազդեցության տակ: 1897 թ. օգոստոսի 1-ին նույնիսկ ստեղծվեց հատուկ կոմիտե, որը պետք է ապահովեր, որ երկրում ամեն ոք մնա իր կրոնին (դավանանքին)²³: Ուշագրավ է նաև, որ նույնիսկ կրոնափոխության պարագայում հայերի տեղահանումը հրահանգող 1915 թ. հուլիսի 1-ով թվագրված մի փաստաթուղթ մեջբերելով, Դերինգիլը շեշտում է, որ իթթիհադական վարչակարգը Աբդուլ Համիդից շատ ավելի դաժան ու անգութ էր: Միևնույն ժամանակ նա չի բացառում նաև, որ հայերն իսկապես կարող էին կրոնափոխ ձևանալով երկրի ներսում ռուսներին օգնող հինգերորդ շարասյան վերածվել²⁴:

Արդեն Հրանտ Դինքի սպանությունից հետո գրված և նրա հիշատակին նվիրված իսլամացման մասին հոդվածում պատմաբանը 1894-1896 թթ. հայկական ջարդերի և հայերի բռնի իսլամացման մասին անհամեմատ ավելի համարձակ, ոչ խուսափողական է խոսում²⁵: Ավելին, նա քննարկում է անձամբ սուլթանի մեղավորության հարցը և շեշտում, որ 1890-ականներին տեղի ունեցած հայկական կոտորածները չէին կարող իրականացվել առանց ամենաքիչը Աբդուլ Համիդի լռելյայն համաձայնության: Իսկ արդեն 2010 թ. մարտին թուրքական «Թարաֆ» թերթին տված հարցազրույցում Դերինգիլն ընդունում է

²³ Deringil S., İktidarın Sembolleri ve İdeoloji. II Abdülhamid Dönemi (1876-1909), s. 105.

²⁴ Deringil S., Simgeden Millete, II. Abdülhamid'den Mustafa Kemal'e Devlet ve Millet, s. 240-241.

²⁵ Deringil S., The Armenian Question Is Finally Closed: Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895-1897, Comparative Studies in Society and History 2009, Volume 51, Issue 02, p. 344-371:

ինչպես 1894-1896 թթ. արդուլիամիդյան կոտորածների, այնպես էլ երիտթուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանության իրողությունը: Նա նշում է, որ Արդուլ Համիդի տարբերությունը իթթիհադականներից այն էր, որ վերջիններս նպատակ ունեին ամբողջությամբ ոչնչացնել հայ բնակչությանը, իսկ Համիդը ցանկանում էր հայ բնակչության թիվը նվազեցնել: Ըստ թուրք պատմաբանի, էթե անգամ հայկական կոտորածների զոհերի թիվը ուռճացված է, այնուամենայնիվ զանգվածային կոտորածներ եղել են: Իսկ ինչ վերաբերում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությանը, ապա պատմաբանը հերքում է իր հայրենակիցների այն պնդումները, թե հայերն ապստամբություն են բարձրացրել և ընդհարումների արդյունքում են զոհվել՝ նշելով, որ չէր կարող ամբողջ Արևմտյան Հայաստանում միաժամանակ ապստամբություն բռնկվել²⁶: Մակայն հարկ ենք համարում կարևորել մեկ այլ բան ևս. թե՛ իսլամացմանը վերաբերող հողվածում, և թե՛ ավելի վաղ գրված աշխատություններում Դերինգիլը սեփական կարծիքն արտահայտելու փոխարեն նախընտրում է մեջբերել Ռոբերտ Մելսոնի խոսքերը. «Սուլթան Արդուլ Համիդը չէր պատրաստվում վերացնել հայերին կամ ոչնչացնել հայ ազգը որպես այդպիսին: Հիմնական պատճառը, որ 1894-1896 թթ. Օսմանյան պետությունը չիրականացրեց լիակատար ցեղասպանություն, նրա նվիրվածությունն էր իսլամին, միլլեթների համակարգին: Արդուլ Համիդը հեղափոխական չէր... Բարձր Դուռը կարող էր նպաստել կամ օգնել իրականացնել կոտորածները, բայց այն չէր ուզում վերացնել հայ ազգը»²⁷: Այս մեջբերմամբ հեղինակը հստակ տարբերակում է

²⁶ <http://www.internethaber.com/kurtlerle-ermeniler-iste-boyle-karisti-240959h.htm>

²⁷ Deringil S., *The Armenian Question Is Finally Closed: Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres 1895-1897*, *Comparative Studies in Society*

Արդուլ Համիդի քաղաքականությունը երիտթուրքերի վարած քաղաքականությունից:

Ամփոփելով նշենք՝ Դերինգիլը հակված է արդարացնել սուլթան Արդուլ Համիդի գրեթե բոլոր գործողությունները՝ դրանք համարելով կամ անվտանգության պահանջներ, կամ պահի թելադրանք, կամ միակ էլք: Նույնիսկ այն դեպքերում, երբ նա կարծես թե քննադատում է Համիդի այս կամ այն քաղաքական որոշումը, ի վերջո միևնույն է հանգում է այն եզրակացության, որ դա անհրաժեշտ և անխուսափելի էր տվյալ իրավիճակում: Փաստորեն Համիդի քաղաքականության ընդհանուր գծերին հավանություն տալուն զուգահեռ, հեղինակ, այնուամենայնիվ որոշակի քննադատության է ենթարկում հայերի և քրիստոնյաների նկատմամբ սուլթանի վերաբերմունքը:

**THE MODERN TENDENCIES OF REAPPRAISAL OF THE
IMAGE OF SULTAN ABDUL HAMID II IN THE TURKISH
HISTORIOGRAPHY (ON THE BASIS OF THE WORKS BY SELIM
DERINGIL)**

**Hakobyan Tatevik
(Summary)**

Sultan Abdul Hamid II's ruling is the most contradictory period of Ottoman history, analysis of which for many years has been and still is under the scope of scientific interests of not only Turkish, but also foreign researchers. The works by the professor of Boğaziçi University (Istanbul) Selim Deringil play important role in the reappraisal of the image of Abdul

and History 2009, Volume 51, Issue 02, p. 368, տե՛ս նաև Melson R., *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, Chicago, 1992, 69:

Hamid now. Summarizing works by author we should mention that S. Deringil intends to justify nearly all measures taken by Abdul Hamid claiming they were dictate of time or the only possible solution. Even criticizing some of the political decisions of sultan, Deringil at the end conclude that in the given situation it was necessary or inevitable.

*Մարգարյան Տաթևիկ**

**ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԳԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԶԱՅ ՀԱՄԱՅՆՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.
ՕՍՍԱՆՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԶԱՎԵՆ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆ**

**СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ПЕРЕОЦЕНКИ ОБРАЗА
СУЛТАНА АБДУЛГАМИДА ВТОРОГО В ТУРЕЦКОЙ
ИСТОРИОГРАФИИ НА ПРИМЕРЕ РАБОТ СЕЛИМА
ДЕРИНГИЛА**

**Акопян Татевик
(Резюме)**

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, պատրիարք, Ջավեն Տեր-Եղիայան, Թուրքիայի Հանրապետություն, ոչ մուսուլման փոքրամասնություններ, հայ համայնք, պատրիարքական ընտրություններ

Правление Абдул Гамида II – самый противоречивый период Османской истории, анализ которого долгие годы был и сейчас продолжает оставаться в сфере интересов не только турецких, но и иностранных исследователей. Работы профессора университета Богазичи (Стамбул) Селима Дерингила играют важную роль в переоценке образа Абдул Гамида на современном этапе. Обобщая исследования работ автора, можно отметить, что С. Дерингил склонен оправдывать практически все действия Абдул Гамида, считая их мерами требованием времени или единственным возможным выходом. Даже критикуя некоторые политические решения султана, Дерингил в конце концов приходит к выводу, что в данной ситуации это было необходимо или неизбежно.

Պոլսո Հայոց պատրիարքարանի հիմնադրումից՝ 1461 թվականից ի վեր, պատրիարքները ավանդաբար եղել են հայ համայնքի ղեկավարն ու համայնքային շահերի ներկայացուցիչը պետության մեջ: Թուրքիայի Հանրապետության ղեկավարությունը, շարունակելով օսմանյան ավանդույթները, ոչ մուսուլման փոքրամասնությունների համայնքների հետ հարաբերությունները կառուցել է կրոնական ղեկավարների միջոցով: Եվ զարմանալի չէ, որ թուրքական իշխանությունների համար առանձնակի կարևորություն է ունեցել պատրիարքի անձը: Պատրիարքական ընտրությունները մշտապես եղել են պետության ուշադրության կենտրոնում, քանի որ Պոլսո Հայոց պատրիարքը կրոնական առաջնորդ լինելուց բացի, թերևս, նաև քաղաքական ֆիգուր է:

Եվ չնայած Լոզանի պայմանագրով փոքրամասնությունների համայնքներին արտոնված է ինքնուրույն ընտրել իրենց

* Մտամբուլի համալսարան ասպիրանտ, էլ. փոստ՝ tateviksargsyan03@gmail.com

կրոնական առաջնորդին¹, թուրքական իշխանությունները մեկ անգամ չէ, որ այս կամ այն կերպ միջամտել են այդ գործընթացին: Ըստ էության, համայնքի ներքին խնդիրը համարվող պատրիարքական ընտրությունները երբեմն բացահայտ, երբեմն էլ քողարկված կերպով ուղղորդվել են իշխանությունների կողմից: Նպատակը հստակ է՝ պատրիարքական աթոռում տեսնել պետության համար ցանկալի, առավել հարմար թեկնածուի:

Օսմանյան շրջանի վերջին Հայոց պատրիարքը՝ Ջավեն Տեր-Եղիայանը, թուրքական իշխանությունների հենց այս տրամաբանության և տրամադրվածության պատճառով 1922 թվականին ստիպված եղավ հեռանալ Թուրքիայից²: Պատրիարքի ակտիվ գործունեությունը հատկապես իր պաշտոնավարման երկրորդ շրջանում՝ 1919-1922 թվականներին³, լուրջ մտահոգել էր քեմալական ղեկավարությանը՝ Ջավեն պատրիարքին դարձնելով անցանկալի անձ երկրի նոր իշխանությունների համար:

Ջավեն էֆենդին, ինչպես նրան հիշատակում են թուրքական պատմագրության մեջ և ժամանակի մամուլում, 1919 թվականի սկզբին շուրջ 3 տարվա քարտից հետո վերադառնալով Թուրքիա, ակտիվորեն ներգրավվեց քաղաքական գործընթացներում⁴: Պարբերական կապ հաստատելով դաշնակից պետությունների ներկայացուցիչների հետ՝ նա ջանում էր ներազդել եվրոպական ատյանների վրա հասնելու համար Հայկական հարցի արդարացի

լուծմանը⁵: Պոլսո Հայոց պատրիարքարանը ընդհանուր շահերի շուրջ սերտ համագործակցության մեջ էր նաև Հունաց պատրիարքարանի հետ⁶: Այս հանգամանքը, իհարկե, չէր կարող վրիպել իշխանությունների ուշադրությունից: Արդեն 1922-ին, երբ Թուրքիայում քեմալական շարժումը հաջողություններ էր գրանցում և ուժերի հավասարակշռությունը փոխվել էր հոգուտ քեմալականների, օրակարգում էր Ջավեն պատրիարքից պաշտոնավարման հարցը: 1922 թվականի հոկտեմբերի 11-ին Անկարայի կառավարության և Անտանտի երկրների միջև կնքված Մուդանիայի զինադադարից հետո Մտամբուլում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչ նշանակվեց Ռեֆեթ փաշան⁷: Հայոց պատրիարքարանը ևս ստիպված էր հաշվի նստել այս նոր իրողության հետ և փոխել մոտեցումը: Ջավեն պատրիարքի հուշերի և ժամանակի հայկական ու թուրքական մամուլի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համայնքի ղեկավարության շրջանում քննարկվում էր նոր իրավիճակում իշխանությունների հետ բնականոն հարաբերություններ հաստատելու հարցը: Պատրիարքը, իբրև համայնքի ղեկավար, գնաց ընդառաջ այդ պահանջին⁸: 1922 թվականի նոյեմբերի 8-ին Ջավեն պատրիարքը պատրիարքական գործակատար Հակոբ Համամջյանի հետ միասին, բարի գալստյան այցելության գնալով

¹ Լոզանի պայմանագրի ոչ մուսուլման փոքրամասնություններին վերաբերող 37-45-րդ հոդվածների բովանդակությունը մանրամասն տե՛ս Meray S. L. (çev.), Lozan Barış Konferansı, Tutanaklar, Belgeler, Takım II, Cilt 2, Ankara 1973, s. 11-14:

² Ջաւեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ 1947, էջ 402:

³ Ջավեն արքեպիսկոպոսը երկու շրջանով է պաշտոնավարել՝ 1913-1916 և 1919-1922 թվականներին: 1916-1918 թվականների ընթացքում գտնվել է քարտում՝ Բաղդադում և Մոսկուում:

⁴ Ճակատամարտ, N 86, 20 փետրվար 1919, էջ 2; Ջաւեն արք., նշվ. աշխ., էջ 276:

⁵ Այս շրջանում Ջավեն պատրիարքի գործունեության մասին մանրամասն տե՛ս Ջավեն արք., նշվ. աշխ., էջ 279-305:

⁶ Մուդրոսի զինադադարից հետո Պոլսո Հայոց պատրիարքարանի և Հունաց պատրիարքարանի հարաբերությունների և համագործակցության մասին մանրամասն տե՛ս Güllü R. E., Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015, s. 505-515:

⁷ Վերջին լուր, N 2624, 20 հոկտեմբեր 1922, էջ 2-3; Ճակատամարտ, N 1197, 19 հոկտեմբեր 1922, էջ 1; Ճակատամարտ, N 1198, 20 հոկտեմբեր 1922, էջ 1; Ժողովուրդի ձայնը (Ժամանակ), N 1229, 19 հոկտեմբեր 1922, էջ 3:

⁸ Տարեցոյց Ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1924, էջ 37:

Ռեֆեթ փաշային, նրան հայտնեց հայ ժողովուրդի հավատարմությունը նոր կառավարությանը⁹: Չնայած իր համոզմունքներին, թե նոր իշխանությունները էսպես չեն տարբերվում նախորդ վարչակարգից, Ջավեն պատրիարքը փորձում էր մանևրել, իր հայտարարություններում վստահեցնում էր, թե հայերի և թուրքերի միջև անցյալի դառը փորձառության էջը այլևս փակված է, որ Թուրքիայի հայ քաղաքացիները պատրաստ են խաղաղության մեջ ապրել թուրք հայրենակիցների հետ:

«Ժողովուրդի ձայնը» (Ժամանակ) օրաթերթի 1922 թվականի նոյեմբերի 9-ի համարում կարդում ենք Ջավեն պատրիարքի ուշագրավ հարցազրույցը թուրքական մամուլին: Ռեֆեթ փաշային կատարած շնորհավորական այցից հետո թուրքական պարբերականների խմբագիրները հետաքրքրվել էին պատրիարքից, թե արդյոք հայ ժողովուրդը գոհ է նոր կառավարությունից: Ի պատասխան, Ջավեն պատրիարքը նշել էր, թե հայ ժողովուրդը նոր իշխանությունից դժգոհ լինելու պատճառ չունի¹⁰: Նույն օրաթերթի մեկ այլ՝ հոկտեմբերի 20-ի համարում տեղ գտած թուրքական «Իլերի» թերթի խմբագրի հետ հարցազրույցում էլ Ջավեն պատրիարքը համոզմունք էր հայտնել, թե հայերը գոհ են Մուղանիայի դաշնագրից: «Թուրք և հայ ժողովուրդների միջև անհամաձայնություն չկա, դարեր ի վեր նրանք ապրել են և պիտի ապրեն որպես բարեկամներ», -ասել էր հայոց պատրիարքը¹¹: Պետք է արձանագրել, որ ժամանակի թուրքական մամուլը հաճախ էր անդրադառնում Ջավեն էֆենդիի հայտարարություններին ու գործունեությանը՝ սովորաբար քննադատաբար, երբեմն էլ թշնամաբար: Եվ զարմանալի չէ, որ մամուլի ճնշումը ևս

նպաստեց, որ 1922 թվականի վերջին նա ստիպված եղավ մեկնել Երևան և թուրքիան և հրաժարվել պատրիարքական պառօնից: Թուրքական նոր կառավարության հետ մերձեցման փնտրու Ջավեն պատրիարքի փորձերը հաջողությամբ չպատկվեցին: Չհավատալով պատրիարքի անկեղծությանը՝ իշխանությունները սկսեցին ճնշում գործադրել հայ համայնքի առաջավոր դեմքերի վրա՝ հստակ արտահայտելով իրենց մտտեցումը, թե միայն պատրիարքի փոփոխության պարագայում հարավոր կլինի նոր իշխանությունների հետ լավ հարաբերություններ ակնկալել: Ջավեն պատրիարքը իր պաշտոնավարման վերջին օրերի մասին գրում է, թե «համայնքի ներսում ոմանք իր անձը արգելք էին համարում միլիական կառավարությանը մոտենալու ճանապարհին»¹²: 1922 թվականի դեկտեմբերի 1-ին Ստամբուլում թուրքական մեջլիսի ներկայացուցիչ Ռեֆեթ փաշան, հանդիպելով օսմանյան բանկի կառավարիչ Պերճ Քերեսթեջանին, բարձրացնում է Ջավեն պատրիարքի հրաժարականի հարցը՝ ընդգծելով, որ հայ և թուրք ժողովուրդների մերձեցման համար պատրիարքի փոփոխությունը անհրաժեշտություն է: Այս հանդիպումից օրեր անց Ազգային ընդհանուր ժողովի նիստ է գումարվում, որտեղ համայնքի հոգևոր և աշխարհիկ ղեկավարությունը որոշում է խնդրել պատրիարքի հրաժարականը՝ հանուն Պոլսո հայության փրկության¹³: Այս շրջանում նաև թուրքական մամուլում պատրիարքի հրաժարականի պահանջներ էին հնչում: «Հայերը ասում են, թե ազգի մեծածանությունը պատրիարքի հրաժարականի և թուրք կառավարության հանդեպ ավելի անկեղծ քաղաքականություն

⁹ Ժողովուրդի ձայնը (Ժամանակ), N 1246, 8 նոյեմբեր 1922, էջ 2; *Ճակատամարտ*, N 1214, 8 նոյեմբեր 1922, էջ 2; *Ճակատամարտ*, N 1215, 9 նոյեմբեր 1922, էջ 3:

¹⁰ Ժողովուրդի ձայնը (Ժամանակ), N 1247, 9 նոյեմբեր 1922, էջ 2:

¹¹ Ժողովուրդի ձայնը (Ժամանակ), N 1230, 20 հոկտեմբեր 1922, էջ 2:

¹² Ջավեն արք., նշվ. աշխ., էջ 391-392:

¹³ *Ճակատամարտ*, N 1237, 5 դեկտեմբեր 1922, էջ 2; Տարեցոյց *Ազգային հիւանդանոցի*, էջ 37-38; Ջավեն արք., նշվ. աշխ., էջ 393:

պատրիարքի տեղապահ է ընտրվում Գևորգ եպիսկոպոս Ալալայանը²², ստանալով 14 քվե²³: Մյուս 5 քվեն ստացած Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունին²⁴ հայտարարում է, թե իբրև նախկին պատրիարք, փոխանորդ չի կարող ընտրվել ու իր ձայները փոխանցում Ալալայանին: Ընտրությունից հետո ներկաները ստորագրում են համապատասխան տեղեկագիրն ու ներկայացնում կառավարության վավերացմանը²⁵: Կարճ ժամանակ անց՝ 1923 թվականի հունվարի 5-ին հաստատվում է Ալալայանի տեղապահությունը²⁶: Շուրջ 5 տարի Պոլսո Հայոց պատրիարքարանը ղեկավարվում է տեղապահի միջոցով և միայն 1927 թվականին ընտրվում է հանրապետական Թուրքիայի առաջին Հայոց պատրիարքը՝ Մեսրոպ եպիսկոպոս Նարոյանը²⁷: Ի դեպ, այս շրջանում ևս նախընտրական գործընթացները ամենևին էլ հարթ չեն անցել՝ տեղի տալով ներհամայնքային բանավեճերի ու հակասությունների:

Թուրքիայի Հանրապետության ձևավորման շրջանում պատրիարքական աթոռից Ջավեն պատրիարքի հեռանալը պետական ճնշման ներքո փոքրամասնության համայնքի ղեկավարի՝ պատրիարքի փոփոխության և, ըստ էության, համայնքի ներքին հարցերին պետության միջամտության

²² Գևորգ Ալալայանի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս Ազադյան Թ., Գևորգ արքեպիսկոպոս Ալալայան (1867-1951), Ստամբուլ 1952, էջ 7-15:

²³ İkdam, nr. 9254, 21 Aralık 1922; Tanin, nr. 69, 21 Aralık 1922.

²⁴ Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունին Պոլսո Հայոց պատրիարք է եղել 1912-1913 թվականների ընթացքում:

²⁵ Ճակատամարտ, N 1251, 21 դեկտեմբեր 1922, էջ 3; Տարեցոյց *Ազգային հիւանդանոցի*, էջ 39:

²⁶ 75. Yılında Türkiye Ermenileri, Hazırlayanlar: Damadyan K., Arzuman A., Kuyumcuyan S., Seropyan V., Yenice K., Yayınlayan: Türkiye Ermenileri Cemaati 75. Yıl Tertip Heyeti, İstanbul 1998, s. 3; Ժողովուրդի ձայնը (Ժամանակ), N 1296, 05 հունվար 1923, էջ 3:

²⁷ Ազդարար, N 172, 28 հունիս 1927, էջ 1:

ամենացայտուն օրինակն է: Պատրիարքական աթոռի նկատմամբ պետության անվստահությունը և անուղղակիորեն այն վերահսկողության տակ պահելու ավանդական գործելակերպը շարունակվեց նաև հանրապետության հաջորդ տարիներին: Հատկանշական է, որ թուրքական իշխանությունների այս գործելաոճը շարունակվում է նաև այսօր: 2008 թվականից ի վեր Պոլսո Հայոց պատրիարքի աթոռը թափուր է, պետությունը թույլ չի տալիս հայ համայնքին իրացնել իր իրավունքը՝ ընտրել նոր պատրիարք՝ պատճառաբանելով, թե ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը²⁸ դեռ ողջ է, իսկ եկեղեցական կանոնադրության համաձայն պատրիարքը պաշտոնավարում է ցմահ: Ուշագրավ է, որ եկեղեցական կանոնադրության հիմքում ընկած Հայոց ազգային սահմանադրության առաջին գլխի երկրորդ հոդվածի համաձայն՝ «երբ պատրիարքը վախճանվում կամ հրաժարվում է և կամ որևէ այլ պատճառով պատրիարքական աթոռը մնում է թափուր, կրոնական ժողովը իրավունք ունի ընտրել պատրիարքի տեղապահ և դիմել պետությանը այն հաստատելու համար»: Նշանակում է, ցանկության դեպքում իշխանությունները, պատրիարքի հիվանդությունը համարելով հիմնավոր պատճառ, կարող են պատրիարքական աթոռը թափուր ճանաչել՝ արտոնելով պատրիարքական նոր ընտրություններ: Այնուհանդերձ, արդեն ավելի քան 10 տարի է Պոլսո հայ համայնքը, չստանալով պետության համաձայնությունը, չի կարողանում ընտրել ոչ նոր պատրիարք, ոչ էլ անգամ տեղապահ: 2016 թվականի հոկտեմբերի վերջին Պոլսո Հայոց պատրիարքարանում տեղի ունեցած եկեղեցական ընդհանուր

²⁸ Պոլսո 84-րդ պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը 2008 թվականից ի վեր անբուժելի հիվանդ է և, ըստ էության, անկարող է կատարել իր պաշտոնական պարտականությունները:

ժողովի ժամանակ Հոգևոր խորհուրդը, առաջնորդվելով եկեղեցական կանոնադրությամբ և ավանդույթներով, 2008 թվականից ի վեր ծանր հիվանդության պատճառով փաստացիորեն անգործունակ վիճակում գտնվող պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի ուխտը լուծարված էր համարել՝ օրակարգ բերելով նոր պատրիարք ընտրելու հարցը²⁹։ 2017 թվականի մարտի 15-ին Ստամբուլի Հայոց պատրիարքարանում տեղի ունեցած քվեարկության արդյունքում Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը, ստանալով քվեարկությանը մասնակցած 34 հոգևորականներից 23-ի ձայնը, ընտրվել էր Պոլսո Հայոց պատրիարքի տեղապահ³⁰։ Այնուհետև 2017-ի օգոստոսի սկզբին Պոլսո Հայոց նոր պատրիարքի ընտրությունների գործընթացը համակարգող նախաձեռնող խումբը դիմել էր Ստամբուլի նահանգապետարան՝ առաջարկելով նոր պատրիարքի ընտրություններն անցկացնել դեկտեմբերի 13-ին³¹։ Ակնկալվում էր, որ Ստամբուլի նահանգապետարանն այս դիմումին պետք է պատասխաներ մինչև հոկտեմբերի 9-ը, սակայն սահմանված ժամկետում որևէ արձագանք չէր ստացվել։ Շուրջ վեց ամսվա լռությունից հետո Ստամբուլի նահանգապետարանն ի վերջո պատասխանել էր Պոլսո հայոց նոր պատրիարքի ընտրության անցկացման վերաբերյալ ուղարկված հիշյալ դիմումին։ Փոխնահանգապետի ստորագրությամբ պատրիարքարան ուղարկված նամակով թուրքական պատկան մարմինները հայտնում էին, որ չեն ճանաչում Գարեգին արքեպիսկոպոս

²⁹ Mutafyan emekli edildi, seçim süreci başlıyor, Agos, 27, 10, 2016. <http://www.agos.com.tr/tr/yazi/16845/mutafyan-emekli-edildi-secim-sureci-basliyor>

³⁰ Değabah seçimi başladı, Agos, 15, 03, 2017. <http://www.agos.com.tr/tr/yazi/17955/degabah-secimi-basladi>

³¹ Patrik seçimi için hedef 13 Aralık, Agos, 10, 08, 2017. <http://www.agos.com.tr/tr/yazi/19146/patrik-secimi-icin-hedef-13-aralik>

Բեքչյանին՝ իբրև պատրիարքական տեղապահ։ Նամակում ընդգծվում էր, որ պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը դեռ կենդանի է, ուստի նոր պատրիարքի ընտրության համար անհրաժեշտ պայմաններ չկան։ Նշվում էր նաև, թե պատրիարք Մութաֆյանի առողջական խնդիրները պատրիարքական աթոռը թափուր ճանաչելու պատճառ չեն հանդիսանում, հետևաբար Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը շարունակում է մնալ պատրիարքական փոխանորդի պաշտոնում, իսկ տեղապահ Գարեգին Բեքչյանի ընտրության գործընթացը, ինչպես նաև նրա կայացրած որոշումներն անվավեր են համարվում³²։ Չնայած տեղապահական ընտրությունները անցկացվել էին եկեղեցական կանոնադրության և ավանդույթների համաձայն, թուրքական իշխանությունները դրանք չվավերացրեցին։ Փաստորեն, պետությունը բացահայտորեն միջամտեց համայնքի ներքին գործերին՝ խոչընդոտելով նոր պատրիարքի ընտրության գործընթացը։

Այս իրադարձություններից հետո Պոլսո Հայոց պատրիարքի փոխանորդի պաշտոնը կրկին ստանձնած Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի հետ Ստամբուլում ունեցած հարցազրույցի ժամանակ նա հակադարձեց այն պնդմանը, թե պատրիարքի ընտրությունը հայանքի ներքին գործն է։ Աթեշյանի կարծիքով, պատրիարքական աթոռը պետությունն է հիմնել և պետության ձայնը միշտ էլ նշանակություն է ունեցել այս հարցում³³։

³² Valilik'ten Patrikhane'ye mektup: Bekçıyan'ı tanımayoruz, Agos, 06, 02, 2018. <http://www.agos.com.tr/tr/yazi/20164/valilik-ten-patrikhane-ye-mektup-bekciyan-i-tanimiyoruz>

³³ Արամ արք. Աթեշյանը պնդում է՝ պատրիարքի ընտրության հարցում պետության ձայնը միշտ էլ որոշիչ է եղել, Ազատություն n/ly, 12, 02, 2018: <https://www.youtube.com/watch?v=pfMfAVY9BTw&t=2s>

**РОЛЬ АРМЯНСКОГО ПАТРИАРХА КОНСТАНТИНОПОЛЯ ВО
ВЗОИМОТНОШЕНИЯХ ТУРЕЦКОЕ ГОСУДАРСТВО-
АРМЯНСКАЯ ОБЩИНА: ПОСЛЕДНИЙ ОСМАНСКИЙ
ПАТРИАРХ ЗАВЕН ТЕР-ЕГИАЯН**

**Տարգյան Կատեվիկ
(Րեզյումե)**

Со дня основание армянского патриархата Константинополя в 1461 году, традиционно патриархи являлись руководителями армянской общины и представителями его интересов в государстве. И неудивительно, что роль армянских патриархов для турецкого государство имело особое значение. Государство неоднократно вмешивалось в процесс выборов армянского патриархата. Следовательно, патриархальные выборы всегда были в центре внимания государство. По сути дела, патриархальные выборы, которые являлись внутренними делами армянской общины, иногда открыто, а иногда инкогнито, преднамеренно направлялись турецкими властями. Государство всегда стремилось видеть надежного человека на патриаршем престоле. Последний армянский патриарх Османской империи Завен Эфенди стал жертвой именно этой политики. Фактически такая стратегия турецких властей продолжается и по сей день.

**THE ROLE OF THE ARMENIAN PATRIARCH OF ISTANBUL IN
TURKISH STATE-ARMENIAN COMMUNITY RELATIONS: THE
LAST OTTOMAN PATRIARCH ZAVEN TER-YEGHIAIAN**

**Sargsyan Tatevik
(Summary)**

Since the establishment of the Armenian Patriarchate in the Ottoman Empire in 1461, traditionally the Armenian Patriarchs have been leading the Armenian community and have been representing its interests to the state. Therefore, it is not surprising that the role of the Patriarch has always been very important for the Turkish authorities. They have regularly been interfering to the election processes of the Patriarchs. Hence, the Patriarchal elections were always in the spotlight of the state. The election of the Patriarch, which is considered the internal issue of the community, is either openly or secretly led by the Turkish authorities. The Government has always pursued to nominate a reliable person on the Patriarchal Seat. The last Armenian Patriarch of the Ottoman Empire Zaven Effendi became the victim of this policy. In fact, above mentioned tendency of the Turkish Government continues today as well.

Աբրահամյան Մհեր*

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԲՈՒՆԻ ԿՐՈՆԱՓՈՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ԼԿԱՏՄԱՍԲ

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, իսլամացում, կրոնափոխում, ասիմիլացում, ցեղասպանություն, երիտթուրքեր

Օսմանյան կայսրությունը իր գոյության ընթացքում վարել է ոչ մուսուլման բնակչության բռնի ձուլման քաղաքականություն: Ձուլման ամենատարածված մեթոդներից է եղել իսլամի պարտադրումը, այն է՝ բռնի իսլամացումը, որը մեծ թափով շարունակվել է նաև երիտթուրքական կառավարման շրջանում: Այդ ժամանակաշրջանում պետական և քաղաքական կարևոր դերակատարներն արդեն բացահայտ խոսում էին հայերին բնաջնջելու կամ թուրքացնելու անհրաժեշտության մասին: Օրինակ, Հայոց ցեղասպանության հիմնական պատասխանատուներից մեկը՝ երիտթուրք պարագլուխ դոկտոր Նազըմը, հայտարարում էր. «Պետությունը պետք է տարամերժորեն թուրք ըլլա. օտար տարրերու գոյությունը պատրվակ է եվրոպական միջամտության. պետք է բռնի թրքացնել զանոնք¹»: Երիտթուրքերը մեծ տեղ էին տալիս ոչ մուսուլման ժողովուրդների բռնի իսլամացման և թուրքացման հարցին ու շատ հաճախ մեղադրում էին իրենց նախնիներին, որ այդ գործը ժամանակին չեն հասցրել ավարտին: Նույն դոկտոր Նազըմը, խոսելով այդ մասին, կշտամբում էր

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ասիստենտ, պ.գ.թ., էլ. փոստ՝ mher.abrahamyan@ysu.am
¹ Չարևանդ, Միացյալ անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 37:

օսմանյան տիրակալներին. «Մեղապարտ թուլությամբ թույլ տվին, որ իրենց գրաված երկրներում բնիկ տարրերը ապրեն, զարգանան, փոխանակ թուրքացման քաղաքականությամբ նրանց ձուլելու»²: Կայսրության բռնի իսլամացման մասին հայտարարությունները ստացան նաև մշակված բնույթ և երիտթուրքերի կուսակցական որոշումներում առաջնահերթություն դարձան: Այսպես, «Միություն և առաջադիմություն» կուսակցության 1911թ. կոնգրեսում ընդունված որոշումը հստակ սահմանում էր. «Կայսրության նկարագիրը պետք է ըլլա մահմեդական»³, իսկ ոչ մուսուլման ազգությունները կամ պետք է իսլամանան, կամ հեռանան երկրից:

Բազմաթիվ փաստեր և վկայություններ ապացուցում են, որ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին կիրառվել են Օսմանյան կայսրությունում դարերի ընթացքում գործադրված իսլամացման գրեթե բոլոր մեթոդները, սակայն ավելի մշակված և պետության կողմից կանոնակարգված ձևով: Փաստերը թույլ են տալիս նաև պնդել, որ Հայոց ցեղասպանության տարիներին օսմանյան պետությունը հասարակության առավել մոլեռանդ տարրերի հետ համագործակցաբար է կազմակերպել հայերի բռնի կրոնափոխությունը: Պետք է առանձնահատուկ շեշտել, որ հայերի կրոնափոխությունը տեղի է ունեցել օսմանյան պետության պաշտոնական հրամանների համաձայն, և ամբողջ գործընթացը եղել է ներքին գործերի նախարարության, անձամբ նախարար Թալեաթի հսկողության ներքո: Այսօր

² Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 108:
³ Չարևանդ, նշված աշխ., էջ 44:

արդեն հրապարակվել են հայերի բռնի իսլամացման և թուրքացման ուղղությամբ Թալեաթի տված բազմաթիվ բաց և ծածկագիր հրամաններ, որոնք լավագույնս ցուցադրում են օսմանյան պետության ցեղասպանական քաղաքականության մի կարևոր կողմը:

Սկսած 1915 թվականի կեսերից՝ Թալեաթը տարբեր նահանգներ հրամաններ է ուղարկում, որոնք որոշակի պայմաններով արտոնում են հայերին (հիմնականում կանանց և երեխաներին) ընդունել իսլամ և զերծ մնալ արսորից: Խոսելով ցեղասպանության ժամանակ բռնի կրոնափոխությունների պարտադրանքի մասին՝ Յ. Լեփսիուսը նկատում է. «*Իսլամությանն անցնելը նշանակում էր խուսափել մահից ու անպատվությունից*»⁴: Սակայն կարճ ժամանակ անց, անվտանգության նկատառումներից ելնելով, Թալեաթն արգելում և կոշտ սահմանափակումներ է մտցնում հայերի կրոնափոխության հարցում: Ընդհանրապես, Թալեաթի հրամանները պարզորոշ ցույց են տալիս, թե ինչ մանրակրկիտությամբ է նա հետևել հայերի կրոնափոխության գործընթացին և փորձել վերահսկել յուրաքանչյուր զարգացում: Երբ ուսումնասիրում ենք 1915 թ. մի քանի ամիսների ընթացքում հայերի կրոնափոխության վերաբերյալ Թալեաթի հրամանները, տեսնում ենք, որ դրանցում կան ակնհայտ հակասություններ: Թուրքագետ Ռ. Մելքոնյանն այս առիթով նշում է. «*Օսմանյան պետությունը փորձել է գտնել իր համար առավել վստահելի տարբերակ հայերի կրոնափոխության պահանջների հետ կապված, և Թալեաթի հրամանները, որոնք վերաբերում են իսլամացմանը, ցույց են տալիս, որ իշխանութ-*

ունները եղել են ճանապարհի փնտրտուքի մեջ»⁵: Այդ գործընթացի մի մաս պետք է համարել նաև այն, որ ըստ օսմանյան արխիվային փաստաթղթերի, կառավարությունը, ի դեմս ներքին գործերի նախարարության, հաշվի առնելով անցյալի փորձը, երբ հայերը փոխել են կրոնը, այնուհետև կրկին վերադարձել քրիստոնեության, որոշակի ժամանակահատվածում նախ արգելել է կրոնափոխությունը, իսկ հետո հրահանգել արքային նաև իսլամացված հայերին⁶: Թուրքական պատմագրությունը տարածում է նաև այն կեղծ թեզը, թե իբր, իսլամ ընդունելու համար դիմած հայերի խնդրանքը բավարարվել է, և նրանք խուսափել են արսորից ու կոտորածից: Սակայն փաստերն ապացուցում են, որ իրականում այդպես չէր, և հաճախ կրոնը փոխելու վերաբերյալ հայերի դիմումները մերժվել են⁷: Այդ տարիներին Պոլսո Հայոց պատրիարք Ջավեն Արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը նույնպես փաստում է, որ հայերի «կամովին» իսլամ ընդունելու ոչ բոլոր դիմումներն են ընդունվել. «*Շատ տեղեր հայ ժողովուրդը իր կեանքը փրկելու համար իսլամության դիմեց, բայց նախորդ մեծ կոտորածին ատեն եղածին պէս այս անգամ դիրությունը չընդունուեացան դիմումները*»⁸: Այս հարցում, բնականաբար, մեծ դեր է խաղացել այն, որ նախկին կոտորածների ժամանակ բռնի կրոնափոխված հայերը հնարավորության դեպքում

⁵ Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010, էջ 15:

⁶ Atmur I., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 29.

⁷ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 365:

⁸ Ջավեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրե, 1947, էջ 139:

⁴ Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին (խմբագիր՝ Պ. Հովհաննիսյան), Երևան, 2011, էջ 384:

վերադարձել են իրենց արմատներին և քրիստոնեությանը, ինչն արդեն 1915-ին հաշվի են առել օսմանյան իշխանությունները: Սակայն ամենասարսափելին այն է, որ օսմանյան ղեկավարները թույլ էին տալիս հայերին «կամովին» իսլամանալ, ու հետո նրանց նույնպես արքայություն և կոտորում էին: Նման մի օրինակի ենք հանդիպում թուրքական «*Taraf*» թերթում Սայիթ Չեթինօղլուի հոդվածում, որտեղ նշվում է, որ Օրդուից տեղահանված հայերը, չնայած իսլամ էին ընդունել, այնուամենայնիվ, արքայություն էին: Իրենց ճանապարհին տարագիր իսլամացված հայերի քարավանը դադար է տվել Մեսուդիյե բնակավայրում, և տեղացի մուսուլմանները, տեսնելով նրանց վիճակը, անգամ խնդրագիր են ուղարկել կենտրոնական իշխանություններին՝ դադարեցնելու իսլամ ընդունած հայերի արքայությունը, սակայն այդ դիմումը ևս մերժվել է⁹:

Փաստաթղթերն ապացուցում են նաև, որ երբեմն Թալեաթն անձամբ կարգադրություններ է ուղարկել տարբեր նահանգներ՝ հրամայելով տարբերություն չդնել քրիստոնյա և իսլամացված հայերի միջև և «*նույն ձևով վարվել նաև նրանց հետ*»¹⁰: Այս հրամանի կոնկրետ կիրառման օրինակների ենք հանդիպում Յոզղաթի հայության տեղահանությանը և կոտորածին վերաբերող աղբյուրներում: Մասնավորապես՝ տեղահանությունից առաջ Յոզղաթում հայտարարվել է, որ այն հայերը, որոնք կընդունեն իսլամ, չեն տարագրվի, սակայն անգամ այս պայմանը կատարողները ենթարկվել են կոտորածի, որի կազմակերպիչը Բողազլըյանի գավառապետ

⁹ Çetinoglu S., 1915'te Mesudiye'den yükselen vicdanın sesi, Taraf, 18,11, 2010.

¹⁰ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 387:

Քեմալ բեյը¹¹: Ինչպես գրում է Գրիկերը. «*Պողազլեանի Գայնազամ Քեմալ Պեյ փողոցներու մեջ մունետիկ կանչել տուալ թէ Հայերը որոնք իսլամացած են պիտի չարքայութիւն: Բայց անգամ մը որ իսլամացած հայերը իրենց պահուած տեղերէն դուրս ելան, Քեմալ զանոնք դրկեց դէպի Կեսարիա եւ զանոնք կոտորել տուալ*»¹²: Փաստորեն, այս դեպքում մուսուլմանների կողմից սպանվում էին իրենց կրոնակից դարձած հայերը, որոնք պաշտոնապես արդեն մուսուլմաններ էին: «Կրոնակից» հայերին կոտորելը Քեմալ բեյը հետագայում բացատրել է նրանով, որ ինքն առաջնորդվել է ոչ թե «կրոնական», այլ «քաղաքական օրենքով»¹³:

Թալեաթի վերոնշյալ հրամանը վերաբերել է ոչ միայն դեռևս չարքայված հայերին, այլև նրանց, ովքեր տարագրվել էին, երբեմն էլ արդեն հասել էին արաբական վիլայեթներ: Օրինակ, 1915 թ. դեկտեմբերի 17-ին Թալեաթը Հալեպի նահանգապետին, ի պատասխան վերջինիս հարցին, թե տարագիր հայերը ցանկանում են իսլամ ընդունել, պատասխանում է. «*Դէպի անապատ ընդհանուր առաքումներէ ազատելու մտքով իսլամութիւն ընդունող Հայերուն ըսեք որ անհրաժեշտ է որ իսլամանան իրենց արքայութայր հասնելէն*

¹¹ Չնայած Քեմալ բեյն օսմանյան դատարանի կողմից 1919 թ. դատապարտվել է մահապատժի և կախաղան բարձրացվել, սակայն ընդամենը 3 տարի անց արդեն քեմալական իշխանությունների կողմից արդարացվել և հերոսացվել է: Նրա ընտանիքին նույնիսկ փոխհատուցում է տրվել՝ հայկական լքված գույքերի հաշվին: Այսօր ևս Քեմալ բեյը Թուրքիայում հերոսացված է. նրա անունով կան փողոցներ, դպրոցներ և այլն:

¹² Գրիկեր, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 163:

¹³ Նույն տեղում, էջ 164:

ետք»¹⁴: Կարևոր է նկատել, որ հայերի բռնի կրոնափոխության խնդիրն արտացոլված էր նաև երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության «Տասը պատվիրաններ» անունով հայտնի փաստաթղթի 5-րդ կետում, որը որոշակի հստակություն է մտցնում կրոնափոխության գործընթացում: Հրահանգում նշված է. «Հիսուն տարեկանից ցածր բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և մանկավարժներին ոչնչացրեք, կանանց և երեխաներին իսլամացրեք»¹⁵: Կարող ենք փաստել, որ Թալեաթի և ընդհանուր օսմանյան վերնախավի գործունեության մեջ հայերին իսլամացնելու խնդրում որոշակի հստակություն է նկատվում 1916 թ. մարտին, երբ հրահանգ է տարածվում, որ կրոնափոխ կարող են լինել միայն այն հայ կանայք, ովքեր ամուսնանում են մուսուլմաններ հետ¹⁶: Որոշ ժամանակ անց իսլամացման ենթակա մեկ այլ խումբ էլ է հստակեցվում՝ հայ երեխաները: Այսպես, 1916 թ. ապրիլի 30-ին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարությունը հայ երեխաների և կանանց վերաբերյալ ծածկագիր հրահանգ է ուղարկում որոշ նահանգապետարաններ ու գավառապետարաններ: Ստորև մեջբերում ենք օսմանյան արխիվում պահվող այդ հրահանգի որոշ կետեր.

«1. Այն ընտանիքները, որոնց տղամարդիկ արքայից են կամ գտնվում են զինծառայության մեջ, պետք է բաժանվեն այն գյուղերում և գյուղաքաղաքներում, որտեղ չկան օտարներ և հայեր:

2. Երիտասարդ և այրի կանայք պետք է ամուսնացվեն:

¹⁴ Նույն տեղում, էջ 173:

¹⁵ Dadrian V., Genç Türk ittihadçıları gizli konferansı ve I. Dünya savaşı Ermeni soykırımı kararı; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, 2005, s. 335.

¹⁶ Dündar F., Modern Türkiye'nin Şifresi: İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918), İstanbul, 2008, s. 303.

3. Մինչև տասներկու տարեկան երեխաները պետք է բաժանվեն մեր որբանոցները:

4. Եթե որբանոցները չեն բավարարում, պետք է բաժանվեն ապահովված մուսուլմաններին, որպեսզի նրանք գաստիարակվեն տեղական սովորույթներով»¹⁷:

Այսպիսով, կարող ենք ասել, որ օսմանյան պետական մեքենան իր համար որոշակիացնում է իսլամացման ենթակա քիրախային խմբերը և արդեն սկսում է համակարգված քաղաքականություն վարել այդ ուղղությամբ: Սակայն հաշվի առնելով անցյալի փորձը, այսինքն՝ 1894-1897 թթ. և 1909 թ. կոտորածներից հետո տարբեր պետությունների ճնշման ներքո բռնի իսլամացված հայերի վերադարձի խնդիրը, այս անգամ օսմանյան իշխանությունները ավելի մանրամասն էին պատրաստում փաստարկներ հետագայում նման իրավիճակից խուսափելու համար: Ուստի, այդ նպատակով շատ հաճախ պարտադրում էին հայերին ստորագրել փաստաթուղթ, որում ասված էր, թե իրենք կամովին են ընդունում իսլամ¹⁸:

Աչքի է զարնում այն հանգամանքը, որ օսմանյան իշխանությունները շարունակ իրենց ուշադրության կենտրոնում են պահել կրոնափոխ հայերի խնդիրը, և չնայած պատերազմական վիճակին, անընդհատ նահանգներից պահանջել են տեղեկատվություն նրանց բնակության վայրերի, թվաքանակի մասին: Օրինակ, 1916 թ. օգոստոսի 24-ին կենտրոնական իշխանությունների հրամանով Օսմանյան կայսրության նախկին հայաբնակ վայրերում անցկացվում է

¹⁷ Özdemir H., Cemal Paşa ve Ermeni Göçmenler: 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009, s. 185.

¹⁸ Սև գիրք. Եշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին (խմբագիր՝ Պ.Հովհաննիսյան), Երևան, 2011, էջ 384:

մարդահամար, որի միակ նպատակը կրոնափոխված կամ հատուկ թույլտվությամբ չաքտրված հայերի թվաքանակի ճշգրտումն էր¹⁹: Հրամանում առանձնահատուկ նշվում է ճշտել հատկապես կրոնափոխ հայուհիների թվաքանակը: Այս մարդահամարից կարճ ժամանակ անց՝ 1916 թ. սեպտեմբերի 25-ին, բոլոր նահանգներ և գավառներ են ուղարկվում «շտապ» դասիչով ծածկագիր հեռագիր-հրահանգներ, որոնցով պահանջվում էր իրականացնել, առանց բացառության, բոլոր հայերի մարդահամար: Հատուկ նշվում էր, որ հաշվարկվեն բոլոր դավանանքների (առաքելական, կաթոլիկ, ավետարանական), ինչպես նաև իսլամ ընդունած հայերը²⁰: Ավելի ուշ՝ 1917 թ., կրկին կենտրոնական իշխանություններից հրաման է տարածվում նահանգներում «մեկ առ մեկ» ճշտել և գեկուցել հայերի մասին մանրամասն տեղեկություններ՝ ընտանիքների անունները, բնակության թաղամասերը, տների համարները, աքտորի չեկաբակվելու պատճառները և այլն²¹: 1918 թ. գարնանը օսմանյան իշխանությունները հրաման են ուղարկում նահանգներ՝ կատարել միայն կրոնափոխ հայերի մարդահամար, բացի այդ՝ ներկայացնել նրանց անունները, կրոնափոխության պատճառները և իսլամ ընդունելուց հետո նրանց պահվածքը²²: Թուրք պատմաբան Թաներ Աքչամը, խոսելով հայերի բռնի իսլամացման մասին, կարծիք է հայտնել, որ օսմանյան ղեկավարները պահանջել են այդ տարիներին տարբեր պատասխանատուներից հատուկ նշումներով

¹⁹ Dündar F., Modern Türkiye'nin Şifresi: İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918), İstanbul, 2008, s. 145.

²⁰ Նույն տեղում, էջ 322:

²¹ Նույն տեղում, էջ 145-146:

²² Նույն տեղում, էջ 323:

առանձնացնել կրոնափոխ հայերին՝ հետագայում ևս հասկանալի լինելու համար²³:

Ավելորդ չէ նկատել նաև մեկ այլ մանրամասն ևս. կրոնափոխված հայերի վերաբերյալ ներքին գործերի նախարարությունը տարածել էր մի հրաման, համաձայն որի՝ նրանք պետք է փոխեին իրենց բնակավայրերը և տեղափոխվեին մուսուլմանական գյուղեր, որտեղ նրանց թվաքանակը պետք է լիներ ընդհանուր բնակչության առավելագույնը հինգ տոկոսը²⁴: Այս հրամանի նպատակն ու տրամաբանությունն այն էր, որ կրոնափոխվելուց հետո հայերը չունենային նվազագույն պայմաններ իրենց ազգային ինքնությունը պահպանելու համար և ձուլվեին հոծ մուսուլման բնակչության մեջ: Ի դեպ, այս հրամանի մասին տվյալների ենք հանդիպում նաև հետագայում երիտթուրքերի դատավարության ժամանակ:

Հարկ է նշել նաև, որ աքտրված այն հայերը, որոնք մի կերպ փրկվել էին սպանողից և հասել արաբական նահանգներ, այնտեղ ևս որոշ ժամանակ անց ենթարկվել են բռնի կրոնափոխության: Տարագրված հայերի բռնի իսլամացման մասին տվյալների ենք հանդիպում Սիրիայում և Լիբանանում հաստատված գաղթական հայերի տեսուչ Հասան Ամջայի հուշերում: Այսպես, նոր ստանձնելով իր պաշտոնը՝ նա տեղեկանում է իր նախորդներից գաղթական հայերի նկատմամբ կիրառվելիք քաղաքականության մասին. «Քիչ անց տեղակալը ժամանեց: Շնորհավորեց իմ նոր նշանակումը: Շարունակելով՝ պատմեց, որ տեղահանված այս բոլոր մարդիկ

²³ Türker Y., Hepimiz maalesef Ermeniyiz!, Radikal, 27, 08, 2007.

²⁴ Գրիկեր, նշված աշխ., էջ 162:

պետք է մահմեդականացվեն, իսկ մի տերտերի, որը բազմիցս մերժում էր դավանափոխ լինելու առաջարկները՝ սովամահ արեցին»²⁵:

Չափազանց ուշագրավ տեղեկություն ենք հանդիպում Կարեն Խանլարյանի գրքում, որտեղ նշվում է, որ արդեն 1919 թվականի վերջերին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարությունից գաղտնի շրջաբերական է ուղարկվում զավառներ, որտեղ կարգադրվում է իսլամացնել այն բոլոր հայերին, որոնք չեն տեղահանվել կամ հետո վերադարձել են իրենց նախկին բնակավայրերը: Այդ պարագայում միայն նրանք կարող էին հետ ստանալ իրենց ունեցվածքը²⁶: Մա նս մեկ անառարկելի ապացույց է, որ բռնի իսլամացումը շարունակել է մնալ Օսմանյան կայսրության պետական քաղաքականության կարևոր տարրերից մեկը՝ անկախ պետության վիճակից. անգամ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ջախջախված օսմանյան պետությունը, ծանրագույն պայմաններում գտնվելով հանդերձ, չի հրաժարվել իր նախորդներից ժառանգած քաղաքականությունից:

Ռ.Մելքոնյանն իր աշխատության մեջ ընդհանրացնելով փաստերը՝ ներկայացրել է հայերի այն խմբերը, որոնք կրոնափոխ են եղել Հայոց ցեղասպանության տարիներին.

«ա. Հայոց ցեղասպանության ժամանակ՝ երբեմն միայն արտաքուստ, մուսուլմանություն ընդունած հայեր:

բ. Ցեղասպանության ժամանակ առնանգված, այնուհետև թուրքերի կամ քրդերի հետ ամուսնացած հայ կանայք և աղջիկներ:

²⁵ Անջա Հ., Տեղահանություն և ոչնչացում (օսմաներենից թարգմանությունը՝ Ա.Ավագյանի), Երևան, 2007, էջ 31:

²⁶ Տե՛ս՝ Խանլարեան Կ., Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005), Անթիլիաս, 2009, էջ 39-40:

գ. Ցեղասպանության ժամանակ մուսուլմանների կողմից թունի որդեգրված հայ երեխաներ:

դ. Որոշ թվով հայեր, ովքեր ապաստան են գտել մուսուլման հարևանների կամ այլ մարդկանց մոտ:

ե. Մահմանափակ թվով հայ արհեստավորներ²⁷ և բացառիկ մասնագետներ, որոնք իսլամացել են իշխանության իմացությանը և կամքով²⁸:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ ցեղասպանության տարիներին արտոնվել է առավելապես հայ կանանց և երեխաների իսլամացումը, իսկ տղամարդկանց զեպրում արձանագրվել են առանձին բացառություններ: Ինչպես իրավացիորեն նկատել է Հրանտ Դինքը, ցեղասպանության ժամանակ որք հայ երեխաներն ու կանայք օսմանյան իշխանությունների կողմից դիտվել են որպես ռազմավար²⁹, և կարող ենք նշել, որ Հայոց ցեղասպանության տարիներին բռնի կրոնափոխության թիրախները եղել են առավելապես կանայք և երեխաները:

²⁷ Ընդ որում, հայ արհեստավորների հետ կապված՝ հրապարակվել է հատուկ հրամանագիր, որտեղ հստակ նշվել է, որ քստրից ազատվում են ոչ թե բոլոր հայ արհեստավորները, այլ միայն նրանք, որոնց կարիքն ունի պետությունը: Այս մասին տե՛ս՝ Dündar F., նշված աշխ., էջ 298: Օրինակ՝ Մեքաստիայի Դավրա գյուղի բնակիչները մեծ մասամբ ջրաղացպաններ էին և այդ պատճառով չաքտրվեցին, սակայն ամբողջ գյուղով ընդունեցին իսլամ: Տե՛ս՝ Պոդոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2008, էջ 50:

²⁸ Մելքոնյան Ռ., նշված աշխ., էջ 14:

²⁹ Տե՛ս՝ Bulut A., Gizli Ermeniler, Istanbul, 2010, s. 300.

THE POLICY OF THE YOUNG TURKS ON THE FORCIBLE ISLAMIZATION OF THE ARMENIANS

Abrahamyan Mher
(Summary)

The Ottoman Empire pursued a policy of forcible assimilation of the non-Muslim population for its entire existence. One of the common methods of assimilation was the forced Islamization. The decision taken at the congress of the party "Unity and Progress" in 1911, defined: "The image of the empire must be Muslim, and non-Muslim peoples must either be Islamized or leave the country". In the years of the Armenian Genocide from 1915 to 1923, almost all methods of islamization, implemented for centuries in the Ottoman Empire, were applied, however, in a more corrected and polished form. The islamization of Armenians took place, according to official orders of the Ottoman state, and the entire process was controlled by the Ministry of Internal Affairs and Minister Talaat Pasha. The most terrible thing was that the Ottoman leaders allowed the Armenians "voluntarily" to convert to Islam, and then still deported and exterminated them. The Ottoman state mechanism defined Armenian women and children as the target groups for Islamization and began to pursue a purposeful policy. Armenian orphans and women were regarded by the Turkish authorities as a trophy. During the years of the Armenian genocide, the main target of forcible islamization was mostly women and children.

ПОЛИТИКА МЛАДОТУРОК ПО НАСИЛЬСТВЕННОЙ ИСЛАМИЗАЦИИ АРМЯН

Абраамян Мгер
(Резюме)

Османская империя за все свое существование проводила политику насильственной ассимиляции немусульманского населения. Одним из самых распространенных методов ассимиляции являлось принуждение к обращению в ислам, то есть насильственная исламизация. Таким образом, решение, принятое на конгрессе партии "Единение и прогресс" в 1911 году, ясно определяло: "Образ империи должен быть мусульманским", а немусульманские народы должны либо подвергнуться исламизации, либо покинуть страну. В годы геноцида армян с 1915 по 1923 гг. применялись почти все методы исламизации, веками осуществляемые в Османской империи, однако в более откорректированном и отточенном государством виде. Исламизация армян имела место согласно официальным приказам Османского государства, и весь процесс протекал под контролем министерства внутренних дел и лично министра Талаата. Самым ужасным было то, что османские руководители позволяли армянам "добровольно" перейти в ислам, а затем все равно депортировали и уничтожали их. Османская государственная машина определяет для себя подлежащие исламизации целевые группы – армянские женщины и дети, и уже начинает вести целенаправленную политику. Во времена геноцида армянские дети-сироты и женщины рассматривались турецкими властями как трофей; и можно сделать вывод о том, что в годы геноцида армян основной мишенью насильственного вероотступничества являлись преимущественно женщины и дети.

Պոռոսյան Նահրա*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱԼԻԴԵ
ԷԴԻՓ ԱՂԸՎԱՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ¹

Բանալի բառեր՝ Հալիդե Էդիփ, հայկական հարց, հուշեր, հայ որբեր, կոտորածներ

Թուրք հայտնի ֆեմինիստուհի-գրող, պանթուրքիզմի ցատագով քաղաքական ու հասարակական գործիչ Հալիդե Էդիփի (1884-1964 թթ.) մինչհանրապետական շրջանի գործունեությունն ամփոփված է 1926 թ. տպագրված «Հալիդե Էդիփի հուշեր»² և 1928 թ. տպագրված «Թուրքական փորձառություն. տարբերվելու արվեստը»³ գրքերում: Գրողն իր կյանքի պատմության համայնապատկերում ներկայացնում է XX դարակազմի Օսմանյան Թուրքիան իր բազմաթիվ խնդիրներով, կայսրության անկման ու հանրապետության հռչակման պատմությունը: Թուրք գրող, գրականագետ Մելիմ Իլերիի խոսքով Հ. Էդիփի հուշերն արժեքավոր են նորագույն շրջանի թուրքական պատմության ոգին ընկալելու տեսանկյունից⁴:

Ի սկզբանե անզերեն գրված հուշերը թուրքերենով շրջանառության մեջ են դրվել 1960-ականների սկզբին: Ընդ որում,

* Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ., էլ.փոստ՝ nairapoghosyan@ysu.am

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-6A319 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Halide Edib, *Memoirs of Halide Edib*, NY, 1926.

³ *The Turkish Ordeal, Being The Further Memoirs Of Halide Edib*, NY, 1928.

⁴ <https://www.pingudumuzayede.com/urun/416065/halide-edib-adivar-in>, մուտք՝ 06.01.2018թ.

«Թուրքական փորձառության» թուրքերեն տարբերակի առաջաբանում հեղինակը, շեշտելով, որ այն անզերենից բարգմանությունն է, այլ նույն իրադարձությունները ներկայացնող առանձին ստեղծագործություն, անդրադառնում է անզերեն և թուրքերեն տարբերակներում թուրք-հունական հարաբերությունների գնահատականների տարբերությանը. «Թուրքական փորձառություն. տարբերվելու արվեստը» գիրքը 20 տարի առաջ Անզլիայում գրելիս ողբերգություններին առավել մեծ տեղ են հատկացրել: Գրքի թուրքերեն տարբերակում ճիշտ են համարել կարճ անդրադառնալ թե՛ մեր, թե՛ նրանց արածներին, քանի որ հավատում են, որ Մերձավոր Արևելքում խաղաղության ու բարօրության գրավականը թուրքերի ու հույների բարեկամությունն է»⁵: Մի շարք թուրք վերլուծաբաններ, սակայն, հակված են կարծել, որ 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջումից 2-3 տարի անց տպագրված հուշերն էլ են «հեղաշրջվել», և հեղինակը պարտադրված է եղել որոշ իրադարձություններ ներկայացնել ժամանակի իշխանություններին ձեռնադրելու ներքո⁶: Թեև Հ. Էդիփի հուշերի անզերեն և թուրքերեն տարբերակներում առկա «հայկական» անդրադարձներում էլ որոշ տարբերություններ կան⁷, սակայն պետք է փաստել, որ Էդիփի հուշերի անզերեն տարբերակն ինքնին բնավ հայանապաստ դիրքերից չի գրված: Բավական է շեշտել, որ գրողն անկախ Հայաստանը համարում է

⁵ Halide Edip Adıvar, *Türk'ün Ateşle İmtihanı*, İstanbul, 2016, s. 12.

⁶ Doğan İ. A., *H. Edip'in Kitabında Farklı M. Kemal-1*, 12.02.2011, <https://www.habervaktim.com/yazar/34010/h-edipin-kitabinda-farkli-m-kemal-1.html>, մուտք՝ 15.05.2017

⁷ Սույն հոդվածում օգտվել եմք հուշերի թե՛ անզերեն, թե՛ թուրքերեն տարբերակներից: Տեքստում հղումները տրված են անզերեն գրքի թվայնացված տարբերակի հիման վրա: Թուրքերեն տարբերակի էջերը նշված են միայն տարբերությունների կամ անհամապատասխանությունների դեպքում:

«Անձ տերությունների ստեղծած միֆ»: Հայերի՝ Թուրքիայի արևելքում պետություն ունենալու գաղափարը պանթուրքիստների մղձավանջն էր, ուստի պատահական չէ, որ Հալիդե Էդիվը երկու գրքերում էլ խոսում է դրանից խուսափելու ճանապարհների մասին: Ոչ միայն Հայաստանն, այլ առհասարակ հայերն ու նաև հույներն են ըստ Էդիվի, Թուրքիայի առջև ծառայած բազմաթիվ խնդիրների պատճառը: Հեղինակը հայկական գործում է պայմանավորում նույնիսկ Առաջին համաշխարհայինի ավարտին Ստամբուլում գտնվող դաշնակիցների զինվորների կիսարհամարիական, այսպես կոչված «օրիենտալիստական» մոտեցումը թուրքերի նկատմամբ. «Դաշնակիցների, հատկապես անգլիացիների, հայ ու հույն թարգմանիչներն ու օգնականներն մեծապես ազդել են նրանց վրա, թուրքերի դեմ տրամադրել: ...այս բանակները թուրքերին նայում են հայի ու հույնի աչքերով, ինչն ամենից վիրավորականն է հասարակ մարդկանց համար», - գրում է Էդիվը⁸: Ավելին, նա հայերին համարում է Ստամբուլի «օկուպացման» ամենագործուն մասնակիցներ. «Անգլիացի ոստիկաններն ու հայերը բոլոր նավերն ու նավահանգիստները վերցրել են իրենց վերահսկողության տակ»⁹: Հեղինակը պնդում է նաև, որ անգլիացիների հրահրմամբ հայերն ու մյուս ոչ մուսուլմանները լարում էին քաղաքի մթնոլորտը. «...Ֆեներում աղքատ քրիստոնյաների թաղերում ու թուրքերի աղքատ թաղամասերում լարումն ավելացավ: Ազգամիջյան ատելությունը գնալով սաստկանում էր: Գործը հասավ նրան, որ քրիստոնյա երեխաները թուրքական թաղամասերից, թուրք երեխաններն էլ քրիստոնյա թաղամասերից չէին կարողանում առանց իրար ծեծելու անցնել»¹⁰:

⁸ Halide Edib, *Memoirs of Halide Edib*, p. 5.

⁹ Halide Edib, *The Turkish Ordeal*, p. 28.

¹⁰ Նույն տեղում, էջ 23:

Հալիդե Էդիվի հուշերում հետևողականորեն ձևավորվում է մարդասպան հայի կերպարը: Առաջին համաշխարհային տարիներին, դրան նախորդած ու հաջորդած տարիներին հայերի կողմից իրականացված «գանգվածային սպանությունների» մասին անհիմն և չփաստարկված պնդումներին զուգահեռ հեղինակը փորձում է նաև անձնական փորձառության մեկ-երկու դրվագ ներկայացնել: 1920 թ. Ստամբուլից Անկարա ճամփորդությունը նկարագրելիս Հ. Էդիվն անդրադառնում է Աղափազարի ճանապարհին մի հայի հետ տեղի ունեցած հանդիպմանը. «...հայկական գյուղի կողքով անցնելիս տեսանք, որ մի մարդ սարսափահար մեզ է նայում: Կապիտան Արսլանը հարցրեց, թե ով է Նա էլ պատասխանեց, որ անունը Արթին է, Էրմիշե գյուղում ենք: Քանի որ այդ մարդը կարող էր քրիստոնյա հայերի «չեթենների» կողմից ուղարկված խուզարկու լինել, Արսլանը «հային ատելությամբ լի, բայց նրբահաճո ձայնով ասաց. «Տեղիցդ մի ժամ չես շարժվելու»: Նա էլ պատասխանեց. «Լավ, աղա»»¹¹: Իր խոսքերով «ահաբեկիչ» հայի նման հնազանդության պատճառների մասին հեղինակը չի խոսում, ավելին չի էլ անդրադառնում, օրինակ, մի քանի ձիավոր տեսնելուց սարսափահար լինելու հանգամանքին: Պետք է նշել, որ ի տարբերություն այլ օսմանյան գործիչների Հալիդե Էդիվն իր հուշերում գրեթե չի անդրադառնում Օսմանյան կայսրությունում հայերի դերին կամ գործունեությանը: Թուրքիայում ոչ մուսուլմանների գոյության փաստն արտացոլվում է սոսկ հեղինակի մանկության տարիների հուշ դարձած հայ ու հույն հարևանների, աղախիսների, ամերիկյան քուլեջի համադասարանցիների կերպարներով՝ ընդ որում հիմնականում

¹¹ Նույն տեղում, էջ 47:

բացասական կամ ավելի ճիշտ կլինի ասել կիսաարհամարհական Այսպես է Էդիփը նկարագրում հայուհի համադասարանցուն «...Ինձնից ենթադրաբար տարիքով մեծ, խիզախ, անգրագետ անասողիացի, ով հերոսաբար պայքարում էր անզլերենի դեմ: Վատ արտասանության պատճառով այլ աղջիկների ծաղրական մոտեցումը ստիպեց ինձ ի սկզբանե խղճալ նրան: Նա մոլի բողոքական էր, շատ էր անհանգստանում իմ հոգու համար և ուզում էր ինձ հավատափոխ անել»¹²: Թուրքերին հավատափոխ անելու ձգտման մասին առաջին հայացքից անմեղ այս նկատառումը հուշերի պատումի հետագա ընթացքում դառնում է նաև հայերի իսլամացումներն արդարացնող փաստարկ:

Հայերի մասին դրական, ավելի ճիշտ, չեզոք արձագանք կարելի է համարել այն, որ 1909 թ. որդիների հետ Եգիպտոս փախչելով Հալիդե Էդիփը հյուրընկալվում է իր պոլսահայ ծանոթ հայ պրոֆեսորի նույնպես հայ ընկերների մոտ. «Շնորհքյանը, մի հայ, ում ազգանունը լավ եմ հիշում, կայսրության բոլոր ժողովուրդների համար կարևորվող Թանգիմաթյան շրջանի ջենթլմենին վայել նրբաոճ պահվածք ուներ: Նա լքել էր Թուրքիան Աբդուլ Համիդի կառավարման ընթացքում հայկական անախորժությունների ժամանակ և այլևս չէր վերադարձել»¹³: Պետք է նաև նշել, որ սա 1894-1896 թթ. հայկական կոտորածների միակ հպանցիկ հիշատակումն է Էդիփի հուշերում:

Փորձելով ամփոփել հայի կերպարի շուրջ Հ. Էդիփի գնահատականները՝ նշենք, որ Օսմանյան Թուրքիայի նշանավոր հայերից նա առանձնացնում է միայն Հակոբ Վարդույանին. «Գյուլյու Ազոփ անունով տաղանդավոր հայ դերասանն իր թատերախմբով, ֆրանսերեն պիեսները տեղական պահանջներին համապատասխանեցնելով, իսկապես Թուրքիայում հիմնադրեց

¹² Halide Edib, *Memoirs of Halide Edib*, p. 196.

¹³ Նույն տեղում, էջ 289:

ամանտիկ թատրոնի ուղղությունը»¹⁴: Անշուշտ, թուրք կին-գրողի կյանքում ամենակարևոր հայը Կոմիտաս վարդապետն է, ում կերպարն առանձնահատուկ տեղ ունի նրա հուշերում¹⁵: Հարկ է նշել նաև, որ խոսելով Կոմիտասին տեղահանությունից զերծ պահելու հարցում իր ամուսնու ակտիվ մասնակցության մասին՝ Հ. Էդիփը բացարձակապես չի անդրադառնում օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների կամ մտավորականների հակատագրերին:

Առհասարակ երիտթուրքերի իշխանության օրոք տեղի ունեցած կոտորածների մասին խոսելիս՝ Հալիդե Էդիփն առաջ է քաշում երկուստեք մեղավորության թեզը, որն էլ հետագայում կարմիր թելի պես անցնում է ամբողջ տեքստով. «Ես գիտեմ.....,- գրում է նա,- Երբեք չեք պատկերացնի, ես ինչ գիտեմ: Ես տեսել եմ, ես միջով եմ անցել, ցավոք սրտերով լի երկիր և տառապյալ հիշողություններ, և ես ապրել եմ մի ժամանակ, երբ քաղաքական գործիչները խաղում էին այս մարդկային սրտերով ինչպես սովորական խաղամուկները՝ իրենց քարտերով»¹⁶: Ավելին, Հալիդե Էդիփը նույնիսկ պնդում է, որ երիտթուրքերի քաղաքականությունը մեծապես կրել է Հայ հեղափոխական դաշնակցության ազդեցությունը.

«Իրականում իթթիհադականների ակտիվ և կենսական տարրերը մեծապես կրել էին դաշնակների ու մակեդոնացիների նեղ և ինչ-որ չափով դաժան սկզբունքների ազդեցությունը: Այդ նույն ոգով էին ներշնչվում հայերը, որ սպանում էին թուրքերին արևելյան

¹⁴ Նույն տեղում, էջ 123:

¹⁵ Հալիդե Էդիփի՝ Կոմիտասին վերաբերող հուշերը մանրամասն տե՛ս Ավագյան Ա., Կոմիտաս վարդապետը Հալիդե Էդիփի հուշագրության մեջ, Սրբելազիտության հարցեր, հ.13, Երևան, 2017, էջ 332-347:

¹⁶ Halide Edib, *Memoirs of Halide Edib*, p. 375.

Անատոլիայում և Ադանայում, թուրքերը, որ կոտորում էին հայերին նույն շրջաններում, բուլղարացիները, որ կոտորում են թուրքերին Բալկաններում»¹⁷:

Հեղինակը չի ժխտում հայերի զանգվածային ոչնչացումը պատերազմի տարիներին, ավելին նշում է դրա դեմ իր ունեցած ելույթների (սակայն զարմանալիորեն որևէ ելույթի տեսքտ չի ներառում շարադրանքում) և իր բարեկամ Թալեաթ փաշայի հետ այս հարցի շուրջ ունեցած հակասությունների մասին. «...Ես լավ հիշում եմ, որ մի օր նա, լիովին կորցնելով համբերությունը, ասաց խիստ տոնով «Տեսե՛ք, Հալիդե հանրմ, իմ սիրտը ձեր սրտի չափ բարի է, և այն ստիպում է ինձ արթուն մնալ մարդկային տառապանքի մտքերից: Բայց դա անձնական խնդիր է, ես այստեղ՝ երկրագնդի վրա եմ, որպեսզի մտածեմ իմ ժողովրդի, այլ ոչ իմ զգացմունքների մասին: Եթե մակեդոնացի կամ հայ առաջնորդը հնարավորություն ունենա, նա երբեք այն բաց չի թողնի: Բալկանյան պատերազմի ընթացքում հավասար քանակով թուրքեր և մուսուլմաններ են սպանվել, սակայն աշխարհը պահպանում է հանցավոր լռություն: Ես կարծում եմ, որ քանի դեռ ազգը հետևում է իր անձնական շահերին ու հաջողում, աշխարհը հիանում է նրանով ու բարոյական համարում»¹⁸: Մինևույն ժամանակ Հալիդե Էդիփը շեշտում է, որ երբ իր իբր հայամետ ելույթներից հետո որոշ երիտթուրքեր պահանջել են պատժել նրան, Թալեաթը մեծահոգաբար ասել է. «Նա ծառայում է երկրին այնպես, ինչպես հավատում է: Թող խոսի, ինչ կուզի, նա անկեղծ է»¹⁹: Թալեաթի հետ Հայոց ցեղասպանությանը վերաբերող խոսակցությունը ներկայացնող պարբերությունն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «1922 թ. նա սպանվեց Բեռլինում

¹⁷ Նույն տեղում, էջ 266:

¹⁸ Նույն տեղում, էջ 387:

¹⁹ Նույն տեղում, էջ 388:

հայի կողմից»²⁰, որը թեև հստակ մեկնաբանություն չի պարունակում, բայց գրքի համատեքստում հակահայ նրբերանգունի: Հատկանշական է, որ այս հատվածը լիովին բացակայում է գրքի թուրքական տարբերակում: Դրա փոխարեն հեղինակը սահմանափակվում է. «պատերազմին միշտ դեմ եմ, եթե ժողովրդի ու պետության ապագան սպառնալիքի տակ չէ»²¹ արտահայտությամբ: Շեշտելով, որ «տառապանքը չունի ոչ ուսս, ոչ սեռ ու դասակարգ...»²², Հալիդե Էդիփն այնուամենայնիվ պնդում է, որ հայերն իրենք են սադրել կոտորածը. «...Կային խոսակցություններ հայերի տեղահանությունների և դրա արյունոտ հետևանքների մասին: Ասում են, որ հայերը վառել են թուրքական գյուղեր և սպանել թուրքերին...Յուրաքանչյուր թուրք խորապես գիտակցում էր, որ Թուրքիան վտանգի մեջ է: Մարդիկ բնականաբար զգում էին, որ հայկական հեղափոխական կենտրոններն օգտագործվում են որպես ռազմավարական կետեր դաշնակիցների կողմից հակաթուրքական քաղաքականության տարածման համար: Բացի այդ, կար տևտեսական բաղադրիչ. սա հայերի տնտեսական գերակայության վերջն էր, որ բացում էր շուկաները թուրքերի ու գերմանացիների համար»²³:

Այսպիսով, մի պարբերության մեջ հեղինակն ակամայից անդրադառնում է ցեղասպանությանը վերաբերող երեք կարևոր բաղադրիչի: Նախ մեր օրերում դասական համարվող թուրքական ժխտողականությանը հետևելով՝ փորձում է թուրքերի իրականացրած կոտորածի մեղքը բարդել հայերի վրա: Սրա հետ մեկտեղ նշում է, որ առևտրում և արհեստներում գերակա դիրքեր

²⁰ Նույն տեղում, էջ 387:

²¹ Halide Edip Adivar, *Mor Salkımlı Ev*, s. 86.

²² Halide Edib, *Memoirs of Halide Edib*, p. 414.

²³ Նույն տեղում, էջ 386:

ունեցող հայերի ոչնչացումը ձեռնտու էր թուրքերին, ավելին՝ սողափակում ընդգծում գերմանացիների տեղեկացվածությունն ու լեռնայն համաձայնությունը: Կոտորածների կազմակերպման հարցում հայերի ակտիվ «մասնակցության» մասին հեղինակը խոսում է նաև 1909 թ. Ադանայի կոտորածի համատեքստում. «... գաղտնիքներով լի է Ադանայում հայերի կոտորածը: Թվում է, որ Կոստանդնուպոլսում երիտթուրքերին սպանող ռեակցիոն թնկ է Ադանայում կոտորում հայերին: Հայկական ու արտասահմանյան աղբյուրներն ասում են, որ ջարդերը կազմակերպել են անձամբ երիտթուրքերը: Բայց նրանք հազիվ թե այդ պահին կարողանային նման բան կազմակերպել, քանի որ ուժ չունեին ու իրենց կյանքի համար էին անհանգստանում: Պատճառներն ավելի խորն ու բարդ էին»²⁴: Ըստ Հալիդե Էդիփի, այս բարդ պատճառներից առաջինը հայերի՝ եվրոպացիների աչքում դժբախտ երևալու ձգտումն էր, ինչը պետք է օգներ անկախության ձեռքբերման ճանապարհին աջակցություն ստանալ²⁵: Ավելին, նշելով Ադանայի տարբեր թաղամասերում անհայտ անձնանց կողմից իրականացված սպառնալիքները՝ Հ. Էդիփը նախ շեշտում է, որ երիտթուրքերը հայերին թույլ էին տվել զինվել, ապա նշում, որ թուրքերն հիմնականում անգեն էին²⁶:

Այսպիսով Հալիդե Էդիփը միտում ունի քսաներորդ դարի սկզբին օսմանյան իշխանությունների կազմակերպած կոտորածները ներկայացնել որպես թուրք-հայկական բախումներ, որոնց մեղավորը հեղինակի կարծիքով հիմնականում հայերն էին: Այս գաղափարը բազմիցս շեշտվում է նաև հուշերի՝ Հալիդե Էդիփի որբանոցներում իրականացրած աշխատանքը ներկայացնող հատվածում: Պատերազմի տարիներին որբացած երեխաների՝

²⁴ Նույն տեղում, էջ 283:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 284:

ընթերցողների համար որոշակի հուզականություն ունեցող բեմայի շրջանակներում մարդասպան հայի կերպարի ներկայացումը քարոզչական տեսանկյունից հմուտ քայլ է: 1916 թ. ամռանը արաբական վիլայեթներ կատարած ճամփորդության կանգառներից մեկը Լիբանանում գործող Այինթուրա որբանոցում ապրող երեխաների վիճակը նկարագրելիս Հալիդե Էդիփը գրում է. «Իմացել էին, որ Ջեմալ փաշան գալու է մի քանի այցելուներով և ամեն ինչ կարգի էր բերվել, սակայն երեխաները տանջված, դժբախտ և աննկարագրելի հիվանդ տեսք ունեին: Թուրք, քուրդ և հայ երեխաներից ամեն մեկը մի անձնական ողբերգության կրող էր, ում ծնողերին սպանել էին իր բախտակիցների ծնողները, և այժմ բոլորը հավասարապես դժբախտ էին: Յուրաքանչյուր երեխա ուներ թուրքական կամ մուսուլմանական անուն»²⁷: «...Անատոլիայի՝ հայերի զոհ դարձած ծնողների երեխաներով լեցուն որբանոցներ վերցնում էին նաև հայ երեխաների ու իսլամացնում, ինչը սխալ էր»²⁸: Հայ երեխաների իսլամացման վերաբերյալ իր մտահոգությունները Հալիդե Էդիփը կիսում է Միրիայում և Լիբանանում որբերի խնդրով ակտիվորեն զբաղվող Ջեմալ փաշայի հետ. «...Դուք հայերի նկատմամբ այնքան բարյացկամ եք եղել, ինչքան միայն հնարավոր էր լինել այս օրերում»²⁹: Ինչո՞ւ էք թույլ տալիս նրանց հայկական անունները փոխել մուսուլմանականով: Մի օր պատմությունը դրա վրեժը կլուծի թուրքերի նոր սերունդից»: Ի պատասխան Ջեմալն ասում է. «Դուք իդեալիստ եք: Եվ բոլոր իդեալիստների պես իրականության զգացման պակաս ունեք: Մի՞ թե դուք կարծում եք, որ մի քանի հարյուր հայ տղա ու աղջիկ իսլամացնելով՝ ես իմ ազգի մասին եմ

²⁷ Նույն տեղում, էջ 428:

²⁸ Նույն տեղում, էջ 12:

²⁹ Նույն տեղում, էջ 428:

մտածում: Դուք տեսաք Դամասկոսում հայերի կողմից կառավարվող հայկական որբանոցները: Այնտեղ այլևս սենյակ չկա, այլևս գումար էլ չկա նոր հայկական որբանոց բացելու համար: Սա մուսուլմանական որբանոց է, ուր միայն մուսուլման որբերի մուտքն է արտոնված: Բայց ես ուղարկում եմ այստեղ ցանկացած թափառող անտուն երեխայի, ով հասնում է Սիրիա ողբերգության կիզակետից»³⁰: Ընդունելով երեխաներին փրկելու համար նրանց իսլամ պարտադրելու անհրաժեշտությունը՝ Հալիդե Էդիփը հարցնում է Ջեմալին պատերազմի ավարտից հետո երեխաների ճակատագրի մասին: Փաշան պատասխանում է. «Պատերազմից հետո նրանք կգնան հետ իրենց ժողովրդի մոտ: Ես հուսով եմ, որ ոչ մեկն այնքան փոքր չի, որ մոռանա իր ազգը»³¹, ապա շարունակում. «Եթե դուք տեսնեք նրանց դժբախտությունն ու տառապանքը, դուք կգնաք նրանց մոտ, և մի բուպե էլ չէք մտածի նրանց անունների ու կրոնի մասին»³²: ...Ես վերցնում եմ մուսուլման որբերի հացը հայ երեխաներին պահելու համար»³³: Այս խոսքերը ստիպում են Հ. Էդիփին ընդունել Ջեմալի՝ որբանոցներում աշխատելու առաջարկը և փաստորեն ակտիվորեն լծվել հայ երեխաների իսլամացման գործին: Հուշերի տողատակերում ընթերցողը տեսնում է հայ, թուրք ու քուրդ երեխաների կրթության միջոցով աստիճանական ձուլման պատմությունը, որի ընթացքում հեղինակը չի մոռանում շեշտել հայ և մուսուլման երեխաների տարբերությունները. «Քուրդ երեխաները զարմանալու աստիճան ազնիվ, արդար և նվիրված են...նրանք չունեն թուրքերի ու հայերի ղեկավար կարողությունները: Թուրք երեխաներին ամենից հեշտն է

³⁰ Նույն տեղում, էջ 429:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 430:

կառավարել: Բացի այն, որ նրանք խիստ կանոնակարգված են, նրանք մեղմ են ու բարի, դպրոցի խաղաբարարներն են: Երբ պետք է անձնագրի աշխատել, միշտ կարելի է հույս դնել մեծ տարիքի թուրք տղաների վրա»³⁴ ...Հայ երեխաները լավ երաժիշտ են: Նրանց փողային գործիքների համույթը դպրոցի հաճույքն ու հպարտությունն է: Հայ երեխաներն որոշ հատկանիշներով ավելի մոտ են թուրք երեխաներին, քան քրդերին, թեև ազգային ծագումով քրդերին առավել մոտ են»³⁵:

Որբանոցներում տեղերի սակավությունը շեշտելով՝ Հալիդե Էդիփը գրում է, որ «որոշ թուրք ընտանիքներ էլ հայ երեխաներին բարությունից ու խղճահարությունից դրդված ապաստան էին տալիս, սակայն նրանց իսլամացնելու նպատակ չունեին, քանի որ թուրքերը Արևմուտքի քրիստոնյաների միսիոներական բնազդներով չեն ուղղորդվում»³⁶: Հուշերում մի քանի անգամ ևս ընդգծելով, որ Ամերիկյան օգնության միությունը բացառապես քրիստոնյա երեխաների է հավաքում, Հ. Էդիփը հակադրում է թուրքական իշխանությունների «մարդկային մոտեցումները» արևմտյան հաշվենկատությանը: Սրա հետ մեկտեղ արդեն պատերազմի ավարտին հայ և մուսուլման երեխաներին ողջ մնացած բարեկամներին վերադարձնելու գործընթացի համատեքստում Հալիդե Էդիփը նշում է, որ հայերն էլ են իրենց ղեկավարության տակ գտնվող որբանոցներում թուրք երեխաներին հավաքում և որպես հայ գրանցում, ապա հոգատարությամբ, սպառնալիքներով հայաֆիկացնում են այդ երեխաներին³⁷: Թուրք երեխաների «հայաֆիկացման» վերաբերյալ

³⁴ Նույն տեղում, էջ 448:

³⁵ Նույն տեղում, էջ 450:

³⁶ Նույն տեղում, էջ 13:

³⁷ Նույն տեղում:

թեզն առաջ քաշելով՝ Հալիդե Էդիփը ևս մեկ անգամ փորձում է ընդգծել Առաջին համաշխարհայինի ընթացքում ու դրան հաջորդած տարիներին հայերի ու թուրքերի գործողությունների ընդհանրությունը: Ինչպես և կոտորածների կազմակերպման հարցում, երեխաների ազգափոխության, կրոնափոխության հարցում էլ գրողը երկու կողմերի միջև հավասարության նշան է դնում: Հեղինակն ուզում է ցույց տալ, որ աշխարհաքաղաքական բավական խառը, ոչ միանշանակ իրավիճակում կողմերից յուրաքանչյուրը սեփական շահերը պաշտպանելու համար կիրառել է գրեթե նույն գործիքակազմը: Ավելին, հուշերի պատումից կարելի է ենթադրել, թե հայերն իրենց «հակաթուրքական նախաձեռնություններով» ստիպել են թուրքերին պատասխան քայլեր ձեռնարկել: Հայերի տեղահանությանն ու երեխաների իսլամացմանը դեմ լինելու հեղինակի պնդումները ստեղծում են հուշերում տրված գնահատականների օբյեկտիվության պատրանք, սակայն իրականում դրանք թուրքական դասական քարոզչության ծիրում են գտնվում և կրկնվում են 1910-20-ական թվականներին անդրադարձող գրեթե բոլոր թուրք հասարակական-քաղաքական գործիչների նորերում:

THE ARMENIAN QUESTION IN THE MEMOIRS BY HALIDE EDIB ADIVAR

Poghosyan Naira
(Summary)

This paper is an attempt to shed light on the references to the Armenian subject in the memoirs by the Turkish feminist-writer, politician and public activist Halide Edib Adivar (1884 -1964). The Turkish writer who worked in orphanages of Syria and Lebanon put emphasis on the problem of Armenian orphans' Islamization and Turkification. Continuing Turkish policy of denial she also charged Armenians for assaulting on Turks and thus inciting massacres.

АРМЯНСКИЙ ВОПРОС В МЕМУАРАХ ХАЛИДЕ ЭДИП АДЫВАР

Погосян Наира
(Резюме)

В статье сделана попытка представить обращения к армянской тематике в мемуарах известной турецкой феминистки, писательницы, общественного деятеля Халиде Эдип Адывар (1884 -1964 гг.). Работавшая в приютах Сирии и Ливана, писательница много места уделяет проблеме армянских детей-сирот, вопросу их тюркизации и исламизации. Продолжая турецкую политику отрицания, Х. Эдип обвиняет армян в нападении на турок и подстрекании резни.

Մեղքոյան Ռուբէն*

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐ-ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐ. ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ երիտօրրքեր, քեմալականներ, այլամերժ, ցեղասպան մտածողություն, ազգայնամոլական շարժում, պետական վերնախավ

Հենվելով բազմաթիվ փաստերի, ակնհայտ իրողությունների վրա՝ վստահորեն կարելի է ասել, որ Օսմանյան կայսրությունում երիտօրրքերի կառավարման տարիներին քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ իրականացված պետական հալածանքի, խտրականության քաղաքականությունը, ցեղասպան մտածելակերպը և գործելակերպը փոխանցվեց նաև Թուրքիայի Հանրապետության իշխանություններին¹: Սա առավելապես կարելի է բացատրել երկու հանգամանքով. նախ թուրքական պետությունը ինստիտուցիոնալ առումով այլամերժ էր և թշնամաբար էր վերաբերում ոչ թուրք գրեթե բոլոր ազգություններին: Երկրորդ՝ 1923 թ. ստեղծված Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների, ղեկավար կազմի, պետական բյուրոկրատիայի զգալի մասը նախկին երիտօրրքեր էին, որոնք էլ հենց շարունակում էին արդեն ավանդական այլամերժ և ցեղասպան քաղաքականությունը: Այսօր արդեն շատ պատմաբաններ, այդ թվում և թուրք կամ ծնունդով Թուրքիայից

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկան, բ.գ.թ., պրոֆեսոր, էլ. փոստ՝ rubenmelkonyan@ysu.am
¹ Üngör U. Ü., "Türkiye Türklerindir": Doğu Anadolu'da Demografi Mühendisliği 1914-1945 // Soykırım Meselesi: Osmanlı İmparatorluğu'nun Son Döneminde Ermeniler ve Türkler, İstanbul, 2012, s. 399.

Թուրք Արքամ, Սելիմ Դերինգիլ, Այշե Հյուր, Սայիթ Չեթինօղլու, Նեզաթ Օնարան և ուրիշներ), հենվելով փաստերի վրա հստակ հայտարարում են, որ քեմալական իշխանությունները երիտօրրքերի շարունակությունն էին գաղափարական, աշխարհայացքային, գործելաոճի և անգամ կադրերի առումով: Ինչպես Թուրքիայի առաջին նախագահ Մուսթաֆա Քեմալը, այնպես էլ երկրորդ և երրորդ նախագահներ Իսմեթ Ինյոնյուն, Ջելալ Բայարը² երիտօրրքեր էին: Ուշագրավ է Սայիթ Չեթինօղլուի երիտօրրքական և հանրապետական շրջանների ժամանակագրական բաժանման հետևյալ բնութագրումները: Այսպես, Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիները և առավել կոնկրետ երիտօրրքերի իշխանության տարիները նա բնորոշում է որպես «առաջին երիտօրրքական շրջան», իսկ հանրապետական Թուրքիայի միակուսակցական կառավարման շրջանը՝ 1923-1946 թթ. նա անվանում է «երկրորդ երիտօրրքական շրջան»³: Հոլանդացի հայտնի թուրքագետ Էրիկ Տյուրխսերը նույնպես Թուրքիայում երիտօրրքական կառավարման շրջանը հասցնում է մինչև 1950-ը, այն հիմքով, որ մինչ այդ իշխած քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը երիտօրրքերի դե ֆակտո շարունակողն էր ու քեմալական ազգայնամոլական շարժման, գրեթե առանց բացառության, բոլոր առանցքային գործիչները նախկին երիտօրրքեր էին⁴: Կան նաև զիտնականներ, որ երիտօրրքական

² Ջելալ Բայարը եղել է նաև Հատուկ կազմակերպության (Teşkilât-ı Mahsûsa) անդամ և գործունեություն է ծավալել Գալիի Հոջա ծածկանունով:
³ Çetinoğlu A. S., Ekonomik ve Kültürel Jenosid: Varlık Vergisi 1942-1944, İstanbul, 2009, s. 16.
⁴ Zürcher E. J., Yenilenme ve Sessizlik: Savaş Sonrasında İttihatçıların ve Kemalistlerin Ermeni Soykırımına İlişkin Retorikleri // Soykırım Meselesi: Osmanlı İmparatorluğu'nun Son Döneminde Ermeniler ve Türkler, İstanbul, 2012, s. 408.

իշխանության փաստացի գոյությունը Թուրքիայում իրավացիորեն հասցնում են մինչև 1960 թ. և 1950-1960 թթ. իշխան ժողովրդավարական կուսակցությանը ևս համարում բացահայտ երիտթուրքական մտածելակերպի շարունակող: Ըստ թուրքագետ Մուրեն Բադդասարյանի օբյեկտիվ դիտարկման և մեկտեղած փաստերի, մինչև 1960 թ. Թուրքիայի 3 նախագահ, 5 վարչապետ, խորհրդարանի նախագահներ, բազմաթիվ նախարարներ եղել են երիտթուրքական կուսակցության նախկին անդամներ, իսկ հանրապետության վերնախավին ևս անվանում է երիտթուրքական կուսակցության «զինվորական վերնախավի երկրորդ էշելոնի ներկայացուցիչներ»⁵: Թուրք պատմաբան Էմրե Քոնգարը անդրադառնալով ժողովրդավարական կուսակցության կառավարման տարիներին և կոնկրետ նախագահ Ջելալ Բայարին՝ նշում է. «Անգամ 1950-ականներին կարելի էր նկատել «իթթիհաթական» արատավոր սովորույթները: Այդ տարիներին իշխանության ղեկին գտնվող ժողովրդավարական կուսակցությունից նախագահ Ջելալ Բայարը (1883-1986 թթ.), լինելով հին իթթիհաթական, ապահովում էր «Մենդերեսի շրջանի» (1950-1960 թթ. Թուրքիայի վարչապետ Ռ.Մ.) և «երիտթուրքական» շրջանի օրգանիկ կապը»⁶: Ի դեպ, Սայիթ Չեթինօղլուն մեջբերում է հենց Ջելալ Բայարի խոսքը, որը գալիս է ապացուցելու վերը նշվածը. «Ես մինչև կյանքիս վերջ ապրել եմ որպես երիտթուրք»⁷:

Երիտթուրքական գաղափարախոսական և գործնական-քաղաքական շարունակականությունը մասնագետները իրավացիորեն դիտարկում են նաև ֆաշիզմի կամ մեր կարծիքով

⁵ Բադդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, 2001, էջ 17:

⁶ Kongar R.E., 21. Yüzyılda Türkiye: 2000'li Yıllarda Türkiyenin Toplumsal Yapısı, İstanbul, 2012, s. 135-136.

⁷ Çetinoğlu A. S., նշված աշխ., էջ 215-216.

ֆաշիզմի թուրքական տարբերակի համապատկերում: Այսպես, ըստ թուրքագետ-պատմաբան Վահրամ Տեր-Մաթևոսյանի. «Իրականում քեմալականության գաղափարախոսական դրույթների կապը և կախվածությունը նախորդող երիտթուրքական ժամանակաշրջանից ունի բազմաթիվ անհերքելի «շարունակություններ»⁸: Այս առումով իրավացի է նաև խորհրդային վաղ շրջանի արևելագետ Իրանդուստը, ով 1928 թ. կարծում էր, որ. «Քեմալիզմի պատմական ծագումը պետք է փնտրել երիտթուրքական կուսակցության ընդերքում, որի մեջ էլ կայացել են նոր քեմալական Թուրքիայի ներկայիս ղեկավարների մեծամասնությունը»⁹: Ս. Բադդասարյանը խոսելով պետությունների շարունակականության և ժառանգության հարցի մասին՝ նշում է. «Սովորաբար նորաստեղծ պետությունները ժառանգում են իրենց քաղաքական համակարգը նախորդ վարչակարգերից: Այդ ժամանակ էլ այս պետությունները կանգնում են հետևյալ ընտրության առջև՝ կա՛մ ընդունել, կա՛մ մերժել, կա՛մ էլ արդիականացնել այդ ժառանգությունը»¹⁰: Մեր կարծիքով և օբյեկտիվ փաստերի համադրմամբ պարզ է դառնում, որ քեմալական ազգայնամոլական շարժման ղեկավարները և անդամները ոչ միայն երիտթուրքեր էին կուսակցական պատկանելությամբ ու մտածողությամբ, այլև օսմանյան արատավոր ժառանգության կրողներն ու շարունակողներն էին:

Սակայն վերը նշված շարունակականությունը երբեմն ունի նաև անձնավորված բնույթ: Այս առումով նկատենք, որ հայտնի

⁸ Տեր-Մաթևոսյան Վ., Ֆաշիզմի դրսևորումները Թուրքիայում. տեսության մի քանի հարցեր, Ժամանակակից Եվրասիա, հատոր III (2), Երևան, 2014, էջ 10:

⁹ Ирандуст, Движущие силы кемалистской революции, Москва-Ленинград, 1928, с. 50.

¹⁰ Բադդասարյան Ս., նշված աշխ., էջ 14-15:

պատմաբան Հանս-Լուկաս Կիզերը իր հարցազրույցներից մեկում խոսելով թուրքական ազգայնամոլության մասին՝ ուշագրավ գուգահեռներ է անցկացրել Մուսթաֆա Քեմալի և Թալեաթի միջև. «Քեմալիզմի ետևում թաքնված է թալեաթիզմը»¹¹: Իսկ ավելի ուշ Թալեաթի և Թուրքիայի Հանրապետության ինստիտուցիոնալ կապի մասին իր ուշագրավ մենագրության մեջ Կիզերը հստակ նշում է, որ Մուսթաֆա Քեմալը իրականում հանդիսանում է «Թալեաթի ժառանգորդը»¹²: Պատմաբանը իրավացիորեն Թալեաթի կադրերից է համարում նաև Շյուքրյու Քայային, Աբդուլհալիք Ռենդային, Ջելալ Բայարին և ուրիշներին, ովքեր դառնալու էին հանրապետական Թուրքիայի բարձրագույն իշխանության առանցքային դեմքեր: Իսկ ավելի երիտասարդների մեջ, ըստ Կիզերի, Թալեաթի սաներից պետք է համարել «Թուրքական օջախների» անդամներից Շյուքրյու Սարաջօղլունին, Մահմաթ Էսաթ Բոզորթին, որոնք 1930-1940-ականներին կարևոր դիրքեր էին զբաղեցնելու թուրքական կառավարությունում¹³ (վարչապետ, նախարար): Թալեաթ փաշայի անձնական օրագիրը, նամակագրությունը հրատարակած լրագրող, ուսումնասիրող Մուրադ Բարդաքչըն ուշագրավ փաստեր է ներկայացնում երիտթուրք ոճրագործի այրու՝ Հայրիյե Թալեաթի և հանրապետական Թուրքիայի ղեկավարների կապի վերաբերյալ: Օրինակ՝ Բարդաքչըն նշում է, որ Հայրիյե Թալեաթին հաճախ այցելողների թվում է եղել Թուրքիայի երրորդ նախագահ Ջելալ Բայարը, ով Բարդաքչընին ասել է. «Տիկինը իմ շեֆի կինն է»¹⁴:

¹¹ Hans-Lukas Kieser: "Türk milliyetçiliğın asıl problemi Talat'tır", Agos, 21, 11, 2008.

¹² Kieser H.L., Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide, Oxford-Princeton, 2018, p. 411.

¹³ Նույն տեղում, էջ 412:

¹⁴ Bardakçı M., Talat Paşa'nın Evrak-ı Metrûkesi: Sadrazam Talat Paşa'nın özel arşivinde bulunan Ermeni tehirci konusundaki belgeler ve hususî yazışmalar, İstanbul, 2009, s. 185.

Երիտթուրքերի և քեմալական ազգայնամոլական շարժման կապը, ըստ էության, ոչ միայն անխուսափելի էր, այլև պատմաբանական նաև կազմակերպչական առումով: 1918 թ. երիտթուրքերի Միություն և առաջադիմություն կուսակցության առաջալուծից հետո նրանք, ըստ Ցյուրիխերի իրավացի դիտարկման «քաղաքական դաշտից չվերացան», քանի որ ամբողջ պետական ջյուրոկրատիան, ոստիկանությունը, բանակը կազմված էին երիտթուրքերից¹⁵: Հստակ է նաև այն փաստը, որ երիտթուրքական վերնախավը փախուստից առաջ ստեղծել էր նոր շարժում ձևավորելու տեսական հիմքերը, իսկ գործնական քայլերն արվեցին վերը նշված բյուրոկրատիայի, ոստիկանության, բանակի և այլ ստորաբաժանումների շարքերում ընդգրկված երիտթուրքերի կազմակերպմամբ ու մասնակցությամբ: Ցյուրիխերը առաջարկում է երիտթուրքերի և քեմալական ազգայնամոլական շարժման կապը ավելի լավ և պարզ ըմբռնելու համար ուսումնասիրել իթթիհաթականների քայլերը հետևյալ չորս ոլորտներում. 1. բացահայտ քաղաքական գործունեության, 2. ոչ հրապարակային գործունեության, 3. նահանգային կազմակերպությունների, 4. բանակի¹⁶: Բացի այդ, երիտթուրք պարագլուխները փախչելուց առաջ հրահանգել են տարբեր վայրերում ձևավորել «ժողովրդական կազմակերպություններ», որոնք պետք է պայքարեին թուրքերի «իրավունքների պաշտպանության» համար և «օտարերկրյա օկուպացիայի դեմ»¹⁷: Այդ հարցով 1918 թ. սեպտեմբերին, այսինքն՝ իր փախուստից կարճ ժամանակ առաջ զբաղվել է անձամբ Թալեաթ փաշան, ով էլ հենց առանձնացրել է կարևոր տարածքները, հանձնարարել

¹⁵ Zürcher E. J., Millî Mücadelede İttihatçılık, İstanbul, 2016, s. 114.

¹⁶ Նույն տեղում, էջ 115:

¹⁷ Նույն տեղում, էջ 137:

այդտեղի պատասխանատուներին ձևավորել վերոնշյալ «ժողովրդական կառույցները» և դրանով փաստորեն դրել ազգայնամոլական շարժման հիմքը: Ըստ Ցյուրիխերի, որպես կարևոր տարածքներ առանձնացվել էին հետևյալ երեքը՝ 1. Թրակիա, 2. «Արևելյան Անատոլիա» այսինքն՝ պատմական Հայաստան, 3. Իզմիր և շրջակայք¹⁸: Ինչպես ցույց տվեցին արդեն 1919 թ. սկզբներին ծավալվող իրադարձությունները, այդ տարածքներում ձևավորված «իրավունքների պաշտպանության կոմիտեները» կատարեցին վճռական դեր և Մուսթաֆա Քեմալը գործունեություն ծավալեց կամ թիրախավորեց հենց այդ վայրերը: Փաստացի ազգայնամոլական շարժումը ընթացավ Թալեաթի գծած սցենարով և նրա նախատեսած տարածքներում, ուստի կարող ենք ասել, որ քեմալիզմ-թալեաթիզմ կապը շատ հստակ է դրսևորված և ի տարբերություն բռնապարտիզմով, պանթուրքիզմով տարված էնվերի, Թալեաթը շատ ավելի իրատեսական հաշվարկ էր արել, որը իրագործեց Մուսթաֆա Քեմալը:

Բացի տարատեսակ կապերից, երիտթուրք պարագլուխները արդեն փախուստի ժամանակ նամակագրական կապ են ունեցել ազգայնամոլական շարժման ղեկավարների և հատկապես Մուսթաֆա Քեմալի հետ: Դրանց մեջ առավել կարևոր է Թալեաթի և Մուսթաֆա Քեմալի նամակագրությունը. 1980 թ. հրապարակված այդ նամակների¹⁹ անգամ մակերեսային դիտարկումը թույլ է տալիս ևս մեկ անգամ վստահորեն պնդել, որ ազգայնամոլական շարժումը ոչ թե կապված է երիտթուրքերի հետ, այլ հենց նրանց ձևավորած և հետակա ուղղորդած շարժումն է: Թալեաթի և Քեմալի միջև շարունակական նամակագրությունը սկսվել է 1919 թ. վերջերին: Իրենց նամակագրության մասին

Թալեաթը տեղեկացրել է նաև այդ ժամանակ որպես հանցագործ Մալթա արստրված, երիտթուրքական կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Միթհաթ Շյուքրյու Բլեդային և նրան ուղարկած նամակներում նշում է, որ «Շիկահեր փաշայի (Մուսթաֆա Քեմալ Ռ.Մ.) հետ նամակագրական կապի մեջ են»²⁰: Ի դեպ, նկատենք, որ Թալեաթի և Մուսթաֆա Քեմալի նամակագրության մեջ քննարկվում է նաև հայկական քեմատիկան, իրենց ձևակերպմամբ «հայկական հարցը» և այդ ուղղությամբ արվող քայլերը²¹:

Սակայն բացի ստրատեգիական հաշվարկներից և տեսական ծրագրերից, բնական է, որ ազգայնամոլական շարժման ամենակարևոր հիմքը զինված ուժերն էին ու հրամանատարները, որոնք մեծ մասամբ երիտթուրքական կուսակցության անդամներ էին: Ըստ Ցյուրիխերի, 1918-ին օսմանյան բանակի պահպանված հատվածի թվաքանակը մոտ 110-ից 130 հազար էր և որը «համակարգված կառույց էր», որտեղ պահպանված էր զինվորական կարգապահությունը և «հրամանների շղթայական կառուցվածքը»²²: Ավելին՝ թվարկելով բանակի պատասխանատուներին, տարբեր հրամանատարներին՝ Ցյուրիխերը տալիս է դիպուկ գնահատական. «Բանակի փոխարեն, ավելի ճիշտ կլինի կիրառել «երիտթուրք գնդապետներից և գեներալներից բաղկացած ընկերների խումբ»²³: Իսկ Իրանդուստը Մուսթաֆա Քեմալին և ազգայնամոլական շարժման մյուս գործիչներից շատերին համարում է և անվանում է իթթիհաթական կուսակցության «չհամաձայնվողների թև» կամ այսպես կոչված

¹⁸ Նույն տեղում, էջ 313:

¹⁹ Նույն տեղում, էջ 328:

²² Zürcher E. J., նշված աշխ., էջ 146.

²³ Նույն տեղում, էջ 148:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Tekeli I., Ilkin S., Kurtuluş Savaşında Talat Paşa ile Mustafa Kemal'in Mektuplaşmaları, Belleten (Türk Tarih Kurumu), Ankara, 1980, Cilt XLIV, Sa.: 174, s. 301-345.

«դիսիդենտներ»²⁴, այստեղ խոսքը առավելապես վերաբերում է հենց ռազմական գործիչներին կամ սպայակազմին:

Երիտթուրքեր-քեմալականներ կապի մյուս կարևոր քաղաքիչը բնականաբար տնտեսական հարցերի վերաբերյալ տեսական մոտեցումներն էին, որոնց մեջ ակնհայտ դրսևորվում էր ոչ թուրք ժողովուրդների դեմ թշնամանքը և մոնոթեմիկ տնտեսության տեսլականը: Երիտթուրքական և քեմալական ռեժիմների գաղափարական ու գործելաոճի շարունակականության տնտեսական ասպեկտի մասին խոսելիս՝ տնտեսագետ Նեզաթ Օնարանը առանձնացնում է այն այլամերժ վերաբերմունքը, որն ուղղված էր սկզբում ոչ մուսուլմանների և ոչ մուսուլմանականի, իսկ հետո արդեն ոչ թուրքերի և ոչ թուրքականի դեմ ու հավելում. «Հանրապետությունն էլ ձևավորվեց ահա հենց այսպիսի ժառանգության վրա»²⁵: Այս հարցում ևս պետք էր կադրային վերադասավորումներ, այսինքն՝ տնտեսության ասպարեզում երիտթուրք պատասխանատուների ակտիվ գործունեությունն նաև քեմալականների կառավարման շրջանում: Շատ մասնագետների իրավացի կարծիքով տնտեսական այլամերժության շարունակականության և քեմալականների կողմից կատարելագործման հարցում առանձնահատուկ կարևորություն են ունեցել երկու գործիչներ՝ Քարա Քեմալը և Ջավիդը, որոնց Իրանդուստը բնութագրում է որպես «երիտթուրքերի տնտեսական քաղաքականության գլխավոր կազմակերպիչ և տեսաբաններ»²⁶:

Եվ ի վերջո, քեմալականների ու երիտթուրքերի նույնականության խնդիրը կարելի է դիտարկել նախ ժամանակի

²⁴ Ирандуст, նշված աշխ., էջ 49.

²⁵ Onaran N., Osmanlı'da Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi (1914-1919): Emvâl-i Metrûkenin Tasfiyesi, İstanbul, 2013, c. 1, s. 19.

²⁶ Ирандуст, նշված աշխ., էջ 46.

հասարակական-քաղաքական քննարկումներում, կարծիքներում, քեմալականների անձնական գնահատականներում, ինչպես նաև ավելի ուշ շրջանի Թուրքիայի քաղաքական գործիչների հայտարարություններում: Դեռևս քեմալական շարժման աարիներին Ստամբուլի սուլթանական կառավարության մեծ վեզիր Ֆերիդ փաշան այդ շարժումը համարել է երիտթուրքական և «Ալեմդար» թերթում մեջբերված են նրա հետևյալ խոսքերը. «Միություն և առաջադիմության մանրէներն ավելի վտանգավոր են քան սարսափելի տուրերկույոզի բացիլները: Միություն և առաջադիմություն կուսակցությունը և ազգայնականները (*այն է քեմալականները Ռ.Մ.*) նույնն են»²⁷: Ազգայնամուլական շարժման սկզբում Մուսթաֆա Քեմալը անդրադառնալով իրենց և իթթիհաթականների կապին՝ հստակ հերքում է դա և համարում, որ այդ մեղադրանքները միտումնավոր կերպով տարածում են «հայերը, հույները և Անտանտի պետությունները»²⁸: Այնուհետև նա նշում է, որ պետք չէ բոլոր իթթիհաթականներին համարել մեղավոր, այլ մեղավոր են «մի խումբ մարդիկ», ովքեր վատ են կառավարել երկիրը և չարաշահել իրենց իշխանությունը: Ավելին՝ նա ոչ միայն սխալ, այլև «երկրի ապագայի համար» վտանգավոր է համարում «մշտական կասկածով» վերաբերվելը «Միություն և առաջադիմություն» կուսակցության այն նախկին անդամներին, ովքեր «մնացել են ազնիվ մարդիկ»²⁹: Իսկ 1920-ականների սկզբին Մուսթաֆա Քեմալը իր հարցազրույցներից մեկի ժամանակ բառացիորեն հայտարարել է. «Հնարավոր է որ երիտթուրքերը

²⁷ Владимирский А., Великий Атаатюрк: "Отец народа", "Человек Судьбы", Москва, 2014, с. 106.

²⁸ Кемаль Атаатюрк, Избранные речи и выступления, Москва, 1966, с. 58.

²⁹ Նույն տեղում, էջ 59:

կատարել են շատ սխալներ, սակայն նրանց հայրենասիրությունը կասկած չի հարուցում»³⁰:

Քեմալական շարժման մյուս կարկառուն ներկայացուցիչը Իսմեթ Ինյոնյուն նույնպես անդրադառնում է քեմալականների և երիտթուրքերի առնչություններին ու նշում, որ իրենցից, այսինքն՝ քեմալական ազգայնամոլական շարժման մասնակիցներից, ոչ մեկը, «Միություն և առաջադիմության» կառավարման ժամանակաշրջանի պատասխանատվությունը չեն ստանձնում և մանրամասնում է. «Մեզնից ոչ մեկը որևէ կապ չունի կոստրածների, արսորի և սայօրիսությունների հետ, որոնց համար պատասխանատու էր համարվում Միություն և առաջադիմությունը»³¹: Սակայն Ինյոնյուի այս հավաստիացումները ևս, բախվելով օրյեկտիվ փաստերի հետ, դառնում են մեղմ ասած ոչ հավատարման:

Քեմալական ղեկավար գործիչները տարբեր տարիներին նաև արտահայտվել են երիտթուրք առանձին պարագլուխների վերաբերյալ և նրանց տված գրեթե բոլոր գնահատականները ընդգծված դրական էին: Այսպես, Մուսթաֆա Քեմալի մտերիմ զինակից Քըլըչ Ալին պատմում է, որ երբ Քեմալը ստացել է Թալեաթի սպանության լուրը բավական ազդվել է. «Աթաթուրքի այքերը լցվեցին և նա հայտարարեց. «Երկիրը կորցրեց իր մեծ զավակին»³²: Իսմեթ Ինյոնյուն նույնպես Թալեաթ փաշայի մասին դրական է արտահայտվել. «Շատ մեծ հայրենասեր էր»³³: Իր հուշերում Ինյոնյուն Թալեաթին բնութագրում է որպես «Միություն և առաջադիմություն կուսակցության ամենաարժեքավոր մարդը», ով

³⁰ Владимирский А., նշված աշխ., էջ 83.

³¹ İsmet İnönü, Hatıralar, Ankara, 2014, s. 166.

³² Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, (derleyen: Hulûsi Turgut), İstanbul, 2016, s. 572.

³³ Barutçu F. A., Siyasî Anılar 1939-1954, İstanbul, 1977, s. 420.

կուսակցության քաղաքացիական գործիչների վերնախավում առաջինն էր, վայելում էր կուսակցականների սերն ու հարգանքը»³⁴: Խոսելով երիտթուրք մյուս պարագլուխների մասին՝ Իսմեթ Ինյոնյուն նշում է, որ Էնվերը «այն մարդն է, ով կայսրության ճակատագրում կարևորագույն դեր է խաղացել»³⁵: Իսկ երիտթուրք մյուս պարագլխի՝ Ջեմալի մասին Ինյոնյուն առավելապես բացասական է արտահայտվում՝ նկատելով, որ Ջեմալ փաշան փառքի հասնելուց հետո դեսպոտ էր դարձել. «Ջեմալ փաշան Միրիայում կառավարում էր բռնապետի նման և արաբների հանդեպ նրա այդ վերաբերմունքի հետևանքով մեզնից մնացած հիշողությունը դա է: Սակայն չգիտեմ եթե այդպես չաներ, ինչպես կարող էր ղեկավարել: Ջեմալ փաշան Աթաթուրքի մտերիմ ընկերն էր: Միշտ լավ հարաբերություններ են ունեցել և երբ Ջեմալ փաշան Թիֆլիսում սպանվեց, Աթաթուրքը երկար ժամանակ հետամուտ էր լինում այդ հարցին»³⁶: Այս կարծիք-գնահատականներին արժե ավելացնել նաև ավելի երիտասարդ սերնդի երիտթուրքերից Շյուքրյու Սարաջօղլուի կարծիքը Թալեաթի մասին. նա երիտթուրք պարագլխի կնոջը՝ Հայրիյե Թալեաթին ասել է. «Ինձ Թալեաթ փաշան է դաստիարակել»³⁷:

Նկատենք նաև, որ տարբեր տարիներին Թուրքիայի քաղաքական դաշտի ազդեցիկ որոշ գործիչներ ուղղակի կամ անուղղակի անդրադարձել են երիտթուրքեր-քեմալականներ հարաբերությունների թեմային: Օրինակ՝ հանրապետության հռչակումից հետո Մուսթաֆա Քեմալի դեմ ընդդիմադիր գործունեություն ծավալած Քյազըմ Քարաբեքիրը 1926 թ. իշխող

³⁴ İsmet İnönü, նշված աշխ., էջ 145.

³⁵ Նույն տեղում, էջ 141:

³⁶ Նույն տեղում, էջ 145:

³⁷ Bardakçı M., նշված աշխ., էջ 226.

Հանրապետական ժողովրդական կուսակցությանը տվել է հետևյալ բնութագրումը. «Հանրապետական ժողովրդական կուսակցությունը նախկին Միություն և Առաջադիմություն կուսակցության մասն է եղել»³⁸: Իսկ Թուրքիայի նախկին նախագահ Թուրգութ Օզալը իր հուշերում նշում է. «Հանրապետական ժողովրդական կուսակցությունը և Ժողովրդավարական կուսակցությունը... երկուսն էլ ծագում էին երիտթուրքական կուսակցությունից: Մեկը Միություն և առաջադիմություն կուսակցության աջ թևն էր, մյուսը՝ ձախ: Մեկը լիբերալ, մյուսը էտատիստ»³⁹:

Այսպիսով՝ կարող ենք փաստերի, վերլուծությունների համադրման արդյունքում վստահորեն պնդել, որ քեմալական շարժումը ծրագրվել, ձևավորվել, առաջնորդվել և ուղղորդվել է երիտթուրքերի ու Միություն և առաջադիմություն կուսակցության սարքերի օղակների կողմից: Այդ ամբողջ գործընթացը եղել է կուսակցության արդեն արտերկրում գտնվող ղեկավարների և մասնավորապես Թալեաթի ու շադրության կենտրոնում, ով էլ մինչ իր մահը ուղղակի և անուղղակի ուղղորդել է Օսմանյան կայսրությունում ծավալվող ազգայնամտլական շարժումը:

³⁸ Kâzım Karabekir, Günlükler (1906-1948), (Hazırlayan: Yücel Demirel), 2. Cilt, İstanbul, 2009, s. 1021.

³⁹ Turgut Özal'ın Anıları (hazırlayan Mehmet Barlas), İstanbul, 2001, s. 51.

МЛАДОТУРКИ-КЕМАЛИСТЫ. ИДЕОЛОГИЧЕСКАЯ И КАДРОВАЯ ПРОДОЛЖИТЕЛЬНОСТЬ

Мелконян Рубен

(Резюме)

Опираясь на множество фактов и на событиях можно с уверенностью заявить, что политика государственного угнетения, дискриминации, геноцидный образ мышления и действий, которые велись в отношении христианских народов при младотурецкой власти в Османской империи, также были переданы властям республики Турции. Преимущественно это можно объяснить двумя обстоятельствами: во-первых, турецкая республика в институциональном смысле ксенофобическая, и враждебно относится почти ко всем не турецким нациям. И во вторых - существенная часть основателей, руководителей, государственной бюрократии созданной в 1923 г. турецкой республики - бывшие младотурки, именно которые и продолжали ставшей традиционной ксенофобическую и геноцидную политику.

YOUNG TURKS-KEMALISTS. IDEALOGICAL AND PERSONNEL CONTINUOUSNESS

Melkonyan Ruben

(Summary)

Based on dozen of facts and on obvious events we can confidently say, that the politics of state-led persecution, discrimination, genocidal mindset and manners, which were carried out in Ottoman Empire during the Young Turk regime were also passed to the authorities of The Republic of Turkey. This can mostly be explained by two circumstances: First of all, the Turkish state in institutional sense is xenophobic and treats almost all non-turk nations with hostility. Secondly, substantial part of the founders, leaders, state bureaucracy of the Turkish republic, which was created in 1923, were former Young Turks, and they were exactly the ones, who were continuing xenophobic and genocidal politics, which had already become traditional.

Գևորգյան Արշակ*

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹՅՈՒՆ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՂԱՆ ՄԵՆԿԵՐԵՍԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՏՐԱՊԷԶՈՆՅԻ ՊԱՏՐԻԱՐԹԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Բանալի բառեր՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Գարեգին առք, Խաչատուրյան, Աղևան Մենդերես, Ժողովրդավարական կուսակցություն, Թուրքիայի հայ համայնք

Երկրորդ աշխարհամարտին հաջորդող շրջանում բազմակուսակցական համակարգի անցնելուց հետո Թուրքիայի քաղաքական կյանքի հիմնական դերակատարներից մեկը դարձած Ժողովրդական կուսակցությունն (ԺԿ) իր գործունեության սկզբից նեթ ոչ մուսուլման փոքրամասնության¹ ներկայացուցիչ քաղաքացիների կողմից դիտարկվում էր իբրև յուրատեսակ փրկօղակ²: Պատահական չէ, որ քեմալական տոտալիտարիզմի

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ասպիրանտ: Էլ. փոստ՝ a.gevorkian@ysu.am
¹ «Ոչ մուսուլման փոքրամասնություն» եզրը թուրքական հասարակական-քաղաքական հոլովությամբ ավանդաբար կիրառվում է՝ հիմնվելով Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածների կամայական մեկնաբանության վրա: Թեև պայմանագրի տեքստը սահմանափակվում է «ոչ մուսուլման փոքրամասնություն» անորոշ ձևակերպմամբ, թուրքական պետությունը «ipso facto» շարունակում է օսմանյան «միլլեթների» իեստիտուտի ավանդույթը՝ ճանաչելով միայն հույների, հայերի և հրեաների իրավունքները: Տե՛ս Bayır D., *Minorities and Nationalism in Turkish Law*, Routledge, Abingdon-New York, 2016, p. 90:
² Տե՛ս Oktay H. E., *Yaslı ada*, İstanbul, 2006, s. 195:

կողմից բռնաճնշումների ենթարկված³ ազգային-կրոնական փոքրամասնությունները, այդ թվում՝ հայերը 1946, 1950 և 1954 թթ. համապետական ընտրություններում մեծամասամբ քվեարկել են հենց Ջելալ Բայարի և Աղևան Մենդերեսի՝ աներևույթ ավելի ազատական հայացքներ ունեցող կուսակցության օգտին⁴: Միաժամանակ, թեև փոքրամասնությունների նկատմամբ մինչև 1955 թ. կիպրական ճգնաժամը որդեգրված հանդուրժողական քաղաքականությունը ԺԿ համար արտաքին դրդապատճառներ ուներ (ԱՄՆ-ի հետ մերձեցում, ՆԱՏՕ-ի անդամակցության գործընթաց)⁵, հայերի համար այն լավ առիթ էր լուծել համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրները (պատրիարքական ընտրությունների անցկացում, համայնքային գույքի՝ վաքըֆների հետ կապված հարցերի կարգավորում և այլն):

³ Մինչև 1950 թ. Թուրքիայում իշխող քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) մեծամասամբ շարունակում էր Օսմանյան կայսրության՝ սեփական ոչ մուսուլման քաղաքացիների հանդեպ անհանդուրժողական և խտրական քաղաքականությունը: Այլառայացության օրենսդրական ձևակերպում ստացած մի շարք դրսևորումներն այս տարիներին ուղղված էին ազգային փոքրամասնությունների տնտեսական և, մասամբ նաև, ֆիզիկական ջախջախմանը: Այս մասին, մասնավորապես, տե՛ս Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, 2008, թիվ 5, էջ 127-143, նույնի՝ «Էթնիկ գորակոչ» Թուրքիայի Հանրապետությունում (1941-1942թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, 2012, թիվ 2-3, էջ 42-50: Ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ ՀԺԿ ընդհանրական դիրքորոշման վերաբերյալ մանրամասն տե՛ս Çağatay Okutan M., *Tek parti döneminde azınlık politikaları*, İstanbul, 2009:
⁴ Տե՛ս Demirler D., Kayhan M., *Türkiye’de azınlık hakları sorunu: vatandaşlık ve demokrasi eksenli bir yaklaşım*, İstanbul, 2006, s. 37:
⁵ Տե՛ս Güven D., *Riots against the Non-Muslims of Turkey: 6/7 September 1955 in the context of demographic engineering*, European Journal of Turkish Studies, vol. 12, 2011, par. 56, journals.openedition.org/ejts/4538 (հասանելի էր 20.10.2018):

1950 թ. մայիսյան ընտրություններում ԺԿ տարած համոզվելու հաղթանակից հետո ձևավորված Մենդերեսի առաջին կառավարության պաշտոնավարման մեկնարկին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքական տեղապահը Վերջյանը արք. Արսլանյանն էր, որն արդեն թևակոխել էր կյանքի իններորդ տասնամյակը⁶: 1944 թ. Մեսրոպ Նարոյան պատրիարքի մահվանից ի վեր թափուր մնացած եկեղեցական արժույթի համար ընտրություններ տեղի են ունենում միայն 1950 թ. դեկտեմբերի 2-ին⁷, որոնց արդյունքում Կոստանդնուպոլսի հայոց 81-րդ⁸ պատրիարք է ընտրվում Գարեգին արքեպիսկոպոս

⁶ Վերջյանը արք. Արսլանյանի կյանքի որոշ մանրամասների համար տե՛ս Մայր աթոռի պաշտոնական ամսագրում հրատարակված մահախոսականը՝ *Հանգիստ Կոստանդնուպոլսի պատրիարքական տեղապահ Տ. Գեորգ սրբազան Արսլանյանի*, Էջմիածին, թիվ Է-Ը, 1951, էջ 89-90:

⁷ Նոր պատրիարքի ընտրության գործընթացը դուրս է սույն աշխատանքի շրջանակից, սակայն, հարկ է նշել, որ այն չի անցել առանց ցնցումների: Մանրամասների համար տե՛ս, օրինակ, Öksüz H., *Gregoryen Ermeni kilisesinde patrik seçiminin krize dönüsmesi ve bunun Türk basını ile Amerikan belgelerine yansımaları (1944-1950)*, Gazi Akademik Bakış, c. 8, n° 16, 2015, ss. 41-62:

Պատրիարքական ընտրության մասին պատկերացում են տալիս նաև Ամենայն հայոց Գևորգ Զ կաթողիկոսի կոնդակներն ու ուղերձը Թուրքիայի նախագահ Ջեմալ Բայարին (տե՛ս, Էջմիածին, թիվ Թ-Ժ, 1950, էջ 5-6, 10-11, 15), թուրքական կառավարության համապատասխան որոշումները (տե՛ս Թուրքիայի Հանրապետության վարչապետարանի հանրապետական արխիվ (այսուհետև՝ ԹՀՎՀԱ) n° 30.10.0/109.723.12, 30.18.1.2/123.72.1, 30.18.1.2/124.93.3 և այլն), ինչպես նաև ժամանակի թուրքական մամուլի հրատարակումները (տե՛ս, օրինակ, հայտնի «Միլիթեր» թերթի օրինակով՝ *Ermeni ruhanileri arasında ihtilafa vali el koydu*, Milliyet, sayı 97, 08.08.1950, s. 2, *Ermeni Patriği seçimi*, Milliyet, sayı 162, 12.10.1950, s. 2, *Ermeni Patriği meselesi hallediliyor*, Milliyet, sayı 170, 20.10.1950, s. 2, *Patrik seçimi kararnamesine itiraz edenler*, Milliyet, sayı 176, 26.10.1950, s. 5, *Patrik seçimi yüzünden çıkan ihtilaf*, Milliyet, sayı 177, 27.10.1950, s. 2, *Ermeni Patrikliği seçimi*, Milliyet, sayı 178, 28.10.1950, s. 1, 5, *Ermeni Gregoryan Patriği dün seçildi*, Milliyet, sayı 204, 03.12.1950, s. 5, *Ermeni Patriği seçiminden doğan ihtilaf*, Milliyet, sayı 206, 05.12.1950, s. 2 և այլն):

⁸ Թեև Պատրիարքության պաշտոնական գավազանագրքում Գարեգին Ա-ն 81-րդն է, թուրքական աղբյուրներն ավանդաբար հաշվարկում ընդգրկում են նաև պատրիարքական տեղապահներին՝ Գարեգին Տրապիզոնցուն համարելով

Խաչատուրյան-Տրապիզոնցին⁹: Թեև պատրիարքական ընտրության արդյունքները թուրքական կառավարության նիստում հաստատվել էին 1950 թ. դեկտեմբերի 30-ին¹⁰, ընտրյալ պատրիարքը Թուրքիա է ժամանում միայն 1951 թ. մարտի 10 լույս 11-ի զիշերը¹¹: Հաջորդ օրը ստացվում է Ամենայն հայոց կաթողիկոսի հաստատման կոնդակը¹², և Գարեգին

եկեղեցական արժույթի 112-րդ գահակալը: Գավազանագիրքը տե՛ս Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության պաշտոնական կայքում՝ www.turkiyeermenileripatrikligi.org/site/hy/gavazadanaghirop-patrikligi (հասանելի էր 20.10.2018):

⁹ Գարեգին (ավագանի անվամբ՝ Խաչիկ) Խաչատուրյանը, որը ծնվել էր 1880 թ. նոյեմբերի 6-ին Տրապիզոնում և հայտնի էր Տրապիզոնցի գրչանվամբ, 1938 թ.-ից մինչև ընտրությունը Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակն էր (նստավայրը՝ Բուենոս Այրես): Վերջինիս մասին մանրամասն տե՛ս Միքոնի Յ., *Գարեգին պատրիարք Խաչատուրեան*, Բյոթանպոլ, 2003:

¹⁰ Տե՛ս *Ermeni Patriğinin seçim mazbatası tasdik edildi*, Milliyet, sayı 242, 31.12.1950, s. 2: Թուրքական պետությունը, ըստ էության, շարունակում էր օտմանյան շրջանում գործող ընտրական գործընթացի ավանդույթը, որն ամրագրված էր 1863 թ. ուժի մեջ մտած Հայոց ազգային սահմանադրության 3-րդ հոդվածում («Պատրիարքը կը հաստատուի ըստ վաղնի սովորութեան կայսերական հրամանին համեմատ»):

¹¹ Տե՛ս *Ermeni Patriği dün sabah geldi*, Milliyet, sayı 313, 12.03.1951, s. 1: Հետաքրքիր տեղեկություն է պարունակում Բուենոս Այրեսում ԱՄՆ դեսպանությունից Անկարայում ԱՄՆ դեսպանությանն ուղղված 1950 թ. դեկտեմբերի 23-ով թվագրված գրությունը, համաձայն որի ուշացումը բացատրվում է կրանով, որ Ստամբուլ մեկնելուց առաջ Գարեգին արքեպիսկոպոսը ցանկություն էր հայտնել հրաժեշտի շրջագայություն անցկացնել Հվ. Ամերիկայի հայկական եկեղեցիներով (Տե՛ս *U.S. National Archives Records Administration, Records of U.S. Embassies, Legations, Consulates General, Consulates, and Missions (RG 84)*, NND, 938782): Թուրքիա ուղևորվելուց առաջ վերջինիս կողմից հրատարակված ուղերձը թվագրված է 1951 թ. հունվարի 23-ով և ստորագրված «Կաթ. Պատուիրակ Հարա. Ամերիկահայոց եւ Հետրեալ Պատրիարք Հայոց Թուրքիոյ» (Տե՛ս *Հարաւային Ամերիկայի մեր սիրելի ժողովուրդին հրաժեշտի արտագին խօսքեր*, Հայ կեդրոն, թիվ 1 (217), 1951, էջ 8):

¹² Ամենայն Հայոց հայրապետի կոնդակը՝ Կոստանդնուպոլսի նորընտիր պատրիարք Ամենապատիվ Տ. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի հաստատման մասին, Էջմիածին, թիվ Ա-Գ, 1951, էջ I-IV:

Խաչատուրյանն իր պարտականությունների կատարմանն է անցնում մարտի 16-ին կայացած պատրիարքական աթոռ բարձրանալու հանդիսավոր արարողությունից հետո¹³:

Նորընտիր պատրիարքն առաջին իսկ րոպեներից գիտակցում է թուրքական իշխանությունների հետ դրական հարաբերություններ հաստատելու կարևորությունը: Այդ են վկայում նրա առաջին հայտարարություններն Ստամբուլի Յեշիլքոյ օղանավակայանում վայրէջք կատարելուց հետո. «23 տարվա բացակայությունից հետո հայրենիք վերադառնալու երջանկությանն արժանանալու համար շնորհակալ եմ Աստծուն: Երկրից հեռու գտնվելուս ընթացքում Թուրքիայի ապրած զարգացումն ակնհայտ է ողջ աշխարհի համար: Վստահ եմ, որ մեր երկիրը սիրելի նախագահ Ջելալ Բայարի և կառավարության առաջնորդությամբ մշտապես առաջընթաց է գրանցելու: Երկրից դուրս գտնվելու ընթացքում Թուրքիայի պատվաբեր քաղաքացիությունը միշտ պահպանել եմ»¹⁴:

Պատրիարքական պարտականությունները ստանձնելուց կարճ ժամանակ անց¹⁵ Գարեգին արքեպիսկոպոսն ուղևորվում է մայրաքաղաք Անկարա՝ հանդիպելու Թուրքիայի նախագահին, վարչապետին և կառավարության անդամներին: Ապրիլի 7-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Հալիլ Իբրահիմ Օզորուքի անունից մայրաքաղաքի պաշտոնական հյուրատանը՝ «Անկարա

փայտում» նրա պատվին հանդիսավոր ճաշ է տրվում¹⁶: Դրանից ավելի վաղ՝ աթոռակալման արարողությունից հետո նորընծա պատրիարքի անունից երախտագիտական հեռագիր էր հղվել վարչապետ Ադնան Մենդերեսին¹⁷:

Գարեգին արքեպիսկոպոսի՝ թուրք ղեկավարներին ուղղված նամակները սովորաբար շարադրված են ընդգծված ակնածական բառապաշարով: Օրինակ՝ 1953 թ. սեպտեմբերի 5-ով թվագրվող վարչապետ Ադնան Մենդերեսին ուղղված նամակում, որում բազմիցս շեշտվում է Թուրքիայի հայ քաղաքացիների հավատարիմ և երախտագետ լինելը, Պատրիարքը կառավարության ղեկավարին դիմելիս կիրառում է «մեր մեծապատիվ հայր և երկրի ղեկավար» ձևակերպումը¹⁸: Այս և նմանատիպ այլ արտահայտությունները պետք է գնահատել այն դիրքերից, որ Թուրքիայի ղեկավարության հետ ջերմ հարաբերությունների հաստատումը պոլսահայ համայնքի փաստական ղեկավարը հանդիսացող պատրիարքի համար համայնքային խնդիրներից որոշների լուծմանը հասնելու թերևս միակ ճանապարհն էր¹⁹: Հայոց պատրիարքին բավական արագ հաջողվում է համապատասխան շփման եզրեր գտնել թուրքական

¹⁶ St' u Kisa şehir haberleri, Milliyet, sayı 336, 04.04.1951, s. 2, *Ermeni Patriği Ankara'dan hareket etti*, Milliyet, sayı 339, 07.04.1951, s. 5:

¹⁷ St' u *Ermeni Patriği dün törenle andıctı*, Milliyet, sayı 318, 17.03.1951, s. 2 (տեքստը՝ ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/18.101.4):

¹⁸ Թրք.՝ «çok muhterem Babamız ve Devlet Başkanımız» (տե՛ս ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.866.7, էջ 3):

¹⁹ Համայնքին հուզող հարցերի վերաբերյալ Գարեգին արքեպիսկոպոսի՝ Մենդերեսին հղած խնդրագրերի թեմայով խիստ ուշագրավ է թուրք ուսումնասիրող Ֆեյզա Քուրնազ Շահինի հետևյալ հոդվածը՝ Kurnaz Şahin F., *Demokrat Parti döneminde Ermeni cemaatinin iktidara yaklaşımı: Patrik Karekin Haçaduryan'ın Başbakan Adnan Menderes'e arzuhalleri (1951-1960)*, Tarihini Peşinde, n° 13, 2015, ss. 185-215:

¹³ St' u *Ermeni Patriği dün taç giydi*, Milliyet, sayı 318, 17.03.1951, s. 1:

¹⁴ St' u *Ermeni Patriği dün sabah geldi*, Milliyet, sayı 313, 12.03.1951, s. 1:

¹⁵ Թուրքիա ժամանելուց երկու օր հետո նորընտիր պատրիարքն արդեն հասցրել էր քաղաքավարության այց կատարել Ստամբուլի նահանգապետ Ֆահրեթթին Քերիմ Գյոքային (տե՛ս *Ermeni Patriği Valiyi ziyaret etti*, Milliyet, sayı 316, 15.03.1951, s. 2): Ստամբուլի նահանգապետը թուրքական պետական աստիճանակարգության ամենաբարձր պաշտոնյան է, որն ուղղակիորեն աշխատում է Կոստանդնուպոլսի հայոց և հունաց պատրիարքների ու հրեից արքունապետի հետ (St' u Altındal A., *Türkiye ve Ortodokslar*, İstanbul, 1995, s. 89):

քաղաքական վերնախավի առանցքային ներկայացուցիչների հետ: Այս առումով ուշագրավ է 1952 թ. դեկտեմբերին Գարեգին արքեպիսկոպոսի՝ մայրաքաղաք Անկարա կատարած այցը, որի ընթացքում նա ընդունելության է արժանանում երկրի երեք գլխավոր դեմքերի՝ նախագահ Ջելալ Բայարի, վարչապետ Ադնան Մենդերեսի և Թուրքիայի ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Ռեֆիք Քորալթանի կողմից²⁰: Ամփոփելով պատրիարքի այցը՝ Ստամբուլի հայկական «Ժամանակ» օրաթերթը գրում է. «*պատրիարքարան է կը հաղորդուի թէ Ս. Պատրիարքը գոհունակ սրտով վաղը երեկոյ ճամբայ կ'ելլէ Անգարայէ, ուր ամենուն կողմէ արժանացած է համակրելի եւ ջերմ ընդունելութեան*»²¹:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի և Թուրքիայի վարչապետի ակտիվ շփումներն ինչպես հանդիպումների, այնպես էլ անձնական նամակագրության մակարդակում շարունակվել են ԺԿ իշխանության ողջ ընթացքում: Դրանց արդյունքում լուծում են գտել պոլսահայ համայնքին հուզող մի շարք խնդիրներ: Բնութագրական է, օրինակ, որ պատրիարքին վարչապետի հետ համառոտ նամակագրության արդյունքում²² հաջողվում է հասնել ԹԱՄԺ կողմից ԹՀ «Վաքըֆների մասին» 1935 թ. 2762 թվակիր օրենքի 44-րդ հոդվածի²³՝ հայերի համար ցանկալի

²⁰ St' u Başbakan, Ermeni Patriğini kabul etti, Cumhuriyet, sayı 10150, 19.12.1952, s. 6:
²¹ St' u *Ազգ. ժողովի նախագահ Ը.Ֆիք Քորալթանի եւս ընդունեց Ս. Պատրիարք հոր այցելութիւնը*, Ժամանակ, թիվ 16316, 20.12.1952, էջ 1:
²² St' u, օրինակ, ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.866.7, n° 30.1.0.0/133.866.8, n° 30.1.0.0/133.869.3 և այլն:
²³ Օրենքը տե՛ս ԹՀ պաշտոնաթերթում՝ *Vakıflar kanunu*, T.C. Resmî Gazete, sayı 3027, 13.06.1935, ss. 1-4: Գույքի կադաստրային գրանցմանը վերաբերող՝ օրենքի 44-րդ հոդվածի ազդեցությունը տարածվում էր պոլսահայերի համայնքային ունեցվածք համարվող այնպիսի կառույցների վրա, ինչպիսիք են Քումքափըի Սբ. Աստվածածին աթոռանիստ Մայր տաճարը, Գալաթայի Սբ. Գրիգոր Լուսավորիչ,

մեկնաբանմանը²⁴: Այս նպատակի համար Գարեգին սրբազանը համախմբում է պոլսահայ համայնքի ողջ ներուժը, այդ թվում՝ ներգրավելով ԹԱՄԺ հայազգի պատգամավոր Զաքար Թարվերին և Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական վարչության ատենապետ Մկրտիչ Շելեֆյանին²⁵, որն անձնական ջերմ հարաբերություններ ուներ Ադնան Մենդերեսի հետ: Թուրքական արխիվներում պահպանվել են այս առիթով պատրիարքի և Մ. Շելեֆյանի՝ վարչապետ Մենդերեսին հղած շնորհակալական նամակները²⁶: Համանման մի գրություն էլ ուղարկվել է նաև համանքային մեկ այլ խոշոր իրադարձության՝ Սբ. Խաչ Դպրեվանքի բացման կապակցությամբ²⁷ և այլն:

Պոլսահայերի հոգևոր առաջնորդը Թուրքիայի քաղաքական վերնախավի հետ հարաբերությունները կառուցելիս ավանդաբար հանդես է գալիս երկրի օրինավոր և ընդգծված հասարակական ակտիվություն ունեցող քաղաքացու դիրքերից: Մասնավորապես, Գարեգին արք. Խաչատուրյանը պաշտոնավարման ընթացքում բազմիցս մասնակցել է հանրային հանգանակություններին: Ընդ որում, խոսքը ոչ միայն քրիստոնեական կարեկցանքով

Գեղիկփաշայի Սբ. Հովհաննես եկեղեցիները, նախկին Թոքատյան հյուրանոցի շենքը և այլն:
²⁴ Որոշումը տե՛ս ԹԱՄԺ համապատասխան նիստի արձանագրություն տեքստում՝ *T.B.M.M. Zabıt Ceridesi*, devre X, içtima 2, c. 13, 84. inikat, 02.07.1956, ss. 15-16, www.tbmm.gov.tr/tutanaklar/TUTANAK/TBMM/d10/c013/tbmm10013084.pdf (հասանելի էր 20.10.2018):
²⁵ Թարվերի և Շելեֆյանի մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., *Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960թթ.)*, Արևելագիտության հարցեր, 2012, թիվ 7, էջ 95-102:
²⁶ St' u համապատասխանաբար ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.870.7, էջ 23-24 և n° 30.1.0.0/133.870.1, էջ 1-2:
²⁷ St' u ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.870.7, էջ 30:

բացասարվող դեպքերի²⁸, այլև իբրև Թուրքիայի քաղաքացի կատարված նվիրատվությունների մասին է²⁹: Ավանդական էին դարձել Մենդերեսի արտերկիր կատարվող այցերից³⁰, համապետական ընտրություններից³¹ առաջ և հետո, իսլամական տոների կապակցությամբ³² պատրիարքի անունից Թուրքիայի վարչապետին հղվող նամակները, որոնց ի պատասխան ավանդաբար ջերմ շնորհակալականներ էին ստացվում:

ԺԿ իշխանության տասնամյակի՝ Թուրքիայի ազգային-կրոնական փոքրամասնությունների համար ամենածանր շրջանը Ստամբուլի 1955 թ. սեպտեմբերյան պոգրոմների օրերն էին³³, որոնք, փաստորեն, փշրեցին ոչ թուրքերի նկատմամբ Մենդերեսի կառավարության բարյացակամ վերաբերմունքի միֆը: Այդ օրերին Գարեգին արք. Խաչատուրյանի դիրքորոշումը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: Ուշագրավ է, որ ողբերգական այդ դեպքերից մոտ մեկ ամիս առաջ վարչապետ Մենդերեսն իր անձնական քարտուղար Սուգաֆֆեր Էրայուի³⁴ միջոցով

ողջույններ է փոխանցել Հայոց պատրիարքին՝ հետաքրքրվելով համայնքում առկա խնդիրների լուծման ընթացքով³⁵: Այս ժեստը, որը ընդգծված դրական արձագանք էր ստացել պոլսահայերի շրջանում, պետք է համարել հայերի շրջանում կուտակված դժգոհությունը պարպելուն ուղղված քայլ: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Գարեգին արքեպիսկոպոսի նամակների հիմնական խնդրանքը՝ վարչապետի հետ թեկուզ մի քանի րոպե տևողության հանդիպման կազմակերպումն էր³⁶: Ստամբուլյան պոգրոմին հաջորդող օրերին Հայոց պատրիարքի հավասարակշիռ և զգուշավոր դիրքորոշումը հիշեցնում է տարիներ անց 1960 թ. հեղաշրջումից հետո նրա որդեգրած կեցվածքը³⁷:

Ընդհանուր առմամբ, մինչև 1960 թ. մայիսյան ռազմական հեղաշրջումը Մենդերես-Խաչատուրյան հարաբերությունները շարունակել են լինել ընդգծված դրական: Այդ է վկայում հեղաշրջումից հետո թուրքական մամուլում արտահոսած՝ 1960 թ. մայիսի 5-ին վարչապետին Գարեգին արքեպիսկոպոսի գրած քաջալերող նամակը³⁸: Այդ հրապարակումները սուր արձագանք են գտնում պոլսահայերի շրջանում: Հղում կատարելով «Ազիս» հանդեսին՝ պոլսահայ «Ժամանակը» գրում է. «Նոյնինքն մեր հայ հայրենակիցներուն կը մնայ հաշի հարցնել Պատրիարք էֆենտիեն որ իրենց զգացմանց թարգման չի հանդիսացող այս գրութիւնը

²⁸ Մ. Պատրիարք Հայրը կուսակալ բրոֆ. Կեօբայի այցելելով 20 հազար ոսկի նուիրատուիս ըրաւ Ֆէթհիէի աղետալներուն համար, Ժամանակ, թիվ 17848, 01.05.1957, էջ 1:

²⁹ Մ. Պատրիարք Հայրը 100 ոսկի նուիրեց Մալթեփիի սզկիթին, Ժամանակ, թիվ 16315, 19.12.1957, էջ 1:

³⁰ Տե՛ս, օրինակ, ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.870.7, n° 30.1.0.0/133.869.3 և այլն:

³¹ Տե՛ս, օրինակ, ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.867.2, էջ 1-2:

³² Տե՛ս, օրինակ, ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/5.24.9, էջ 1-2:

³³ Գերագանցապետ հույների, բայց նաև հայերի դեմ ուղղված այդ ջարդարարությունների մասին մանրամասն տե՛ս Мелконян Р., *Погромы греков и армян в Турции 6-7 сентября 1955 года*, Историческое пространство. Проблемы истории стран СНГ, 2015, 1, стр. 269-275:

³⁴ Հաշվի առնելով վարչապետի մեծ ծանրաբեռնվածությունը՝ Գարեգին արքեպիսկոպոսը հաճախ հենց Էրայուի միջոցով էր փորձում կապ հաստատել Մենդերեսի հետ: Մասնավորապես, հենց նրա միջոցով էր Պոլսի հայոց պատրիարքը 1957 թ. փորձում թուրքական կառավարության աջակցությունը ստանալ Գալուստ Գյուլբենկյանից ժառանգություն ստացած 80 (այլ

աղբյուրներով՝ 170) կիլոգրամ ոսկին Թուրքիա բերելու և իրացնելու հարցում: Տե՛ս ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.870.7, էջ 20-21, n° 30.1.0.0/133.868.1, էջ 5:

³⁵ Տե՛ս ԹՀՎՀԱ n° 30.1.0.0/133.867.11:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս Գևորգյան Ա., 1960 թ. Թուրքիայի ռազմական հեղաշրջման արտացոլումը Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթի էջերում, Արևելագիտության հարցեր, 2017, թիվ 13, էջ 43-44:

³⁸ Տե՛ս E. İzzet Benice ve Ermeni Patriğinin Menderes'e yazdığı mektup açıklandı, Milliyet, sayı 3700, 12.09.1960, s. 1.

գրած է»³⁹: Թուրքական «Ջումհուրիյեթի» էջերում այդ օրերին անգամ տեղեկություն է հայտնվում այն մասին, որ հայտնի 5 պոլսահայերից բաղկացած մի խումբ հանդես է եկել պատրիարքի հրաժարականի պահանջով⁴⁰: Գարեգին սրբազանը, հակադարձելով մատույլի կողմից հնչող մեղադրանքներին, ընդունում է, թե ինքը «համակրություն ուներ Մենտերեսի անձին հանդեպ»՝ միաժամանակ շեշտելով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության համար բոլոր ժամանակներում արդիական մարսիմը՝ «մենք օրոտան կատավարութեան հնազանդելու պարտաւոր ենք»⁴¹: 80-ամյա պատրիարքը համայնքի անվտանգությունը երաշխավորելու դիրքերից հանդես գալու այս քաղաքականությունը շարունակում է նաև հեղաշրջումից հետո: Մայիսի 30-ին Գարեգին արքեպիսկոպոսը «մոտաւորապէս 20 վայրկեանի տեսակցութիւն» է ունենում Ստամբուլի նահանգապետի պարտականությունները կատարող բանակի գեներալ Ռենիք Թուլգայի հետ: Նույն օրը հրապարակվում է նրա նամակը՝ ուղղված երկրի փաստական ղեկավար, Ազգային միասնության կոմիտեի նախագահ Ջեմալ Գյուրսելին, որում Հայոց պատրիարքը վերահաստատում է Թուրքիայի հայ քաղաքացիների հավատարմությունն օրվա իշխանություններին⁴²:

³⁹ Տե՛ս Գարեգին պատրիարքին կողմէ անկեալ վարչապետին գրուած նամակը հրատարակուեցաւ, Ժամանակ, թիվ 17046, 12.09.1960, էջ 1:

⁴⁰ Տե՛ս *Ermeni cemaati Patrik Haçaduryanı protesto ederek istifasını istiyor*, Cumhuriyet, sayı 12757 13.09.1960, s. 1: Թերթը նշում է 5 պոլսահայերի անունները՝ Եդուարդ Քեզազ, Թաթուլ Ալիքսանյան, Նուրիան Օզալթուն, Արա Ալթունյան և Վարդգես Գարբիելյան:

⁴¹ Տե՛ս *Ս. Պատրիարք Հօր նամակին արձագանքը թուրք մամուլին մէջ*, Ժամանակ, թիվ 17047, 13.09.1960, էջ 1:

⁴² Տե՛ս *Զեկոյց պատրիարքարանի*, Ժամանակ, թիվ 16974, 02.06.1960, էջ 1: Բնութագրական է, որ նամակի տեքստում Գարեգին պատրիարքը կիրառել է «այս հարեները գովանենք հանդիսացող և այս չքնաղ երկրում դրա բարիքներից օգտվող հավատարիմ հայ քաղաքացիներ» (թրք.՝ «bu Vatamın bir evladı ve bu güzel

Քաղաքական այս կտրուկ շրջադարձը գալիս է փաստելու, որ վարչապետ Ադնան Մենդերեսի հետ Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի շուրջ մեկ տասնամյակ տևած մտերմությունն առաջին հերթին անձնական կապերի միջոցով պոլսահայ համայնքի անվտանգությունն ու կայուն զարգացումն ապահովելու միջոց էր:

**ВЗАИМООТНОШЕНИЯ АРМЯНСКОГО
КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ПАТРИАРХАТА И ТУРЕЦКИХ
ВЛАСТЕЙ В КОНТЕКСТЕ ЛИЧНЫХ КОНТАКТОВ
ПАТРИАРХА ГАРЕГИНА ТРАПЕЗУНДСКОГО С ПРЕМЬЕР-
МИНИСТРОМ АДНАНОМ МЕНДЕРЕСОМ**

**Геворкян Аршак
(Резюме)**

1950 год для армянской общины Турции ознаменовался двумя стержневыми событиями. Во-первых, в результате майских выборов к власти пришла Демократическая партия Джемала Байара и Аднана Мендереса, которая придерживалась мнимой либеральной политики по отношению к национальным меньшинствам. Во вторых, в декабре, после семилетних тщетных попыток, удалось выбрать нового главу Константинопольского патриархата ААЦ, в лице Гарегина архиеп. Хачатуряна.

С первых дней пребывания на патриаршем престоле Гарегин Трапезундский с рвением взялся за работу над установлением хороших отношений с властями и, в особенности, с премьер-министром Аднаном Мендересом. Патриарх часто использовал эти

Vatanda ve onun nimetlerinden müstefit olan sadık ermeni vatandaşlar») ձևակերպումը:

связи, чтобы добиться содействия турецкого правительства в решении самых разных проблем армянской общины.

Настоящая статья является попыткой обрисовать общие контуры отношений Мендереса и армянского священнослужителя в свете архивных документов и публикаций прессы данного периода.

**THE INTERRELATIONS BETWEEN THE ARMENIAN
PATRIARCHATE OF CONSTANTINOPLE AND TURKISH
AUTHORITIES IN THE CONTEXT OF PATRIARCH GAREGIN
OF TRABZON'S PERSONAL CONTACTS WITH PRIME
MINISTER ADNAN MENDERES**

Gevorkian Arshak
(Summary)

For the Armenian community of Istanbul the year 1950 was marked by two pivotal events. Firstly, elections in May brought to power the Democratic Party of Jelal Bayar and Adnan Menderes that pursued putative liberal policies toward national minorities. Secondly, after seven years of vain attempts, a new head of Armenian Patriarchate of Constantinople – Garegin Archbp. Khachatourian was elected.

Since his first days at the Patriarchal See Garegin of Trabzon has passionately initiated the establishment of good relations with authorities, in particular with Prime Minister Adnan Menderes. Patriarch often used those connections to persuade Turkish government to help to address various problems of the Armenian community.

The present paper is an attempt to chalk out the broad contours of Armenian clergyman's relations with Menderes in the light of archival documents and press publications of the given period.

*Հովսեփյան Լևոն**

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ**

Բանալի բառեր՝ զինվորականություն, Արդարություն և զարգացում կուսակցություն, զինված ուժեր, անվտանգային ինքնություն, արտաքին քաղաքականություն, անվտանգային քաղաքականություն

Ներածություն

Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության մեջ տեղի են ունեցել փոխկապակցված և փոխներազդող մի շարք գործընթացներ, որոնք էականորեն վերաձևել են այդ պետության անվտանգային քաղաքականությունը: Ռազմաքաղաքացիական փոխհարաբերությունների (ՌՔՓ) արմատական վերանայումն ու բանակի քաղաքական դերակատարության թուլացումն առանցքային նշանակություն ունեցան այդ հարցում: Արդարություն և զարգացում կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) կառավարությունների երկարատև ու համառ քայլերի արդյունքում զինվորականության քաղաքական դերակատարության թուլացումն էական ազդեցություն ունեցավ անվտանգային ու արտաքին քաղաքական նոր առաջնահերթությունների սահմանման ու դրանց անկաշկանդ իրականացման համար: Բանակը, որն ավանդաբար հանդիսանում էր քաղաքացիական

* Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, Էլ. փոստ՝ levhovsa@gmail.com

իշխանություններին զսպող առանցքային ներպետական գործոններից, այլևս գտնվում է քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ու ազդեցության ներքո: Ջինվորականության դերի թուլացումը բերեց երկրի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ քաղաքացիականների ինքնավստահության, քանի որ որպես զսպող, հակակշռող գործոն բանակի դերն այլևս չեզոքացված էր:

Ջինված ուժերի գլխավոր շտաբը (այսուհետ՝ ՋՈւ ԳՇ) հատկապես 1980-1990-ական թթ. գլխավոր դերակատարություն ստանձնեց արտաքին և անվտանգային քաղաքականության օրակարգի սահմանման ու իրականացման հարցում: Թուրք հետազոտող Գ. Օզջանը նշում է, որ 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորականությունը ոչ միայն օրենսդրական ու իրավական դաշտի միջոցով մեծացրեց իր դերակատարությունը պետական համակարգում, այլև ապահովեց բանակի առանցքային դերակատարությունն ու ազդեցությունը արտաքին քաղաքականության ոլորտում¹:

1980-1990-ական թթ. արտաքին քաղաքական, անվտանգային մի շարք հիմնախնդիրների նկատմամբ քաղաքական ուժերի մոտեցումները առարկայական կիրառում չէին ստանում բանակի կողմից գծված «կարմիր գծերի» պատճառով, և բանակը մնում էր որոշումների կայացման առանցքային դերակատար: Այդ ժամանակաշրջանի կառավարությունները չկարողացան դուրս գալ բանակի նախանշած սահմաններից՝ քրդական հիմնախնդրի, կիպրական հարցի կարգավորման իրենց նոր մոտեցումները

կյանքի կոչելու առումով²: Ունենալով ինստիտուցիոնալ ինքնավարության (institutional autonomy) բարձր աստիճան՝ զինված ուժերը (այսուհետ՝ ՋՈւ) գործել են ոչ միայն որպես երկրի արտաքին սահմանների պաշտպանության ինստիտուտ, այլ նաև որպես քաղաքական համակարգի առանցքային տարր³:

Արտաքին ու անվտանգային քաղաքականության հարցերում ՋՈւ-ի հակակշռի դերակատարությունը լավագույնս ի ցույց է դրվել 2 իրադարձություններում. 1991 թ. Օնցի պատերազմին Թուրքիայի մասնակցության հարցում նախագահ Թ. Օզալի նախաձեռնողական մոտեցմանը բանակի բարձրագույն հրամանատարության ընդդիմացումը⁴, ինչպես նաև՝ 1990-ական թթ. կեսերին բարձրագույն հրամանատարության կողմից վարչապետ Ն. Էրբաքանի իսլամամետ արտաքին քաղաքականությանը Իսրայելի հետ ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման հակադրումը⁵:

ԱԶԿ-ի կառավարման շրջանում պետության իրավական ու ինստիտուցիոնալ ոլորտում ձեռնարկված բարեփոխումների արդյունքում բանակը կորցրեց արտաքին քաղաքականության

² Aksu M., Türk dış politikası karar alma mekanizmasında Türk silahlı kuvvetlerinin etkinliği ve 2003 sonrası değişim, Süleyman Demirel Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi, Y.2012, C.17, S.3, s. 454.

³ Eldem T., Democratic Control and Military Effectiveness of the Turkish Armed Forces, Reforming Civil-Military Relations in New Democracies: Democratic Control and Military Effectiveness in Comparative Perspectives, Ed. A. Croissant, D. Kuehn, Springer International Publishing AG 2017, p. 171.

⁴ Նախագահ Օզալի քաղաքականության և որոշման արդյունքում Թուրքիան կարևոր և էական աջակցություն ցույց տվեց կողիցիոն ուժերին, սակայն բուն ռազմական գործողություններին ընդդեմ Իրաքի չմասնակցեց: Ավելի մանրամասն տե՛ս՝ Brown S. C., Turkey in the Gulf wars of 1991 and 2003, Turkish Studies, Vol. 8, No. 1, March 2007:

⁵ Bir Ç. and Sherman M., Formula for Stability: Turkey Plus Israel, Middle East Quarterly, Fall 2002, pp. 23-33.

¹ Özcan G., The changing role of Turkey's military in foreign policy making, UNISCI Discussion Papers, No 23, May 2010, <http://www.redalyc.org/pdf/767/76715004003.pdf>

ոլորտում որոշումների կայացման վրա ունեցած իր ազդեցիկ դերակատարությունը⁶: Դա լավագույնս ի ցույց դրվեց 2005 թ. և հատկապես 2010 թ. Ազգային անվտանգության քաղաքական փաստաթղթերի (Milli Güvenlik Siyaset Belgesi) մշակման ու ընդունման գործում⁷: Դրա առավել ցայտուն դրսևորումներից էր ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության ակտիվությունը հասկապես Մերձավոր Արևելքում: Թուրք հետազոտող Մ. Ալթունըզընը իրավացիորեն նշում է, որ ներքին քաղաքական կյանքում վերափոխումները և հատկապես բանակի դերակատարության թուլացումը ԱԶԿ-ին Մերձավոր Արևելքում Թուրքիայի արտաքին քաղաքականության սպասանվտանգայնացման (desecuritization) հնարավորություն տվեց⁸: Հենց արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության սպասանվտանգայնացումը նաև հնարավոր դարձրեց արտաքին քաղաքական օրակարգի սահմանումը կենտրոնացնելու ԱԶԿ-ի ձեռքում: ՋՈւ ԳՇ Ռազմական ակադեմիաների հրամանատարության կողմից 1990-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնադրությունների մասին հրատարակված աշխատության մեջ նշվում էր, որ «Մերձավոր Արևելքում Թուրքիայի առաջնորդ դառնալու ձգտումները ոչ միայն անհիմն, այլև մերժելի են»⁹: Նման աշխատությունների հրատարակումներով՝ ՋՈւ ԳՇ-ն տարբեր

⁶ Balci A., Türkiye Dış Politikası: ilkeler, aktorler, uygulamalar, Istanbul, 2013, s. 261-262.

⁷ Ավելի մանրամասն տես Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Երևան, 2014:

⁸ Altunışık Benli M., Turkey's Soft Power in a Comparative Context: The South Caucasus and the Middle East, The Great Game in West Asia, ed. M. Kamrava, Oxford University Press 2016, pp. 172.

⁹ Koçer G., 1990'lı yıllarda askerî yapı ve Türk dış politikası, ODTÜ Gelişme Dergisi, 29 (1-2), 2002, s. 100.

հարցերի ու խնդիրների նկատմամբ արտահայտում էր իր մտտեցումները:

Ուստի, ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության տեսլականի կյանքի կոչման համար բանակի ինստիտուցիոնալ ինքնավարությունն ու դերը սահմանափակող լուրջ գործոն էր: Զինվորականության դերակատարության թուլացումը ԱԶԿ-ին ազատեց «կապանքներից» և արտաքին ու անվտանգային քաղաքականության ոլորտում լիակատար ազատություն տվեց:

Կառավարության ակտիվ ջանքերը ՌԲՓ-ի վերափոխման, բանակի քաղաքական դերակատարության ու ազդեցության նվազեցման ուղղությամբ նպատակ ունեին ապահովել այդ քաղաքական ուժի կենսունակությունը, ապահովագրել հնարավոր վտանգներից, և պարարտ հող պատրաստել սեփական տեսլականի վրա հիմնված արտաքին քաղաքականության իրականացման համար:

Բանակի ազդեցիկ դերը կաղապարում էր ԱԶԿ-ի հավակնոտ արտաքին քաղաքականությունը՝ դա ընկալելով որպես արկածախնդրային: Ինչպես նկատում է Ջ. Օնիշը՝ Մերձավոր Արևելքի և իր ընդարձակ հարևան տարածաշրջանների նկատմամբ Թուրքիայի քաղաքականության աճն ու շեշտադրումները պայմանավորված էին նաև երկրի ներսում, ներպետական համակարգում գոյություն ունեցած ուժային հարաբերակցությունների փոփոխություններով: Թուրքիայի քաղաքական համակարգի առանցքային դերակատարներ հանդիսացող զինվորականությունն ու քեմալական բյուրոկրատիան, այդ թվում նաև արտաքին գերատեսչությունը, կորցրեցին պետության մեջ գերակա կարգավիճակը, քանի որ

Արևելագիտության հարցեր, հ. 14, 2018

ԱԶԿ-ն հեզեմոն կարգավիճակ ձեռք բերեց քաղաքական ու պետական համակարգում¹⁰:

Անվտանգային ինքնության փոխակերպումը. հին և նոր մոտեցումներ

Զինվորականության դերի թուլացմամբ ԱԶԿ-ն արտաքին քաղաքականության հարացույցի փոփոխության լայն հնարավորություն ունեցավ: Մկսեց վերաձևման ենթարկվել նաև այդ երկրի անվտանգային ինքնությունը¹¹ (security identity), որն արտաքին քաղաքականության, աշխարհաքաղաքական նոր տեսլականի անբաժանելի մասն է: Երկրի ներսում իսլամական ինքնության և թուրքական ազգայնամոլության աճն ու դրանց նորմի միաձուլումն էական ազդեցություն ունի արտաքին քաղաքականության վրա: ԱԶԿ-ի նոր ազգայնականությունը, որում գերակայող է իսլամականությունը (*կամ իսլամական ինքնությունը*)¹², անպայմանորեն ազդում է արտաքին քաղաքականության և անվտանգային ընկալումների վրա:

Բացի այն ակնհայտ իրողությունը, որ Թուրքիայի ներկայիս արտաքին քաղաքականության մեջ չափազանց մեծ է ինքնության դերը, այն լրջորեն ազդում է նաև անվտանգային քաղաքականության վրա՝ վերափոխելով ու վերակերտելով անվտանգային ինքնությունը, ինչը երկար ժամանակ հիմնված էր քեմալական աշխարհընկալման ու նորմատիվային, արժեքային բազայի վրա: Այստեղ չափազանց կարևոր է ռազմական մշակույթը, որը թեև դժվար ձևափոխվող է, սակայն այն էականորեն ազդեցություն է կրում պետության քաղաքացիական, քաղաքական և ռազմավարական մշակույթից: Ռազմական մշակույթը մենք դիտարկում ենք առավելապես նորմատիվային առումով, այսինքն՝ այն նորմերը, արժեքները, ընկալումներն ու գաղափարները, որոնք ընկած են դրա հիմքում: Բնականաբար դոմինանտ սոցիալական ու գաղափարախոսական արժեհամակարգը երկար տարիների կայուն գոյության ընթացքում ազդում է նաև ռազմական մշակույթի վրա: Սա էլ անվտանգային ինքնության կարևոր բաղադրիչներից է:

Թուրքական զինվորականության աշխարհաքաղաքական ու արտաքին քաղաքական մոտեցումներն ու ընկալումները նախկինում տեղավորվում էին քեմալական պաշտպանողական արտաքին քաղաքականության¹³ մեջ, որը հետօսմանյան հանրապետական Թուրքիայի ռազմաբյուրոկրատական էլիտայի ռազմավարական մտածողության անքակտելի մասն էր երկար

¹⁰ Oniş Z., Turkey and the Arab Revolutions: Boundaries of Regional Power Influence in a Turbulent Middle East, Mediterranean Politics, Vol. 19, No. 2, 2014, p. 207.

¹¹ Եզրույթը շրջանառության մեջ է դրվել գերմանացի հետազոտող Լ. Գյոթշելի կողմից, ըստ որի՝ անվտանգային ինքնությունը երկար ժամանակ պետության բնակչության և քաղաքական էլիտայի կողմից յուրացված անցյալի վարքագծի, ընկալումների ու միջերի արդյունքն է: Անվտանգային ինքնությունը կարող է վերաձևման ենթարկվել կախված արտաքին միջավայրի նկատմամբ երկրի տեղի ու դերի վերագնահատումից: Անվտանգային քաղաքականության ընտրությունը պայմանավորված է նաև անվտանգային ինքնությամբ: Stü Goetschel L., The Foreign and Security Policy Interests of Small States in Today's Europe, Small States inside and outside the European Union: Interests and Policies, ed. L. Goetschel, Springer-Science+Business Media, 1998, pp. 13-33:

¹² Saraçoğlu C., Demirkol Ö., Nationalism and Foreign Policy Discourse in Turkey Under the AKP Rule: Geography, History and National Identity, British Journal of Middle Eastern Studies, Vol. 42, No. 3, 2015, pp. 306-307.

¹³ Սա կարելի է դիտարկել պաշտպանական ռեալիզմի տեսության շրջանակում, ըստ որի՝ պետությունը որդեգրում է առավելապես պաշտպանական, ստատուս-քվոյի պահպանմանն ուղղված, չափավոր ու զուսպ արտաքին քաղաքական ռազմավարություններ:

ժամանակ¹⁴: Յ. Լեսերը նկատում է, որ ժամանակակից հանրապետության պատմության գրեթե ողջ ընթացքում անվտանգային մտածողությունը ձևավորվում էր բարձրագույն գինվորականության նեղ խմբի, արտաքին գերատեսչության պաշտոնյաների ու աշխարհիկ էլիտաների կողմից, որոնց միավորում էր գաղափարական ընդհանրությունն ու աշխարհիկությունը¹⁵: Եվ քանի որ նշյալ դերակատարների միասնականությունն ու պետական համակարգում գերակայությունը մշտական կամ շարունակական երևույթ էր, դա էլ ձևավորում էր ոչ միայն անվտանգային քաղաքականության օրակարգը, այլ նաև՝ անվտանգային ինքնությունը: Այս համատեքստում կարևոր էր բանակի՝ պետական համակարգում նաև համակարգաստեղծ ինստիտուտի դերակատարությունը, որից այն այլևս զրկված է:

Այդ ռազմավարական մտածողության իմաստը, որքան հնարավոր է, Թուրքիան տարբեր ռիսկերից ու արկածախնդրություններից հեռու պահելն էր: Պաշտպանողական աշխարհաքաղաքականության մեջ առաջնայինը Թուրքիայի տարբեր ռիսկերով ու վտանգներով լեցուն աշխարհագրական միջավայրում գտնվելու հանգամանքը, և դրանով պայմանավորված երկրի միջազգային քաղաքականությունը ձևավորելու հարցում բանակի ակտիվ դերակատարության ստանձնումն էր՝ որպես առաջնային դերակատարի¹⁶:

Զինվորականության դերակատարության թուլացմամբ ԱԶԿ-ն չեզոքացրեց նաև արտաքին քաղաքականության վրա նրանց ազդեցությունը՝ ձևավորելով սեփական արտաքին քաղաքական խոսույթն ու առաջնահերթությունները: Նոր աշխարհաքաղաքական տեսլականը վերափոխեց ազգային պետության հայեցակարգը, պետական ինքնության նկատմամբ քեմալական դիսկուրսը՝ վերափոխելով նաև Թուրքիայի միջազգային և տարածաշրջանային դերակատարությունները¹⁷ կամ առնվազն դերային ընկալումները: ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո «Խաղաղություն երկրում, խաղաղություն աշխարհում» քեմալական արտաքին քաղաքական կարգախոսի և քեմալական աշխարհայացքի հիման վրա ձևավորված պաշտպանողական արտաքին քաղաքական խոսույթի գերակայությունն աստիճանաբար թուլացավ¹⁸: Փոխարենը, երկրի ներսում ներքին համակարգային փոխակերպումներով հանդերձ՝ ԱԶԿ-ն նախկին քեմալական աշխարհաքաղաքական տեսլականը փոխարինեց Թուրքիայի՝ քաղաքակրթական ու իսլամական ինքնությամբ կառուցվող տեսլականի, որում ստանձնելիք դերակատարությունն ու բազմատարածաշրջանային ինքնությունն առաջնային էին¹⁹:

Ուսումնասիրելով թուրքական բանակին բնորոշ աշխարհաքաղաքական մտածողության բաղադրիչները՝ Մ.

¹⁴ Yeşiltaş M., The Transformation of the Geopolitical Vision in Turkish Foreign Policy, Turkish Studies, Vol. 14, No. 4, 2013, pp. 661-687.

¹⁵ Lesser I., The Evolution of Turkish National Security Strategy, Turkey's Engagement with Modernity, Conflict and Change in the Twentieth Century, ed. C. Kerslake, K. Oktem, P. Robins, London: Palgrave Macmillan 2010, p. 263.

¹⁶ Yeşiltaş M., The Transformation of the Geopolitical Vision in Turkish Foreign Policy, p. 666.

¹⁷ Արտաքին քաղաքականության մեջ ազգային դերակատարման հայեցակարգի մասին ավելի մանրամասն տես Holsti K., National Role Conceptions in the Study of Foreign Policy, International Studies Quarterly, Vol. 14, No. 3 (Sep. 1970), Başer E., Shift-of-axis in Turkish Foreign Policy: Turkish National Role Conceptions Before and During AKP Rule, Turkish Studies, Vol. 16 (3), 2015.

¹⁸ Yeşiltaş M., The Transformation of the Geopolitical Vision in Turkish Foreign Policy, pp. 661-687.

¹⁹ Նույն տեղում, էջ 670-671:

Յեշիլթաշը փաստում է, որ դա էական գործոն էր երկրի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ իրեն բացառիկ դերակատարություն վերապահելու տեսանկյունից: Բանակն օգտագործում էր աշխարհաքաղաքականությունը Թուրքիան ոչ միայն աշխարհագրականորեն, այլև որպես սոցիալական օրգանիզմ կերտելու, այսինքն՝ հասարակությունը մշակութապես ու զաղափարապես կերտելու նպատակով: Բանակի աշխարհաքաղաքական մտածողությունը ազգայնական էր, որն իրեն էր վերապահում թուրքական հայրենիքի ու թուրքական ինքնության (էթնիկական) խնամակալությունն ու պաշտպանությունը: Թուրքական ինքնությունը դիտարկվում է էթնոցենտրիզմի դիրքերից, որը պետք է ապահովի թուրքական պետության հոմոգենությունը²⁰: Չնայած Թուրքիայի աշխարհագրական դիրքն ու աշխարհաքաղաքական բացառիկությունն առանցքային են թե քեմալական, և թե այլընտրանքային աշխարհաքաղաքական մտածողությունների համար, այդուհանդերձ, ինդիքը դրանց յուրովի վերարժևորման մեջ է, որն էականորեն է անդրադառնում արտաքին ու անվտանգային քաղաքականության շահերի ու տեսլականի փոփոխության վրա: Օրինակ՝ քեմալական աշխարհաքաղաքական մտածողության առանցքային բաղադրիչներից էր հոմոգեն, էթնիկապես միատարր հասարակության ու ազգային պետության կայացումն ու զարգացումը, մինչդեռ ԱԶԿ-ն որպես այլընտրանքային աշխարհաքաղաքական մտածողության կրող՝ թուրքական պետության տեղն ու դերը դիտարկվում է առավելապես իսլամական քաղաքակրթական արեալի տիրույթում, ապա էթնիկացված հանրույթի մոդելով: Իսկ այս հասարակական

մոդելի մեջ առավել էական գործոն է դառնում իսլամական բաղադրիչը:

ԱԶԿ-ն աստիճանաբար փոխեց ոչ միայն Թուրքիայի աշխարհաքաղաքական տեսլականն ու արտաքին քաղաքականության ընկալումները, այլև ձևավորեց անվտանգության նոր ինքնություն, որն իր մեջ ամբողջացնում էր մի կողմից ավանդական ընկալումները, մյուս կողմից այնպիսի նոր իրողություններ, ինչպիսիք են՝ Թուրքիայի տարածաշրջանային հավակնություններն ու իրեն վերապահվող պատասխանատվությունը կամ առաքելությունը հարակից տարածաշրջաններում:

Այս համատեքստում ուշագրավ է թուրքական բանակի դերի վերահիմաստավորման արդի խոսույթը: Անխուսափելիորեն, Թուրքիայի իշխանությունների՝ արտաքին քաղաքականության ու աշխարհաքաղաքական տեսլականի վերասահմանման մեջ վերափոխվում է նաև թուրքական բանակի նոր առաքելության շրջանակը: Այս առումով բավական բնութագրական է ԱԶԿ-ի գլխավոր քարտուղար Մ. Շահինի՝ 2018 թ. փետրվարի 21-ին Աֆրինի ռազմագործողության կապակցությամբ հնչեցրած միտքը, որ «ոչ միայն Անատոլիայի և Թրակիայի, այլև ողջ ճնշված և տուժված ժողովուրդների, իսլամական համայնքի վերջին հայրենիքն այս հողն է, վերջին բանակը թուրքական բանակն է»²¹: Մի քանի անգամ Էրդողանն իր ելույթներում ընդգծելով այդ շեշտադրումը՝ թուրքական բանակը ներկայացրել է որպես նաև տարածաշրջանում ճնշվածների ու տառապյալ ժողովուրդների պաշտպանության երաշխավոր: Այսպիսով, բանակին վերագրվում

²¹ AK Parti Genel Sekreteri Şahin: Bütün İslam ümmetinin son ordusu Türk ordusudur, <https://aa.com.tr/tr/politika/ak-parti-genel-sekreteri-sahin-butun-islam-ummetinin-son-ordusu-turk-ordusudur/1066170>

²⁰ Öğür B., The army in Turkey and geopolitical mentality (Türkiye’de Ordu ve Jeopolitik Zihniyet), Book Review, Turkish Studies, Vol 19, No. 1, 2018, pp. 166-168.

է նաև քաղաքակրթական ու արժեքային նոր առաքելություն, ինչպես նաև դուրս է քեմալական «թուրքական հայրենիքի» պաշտպանության պատասխանատվության հստակ սահմաններից ու ընկալումներից:

Ինչպես իրավացիորեն նշում են թուրք հետազոտողներ Ջ Սարաչօղլուն և Օ. Դեմիրքոլը՝ մինչ քեմալական ազգայնականությունը Թուրքիայի տարածքը մեկնաբանում էր պաշտպանողական տեսանկյունից, որպես հայրենիք, որն ազատագրվել էր և դեռ պետք է պաշտպանվեր արտաքին ու ներքին թշնամական անվերջանալի դավադրություններից, ԱՉԿ-ական ազգայնականությունն այդ նույն աշխարհագրությունը դիտարկում է առավելապես հավակնոտ դիրքերից՝ որպես մշակութային ու քաղաքական կենտրոն, որից պետք է տարածվի Թուրքիայի քաղաքական ազդեցությունը հարևան տարածաշրջաններում²²: Այս համատեքստում, ըստ Հ. Թաֆաքի, հետքեմալիստական (post-Kemalist) արտաքին ու ներքին քաղաքականության բաղկացուցիչները կամ նորմերը՝ օսմանականություն, ապալեթնիկացված ազգություն, թուրքական իսլամի խթանում և իսլամական ինտերնացիոնալիզմ, վերաձևեցին Թուրքիայի արտաքին քաղաքականությունը քաղաքակրթական առումով և զարգացրեցին նախկին Օսմանյան տիրապետության տակ գտնված իսլամական համայնքների հետ կապերը²³:

Կարող ենք ասել, որ արտաքին ու աշխրհաքաղաքական նոր տեսլականի որդեգրմամբ արդեն իսկ վերափոխման է ենթարկվել Թուրքիայի անվտանգային ինքնությունը: Թե ինչպիսի արտաքին ու անվտանգային քաղաքականություն կընդունի պետությունը,

կախված է նրա անվտանգային ինքնությունից²⁴: Երկրում տեղի ունեցած ինստիտուցիոնալ, օրենսդրական, արժեքային վերափոխումները կերտեցին անվտանգության նոր ինքնություն, որը էականորեն տարբերվում էր անվտանգության քեմալական ընկալումներից ու ինքնությունից: ԱՉԿ-ն Թուրքիայի անվտանգության ավանդական պատկերացումները (քրդական հիմնախնդիր, տարածքային մասնատման վտանգ, ռազմական մեծ ներուժի ապահովում) կարողացավ սինթեզել այնպիսի նոր ընկալումների հետ, ինչպիսիք են՝ տարածաշրջանային առաջնորդությունը, ակտիվ ներգրավվածությունն ու պատասխանատվությունն իր հարակից տարածաշրջանային անվտանգության համակարգերում, տարածքային հավակնությունները և այլն:

Անվտանգային քաղաքականության միտումները.

հավակնություններ, միլիտարիզացիա, անվտանգայնացում

Վերջին տարիներին Թուրքիայի արտաքին ու անվտանգային քաղաքականությունն էական վերափոխումների է ենթարկվել, որոնք ինչպես արտաքին միջավարի, այնպես էլ ներքին համակարգային փոխակերպումների հետևանք են: Ակնհայտ է, որ Թուրքիայի ներքաղաքական և ներպետական դաշտում վերջին տարիներին տեղի ունեցած գործընթացներն էականորեն ազդում են ինչպես այդ երկրի արտաքին քաղաքական առաջնահերթությունների սահմանման, այնպես էլ անվտանգային քաղաքականության վերաձևման վրա: Չափազանցություն չէ պնդել, որ արդի անվտանգային քաղաքականությունն ու

²² Saraçoğlu C., Demirkol Ö., նշվ. աշխ., էջ 312.

²³ Tabak H., The Kosovar Turks and Post-Kemalist Turkey: Foreign Policy, Socialisation and Resistance, London: I.B. Tauris, 2016, p. 272.

²⁴ Goetschel L., The Foreign and Security Policy Interests of Small States in Today's Europe, pp. 13-33.

արտաքին քաղաքականությունը ձևավորվում են առավելապես այդ երկրի ներքին իրողություններով, այսինքն՝ շատ դեպքերում ներքաղաքական գործոնների համախումբն է պայմանավորում դրանք:

Արդի անվտանգային քաղաքականության տեսանկյունից ուշագրավ են միլիտարիզացիայի միտումները: Ներկայումս Թուրքիայում արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության միլիտարիզացիան, բացի արտաքին գործոնները, պայմանավորված է նաև քաղաքական էլիտայի ու վերնախավի ընկալումներով ու տարածաշրջանային հավակնություններով: Եթե նախկինում արտաքին քաղաքականության մեջ ռազմական ներուժի ակնհայտ դերը հիմնականում կապված էր զապման քաղաքականության, սպառնալիքների դիմագրավման հետ, ապա ներկայումս, բացի դրանից, այն ընդունել է իշխող էլիտայի ռազմաքաղաքական հավակնությունների իրականացման դերը: Այլ կերպ ասած՝ նախկինում պաշտպանողական կամ կանխարգելիչ, իսկ ներկայումս հարձակողական կամ նախաձեռնողական բնույթ է կրում:

Թուրքիայի անվտանգային ինքնության, ինչպես նաև հավակնոտ տարածաշրջանային քաղաքականության մեջ ռազմական ուժն ու կարողությունները մեծ կարևորություն ունեն: Միրիայի տարածքում իրականացված ռազմագործողությունները, Թուրքիայի տարածքից դուրս՝ Կատարում և Սոմալիում ռազմաբազաների տեղակայումը, տեղական ռազմաարդյունաբերության արագ զարգացումը ցույց են տալիս Անկարայի՝ ռազմական բաղադրիչի կարևորությունն իր զլոբալ ու տարածաշրջանային քաղաքականության մեջ:

Ռազմական վերլուծարան Ջ. Քասափոլլուի դիտարկմամբ՝ Անկարան տարածաշրջանային նոր տեսլական է սահմանել, և

զնայով մեծանում է ռազմական ներուժի միջոցով դրան աջակցելու միտումը: Թուրքիայի պաշտպանական պլանավորման և ռազմաստրատեգիական մտածողության (տեսլականի) մեջ վերջին շրջանի ամենակարևոր քայլը իր տարածքից դուրս օտարերկրյա ռազմաբազաների հիմնումն ու համալրումն էր Կատարում, Սոմալիում և Սիրիայի հյուսիսում, որով Թուրքիան ապահովեց ռազմական ներկայությունը արևելյան Միջերկրականից մինչև Ադենի ծովածոց և Պարսից ծոց²⁵: Թուրքական մամուլում տեղեկություններ հայտնվեցին 2019թ. Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության ափերին խոշոր ռազմածովային բազա հիմնելու ծրագրի մասին, որի նպատակը Արևելյան միջերկրականում թուրքական ռազմական դոմինանտության հաստատումն ու ապահովումն է²⁶: Նման բազայի ստեղծումը կիպրական խնդրում առավելությունների ապահովումն ու ուժային հարկադրանքի մեծացումն է, որի

²⁵ Kasapoğlu C., Türkiye'nin yeni bölgesel savunma vizyonu, <https://aa.com.tr/tr/analiz-haber/turkiyenin-yeni-bolgesel-savunma-vizyonu/1023221>. Բացի Կատարում և Սոմալիում բացված ռազմաբազաներից, Թուրքիան ռազմական ներկայություն ու հենակետեր ունի Հյուսիսային Կիպրոսում, Սիրիայում, Իրաքում և Ադրբեջանում: Մասնավորապես, Նախիջևանի ինքնավար հանրապետությունում առկա է մշտական զինվորական կոնտինգենտ և ռազմական խորհրդականների խումբ: Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերագնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները, Հայկական բանակ, N 4 (98), 2018, էջ 33-48:

²⁶ Դեռ 2018 թ. օգոստոսին Թուրքիայի ռազմածովային ուժերի հրամանատարությունն այդ ռազմաբազայի ստեղծման առաջարկով դիմել էր արտաքին գործերի նախարարությանը: Տե՛ս Doğu Akdeniz'de kritik hamle: Türkiye Kıbrıs'a deniz üssü kuruyor, <https://www.aydinlik.com.tr/dogu-akdeniz-de-kritik-hamle-turkiye-kibris-a-deniz-ussu-kuruyor-turkiye-aralik-2018-2>

նպատակը Հունաստանի, Կիպրոսի հանրապետության ու Բարայելի դեմ այդ շրջանում գերակայության ապահովումն է²⁷:

Իր տարածքից դուրս ռազմաբազաների տեղակայումն աննախադեպ է Թուրքիայի անվտանգային ու պաշտպանական քաղաքականության մեջ: Նախկինում ավանդաբար Թուրքիան էր իր տարածքում տեղակայում օտարերկրյա ռազմաբազաներ ու ուժեր: Թուրքիան համարվում էր անվտանգության սպառող պետություն, որի ռազմական ներուժն ու կարողությունները ամբողջացվում էին հավաքական անվտանգության ռազմավարության մեջ: Ներկայում, սակայն, Թուրքիայի ռազմական կարողությունների ու ներուժի մեծացումը հնարավորություն է տալիս սեփական անվտանգության ռազմավարության մեջ լինել ինքնաբավ և հանդես գալ անվտանգության ապահովողի ու մատակարարի դերով:

Մտրը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական միջավայրը, սպառնալիքների նոր բնույթն ու մարտահրավերները առաջին պլան էին մղում ռազմական հզոր ուժերի գոյության անհրաժեշտությունը: Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ 1990-ական թթ. կիրառվող միջոցների մեջ կարևոր դեր ուներ ռազմական գործոնը՝ ռազմական ուժի ցուցադրում ու ուժի կիրառման սպառնալիք, անդրսահմանային գործողություններ, սպառազինման ու ռազմական ծախսերի մեծություն, ռազմական դաշինքի ձևավորում և այլն: Հարկ է ընդգծել, որ ներքաղաքական կյանքում, ինչպես նաև արտաքին քաղաքականության մեջ բանակի դերի մեծացումը պայմանավորված էր նաև 1990-ականներին քաղաքական

իշխանությունների թուլությամբ և քաղաքական անկայունությամբ²⁸: Սակայն սրանք առավելապես պայմանավորված էին Թուրքիայի անվտանգային միջավայրով: Ներկայում Թուրքիայում արտաքին քաղաքականության միլիտարիզացիան, բացի արտաքին գործոնները, պայմանավորված է նաև քաղաքական էլիտայի ու վերնախավի ընկալումներով ու տարածաշրջանային հավակնություններով: Եթե նախկինում արտաքին քաղաքականության մեջ ռազմական ներուժի ակնհայտ դերը հիմնականում կապված էր զսպման քաղաքականության, սպառնալիքների դիմագրավման հետ, ապա այժմ, բացի դրանից, այն ընդունել է իշխող էլիտայի ռազմաքաղաքական հավակնությունների իրականացման դերը: Այլ կերպ ասած՝ նախկինում պաշտպանողական կամ կանխարգելիչ, իսկ ներկայում՝ հարձակողական կամ նախաձեռնողական բնույթ է կրում:

ԱԶԿ-ի ռեիզոնիստական նախապատվությունները²⁹ (preferences), որոնք ձևակերպվում են որպես պետական-ազգային շահ, ուղղված են տարածաշրջանում ստատուս-քվոյի վերանայմանը, և իշխող էլիտայի արտաքին քաղաքական, ռազմաքաղաքական հավակնությունների իրականացմանը: Էլիտայի կողմից ռազմական ծախսերի մեծացումը, ինչը պայմանավորված է գաղափարախոսական հիմքով տարածքային հավակնությունների իրականացմամբ, գուտ

²⁸ Koçer G., 1990'lı yıllarda askerî yapı ve Türk dış politikası, ODTÜ Gelişme Dergisi, 29 (1-2), 2002, s. 123-133.

²⁹ Միջազգային հարաբերությունների լիբերալիզմի տեսության մեջ պետությունների արտաքին քաղաքական նախապատվությունների կարևորության մասին տես Moravcsik A., Taking Preferences Seriously: A Liberal Theory of International Politics, International Organization, Vol. 51, Issue 4, 1997, p. 521.

²⁷ Վերջին տարիներին Արևելյան Միջերկրականում հաճախակի են լարվածությունները մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Կիպրոսի հանրապետության, Հունաստանի ու Բարայելի միջև էներգետիկ պաշարների հետախուզման ու արդյունահանման ծրագրերի պատճառով:

նախապատվություններից բխող փոփոխություն է արտաքին քաղաքական ռազմավարության մեջ³⁰: Այս համատեքստում, ինչպես արդեն վերևում անդրադարձել ենք, 1990-ական թթ. և ԱԶԿ-ի իշխանության հատկապես երկրորդ շրջանից սկսած ռազմականացման հանգամանքների միջև առկա են տարբերություններ: Երկրորդի դեպքում գերակայում են էլիտայի համոզմունքներից բխող նախապատվությունները և դրանից բխող միլիտարիզացիան:

Այս համատեքստում պետությունը ոչ թե դերակատար է, այլ ներկայացուցչական ինստիտուտ, որի միջոցով անհատների ու սոցիալական խմբերի նախապատվությունները և սոցիալական իշխանությունը վեր է ածվում պետական քաղաքականության: Անհատները, սոցիալական խմբերն իրենց նպատակներն իրագործելու համար դիմում են պետությանը, քանի որ անհատական վարքագծով հնարավոր չէ հասնել դրա արդյունավետ իրագործմանը³¹: Այսինքն, նաև արտաքին քաղաքականության մեջ պետության քաղաքականությունը պայմանավորված է անհատական կամ խմբային նախապատվությունների առաջնահերթությունից: Այս առումով, կոնստրուկտիվիստներն ընդգծում են պետության արտաքին քաղաքական նախապատվությունների ձևավորման վրա էլիտայի կամ առաջնորդի անձնային հատկանիշների, ինքնության, արժեքների, համոզմունքների ու աշխարհակարգի էական դերակատարությունը, որոնց հիման վրա էլ ձևակերպվում ու մատուցվում է ազգային-պետական շահը: Պետության ու էլիտայի ինքնությունը կարևոր է դառնում միջազգային հարաբերություններում: Այս ամենը հանգեցնում է ինչպես քաղաքական մշակույթի վերափոխմանն, այնպես էլ, որոշ

³⁰ Նույն տեղում, էջ 521:
³¹ Նույն տեղում, էջ 513-553:

դեպքերում նաև, դրանից բխող ռազմական մշակույթի կերպափոխման: Ինչպես գտնում են քննադատական կոնստրուկտիվիզմի հետևորդները՝ պետությունների ինքնությունները (state identity) կայուն և անփոփոխ չեն, զարգանում և վերամշակման են ենթարկվում մշտապես, ինչը տեղի է ունենում արտաքին ու անվտանգային քաղաքականության միջոցով: Պետության ինքնությունը մշտապես կազմավորվում և պահպանվում է արտաքին և անվտանգային քաղաքականության իրականացմամբ³²:

Ներկայիս իշխանությունների տարածաշրջանային ռեզիլիենտության քաղաքականության, հավակնությունների ու ընկալումների համատեքստում էր Էրդոհանի կողմից օրակարգ բերված «Ազգային ուխտը» (Misak-ı Milli), որը դարձավ վերջին տարիներին Թուրքիայի պաշտոնական, քաղաքական ու վերլուծական դիսկուրսի կարևոր բաղադրիչներից մեկը: Դրան գուզահեռ վերջինիս կողմից բարձրացվեց Լոզանի պայմանագրի վերանայման հարցադրումը, որը ևս պատահական չէ: 2016 թ. հոկտեմբերին Էրդոհանը հայտարարեց, որ Թուրքիայի արևմտյան և հարավային սահմաններում «Ազգային ուխտով» հռչակված նպատակները ցավալիորեն չեն իրագործվել, 20 մլն կմ² տարածքից Թուրքիայի տարածքը կրճատվել է 780 հզ. կմ², և 2016 թ. չեն առաջնորդվելու 1923 թ. հոգեբանությամբ³³: 2017 թ. նոյեմբերին Էրդոհանը հայտարարեց, որ քեմալական ազգայնական շարժման սկզբում հռչակված «Ազգային ուխտին» չեն կարողացել տեր

³² Campbell D., Writing Security: United States Foreign Policy and the Politics of Identity, Minneapolis, University of Minnesota Press, 1998, p. 1-13.
³³ Cumhurbaşkanlığı Erdoğan'dan 'Misak-ı Milli' mesajı, <http://www.hurriyet.com.tr/gundem/cumhurbaskani-erdogandan-misak-i-milli-mesaji-40252990>

կանգնել, իսկ այժմ Իրաքում և Միդիայում տեղի ունեցող զարգացումների պատճառով ստիպված են տեր կանգնել դրան: Ներկայում, ըստ նրա, Միդիայում՝ Իդլիբում և Աֆրինում թուրքական ուժերի գործողությունները «Ազգային ուխտի» տրամաբանության շրջանակում են³⁴:

Այս առումով Թ. Աքչամը պատահական չի համարում էրդոզականի կողմից «Ազգային ուխտի» օրակարգ բերելը՝ նշելով, որ այսօր Թուրքիան ավելի հզոր երկիր է, քան Առաջին աշխարհամարտից հետո, ուստի ավելի լավ հնարավորություններ ունի պետության սահմանն ըստ այդ ծրագրի ընդարձակելու համար: Խնդրի էությունը կայանում է նրանում, որ արդի պահպանողական-իսլամական էլիտան հավատացած է, որ արևմտամետ, աշխարհիկ-քեմալիստական վարչակարգերը ձախողել են «Ազգային ուխտի» իրականացման հեռանկարը, ուստի իրենք լիովին մտադիր են բավարարել և կյանքի կոչել այդ տեսլականը³⁵: Ըստ Բ. Օրանի՝ Մոսուլի նկատմամբ արդի քաղաքական խոսույթն ու պատմական իրավունքների վերարժևորումը կարող է բացատրվել ծավալապաշտության տեսանկյունից³⁶:

Ավտորիտար ռեժիմների համար բանակը որպես կանոն վեր է ածվում ռեժիմի հենարանի ու երաշխավորի, իսկ արտաքին քաղաքականության ոլորտում մեծացնում անկանխատեսելի և

ազդեցիկ վարքագիծը: Ներքին և արտաքին գործունեքով պայմանավորված ընթանում է արտաքին և տարածաշրջանային քաղաքականության միլիտարիզացիա, երբ քաղաքականության իրականացման հարցում առաջնային տեղ է հատկացվում ռազմական ներուժին: Այս առումով բնութագրական է Թուրքիայի նախագահի խորհրդական Յ. Բուլուբի կողմից Թուրքիայի նոր պաշտպանական հայեցակարգի սկզբունքների վերաբերյալ հրապարակված հոդվածը, ըստ որի՝ «անխուսափելի է նոր Թուրքիայի ռազմական ներուժի օգտագործումը դիվանագիտության մեջ... և ուժեղ դիվանագիտությունը կարող է իրականացվել ուժեղ զինված ուժերով»³⁷:

Երկրի ներսում իշխանությունների կողմից անվտանգության նոր սպառնալիքների և օրակարգի սահմանմամբ բավական ակտիվ ընթանում է հասարակական-քաղաքական կյանքի անվտանգայնացման գործընթաց: Իշխանության գալուց հետո ԱԶԿ-ի նախաձեռնած ապանվտանգայնացման ընթացաշրջանը 2013-2014 թթ. սկսեց փոխվել՝ հիմք դնելով անվտանգայնացման նոր գործընթացի: Նույն կերպ նաև արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության ոլորտում ապանվտանգայնացման նախկին քաղաքականությունը, որը որդեգրել էր Թուրքիայի կառավարությունը, ակնհայտորեն փոխվեց դեպի նոր անվտանգայնացում, երբ Թուրքիան սկսեց իր արտաքին քաղաքականությունը, հարևանների հետ հարաբերությունները կառուցել առավելապես անվտանգայնացման պրիզմայով: Միդիական հիմնախնդիրը և Թուրքիայի կողմից այդ երկրի տարածքում իրականացվող

³⁴ Erdoğan: İdlib'de Afrin'de yapılan Misaki Milli'dir, <https://www.gazeteduvar.com.tr/politika/2017/11/10/erdogan-milletin-mustafaya-sorunu-yok/>

³⁵ Akcam T., Comparing Erdoğan's Second Republic (2018) with Atatürk's First Republic (1923): Turkey's 100-Year Journey and its Relationship with the Past, https://www.academia.edu/37738480/00-0-MIT_Talk_10-23-18-M.Kemals_First_Erdog_an_Second_Republic.docx, p. 16.

³⁶ "Mosul should have been ours" statement could be explained by expansionism, <http://www.agos.com.tr/en/article/16850/mosul-should-have-been-ours-statement-could-be-explained-by-expansionism>

³⁷ Yiğit Bulut: Yeni TSK konsepti oluşuyor, direnenler var, <http://www.birgun.net/haber-detay/yigit-bulut-yeni-tsk-konsepti-olusuyor-direnenler-var-99893.html>

ռազմագործողությունը, Իրաքի հետ լարված հարաբերությունները և Բաշիքայում ռազմաբազայի տեղակայումը, Հունաստանի հետ աճող լարվածությունն ու ռազմական ուժի ցուցադրման քայլերը, արևելամիջերկրածովյան շրջանում մեծացող լարվածությունը, տարբեր երկրներում ռազմաբազաների ու հենակետերի ստեղծումը, արցախյան հիմնախնդրով պայմանավորված Թուրքիայի ապակառուցողական ու հրահրիչ վարքագիծը, ԵՄ-ի հետ սկսված դիմակայությունը, ամերիկա-թուրքական հարաբերություններում առկա անվստահությունն ու լարվածությունը, ակնհայտորեն ի ցույց են դնում արտաքին քաղաքականության կոշտ անվտանգայնացման իրողությունը: Վերջին տարիներին Թուրքիայում շարունակաբար ընթանում է հասարակական-քաղաքական կյանքի ու արտաքին և տարածաշրջանային քաղաքականության անվտանգայնացման գործընթաց, ինչը զուգակցվում է ռազմականացման բարձր տեմպերի ու որակական փոփոխությունների հետ:

Եզրակացություն

Գերգաղափարականացված ավտորիտար վարչակարգերի կառավարման պայմաններում նպաստավոր կամ շարունակական պարտադրման արդյունքում իշխող վարչակարգի գաղափարախոսությունը ներթափանցում է բանակ: Նման վարչակարգերը որպես կանոն ձգտում են ոչ միայն իրենց ենթարկեցնել բանակը կամ առավելագույն չափով մեծացնել բանակի նկատմամբ սեփական հսկողությունը, այլ նաև այն բերելու սեփական գաղափարական դաշտ: Նման իրավիճակում բանակի նկատմամբ վերահսկողությունը, թեև օրենսդրորեն կարող է պատկանել խորհրդարանին, այդուհանդերձ, փաստացիորեն անցնում է իշխող վարչակարգի ձեռքը: Հատկապես 2016 թ. ձախողված ռազմական հեղաշրջման փորձից

հետո աստիճանաբար կարող է տեղի ունենալ բանակի հրամանատարության և քաղաքական վարչակարգի սերտաճում, երբ բանակը ոչ միայն գտնվում է տվյալ գաղափարական դաշտում, այլև ստանձնում է այդ արժեքական կարգի սատարողի ու պաշտպանի գործառույթներ: Նման սերտաճման պարագայում, երբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները չեն գործում, բանակը դառնում է իշխանությունների համար գործիք թե ներքին, և թե արտաքին քաղաքականության մեջ: Որպես կանոն՝ նման համակարգերը դառնում են ավելի անկանխատեսելի և ագրեսիվ, քանի որ բանակն ամբողջությամբ գտնվում է հսկողության ու ազդեցության տակ, և զսպման ներքին մեխանիզմները բացակայում են կամ չեն գործում:

2016 թ. հուլիսյան ռազմական հեղաշրջման փորձից հետո բանակում իրականացվող մաքրագոտումները, բանակի ինստիտուցիոնալ ինքնության վերափոխման միտումներն ու քաղաքական իշխանությունների լուրջ ազդեցությունը բանակի նկատմամբ նախագահ Էրդողանի համար էական ազատություն են ապահովում նաև արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության անկաշկանդ իրականացման հարցում: Բանակն այլևս չի հանդիսանում այն էական հակակշռող ուժը, որը շատ դեպքերում հեռու էր պահում իշխանությունների անկանխատեսելի ու արկածախնդիր քայլերից: Քանի որ ավտորիտար ռեժիմներում արտաքին քաղաքականության ձևավորման մեջ չեն լինում շատ որոշում կայացնող միավորներ, առանցքային է դառնում տվյալ երկրի առաջնորդի անձնական

հատկանիշների դերը³⁸, ինչպես նաև նրա ընկալումներն ու արժեհամակարգը:

Տարիների ընթացքում բանակի քաղաքական դերի նվազեցման ուղղությամբ իրականացված օրենսդրական և կառուցվածքային փոփոխություններն էականորեն ազդել են բանակի՝ որպես ինքնավար ինստիտուտի դերակատարության վրա: Հանրապետական Թուրքիայում բանակը քաղաքական համակարգում «ֆաստացի վետոյի» իրավունքով հատուկ կարգավիճակ ուներ, երբ այն հասարակությանն ու բյուրոկրատական ապարատին սնուցում և պարտադրում էր իր արժեքները՝ դրանով դարձնելով զինվորականներին հեզմոն և դոմինանտ քաղաքական համակարգում³⁹: ՋՈւ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հաստատման և քաղաքական դերակատարության չեզոքացման ուղղությամբ ձեռնարկված բարեփոխումները նվազեցրեցին բանակի՝ որպես ինքնավար ինստիտուտի դերակատարությունը, ինչը փոխեց ՌԲՓ-ի էությունը: Մրանք էական նշանակություն ունեն այդ երկրի անվտանգային ինքնության ու անվտանգային քաղաքականության վերասահմանման ու կերպափոխման համար: ԱԶԿ-ն ոչ միայն կերպափոխեց Թուրքիայի աշխարհաքաղաքական տեսլականը, այլև ձևավորեց իր աշխարհաքաղաքական ու գաղափարախոսական տեսլականին ու աշխարհընկալմանը համապատասխան անվտանգային ինքնություն:

Բանակի հնարավոր սերտաճումը քաղաքական իշխանությունների հետ հնարավորություն կտա անվտանգային ու

արտաքին քաղաքական ոլորտում հանդես գալ ավելի համարձակ ու ազդեցիկ դիրքերից, ինչն էլ ավելի կմեծացնի իշխանությունների կողմից անկանխատեսելի քայլերի հավանականությունը: Արտաքին քաղաքականության իրականացման մեջ բանակի՝ որպես հակակշռող ինստիտուտի չեզոքացումն առավել անկանխատեսելի ու վտանգավոր կարող է դարձնել տարածաշրջանային հակամարտություններին Թուրքիայի ներգրավման տեսանկյունից: Թուրքիայում ընթացող հակաժողովրդավարական գործընթացները, իշխանությունների ավտորիտար բնույթն ու գերինքնավստահությունը մեծացնում են բանակը՝ արտաքին քաղաքականության ոլորտում որպես կարևորագույն միջոց օգտագործելու հնարավորությունը: Գնալով մեծանում են ռազմական բաղադրիչի և ուժի կիրառման միտումներն արտաքին ու տարածաշրջանային հավակնոտ քաղաքականության մեջ:

CURRENT TRENDS OF TURKEY'S SECURITY POLICY AND SECURITY IDENTITY TRANSFORMATION

Hovsepian Levon
(Summary)

The military has had influential and exclusive role not only in socio-political processes in the Republic of Turkey, but also in the sphere of definition and implementation of foreign and security policy agendas. Especially in 1980 and 90s military took leading role in constituting and making of foreign and security policies. The military and army except its guardianship role in state structure, had serious counterbalancing and checking function to civil authorities in the foreign policy sphere. The weakening of the role of the military left the AKP free from bands and

³⁸ Öztop Anıl F., Türk dış politikası yapım sürecinde karar birimlerinin etkileri, İstanbul, Gündoğan yayınları 2016, s. 100.

³⁹ Gurcan M., Gisclon M., From Autonomy to Full-Fledged Civilian Control: The Changing Nature of Turkish Civil-Military Relations (IPC-Mercator Policy Brief), August 2016, p. 15.

provided complete freedom in the field of foreign and security. The neutralization of armed forces' institutional autonomy creates favorable conditions for transformation of its institutional identity. The institutional identity of the Turkish army, which has been underlying Kemalism and secularism for many years, is continuously transforming which is also associated with the weakening and neutralizing of army's institutional autonomy in the state system. With the weakening of the military's role, the AKP has transformed the Turkish security identity which was formed on the basis of its worldview and ideological priorities and preferences. As long as the military played a major role, it laid down the main security agenda and strategy, the Kemalist security identity was continuous and dominating in the framework of the foreign policy of the state. The new geopolitical vision has transformed the concept of nation-state, Kemalist discourse to state identity by transforming Turkey's international and regional roles. The AKP gradually changed not only the geopolitical vision and foreign policy role of Turkey, but also formed a new security identity which included regional leadership, active involvement in the security systems of its adjacent regions, territorial claims, ambitions and so on. Military strength and capacities are of great importance in Turkey's security identity and policy. The military actions in Syria, outside of the territory of Turkey - the deployment of military bases in Qatar and Somalia, ensuring and strengthening military presence in regional countries, the rapid development of the defense industry demonstrate the importance of Ankara's militaristic component in its global and regional policy.

**СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ПОЛИТИКИ
БЕЗОПАСНОСТИ ТУРЦИИ И ТРАНСФОРМАЦИЯ
ИДЕНТИЧНОСТИ БЕЗОПАСНОСТИ**

**Овсебян Левон
(Резюме)**

В Турецкой республике военные имели большое влияние не только в общественно-политических процессах, но и в определении и реализации внешнеполитической повестки дня. Особенно в 1980-х и 1990-х годах военные сыграли ключевую роль как в определении

повестки дня внешней политики, так и в вопросах политики безопасности. Военные и армия, помимо роли опекуна, были также серьезным противовесом гражданским властям. Ослабление роли военных предоставило ПСР (АКР) полную свободу в осуществлении внешней политики и политики безопасности. Нейтрализация институциональной автономии ВС создает благоприятные условия для трансформации ее институциональной идентичности. Институциональная идентичность турецкой армии, в основе которой были кемализм и секуляризм, непрерывно трансформируется на протяжении последних лет, что также связано с ослаблением и нейтрализацией роли военных и институциональной автономии генерального штаба ВС в государственной системе. С ослаблением роли военных, ПСР трансформировала идентичность безопасности, сформировавшейся на основе ее мировоззрения, идеологических приоритетов и предпочтений. Пока военные имели важное значение, они определяли основную повестку дня и стратегию безопасности, а кемалистская идентичность безопасности постоянно доминировала во внешней политике государства. Новое геополитическое видение изменило концепцию национального государства, кемалистский дискурс к государственной идентичности, трансформировав международную и региональную роль Турции. ПСР постепенно меняла не только геополитическое видение и геополитический дискурс Турции, но также сформировала новую идентичность безопасности, которая включала региональное лидерство, активное участие в системах безопасности соседних регионов, территориальные претензии и так далее. Военная мощь имеет большое значение в идентичности безопасности и политики безопасности Турции. Военные операции в Сирии, за пределами территории Турции, размещение военных баз в Катаре и Сомали, увеличение военного присутствия в регионе и быстрое развитие оборонной промышленности: все это демонстрируют важность военного компонента Анкары в ее глобальной и региональной политике.

Դարբինյան Հայկ*

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԶՈՒԳԱԿՑՈՒՄԸ «ԿՈՇՏ ՈՒԺԻՆ». ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՒՆԱԼԻԶԱՅՈՒՄԸ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ

Բանայի բառեր՝ Թուրքիայի Հանրապետություն, հանրային դիվանագիտություն, «Փափուկ ուժ», «Գոշտ ուժ», «Մառը պատերազմ», «Արդարություն և զարգացում» կուսակցություն

Ընդունված է համարել, որ միջազգային հարաբերությունների եզրաբանության մեջ հանրային դիվանագիտություն հասկացությունը առավել ամփոփ 1965 թ. սահմանել է ամերիկացի դիվանագետ, Թաֆթսի համալսարանի Իրավունքի և դիվանագիտության Ֆլետչերի դպրոցի ղեկան Էդմունդ Գուլիոնը. «Հանրային դիվանագիտությունն առնչվում է հանրության ազդեցությանը արտաքին քաղաքականության ձևավորման և իրագործման վրա: Այն ներառում է միջազգային հարաբերությունների բնագավառներ, որոնք գերազանցում են ավանդական դիվանագիտության տիրույթները. կառավարությունների ներգործություն այլ երկրների հասարակական կարծիքի վրա, մեկ երկրի մասնավոր խմբերի ու հետաքրքրությունների փոխգործակցություն այլ երկրների հետ...»¹: Հարկ է նշել, որ հանրային դիվանագիտության

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ ԱԳՆ աշխատակազմի քարտուղարության կցորդ, Էլ. փոստ՝ hayk.darbinyan@ysumail.am

¹ Cull J. N., "Public Diplomacy" Before Gullion: The Evolution of a Phrase, Routledge Handbook of Public Diplomacy, New York, 2009, p. 19-23.

ինաստային ձևակերպման առումով հետագայում հնչել են մի շարք այլ տեսակետներ²:

Հանրային դիվանագիտություն եզրը կիրառվել էր նաև Գուլիոնից շատ ավելի վաղ ինչպես, օրինակ, 19-րդ դարի կեսերին ու Սոաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո³: Այն առավել հաճախ սկսեց շրջանառվել Մառը պատերազմի ամենալարված տարիներին՝ որպես քննադատություն միջազգային հարաբերությունների դերակատարների ծածուկ, ոչ հրապարակային շփումներին կամ պայմանականորեն՝ «գաղտնի դիվանագիտությանը», որը նաև, շատերի կարծիքով, 20-րդ դարում տեղի ունեցած ավերիչ պատերազմների պատճառներից մեկն էր⁴: Արդեն 21-րդ դարի սկզբին հանրային դիվանագիտություն եզրը լայն տարածում գտավ միջազգային հարաբերություններում⁵:

² Chahine J., Public diplomacy: A conceptual framework, Montreal 2010, p. 7-63,
³ Հատկանշական է, որ դիվանագիտությունն ու միջազգային շփումները հանրային դարձնելու կոչը ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի ամենահայտնի ելույթի առաջին կետն էր: Վիլսոնի ամբողջական ելույթը տե՛ս՝ Wilson W., Address of the President of the United States, delivered at a joint session of the two houses of Congress, Washington, 1918, <https://babel.hathitrust.org/cgi/pt?id=mdp.39015074797914;view=1up;seq=6;size=150> (անգլ. հասանելի էր 12, 09, 2018): Այս առումով, արձանագրենք, որ ռուսաստանյան ուսումնասիրողները ևս ընդունում են, որ Վիլսոնը լուրջ ներդրում է ունեցել դիվանագիտության հրապարակայնացման գործում, տե՛ս՝ Попов В. И., Современная Дипломатия, Москва, 2003, стр. 64:
⁴ Pamment J., New Public Diplomacy in the 21st Century: A Comparative Study of Policy and Practice, London, 2012, p. 2-3.

⁵ Մի շարք ուսումնասիրողներ համամիտ էին, որ տերմինը պետք է բաժանվի 2 մասի, որի արդյունքում ընդունելի են դարձել «Հին» և «Նոր» հանրային դիվանագիտություն եզրերը: Պայմանականորեն «Հին» կոչվող հանրային դիվանագիտության մասին առավել մանրամասն տե՛ս՝ Hocking B., Rethinking the 'New' Public Diplomacy, The New Public Diplomacy: Soft Power in International Relations, New York, 2005, p. 28-46: «Նոր» հանրային դիվանագիտության մասին առավել մանրամասն տե՛ս՝ Gonesh A., Melissen J., Public Diplomacy: Improving

Մինչև Սառը պատերազմի ավարտը հանրային դիվանագիտությունն ու փաստիկ ուժը գրեթե չէին ընկալվում Թուրքիայում և անուշադրության էին մատնված այդ երկրի արտաքին քաղաքականությունը ուղենշողների կողմից: Ընդհանուր առմամբ, արտաքին աշխարհի հետ հարաբերվելիս թուրքերը մշտապես ընկալվել են որպես «կոշտ» ուժի մարմնացում: Դա հասկապես ակնառու էր 20-րդ դարի երկրորդ կեսին. «Սառը պատերազմի ընթացքում Թուրքիան առանցքային գործընկեր էր արևմտյան պաշտպանական համակարգում: Դեպի Միջերկրական ծովի արևելք ու Մերձավոր Արևելք Խորհրդային Միության տարածման դեմ Անկարան գործում էր որպես բաստիոն»⁶:

Խորհրդային Միության փլուզման արդյունքում աշխարհաքաղաքական նոր իրավիճակի ստեղծումը, տարածարշրջանում ռազմաքաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունը, Ռուսաստանի հետ որակապես նոր հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը, ինչպես նաև Թուրքիայի անմիջական հարևանությամբ 3 նոր պետությունների առաջացումը նոր մարտահրավերներ էին Թուրքիայի արտաքին քաղաքականության համար⁷: Այս առումով պակաս կարևոր գործոն չէին նաև Միջին Ասիայում անկախությունն ձեռք բերած թյուրքալեզու պետություններն ու նրանց հետ որակապես նոր

Practice, Clingendael diplomatic papers No 5, The Hague, 2005, p. 7-15, Seib P., Toward a New Public Diplomacy: Redirecting U.S. Foreign Policy, New York, 2009:

⁶ Larrabee F., Lesser I., Turkish Foreign Policy in an Age of Uncertainty, Santa Monica, CA, 2003, p. 1.

⁷ Aydın A., Three Types of Turkish Foreign Policy After The Cold War on The Middle East, Süleyman Demirel Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi, C. 18, S. 3, Isparta, 2013, s. 477-478.

հարաբերություններ կառուցելու անհրաժեշտությունը⁸: Արտաքին քաղաքականության ոլորտում այս մարտահրավերները Թուրքիայի առջև ծառայեցին մի ժամանակաշրջանում, որը բավականին խրթին էր այդ երկրի համար մի քանի առումներով: Ֆինանսատնտեսական ճգնաժամերը, քաղաքական, գաղափարական տարբեր հոսանքների միջև անզիջում պայքարը լուրջ ցնցումների էին ենթարկում Թուրքիան, որի հետևանքով. «XX դարի վերջին տասը տարիները համարվում են «կորսված», «անհաջող կռալիցիոն կառավարությունների», «կոռուպցիոն սկանդալների» տասնամյակ»⁹, որին զուգարվել էր նաև նոր բովանդակությամբ արտաքին քաղաքականություն ունենալու անհրաժեշտությունը: Ընդհանուր առմամբ, այս խնդիրը բաց մնաց մինչև 2000-ականների սկիզբը, երբ Թուրքիայում իշխանության եկավ չափավոր իսլամամետ, ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտում արևմտյան արժեհամակարգին ու քաղաքական ավանդույթներին նախապատվություն տվող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը՝ ըստ էության վերջ դնելով Թուրքիայի «Կորսված տասնամյակին»¹⁰:

⁸ Cinar K., Turkey and Turkic Nations: A Post-ColdWar Analysis of Relations, Turkish Studies, Vol 14, No 2, 2013, p. 256-271.

⁹ Մաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., Տեր-Մաթևոսյան Վ. և ուրիշներ, Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 305:

¹⁰ Ընդունված է համարել, որ ԱԶԿ իշխանությունը Թուրքիայում որպես նոր շունչ ընկալվեց այդ երկրի քաղաքական կյանքում: Այդ ուժը միտված էր սոցիալ-տնտեսական, քաղաքական լուրջ բարեփոխումներ իրականացնել երկրում՝ հստակ նախապատվություն տալով արևմտյան քաղաքական ավանդույթներին: Տեսակետ կա նաև, որ ԱԶԿ իշխանության գալով Թուրքիայում հաղթանակեց քաղաքականության մեջ իսլամի առկայությունը կարևորող հոսանքը, որի ներկայացուցիչները նախկինում համարվում էին «Ազգային հայեցակետի» գաղափարաբանական հենքի վրա ստեղծված ուժերը: Հակադիր այս կարծիքների մասին առավել մանրամասն տե՛ս՝ Haynes J., Politics, identity and religious nationalism in Turkey: from Atatürk to the AKP, Australian Journal of International

ԱԶԿ իշխանության գալով՝ փոփոխություններ կատարվեցին նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության ասպարեզում. «Թուրքիայի դերակատարությունը որպես տարածաշրջանային տերություն աճեց ԱԶԿ իշխանության գալուց հետո: ԱԶԿ վերնախավը ոչ միայն ձգտում էր դառնալ տարածաշրջանային տերություն, այլև գլոբալ խաղացող: Հետևաբար, Թուրքիան ստանձնեց տարբեր դերեր՝ «տարածաշրջանի բնական առաջնորդ», «պատմականորեն մեծ եղբայր» և մուսուլմանական փոքրամասնությունների «պաշտպան»¹¹: Անցումը դեպի արևմտյան արժեհամակարգին ենթադրում էր նաև, որ միջազգային այլ սուբյեկտների հետ հարաբերվելիս Թուրքիան, զոնե առերևույթ, պետք է հրաժարվեր տնտեսական, ռազմական և «կոշտ» ուժին բնորոշ այլ ռեսուրսները որպես գործիք կիրառելուց և առաջնահերթություն տար «Լախ և առաջ դիվանագիտությունն է» սկզբունքին: Ի թիվս այլ պատճառների, նաև այս առումով հատկանշական էր, որ Թուրքիան հրաժարվեց ակտիվ մասնակցություն ունենալ 2003 թ. ԱՄՆ ներխուժմանը Իրաք¹²:

Այս գործոններով պայմանավորված, ԱԶԿ իշխանության տարիներին Թուրքիան սկսեց առավել մեծ ուշադրություն դարձնել «փափուկ» ուժին: Միջազգային հարաբերությունների

Affairs: Vol 64, No 1, Melbourne, 2010, p. 312-327, Turunc H., Islamicist or Democratic? The AKP's Search for Identity in Turkish Politics, Journal of Contemporary European Studies, Vol 15, No 1, 2007, p. 79-91.

¹¹ Gürzel A., Turkey's Role as a Regional and Global Player and its Power Capacity: Turkey's Engagement with other Emerging States, Revista de Sociologia e Política, Vol 22, No 50, 2014, p. 95.

¹² 1990-1991 թթ. Իրաք-քուվեյթյան Օնցի պատերազմից ի վեր Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ Իրաքն առանձնահատուկ նշանակություն ուներ: Այդուամենայնիվ, 2003 թ. ամերիկյան ներխուժման ժամանակ Թուրքիան իր պատմության ընթացքում երկրորդ անգամ կիրառեց «Սպասիր և տես» քաղաքականությունը (թրք. Bekle ve gör politikası): Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ Altunışık M., Turkey's Iraq Policy: The War and Beyond, Journal of Contemporary European Studies, Vol. 14, No. 2, 2006, p. 183-196:

տերմինաբանության մեջ այդ եզրը առաջին անգամ շրջանառել է ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայը 1990-ականներին: Արդեն 2004-ին Նայը ներկայացրեց «փափուկ» ուժի բանաձևը. «Ի՞նչ է «Փափուկ» ուժը: Դրա շնորհիվ կարող ես ստանալ այն, ինչ ուզում ես՝ գրավչության, ոչ թե հարկադրանքի կամ փոխհատուցման միջոցով: Այն բխում է երկրի մշակույթի գրավչությունից, քաղաքական իդեալներից ու քաղաքականություններից»¹³: «Փափուկ» ուժի կիրառման արդյունավետության առումով ԱԶԿ իշխանության տարիները հատկապես նպաստավոր էին, եթե հաշվի առնենք, որ այդ ընթացքում Թուրքիայում կիրառության մեջ դրվեց կառավարման «Թուրքական մոդելը»¹⁴, որը ենթադրում էր արևմտյան ժողովրդավարությունների, զուգահեռաբար նաև մուսուլմանական ու արևելյան արժեհամակարգ ունեցող պետությունների հետ սերտ կապեր ունեցող ժամանակակից, ժողովրդավարական, տնտեսապես ճկուն մուսուլմանական պետություն: Ի դեպ, արևմտյան շրջանակներում «Թուրքական մոդել» եզրը առաջ է քաշվել Սառը պատերազմի ավարտից հետո, երբ միջինասիական նորանկախ պետությունների համար Թուրքիան ներկայացվեց որպես օրինակելի երկիր: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, «Թուրքական մոդել» եզրը կրկին շրջանառության մեջ մտցվեց որպես մուսուլմանական և քրիստոնեական քաղաքակրթությունների հնարավոր հակասությունները կանխող կառավարման արդյունավետ միջոց¹⁵:

¹³ Nye J., Soft Power: The Means to Success in World Politics, x, New York, 2004.

¹⁴ Gönül T., The "Turkish Model" in the Middle East, Current History, issue 111 (749), Philadelphia, 2012, p. 350-355, http://www.relooney.com/NS3040/000_New_1876.pdf (անգլ., հասանելի էր 12, 09, 2018).

¹⁵ Sajjad F., Javaid U., AKP and the Idea of the Turkish Model (2002-2014): A Longitudinal Analysis, IPRI Journal Vol. 16, No 2, Islamabad, 2016, p. 70-88.

Արտաքին աշխարհի հետ հարաբերվելիս «փափուկ» ուժի և հանրային դիվանագիտության կիրառումը Թուրքիայում ԱԶԿ իշխանության օրոք ավելի համակարգային բնույթ ստացավ Ահմեդ Դավութօղլուի ջանքերով: 2001-ին Դավութօղլուն հեղինակել էր «Ռազմավարական խորք» աշխատությունը, որում խոսում էր միջազգային հարաբերություններում Թուրքիայի դերի վերախմաստավորման անհրաժեշտության մասին: Որոշ ժամանակ անց Դավութօղլուն զբաղեցրեց երկրի արտաքին գործերի նախարարի պաշտոնը, իսկ նրա առաջ քաշած տեսությունը դարձավ Թուրքիայի արտաքին քաղաքականության գլխավոր հայեցակետը: Դավութօղլուի տեսությունը գործնական կիրառություն ստացավ «Զրո ինդիր հարևանների հետ» ձևակերպումով հայտնի Թուրքիայի որդեգրած քաղաքականության տեսքով: Հատկանշական է, որ հստակ սահմանած նպատակին՝ հարևան երկրների հետ հակասությունների վերացմանը հասնելու համար Դավութօղլուն, ըստ էության, առաջարկում էր մեկ գործիք՝ Թուրքիայի «փափուկ» ուժը: Ընդ որում, նա առաջարկում էր շեշտադրում կատարել երկրի պատմական, մշակութային, աշխարհագրական առանձնահատկությունների վրա, որոնք ժամանակակից քաղաքականության ստեղծած արժեքների հետ զուգակցելու ու համադրելու պարագայում լուրջ հաջողություն կարող են բերել Թուրքիային՝ արտաքին քաղաքական ճակատում: Դավութօղլուի մշակած տեսությունը դարձավ նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության հայեցակետ՝ ունենալով նաև որոշակի հաջողություն: Ուսումնասիրողները հակված են կարծել, որ Դավութօղլուի դոկտրինի գրանցած հաջողության լավագույն օրինակը Սիրիայի հետ հարաբերություններում նկատվող

https://www.researchgate.net/publication/310610417_AKP_and_the_Idea_of_the_Turkish_Model_2002-2014_A_Longitudinal_Analysis (անլ., հասանելի էր 12, 09, 2018).

ջերմությունն էր. «2002 թ. հետո մինչև Սիրիական հեղափոխությունը, Սիրիայի հետ հարաբերություններում Թուրքիան կենտրոնացած էր «փափուկ» ուժի վրա: «Փափուկ» ուժի գործիքները դիվանագիտական էին, մշակութային և տնտեսական»¹⁶: Սրա արդյունքում լուրջ առաջընթաց գրանցվեց թուրք-սիրիական հարաբերություններում, իսկ վարչապետ էրդողանի և Սիրիայի նախագահ Ասադի միջև նույնիսկ հաստատվեցին միջանձնային ընկերական հարաբերություններ:

Հանրային դիվանագիտությունն ու թուրքական «փափուկ» ուժն առավել արդյունավետ կիրառելու նպատակով թուրքական կառավարությունը հարկ համարեց ինստիտուցիոնալիզացնել արտաքին քաղաքականության այդ ոլորտը: Վարչապետ էրդողանի հրամանագրով 2010 թ. ստեղծվեց Թուրքիայի Հանրապետության կառավարությանն առընթեր Հանրային դիվանագիտության համակարգման խորհուրդը¹⁷: Այս ամենով հանդերձ, հարկ է արձանագրել, որ «Զրո ինդիր հարևանների հետ» հայեցակետը չկարողացավ հասնել նախանշված նպատակին: Ավելին. ուսումնասիրողները սկսեցին պնդել, որ Դավութօղլուի առաջ քաշած տեսությունը ոչ այլ ինչ է, քան օսմանիզմի վերախմաստավորման ու նորովի մատուցման փորձ¹⁸: Մի շարք ուսումնասիրողներ Դավութօղլուին հոչակեցին նեոօսմանիզմի տեսության հիմնադիր, չնայած որ գաղափարական այդ հոսանքը

¹⁶ Gawward M., Turkish Foreign Policy towards Syria since 2002, Asian Social Science Vol. 14 No 2, 2018, p. 61.

¹⁷ Թուրքիայի Հանրապետության կառավարությանն առընթեր Հանրային դիվանագիտության համակարգման խորհուրդի ստեղծման մասին վարչապետ էրդողանի համապատասխան հրամանագիրը տե՛ս՝ T.C. Resmî Gazete, sayı 27478, 2010/3 sayılı Başbakanlık Genelgesi, 30, 10, 2010.

¹⁸ Cavlan T., Yeni Osmanlılık: Batıdan Kopuş mu?, Yakın Doğu Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, Vol. 3, No. 2, s. 126-156.

բավական վաղուց առկա էր Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական օրակարգում¹⁹:

Տարածաշրջանային մի շարք պետությունների դեպքում Թուրքիայի հետ լարված հարաբերությունների արմատները ձգվում էին մինչև Օսմանյան կայսրության ժամանակները, և հասկանալի էր, որ նեոօսմանիզմի հիման վրա կառուցված «փափուկ» ուժը, որը գոնե առերևույթ նպատակ էր հռչակել «զրո խնդիր հարևանների հետ» հայեցակարգի կենսագործումը, ավելի շատ խնդիրներ էր առաջացնելու այդ երկրների հետ հարաբերություններում, քան նպաստելու էր դրանց կարգավորմանը: Ընդ որում, հռչակված քաղաքականությունը ոչ միայն չկարողացավ Թուրքիային մերձեցնել իր անմիջական հարևանների հետ և լուծել առկա տարաձայնությունները, այլև առաջ բերեց նոր խնդիր. «Մերձավոր Արևելքում քաղաքականության փոփոխություններն ու դրանց արձագանքները կարճ ժամանակում գրեթե մեկուսացրին Թուրքիային, որտեղ «զրո խնդիր» դոկտրինը փոխարինվեց «թանկարժեք միայնություն» մոտեցմամբ»²⁰: Եթե 2000-ականներին արտաքին հարաբերություններում Թուրքիայի քաղաքականության գլխավոր դերակատարներից մեկը Դավութօղլուն էր, ապա «թանկարժեք միայնության» տեսության հիմնադիրը դարձավ Թուրքիայի վարչապետի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Իբրահիմ Քալընը: Ընդ որում, եթե «զրո խնդիր հարևանների հետ» դոկտրինը տեսական լուրջ հիմք ուներ՝ ի դեմս «Ռազմավարական խորք»

¹⁹ Սյու մասին առավել մանրամասն տե՛ս՝ Albayrak D., Turan K., Neo-Ottomanism in Turkish Foreign Policy Through the Lenses of the Principal-Agent Theory, *Journal of Security, Strategy, and Political Studies*, Vol 1, No 1, p. 129-154, Yavuz M., *Social and Intellectual Origins of Neo-Ottomanism: Searching for a Post-National Vision*, *Die Welt des Islams*, Vol. 56, No 3-4, 2016, p. 438-465:

²⁰ Çevik B., Seib Ph., *Turkey's Public Diplomacy*, New York, 2015, p. 7.

աշխատության, ապա «թանկարժեք միայնության» հիմքը Քալընի կատարած մեկ գրառումն էր «Թվիթերում». «Մերձավոր Արևելքում Թուրքիան միայնակ է մնացել» պնդումը ճիշտ չէ, բայց եթե դա քննադատություն է, այդ պարագայում անհրաժեշտ է ասել՝ դա թանկարժեք միայնություն է»²¹:

«Զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականության փոփոխության անհրաժեշտությունն ու անցումը դեպի «թանկարժեք միայնություն» տեղի ունեցավ այն բանից հետո, երբ շուրջ 10 տարվա ակտիվ փորձերից հետո Թուրքիան ձախողեց Մերձավոր Արևելքի երկրների հետ իր քաղաքական մերձեցումը²²: «Թանկարժեք միայնությունը» ենթադրում էր, որ Թուրքիան արտաքին հարաբերություններում որդեգրելու էր ավելի անզիջում, սկզբունքային քաղաքականություն, որը զերադասելի էր նույնիսկ այն պարագայում, եթե արժեքների վրա հիմնված այդ քաղաքականությունը որոշակիորեն մեկուսացնեի Թուրքիային տարածաշրջանի այլ երկրներից, և դրանից բացի, Քալընի կիրառած եզրը, դեռևս նախկինում, որոշակիորեն հայտնի էր միջազգային հարաբերությունների տերմինաբանությանը²³: Իր

²¹ İbrahim Kalın (@ikalın1), 31, 07, 2013, "Türkiye Ortadoğu'da yalnız kaldı" iddiası doğru değil ama eğer bu bir eleştiri ise o zaman söylemek gerekir: Bu, değerli bir yalnızlıktır", <https://twitter.com/ikalın1/status/362746057513385984> (թրք., հասանելի էր 12, 09, 2018).

²² Այդ ձախողման զագաթնակետն է համարվում 2013 թ. զարնանը Եզիպտոսում տեղի ունեցած իշխանափոխությունը, որից հետո ծայրաստիճան լարվեցին թուրք-եզիպտական հարաբերությունները: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս՝ Akgün M., Gündoğar S., *Mısır-Türkiye ilişkilerinde daha iyi bir geleceğe doğru*, TESEV Dış Politika Programı, 2014:

²³ «Թանկարժեք միայնության» մասին առավել մանրամասն տե՛ս՝ Çelik A., *Türk Dış Politikasının niteliği üzerine kavramsal bir tartışma: Değerli yalnızlık mı Şuurlu dinamizm mi?*, *Düzce Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi*, Düzce, 2015, Sayı: 2, s. 67-89:

հարցազրույցներից մեկում Քալընը բանաձևեց իր պատկերացրած «Թանկարժեք միայնությունը»: Պատասխանելով հարցին, թե ինչ է նշանակում «Թանկարժեք միայնությունը»՝ Քալընն ասաց. «*«Թանկարժեք միայնություն» արտահայտությունը կիրառել եմ երկու իմաստով: Առաջինը՝ պատմության ընթացքում երբեմն այնպիսի պահեր են գալիս, երբ աշխարհը հարվածների, կոտորածների հանդեպ լուռ միջավայրում է, և դուք միայնակ տեղ եք զբաղեցնում ճշմարտության կողքին: Սկզբունքներից չեք հրաժարվում, քանի որ ձեր դաշնակիցներն ու մյուս երկրները ձեր կողքին չեն կանգնում: Իրականում դա մենակ մնալ չէ, պատվավոր կեցվածքի ցուցադրություն է: Երկրորդը՝ ես այդ արտահայտությունը կիրառել եմ «արժեքի վրա հիմնված» իմաստով: Այսինքն, հանուն ձեր արժեքների պաշտպանության, եթե անհրաժեշտ լինի, կխիզախեք նույնիսկ միայնակ մնալ: Դա աշխարհից կտրվել չէ: Եթե հայտնվեք այդպիսի ընտրության առջև, ե՛վ միջազգային շահերի, ե՛վ միջազգային քաղաքականության տեսանկյունից ճիշտը սկզբունքներին հավատարիմ մնալն է: Եթե դա ձեզ մյուսներից տարբեր վայրում է դնում, դա «արժեքակենտրոն միայնություն է» և ինքնըստիներյան թանկարժեք դիրքորոշում է»²⁴:*

Հատկանշական է, որ անցումը դեպի «Թանկարժեք միայնությունը» զուգահեռվեց մի ժամանակահատվածի, երբ լրջագույն ցնցումների էր ենթարկվում մերձավորարևելյան տարածաշրջանի անվտանգությունն ու կայունությունը: Քալընի առաջարկած այս բանաձևը ստվերեց արտաքին քաղաքական հարթությունում հանրային դիվանագիտության ու փափուկ ուժի

²⁴ Başbakan'ın başdanışmanı 'değerli yalnızlık'ı açıkladı: Yalnız değiliz ama, T24 Gazetesi, 26, 08, 2013, <http://t24.com.tr/haber/basbakanin-basdanismani-degerli-yalnizliki-acikladi-yalniz-degiliz-ama,237875> (թրք., հասանելի էր 25, 09, 2018).

կիրառությունը և ավելի կոշտ կեցվածք էր թելադրում Թուրքիայի արտաքին քաղաքականությանը:

Այսպիսով, արտաքին քաղաքականության ոլորտում Քալընի առաջարկած նոր տեսությունը փոխարինեց Դավութօղլուի պատկերացումներին, իսկ 2015-ի նոյեմբերին թուրք-սիրիական սահմանին ռուսական ինքնաթիռի խոցումը, 2016 թ. Միդիայում «Եփրատի վահան», «Ձիթապտղի ճյուղ» գործողությունները, Եվրոպական միության ու միջազգային մյուս գործընկերների հետ հարաբերություններում լարվածության կտրուկ աճն ու արտաքին քաղաքականության մի շարք այլ ոլորտներում Թուրքիայի կոշտ դիրքորոշումը, փաստեցին, որ արտաքին ճակատում խնդիրները լուծելու համար այդ երկիրը կրկին սկսում էր առաջնայնություն տալ «կոշտ» ուժին²⁵:

²⁵ Հատկանշական է, որ օրինակ «Եփրատի վահան» ռազմական գործողության հետևանքների վերաբերյալ թուրքական ուղեղային կենտրոններից մեկի հրապարակած զեկույցի մեջ նշվում է, որ գործողության ողջ ընթացքում ակնհայտորեն զգացվում էր հանրային դիվանագիտության պակաս, որը պետք է կիրառվեր հակաթուրքական քարոզչություն իրականացնող խմբերին հակազդելու համար: Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ Yeşiltaş M., Seren M., Özçelik N., Operation Euphrates Shield: Implementation and Lessons Learned, SETA Report, İstanbul, 2017, p. 43:

**THE COMBINATION OF SOFT POWER WITH HARD POWER:
INSTITUTIONALIZATION OF PUBLIC DIPLOMACY IN
TURKEY**

Darbinyan Hayk
(Summary)

Since the independence of the Republic of Turkey, the axis of Turkish foreign policy was built on the principle of implementation of the Hard Power, as phrased by the current terminology of international relations. Even during the incumbency of other authorities who were considerably different in terms of their ideological basis, the abovementioned strategy of foreign policy has been regularly implemented. During the most violent years of the Cold War, in West, the term Public diplomacy has been proposed as an alternative to hidden and non-transparent affairs, or in other words, to Secret diplomacy, which, as many experts argue, was one of the main reasons of destructive wars of the 20th century. Public diplomacy and the implementation of the Soft power as a tool has been regularly ignored by the strategists and decision-makers of the Turkish foreign policy. The collapse of the Soviet Union and new geopolitical realities impacted on the foreign policy of Turkey. The increase of the importance of public opinion, development of mass-media and other sources of the formation of public opinion, as well as the onset of the era of information technologies throughout the World promoted the further appreciation and focus on to the Public diplomacy in Turkey. The integral use of the Public diplomacy and the Soft power in Turkey was paralleled by the beginning of the tenure of the Western political value-oriented Justice and Development party (AKP). In this period, the tools and principles of Turkey's foreign policy drastically changed. As a result, the implementation of the Turkish Soft power gained a central role, and the Public diplomacy took an institutionalized role in the Republic of Turkey.

**СОЧЕТАНИЕ «МЯГКОЙ СИЛЫ» С «ЖЕСТКОЙ СИЛОЙ» -
ИНСТИТУЦИОНАЛИЗАЦИЯ ПУБЛИЧНОЙ ДИПЛОМАТИИ В
ТУРЦИИ**

Дарбинян Айк
(Резюме)

После провозглашения независимости Турецкой Республики внешняя политика этой страны была в значительной степени сформирована с использованием инструмента, который в нынешней терминологии международных отношений известна как «жесткая сила». В разные времена, даже когда у власти оказывались силы, имеющие существенные идеологические противоречия с предыдущими властями, вышеупомянутый компонент внешней политики в основном сохранялся. Публичная дипломатия, как инструмент, со стороны внешнеполитического руководства Турции почти всегда была на последних ролях. После распада Советского Союза новые геополитические реалии оказали некоторое влияние и на внешнюю политику Турции. СМИ, растущее значение общественного мнения в мире, распространение других источников формирования общественных настроений, а также развитие информационных технологий стали способствовать распространению принципов Публичной дипломатии в имплементации внешней политики Республики Турция. Полноценное применение публичной дипломатии и мягкой силы со стороны Турции сопровождалось созданием партии Справедливости и развития, основой которой была провозглашена система ценностей Запада. В результате ряда изменений в годы правления ПСР, было уделено серьезное внимание применению «мягкой силы» в имплементации внешней политики Турции. Одним из наиболее важных результатов этих реформ стала институционализация публичной дипломатии Турции.

Գևորգյան Արշակ *

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՑԱՑՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՄՏԸ
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԻԲԲԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ Արդարություն և զարգացում կուսակցություն, Ռեջեփ Թայիփ Էրդոհան, թուրքական պահպանողականություն, պահպանողական ժողովրդավարություն, հիբրիդային ռեժիմներ

2001 թ. օգոստոսի 14-ին Անկարայի «Բիլքենթ» հյուրանոցի դահլիճում 74 հոգուց բաղկացած հիմնադիրների խորհուրդն՝ ազդարարեց նոր՝ «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) կազմավորումը: Նորաստեղծ այդ քաղաքական ուժին վիճակված էր դառնալ նոր հազարամյակի սկզբի թուրքական քաղաքական թատերաբեմի գլխավոր դերակատարը: Չնայած կուսակցությունն ու դրա առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդոհանն

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի սասլիբանս, էլ. փոստ a.gevorkian@ysu.am
1 Նրանք թվում էին նաև 2001 թ. հունիսի 22-ին Թուրքիայի սահմանադրական դատարանի որոշմամբ փակված «Առաքիևություն» կուսակցության նորարարական թևը (թրք. «yenilikçiler»), ինչպես նաև ԹԱՄԺ այլ («Մայր հայրենիք» և «Ճշմարիտ ուղի») կուսակցությունները ներկայացնող մի քանի տասնյակ պատգամավորներ: Հիմնադիրների ամբողջական ցանկը տե՛ս «Adalet ve Kalkınma Partisi kuruldu», Hürriyet, 14, 08, 2001, <http://www.hurriyet.com.tr/gundem/adalet-ve-kalkinma-partisi-kuruldu-10009> (հասանելի է՝ 03, 11, 2018): Խոսելով առաջին սերնդի կուսակցականների մասին՝ Էրդոհանն ինքն առանձնացնում է Արդուլլահ Գյուլի, Արդուլլաթիֆ Շեների, Արդուլլաթիյի Աքսուի, Ջեմալ Չիչեքի, Մելիհ Գյոքչեքի, Իսմայիլ Քահրամանի, Ալթան Քարափաշաօղլուի, Բյուլենթ Առնեյի և Արդուլլահ Չալըշբանի անունները: Տե՛ս Tekin Ü., AK Parti'nin Muhafazakar Demokrat Kimliği, Ankara, 2004, s. 73:

սկզբից նեթ չէին թաքցնում իրենց քաղաքական հավակնությունները, ԱԶԿ վերնախավը ստեղծումից հետո միառժամանակ խուսափում էր սեփական գաղափարական ուղղվածությունը հստակորեն տարրորոշելուց²: Էրդոհանի վաղ շրջանի ելույթները անուղղակիորեն մատնանշում են նորաստեղծ կուսակցության շարքերում քաղաքական ինքնության որոնումների և գաղափարական համադրականության որոշ դրսևորումներ: Այս համատեքստում հատկապես բնութագրական է հնչում նրա հետևյալ միտքը. «Աթաթյուրքից սկսած՝ Բնյոնյուի, Մենդերեսի, Էջնիթի, Դեմիրելի, Չիլերի, Յըլմազի, Էրբաքանի դրական կողմերը միավորելով՝ ցանկանում եմ մի նոր քաղաքականություն ստեղծել»³: 2002 թ. Թուրքիայի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին ԱԶԿ-ականների քաղաքական բառապաշարում մի շարք այլ ձևակերպումների թվում պարբերաբար հանդիպում էին նաև «ժողովրդավարություն» և «պահպանողականություն» եզրերը⁴: Մակայն միայն իշխանության գալուց հետո է լայն զանգվածներին ներկայացվում գրավոր մի տեքստ, որն, ըստ էության, կուսակցության քաղաքական ինքնության հոչակագիրն էր: 2003 թ. վարչապետ Էրդոհանի ներածական խոսքով լույս է տեսնում նրա քաղաքական խորհրդական Յալչըն Աբդոհանի «Պահպանողական

² St' u Fedayi C., AKP'nin Siyasal Kimliği Üzerine: Kimlik Arkadan Gelsin, Muhafazakâr Düşünce, sayı 1(1), 2004, s. 151.
³ Çakır R., Çalmuk F., Recep Tayyip Erdoğan: Bir Dönüşüm Öyküsü, İstanbul, 2001, ss. 178-179.
⁴ Ինքն Էրդոհանը «պահպանողական ժողովրդավարություն» եզրն ի թիվս այլնի կիրառել է կուսակցության հիմնումից զրեթե անմիջապես հետո, օրինակ 2001 թ. սեպտեմբերի 13-ին՝ ՌԴ դեսպան Ալեքսանդր Լեբեդևի հետ հանդիպման ժամանակ: Տե՛ս «Erdoğan: AKP din eksenli bir parti değil», Hürriyet, 13, 09, 2001, <http://www.hurriyet.com.tr/gundem/erdogan-akp-din-eksenli-bir-parti-degil-15612> (հասանելի է՝ 03, 11, 2018):

ժողովրդավարություն» աշխատությունը⁵: Այն ազատական պահպանողականության դիրքերից⁶ տեսական հիմնավորումներ է բերում՝ ըստ էության վերհանելով ԱԶԿ քաղաքական ինքնության բաղադրատարրերը: 2004 թ. հունվարի 15-ին, ելույթ ունենալով «Պահպանողականություն և ժողովրդավարություն» միջազգային սիմպոզիումի ժամանակ, Էրդոդանը նշում է, որ իրենց պահպանողական ժողովրդավարությունը հիմնված է հասարակության մեծ մասի ցանկության վրա, այն է՝

- «արդիականացման, որը չի բացառում ավանդույթները,
- համընդհանրության, որն ընդունում է տեղայնականը,
- ռազմաանվտանգության, որը չի մերժում աստվածային իմաստը,
- փոփոխության, որը ծայրահեղական չէ»⁷:

Թվարկված այս տարրերի ներդաշնակ համադրության որոնումը թուրքական քաղաքական մտքի համար ամեննին նոր չէ: Քեմալական շրջանի հանրապետական պահպանողականության հայտնի գաղափարախոս Փեյամի Սաֆայի խոսքերով՝ Թուրքիայի աշխարհագրությունն ու պատմությունը պարտադրում են «սրտով կապվել Արևելքի, մտքով՝ Արևմուտքի հետ, հավատալ ինչպես արևելքի՝ մտածելով ինչպես արևմուտքի»⁸:

Այսօր՝ Թուրքիայում իշխող քաղաքական ուժի ստեղծումից 18 տարի անց էլ, անկախ որոշ ուսումնասիրողների կողմից ԱԶԿ-ին տրվող արդարացի և չարդարացված բնութագրումներից («խլամական ժողովրդավարներ»⁹, «խլամամետներ»¹⁰,

⁵ St' u Akdoğan Y., Muhafazakar Demokrasi, Ankara, 2003.

⁶ St' u Bora T., AKP ve Muhafazakâr Demokratlığın Sınırları, Karizma, sayı 5(17), 2004, s. 38.

⁷ Erdoğan R. T., Ülke Konuşmaları: 2003-2007, Ankara, 2008, ss. 286-287.

⁸ Safa P., Din, İnkılap, İrtica, İstanbul, 1999, s. 87.

⁹ St' u, օրինակ, Tepe S., Turkey's AKP: A Model 'Muslim-Democratic' Party?, Journal of Democracy, vol. 16(3), 2005, pp. 69-82.

«նեոիսլամիստներ»¹¹, «նեոսումանիստներ»¹², «նեոֆաշիստներ»¹³ և այլն), «պահպանողական ժողովրդավարությունը» շարունակում է համարվել կուսակցության քաղաքական ինքնության առնվազն պաշտոնական հիմքը¹⁴: Այս ողջ ընթացքում ԱԶԿ գաղափարախոսությունը ներկայացվել է իբրև «քաղաքական նոր փիլիսոփայություն և ոճ»¹⁵: Այս համատեքստում ուշագրավ է կուսակցության առաջին համագումարի ընթացքում Ռ. Թ. Էրդոդանի ելույթի հետևյալ հատվածը. «Իբրև «պահպանողական ժողովրդավար» ներկայացող մեր կուսակցությունը, պահպանողական մտքի և քաղաքական գործընթացների միջև ամուր հանգուցակետեր ստեղծելով, Թուրքիայի առջև միանգամայն նոր քաղաքական մի հեռանկար է առաջադրել»¹⁶:

¹⁰ St' u, օրինակ, Kirdiş E., Drhimeur A., The rise of populism? Comparing incumbent pro-Islamic parties in Turkey and Morocco, Turkish Studies, vol. 17(4), 2016, pp. 599-617.

¹¹ St' u, օրինակ, Bora A., Çalışkan K., What is Under a Headscarf? Neo-Islamist vs. Kemalist Conservatism in Turkey, The Arab Studies Journal, vol. 15/16(2/1), 2007-2008, pp. 140-155.

¹² St' u, օրինակ, Volfová G.Ö., Turkey's Middle Eastern Endeavors: Discourses and Practices of Neo-Ottomanism under the AKP, Die Welt des Islams, vol. 56 (3-4), 2016, pp. 489-510.

¹³ St' u, օրինակ, Demir F., From Islamic Renaissance to Neo-fascism in Turkey, Review of Middle East Studies, vol. 50(2), 2017, pp. 186-194.

¹⁴ ԱԶԿ «պահպանողական-ժողովրդավար» լինելու փաստը, ի թիվս այլնի, ամրագրված է եւս կուսակցության Թուրքիայի Հանրապետության 100-ամյակին ընդառաջ ընդունված «2023 քաղաքական տեսլական» հոչակագրի առաջին պարբերությունում: Տեքստը տե՛ս ԱԶԿ պաշտոնական կայքում՝ <https://www.akparti.org.tr/parti/2023-siyasi-vizyon/> (հասանելի է՝ 03, 11, 2018):

¹⁵ Çağlıyan-İçener Z., The Justice and Development Party's Conception of "Conservative Democracy": Invention or Reinterpretation?, Turkish Studies, vol. 10(4), 2009, s. 597.

¹⁶ St' u Günal E., Türkiye'de Siyasal Partiler ve Güncel Sorunları, Ankara, 2006, ss. 266-267.

Ընդունված է համարել, որ այդ փիլիսոփայությունը համադրում է արևմտյան հայացքները թուրքական արժեքների հետ¹⁷:

Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ հակառակ ժողովրդավարության արևմտավերոպական մոդելների, թուրքական ընտրազանգվածի համար կուսակցության խարիզմատիկ առաջնորդն ավանդաբար անհամեմատ ավելի էական է, քան դրա քաղաքական ինքնությունը: Այս հանգամանքը 20-րդ դարի երկրորդ կեսից մշտապես Թուրքիայի քաղաքական զարգացումների առանցքում է եղել: Ինչպես նշում է Ջեմ Էրօղլույը, 1950 թ. ընտրությունների ժամանակ ևս Ժողովրդավարական կուսակցության նշանակալիորեն ավելի ազատական և ժողովրդավարական ծրագիրը գտնվում էր դրա առաջնորդների կերպարի ստվերում¹⁸: Ժամանակի որոշ ուսումնասիրողներ վաղ շրջանի Էրդողանին համարում էին անգամ Մենդերեսի, («Քարաջաօղլանի» շրջանի) Էջնիթի, (1960-ականների շրջանի) Դեմիրելի և Օզալի յուրահասկությունները համադրող մի կերպար¹⁹: Կարելի է համաձայնել, որ կար նախ «Թայիփը», հետո ծնվեց ԱՉԿ-ն, ապա՝ «պահպանողական ժողովրդավարությունը»²⁰:

Թեև սեփական գաղափարախոսությունն ԱՉԿ-ականների կողմից ներկայացվում է իբրև լիովին նոր և բացառիկ քաղաքական

¹⁷ Հետաքրքրական է ներկայում ընդդիմադիր Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցությունից ԹԱՄԺ պատգամավոր, ԱՉԿ հիմնադիր փոխնախագահ (2001-2008 թթ.) Դենգիր Միր Մեհմեթ Ֆրքաթի ձևակերպումը, թե կուսակցության քաղաքական ինքնությունը «պահպանողականության ու ժողովրդավարության սինթեզ է, որ կապում է ավանդական թուրքական արժեքները և եվրոպական պահպանողականության տարրերը»: St u Genel Başkan Yardımcısı Dengir Mir Mehmet Fırat, Uluslararası Muhafazakarlık ve Demokrasi Sempozyumu, İstanbul, 2004, s. 20.

¹⁸ St u Eroğul C., Demokrat Parti, Ankara, 1970, s. 13.

¹⁹ St u Yalsızuçanlar S., İslamcı/Milliyetçi/Sağ Siyaset'in yeni adı: Muhafazakâr Demokrasi, Karizma, sayı 17, 2004, s. 16.

²⁰ St u Fedayi C., նշված հոդ., էջ 155:

Ֆենումեն, դրա շուրջ դիսկուրսում օգտագործվող փաստարկներն ու բառապաշարը ամբողջովին տեղավորվում են թուրքական պահպանողական մտքի շրջանակում: ԱՉԿ կազմավորման շրջանում «Զաման» պարբերականի սյունակագիրներից մեկի բարձրաձայնած բնորոշմամբ՝ «պահպանողական ժողովրդավարությունն ԱՉԿ կողմից ներմուծված նորարական ֆենոմենն չէ, պատմական է, ներկայացնում է 1946 թ. [բազմակուսակցական քաղաքական համակարգի անցնելուց, — Ա. Գ.] ի վեր թուրքական ժողովրդավարության պատմության հիմնական երակներից մեկը»²¹: Ավելին, զուտ գաղափարական բաղադրիչի առումով Էրդողանի գլխավորած կուսակցությունը մայրցամաքային Եվրոպայի պահպանողական ավանդույթից ավելի կրում է հանրապետական շրջանի մտածողներ Մեհմեթ Աքիֆ Էրսոյի և Նեջիփ Ֆազլի Քըսաթյուրեթի²² ազդեցությունը²³:

Պահպանողական ժողովրդավարության կայացման հիմնական գաղափարական խոչընդոտը դրա՝ քեմալականության 6 հիմնասյուներից աշխարհիկությանը չհամապատասխանելու

²¹ Dayı İ.D., AK Parti: Müslüman Demokrat Mı Muhafazakar Demokrat Mı?, Uluslararası Muhafazakarlık ve Demokrasi Sempozyumu, s. 307.

²² Երկու հեղինակները պարբերաբար մեջբերվում և արժևորվում են Էրդողանի հրապարակային ելույթներում: St u, օրինակ, "Cumhurbaşkanı Erdoğan: Mehmet Akif'i geleceğe taşımalyız", Sabah, 26, 12, 2018, <https://www.sabah.com.tr/gundem/2018/12/26/cumhurbaskani-erdogan-mehmet-akifi-gelecege-tasimaliyiz> (հասանելի է՝ 03, 11, 2018), "Cumhurbaşkanı Erdoğan Necip Fazıl'ın hitabesini okudu!", Sabah, 11, 05, 2018, <https://www.sabah.com.tr/gundem/2018/05/11/cumhurbaskani-erdogan-necip-fazilin-osiirini-okudu> (հասանելի է՝ 03, 11, 2018): Որոշ հեղինակներ Նեջիփ Ֆազլիին համարում են անգամ Էրդողանի գաղափարական «մուսան»: St u Singer S.R., Erdogan's Muse: The School of Necip Fazıl Kisakurek, World Affairs, vol. 176(4), 2013, pp. 81-88.

²³ St u Uluçakar M., Muhafazakâr Demokrasi Söylemi Üzerine Bir İnceleme, Alternatif Politika, sayı 10(3), 2018, s. 363.

վերաբերյալ մեղադրանքներին հակադարձելն էր²⁴: Այդ ճանապարհին ԱԶԿ-ն մշտապես շեշտադրել է «laikçilik»-ը (գաղափարախոսական աշխարհիկություն) «laiklik»-ից (իրական աշխարհիկություն) տարբերելու անհրաժեշտությունը՝ կրոնի և պետության որակական տարանջատման ամերիկյան (չեզոք) մոդելի համանմանությամբ²⁵: Աքդոզանը նույնպես շեշտում է, որ պահպանողական ժողովրդավարությունը չի ընդունում աշխարհիկության իբրև քաղաքական գործիքի կիրառումը²⁶: Այս տեսակետից ուշագրավ է թուրք քաղաքագետ Թանըլ Բորայի տեսակետը, թե. «ազգայնականությունը, պահպանողականությունն ու իսլամականությունը ոչ թե դիրքորոշում են, այլ վիճակներ, ճիշտ ֆիզիկայի նյութի վիճակների նման՝ պինդ, զազային, հեղուկ: Ազգայնականությունը, պահպանողականությունն ու իսլամականությունը թուրքական աջերի տարբեր վիճակներն են, որոնք կարող են փոխակերպվել մեկը մյուսի»²⁷: Ավելին, անգամ իսլամն ու հանրապետական

²⁴ Էրդողանն իր հրապարակային գործունեության վաղ շրջանում հայտնի էր դեռ 1990-ականների սկզբին հնչեցրած սկանդալային «ն աշխարհիկ, և մուսուլման չեն լինում» (թրք. «Hem laik hem Müslüman olunmaz») արտահայտությամբ: 1997 թ. դեկտեմբերին Սղերթում ևս հրապարակայնորեն ընթերցել էր Զիա Գյոքալփի «Զինվորի աղոթքը» (թրք. «Asker Duası») բանաստեղծության փոփոխված տարբերակը, որն ընդգծված իսլամական տարրեր էր պարունակում: Այս միջադեպի կապակցությամբ Դիարբեքիի պետականության դատարանն Էրդողանին մեղավոր էր ճանաչել ԹԲՕ-ի 312-րդ հոդվածի 2-րդ կետի հատկանիշներով (կրոնական կամ ռասայական ատելության քարոզ)՝ դատապարտելով նրան 10 ամսվա ազատազրկման: St u Serter N., Dinde siyasal İslam tekeli, İstanbul, 2010, s. 134.

²⁵ St u Kaboğlu İ. Ö., Laiklik ve Demokrasi, Ankara, 2001, s. 175-178.

²⁶ St u Akdoğan Y., նշված աշխ., էջ 132:

²⁷ Bora T., Türk Sağının Üç Hâli: Milliyetçilik, Muhafazakârlık, İslâmcılık, İstanbul, 1999, s. 8.

աշխարհիկությունը պետք է դիտարկել իբրև «նույն պատմական ընդհանրության տարբեր համակյաց հատվածներ»²⁸:

Հիմնադրման պահից նաքշբանդիա սուֆիական միաբանության հետ սերտ առնչություն ունեցող²⁹ ԱԶԿ գաղափարական այս համակեցությունը ոմանց կողմից մեկնաբանվում էր անգամ իբրև «թաքիայի» դրսևորում³⁰: Սա ցույց է տալիս, որ լիբերալ ժողովրդավարության և իսլամական պահպանողականության միջև ընկած³¹ գաղափարախոսությունն ԱԶԿ-ին «ոեալպոլիտիկի» տարբեր իրավիճակներում ազատորեն մանևրելու հնարավորություն էր ընձեռում: Ընդ որում, պահպանողական ժողովրդավարության սահմանները Էրդողանի և կողմնակիցների իշխանության տարբեր տարիներին նշանակալիորեն տարբերվել են: Որպես ԱԶԿ ներսում գաղափարախոսական խզման պայմանական սահման կարելի է ընդունել 2007 թ. հուլիսյան համապետական ընտրությունները:

²⁸ St u Yavuz H., Introduction: The Role of the New Bourgeoisie in the Transformation of the Islamic Movement, in Yavuz M. H. (ed.), The Emergence of New Turkey, pp. 1-23, Utah, p. 8.

²⁹ Այս մասին մանրամասն տե՛ս Քարտաշյան Ա., Մարտիրոսյան Ա., Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցության և նաքշբանդիա սուֆիական տարիկաթի փոխհարաբերությունների շուրջ, ԵՊՀ ՔՄՀԿ վերլուծական տեղեկագիր, հ. 5, 2010, էջ 84-101:

³⁰ St u, օրինակ, "Erdogan takiyeci", Hürriyet, 01, 06, 2008, <http://www.hurriyet.com.tr/gundem/erdogan-takiyeci-9069938> (հասանելի է՝ 03, 11, 2018): Թաքիան (արաբ. تقيي، թուրք. takiye) արտաքին միջավայրից սպառնացող վտանգի պայմաններում մուսուլմանի կողմից սեփական հավատքն առերես ուրանալու երևույթն է: St u Strothmann R., "Takıyya" in Bearman P. J., Bianquis Th., Bosworth C. E., Donzel E. van and W. P. Heinrichs (eds.), Encyclopaedia of Islam, 2nd ed., vol. 10, pp. 134-136.

³¹ Թոմաս Սմիթն այդ համակեցությունը դիպուկ կերպով բնորոշում է իբրև դրություն «Ալլահի և Աթաթյուրքի միջև»: St u Smith W. T., Between Allah and Atatürk: Liberal Islam in Turkey, The International Journal of Human Rights, vol. 9(3), 2005, pp. 307-325.

ИДЕОЛОГИЧЕСКИЙ КОНТЕКСТ СТАНОВЛЕНИЯ ПАРТИИ СПРАВЕДЛИВОСТИ И РАЗВИТИЯ: КОНСЕРВАТИВНАЯ ДЕМОКРАТИЯ – КАК ПОЛИТИЧЕСКОЕ САМОСОЗНАНИЕ

Геворкян Аршак
(Резюме)

Яркое восхождение Партии справедливости и развития (ПСР) в начале нового тысячелетия ознаменовало начало новой эпохи в политической жизни Турции. После триумфа на всеобщих выборах 2002г. ожидалось, что консервативная демократия, как официальное политическое самосознание, станет символом совместимости ислама и демократии. Несмотря на все положительные оценки, разворот Турции в сторону авторитаризма, который наблюдается в последние годы, только подтверждает подозрения, что ПСР использует консервативную демократию как завесу для сокрытия политического партикуляризма своего лидера. Данная работа исследует корни политической философии ПСР, как неоднородный симбиоз консервативного национального самосознания и универсальных принципов либеральной демократии западного типа.

IDEOLOGICAL CONTEXT OF THE ESTABLISHMENT OF THE JUSTICE AND DEVELOPMENT PARTY: CONSERVATIVE DEMOCRACY AS A POLITICAL IDENTITY

Gevorkian Arshak
(Summary)

Blazing emergence of the Justice and Development Party (JDP) at the dawn of new millennium heralded the beginning of a new epoch in Turkish political life. Following the triumph in the 2002 general elections, its official political identity of “Conservative democracy” became what was

Եթե մինչ այդ պահպանողական ժողովրդավարությունը հանդես էր գալիս իբրև թուրքական տարրասեռ հասարակությունը միավորելու խորհրդանիշ (օգտագործելով այնպիսի հասկացություններ ինչպիսիք են՝ «համաշխարհայնություն», «հանդուրժողականություն», «երկխոսություն», «Եվրոպա» և այլն), ապա դրանից հետո այն դարձավ տարամերժողականության և ավտորիտարիզմի քարոզի գործիք (հասարակությունը բաժանելով «մենք»-ի և «նրանք»-ի)³²:

Ամփոփելով նշենք, որ 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո կայուն քայլերով հակաժողովրդավարական պոպուլիզմի³³ ուղին բռնած Թուրքիայում գաղափարախոսությունները մղվել են քաղաքական գործընթացների ետևաբեմ: Կարծիքներ են հնչում անգամ, որ այսուհետ «երդոգանականությունն» է Թուրքիայի պաշտոնական գաղափարախոսությունը³⁴: Իսկ ԱԶԿ պաշտոնական քաղաքական ինքնություն համարվող պահպանողական ժողովրդավարությունը, իր ստեղծման պահից հարմարեցված լինելով արդեն իսկ գոյություն ունեցող կուսակցությանը և դրա առաջնորդին, ներկայում հիշեցնում է լուկ «դատարկ խորհրդանիշ»³⁵:

³² St' u Alpan B., From AKP's 'Conservative Democracy' to 'Advanced Democracy': Shifts and Challenges in the Debate on 'Europe', South European Society and Politics, vol. 21(1), 2016, pp. 15-28.

³³ St' u Rogenhofer J. M., Antidemocratic Populism in Turkey after the July 2016 Coup Attempt, Populism, vol. 1(2), 2018, pp 116-145.

³⁴ St' u Akyol M., "Erdoganism [noun]", Foreign Policy, 21, 07, 2016, <https://foreignpolicy.com/2016/06/21/erdoganism-noun-erdogan-turkey-islam-akp/> (հասանելի է՝ 03, 11, 2018): St' u Ismail Yilmaz I., Bashirov G., The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey, Third World Quarterly, vol. 39(9), pp. 1812-1830.

³⁵ Դատարկ, բովանդակություն չունեցող խորհրդանիշի քաղաքագիտական ներկա իմաստավորման համար տե՛ս Wullweber J., Global politics and empty signifiers: the political construction of high technology, Critical Policy Studies, vol. 9(1), 2014, pp. 78-96:

expected to be a trademark of the compatibility of Islam and democracy. Despite all optimistic assessments, Turkey's authoritarian turn in recent years just reaffirmed suspicions about conservative democracy being used by JDP as a veil to conceal political particularism of its leader. The paper examines the roots of JDP's political philosophy as a heterogeneous symbiosis of conservative national identity and the universal principles of Western-type liberal democracy.

ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-
ԱԿԱՆՆԵՐԻՆ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Բանայի բառեր՝ բոլշևիկներ, քեմալականներ, դիվանագիտական հարաբերություններ, դեսպանություն, Լենին, Մուսթաֆա Քեմալ, Թուրքիա, ԽՍՀՄ

Տարածաշրջանային երկու երկրները՝ Ռուսաստանը և Թուրքիան, որոնց միջև հարաբերությունները տևական ժամանակ ուղեկցվել են պատերազմներով, 20-րդ դարի սկզբում հայտնվեցին ծանր, սակայն որոշակիորեն նմանվող վիճակում: Երկու երկրներում էլ փաստացի իշխանության տիրացած ուժերի միջև հաստատվող հարաբերությունները տրամաբանորեն պետք է տարբերվեին նախորդ փուլից և պետք է կրեին առավելապես դրական բնույթ: Թուրքիայում քեմալականներին և Ռուսաստանում բոլշևիկներին միավորում էր նաև ընդհանուր «հակաիմպերիալիստական պայքարի» լոզունգը:

Երկու երկրների միջև բարիդրացիական հարաբերությունները դե յուրե սկսվում են միմյանց ճանաչելով. Անկարայի և Մոսկվայի միջև պաշտոնական բանակցությունները սկսել են 1920 թ. ապրիլին: Դրանք երկու կողմից էլ բնութագրվում էին որպես «երկու բարեկամ ժողովուրդների միջև բարեկամության հաստատմանն ուղղված ջանքեր»: Սակայն, բնականաբար, այդ

* ԵՊՀ արևելագիտության թուրքագիտության ամբիոնի ուսանող, էլ. փոստ՝ gor.hovhannisyan7@ysumail.am

ամենի խորքում կային ռեալ քաղաքական և ռազմական շահեր ու հաշվարկներ: Ըստ Էնդրյու Մանգոյի՝ «Մուսթաֆա Քեմալը, Անատոլիա գալով, միանգամից ձեռնամուխ եղավ ռուս բոլշևիկների հետ հարաբերությունների հաստատմանը: Ըստ Քեմալի՝ դիվանագիտության մեջ բոլշևիկները կարող էին օգտագործվել որպես հակադիր ուժ Անտանտի երկրների և նրանց հովանավորության տակ գտնվող Հունաստանի դեմ: Իսկ ռազմական տեսանկյունից բոլշևիկներն անհրաժեշտ էին որպես գումարի և ռազմավթերքի աղբյուր¹»: Քեմալականների և բոլշևիկների հարաբերությունները որոշակի անհանգստություն էին առաջացնում արևմտյան երկրներում և ինչպես գրում է Փ. Դյումոնը, արևմուտքում անորոշություններ առաջ եկան Մ. Քեմալի ընտրած ուղու վերաբերյալ, նույնիսկ շրջանառվում էր մի վարկած, համաձայն որի. «Քեմալը Մոսկվայի աջակցությամբ Թուրքիայում հող էր ստեղծում սոցիալիստական հեղափոխության համար»²:

Քեմալական Թուրքիայում նշանակված առաջին խորհրդային դեսպանը Շավվա Էլիավան էր, սակայն նա հիվանդության պատճառով չկարողացավ գնալ Թուրքիա: Խորհրդային դեսպանության պատվիրակությունը Անկարա հասավ 1920 թ. հոկտեմբերի 4-ին, իսկ նոյեմբերի 9-ին բացվեց խորհրդային դեսպանատունը: 1920 թ. դեկտեմբերի 15-ին Թուրքիայում խորհրդային դեսպան նշանակվեց Պոլիկարպ (Բուդու) Մոլիվանին, ով 1921 թ. փետրվարին հասավ Անկարա, մարտի 5-ին Մ. Քեմալին հանձնեց իր հավատարմագիրն ու սկսեց գործունեությունը: Սակայն շուտով առողջական վիճակի պատճառով նա ևս չկարողացավ շարունակել իր ծառայությունը և նույն թվականի հունիսի 2-ին ստիպված էր լքել Թուրքիան: 1922 թ.

¹ Mango A., Atatürk: The Biography of the founder of Modern Turkey, NY, 1999, p. 287.

² Dumont P., Mustafa Kemal Invente la Turquie moderne, Bruxelles, 1983, p. 57.

հունվարի 26-ին Անկարա է ժամանում խորհրդային նոր դեսպան Արալովը: Մուսթաֆա Քեմալը ոչ միայն շնորհակալություն է հայտնում Արալովին, այլև նրան՝ որպես «բարեկամի», իր հետ բազում անգամներ հրավիրել է ռազմաճակատ՝ զննելու իրավիճակը³: Ուշագրավ է, որ գորքի առջև Քեմալի հետ միասին ելույթով հանդես էր գալիս նաև Արալովը՝ «եղբայրական ռուս ժողովրդի կողմից ողջունելով քաջ զինվորներին»⁴:

1921 թ. նոյեմբերի 26-ին պաշտոնական այցով Թուրքիա այցելեց Ուկրաինայի բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Մ. Ֆրունզեն: Խորհրդային Ուկրաինայի անունից կատարված այս այցի նպատակը խորհրդային բոլոր հանրապետությունների՝ Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելն էր⁵: Նկատենք, որ մեծ է եղել Ֆրունզեի դերը արևմտյան ռազմաճակատում քեմալականների հարձակման ծրագրի մշակման հարցում և պատահական չէ, որ Ստամբուլի Թաքսիմ հրապարակում տեղադրված Հանրապետության հուշարձանի վրա առկա է նաև Ֆրունզեի արձանը: Թուրքիայում Ֆրունզեի վայելած հեղինակության և հարգանքի մասին ուշագրավ վկայություններ է թողել Թուրքիայում խորհրդային դեսպան Արալովն իր հուշերում: Նա նշում է, որ Ֆրունզեի մասին մեծ ոգևորությամբ էին պատմում նրան հանդիպած գյուղացիները, տարբեր պաշտոնյաներ: Ֆրունզեի մասին բարձր կարծիք ուներ նաև Մուսթաֆա Քեմալը, ով խոստովանել էր, որ հաճույք էր ստանում նրա հետ իր ունեցած

³ Аралов С., Воспоминания советского дипломата, Москва, 1960, стр. 76-78.

⁴ Նույն տեղում, էջ 93-94:

⁵ Хейфец А., Роль миссии М. В. Фрунзе в укреплении дружественных советско-турецких отношениях, Вопросы истории, Москва, 1962, № 5, стр. 90.

գրույցներից⁶: Ֆրունզեի պատվիրակության ժամանումից կարճ ժամանակ անց Անկարայում բացվում է Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միության ներկայացուցչություն՝ Աբիլովի ղեկավարությամբ: Աբիլովին տրվել էր հատուկ հանձնարարություն թուրքերի շրջանում ծավալել լայն բացատրական աշխատանք և նրանց համոզել, որ Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների շարունակումը բխում է իրենց ազգային շահերից⁷:

1922 թ. հունվարի 4-ին Մուսթաֆա Քեմալը Լենինին է ուղարկում իր հայտնի նամակը, որն առաջին անգամ հրատարակվել է 1969 թ.: Նամակում նա Լենինին է փոխանցում իր ջերմ ողջույնները, խոսում Ֆրունզեի հետ հանդիպումների և գրույցների մասին: «Թուրքերն ու ռուսները, դարեր տևած արյունալի պատերազմներից հետո իսկույն իրար հասկացան և համաձայնության եկան իրար հետ: Ստեղծված վիճակն առաջ է բերում մյուս ազգերի զարմանքը: Շատերը մտածում էին, որ առաջացած ընկերությունն անցողիկ է և պարտադրված անկա պայմաններով: Որոշները մինչև այժմ էլ այդ կարծիքին են: Բոլորս տեսանք, թե երկու ժողովուրդներն ինչպես իրար հասկացան, իրար սիրեցին, ինչպես անցյալում թողեցին դաժան բռնապետերի կողմից պարտադրված պատերազմներն ու բախումները: Մենք ականատես էինք, թե վերջին պատերազմի ժամանակ ինչպիսի դժկամությամբ էին միմյանց դեմ կռվում թուրք և ռուս զինվորները, սպաները: Բոլորը ստիպված են համակերպվել այն մտքի հետ, որ այս ընկերությունը լինելու է տևական և կայուն: Այս ամենն այլևս իրողություն է, պարտադրված թշնամանքն այլևս սպառել է իրեն:» Նամակի վերջում փոխանցելով իր խորին հարգանքը՝ Քեմալն

անում է մի ուշադրավ հայտարարություն. «Ես վստահեցնում եմ, որ երբևէ չենք ստորագրի որևէ համաձայնագիր և չենք մտնի որևէ կոալիցիայի մեջ, եթե դրանք ուղղակի կամ անուղղակի կերպով դեմ լինեն Խորհրդային Ռուսաստանին»⁸:

Սակայն չնայած հարաբերությունների այս ընթացքին՝ 1922 թ. ամառվա սկզբին ռուս-թուրքական հարաբերությունների մեջ նկատվում է որոշակի սառեցում և դրանում կարևոր դեր ուներ ՉԵԿԱ-ն: Դեռևս 1921 թ. հոկտեմբերին Չիչերինը Լենինին գրած իր նամակում ուշադրություն էր հրավիրել թուրք դիվանագետների և առևտրականների հանդեպ չեկիստների կոպիտ վերաբերմունքի վրա. «Եթե հատուկ ծառայությունների և հատկապես չեկիստների՝ Սև ծովի ափերին կատարած վայրագությունները շարունակվեն, ապա անհնար կլինի շարունակել Թուրքիայի հետ լավ հարաբերությունները»⁹: Լենինը պատասխան նամակում հրամայում է ձեռնարկել ամենակտրուկ միջոցները. «Ձերբակալեք անիծյալ չեկիստներին, մեղավորներին բերեք Մոսկվա և գնդակահարեք»¹⁰: Թուրքերի հանդեպ բացասական վերաբերմունքին ի պատասխան 1922 թ. մայիսի 11-ին Ալի Ֆուադը թուրքական դեսպանատան աշխատակիցների հետ միասին ցուցադրաբար լքում է Մոսկվան¹¹:

Կարճ ժամանակ անց Թուրքիայում էլ ձեռնարկվում են համարժեք քայլեր ընդդեմ ռուսների և Անկարայում հրդեհվում է Ռուսաստանի դեսպանատունը: Ըստ Արալովի՝ հրդեհը

⁶ Аралов С., նշված աշխ., էջ 52-53.

⁷ Хейфец А., նշված հոդ., էջ 104.

⁸ Atatürk'ün Lenin'e yazdığı mektup (Sansürsüz), <http://avruforum.org/aturkunenine-yazdigi-mektup-sansursuz/>

⁹ Ленин В., Неизвестные документы 1891-1922, Москва, 1999, стр. 476-477.

¹⁰ Նույն տեղում, էջ 478:

¹¹ Еремеев Д., Становление республиканской Турции (1918-1939 годы), Москва, 2004, стр. 93-94.

կազմակերպել էր ֆրանսիացի լրտես մայոր Մյուժենը, ով գործել էր վարչապետ Հուսեյն Ռաուֆ Բեյի համաձայնությամբ¹²: Հատկանշական է այն փաստը, որ չնայած առկա լարվածությանը, Մուսթաֆա Քեմալն անձամբ էր հսկում հրդեհի մեկուսացման միջոցառումները: Թուրքիայի համապատասխան մարմինները նաև խոստացան, որ կգտնեն մեղավորներին և կպատժեն, սակայն իրականում այդ ուղղությամբ որևէ գործնական քայլ չկատարվեց:

Ռուս-թուրքական հարաբերություններում բացասական միտումները շարունակվում են նաև հաջորդ տարում և 1923 թ. փետրվարի 4-ին Արալովը Կարախանին ուղղված իր նամակում նշում է. «Թուրքերի հետ մեր հարաբերություններն օրեցօր վատանում են, եթե իրականում նայենք, երբեմն նույնիսկ թշնամական երանգ են ստանում: Բոլոր հարցերում՝ թե մեծ, թե փոքր, դիմադրություն ենք հանդիպում, ո՛չ արտաքին գործերի կոմիսարիատը, ո՛չ դեկավարությունը որևէ հարցով մեզ ընդառաջ չեն գնում, անընդհատ փորձում են մեզ հունից հանել: Ամիսներ շարունակ չենք կարողանում հանդիպել որևէ բարձրաստիճան պաշտոնյայի: Լոզանի կոնֆերանսի ընթացքում Ռաուֆ Բեյն ընդամենը մեկ անգամ է այցելել դեսպանատուն: Լոզանի կոնֆերանսի մասին մեր դիրքորոշումը ոչ մի անգամ չեն հարցրել և հաշվի չեն առել»: Դեսպանն առկա իրավիճակի հիմնական մեղավոր համարում է վարչապետ Ռաուֆ Բեյին, ով, ըստ Արալովի՝ «ղեկավարում է հակառուսական բոլոր միջոցառումները, սուլթանության կողմնակից է և անզիպացիների հետ ունի հին կապեր»: Արալովը նաև նշում է, որ Ռաուֆ Բեյն արգելել է լրագրողներին այցելել Մոսկվա և ընդհանրապես Ռուսաստանի վերաբերյալ որևէ բան գրել¹³:

Արդեն 1924 թ. թուրք-ռուսական հարաբերություններում արձանագրվեց որոշակի դրական տեղաշարժ: Մուսթաֆա Քեմալը 1924 թ. մարտի 1-ին ԹԱՄԺ-ում ունեցած իր ելույթի ժամանակ անդրադառնալով թուրք-խորհրդային հարաբերություններին, նշել է. «Մենք անկեղծորեն գնահատում ենք Ռուսաստանի հետ հարաբերությունների՝ ընկերական մակարդակում պահպանումը և դրանց անընդհատ զարգացումը: Առկա որոշ բարդությունները մասնակի լուծվել են: Հուսով ենք, որ հյուպատոսության մասին համաձայնագրի կնքումը, որն իսկույն ցույց կտա իր օգուտները, չի հետաձգվի»¹⁴: Մ. Քեմալը թուրք-խորհրդային հարաբերությունների մասին խոսել է նաև 1924 թ. նոյեմբերի 1-ին՝ ասելով, որ «վաղեմի ընկեր ՌԽՍՀ-ի հետ մեր ընկերական հարաբերությունները օրեցօր զարգանում են»:

1924 թ. սեպտեմբերից սկսվեցին դրվել թուրք-խորհրդային բարեկամության և չհարձակման մասին պայմանագրի հիմքերը, որը ստորագրվելու էր հաջորդ տարի: ԽՍՀՄ նոր դեսպան Մյուրիցը վարչապետ Իսմեթ փաշային առաջարկեց զարգացնել Մոսկվայի պայմանագրի դրույթները և վերակնքել դրանք: Այդ առաջարկով սկսվեցին բանակցությունները, որոնք ավարտվելու էին 1925 թ. վերջին: Բանակցությունների ընթացքում՝ 1924 թ. սեպտեմբերի 24-ին, ԽՍՀՄ արտաքին գործերի կոմիսար Չիչերինը հեռագիր ուղարկեց Մյուրիցին, որտեղ կարգադրում էր թուրքական կողմին առաջարկել պայմանագրին ավելացնել չհարձակման մասին դրույթը: 1925 թ. կնքված խորհրդա-թուրքական պայմանագիրը վավերացվեց Թուրքիայի ազգային մեծ ժողովում 1926 թ. փետրվարի 11-ին: 1926 թ. փետրվարի 18-ին Մուսթաֆա Քեմալն այցելեց Անկարայում ԽՍՀՄ դեսպանատուն և

¹² Аралов С., նշված աշխ., էջ 68.

¹³ Meyer M., Arşiv Belgeleri Işığında Lozan Konferansı Sırasında Türk-Rus İlişkileri, Akademik Bakış, Ankara, 2009, c. 3, s. 262.

¹⁴ Նույն տեղում, էջ 263:

հայտարարեց, որ 1925 թ. բարեկամության և չեզոքության մասին պայմանագիրը դեռևս սկիզբն է երկու երկրների բարեկամական հարաբերությունների: Նա նաև նշեց, որ դեռ դրա վրա շատ պետք է աշխատեն և որ վերջնական նպատակը թուրք-խորհրդային դաշնագրի կնքումն է¹⁵: 1926 թ. ապրիլի 19-ին Անկարայում բացվեց ԽՍՀՄ նոր դեսպանատունը: Բացման արարողությանը մասնակցում էր նաև Մուսթաֆա Քեմալը:

1926 թ. ապրիլին տեղի ունեցավ գյուղատնտեսության նախարար Սաբրի բեյի գլխավորած պատվիրակության այցը Մոսկվա, որի արդյունքում նույն թվականի սեպտեմբերի 9-ին կնքվեց թուրք-սովետական սահմանի մշակելի հողերի վերջնական բաժանման վերաբերյալ սահմանային արձանագրությունը: 1926 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիայի արտգործնախարար Թևֆիք Ռյուշթու Արասը «Համիդիե» ռազմանավով այցելեց Օդեսսա: Նրան և ուղեկցող պատվիրակությանը դիմավորեց Չիչերինը, որին հաջորդեց ընդգծված դրական շեշտադրումներով հայտարարություններ և «Համիդիե» ռազմանավի ամբողջ անձնակազմի համար կազմակերպվեց ճաշկերույթ¹⁶:

1927 թ. մարտի 11-ին Թուրքիայի և ԽՍՀՄ միջև տնտեսական հարաբերությունների զարգացման նպատակով Անկարայում կնքվեց առևտրի և բեռնափոխադրումների մասին պայմանագիրը, իսկ հաջորդող տարիներին արձանագրվեցին բարձրաստիճան պաշտոնյաների մի շարք փոխադարձ այցեր և երկու կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն ներկայակի քննարկումներ: 1929 թ. դեկտեմբերի 12-ին պաշտոնական այցով Թուրքիա ժամանեց ԽՍՀՄ արտաքին գործերի կոմիսարի տեղակալ Չիչերինը: Այցի հիմնական

նպատակը 1925 թ. ստորագրված թուրք-խորհրդային պայմանագրի վերակնքումն ու հավելյալ կետերի ավելացումն էր¹⁷: 1929 թ. դեկտեմբերի 17-ին ավելացված արձանագրության հետ միասին երկու տարով երկարաձգվեց 1925 թ. թուրք-խորհրդային բարեկամության և չհարձակման մասին պայմանագիրը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ 1920-ականներին թուրք-խորհրդային (քեմալական-բոլշևիկյան) հարաբերությունները ձևավորվելով հաճախ փոխադարձ շահավետ պայմաններում, արձանագրել են դրական ընթացք: Փաստենք նաև, որ թուրք-խորհրդային քաղաքական հարաբերությունները նույն կերպ չեն զարգացել, ինչ առևտրա-տնտեսական ոլորտի հարաբերությունները, որոնք այսօր էլ անհամեմատ ավելի բարձր մակարդակի են: Դիտարկելով թուրք-ռուսական մերօրյա հարաբերությունները՝ կարելի է գտնել բազմաթիվ նմանություններ 1920-ականների իրավիճակի հետ և տանել մի շարք գուզահետներ:

¹⁵ Çağatay B., 1920'li Yıllarda Türk-Sovyet İlişkileri: Kronolojik Bir Çalışma, Selçuk Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, Konya, 2008, s. 298.

¹⁶ Նույն տեղում, էջ 300:

¹⁷ Նույն տեղում, էջ 306:

**РУССКО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В 1920-Х ГОДАХ.
КРАТКИЙ ОБЗОР**

**Оганнисян Гор
(Резюме)**

Две региональные страны- Россия и Турция, отношения которых на протяжении долгого времени сопровождалась войнами, в начале 20-го века оказались в тяжелых, но в какой-то степени похожих положениях. Отношения между силами, которые в обеих странах захватили фактическую власть, по логике должны были отличаться от предыдущего этапа и нести преимущественно позитивный характер. В Турции кемалистов и в России большевиков объединял общий лозунг – «Борьба против империализма».

**RUSSIAN-TURKISH RELATIONS IN THE 1920-S. A BRIEF
OVERVIEW**

**Gor Hovhannisyann
(Summary)**

Two regional countries-Russia and Turkey, whose relations were accompanied by wars for a long period of time, found themselves in a difficult, but to some degree similar situation. The relations between powers, who had taken over the actual rule in both countries, logically were to be different from the previous phase and be more of a positive nature. In Turkey the kemalists and in Russia the Bolsheviks were united by the common slogan “The struggle against imperialism”

*Հարությունյան Ավետիք**

**2015 թ. ԽՈՐՀՐԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ**

Բանալի բառեր՝ Թուրքիա, խորհրդարանական ընտրություններ, արտահերթ ընտրություններ, քրդական հարց, մրցակցային ավտորիտարիզմ

Թուրքիայում 2015 թ. տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններն իրենց նշանակությամբ տարբերվում են «Արդարություն և զարգացում» (ԱԶԿ) կուսակցության կառավարման շրջանում տեղի ունեցած խորհրդարանական նախորդ բոլոր ընտրություններից մի քանի պատճառներով: Առաջին, այս ընտրություններում հաղթանակը չափազանց կարևոր էր իշխող կուսակցության համար՝ այդքան ցանկալի սահմանադրական փոփոխություններն իրականացնելու և նախագահական համակարգին անցում կատարելու համար: Երկրորդ, ըստ էության, 2015 թ. խորհրդարանական ընտրությունները դառնում են ԱԶԿ-ի՝ 2002 թ-ից ի վեր կրած առաջին լուրջ անհաջողությունը: Եվ երրորդ, 2015 թ. երկու խորհրդարանական ընտրությունների արդյունքում Թուրքիայում սկիզբ է դրվում նոր գործընթացների: Մույն հողվածի նպատակն է ներկայացնել 2015 թ. խորհրդարանական երկու ընտրությունների

* ԵՂՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ avoharutyunyan94@gmail.com

արդյունքներն ու դրանց պատճառները, ինչպես նաև այդ արդյունքներով պայմանավորված հետագա զարգացումները:

Ինչպես նշվեց, 2015 թ. խարհրդարանական ընտրությունները չափազանց կարևոր էին ԱԶԿ-ի համար: Կուսակցության առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդոգանը դեռ իր վարչապետության շրջանում ունեցած ելույթներում հանդես էր գալիս որպես Թուրքիայում նախագահական համակարգի ներդրման ջատագով¹, և բնական է, որ 2014 թ. երկրի նախագահ ընտրվելուց հետո էլ պետք է առաջ մղեր սահմանադրական փոփոխությունների իրականացման գաղափարը²: Այդուհանդերձ, միայն 2015 թ. նախատեսված խորհրդարանական ընտրություններում տարած վստահ հաղթանակը թույլ կտար ԱԶԿ-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում (ԹԱՄԺ) ստանալ բավական թվով պատգամավորական տեղեր՝ անհրաժեշտ սահմանադրական փոփոխություններն անմիջապես խարհրդարանում ընդունելու կամ դրանք համաժողովրդական հանրաքվեի ներկայացնելու համար³: Պատահական չէ, որ ԱԶԿ-ի նախընտրական քարոզարշավը կառուցվում է հենց նոր սահմանադրության ընդունման և նախագահական համակարգին անցնելու գաղափարի շուրջ⁴:

Մրան հակառակ՝ բոլոր երեք խոշոր ընդդիմադիր ուժերը՝ «Հանրապետական ժողովրդական» (ՀԺԿ), «Ազգայնական

շարժում» (ԱՇԿ) և «Ժողովուրդների դեմոկրատական» (ԺԴԿ) կուսակցությունները, որոնք լուրջ հավակնություններ ունեին խորհրդարան անցնելու համար, հանդես էին գալիս Թուրքիայում նախագահական համակարգի ներդրման գաղափարի քննադատությամբ՝ այն ներկայացնելով որպես ԱԶԿ-ի և անձամբ Էրդոգանի՝ երկիրը դեպի ավտորիտարիզմ տանելու մտադրություն⁵: Բացի այդ, ձևավորվել էին նաև մի շարք այլ գործոններ, որոնք իրենց ազդեցությունը պետք է ունենային առաջիկա ընտրությունների արդյունքների վրա: Փորձենք հակիրճ ներկայացնել դրանցից մի քանիսը:

Առաջին գործոնը իշխանությունների և մասնավորապես նախագահ Էրդոգանի դեմ բավականին զգալի ընդդիմադիր տրամադրությունների խորացումն էր, որն իր արտահայտումը ստացավ դեռ 2013 թ. Գեզիի այգու ցույցերի ընթացքում: Իշխանությունների արձագանքը այս իրադարձություններին անհամաչափ կոշտ էր, ինչի մասին են վկայում նաև միջազգային տարբեր կազմակերպությունների պատրաստած զեկույցները⁶: Բացի այդ, իշխանությունների մոտ աստիճանաբար խորացող ավտորիտար հակումների մասին էին վկայում նաև այս շրջանում մամուլի նկատմամբ իշխանությունների որդեգրած քաղաքականությունը⁷:

¹ Turkish PM joins debate on presidential system, <http://www.hurriyetdailynews.com/turkish-pm-joins-debate-on-presidential-system-20217> (հասանելի է 02, 06, 2018)

² Erdoğan: Yeni Türkiye'nin cumhurbaşkanı olacağım, <http://www.dw.com/tr/erdo%C4%9Fan-yeni-t%C3%BCrkiyenin-cumhurba%C5%9Fkan%C4%B1-olaca%C4%B1m/a-17780483> (հասանելի է 02, 06, 2018)

³ Առաջին դեպքում անհրաժեշտ կլինեին ստանալ պատգամավորների ընդհանուր թվի (550) ձայների 2/3-ը (367 ձայն), իսկ երկրորդ դեպքում՝ 3/5-ը (330 ձայն):

⁴ Canyaş F. B., Canyaş F. O. & Gümrükçü S. B., Turkey's 2015 parliamentary elections, *Journal of Balkan and Near Eastern Studies*, 18:1, 2016, pp. 80-81.

⁵ Նույն տեղում, էջ 81-85:

⁶ St' u Amnesty International կազմակերպության պատրաստած զեկույցը՝ Gezi Park Protests: Brutal denial of the right to peaceful assembly in Turkey, Amnesty International, 2013, <https://www.amnesty.org/download/Documents/12000/eur440222013en.pdf> (հասանելի է 02, 06, 2018)

⁷ St' u Freedom House կազմակերպության պատրաստած զեկույցը՝ Democracy in Crisis: Corruption, Media, and Power in Turkey, A Freedom House Special Report, 2014, <https://freedomhouse.org/sites/default/files/Turkey%20Report%20-%202014-3-14.pdf> (հասանելի է 02, 06, 2018)

Երկրորդ, իշխանությունների հեղինակությանը զգալի հարված է հասցնում 2013 թ. դեկտեմբերին սկսված կոռուպցիոն սկանդալը, որի մեջ ներգրավված էին նաև Էրդոդանի կառավարության երեք նախարարների որդիները⁸: Վերջապես, առանձին կարևոր գործոն էր դարձել նաև քրդամետ ԺԴԿ-ի մասնակցությունը ընտրություններին: Բանն այն է, որ կուսակցությունն այս ընտրություններին որոշում էր կայացրել մասնակցել ոչ թե անկայիս պատգամավորներով, ինչպես սովորաբար անում էին քրդամետ ուժերը, այլ իր սեփական կուսակցական ցուցակով⁹ հաշվի առնելով վերջինիս առաջնորդ Սելահեթին Դեմիրթաշի՝ 2014 թ. նախագահական ընտրություններում ստացած զգալի թվով ձայները¹⁰: ԺԴԿ-ի այս որոշումը և վերջինիս կողմից 10%-անոց շեմը հաղթահարելու հավանականությունը հասկապես վտանգավոր էր առնվազն 330 պատգամավորական մանդատի հավակնող ԱԶԿ-ի համար, քանի որ այդ դեպքում ինքնըստինքյան կնվազեր վերջինիս պատգամավորների թիվը խորհրդարանում:

Այս ամենի արդյունքում 2015 թ. հունիսի 7-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ը ստանում է ձայների ընդամենը 40,87%-ը, կամ մոտավորապես 19 մլն ձայն: Սա ավելի քան 2 մլն-ով պակաս էր 2011 թ. ընտրություններում ԱԶԿ-ի ստացած ձայների քանակից, այն դեպքում, երբ ընտրողների ընդհանուր թիվը 52,8 մլն-ից հասել էր 56,6 մլն-ի:

⁸ İşte gözüktü alinan isimler!, <http://www.haberturk.com/gundem/haber/904362-iste-gozaltina-alinan-isimler/5> (հասանելի է 02, 06, 2018)

⁹ Demirtaş: HDP seçimlere parti olarak girecek, <http://www.radikal.com.tr/politika/demirtas-hdp-secimlere-parti-olarak-girecek-1271729/> (հասանելի է 02, 06, 2018)

¹⁰ 2014 թ. նախագահական ընտրություններում Դեմիրթաշը զբաղեցրել էր երրորդ տեղը ստանալով ընտրողների ընդհանուր ձայների 9,76%-ը: Տվյալները վերցված են Թուրքիայի Հանրապետության Բարձրագույն ընտրական խորհրդի (Yüksek Seçim Kurulu) պաշտոնական կայքից՝ <http://www.ysk.gov.tr/>

Բացի այդ, ՀԺԿ-ի և ԱՇԿ-ի հետ միասին 10%-անոց շեմը հաղթահարում է նաև քրդամետ ԺԴԿ-ը՝ զգալիորեն ընդլայնելով իր ընտրազանգվածը և հավաքելով ձայների 13,12%-ը¹¹: Այս ամենի հետևանքով ԱԶԿ-ը խորհրդարանում ստանում է ընդամենը 258 պատգամավորական մանդատ, ինչը բավարար չէր անգամ միակուսակցական կառավարություն ձևավորելու համար¹²:

Ընտրություններին հաջորդած ժամանակահատվածում, սակայն, կռալիցիոն կառավարություն ձևավորելու ԱԶԿ-ի բոլոր փորձերը ավարտվում են անհաջողությամբ: Չախողվում են նաև երեք ընդդիմադիր կուսակցությունների՝ կռալիցիա ձևավորելու փորձերը՝ կապված քրդական հարցում ազգայնական ԱՇԿ-ի և քրդամետ ԺԴԿ-ի հայացքների անհամատեղելիությամբ: Արդյունքում նոյեմբերի 1-ին նշանակվում են արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

Հունիսի 7-ի ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածն աչքի է ընկնում նաև այլ կարևոր զարգացումներով: Հուլիսի 20-ին Սուրուչում քուրդ ակտիվիստների կողմից կազմակերպված ցույցի ժամանակ տեղի ունեցած պայթյունի հետևանքով մահանում է երեք տասնյակից ավել մարդ¹³: Չնայած ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնում է «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը, սակայն ԺԴԿ-ի առաջնորդ Դեմիրթաշը

¹¹ Ընտրություններում ԺԴԿ-ի գրանցած հաջողության մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Grigoriadis I. N., The Peoples' Democratic Party (HDP) and the 2015 elections, Turkish Studies, 17:1, 2016, pp. 39-46:

¹² Բոլոր տվյալները վերցված են Թուրքիայի Հանրապետության Բարձրագույն ընտրական խորհրդի (Yüksek Seçim Kurulu) պաշտոնական կայքից՝ <http://www.ysk.gov.tr/>

¹³ Suruç'ta patlama: 32 ölü, <http://www.mynet.com/haber/yasam/suructa-patlama-32-olu-1928318-1> (հասանելի է 02, 06, 2018)

մեղադրանքներ է հնչեցնում նաև իշխող կուսակցության հասցեին՝ նշելով, որ առանց պետական աջակցության ահաբեկչական գործողությունն իրականացնել հնարավոր չէր լինի¹⁴: Սրան հետևում է Ջեյլանփընարում քրդերի կողմից երկու թուրք ոստիկանի սպանությունը՝ ի նշան Սուրուչում տեղի ունեցածի վրեժխնդրության¹⁵: Այս գործողություններից հետո Թուրքիայի հարավ-արևելքում կրկին վերսկսվում են թեժ ռազմական գործողությունները Թուրքիայի ՋՈՒ-ի և ՔԱԿ զինյալների միջև՝ փաստացի վերջ տալով 2013 թ. հայտարարված հրադադարը:

Երկրի հարավ-արևելքում վերսկսված ռազմական գործողությունների պայմաններում ԱԶԿ-ը ուժեղացնում է ճնշումները նաև ԺԴԿ-ի դեմ՝ վերջինիս մեղադրելով խաղաղության գործընթացի տապալման մեջ¹⁶, ակտիվանում են կուսակցության անդամների նկատմամբ հետապնդումները¹⁷: Նախընտրական քարոզչության ընթացքում իշխանությունների կողմից լայնորեն շահարկվում է նաև Թուրքիայում ահաբեկչության վտանգի մակարդակի կտրուկ բարձրացումը¹⁸,

¹⁴ Demirtaş: Saldırının birinci sorumlusu hükümettir, <http://siyasihaber3.org/demirtas-saldirinin-birinci-sorumlusu-hukumettir#.Vaz58Zmcso.facebook> (հասանելի է 02, 06, 2018)

¹⁵ PKK'dan şehit edilen iki polis için flaş açıklama: Biz yapmadık, http://www.cumhuriyet.com.tr/haber/turkiye/333183/PKK_dan_sehit_edilen_iki_polis_i_cin_flas_aciklama_Biz_yapmadik.html (հասանելի է 02, 06, 2018): Հակաանջակալ է, որ գործողությունն իրականացվել էր անկախ գործող քրդական խմբի կողմից առանց ՔԱԿ ղեկավարության ինսուրանսի:

¹⁶ Yalçın Akdoğan'dan HDP açıklaması, <http://www.milliyet.com.tr/yalcin-akdogan-dan-hdp-aciklamasi-siyaset-2108689/> (հասանելի է 02, 06, 2018)

¹⁷ Ştu Vertjajev K. B., Курдская политическая оппозиция: до и после внеочередных парламентских выборов 1 апреля 2015 г., Эпоха правления в Турции Партии справедливости и развития: промежуточные итоги и прогнозы. (2002-2015), ИВ РАН, Москва, 2017, стр. 31-42; Bardakçı M., 2015 parliamentary elections in Turkey: demise and revival of AKP's single-party rule, Turkish Studies, 17:1, 2016, pp. 4-18.

¹⁸ Հերթական ահաբեկչական գործողությունը տեղի է ունեցել հոկտեմբերի 11-ին Անկարայում՝ իսլամական 100-ից ավել մարդու կյանք:

կայունության վերականգնումը ուղղակիորեն կապվում է առաջիկա ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակի հետ. «Եթե կայունություն և անվտանգություն ենք ցանկանում, պետք է շատ լավ մտածենք, թե ում ենք ձայն տալու»¹⁹:

Այսպիսի պայմաններում նոյեմբերի 1-ին անցկացված ընտրությունների արդյունքում ԱԶԿ-ը գրեթե 5 մլն-ով ավելացնում է իր ստացած ձայների քանակը՝ այն հասցնելով 49,5%-ի՝ գերազանցապես ի հաշիվ ԱԾԿ-ի (16,29%-ից իջնում է 11,9%-ի) և ԺԴԿ-ի (13,12%-ից իջնում է 10,76%-ի)²⁰: Չնայած ընտրություններում տարած այս հաղթանակը հնարավորություն է ընձեռում ԱԶԿ-ին միակուսակցական կառավարություն ձևավորել՝ այդուհանդերձ, քանի որ նույն 4 կուսակցությունները կրկին հաղթահարում են 10%-անոց շեմը, ԱԶԿ-ին այդպես էլ չի հաջողվում սահմանադրական փոփոխություններն իրականացնելու համար անհրաժեշտ թվով պատգամավորական տեղեր ստանալ ԹԱՄԺ-ում:

Այսպիսով, 2015 թ. երկու ընտրությունները ցույց են տալիս թուրքական հասարակության մեջ շարունակվում է խորանալ բևեռացվածությունը ԱԶԿ-ի կողմնակիցների և հակառակորդների միջև: Ակնհայտ կերպով դրսևորվում է իշխանությունների անհանդուրժողական վերաբերմունքը ցանկացած այլախոհության նկատմամբ և պատրաստակամությունը օգտագործել բոլոր հնարավոր միջոցները սեփական իշխանության պահպանման համար: Պատահական չէ, որ 2015 թ. իր զեկույցում Եվրոպական հանձնաժողովը Թուրքիայում հետընթաց է արձանագրել գրեթե

¹⁹ 1 Kasım'da istikrar oylanacak, <https://www.yenisafak.com/gundem/1-kasimda-istikrar-oylanacak-2333800> (հասանելի է 02, 06, 2018)

²⁰ Բոլոր սլայդները վերցված են Թուրքիայի Հանրապետության բարձրագույն ընտրական խորհրդի պաշտոնական կայքից՝ <http://www.ysk.gov.tr/>

բոլոր ոլորտներում՝ քրդական հարցի կարգավորում, ցուցերի ազատություն, դատական համակարգի անկախություն և իշխանության տարանջատման սկզբունք, կաշառակերության դեմ պայքար, խոսքի ու մամուլի ազատություն և այլն²¹:

Հատկանշական է նաև, որ որոշ ուսումնասիրողներ հենց 2015 թ. ընտրություններն են համարում Թուրքիայում վերջնական անցում «մրցակցային ավտորիտարիզմի» (Competitive authoritarianism), որը մեկնարկել էր դեռ 2011 թ. ընտրություններից հետո²²: Ըստ ուսումնասիրողների՝ նշված համակարգը չի կարող ո՛չ ժողովրդավարական, ո՛չ բացարձակ ավտորիտար համարվել, քանի որ չնայած ժողովրդավարական բոլոր սկզբունքներն ու իրավունքները պարբերաբար ուղնահարվում են իշխանությունների կողմից, այդուհանդերձ, շարունակում են գործել 4 ոլորտներ (ընտրություններ, օրենսդիր ոլորտ, դատական համակարգ, ՋԼՄ), որոնցից առնվազն մեկում ընդդիմադիր ուժերը կարող են ձեռնոց նետել իշխող ուժին և նույնիսկ պարտության մատնել նրան²³: Կարծում ենք, որ այս բնութագիրը լավագույնս համապատասխանում է Թուրքիայում այս շրջանում ստեղծված իրադրությանը, քանի որ ինչպես ցույց են տալիս 2015 թ. ընտրությունները՝ չնայած ԱԶԿ-ի կողմից գրեթե բոլոր ոլորտներում վերահսկողության հաստատման փորձերին և ընտրությունների ընթացքում անհավասար պայմանների ստեղծմանը՝ ընդդիմադիր ուժերը ոչ միայն շարունակում են ընտրությունների ժամանակ լուրջ մրցակցության մեջ մտնել

իշխող ուժի հետ, այլ նաև ի վիճակի են դրանց միջոցով ձախողել վերջինիս ունեցած հավակնությունները:

Այսպիսով, 2015 թ. ընտրությունների արդյունքում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը այդպես էլ չի ստանում անհրաժեշտ ձայները սահմանադրական փոփոխությունները ինքնուրույն իրականացնելու համար: Այդուհանդերձ, իշխանական լծակների ակտիվ օգտագործման և ազգայնական հոետորաբանության խորացման շնորհիվ ԱԶԿ-ը կարողանում է ապահովել անհրաժեշտ թվով պատգամավորական մանդատներ միակուսակցական կառավարություն ձևավորելու համար: Սրան զուգահեռ քրդական խնդրի խաղաղ կարգավորման գործընթացի տապալման և երկրի հարավ-արևելքում խոշոր ռազմական գործողությունների ծավալման պայմաններում տեսականորեն հնարավոր է դառնում իշխանությունների համագործակցությունը ԱՇԿ-ի հետ, որի գլխավոր հակասությունը ԱԶԿ-ի հետ կայանում էր հենց քրդական հարցում իշխանությունների որդեգրած համեմատաբար մեղմ դիրքորոշման մեջ: Արդյունքում զգալիորեն աճում է իշխանությունների կախվածությունը հասարակության առավել ազգայնական տրամադրված հատվածների աջակցությունից, ինչը պետք է հանգեցնեի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության և վերջինիս առաջնորդ նախագահ Էրդողանի կողմից հետագայում առավել ազգայնական քաղաքականության որդեգրմանն ու իրականացմանը:

²¹ Commission Staff Working Document, Turkey 2015 Report, 10, 11, 2015, pp. 4-5.

²² Stéu' Esen B. & Gumuscu S., Rising competitive authoritarianism in Turkey, Third World Quarterly, Volume 37, Issue 9, 2016, pp. 1581-1606; Sarfati Y., How Turkey's slide to authoritarianism defies modernization theory, Turkish Studies, 18:3, 2017, pp. 395-415.

²³ Levitsky S. and Way L., The Rise of Competitive Authoritarianism, Journal of Democracy Volume 13, Number 2, April 2002, pp. 51-65.

ПАРЛАМЕНТСКИЕ ВЫБОРЫ 2015 ГОДА В ТУРЦИИ

*Մարգարյան Հայկ**

**Арутюнян Аветик
(Резюме)**

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԹՈՒՐԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ**

В статье рассмотрены парламентские выборы в Турции 2015 года. Данные выборы не только ознаменовали первую неудачу правящей в Турции с 2002 года партии «Справедливости и развития», но и дали начало новым процессам, эффект которых ощутим и в последующих годах. Цель статьи представить как основные причины неудачи ПСР в выборах, так и происходящие основные внутриполитические развития в данный период времени.

Բանալի բառեր՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, Թուրքիա, Օսմանյան կայսրություն, Մտամբուլ, «Արդարություն և զարգացում» կուսակցություն, Ռեջեփ Թայիփ Էրդողան

PARLIAMENTARY ELECTIONS IN TURKEY IN 2015

**Harutyunyan Avetik
(Summary)**

The article describes parliamentary elections in Turkey in 2015. The elections marked the first failure of the ruling Justice and Development Party in Turkey since 2002, as well as the beginning of new processes in Turkey that kept affecting its domestic politics over the following years. The article discusses the main reasons of failure of JDP in the elections and the developments following it.

Տեղական ինքնակառավարման մարմինների ի հայտ գալն ու դրանց գործունեությունը ընկալվում է որպես պետական միավորի կառավարումն առավել արդյունավետ իրականացնելու միջոց, իսկ այդ մարմինների գոյությունը վկայում է ժողովրդավարության առկայության և որոշումներ կայացնելու գործընթացին հասարակության լայն շրջանակների անմիջական մասնակցության մասին¹: Նշվածին զուգահեռ, տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ թուրքական ընկալումները պարունակում են նաև հստակ քաղաքական բաղադրիչ: Այդպես է եղել Օսմանյան կայսրությունում, այդպես է նաև հանրապետական Թուրքիայում:

Տեղական ինքնակառավարման մարմինների թուրքական մոդելը, այդ երկրում տեղի ունեցած տարբեր գործընթացների հետևանքով, ձեռք է բերել որոշակի յուրահատկություններ՝ վերաիմաստավորելով դրանց մասին հասարակության և

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի հայցորդ, Էլ. փոստ՝ haykmargaryan1990@mail.ru
¹ Havenga B., The restructuring of local government with specific referenceto the City of Tshwane, Published PhD Thesis, Pretoria: University of Pretoria, 2002.

իշխանությունների պատկերացումները: Ըստ այդմ, Թուրքիայում տեղական իշխանությունների առաքելությունը հասարակությանն ավելի մոտ լինելն է, իրենց ղեկավարած համայնքի խնդիրները տեղում լուծելն ու կարիքները հոգալը, անհնարինության դեպքում՝ դրանք իշխանության ավելի բարձր օղակներին ներկայացնելը, օգնելը, որ երկրի իշխանությունները համակողմանի և ամբողջական տեղեկություններ ունենան տվյալ համայնքում տիրող իրավիճակի մասին:

Թուրքիայում համայնքային իշխանությունների առաջացման պատմությունը սկզբնավորվում է դեռևս Օսմանյան կայսրությունից: 1854 թ. Օսմանյան կայսրության մայրաքաղաք Մտամբուլում հիմնադրվեց տեղական ինքնակառավարման առաջին մարմինը²: Մտամբուլում քաղաքային իշխանությունների ձևավորման գործում նշանակալի ավանդ են ունեցել Օսմանյան կայսրությունում ապրող ազգային փոքրամասնություններն ու եվրոպական տերությունները: 1857 թ. Մտամբուլի Բեյոլլու թաղամասում, որտեղի բնակչությունը մեծամասամբ բաղկացած

էր ազգային փոքրամասնություններից, հիմնադրվեց քաղաքային իշխանության մարմին, որը կոչվեց «6-րդ վարչական շրջան»³:

Դեռևս 19-րդ դարում ակնհայտ էր, որ տեղական ինքնակառավարման մարմիններ ձևավորելով օսմանյան իշխանությունները ձգտում էին առավելագույն վերահսկողության տակ պահել կայսրության բնակչությանը: Արդեն 1864 թ. Օսմանյան կայսրությունում ընդունվեց «Նահանգային կանոնակարգը»⁴, որով Օսմանյան կայսրությունը, հիմք ընդունելով Ֆրանսիայի կառավարման համակարգի օրինակը, ստեղծեց նահանգային իշխանություններ: Կանոնակարգը նախատեսում էր տեղական ինքնակառավարման նոր մարմիններ, որով էլ, ըստ էության, իշխանությունն Օսմանյան կայսրությունում որոշակիորեն ապակենտրոնացվում էր:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Օսմանյան կայսրությունում ստեղծված ծայրահեղ ծանր իրավիճակը բացասական ազդեցություն էր ունեցել նաև տեղական ինքնակառավարման մարմինների վրա. դրանք, ինչպես և իշխանության մյուս մարմինները, ըստ էության, չէին կարողանում

² 1853-1856 թթ. Ղրիմի կամ Արևելյան պատերազմի ընթացքում կայսրության մայրաքաղաքի բնակչության շրջանում որոշակի դժգոհություն էր հասունացել, որի հետևանքով իշխանությունները որոշեցին Մտամբուլում ձևավորել քաղաքային իշխանություններ: Չնայած քաղաքային իշխանություններ ձևավորելու պաշտոնական դրդապատճառը քաղաքի գեղեցկությունն ու մաքրությունն ապահովելն էր, այդ մարմնի հիմնական առաքելությունը հասարակական հնարավոր ընդվզումները վերահսկողության տակ պահելն էր: Բացի այդ, կայսրության իշխանությունները հույս ունեին նաև, որ քաղաքային իշխանությունների ձևավորմամբ Մտամբուլը հետ չի մնա եվրոպական այլ պետությունների մայրաքաղաքներից, որտեղ արդեն կային նման մարմիններ: Հատկանշական է, որ Մտամբուլում քաղաքային իշխանությունների ձևավորման պահանջ էին ներկայացնում նաև քաղաքում բնակվող ազգային փոքրամասնությունները: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ünal F., Tanzimattan Cumhuriyete Türkiye”de Yerel Yönetimlerin Yasal ve Yapısal Dönüşümü, Dumlupınar Üniversitesi, Sosyal Bilimler Dergisi, Kütahya, 2011, Sayı 30, s. 243.

³ «6-րդ վարչական շրջանի» (թրք.՝ 6. Daire-i Belediye) կառույցի առաքելությունն էր թաղամասի պողոտաների և փողոցների անվանակոչումը, Բեյոլլու թաղամասի ջրատարների վերանորոգումն ու կառուցումը, մաքրությունն ու լուսավորությունն ապահովելը և այլն: Ղրիմի կամ Արևելյան պատերազմի ընթացքում հենց Բեյոլլու թաղամասում էին տեղակայված եվրոպական պետությունների դեսպանատներն ու հյուպատոսարանները, հիմնական հիվանդանոցները, որտեղ բուժում էին ստանում պատերազմի ընթացքում վիրավորվածները: Շենքը մինչ օրս ծառայում է որպես Մտամբուլի Բեյոլլու թաղամասի թաղապետարան: Դրա պատմության մասին առավել մանրամասն տես Güll E., İstanbul’da ilk modern belediye: 6. Daire-i Belediye, 28.03.2014, <http://www.dunyabulteni.net/haber/293603/istanbulda-ilk-modern-belediye-6-daire-i-belediye> (հասանելի էր 18.06.2018):

⁴ Այս կանոնակարգի մասին առավել մանրամասն տես Gençoğlu M., 1864 ve 1871 Vilâyet Nizamnamelerine Göre Osmanlı Taşra İdaresinde Yeniden Yapılanma, Çankırı Karatekin Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, Sayı 2 (1), s. 29-50:

լիարժեք իրականացնել իրենց գործառնությունները: Խնդիրն ավելի ակնառու դարձավ Մուստաֆա Քեմալի գլխավորած ազգայնամոլական շարժման ընթացքում: Պատերազմի հետևանքով հատկապես ծանր իրավիճակում էր հայտնվել կայսրության մայրաքաղաք Ստամբուլը, որը 1918 թ. նոյեմբերի 13-ին գրավվեց Անտանտի երկրների կողմից: Համայնքային, քաղաքային, տեղական իշխանությունների գործառնությունների վերականգնումն ու նրանց լիարժեք գործունեության անհրաժեշտությունն արդիական դարձան, երբ 1923 թ. հոկտեմբերի 13-ին Անկարան հռչակվեց երկրի մայրաքաղաք⁵: Դա մի ժամանակահատված էր, երբ կազմավորվում էին Թուրքիայի նորաստեղծ հանրապետության գործադիր և օրենսդիր իշխանությունները, և այս համատեքստում կարևորվում էր նաև հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը: Այս մասին է վկայում նաև 1924 թ. մարտի 18-ին «Գյուղերի մասին» օրենքի ընդունումը⁶, որով լայն իրավասություններ և լիազորություններ էին շնորհվում համայնքային իշխանություններին:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը կարևորվում էր նաև հանրապետության

գոյության հետագա ընթացքում: Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի ետխազահության օրոք՝ 1930 թ. ապրիլի 3-ին, ընդունվեց № 1580 թվակիր օրենքը⁷, որով կարգավորվում էր քաղաքային իշխանությունների գործունեությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների ընդլայնմանը զուգահեռ Թուրքիայի կենտրոնական իշխանությունները մշտապես փորձել են ապահովագրել իրենց նաև այս մարմինների գործունեության հետևանքով հնարավոր տհաճություններից: Այստեղ հստակորեն ի հայտ են գալիս նաև տեղական ինքնակառավարման մարմինների թուրքական մոդելի առանձնահատկությունները: Հաշվի առնելով Թուրքիայի հասարակության էթնիկական խայտաբղետ պատկերը, կենտրոնական իշխանությունները մշտապես ձգտել են, որ ազգային և կրոնական փոքրամասնությունները, ոչ թուրք ժողովուրդները լայն իշխանություն չունենան նույնիսկ տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում: Այս նպատակը հատկապես արդիական դարձավ հանրապետության հռչակման առաջին տասնամյակներին տեղի ունեցած քրդերի ապստամբությունների ժամանակ: Տեղական ինքնակառավարման մարմիններին երկրի կենտրոնական իշխանությունների ենթակայության տակ պահելու համար 1960 թ. հիմնադրվեցին «Պետական պլանավորման կազմակերպությունը» և «Պետական կադրերի բաժինը»: Սահմանվեց նաև, որ երկրի կենտրոնական

⁵ Հետպատերազմյան շրջանի Թուրքիայում տեղական ինքնակառավարման մասին առավել մանրամասն տես՝ Ersoy M., Tarihsel Perspektif İçinde Türkiye'de Merkezi Yönetim – Yerel Yönetim İlişkileri, ODTÜ Mimarlık Fakültesi Dergisi, Sayı 9 (1), s. 46-47, Ankara 1989:

⁶ Այս օրենքի համաձայն՝ սահմանվում էին Թուրքիայի Հանրապետության վարչատարածքային միավորները: Ըստ այդմ գյուղի կարգավիճակ էին ստանում մինչև 2000 բնակչություն ունեցող բնակավայրերը: Քաղաքատիպ ավան էր համարվում 2000- 22000 բնակչություն ունեցող բնակավայրը, իսկ քաղաքի կարգավիճակ էին ստանում 22000-ից շատ բնակչություն ունեցող բնակավայրերը: 1924 թ. ընդունված «Գյուղի մասին» օրենքի ամբողջական տեքստը տես Koy kanunu, Kanun Numarası: 442, 1924, [http://www.mevzuat.gov.tr](http://www.mevzuat.gov.tr/MevzuatMetin/1.3.442.pdf) (հասանելի էր 18, 06, 2018):

⁷ № 1580 թվակիր օրենքի ամբողջական տեքստը տես Belediye Kanunu, Kanun numarası 1580, 1930, <http://www.yds.gov.tr/dosyalar/1326978039-1580.pdf> (հասանելի էր 18, 06, 2018):

իշխանություններն ու տեղական ինքնակառավարման մարմինները անբաժան մասեր են⁸:

Տեղական ինքնակառավարման մարմինները զգալի կշիռ ու մասնակցություն ունեն նաև ժամանակակից Թուրքիայի ներքաղաքական կյանքում: Այս ինստիտուտը հատկապես կարևորվեց «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության օրոք: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Արդարություն և զարգացում» կուսակցության ամենահեղինակավոր գործիչներից մեկը համարվող Թուրքիայի գործող նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի քաղաքական կենսագրության մի զգալի հատվածը առնչվում է տարբեր կուսակցությունների տարածքային կազմակերպություններում և տեղական ինքնակառավարման մարմիններում ծավալած գործունեության հետ: Մասնավորապես, 1975-ին Էրդողանն ընտրվեց Ստամբուլի Բեյոլլու թաղամասում «Ազգային փրկություն» կուսակցության երիտասարդական թևի նախագահության անդամ: 1976-ին Էրդողանն ընտրվեց նաև Ստամբուլի նահանգի ԱՓԿ երիտասարդական թևի նախագահության անդամ⁹: Հատկանշական է, որ, եթե կուսակցական գործունեության ընթացքում Էրդողանը որոշակի հաջողությունների էր հասել, ապա Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմիններում ներգրավվելու գործում ունեցել է նաև անհաջողություններ: Այսպես, 1989 թ. «Բարօրություն» կուսակցությունն առաջադրեց Էրդողանի թեկնածությունը՝ որպես Բեյոլլու թաղամասի թաղապետի

⁸ Այս մասին առավել մանրամասն տես՝ Urhan F., Türkiye'de yerel yönetimlerin yeniden yapılandırılması, s. 87, Sayıştay dergisi, sayı 70, Ankara 2008:

⁹ Էրդողանի քաղաքական կենսագրության սկզբնական շրջանի մասին համառոտ անդրադարձը տես՝ Recep Tayyip Erdoğan'ın siyasi hayatı, Sabah gazetesi, 27,03,2017, <https://www.sabah.com.tr/galeri/yasam/recep-tayyip-erdoganin-siyasi-hayati> (հասանելի էր 18, 06, 2018):

թեկնածու¹⁰: Ընտրությունների արդյունքում, Ստամբուլի Բեյոլլու շրջանի վարչական ղեկավար ընտրվեց «Սոցիալական ժողովրդավարություն» կուսակցության առաջադրած թեկնածուն՝ Հյուսեյն Ասլանը: «Բարօրություն» կուսակցության և նրա թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանի օգտին քվեարկել էր ընտրողների 23%-ը¹¹: Հյուսեյն Ասլանի հետ մրցակցությունը քավականին սկզբունքային էր Էրդողանի համար: Տարիներ անց, իր հարցազրույցներից մեկի ընթացքում Ասլանը հիշել է նաև այդ ընտրությունների մասին¹²: Ընդ որում, ընտրությունների ավարտից հետո Էրդողանը ներխուժեց Բեյոլլու թաղամասի ընտրական հաշվիչ հանձնաժողովի գրասենյակ և սպառնալիքներ հնչեցրեց հանձնաժողովի նախագահ, երկրորդ ատյանի քրեական դատարանի դատավոր Նազմի Օզջանի հասցեին՝ մեղադրելով նրան ոչ սթափ վիճակում հաշվարկ իրականացնելու մեջ՝ պահանջելով դատաբժշկական փորձաքննություն անցնել: Դեպքի առթիվ դատավոր Նազմի Օզջանը դիմեց Բեյոլլու շրջանի առաջին ատյանի դատարան: Տեղի ունեցածի կապակցությամբ 1989 թվականի մարտի 31-ին Էրդողանին բերման ենթարկեցին

¹⁰ Այս ընտրություններին առաջին անգամ հստակորեն երևան ելան Էրդողանի սերտ կապերը Թուրքիայի քրեական աշխարհի ներկայացուցիչների հետ, որոնք նրան գործուն աջակցություն ցուցաբերեցին ընտրությունների ժամանակ, իսկ քրեական շրջանակների հետ Էրդողանի հարաբերությունները շարունակվեցին նաև հետագայում: Այդ մասին առավել մանրամասն տես՝ Yalçın S., Kayıp Sicil: Erdoğan'ın Çalınan Dosyası, İstanbul, 2014, s. 104-105:

¹¹ Ընտրությունների արդյունքների մասին առավել մանրամասն տես՝ Yerel yönetimler portalı, http://web.archive.org/web/20160816112519/http://www.yerelnet.org.tr/belediyeler/belediye_secimsonuclari.php?yil=1989&belediyei=d=128413 (հասանելի էր 19, 06, 2018):

¹² Այդ մասին առավել մանրամասն տես՝ Aslan H., Göreve hazırım, Yaşam Gazetesi, 11,03,2015, <http://www.yasamgazetesi.com.tr/guncel/huseyin-aslan-goreve-hazirim-h90578.html> (հասանելի էր 19, 06, 2018):

դատարան: Հասկանալով, որ իրեն ձերբակալելու են՝ Էրդողանը փախուստի դիմեց հենց դատարանի սպասարանից, որից հետո շուրջ 1 ամիս Էրդողանը ընդհատակում էր: Այս գործը հանգուցալուծվեց Ստամբուլի քրեական հեղինակություններից մեկի գործուն աջակցությամբ¹³:

Սրանից հետո՝ 1994 թ. արդեն «Բարօրություն» կուսակցության անդամ Ռեջեփ Թայիփ Էրդողանն առաջադրվեց Ստամբուլի քաղաքապետի թեկնածու և ընտրվեց Թուրքիայի ամենախոշոր քաղաքի քաղաքապետ: Չնայած տեղական ինքնակառավարման մարմիններում Էրդողանը քաղաքական ուղին սկանդալով ավարտվեց¹⁴, բայց տարիները, որ նա անցկացրեց Ստամբուլի քաղաքապետի պաշտոնում, հետագայում հիմք դարձան, որ Էրդողանը մեծ ուշադրություն դարձնի տեղական ինքնակառավարման մարմիններին և դրանց ընտրություններին¹⁵:

2014 թ. օգոստոսին առաջին անգամ ժողովրդի քվեով նախագահ ընտրված Էրդողանը 2015 թ. սկզբից առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերում տեղական ինքնակառավարման մարմինների ստորին օղակների նկատմամբ: Այս ամենի արդյունքում Թուրքիայի նախագահական նստավայրում

¹³ Դեպքի մասին առավել մանրամասն տես՝ Başbakan'ın unutmak istediği hapis cezasını açkılıyor, Oda Tv, 08,09,2010, <https://odatv.com/basbakanin-unutmak-istedigi-hapis-cezasini-acikliyoruz-0809101200.html> (հասանելի էր՝ 19, 06, 2018):

¹⁴ 1997թ. Միերթում ունեցած էլյութի պատճառով 1998 թ. զարևանը Դիարբեքիի դատարանը մեղավոր ճանաչեց Ստամբուլի քաղաքապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին՝ կրոնական աստվածություն սերմանելու համար և դատապարտեց նրան 10-ամյա ազատազրկման: Նույն թվականի նոյեմբերին Էրդողանը հրաժարական տվեց Ստամբուլի քաղաքապետի պաշտոնից: Այս մասին առավել մանրամասն տես Սաֆրաստյան Ռ., (պատասխանատու խմբագիր) Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 301-302:

¹⁵ Էրդողանի կենսագրության մասին առավել մանրամասն տես՝ Biyografi, Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı Resmî Sitesi, <http://www.tccb.gov.tr/receptayyiperdogan/biyografi/> (հասանելի էր՝ 19, 06, 2018):

նախագահ Էրդողանը հանդիպումների շարք նախաձեռնեց ՏԻՄ ցածրաստիճան պաշտոնյաների՝ գյուղապետերի (մուխթարների)¹⁶ հետ: 2015 թ. հունվարի 27-ին կայացած նմանատիպ առաջին հանդիպման ընթացքում Էրդողանը կարևորեց գյուղապետերի դերը Թուրքիայում՝ հիշելով ՏԻՄ մարմիններում անցկացրած իր տարիները. «Այստեղ, ամենասկզբում, մի թեմայի վրա եմ ուզում բնեռել ձեր ուշադրությունը. իմ անձնական քաղաքական ուղու ընթացքում գյուղապետ հասկացությունն ինձ համար առանձին կարևորություն, բացառիկ իմաստ է ձեռք բերել: Երբ Ստամբուլի քաղաքապետ էի, իմ հանդեպ դատական գործ բացվեց Միերթում ունեցած էլյութի պատճառով: 1998 թ. սեպտեմբերի 23-ին ինձ 10 ամսով կալանավորելու որոշում կայացվեց: Դատարանի այդ վճռի անմիջապես հաջորդ օրը մի շարք թերթեր, նույնիսկ երևի ամենաշատ վաճառվող թերթը այսպիսի վերնագիր դրեց. «Արդեն նույնիսկ գյուղապետ չի կարող դառնալ»: 1998 թվականի այդ վերնագիրը երբեք դուրս չի եկել ո՛չ իմ, ո՛չ ժողովրդիս հիշողությունից: Իրականում, այդպիսի վերնագիր դնելով՝ չեն սահմանափակվում միայն ինձ վիրավորելով: Նրանք վիրավորում են մեր գյուղապետ բոլոր եղբայրներին՝ կարծես գյուղապետը վատ բան է, ընտրվելն էլ շատ հեշտ է»¹⁷:

¹⁶ Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմինների միջին և ցածր պաշտոնյաները՝ մուխթարները հիմնականում պատասխանատու են երկրի գյուղական ու համայնքային կյանքին վերաբերվող տարաբնույթ հարցերի համար: Նրանց պարտականությունների մասին առավել մանրամասն տես՝ Şehir ve Kasabalarda Mahalle Muhtar ve İhtiyar Heyetleri Teşkiline Dair Kanun, Kanun numarasi 4541, 1944:

¹⁷ Էրդողանի հնչեցրած ամբողջական էլյութը տեղադրված է Թուրքիայի նախագահի շխատակազմի պաշտոնական կայքում՝ Muhtarlar Toplantısında Yaptıkları Konuşma, 27,01,2015, Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı Resmî Sitesi, <http://www.tccb.gov.tr/konusmalar/353/2978/muhtarlar-toplantısında-yaptıkları-konusma.html> (հասանելի էր՝ 19, 06, 2018):

Տեղական ինքնակառավարման մարմինները, Թուրքիայի կենտրոնական իշխանությունների և հատկապես նախագահ Էրդողանի կողմից այդչափ կարևորվելուց հետո, սկսեցին ներգրավվել գործընթացների մեջ, որոնք անմիջականորեն որևէ առնչություն չունենին իրենց պարտականությունների հետ: ՏԻՄ ցածրաստիճան ներկայացուցիչների հետ հաճախակի հանդիպումների ընթացքում նախագահ Էրդողանը հետևողականորեն սկսեց անդրադառնալ Թուրքիայի ամենատարբեր ոլորտներում առկա խնդիրներին, Թուրքիայի արտաքին և միջազգային քաղաքականությանն առնչվող բազմաթիվ հարցերի: Թուրքիայի ՏԻՄ ներկայացուցիչները հատկապես կարևորվեցին 2015 թ. հունիսի 7-ին տեղի ունեցած խորհրդարանի ընտրություններից հետո, երբ իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությանը չհաջողվեց բավարար քվե ստանալ՝ երկրում առանց այլ ուժերի մասնակցության կառավարություն կազմելու համար: Էրդողանը, մտահոգվելով, որ քաղաքական իր գլխավոր հենարանին՝ իշխող ԱԶԿ-ին, կարող է չհաջողվել պահպանել իշխանությունը, ակտիվորեն ներգրավվել էր ներքաղաքական գործընթացներին՝ ըստ էության բացահայտ քարոզչություն իրականացնելով «Արդարություն և զարգացում» կուսակցության օգտին: Ներքաղաքական այս գործընթացներին անմասն չմնացին նաև Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմինները: 2015 թ. օգոստոսի 12-ին Թուրքիայի նախագահական նստավայրում՝ ՏԻՄ պաշտոնյաների հետ 8-րդ հանդիպման ընթացքում, նախագահ Էրդողանը բացահայտ պահանջեց, որ նրանք, ըստ էության, չարաշահեն իրենց պաշտոնական դիրքը: Էրդողանը, խոսելով Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող պաշտոնյաներից իր ակնկալիքների մասին, պահանջեց, որ այդ մարդիկ զբաղվեն լրտեսությամբ. «Դուք այս

պետության ամենահեռավոր մուկթարներն եք: Դուք ընտրվել եք, դուք պաշտոնյա չեք: Ընտրվելը նշանակվելուց ավելի կարևոր է: Իմ մուկթարը կգա և ոստիկանությանը, անվտանգության մարմիններին կամ նահանգապետարանին կհայտնի, թե որ տանն ով կա, ով ով է, ինչով է զբաղվում»¹⁸: Այս խոսքերն ամիջապես ուշադրության արժանացան թուրքական ՋԼՄ-ներում¹⁹:

Տեղական ինքնակառավարման մարմիններն աստիճանաբար ներգրավվեցին նաև Թուրքիայի արտաքին քաղաքականությանն առնչվող որոշակի գործընթացներում, ընդ որում, օրինակ 2014-2016 թթ. Հայոց ցեղասպանությունը ժխտելու թուրքական պետական քաղաքականությունը մասամբ արտահայտվում է նաև ՏԻՄ պաշտոնյաների միջոցով: Մեծ եղեռնի 100-ամյակին նախորդող և հաջորդող տարիներին Թուրքիայի կենտրոնական իշխանությունները հնարավորինս խուսափում էին իրենց հատուկ խիստ հակահայկական ելույթներից՝ էստաֆետը հանձնելով տեղական ինքնակառավարման մարմիններին: Այդ գործին հատկապես լծված էին Թուրքիայի արևելյան շրջանների մի շարք պաշտոնյաներ՝ մեծամասամբ քաղաքապետեր, գյուղապետեր, շրջանի ղեկավարներ և այլն: Այդ մարդիկ այն շրջանների

¹⁸ ՏԻՄ ստորին պաշտոնյաների հետ հանդիպման ընթացքում Թուրքիայի նախագահ Էրդողանի հեղինակավոր ամբողջական ելույթը տես՝ “Terör Örgütü ‘Silahlı Sustain’ Değil, ‘Bırakacak ve Gömecek’ Diyoruz”, 12.08.2015, Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı Resmî Sitesi, <http://www.tccb.gov.tr/haberler/410/34077/teror-orgutu-silahlari-sustursun-degil-birakacak-ve-gomecek-diyoruz.html> (հասանելի էր 19, 06, 2018):

¹⁹ Հատկանշական է «Ջուհուրիեթ» պարբերականում տեղադրված հոդվածը: Թուրքական պարբերականը նշել է, որ երկրի կենտրոնական իշխանությունները սեփական քաղաքացիներին լրտեսելու կոչեր վերջին անգամ արել էին 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից առաջ՝ Erdoğan muhtarlardan muhbirlik istedi, 22.08.2016, http://www.cumhuriyet.com.tr/haber/turkiye/343433/Erdogan_muhtarlardan_muhbirlik_istedi.html (հասանելի էր 19, 06, 2018):

ղեկավարներն են, որտեղ մինչև Հայոց ցեղասպանությունը հայկական հոծ բնակչություն է եղել, և Առաջին համաշխարհային տարիներին լուրջ բախումներ են տեղի ունեցել ռուսական և թուրքական բանակների միջև: Ահա այդ շրջանների ղեկավարները 2014-2016 թթ. սկսեցին ուղերձներ հղել տեղի բնակչությանը՝ շնորհավորելով այս կամ այն մարզի, քաղաքի, գյուղի «ռուսական բռնազավթման քաղաքականությունից, արևմտյան ինվերիալիզմից և հայկական ավազակախմբերից ազատագրման» կապակցությամբ²⁰: Այդ շնորհավորանքների քողի ներքո բացահայտ թշնամանք և ատելություն էր սերմանվում թուրք հասարակության մեջ՝ առ Հայաստան ու հայություն: Հասկանալի է, որ ամբողջ այդ շնորհավորանքներն ակտիվորեն լուսարանում էին թուրքական ՁԼՄ-ները: Փաստորեն՝ Թուրքիայի գործող իշխանությունները հետևողականորեն առաջ են տանում իրենց քաղաքականությունը, և հասկանալի է, որ այդ գործում մեծանում են տեղական ինքնակառավարման մարմինների դերն ու նշանակությունը:

²⁰ 2014 թ. սեպտեմբերի 29-ին Սարիղամիշում տեղի ունեցած հանրահավաքում քաղաքային, համայնքային և ոստիկանական պաշտոնյաների մասնակցությամբ բնակիչները նշեցին «Թշնամուց Սարիղամիշի ազատագրման 94-ամյակը», անդրադարձը՝ Sarikamis'in Düşman İsgalinden Kurtuluş Yılı Dönümü, <http://www.haberler.com/sarikamis-in-dusman-ısgalinden-kurtulus-yil-donumu-6535555-haber/> (հասանելի էր 20, 06, 2018): Նույն տրամաբանությամբ 2014 թ. նոյեմբերի 30-ին Կարսում ՏԻՄ պաշտոնյաների ներկայությամբ նշվեց «Կարսի ազատագրման 94-ամյակը»՝ Kars'in Düşman İsgalinden kurtuluşunun 94. yıldönümü törenlerle kutlandı <http://www.milliyet.com.tr/kars-in-dusman-ısgalinden-kurtulusu-kars-yerelhaber-449289/> (հասանելի էր 20, 06, 2018): 2015 թ. մարտի 12-ին Էրզրումում տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ նշվեց «Էրզրումի ազատագրման 97-րդ տարեդարձը», Erzurum'un kurtuluşu mesajları, <http://www.erkurumgundem.com/erkurum-un-kurtulusu-mesajlari/HaberDetay/8500> (հասանելի էր 20, 06, 2018): Նշված բոլոր տոնակատարությունների, հանրահավաքների և ուղերձների ընթացքում պարտադիր անդրադարձ է կատարվել հայերին, թե իբր այդ վայրերում բնակված հայերը համագործակցել են ռուսական բանակի հետ, ավազակախմբեր կազմել և ճնշել թուրքական բնակչությանը:

ТУРЕЦКОЕ ВОСПРИЯТИЕ ПОЛИТИЧЕСКОГО ЗНАЧЕНИЕ АДМИНИСТРАЦИИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ТУРЦИИ

Маргарян Айк
(Резюме)

После окончания Второй мировой войны и особенно после провозглашения Республики Турция, в целях восстановления и обеспечения законной деятельности страны были расширены полномочия администраций местного самоуправления.

В течение всей истории развития республики высоко ценилась значение местных органов управления. С приходом к власти партии «Справедливость и развитие» местные органы самоуправления получили еще больше прав. Сельские, муниципальные, городские и областные власти являются серьезными и полновластными структурами, которые являются надежной опорой для сохранения и поддержки власти Эрдогана. Именно местным властям Эрдоган доверяет выполнение особых указов.

TURKISH PERCEPTION OF THE POLITICAL VALUE OF LOCAL AUTHORITIES

Margaryan Hayk
(Summary)

After the end of World War II and particularly after the proclamation of the Republic of Turkey, in order to ensure the restoration and regular performance of the country the functions of local government were expended. In the course of the history of the country, Turkey emphasized the role and importance of local authorities. When “Justice and Development” party came to power, the local self government were entrusted a greater role. Rural, community, municipal and provincial authorities are serious and solid structures, which are often given unique assignment in modern Turkey under Erdogan's government, and which Erdogan considers a firm base to hold his position steadfast.

Պետունց Արեն*

ԱԶԳԱՅՆԱՄՈՒԱԿԱՆ ՆՈՐ ՈՒԺԻ ԲԵՄԵԼԸ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ
2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Էրդոդան, «Լավ» կուսակցություն, Թուրքիա, ընտրություններ, ազգայնական, İyi parti, հեղաշրջման փորձ, ընդդիմություն

Թուրքիայի նախագահ, իշխող «Արդարություն և զարգացում» (ԱԶԿ) կուսակցության առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը Թուրքիայում գործող «Ազգայնական շարժում» (ԱՇԿ) կուսակցության առաջնորդ Դևլեթ Բահչելլիի հետ 2018 թ. ապրիլի 18-ին կայացած հանդիպումից հետո հայտարարեց, որ նույն թվականի հունիսի 24-ին տեղի են ունենալու արտահերթ խորհրդարանական և նախագահական ընտրություններ¹: Նախագահական և խորհրդարանական ընտրություններն ի սկզբանե նախանշված էին 2019 թվականի նոյեմբերի 3-ին: 2017 թ. ապրիլին կայացած հանրավճի արդյունքում երկրում խորհրդարանական կառավարման համակարգից անցում կատարվեց նախագահական կառավարման համակարգի և այս հանգամանքով պայմանավորված՝ այդ ընտրությունները կարելի է համարել պատմական²:

* ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ aren.petunc@ysumail.am

¹ Erken seçim 2018: Türkiye 24 Haziran'da sandığa gidiyor- <https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-43810499> (հասանելի է 12.20.2018)

² Թուրքիայում պատմական արտահերթ ընտրություններ կանցկացվեն. ինչու կայացվեց այդ որոշումը և ինչ ակնկալել ընտրություններից <https://armenpress.am/arm/news/930493/> (հասանելի է 12.20.2018)

Արտահերթ ընտրություններին մասնակցեց Թուրքիայում գործող 8 կուսակցություն: 2018 թվականի սկզբին ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունը հնարավորություն ընձեռեց կուսակցություններին ընտրություններին մասնակցել նաև դաշինքների միջոցով³: Արդյունքում, հունիսի 24-ի ընտրություններին իշխող ԱԶԿ-ն «Ժողովրդական դաշինք»-ի ներքո հանդես եկավ «Ազգայնական շարժում» կուսակցության (ԱՇԿ) հետ միասին: Իսկ ընդդիմադիր, քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀՇԿ), «Լավ», «Երջանկություն» («Մաադեթ») կուսակցությունները միավորվեցին «Ազգային դաշինք»-ի ներքո: Քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունն (ԺԴԿ), ինչպես նաև «Հայրենիք» («Վաթան») և «Ազատ հարց» («Հյուր Դավա») կուսակցությունները հանդես եկան առանց դաշինքների⁴: Նախագահական ընտրություններին մասնակցեց 6 թեկնածու. «Ժողովրդական դաշինք»-ից՝ գործող նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը, ՀՇԿ-ից՝ Մուհարեմ Ինջեն, «Լավ» կուսակցությունից՝ Մերալ Աքչեները, ԺԴԿ-ից՝ Սելահաթթին Դեմիրթաշը, «Երջանկություն»-ից՝ Թեմել Քարամուլլաօղլուն և «Հայրենիք»-ից՝ Դոդու Փերինչեքը⁵:

Այս ընտրություններին մասնակցող կուսակցություններից ամենաերիտասարդ ուժն էր Մերալ Աքչեների գլխավորած «Լավ» կուսակցությունը, որը հիմնադրվել էր 2017 թվականի հոկտեմբերի

³ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ինտերնետային կայք-TÜRKİYE CUMHURİYETİ ANAYASASI https://www.tbmm.gov.tr/anayasa/anayasa_2017.pdf (հասանելի է 12.20.2018)

⁴ Seçim 2018: Siyasi partilerin beyanname ve manifestolarında neler var?- <https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-44334035> (հասանելի է 12.20.2018)

⁵ Cumhurbaşkanı Adayları | 24 Haziran 2018 Seçimleri- <https://www.yenisafak.com/secim-cumhurbaskanligi-2018/cumhurbaskani-adaylari> (հասանելի է 12.20.2018)

25-ին Անկարայում: Արտահերթ լինելուց բացի այս ընտրությունները նաև արտակարգ էին, քանի որ անցկացվեցին երկրում դեռևս 2016 թ. հուլիսին տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո գործող արտակարգ դրության ռեժիմի պայմաններում: Նման պայմաններում պետության, ինչպես նաև ընտրություններին մասնակցող՝ իշխող ԱԶԿ-ի և նրա առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից քարոզարշավի ընթացքում թույլ տրվեց սահմանափակումների կիրառում, խոսքի ազատության ոտնահարումներ, ինչը ոչ հավասար պայմաններ ստեղծեց քաղաքական ուժերի համար:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, 2018 թ. ապրիլի 18-ին հայտարարելով, որ 2019 թ. նոյեմբերին նախատեսված խորհրդարանական և նախագահական ընտրությունները տեղի են ունենալու ավելի վաղ՝ 2018 թ. հունիսի 24-ին, անդրադարձավ նաև դրանց արտահերթ անցկացման պատճառներին: Էրդողանն ընդգծեց, որ Միրիայում և Իրաքում տեղի ունեցող զարգացումները, «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման և քուրդ զինյալների դեմ պայքարն անհրաժեշտ հրամայական են դարձրել հրատապ անցումը նախագահական կառավարման համակարգի Թուրքիայում՝ «որպես տիրող անորոշությունը հաղթահարելու միջոց»: «Թեպետ նախագահի և կառավարության միջև աշխատանքները որևէ խնդիր չեն առաջացնում, սակայն նախկին համակարգի հիվանդություններն արդեն ի հայտ են գալիս ամեն քայլափոխի: Եվ որպեսզի կարողանանք ավելի ուժեղ կերպով ընդունենք և կյանքի կոչենք Թուրքիայի ապագայի մասին որոշումները, նոր համակարգին անցումը հրատապ անհրաժեշտություն է դարձել», - ընտրությունների անցկացման ժամանակի մասին հայտնելով՝ նշեց Էրդողանը: Թուրքիայի նախագահն ընդգծեց, որ անցումը

կառավարման նոր համակարգի հնարավոր է միայն հաջորդ ընտրությունների անցկացումից հետո⁶:

Էրդողանի կողմից ընտրությունները արտահերթ անցկացնելու վերաբերյալ հիմնավորումները քաղաքական և փորձագիտական շրջանակներում լայն քննարկումների առարկա դարձան: Գերակշռող կարծիքների համաձայն՝ ընտրությունները նախատեսվածից 1,5 տարի ավելի վաղ անցկացնելու որոշումը պայմանավորված էր նաև երկրում առկա տնտեսական վիճակով. շատ տնտեսագետներ նշում էին, որ վերջին տարիներին Թուրքիայի տնտեսությունը շատ խոցելի է դարձել: Դրա մասին էին վկայում նախորդ երկու տարիներին դոլարի և եվրոյի նկատմամբ թուրքական լիրայի արժեզրկումը, երկնիշ զնաճը: Տնտեսական վատ ցուցանիշները, բնականաբար, բացասական պետք է ազդեին իշխող կուսակցության հեղինակության վրա՝ մինչև 2019 թվականը զրկելով ընտրողների քվեների որոշակի մասից:

Ընտրությունների վաղաժամ անցկացման լուրջ պատճառ էր համարվում նաև ընտրություններում ընդդիմությանը ինքնակազմակերպվելու և պատշաճ մասնակցելու հնարավորությունից զրկելը. շուրջ երկու ամսում նրանք չէին կարող անհրաժեշտ ձևով պատրաստվել ընտրություններին: Ընտրությունների վաղաժամկետ անցկացումը իշխող ուժին թույլ էր տալիս ընտրություններն անցկացնել դեռևս 2016 թվականի ամռանը տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո երկրում գործող արտակարգ դրության ռեժիմի պայմաններում⁷:

⁶ Erken seçim 2018: Türkiye 24 Haziran'da sandığa gidiyor- <https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-43810499> (հասանելի է 12.20.2018)

⁷ Erdoğan'ın 'baskın' seçim kararının nedenleri- <https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-43815273> (հասանելի է 12.20.2018)

Արտակարգ դրության ռեժիմը, որը Թուրքիայի իշխանություններին ռազմական հեղաշրջման փորձից հետո հնարավորություն էր տվել ազատվել իրենց համար անցանկալի տարրերից, նախընտրական շրջանում նույնպես հնարավորություն տվեց ամենատարբեր ձևերով շրջանցել օրենքը՝ կիրառել ադմինիստրատիվ լծակներ, իրականացնել ընտրախախտումներ, տարբեր շինծու մեղադրանքներով ձերբակալել ընդդիմադիր կամ իշխանության տեսակետից տարբերվող դիրքորոշում ունեցող անձանց և հասնել ցանկալի արդյունքի (այսպիսի իրավիճակ արդեն իսկ գրանցվել էր 2017թ. սահմանադրական հանրաքվեի ժամանակ)⁸: Այսպիսով, հաշվի առնելով, որ 2017 թ. ապրիլին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունները ստեղծել էին բոլոր օրենսդրական հիմքերը, որոնք Էրդոհանին օժտելու էին անսահմանափակ լիազորություններով, նա ռիսկի չդիմեց աստիճանաբար նահանջող հեղինակության պայմաններում և որոշեց ընտրություններն անցկացնել վաղաժամ:

Ընդդիմադիր ուժերը նախընտրական շրջանում փորձում էին համագործակցության և փոխգործակցության միջոցով թուրքական խորհրդարանում մեծամասնություն ձևավորել և անգամ Էրդոհանի՝ նախագահ ընտրվելու դեպքում նրան զրկել օրենսդիր իշխանության նկատմամբ ունեցած մենաշնորհից: Աչքի ընկնող ընդդիմադիր ուժերից քրդամետ «ժողովուրդների դեմոկրատական» կուսակցությունը, թեև պաշտոնապես չմտավ ընդդիմադիր «Ազգային դաշինք»-ի մեջ, սակայն նախընտրական շրջանում հանդես եկավ ընդդիմադիր դաշինքի որդեգրած

⁸ OHAL Düzeninde Seçimler ve Yasanın Gücü <https://m.bianet.org/bianet/yasam/196407-ohal-duzeninde-secimler-ve-yasanin-gucu> (հասանելի է 12.20.2018)

մարտավարությամբ⁹: Ընդդիմությունն, ի տարբերություն խորհրդարանական ընտրությունների, նախագահական ընտրություններին որոշեց մասնակցել առանձին թեկնածուներով:

2018 թ. ընտրություններին մասնակից ամենաերիտասարդ «Լավ» կուսակցությունը հիմնադրվել է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին Անկարայում՝ թուրք կին քաղաքական գործիչ Մերալ Աքշեների գլխավորությամբ¹⁰: Կուսակցության անդամների հիմնական մասն ի սկզբանե կազմել են Թուրքիայում գործող «Ազգայնական շարժում» ԱՇԿ կուսակցության նախկին անդամները, որոնք, դժգոհ լինելով կուսակցության վերջին տարիներին վարած քաղաքականությունից և հատկապես Էրդոհանի գլխավորած «Արդարություն և զարգացում» կուսակցության հետ սահմանադրական հանրաքվեին նախորդող շրջանում դաշինք կազմելու, նախագահական համակարգին անցնելու գործընթացին կողմ լինելու հանգամանքներից, հեռացել էին կուսակցությունից: «Լավ» կուսակցության մեջ ընդգրկվել են «Քարօրություն», «Մայր հայրենիք», «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների նախկին անդամներ նույնպես¹¹: Կուսակցության «IYI» թուրքերեն անվանումը ընտրվել է բառի զրության արդյունքում կազմված պատկերի համար: «IYI» գրելիս այն նմանվում է 2 նետերի և նրանց միջև աղեղի, որը սելջուկյան ցեղերից մեկի՝ Քայր ցեղի խորհրդանիշն է եղել: Օսմանյան կայսրության ծագումը կապվում է հենց սելջուկյան Քայր ցեղի

⁹ Քաղաքացիական պատերազմին սպասելով- <https://varuzhan.me/2018/06/27/civilwar/> (հասանելի է 12.20.2018)
¹⁰ Թուրքիայի «Լավ» կուսակցության ինտերնետային կայքը- <https://iyiparti.org.tr/> (հասանելի է 12.20.2018)
¹¹ Meral Akşener'in partisinde kimler var?- <https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-41733470> (հասանելի է 12.20.2018)

ընտրություններին: 1995 թ. Աքշեները զբաղեցնում էր «Ճշմարիտ ուղի» կուսակցության կանանց կառույցի նախագահի պաշտոնը և Մտամբուլից ընտրվել էր Մեջլիսի պատգամավոր: 1996 թ. նոյեմբերի 8-ից 1997 թ. հունիսի 30-ը զբաղեցրել է Թուրքիայի ներքին գործերի նախարարի պաշտոնը (Մերալ Աքշեները եղել է հանրապետական Թուրքիայի պատմության միակ կին ներքին գործերի նախարարը): 1999 թ. Աքշեները ՃՈՒԿ-ի կազմում պատգամավոր է ընտրվել Քոջաեյի նահանգից, իսկ ավելի ուշ՝ 2007, 2011թթ. ընտրություններում Մտամբուլից պատգամավոր է ընտրվել արդեն «Ազգայնական Շարժում» կուսակցության (ԱՇԿ) կազմում, երկու շրջան զբաղեցրել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի փոխնախագահի պաշտոնը: 2015 թ. նոյեմբերի 1-ի ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակից դուրս է մնացել:

«Լավ» կուսակցության հիմնադրումից առաջ վերջին կուսակցությունը, որի կազմում Աքշեները գործունեություն է ծավալել, ԱՇԿ-ն է: 2016-ին հատկապես կուսակցության առաջնորդ Դելեթ Բահչելիի դեմ ԱՇԿ ներքին ընդդիմադիրների ճակատը գլխավորելուց հետո նույն տարվա սեպտեմբերին վտարվել է կուսակցությունից: 2017 թ. ապրիլի սահմանադրական հանրաքվեի ընթացքում գլխավորել է մի խումբ, որը հանդես էր գալիս «Ոչ»-ի պաշտպանությամբ և ԱՇԿ-ից հեռացած որոշ հայտնի անունների հետ միասին հայտարարել նոր կուսակցություն ստեղծելու մասին: Ուսումնասիրելով նրա քաղաքական անցյալը՝ հասկանում ենք՝ ամենահետաքրքիրն այն է, որ նա որոշ ժամանակ համագործակցել է նաև Էրդողանի ու Աբդուլլահ Գյուլի հետ, ինչն էլ կուսակցության գործունեության և իրական նպատակների վերաբերյալ հակասական կարծիքների տեղիք է տալիս: 2001թ. Աքշեները ՃՈՒԿ-ից դուրս է եկել և մասնակցել է Աբդուլլահ Գյուլի ու Ռեջեփ Թայիփ Էրդողանի

գլխավորած «Առաքինություն» կուսակցության «նորարարների» թե՛ կազմավորմանը, սակայն 4 ամիս անց միացել է «Ազգայնական շարժում» կուսակցությանը¹³: Այս ամենը «Լավ» կուսակցության ստեղծումից ի վեր տարբեր շրջանակներում մտածելու տեղիք էր տալիս, թե այս նոր կուսակցությունն ավելի շուտ ուղղված է Էրդողանին դեմ ուժերին պատակտելուն, քանի որ նման ազգայնական հայացքների տեր քաղաքական գործիչն ու նրա ստեղծած կուսակցությունը չեն կարող ժողովրդավար լինել, որքան էլ նշեն, թե կուսակցության քաղաքական գիծն աջ-ժողովրդավարական է:

«Լավ» կուսակցության հիմնադիր անդամներից երկուսը ազգությամբ հայ են: Փորձագիտական որոշ շրջանակների կարծիքով՝ կուսակցության հիմնադիր խորհրդում հայազգի ներկայացուցիչների առկայությունն որոշակի քարոզչական նպատակներ է հետապնդում: Ըստ փորձագետների՝ դրանով փորձ է արվում ցույց տալ, որ կուսակցությունը ժողովրդավարական է ու ազգային խտրականություն չի դնում: Նրանցից մեկը «Լավ» կուսակցության հիմնադիր խորհրդի անդամ Էլմաս Կիրակոսն է, ով ևս ԱՇԿ-ի նախկին անդամներից է եղել:

Որոշ փորձագետներ և պարբերականներ նախընտրական շրջանում քննարկում էին այն տարբերակը, որ «Լավ» կուսակցությունը կարող է լինել Էրդողանի նախագիծը՝ հաշվի առնելով Էրդողանի և Գյուլի հետ Աքշեների՝ նախկինում ունեցած կապը և այն հանգամանքը, որ կուսակցության ստեղծումից մեկ ամիս անց կուսակցությանն էր միացել Թուրքիայի մեջլիսի 5

¹³ IYI Parti hakkında bilinmesi gerekenler -<https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-41750673#anchor1> (հասանելի է 12.20.2018)

անկախ պատգամավոր և կուսակցությունը մինչև ընտրություններն արդեն ներկայացված էր խորհրդարանում¹⁴:

Այսպիսով, Թուրքական քաղաքական դաշտում հայտնվեց հերթական ազգայնական ուժը, որը չնայած փորձել է իր սկզբունքներն ու նպատակները շարադրել համաշխարհային արդիական չափանիշներին համապատասխան, դրա հետ միասին հիմնված է սելջուկյան բարքերի և ազգայնամոլ ցեղապաշտ գաղափարախոսության վրա: Թուրքիայում հունիսի 24-ին տեղի ունեցած արտահերթ ընտրությունների արդյունքում նախագահ Էրդողանը ստացել է ձայների 52,6 տոկոսը: Քեմալական «Հանրապետական ժողովրդական» կուսակցության (ՀԺԿ) թեկնածու Մուհարեմ Ինջեն ստացել է ձայների 30.6 տոկոսը, քրդամետ «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության (ԺԴԿ) թեկնածու Մելահաթթին Դեմիրթաշը՝ 8.4 տոկոսը: «Լավ» կուսակցության թեկնածու Մերալ Աքշեները հավաքել է ընդամենը 7.3 տոկոս:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքում՝ 600 պատգամավորական մանդատ ունեցող խորհրդարանում ԱԶԿ-ԱՇԿ («Ազգայնական շարժում» կուսակցություն) կազմած «Ժողովրդական դաշինք»-ը ստացել է 53,7 տոկոս՝ 344 պատգամավորական մանդատ (ԱԶԿ-ն՝ 42,6 տոկոս՝ 295 մանդատ, ԱՇԿ-ն՝ 11,1 տոկոս՝ 49 մանդատ): «Ազգային դաշինք»-ը ընտրություններում ստացել է քվեների 33,9 տոկոսը՝ 189 մանդատ (ՀԺԿ-ն՝ 22,6 տոկոս՝ 146, «Լավ» կուսակցությունը՝ 10 տոկոս՝ 43 մանդատ): Դաշինքից դուրս գտնվող ընդդիմադիր ԺԴԿ-ն ստացել է

ձայների 11,7 տոկոսը՝ 67 մանդատ, իսկ ընտրություններին մասնակից մյուս ուժերը չեն հաղթահարել անցողիկ շեմը¹⁵:

Այսպիսով՝ իշխող ԱԶԿ-ն «Ազգանական շարժում» կուսակցության հետ կարողացավ խորհրդարանում մեծամասնություն ձևավորել՝ հավաքելով 53,7 տոկոս ձայն, իսկ Էրդողանը վստահ հաղթանակ տարավ: Ընտրությունների նման արդյունքների պարագայում Թուրքիան թևակոխեց պատմական մի նոր ժամանակաշրջան, որը, պայմանավորված իշխող ԱԶԿ-ի և նրա առաջնորդ Էրդողանի ամբողջատիրական նկրտումներով, լի է երկիրն առավել ավտորիտար պետության վերածելու վտանգավոր տարրերով:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, հասկանալով, որ երկրում առաջացած մի շարք քաղաքական և տնտեսական խնդիրների պատճառով կորցնում է հեղինակությունը, 2019 թ. նոյեմբերի 3-ին նախանշված ընտրություններն անցկացրեց վաղաժամ, ինչն ընդդիմությանը զրկեց պատշաճ ինքնակազմակերպվելու հնարավորությունից, իսկ իրեն հնարավորություն տվեց նահանջող հեղինակության պարագայում պահպանել եղած ձայները: Օգտվելով տարածաշրջանում ստեղծված բարդ իրավիճակից, ինչպես նաև երկրում գործող արտակարգ դրության ռեժիմից՝ Էրդողանը վարչական ռեսուրսի կիրառման միջոցով առավելություն ձեռք բերեց հակառակորդ ուժերի նկատմամբ և որոշիչ հաղթանակ տարավ:

¹⁵ Cumhurbaşkanlığı Seçim Sonuçları https://www.sabah.com.tr/secim/24-haziran-2018-secim-sonuclari?fbclid=IwAR3G3XteeZOs2rYroXQqpUJXm80xggL911CdtA47pRO-ARTD4_ZUZXR_Vs4 (հասանելի է 12.20.2018)

¹⁴ Լավ կուսակցություն, թե՞ պահեստային տարբերակ- <http://akunq.net/am/?p=57428> (հասանելի է 12.20.2018)

Թուրքիայում 2018 թ. հունիսի 24-ին տեղի ունեցած խորհրդարանական և նախագահական արտահերթ ընտրություններով այդ երկրի քաղաքական կյանքում տեղի ունեցավ հանրապետության հիմնադրումից 1923 թ. ի վեր ամենալուրջ քաղաքական փոփոխությունը՝ անցում կատարվեց խորհրդարանական համակարգից նախագահական համակարգի, ինչն ամրագրվել էր 2017 թ. ապրիլի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեով: Ընտրությունների արդյունքում Թուրքիայի նախագահը ստացավ աննախադեպ լայն լիազորություններ և առավել ամրապնդվեց իր միանձնյա իշխանությունը: Նախագահական ընտրություններից հետո երկրում, ի թիվս մի շարք նախարարությունների, վերացվեց նաև վարչապետի ինստիտուտը և կառավարությունն անմիջապես կենտրոնացավ նախագահի ձեռքում: Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին նաև, որ Թուրքիայի քաղաքական և հասարակական կյանքում ազգայնամոլությունը գնալով աճում է: Թուրքիայում գործող ծայրահեղ ազգայնամոլական «Ազգայնական շարժում» կուսակցության տրոհման արդյունքում ստեղծվեց նսմեկ ազգայնամոլական կուսակցություն «Լավ» կուսակցությունը, որը նույնպես հաղթահարեց ընտրությունների անցողիկ 10 տոկոսանոց շեմը և հայտնվեց խորհրդարանում: Եթե նախկինում ազգայնամոլները ի դեմս ԱՇԿ-ի ընտրություններում հավաքում էին 13-ից 15 տոկոս ձայն, ապա այս ընտրություններում ԱՇԿ-ն հավաքեց 11,1 տոկոս, իսկ նույն ուղղվածության «Լավ» կուսակցությունը 10 տոկոս ձայն: Ազգայնամոլական ուժերի գրանցած ձայները լավագույնս արտացոլեցին այն հանգամանքը, որ թուրքական հասարակության շրջանում ազգայնամոլության մակարդակն աճել է առնվազն 5-6 տոկոսով:

ВЫХОД НА ПОЛИТИЧЕСКУЮ СЦЕНУ НОВОЙ НАЦИОНАЛИСТСКОЙ СИЛЫ В ТУРЦИИ НА ВЫБОРАХ 2018 ГОДА

Арен Петунц
(Резюме)

Состоявшиеся 24 июня 2018 выборы в Турции можно считать историческими, так как в результате этих выборов произошло самое серьезное политическое изменение со дня основания республики в 1923 году – состоялся переход от президентской системы правления на парламентскую систему. Переход был закреплен еще конституционным референдумом в Турции в апреле 2017 года.

Во внеочередных парламентских и президентских выборах в составе оппозиционного «Национального альянса» приняла участие также новая националистическая партия «Хорошая», которая смогла преодолеть 10-процентный барьер и появиться в парламенте. Таким образом, на турецком политическом поле появилась очередная националистическая сила, которая, хотя и представила свои принципы и цели в соответствии с современными мировыми стандартами и пытается позиционировать себя в качестве демократической силы, зиждется на сельджукских нравах и националистической шовинистской риторике.

DEBUT OF NEW NATIONALISTIC FORCE IN TURKEY'S 2018 ELECTIONS

Aren Petunts
(Summary)

The June 24, 2018 elections of Turkey can be assessed as historic, since they resulted in the greatest political changes in the country since the establishment of the republic in 1923 – the country transitioned from

parliamentary model of government into presidential. This transition had been provided by the constitutional referendum in Turkey back in 2017. Newly established “Good” Party in coalition with “Nation Alliance” participated in the early parliamentary and presidential elections, which was able to overcome the election threshold of 10% and appeared in the parliament. By this, another nationalistic force appeared in the political arena of Turkey, which has announced about its principles and goals that meet the modern international standards, and tries to display itself as a democratic force, but in reality is based on Seljuk morals and nationalistic ideology.

Մեյքոնյան Մարիամ*

ԿՆՈՋ ԷՄԱՆՍԻՊԱՑԻԱՑԻ ԽՆԴԻՐՈՒ ՄԻՉՐԻ ՀԱԹՈՒՆԻ
«ԱՂԵՐՍԱԳՐՈՒՄ»

Բանալի բառեր՝ կնոջ կարգավիճակ, բանաստեղծուհի, օսմանյան գրեզիա, էմանսիպացիա, հասարակական քննադատություն

Համաշխարհային, այդ թվում նաև թուրք գրականության մեջ որպես առանձին թեմատիկա հաճախ է ներկայացվում կնոջ հասարակական կարգավիճակի քննությունը: Այս փորձից անմասն չի մնացել նաև օսմանյան պոեզիան, որտեղ, թեկուզ հպանցիկ ձևով, սակայն հատկապես հենց կին գրողի կողմից անդրադարձ է կատարվել այս խնդրին: Սույն հոդվածում փորձ է արվել ուսումնասիրել 15-րդ դարի բանաստեղծուհի Միհրի Հաթունի կողմից կնոջ կարգավիճակի քննադատությունը՝ տիրող հասարակական-քաղաքական իրավիճակի համատեքստում:

Օսմանյան կայսրությունում, որի հիմքում ընկած էին իսլամական օրենքները, ցանկացած միջնադարյան-մուսուլմանական հասարակության նման կանայք ապրում էին մեկուսացված կյանքով: Չնավորված սոցիալական մտածելակերպի պայմաններում իսլամական հանրության մեջ կանանց իրավունքները տարբեր առումներով բավական սահմանափակ էին: Որպես ասվածի հիմնավորում կարելի է նշել բազմակնությունը, գլխաշոր կրելու պարտադրանքը, մզկիթում

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի հեռակա սուպիրանտ, էլ. փոստ՝ mariam.melkonyan@ysu.am

կանանց՝ տղամարդկանց հետ աղոթելու արգելքը և այլ օրենքներ, որոնք կարգավորվում էին շարիաթով¹: Օսմանյան կայսրությունում «Կանանց հարցը», որը ձևակերպվել է արևելագետ Վ. Գորդլևսկու կողմից, վերջինիս դիտարկմամբ «իսլամական հասարակության մեջ երբեք գոյություն չի ունեցել»²: Թուրքագետ Ալ. Սաֆարյանը, հղում անելով ակադեմիկոս Վ. Գորդլևսկուն, գրում է. «Բավամը կանանց ծածկեց չարշաֆով³ (*çarşaf*) և փակեց նրանց մուտքը դեպի հասարակական կյանք: Մինչև Մահմուդ 2-րդի ռեֆորմներն իսլամական հասարակությունը լռում էր կանանց հարցի մասին: Ընդունված չէր խոսել նրա (իմա՝ կնոջ) մասին, հարցեր տալ նրա առողջությունից և այլն»⁴: Ըստ օսմանյան հասարակական մտածելակերպի՝ կնոջ տեղն ընտանիքում էր, որտեղ նա պետք զբաղվեր միայն կենցաղային գործերով և երեխաների դաստիարակությամբ:

Կանանց նկատմամբ տիրող ընդհանուր վերաբերմունքը, որպես առանձին թեմատիկա, իր արտահայտումն է գտել օսմանյան պոեզիայում, որտեղ մասնավորապես հանդիպում են նրանց վերաբերող բացասական կարծիքներ արտահայտող ստեղծագործություններ: Այստեղ կանանց տրվում են հետևյալ բնորոշումները՝ Աստծո կողմից անիծված (*melûne*), կարիճ (*akrep*), կարճ խելք ունեցող (*kısa akli*), տխմար (*ahmak*), խորամանկ (*hilekâr*), վատ (*kötü*), վստահության անարժան (*itimada lâyık*

almayan), ստախոս (*yalancı*), անհավատարիմ (*vefasız*), տղամարդուն տանջող (*erkeğe cevr ve cefa eden*), սատանայի պարան (*seytanın ipi*) և այլն⁵: Ուշագրավ են բանաստեղծ Ռասիհի հետևյալ տողերը, որտեղ պոետը կոչ է անում չհավատալ կնոջ խոսքերին.

Sakin aldanma avretin sözüne

*Merd isen bakma onların yüzüne*⁶

*Չգու՛յշ, կնոջ խոսքերին մի՛ հավատա,
Եթե մարդ ես, նրանց երեսին մի՛ նայիր:*

Կանանց նկատմամբ եղող ընդհանուր վերաբերմունքի և իրավունքների սահմանափակման պատճառով գրեթե անհնար էր նրանց մուտքը գրականություն: Քննվող ժամանակաշրջանում ևս (15-16-րդ դդ), երբ բացահայտ կերպով առկա էր տղամարդ արվեստագետների, մասնավորապես բանաստեղծների գերակայությունը, կանանց կողմից ստեղծագործելն ու հատկապես ստեղծագործությունների ժողովածու՝ դիվան, կազմելը քիչ հանդիպող երևույթ էր⁷: Ինչպես նշում է թուրք գրականագետ Թ. Այը «Օսմանյան գրականության մեջ հազարավոր բանաստեղծների շարքում կանանց սակավաթիվ լինելն իրենց ապրած ժամանակ երկու կողմին (տղամարդկանց և կանանց – Մ.Մ.) տրված իրավունքների և արժևորման ցուցիչն է»⁸:

¹ Кулиева Э. Р., Коран, Смысловой перевод и комментарии Э. Р. Кулиева - М.: Умма, 2003, ինչպես նաև Mohammad Zafrulla Khan, Women in Islam, Islam International Publications Limited Islamabad, Sheephatch Lane, Tilford, Surrey, Uk, 2008, pp. 1-33, <https://www.alislam.org/library/WOMANINISLAM.pdf>

² Гордлевский В. А., «Женская доля», Избранные сочинения, т. 3, Москва, 1962, с. 16-17.

³ Չարշաֆ (թուրք.) – կանանց համար պարտադիր իսլամական գլխաշոր (արաբերեն՝ հիջաբ):

⁴ Safaryan Al., On The History of Turkish Feminism, "Iran and the Caucasus", Vol.11.1, Brill, Leiden-Boston, 2007, p. 141.

⁵ Levend A. S., Divan Edebiyatı: Kelimeler ve Remizler, Mazmunlar ve Mefhumlar, 4. Basım, İstanbul, 1984, էջ 581-584:

⁶ Նույն տեղում, էջ 583:

⁷ Arslan M., Mihri Hatun Divanı, Ankara, 2018, s. 2.

⁸ Ay T., Türk Kadın Şairleri, İstanbul, 1934, s. 3.

Այնուամենայնիվ, ինչպես նշում է մեկ այլ թուրք գրականագետ Ն. Ս. Բանարլըն, 15-րդ դարը նշանավորվեց Դիվանի գրականության մեջ տաղանդավոր բանաստեղծուհիների ի հայտ գալով⁹:

Օսմանյան պոեզիայում կանանց դերի մասին կարծիքները միանշանակ չեն, թեև ուսումնասիրողների մեծ մասն ընդունում է, որ նրանք բավականաչափ ազատ չէին: Այս առումով հարկ է նշել այն կարևոր հանգամանքը, որ օսմանյան բանաստեղծուհիների մեծամասնությունն ավանդաբար պատկանել է վերնախավին¹⁰, այսինքն գրական կյանք մուտք գործելուն նպաստել է իրենց ընտանիքների կարգավիճակը: Ակնհայտ է, որ սոցիալական կյանքի ազդեցության պայմաններում նրանց հիմնական մասը ստեղծագործել է դիվանի գրականության՝ մշակված գրական ավանդույթների շրջանակներում, և չի կարողացել արտահայտել սեփական զգացմունքներն ու գաղափարները¹¹: Այս առումով Ն. Բեքիրօղլուն գրում է. «Մի հասարակության մեջ, որտեղ կնոջ ամենակարևոր առանձնահատկությունը համարվում էր «իր մասին չխոսելը» կին գրողի համար անգամ բանաստեղծության ձևով իրեն, իր զգացմունքները, սերերը, ցավերը, հույսերը, կարճ ասած իր բարոյական գրավչությունը ներկայացնելն ու դրանով իր մասին պատմելը դառնում էր զգուշավորություն»¹²:

Ասվածի վառ օրինակ է հանդիսանում օսմանյան առաջին կին գրող համարվող **Ջեյնեփ Հաթունի**՝ մեզ հասած զագելը, որն ունի սուֆիական բնույթ և լիովին տեղավորվում է դիվանի գրականության բանաստեղծական արվեստի չափանիշների շրջանակներում՝ գաղափարապես չառանձնանալով այդ շրջանի տղամարդ բանաստեղծների ստեղծագործություններից:

⁹ Banarlı N. S., Resimli Türk Edebiyatı Tarihi, c. 1, İstanbul 2004, s. 451.

¹⁰ İspirli S. A., Kadın divan şairleri ve geleneğin uzantısı, 1. Basım, Ankara, 2007, s. 7.

¹¹ Նույն տեղում, էջ 13:

¹² Bekiroğlu N., Osmanlıda Kadın Şairler, www.nazanbekiroglu.net

Yâri yolunda ışk ile derdinden öleni
Kim der sana ki hecr ile cânın mükedder it
Zeyneb ko meyli zînet-i dünyâya zen gibi
Merd-âne var sâde dil olup terk-i zîver it

*Քո սիրուց ու վշտից մահացողին կես ճայնապարհին
թողեցիր ,*

*Ո՛վ ասաց քեզ հեռանալով կյանքդ վշտալի դարձրու ‘:
Ջեյնե՛փ, դու մի կնոջ նման հակված ես դեպի այսաշխարհի
զարդերը,*

*Մարդու նման մաքուր սիրտ եղի՛ր, զարդն ու զարդարանքը
թո՛ղ:*

Կին գրողներից բացառություն է կազմում 15-16-րդ դարերի **Հաթունի** բանաստեղծուհի **Միհրի Հաթունը**¹³(1456-1514 թթ), ով ապրել և ստեղծագործել է Ամասիայում՝ հանդիսանալով աղջկապազն Բայազեդի, այնուհետև Ահմեդի և վերջինիս մոր գրական շրջանակի անդամ և զրուցակից:

«Աղջիկնիս դիվանում կարելի է հանդիպել բազմաթիվ աղջկանի, որոնք իր ժամանակի համար առաջադեմ գաղափարներ

¹³ Միհրի Հաթունի կյանքի և գրական գործունեության մասին առավել անհամաձայն տե՛ս u Tezkire-i Lâitîf, s. 319, Koprülü M. F., Yeni Osmanlı tarih-i şerîfiyyet, İstanbul, Şirket mertebiye matbaası, 1332 (1945), s. 248, Михри-Хатун. Жизнь Хронологический текст и вступительная статья Е. И. Маштаковой, Москва, с. 1-99, Camii S., XV yüzyıl kadın şairlerinden Mihrî Hatun, Toplumsal Tarih, Cilt 2., Sayı: 6, Eylül, 1994, s. 13. <http://isamveri.org/pdfdkm/13/DKM131344.pdf>, Gibb E. J., The prose and poetry of Turkey, London, 1901, p. 216, Halid M. İlk kadın şâir Mihrî, Hayat Mecmuası, c. 14, sayı 92, 30 Ağustos, 1928, ss. 277-278. <http://isamveri.org/pdfdkm/13/DKM131344.pdf>.

են արտահայտում, սակայն առավել ուշագրավ է «Tazarru'-nâme» («Աղերսագիր») ստեղծագործությունը: Այս խրատական բնույթի չափածո գործի վերջաբանը («*Hâteme-i Risâle¹⁴*» («*Ռիսալեի ավարտ*»)) սկսվում է Աստծուն ուղղված գովաբանական տողերով.

Hamdullah avn fdûp rebb ül-enam
Bu tezarrunâme-i kıldım tamâm
Hamdullah variken aklım bilûm
Bu îlahiyyâti nazm ettin dilûm¹⁵.

Փա՛ռք քեզ օգնությանդ համար, մարդկության Տե՛ր,
Ավարտեցի այս աղերսագիրը,
Միտքս զիտի գովաբանության մասին,
Ինձ արժանացրել էս այս աստվածային շնորհին:

Սակայն նշված բեյթերին հաջորդող տողերը կարծես հակասում են Աստծուն խոնարհ լինելու գաղափարին: Վերջինիս իր գոհունակությունն արտահայտելուց հետո բանաստեղծուհին յուրաստեսակ բողոք է հղում արարչին, արտահայտում է իր անհամաձայնությունն Աստծո ստեղծած անարդարության դեմ և համարձակվում է պատասխանել անզամ կանանց ուղղված հասարակական քննադատություններին:

Setr ede eksiklüğeyn her ne ki var
Etme cemmale aybeyn-i aşıkâr
İşidüp dâni etmeye her bî haber
Mihrînin kalbini kılmaya keder
Lik Mihri dâinün zanni budur
Bu sözi dir ol ki kâmil usludur

¹⁴ Михри-Хатун. Диван, с. 53-55.

¹⁵ Նույն տեղում, էջ 53:

Bir müennes yigdürür kim ehl da
Bin müzekkerden ki ol nâ-ehl ola
Bir müennes yig ki zihni pâk ola
Bin müzekkerden ki bi-idrâk ola¹⁶

Ինչ պակասություն էլ լինի, թաքցրու՛ ,
Մի բացահայտիր ականառու թերությունները:
Ամեն անտեղյակի չարախոսությունը լսելով՝
Միհրիի սիրտը վիշտն է պատում:
Ասում են, թե կինը բավական խելք չունի,
Նրա ամեն մի խոսքը պետք է ամբարտավան կարծել:
Մակայն Միհրին գտնում է, և նրա կարծիքն է այսպիսին,
Եվ հասուն միտք ունեցողն է այդպես ասում:
Մի արժանավոր կինն ավելի լավ է,
Քան հազար անարժան տղամարդ:
Մի լուսավոր կինն ավելի լավ է,
Քան հազար խավարամիտ տղամարդ:

Ինչպես տեսնում ենք, այստեղ բարձրացվում է տղամարդկին անհավասարության խնդիրը: Կարող ենք ասել, որ «Աղերսագիր» վերջաբանում բանաստեղծուհին փորձում է բարձրացնել նաև կնոջ բնական իրավունքների հարցը, քանի որ այս տողերը մասնավորապես ենթադրում են այն միտքը, որ կինն իր խելքով և գաղափարներով ոչնչով չի զիջում տղամարդուն, հաճախ նույնիսկ զերազանցում է, ուստի նրան նույնպես պետք է ընդունել որպես մարդկային էակի, ով իրավունք ունի դրսևորելու իր արժանիքները, արտահայտելու իր գաղափարներն այնպես,

¹⁶ Նույն տեղում, էջ 55:

ինչպես տղամարդիկ: Թեև «*Hâteme-i Risâle*»-ի այս տողերում արտահայտված գաղափարները գերիշխող չեն Միհրի Հաթունի ստեղծագործություններում, սակայն, այնուհանդերձ, փաստում են այն մասին, որ օսմանյան գրականության մեջ կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված գաղափարների կարելի է հանդիպել դեռևս 15-16-րդ դարերի պոեզիայում: Միհրիի մասին թուրք գրականագետ Մ. Ուրազն իր՝ «Մեր բանաստեղծուհիները» աշխատության մեջ գրում է. «Դիվանի պոեզիայի շրջանակներում ստեղծագործող բանաստեղծուհի Միհրին միակն է, ով կարողացել է անկեղծորեն ցույց տալ իր սեռի զգացմունքային առանձնահատկությունները: Ի տարբերություն մյուս կին գրողների, որոնց զագելները կրում են տղամարդկային ձայնն ու զգացմունքները, նրա ստեղծագործությունները ներառում են կանացի հոգու հնչյուններն ու բողոքները...»¹⁷:

Իր ժամանակի համար չափազանց համարձակ այս տողերն օսմանյան դիվանի գրականության մեջ հանդիպող առաջին և եզակի դեպքն է: Կարևոր է փաստել այն հանգամանքը, որ միջնադարյան իսլամական հասարակության մեջ նմանատիպ հարց է բարձրացվում հենց կնոջ կողմից: Այս պատճառով էլ որոշ գրականագետներ Միհրիի ստեղծագործություններն ուսումնասիրելիս խոսում են այստեղ առկա վաղ ֆեմինիստական տարրերի մասին¹⁸: Ուշագրավ է այն փաստը, որ Միհրիից հետո մինչև թանգիմաթի շրջան (19-րդ դարի կեսեր) ոչ մի բանաստեղծուհի նման խնդիր չի բարձրացրել: Թերևս դա է պատճառը, որ Միհրի Հաթունն օսմանյան կին գրողների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Դիվանի գրականության մյուս կին գրողներից ոչ ոք չունի այն ազատությունն ու

անկեղծությունը, ինչը Միհրիի համար առանձնահատուկ դիրք է ապահովում¹⁹:

Այսպիսով, 15-16-րդ դարերում առհասարակ հնարավոր չէր բարձրացնել կանանց իրավունքներին վերաբերող հարցեր: Այնուամենայնիվ, օսմանյան գրականության մեջ փոքրաթիվ կին գրողների շարքում առանձնահատուկ տեղ զբաղեցնող Միհրի Հաթունը, իր՝ «*Աղերսագիր*» ստեղծագործության մեջ անգամ առաջ է քաշում այնպիսի խնդիրներ, որոնք ուղղված են ազամարդ-կին անհավասարության դեմ և ենթադրում են միջնադարյան իսլամական հասարակության մեջ կնոջ իրավագուրկ վիճակի և նրա բնական իրավունքների պաշտպանության հարցի բարձրացում:

¹⁷ Uraz M., Resimli Kadın Şair ve Muharrirlerimiz, İstanbul 1941, s. 19.

¹⁸ Михри-Хатун. Диван, с. 55.

¹⁹ İslam Ansiklopedisi, Cilt 8, İstanbul 1945, s. 306, İspirli S. A., նշված աշխ., էջ 39.

**THE PROBLEM OF EMANCIPATION IN MIHRI HATUN'S
«TAZARRU'-NÂME»**

Պետրոսյան Ամալյա *

Melkonyan Mariam
(Summary)

**XVIII դարի թուրքսեղանակալ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

The study of women's social status is often presented as a separate subject in the world literature, including Turkish literature. The Ottoman poetry has not been separated from this experience, where, though in a subtle way, this issue has been touched especially by a female writer. In this article, an attempt has been made to study the 15th century poetess Mihri Hatun's criticism of woman status in social-political context.

Բանալի բառեր՝ թուրքմենական գրականություն, թուրքմեն քանաստեղծներ, դաստան, պոեմ

**ВОПРОС ЖЕНСКОЙ ЭМАНСИПАЦИИ В «ПОЭМА
ПОКАЯНИЯ» МИХРИ ХАТУН**

Мелконян Мариам
(Резюме)

Թուրքմենական գրականությունը, որն ունեցել է զարգացման փ բանի շրջան, իր ծաղկման զագաթնակետին է հասել XVIII դարում: XVIII դարն այլ կերպ կարելի է անվանել թուրքմենական գրականության «Ոսկե դար»¹: Մա բոլորովին նոր շրջան էր թուրքմենական գրականության պատմության մեջ, քանի որ գրական ասպարեզ են գալիս այնպիսի նշանավոր բանաստեղծներ և գրողներ, ովքեր շարունակելով նախորդ շրջանի գրական ավանդույթները հանդես են գալիս բոլորովին նոր և թարմ գաղափարներով, հարստացնում են գրականությունը նոր թեմատիկ ուղղություններով, կատարում են արմատական բարեփոխումներ լեզվի ոլորտում: XVIII դարի թուրքմենական գրականության ընդհանուր առանձնահատկությունների մասին խոսելիս՝ կանդրադառնանք Նուրմուհամմեդ Անդալիբի, Դովլեթմամմեդ Ազադիի, Մահթումկուլի Ֆրագիի որոշ ստեղծագործություններին: Հարկ է նշել, որ թուրքմեն ժողովրդի պատմության մեջ XVIII դարն առանձնակի դեր ունի նաև որպես

В мировой, в том числе турецкой литературе часто темой исследования становится общественный статуса женщины. Эта тенденция не обошла и османскую поэзию, в которой хоть и поверхностно, но именно со стороны писатель-женщина обратилась к этой проблеме. В данной статье мы попытались в контексте социально-политической ситуации в стране представить критику статуса женщины со стороны поэтессы 15-го века Михри Хатун.

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., էլ. փոստ՝ amalya.petrosyan@ysu.am

¹ Թուրքմենական գրականության պատմության մասին առավել մանրամասն տե՛ս Իстория туркменской литературы, ЫЛЫМ, Ашхабад, 1976, т. 2.

ազգային մտքի և գիտակցության զարթոնքի դար, ինչը հատկապէս վառ արտացոլվեց թուրքմեն բանաստեղծ Մահթումկուլի Ֆրագիի ստեղծագործության և պոեզիայի մեջ:

Թուրքմենական գրականությունը, որն ընդհանուր թուրքական գրականության մի մասն է կազմում, դարձել է ուսումնասիրման հետաքրքիր նյութ հատկապէս Թուրքմենստանի անկախության շրջանում: Փորձելով հստակ սահմանագատել թուրքմենականը ընդհանուր թուրքականից՝ թուրքմենները վերականգնում են խորհրդային շրջանում անտեսված ազգայինը: Գրականության բնագավառում, հատկապէս անկախացումից հետո, մեծ աշխատանքներ են տարվում թուրքմեն դասական գրողների և բանաստեղծների ստեղծագործությունների վերահրատարակման, նրանց ձեռագրերի ուսումնասիրման ուղղությամբ: XVIII դարասկզբի թուրքմենական գրականության մեջ շատ են եղել չափածո մեծածավալ ստեղծագործությունները՝ պոեմները, դաստանները, որոնք կազմված էին արձակից և հանգավորված բանաստեղծական տներից, իսկ XVIII դարի երկրորդ կեսից գրվում էին հիմնականում բանաստեղծություններ: Դաստանների և պոեմների մեծ շարքի հեղինակ է Նուրմուհամեդ Անդալիբը, ով համարվում է այս շրջանի առաջին նշանավոր գրական ներկայացուցիչը, ում մասին գրավոր հիշատակությունները քիչ են պահպանվել կամ էլ քիչ են ուսումնասիրված²: Նա թողել է բավական հարուստ գրական

² Դասական թուրքմենական գրականության ուսումնասիրումը սկսել է XX դարի 30-ականներից: Այդ մասին տես Бертельс Е., Изучение истории туркменской классической литературы в Советском Союзе // (Махтумкули (Сборник статей о жизни и творчестве поэта)), Ашхабад, 1960, стр. 188-198: Թուրքմենների և թուրքմենական գրականության վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները կատարվել են սովետական արևելագետների կողմից Կենտրոնական Ասիա կատարած գիտարշավների ընթացքում: Սակայն կատարված ուսումնասիրությունները նկարագրական են, իսկ առանձին գրողների գրական

ժառանգություն: Անդալիբը համարվում է դաստանի վարպետ, ով մեծապէս օգտվել է ընդհանուր արևելյան, պարսկական թեմատիկ ուղղություններից (նրա «Մելիքե Մեհրինիգյար» պատմվածքը գրվել է, օրինակ, պարսկական հեքիաթի հիման վրա), թափառող պոեմներից, ինչպէս նաև փայլուն տիրապետել արաբերենին ու պարսկերենին: «Յուսուֆ-Զուլեյխա» («Yusuf-Züleyha») դեստանի հիմքում, օրինակ, նույն Դուրանի և Աստվածաշնչյան հայտնի լեզնեղն է Հովսեփ Գեղեցիկի մասին, «Լեյլի-Մեջնուն»-ը («Leyli-Mejnun») նվիրված է Լեյլիի և Մեջնունի սիրո պատմությանը: Այս դաստաններն, անշուշտ, արևելյան մյուս համանուն ստեղծագործությունների հետ ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Անդալիբը ոչ միայն մշակում է այս դաստանների պոեմները՝ թուրքմեն ընթերցողին հասանելի դարձնելու համար, այլև նորովի մատուցում այն՝ անդրադառնալով թուրքմեն ժողովրդի կենցաղին ու կենսակերպին վերաբերող տարբեր հարցերի: Նա համարվում է թուրքմենական գրականության մեջ դաստանի ավանդույթի (dessançylyk däbi) հիմնադիրը³:

Այն բանից հետո, ինչ Միջին Ասիայում տարածվեց իսլամը, կրոնական թեման թափանցեց գրականություն: Թուրքմեն բանաստեղծ-գրողները ևս անդրադարձել են իսլամի թեմային:

Ժառանգության խորքային ուսումնասիրումը դեռ շարունակվում է: Նոր ձեռագրերի հայտնաբերումն ու ուսումնասիրումը թույլ է տալիս նոր փաստեր բացահայտել այս կամ այն գրողի կյանքի և գրական ստեղծագործության պատկանելիության վերաբերյալ: Այս է պատճառը, որ միջնադարյան գրողների գրական ժառանգության ուսումնասիրումը համարվում է կիսատ և ոչ ավարտուն: Իսկ Կենտրոնասիական երկրների անկախացումից հետո մի շարք գրական հուշարձաններ դարձել են կոմպլեքս թուրքական ազգերի միջև:

³ Այդ մասին տե՛ս Şygyr äleminiň bilbili (Nurmuhamet Andalybyň 350 ýyllyk toý dabarasyna bagyşlanan makalalar ýygynyndysy), Türkmen döwlet neşirýat gullugy, Aşgabat, 2011, s. 9.

Անդալիբի «Ջեյնելարափ» («Zeynelarap»), «Բաբա Ռովչեն» («Baba Röwşen») դեստաններն, օրինակ, ունեն կրոնական բնույթ. դրանցում պատմվում են Մուհամեդ մարգարեի բարեգործությունները, գովերգվում են նրա փեսա Ալիի խիզախությունն ու մեծահոգությունը: Իսլամը գովերգող պոեմներ են նաև Ազադիի «Գիրք դրախտի մասին» («Behiştname»), «Հինգ նամազ» («Bäs namaz») պոեմները, որոնցում գովերգվում են իսլամն ու իսլամական օրենքները, կոչ է արվում ապրել ճշմարիտ հավատացյալի կյանքով:

Թուրքմենական գրականության մեջ իր հիմնարար տեղն ունի Ազադիի «Ազատ քարոզ» («Wagz-y Azad») պոեմ-տրակտատը: Այն լիրիկական ստեղծագործություն է, որը խորապես քննում է XVIII դարի թուրքմենների կացությունը: Այստեղ խնդիրներն առաջադրվում և լուծվում են լիրիկական «ես»-ի, այն է թե՛ Ազադիի կերպարով: Պոեմում քննարկվում են մի շարք հարցեր. միասնական պետության ստեղծման և պետության կառավարման խնդիրներ, բարոյականությանն ու մարդկային հասարակության կենսական խնդիրներին առնչվող հարցեր: Պոեմը կազմված է չորս մասից՝ առաջին մասը նվիրված է միասնական պետության ստեղծման խնդրի քննմանը, երկրորդը՝ սոցիալական հարցերին, երրորդ գլխում պոետը խոսում է հասարակության մեջ կրթված անհատների տեղի մասին, իսկ չորրորդ գլուխը նվիրված է դերվիշներին: Ազադիի պոեմը վաղուց դուրս է եկել գրականագիտական շրջանակներից և վերածվել է կարևոր բարոյախրատական ուղեցույցի, որն արծարծում է կարևորագույն խնդիրներ բանաստեղծի ապրած ժամանակաշրջանում: Եթե դեստաններում ավելի քիչ էր անդրադարձ կատարվում սոցիալական թեմաներին, առաջ չէր քաշվում հայրենիքի գաղափարը, ապա մի շարք պոեմներում, այդ թվում և Ազադիի մոտ այս թեմաները դառնում են առավել տեսանելի և հնչեղ: Պետք

է եջեղ, որ թուրքմենների համար, ովքեր XVIII դարում չունեին մեկ միասնական պետություն, ապրում էին ցեղային միավորումներով (ինչ ցեղերն անընդհատ գտնվում էին միջցեղային պայքարի մեջ) և հաճախ ենթարկվում էին օտարների ասպատակություններին, մոավորականների և գրողների կողմից այս թեմայի արծարծումը զբաղում է կարևոր հատկապես ազգայինի պահպանման և ազգային գաղափարախոսության ձևավորման տեսանկյունից: Սա առաջին ստեղծագործությունն է, որտեղ առաջ են քաշվում պետություն, երկրի ղեկավար գաղափարները:

Հայրենիքի, միջցեղային կոիվներին վերջ տալու և միասնական պետության ստեղծման թեմատիկան առավել ուժեղ է հնչում հատկապես Ազադիի որդի Մախթումկուլի Ֆրագիի պոեզիայում: Մախթումկուլի Ֆրագիի պոեզիան, որն ամբողջությամբ թաթախված էր հայրենասիրությամբ, դառնում է ամհմանաբաժան XVIII դարի առաջին և երկրորդ կեսի թուրքմենական գրականությունների միջև:

Բացի գաղափարական փոփոխություններից, որոնք կատարվեցին գրականության մեջ XVIII դարի երկրորդ կեսին, հիմնական նորություններից մեկը դարձավ բանաստեղծական «gosuk» տեսակի կիրառումը: Անշուշտ թուրքմեն բանաստեղծները շարունակում էին արևելյան պոեզիայի և տաղաչափության կանոններին հավատարիմ մնալով ստեղծագործել արևելյան այնպիսի բանաստեղծական տեսակներով ինչպիսիք էին գազելը, մուխամմազը, մյուսեմները, որոնք ունեին իրենց հատուկ բառապաշար և բառային կաղապարներ: Սակայն, նոր թեմաները, որոնք առաջնային էին դարձել, պահանջում էին բանաստեղծական առավել հարմար ձև, քանի որ գազելն ու մյուս բանաստեղծական տեսակները կաղապարային էին

ընդհանրական թեմաների համար: Բացի այդ, թուրքմենական պոեզիայի համար տաղաչափական տեսանկյունից ամենահարմար բանաստեղծական տեսակն իսկապես հանդիսանում է գոշուկը «goşuk»: Մախթումկուլին պոեզիայում գերակշռում է հենց այս բանաստեղծական տեսակը: Այն ունի հանգավորման հետևյալ ձևը՝ abab, cccb, dddb, eeeb, fffb և այլն: Համարվում է հին թուրքական գրականության տեսակներից մեկը: Նրա առաջին օրինակները տեղ են գտել անգամ Մահմուդ Կաշգարիի «Թուրքական լեզուների բառարան»-ում: Մախթումկուլի Ֆրազին համարվում է բանաստեղծական այս տեսակի մեծ վարպետ:

Մտորն ներկայացնում ենք «goşuk»-ի մի օրինակ.

Կուզեիր Durasyň geler⁴

*Գեղեցկուհի կա՛ նմանը չունի, Gözel bardyr gözellerden zyýada,
Նրա մոտ ծառա մնալ կուզեիր, Anyň hyzmatynda durasyň geler,
Սիրտը անարատ սիրտ է թոշունի, Edepli-ekramly, mylaýymzada,
Մինչև մահ հետը գնալ կուզեիր: Tä öliňçäň bile ýöresiň geler.*

Գեղեցկուհի կա՛ կարապի վզով, Gözel bardyr, uzyn boýly, alkymy

*Մութը ցրում է երեսի լույսով, Garaňky gijede düşer ýalkymy,
Խելքահան կանի խոսքով ու նազով, Sözlegen sözleri misli bal kimi,
Նրան առնելու հնար կուզեիր: Tapyp nirde bolsa alasyň geler.*

*Օ, Մահթո՞ւմկուլի, ուշադի՛ր նայիր, Magtymguly, syn gerekdir
gözele,*

*Դու լավի համար բան մի՛ խնայիր, Herne kysmat bolsa, tartar ezele,
Դրան արժան է բարությանը նա իր, Dünýä malyn harç et ýagşy
gözele,*

Չարերից հեռու մնալ կուզեիր: Ýamanyň ýanyndan gaçasynyň geler.

Շատ երկար ժամանակ թուրքական բանաստեղծական այս մեջ մոռացության էր մատնվել թուրքմենական գրականության մեջ: Եվ միայն Մահթումկուլիի շնորհիվ է այն դառնում թուրքմենական գրականության մեջ ամենատարածված բանաստեղծական տեսակը և կիրառվում է նաև մեր օրերում: Թուրքմեն գրականագետ Ա. Բեկմյրադովը իր «Magtymgulynyň poeziýasynda şahyrana döp hem täzeçilik gözlegleri» գրքում ևս նշում է, որ նախկինում մոռացված բանաստեղծական ձևը վերականգնում է Մահթումկուլիի շնորհիվ, ով փնտրում էր նոր բանաստեղծական տեսակներ, որոնք առավել հարմար կլինեին նոր թեմաների, որոնք նա առաջ էր բերում:⁵

Հայրենիքի, հայրենասիրության թեմաներից բացի մեծ տարածում են գտնում բանաստեղծություններ գրված առցիալական թեմատիկայով և բանաստեղծություններ նվիրված կոնկրետ պատմական անձանց: Սա ևս նորություն էր թուրքմենական գրականության մեջ: Գրվում են բանաստեղծություններ նվիրված ժամանակակիցներին, սկսում են գովերգել իրենց սիրեցյալներին, գրականությունը դրվում է ռեալիստական հիմքի վրա: Ռեալիզմի ներկայացուցիչ գրողներն ու բանաստեղծներն իրենց ստեղծագործություններն ավելի ու ավելի էին մոտեցնում ժողովրդին, պարզեցնում էին բանաստեղծական լեզուն, գրում էին առօրյա խնդիրների մասին և կոտրում անջրպետը գրականության և հասարակ ժողովրդի միջև, որին այն նախկինում դժվար ընկալելի էր: Անշուշտ, ռեալիստական տարրերով գրականությունը և հատկապես

⁵ Bekmyradow A. Magtymgulynyň poeziýasynda şahyrana döp hem täzeçilik gözlegleri, Aşgabat, 1989.

⁴ Magtymguly Goşgular, Türkmen döwlet neşirýat gullugy, 2008, s. 84.

Մահթումկուլիի պոեզիան ավելի մեծ ժողովրդական սեր էր վայելում նախկինում և այսօր մի քանի պատճառներով: Պատճառներից մեկն, ինչպես նշեցինք, այն էր, որ բանաստեղծը դիմեց բանաստեղծությանը՝ մի կողմ թողնելով դեստանն ու պոեմը: Գրագիտության խիստ ցածր մակարդակի պայմաններում, Մահթումկուլիի բանաստեղծությունները հիմնականում տարածվում էին բանավոր կերպով կամ էլ որպես երգեր, որոնք կատարում էին բախշիները:⁶ Այս ճանապարհով բանաստեղծն ավելի շուտ էր հասնում ճանաչման: Եվ քանի որ բանաստեղծությունները տարածվում էին ժողովրդական լայն գանգվածների շրջաններում անհրաժեշտություն էր առաջանում դրանք գրել ժողովրդին պարզ և հասկանալի լեզվով: Այս խնդիրը, որքան էլ արդի է եղել նույնիսկ XVIII դարի առաջին կեսին, մինևույն է լուծում չի գտել ո՛չ Ագադիի, ո՛չ էլ Անդալիբի ստեղծագործության մեջ: Իսկ Մահթումկուլիի պոեզիան, չնայած գերծ չէ պարսկերենի ազդեցությունից, այնուամենայնիվ գրված է ժամանակի հասկանալի թուրքմեներենով, ինչն էլ կարևոր հենք է հանդիսացել հասկանալի լեզվով գրված ժողովրդական գրականության հետագա զարգացման համար: Մահթումկուլին ուրվագծեց այն ճանապարհը, որով ընթացավ հետագա ողջ թուրքմենական գրականության զարգացումը: XIX դարի սկզբին բանաստեղծների հերթական մեջլիսի ժամանակ թուրքմեն բանաստեղծներից մեկը՝ Քեմինեին, հետևյալ խոսքերով է բնութագրում գրականության մեջ Մահթումկուլիի ունեցած դերը.

«Մահթումկուլին հնձել է բանաստեղծական մեղանի (երապարակի) ողջ հունձքը: Մենք ցողուններն ենք միայն հավաքում»:⁷

Ամփոփելով՝ նշենք, որ հողվածում միայն ամենաընդհանրական գծերով փորձեցինք ներկայացնել XVIII դարի թուրքմենական գրականությունը: Հայ իրականության մեջ Կենտրոնասիական գրականությունների, այդ թվում և թուրքմենական գրականության ուսումնասիրման առաջին փորձերը նպատակ ունեն ծանոթացնել թուրքմենական մշակույթին և պատմությանը: Պետք է նաև նշել, որ որոշ թուրքմենական ստեղծագործություններ վերջին շրջանում աղբրեջանական գրականության մեջ ներկայացվում են որպես աղբրեջանական: Ուստի թուրքմենական գրականության առավել խորքային ուսումնասիրումը կարող է նպաստել անգամ աղբրեջանական գրականագիտական կեղծարարությունների դեմ գիտական պայքարին:

⁶ Ժողովրդական երգիչներ, ովքեր իրենց երգերը կատարում էին դուրառի (երկլարանի երաժշտական գործիք) նվագակցությամբ: Կատարում էին ինչպես արդեն իսկ գրված բանաստեղծություն-երգեր, այնպես էլ իրենք էին հորինում: Արվեստը նման է աշուղական արվեստին և պահպանվում է նաև մեր օրերում: Բախշիները մեծ ճանաչում և ժողովրդական սեր են վայելում, իսկ բախշիական արվեստի ծագման օրրան է համարվում Թուրքմենստանի Դաշոզուզ վիլայեթը, որը հայտնի է նաև կին-բախշիներով:

⁷ История туркменской литературы, ЫЛЫМ, 1976, т. 2, стр. 5.

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ТУРКМЕНСКОЙ ЛИТЕРАТУРЫ XVIII ВЕКА

Петросян Амаля
(Резюме)

В статье анализируются некоторые особенности туркменской литературы XVIII века в общих чертах. В частности, рассматривается путь формирования туркменской классической литературы, ее основные жанровые и идеологические особенности. Для представления общей литературной картины XVIII века нами анализируется творчество нескольких туркменских писателей того времени.

ON SOME PECULIARITIES OF TURKMEN LITERATURE OF THE 18TH CENTURY

Petrosyan Amalya
(Summary)

In the present article, we study some peculiarities of eighteenth-century Turkmen literature. Ways of formation of Turkmen classical literature, as well as its genre and ideological peculiarities are scrutinized. To depict a general view of literature we analyze works of some Turkmen poets of the 18th century.

Խաչատրյան Շուշան*

ՄՈՒԽԹԱՐ ԱՈՒԵԶՈՎԻ ՍՏԵՂՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Բանալի բաներ՝ Մուխթար Աուեզով, դազախական գրականություն, հայերեն թարգմանություններ, հայ-դազախական գրական կապեր

Ինչպես հայտնի է, գրականությունն այս կամ այն ժողովրդին ճանաչելու ճանապարհներից մեկն է: Այն իր մեջ ամփոփում է ոչ միայն կոնկրետ դեպքեր, այլև առհասարակ տվյալ հասարակության գիտակցությունը պատմական որոշակի ժամանակաշրջանում: Բացի այդ, գրականությունը ներկայացնում է տվյալ ժողովրդի կյանքը, բնույթը, առանձնահատկությունները: Մակայն որքան էլ գրականությունը պատկանի որևէ ժողովրդի, այն չի կարող զարգանալ փակ համակարգում, և բնական է, որ տարբեր ժողովուրդների գրականությունները միմյանց հետ սերտ առնչություններ ունեն: Ղազախ և հայ գրականություններն այս առումով բացառություն չեն: Այստեղ պետք է նշել, որ պատմականորեն ձևավորված օբյեկտիվ պատճառներով 20-րդ դարում ինչպես ղազախ, այնպես էլ հայ գրականությունը սերտ կապեր ունեին ռուս գրականության հետ և հայ ու ղազախ գրականությունների շփումները կատարվում էին միջնորդավորված ռուս գրականությամբ: Հայ-դազախական

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի հեռակա ասպիրանտ (2013-2018), ՀՀ ՊԿԱ դասախոս, էլ. փոստ՝ shush.khachatryan@gmail.com

գրական կապերի և գիտության համար հատկապես բեղմանվոր էին 19-րդ դարի 50-60-ականները, որը մեծ առաջընթացի ժամանակաշրջան դարձավ ոչ միայն ռուս, այլև Ռուսաստանի տարածքում ապրող այլ ժողովուրդների համար: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայ գրականության հարցերի շուրջ ռուսական մամուլում հաճախ հանդես էին գալիս հայ գիտնականներ ու գրականագետներ, ուժեր, ամբողջ կյանքում ապրելով Ռուսաստանում, սովորելով ռուսական բարձրագույն առաջադեմ ուսումնական հաստատություններում, ջանում էին ռուս մտավորականությանը, գիտության և մշակույթի ներկայացուցիչներին տեղյակ պահել իրենց ժողովրդի մշակույթի, գրականության և պատմության հարցերին. ռուսերեն էին թարգմանվում հայ հեղինակների առանձին աշխատանքներ, գրվում էին առանձին աշխատություններ. մասնավորապես 1916 թ. Պետրոգրադում լույս է տեսնում «Հայ գրականության ժողովածուն»՝ Մաքսիմ Գորկու խմբագրությամբ, Մոսկվայում՝ «Հայաստանի պոեզիան» անթոլոգիան՝ Վալերի Բրյուսովի խմբագրությամբ՝ հայ բազմադարյան բանաստեղծության պատմական զարգացման ընթացքը ներկայացնող ծավալուն առաջաբանով¹ և այլն:

19-րդ դարի 60-ականներին ռուսական մամուլն ու գրական շրջանակներն առանձնակի հետաքրքրություն էին ցուցաբերում նաև դազախ գրականության նկատմամբ: Իսկ դազախ գրականության համար, որը զարգացման նոր ճանապարհ էր անցնում այդ ընթացքում, ռուս գրականությունը դառնում է ուղենիշ. գրական տարբեր ժանրեր, ուղղություններ, նույնիսկ թեմատիկ կողմնորոշումներ անմիջականորեն իրենց վրա են կրում ռուս գրականության ազդեցությունը:

¹ Ղուկասյան Ջ., Հայ-ռուսական գրական կապերը նախառեվոլյուցիոն շրջանում, Երևան, 1961, էջ 7-11:

Հայ-դազախական գրական կապերի խորացման գործին մեծապես նպաստում էր խորհրդային շրջանում տարածված առաջին կոչված «եղբայրական գրականությունը»: Ինչպես 1934 թ. ԽՍՀՄ գրողների միության առաջին համագումարում նշում էր Մ. Գորկին. «Սովետական գրականությունն արդեն չի համարվում պարզ ռուսերեն գրված գրականություն, այն վերածվել է նաև համամիութենական գրականության»²: «Եղբայրական գրականության» կարևորության մասին խոսում էին ոչ միայն ռուս, այլև դազախ ստեղծագործողները. բավական է հիշել Մ. Աուեզովի և Մաքսիմ Ռիլսկու համատեղ զեկույցը ԽՍՀՄ գրողների միության երկրորդ համագումարում (1954 թ.). «Սովետական միության ժողովուրդների միջև եղբայրությունը սովետական հասարակության գոյության հիմքն է: Այդ եղբայրության ցրտորման ձևերից մեկն էլ Սովետական միության ժողովուրդների գրականությունների թարգմանությունն է»³:

Հաշվի առնելով գաղափարական բազմաթիվ անհամաձայնություններն ու հեղինակների առջև դրված զգժվարությունները, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ սովետական շրջանում այս երևույթը դրականորեն է անդրադարձել երկու երկրների ժողովուրդների ազգային գրականությունների վրա. այն հնարավորություն էր ծանոթանալու ռուս և ԽՍՀՄ կազմի մեջ գտնվող մյուս ազգերի գրական առանձին նմուշների հետ, թարգմանելու և սեփական գրականությունը ներկայացնելու այլազգի ընթերցողներին, հարստացնելու ազգային գրականությունը նոր ժանրերով և թեմատիկ ուղղություններով:

² Первый Всесоюзный съезд советских писателей (1934), Стенографический отчет (ред. Луппов И., Розенталя М., Третьяков С.), Москва, 1934, стр. 15.

³ Второй всесоюзный съезд советских писателей (1954), Стенографический отчет (ред. Бажан М. Лацис В.), Москва, 1956, стр. 46.

Այս փաստը 20-րդ դարի դազախ գրականության զարգացման հիմնական ազդակներից մեկն էր:

Հատկանշական է, որ «եղբայրական գրականությունը» սովետական շրջանի թարգմանիչների համար ևս հնարավորություն էր ստեղծել ակտիվորեն աշխատելու թարգմանչական արվեստի կատարելագործման ուղղությամբ: Ինչպես հայտնի է, 1930-ականներից թարգմանչական արվեստը սովետական գրականության մեջ զարգանում էր մեծ արագությամբ. գրականագետները, մասնագետները թե՛ քննարկումների մեջ էին, թե՛ որոնք են ճիշտ թարգմանության սկզբունքները, որոնք են կատարյալ թարգմանության չափանիշները, ինչպես պետք է աշխատել գեղարվեստական տեքստի հետ⁴: Բնականաբար, թարգմանությունների շուրջ քննարկումների շարունակաբար զարգացող պրոցեսի մեջ էին ներգրավված նաև հայ և դազախ ստեղծագործողներն ու մասնագետները:

Ինչպես վերևում արդեն նշել ենք, ռուս գրականությունն ու ռուսերենը հանդիսանում էին կապող օղակ Սովետական միության ժողովուրդների գրականությունների միջև, ինչը վերաբերում է նաև հայ և դազախ գրականություններին: Չգերազնահատելով ռուսերենի դերը՝ նկատենք, որ վերջինիս կարևորության մասին Ս. Կուլիտիկյանը նույնիսկ հիշատակում է «Ջամբուլի հոբելյանը Ալմա-Աթայում» բանաստեղծության մեջ.

Մենք՝ հո՛ծ, բազմալեզու, մեր երկիրը՝ անձայր,
Թե՛ն եղբայրության մենք նույն խոսքն ենք խոսում,
Բայց եղբայրնե՛ր, մենք ո՛նց հասկանայինք իրար,
Ասենք, թե չլինե՛ր ռուսաց լեզուն...⁵

Ղազախ գրողների առանձին ստեղծագործություններ հայերեն են սկսում թարգմանվել միայն 1930-ականներից: Թարգմանվող հեղինակները հիմնականում այն ստեղծագործողներն էին, ովքեր պարբերաբար թարգմանվում էին այլ լեզուներով և առաջին հերթին ռուսերեն, որից էլ հետագայում թարգմանվում են հայերեն: Այսպես 1938 թ. հայերեն է թարգմանվում Ջամբուլ Ջաբանը («Երգեր և պոեմներ»), ապա հայերեն են թարգմանվում Գաբիտ Մուսրեպովի («Մեկ անգամ և ամբողջ կյանքում» 1980 թ.), Ալիմժանով Անուարի («Մուրհանդակ» 1982 թ.), Իլյաս Եսենբեռլինի («Ոսկե հորդա» 1989 թ., «Միրահարները» 1984 թ.), Աբայ Կունանբասի («Հատընտիր» 1970 թ.), Մուխթար Աուեզովի («Աբայ» 1952 թ., «Կրակոց լեռնանցքում» 1988 թ.) ստեղծագործությունները, ինչպես նաև տարբեր գրողների առանձին ստեղծագործությունները ներառող ժողովածուներ («Ղազախ բանաստեղծներ», «Ղազախական պատմվածքներ»)⁶:

Տարբեր տարիներին (խորհրդային շրջանում և անկախացումից հետո) դազախերեն են թարգմանվել նաև հայ գրողների ստեղծագործություններ, որի շնորհիվ դազախ ընթերցողը ճանաչել է հայ գրողների առանձին աշխատանքները⁷:

Մուխթար Աուեզովը (1897-1961) հայերեն ամենաառաջին թարգմանված դազախ ստեղծագործողներից մեկն է (եթե ոչ առաջինը): Այսպես 1952 թ. «Աբայ»⁸ (թարգմ. Հ. Բորոզանյանի)

⁴ Տե՛ս «Ղազախ բանաստեղծներ», Երևան, 1968; «Ղազախական պատմվածքներ», Երևան, 1968:

⁷ Մանրամասն տե՛ս Հայ-դազախական գրական կապեր (1937-1986). Մատենագիտական ցանկ, Երևան, 1987:

⁸ «Աբայ» վեպը գրելուց հետո Աուեզովը չի դադարել աշխատել դրա վրա և շարունակելով ստեղծագործությունը՝ այն ընթերցողին է հանձնել քառահատոր «Աբայի ուղին» վեպ-էպոպեայի տեսքով: Հայերեն թարգմանվել են միայն առաջին երկու հատորները՝ «Աբայ» վերնագրով:

4 Чуковский К., Собрание сочинений в шести томах, Москва, 1966, 3 том, стр. 255-524.

5 Կապուտիկյան Ս., Հատընտիր, Երևան, 1979, էջ 245:

վեպի թարգմանությունից հետո հայ գրական շրջանակներում սկսում են հրատարակվել Մ. Աուեզովի և մեկ այլ դազախ լուսավորական, գրական դազախերենի հիմնադիրներից Աբայ Կունանբանի կյանքին և ստեղծագործություններին նվիրված անդրադարձները: Ինչպես արդարացիորեն նշում է Լ. Գրիգորյանն իր «Մ. Աուեզովի «Աբայ» վեպը» հոդվածում. «Այս տիպի ստեղծագործությունը լույս տեսնելուց անմիջապես հետո գրականության մեջ վստահորեն գրավում է կարծես միայն իր համար պատրաստված տեղը»⁹: Դժվար է գտնել դազախ գրականության մեկ այլ ստեղծագործություն հայերեն, որը կարողանա մրցել այս աշխատանքի հետ թե՛ իր կարևորությամբ, թե՛ գեղարվեստականությամբ, թե՛ պատմական արժեքով, թե՛ գաղափարական ասելիքով, և թե՛ ժամանակի լայն ընդգրկմամբ: Հետևաբար, հաշվի առնելով «Աբայ» վեպի հայերեն թարգմանության առավել մանրամասն և բազմակողմանի քննության անհրաժեշտությունը, սույն հոդվածում մենք չենք անդրադառնա այս աշխատանքին՝ համարելով դա առանձի ուսումնասիրության առարկա:

«Աբայ» վեպի թարգմանությունից շատ ավելի ուշ՝ 1989 թ. 5000 օրինակով լույս է տեսնում Աուեզովի «Կրակոց լեռնանցքում» վիպակների և պատմվածքների ժողովածուն, որտեղ ընդգրկվել էին թվով յոթ ստեղծագործություն՝ «Դժվարին տարի», «Կրակոց լեռնանցքում»¹⁰ վիպակները, «Որբի բախտը», «Անցյալի

առվերները», «Գորշ արյունարբուն», «Ջադիթափ», «Արծվակիր քարոդը» պատմվածքները: Աուեզովի մյուս հայերեն թարգմանություններն ընդգրկված են տարբեր ժամանակներում հայերեն թարգմանված առանձին փոքրիկ ժողովածուներում¹¹:

Նախ անդրադառնանք «Կրակոց լեռնանցքում» ժողովածուում ընդգրկված ստեղծագործությունների հայերեն վերնագրերին: Պետք է նկատել, որ հայերեն թարգմանության ժամանակ թարգմանիչը հիմք է ընդունել ռուսերեն վերնագրերը, ինչով էլ պայմանավորված բնագրի հետ համեմատելիս նկատվում են որոշակի իմաստային և ռճական շեղումներ: Ասվածը վերաբերում է մասնավորապես բառերի իմաստային առանձնահատկություններին, օրինակ՝ «Килы заман» վիպակը ռուսերեն և հայերեն տրվում է համապատասխանաբար «Ляха родина» և «Դժվարին տարի» տարբերակներով: Մինչդեռ բնագրում նշվող «заман» բառն արտահայտում է ավելի լայն ժամանակային ընդգրկում, ունի ավելի լայն իմաստ, քան մեկ տարին է: Ռուսերեն և հետևաբար հայերեն թարգմանության համար հավանաբար հիմք է հանդիսացել այն փաստը, որ գործողությունները նկարագրում են 1916 թ. դազախների շրջանում ծավալված ապստամբությունը. սակայն մեր խորին համոզմամբ, հեղինակը, նկարագրելով 1916 թ. ապստամբությունը, այնուամենայնիվ ներկայացնում է նաև ապստամբության պատմական և սոցիալական հենքը, դրա նախապատմությունն ու պատճառները: Գեղարվեստական տարատեսակ մեթոդների կիրառումը (մասնավորապես, բնության հավերժականության պատկերումը, դարերով եկած ավանդույթների փոփոխության անհնարինությունը, հերոսների՝

⁹ Սովետական գրականություն, Երևան, 1959, թիվ 9, էջ 118:

¹⁰ Բնագրում ստեղծագործությունը վերնագրված է «Караш-караш окугасы», բոց.՝ «Կարաշ-Կարաշի դեպքը»: Հեղինակի կողմից նման վերնագրի ընտրությունը բնական էր, որովհետև ստեղծագործության սյուժեի կուլմինացիան և լուծումը տեղի են ունենում համանուն լեռնանցքում: Ռուսերեն թարգմանության մեջ տրամաբանական շեշտադրումը պահպանվել է, սակայն «Выстрел на перевале» տարբերակով: Կարծում ենք, որ ռուսերենից բառացի կատարված հայերեն թարգմանությունը ևս դիպուկ է ու տեղին:

¹¹ Հայաստանի ազգային գրապալատ, մատենագիտություն (1920-2010), զիբբ Բ (1971-2010), Երևան, 2014, էջ 157:

պատմական տարբեր ժամանակաշրջանների պատմական այս կամ այն դեպքին անդրադարձն ու մանրամասն նկարագրությունը) ընթերցողի մոտ ստեղծում է այնպիսի տպավորություն, որ ժամանակային առումով գործողություններն ընդգրկում են ավելի լայն շրջան, քան մեկ տարին է: Եվ բացի այդ, «Килы заман» արտահայտությունը նշանակում է ծանր ժամանակներ, սովի, դժվարին շրջան¹²: Հետևաբար, մենք կառաջարկեինք ստեղծագործության վերնագրի թարգմանության «Ծանր ժամանակներ» տարբերակը, որն ամբողջությամբ արտահայտում է նաև ստեղծագործության էությունը: Կամ, օրինակ, «Զատիթափ» պատմվածքի բնագրի վերնագիրը («Шатқалаң»), шатқалаң բառի կիրառությունը դազախերենում երկինաստ է՝ բացի դժվարանցանելի վայր իմաստից ունի նաև կյանքի դժվարություններ և տառապանքներ իմաստը: Քանի որ այուժեի գործողությունները զարգանում են նոր՝ սոցիալիստական կյանքով ապրող կնոջ և նրա ամուսնու՝ նախկին բարքերի կրող, ավանդապահ Սուրգուրի կոնֆլիկտի շուրջը, և նրանց միջոցով ներկայացվում է անցյալի ու ներկայի պայքարը, կարծում ենք, որ հեղինակը նկատի է ունեցել հենց «шатқалаң» բառի փոխաբերական իմաստը՝ կյանքի դժվարությունները: Մինչդեռ հայերեն թարգմանության մեջ այս նրբությունը ևս հաշվի առնված չէ: Մյուս նկատառումը կապված է «Արծվակիր որսորդը» («Бүркітші») պատմվածքի հետ: Այս ստեղծագործության վերնագրում որոշակի քննարկման առիթ է տալիս «արծվակիր» բառը. դազախերենում «бүркітші» բառը նշանակում է արծվին վարժեցրած և նրան որսի համար օգտագործող որսորդ¹³: Մինչդեռ

արծվակիր բառը հայերենում բացատրվում է բացառապես վրան արծվի պատկեր կրող կամ արծվանշան ունեցող իմաստը¹⁴: Հետևաբար, արծվակիր որսորդ թարգմանությունը իմաստային առումով վիճելի է (ստացվում է՝ իր վրա արծվի նշան ունեցող որսորդ): Հավանաբար թարգմանության նման դժվարության են հանդիպել նաև ռուսերեն տարբերակի թարգմանիչները, ովքեր ստեղծագործությունը թարգմանել են «Охотник с беркутом» տարբերակով: Կարծում ենք, որ նշված երկու ստեղծագործությունների առավել դիպուկ վերնագրի ընտրությունը կարելի է թողնել ապագա ուսումնասիրողներին:

Ինչ վերաբերում է «Որբի բախտը» պատմվածքին, ապա ելենք, որ այուժեի գործողությունները կատարվում են մի օրվա մեջ, և այս տրամաբանությամբ է դազախերենում այն հեղինակի կողմից վերնագրվել է «Қорғаныздың күні»՝ «Անպաշտպանի օրը»: Կարծում ենք, որ ռուսերեն և համապատասխանաբար հայերեն թարգմանությունները շատ դիպուկ են արված, քանի որ նկարագրելով որբ անպաշտպանների մեկ օրը, հեղինակը կարողացել է ստեղծել նրանց ճակատագրի, ապրելակերպի ու կյանքի մնացյալ օրերի ընդհանրական պատկերը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ժողովածուում ընդգրկված վիպակների ու պատմվածքների վերնագրերի հայերեն թարգմանությունները մեծամասամբ արտահայտում են բնագրի ռճային և իմաստային առանձնահատկությունները, թեև գուրկ չեն թերություններից, որոնց մասին նշեցինք վերևում:

¹² Казакша-орысша сөздік (под. ред. Сыздыковой Р., Хусаина К.), Алматы, 2008, б. 362.

¹³ Դազախերենի մոտ մինչև հիմա էլ պահպանված է արծվին վարժեցնելու և վերջինիս որսի ժամանակ տարբեր միջոցներով օգտագործելու ավանդույթը:

Արծվի օգնությամբ կատարվող որսը պահպանվել է նաև տարբեր ազգային լեզուներում: Այն համարվում է ֆոլկլորի մի մաս:

¹⁴ Ազոյան Է., Արդի հայերեն բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 134; Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969, էջ 226:

Բոլոր ստեղծագործությունները, բացառությամբ «Գորշ արյունաբերու» պատմվածքի, գրված են քննադատական ռեալիզմի ուղղությամբ: Թեմատիկ առումով նկատենք, որ 1920-ականներին գրված ստեղծագործությունները գլխավորապես սոցիալական են. այստեղ ներկայացվում է դազախ ժողովրդի սոցիալական ծանր կյանքը, ամենօրյա տանջանքներն ու թշվառությունը, ֆեոդալական հարաբերությունների կործանարար բնույթը: Այս ամենին զուգահեռ պատկերվում է նաև, թե ինչպես են հետամնաց ավանդույթները և պահպանողանությունն անդրադառնում հասարակ ժողովրդի կյանքի վրա և խեղում երիտասարդ ճակատագրեր («Անցյալի սավերները»), և ինչպես է, այսպես կոչված, բայական համակարգը անդրադառնում հասարակ, աղքատ ժողովրդի առանձին ներկայացուցիչների հետագա կյանքի վրա («Կրակոց լեռնանցքում», «Որբի բախտը»): Ավելի ուշ՝ 1929-1935 թթ. գրված ստեղծագործությունները, թեև կրում են սոցիալական բնույթի տարրեր, սակայն այլ են իրենց ուղղվածությամբ. մասնավորապես «Գորշ արյունաբերու» (1929) և «Արծվակիր որսորդը» (1935) պատմվածքները դազախ ժողովրդի կենսակերպի և նույնիսկ ֆոլկլորի անբաժան մասը կազմող որսի պատմություններ են: Առաջինում ներկայացվում է երիտասարդ Քուրմաշի և գայլի ընկերությունը, որն ավարտվում է դժբախտությամբ. հասունանալով՝ գայլը հարձակվում և հռչակում է իրեն կերակրած ու խնամած տիրոջը: «Արծվակիր որսորդը» պատմվածքն էլ պատմում է արծվով որսի վարպետ ծերուկ Բոկբեյի պատմությունը, թե ինչպես է վերջինս կարողանում բացահայտել որսագողերին և ներկայացնում նրանց պատժի: Այս երկու ստեղծագործությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք լավագույնս ցուցադրում են, թե հեղինակը որքան խորը և համակողմանիորեն է տիրապետում սեփական ժողովրդի կենսակերպի անբաժանելի մասը համարվող

որսի արվեստին և դրա պատկերման նրբություններին: Նշենք, որ այս երկու ստեղծագործությունների հայերեն թարգմանություններում շարադրվող բնության, կենդանական աշխարհի և որսի նկարագրությունները կատարված են բացառիկ վարպետությամբ:

Թեմատիկ առումով ժողովածուում տարբեր է նաև «Դժվարին տարի» վիպակը, որը նկարագրում է 1916 թ. դեպքերը, մասնավորապես երկրի հարավում գտնվող Ասի բնակատեղում ապրող ալբան ցեղի ապստամբությունը ցարական կառավարության դեմ: Վիպակի ստեղծման պատմության մասին պահպանվել են բավական ստույգ տվյալներ, որը թույլ է տալիս խոսել նաև ստեղծագործության աղբյուրագիտական նշանակության մասին: Մտեղծագործության հայերեն թարգմանությունն աչքի է ընկնում առանձակի վարպետությամբ, հատկապես բնության նկարագրության հատվածները¹⁵:

Խոսելով ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների մասին, պետք է նշել, որ երբեմն նկատվում են թեմավոր արտահայտությունների և ասացվածքների մոտավոր, իմաստային թարգմանություններ, որից տուժում է ստեղծագործության գեղարվեստականությունը, օրինակ՝ բնագրում հանգավորմամբ հնչող «Ер арыса – арыак, атарыса – тулак»-ը հայերեն թարգմանվել է «Լղար ձին՝ ոնց որ բմբուլ քամու դեմ, երուծված ամուսինը՝ ոնց որ անմարմին ոգի» ձևով¹⁶: Կամ նույն ստեղծագործության մեջ «ամբողջ աղը նրա մեջ էր, որ...»¹⁷, որը

¹⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Խաչատրյան Շ., Մուկթար Աուեզովի «Դժվար տարիներ» վիպակի ընդհանուր առանձնահատկությունները, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջ 98-102:

¹⁶ Աուեզով Մ., Կրակոց լեռնանցքում (վիպակների և պատմվածքների ժողովածու), Երևան, 1988, էջ 185:

¹⁷ Նույն տեղում, էջ 242:

ղազախերեն արտահայտության բառացի թարգմանությունն է և հայերենում կիտոելի չէ: Իսկ, օրինակ, բնագրում հանդիպող «Кол болмай жол болмайды»¹⁸, «Бірінен кетіп, біріне жетіп ен, не таптың?»¹⁹ արտահայտություններն առհասարակ բացակայում են հայերեն թարգմանության մեջ, և դրանց իմաստն արտահայտվում է ընդհանուր տեքստի միջոցով: Կամ, մեկ այլ օրինակ «Որբի բախտը» պատմվածքից. «Өтпес жарлык—бойғақорлык» արտահայտությունը թարգմանվել է՝ պահպանելով միայն իմաստը՝ «Խնդրել մեկին մի բան, որ չի կարող անել, նույնն է, ինչ խայտառակել նրան»²⁰: Այսպիսի թարգմանությունների կողքին, սակայն, կան նաև ստացված թարգմանություններ, ինչպիսին է, օրինակ «Тышқанның өлгені—мысықтың ойнағаны»՝ «Կատվի խաղ, մկան մահ» արտահայտությունը²¹:

Ինչ վերաբերում է առանձին բառերի թարգմանությանը, նշենք, որ այստեղ ևս որոշակի նկատառումներ կան. խոսքը վերաբերում է մասնավորապես «болыс» և «атқамінер» բառերին: Հայերեն թարգմանության մեջ, ճիշտ ռուսերեն թարգմանության օրինակով, այս երկու բառերն էլ նշվում են բոլիս և ատկամիներ տարբերակներով: Մինչդեռ կարծում ենք, որ և՛ ռուսերեն, և՛ հայերեն տարբերակներում կարելի էր կատարել բառերի թարգմանություն (բոլիսը գավառակապետ կամ կառավարիչ, իսկ ատկամիները՝ շրջապատում հարզանք վայելող մարդ)՝ հաշվի առնելով, որ այս բառերը զուտ ղազախական միջավայրին հատուկ բառեր չեն և դրանց իմաստն ամբողջությամբ հասկանալի է թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում:

¹⁸ Նույն տեղում, էջ 44:
¹⁹ Նույն տեղում, էջ 47:
²⁰ Նույն տեղում, էջ 294:
²¹ Նույն տեղում, էջ 295:

Անդրադառալով թարգմանությունների գեղարվեստական կողմին, պետք է նշել, որ հայերենի ճոխությունն ամբողջությամբ թույլ է տալիս փոխանցել բնագրի ոճական առանձնահատկությունները: Ստեղծագործությունները հարուստ են գեղարվեստական պատկերման միջոցներով և առաջին հերթին մանրամասնորեն, որոնք հայերեն թարգմանության մեջ ոչնչով չեն փոքրում բնագրին: Ասվածը վերաբերում է հատկապես բնության նկարագրությանը. բերենք այդպիսի հաջողված թարգմանության մի օրինակ «Կրակոց լեռնանցքում» վիպակից. «Առջևում միայնակ երևում էր սրածայր, կարմիր, ասես արնաթաթախ, լեռը: Դրանից ախ կողմ, ասես մազերը վարազի վզին, ցից-ցից կանգնած էր փլուզներն անտառը: Հսկա թավ եղևնիները սևին էին տալիս, ասես երգեցիկ այրված. նրանց վերևում կախվել էր կաթնագույն, քրքրացող ծխագույն մշուշաքողը: Իսկ ավելի վեր, ասես արևն էր փչերը խլել, փայլում էր բոլորակ ձյունածածկ գագաթը՝ աննառչելի, պատվավոր սպիտակ յուրդը: Անհուն երկնքում ասվածնում էր արծիվը, որ հագիվ ճնճողուկի չափ էր երևում: ...Իսկ տափաստանը հառաչում էր, տնքում՝ ասես անարգված կին լինեք»²²: Կամ համեմատության օրինակներ «Որբի օրը» պատմվածքից. «Միայն արևմուտքում, ինչպես դարբնոցի քարայում, հրաշեկ հալվում էր ամպերի ծուռումուռ երկաթաշերտերը», «Իսկ երեկոներին գոլ վառարանի կողքին փնտրվեցին ցցած թռչունների անան կանայք հիշում ու ողբում էին նրան կանքը...», «Անուժ ու անխոնջ, նա գեղեցիկ էր, ինչպես ծեր անարաքար ջլապինդ ձի, որից մահն ինքն էր փախչում»²³: Գարծում ենք, որ բնության նկարագրությունների դեպքում

²² Նույն տեղում, էջ 240-242:
²³ Նույն տեղում, էջ 286, 290, 207:

թարգմանիչը կարողացել է լավագույնս փոխանցել ստեղծագործությունների գեղարվեստականությունը:

Բնագրի հետ համեմատելիս գրեթե բոլոր ստեղծագործություններում երբեմն նկատվում են շարադրանքի տարբերություններ. բնագրում նախ երկխոսություններն են, ապա տեսարանի նկարագրությունը: Հայերեն թարգմանության մեջ նախ տեսարանի և իրավիճակի նկարագրությունն է, որից հետո միայն երկխոսությունն է:

Քանի որ հայերեն թարգմանությունն արվել է ռուսերենից, իսկ ռուսերեն թարգմանության ժամանակ հաշվի է առնվել ռուսերենի գրական լեզվի որոշակի առանձնահատկություններ և հայերեն թարգմանությունն էլ, ըստ էության, կատարվել է հայերենի լեզվամտածողությանը համահունչ, այդ պատճառով բնագրի և հայերեն թարգմանության մեջ տարբերություններն ակնհայտ են. իհարկե բնագրի հետ համեմատելիս իմաստային տարբերություն չկա, սակայն նկատելի է ոճային տարբերություն, թեև տեսարանի ընդհանուր տրամադրությունը պահպանված է: Կերպարների մասով նշենք, որ միայն մեկ ստեղծագործության դեպքում է («Որբի օրը»), որ հայերեն թարգմանության մեջ պահպանված չեն երկու կերպարի՝ որբնայրի ծեր կնոջ մահացած որդու և թոռան անունները (Ժակըպ և Մուկաշ), մինչդեռ բնագրում դրանք հիշատակվում են մի քանի անգամ:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ Մուխթար Աուեզովը հայերեն ամենաշատը թարգմանված դազախ գրողներից է (եթե ոչ առաջինը), ում ստեղծագործությունները յուրօրինակ ծանոթություն էին ոչ միայն դազախ լուսավորականության առանձին ներկայացուցիչների (և առաջին հերթին Աբայ Կունանբանի), այլ նաև դազախ ժողովրդի կյանքի, ավանդույթների և պատմության հետ: Շնորհիվ այսպես կոչված «եղբայրական գրականության» տարբեր ժամանակներում կատարված

թարգմանությունների միջոցով հայ ընթերցողը հնարավորություն ունեցավ մայրենի լեզվով ճաշակելու աուեզովյան առանձին ստեղծագործությունների ողջ հմայքը: Իհարկե, հայերեն թարգմանությունները կատարվել էին միջնորդավորված՝ ռուսերենից, որի պատճառով բնագրի հետ համեմատելիս նկատելի են որոշակի թերացումներ և շեղումներ: Խոսքը վերաբերում է առաջին հերթին ստեղծագործությունների վերնագրերին և առանձին հատվածներին, որոնց անդրադարձ կատարեցինք վերևում: Սակայն սա բնավ չի նսեմացնում թարգմանիչների կատարած աշխատանքը, ովքեր կարողացել են հայ ընթերցողին լավագույնս ներկայացնել դազախ գրականության առանձին ստեղծագործություններ:

АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ ПРОИЗВЕДЕНИЙ МУХТАРА АУЭЗОВА

Хачатрян Шушан
(Резюме)

Материалом исследования послужили авторские работы Мухтара Ауэзова на казахском и армянском языках, для анализа которых нами был выбран сравнительный метод. К сожалению, все вышеназванные произведения, а также самый известный роман Мухтара Ауэзова «Абай» переводились на армянский язык с русского языка, то есть опосредованно, в результате чего в армянских переводах намечаются неточности, несоответствия оригиналу, иногда – буквальный перевод с русского. Однако для справедливости стоит подчеркнуть, что, несмотря на наличие определенных недостатков, армянские переводы (в частности, описание природы) были сделаны с высоким мастерством: сохранились характерные особенности стиля и языка оригинала, текст обогатился выражениями, свойственными армянскому языку.

ARMENIAN TRANSLATIONS OF THE WORKS BY
MUKHTAR AUEZOV

Khachatryan Shushan
(Summary)

This article analyzes the Armenian translation of the short stories from the book of “Karash-Karash Okhiasy” authored by Mukhtar Auezov. It must be noted that due to the so-called “brotherly literature” concept prominent during the Soviet era, the Armenian reader gets to be acquainted with not only Auezov’s, but other Kazakh authors’ works as well. The study is based on the author’s works in Kazakh and in Armenian, using a comparative method. Unfortunately, the Armenian versions of the short stories of “Karash-Karash Okhiasy”, which is the subject of this study, as well as the “Abay” novel, were translated from Russian, which has influenced the quality of the novel and the short stories. As a result, some discrepancies in the Armenian version are noticeable, such as literal translations or deviation from the original. However, it’s also worth highlighting, that along with the stated shortcomings, the Armenian translations are done masterfully, preserving the language and the specificity of the original, while adding expressions typical to the Armenian language.

Մովսիսյան Լիլիթ*

ԱՐԴԻ ՀԱՅ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԼԵԶՎԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՉՈՒԳԱՂԲԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ հայերեն, աղբբեջաներեն, մամուլ, լրատվամիջոց, բառապաշար, փոխառություն, նորաբանություն, նորակազմություն, հրապարակում, հնաբանություն, տերմին, բառակազմություն

Զանգվածային լրատվամիջոցներում և հատկապես մամուլում արտացոլվում են լեզվի արդի վիճակը, նրա փոփոխությունների ընթացքը, զարգացումը: Զարգացման այդ ընթացումը գործընթացը Ուրալում է բառապաշարի հարստացումով, բառապաշարի իմաստաբանական զարգացումով և բառապաշարի կատարելագործումով¹: Փորձենք ուրվագծեր անցկացնել ժամանակակից հայ և աղբբեջանական մամուլի բառապաշարների միջև պատմական զարգացման համատեքստում: Հանուն արդարության փաստենք, որ համեմատության եզրերը սահմանափակ են, թեկուզ միայն հաշվի առնելով հայկական տպագիր մամուլի՝ ավելի քան երեքհարյուրամյա հարուստ պատմություն ունեցող անցյալն ու լավագույն ավանդույթները:

Ընդունված է տարբերակել կամ առանձնացնել լեզվի գործառնական ոճերի հետևյալ խմբերը՝ գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական և

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., էլ. փոստ՝ lilit-movsisyan@ysu.am

¹ Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 167-168:

զանգվածային: Գործառնական ոճերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, իրեն հատուկ խոսքային կառույցները, լեզվական միջոցների գործածության յուրահատուկ համակարգն ու հաճախականությունը²: Հրապարակախոսական ոճում հավասարապես գործում են դրա երեք հիմնական տարրերը՝ տեղեկատվությունը, քարոզչությունը և գնահատողական վերաբերմունքը: Լեզվաբան ոճագետների մեծ մասը հրապարակախոսական ոճն առանձնացնում է որպես գրական լեզվի տարրերակ³:

Աղբրեջանական մամուլի պատմությունը սկիզբ է առնում միայն XIX դարի երկրորդ կեսին, երբ մի շարք աղբրեջանցի գործիչներ սկսեցին մտածել ներկայիս Աղբրեջանի տարածքում լուսավորության գաղափարներ տարածելու մասին: Հ. Ջարդաբին⁴ և իր համախոհներն իրենց առջև նպատակ էին դրել Ոստիկանացի ժողովրդին դուրս բերել հետամնաց վիճակից, միաժամանակ տարածել ժամանակակից արժեքներ ու գաղափարներ⁵: Աղբրեջանական մամուլի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի երգիծական «Մոլլա Նասրեդդին» (աղբր.՝ Molla Nəsrəddin, խմբագիր՝ Ջ. Մամեդովուզադե, հիմնվել է Թիֆլիսում 1906 թ.)⁶ամսագիրը: Աղբրեջանական մամուլը շատ ավելի կազմակերպված և հարուստ էր խորհրդային շրջանում, երբ Աղբրեջանում լույս էին տեսնում բազմաթիվ և բազմապիսի պարբերականներ:

² Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 28:

³ Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000, էջ 131:

⁴ Ծնթ. Շնորհալուսի է աղբրեջանական մամուլի պատմությունը բաժանել երեք փուլի. առաջինը սկսվում է 1875 թ. հուլիսի 22-ին Ռեզիմ (Ուլարոդ, հողագործ) թերթի հիմնադրումից և ավարտվում 1920 թ., երկրորդն իր ժամանակագրությամբ համընկնում է խորհրդային շրջանի հետ, իսկ երրորդ փուլը սկսվում է Աղբրեջանի անկախացումից և շարունակվում մինչև մեր օրերը:

⁵ Zərdabi H., Seçilmiş əsərləri, Bakı, 1960, s. 59.

⁶ Məmmədli Q., Molla Nəsrəddin həyat və yaradıcılığının salnaməsi, Bakı, 1966, s. 214.

1920-1930-ական թվականներին սկսվում է ռուսերեն բառերի ավելի մեծ ներհոսք դեպի աղբրեջաներենի բառապաշարի տարբեր շերտեր, որոնք նախ և առաջ տեղ էին գտնում մամուլի էջերում՝ bolševik-բոլշևիկ, bolševizm-բոլշևիզմ, konstruksiya-կառուցում, kooperasiya-կոոպերացիա, pioner-պիոներ, sovet-խորհրդային, social-սոցիալական, sosializm-սոցիալիզմ, revolyusiya-հեղափոխություն, ekonomika-տնտեսություն, injener-հարտարագետ և այլն: Նշված ժամանակահատվածում ռուսերեն բառերի ներհոսք նկատվում էր բոլոր միութենական հանրապետությունների լեզուներում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանի մամուլի լեզվում: Վերոնշյալ ռուսերեն փոխառություններով հարուստ էր նաև ժամանակի հայկական մամուլի լեզուն:

Հայրենական պատերազմի տարիներին ոչ միայն հայերենում և աղբրեջաներենում, այլև ԽՍՀՄ մյուս ժողովուրդների լեզուներում ավելանում են ռազմական տերմինները և բառակապակցությունները. օրինակ՝ ռազմաճակատ (աղբր.՝ cəbhə), ռազմական (աղբր.՝ hərbi, հրաձիգ (աղբր.՝ atıcı), դիվիզիա (աղբր.՝ diviziya), ռազմաճակատի գիծ (աղբր.՝ cəbhə xətti), ռազմական պարետ (աղբր.՝ hərbi komendant), ռազմական պատվերներ (աղբր.՝ hərbi sifarişlər), զորաջոկատ (աղբր.՝ qoşun dəstəsi), ռազմական պահեստ (աղբր.՝ hərbi anbar), հրաձգային դիվիզիա (աղբր.՝ atıcı diviziya), մարտնչող բանակ (աղբր.՝ döyüşən ordu) և այլն:

Նոր բառակապակցությունները կիրառության մեջ են մտնում նաև հասարակական հարաբերությունների այլ ոլորտներում. օրինակ՝ աշնանացան (աղբր.՝ payızlıq əkini), ամենօրյա հանձնարարություն (աղբր.՝ gündəlik tapşırıq), պահուստային

աշխատուժ (աղբբ.՝ ehtiyat əmək qüvvələri), տրակտորի բրիգադ (աղբբ.՝ traktor briqadası), երիտասարդական բրիգադներ (աղբբ.՝ gənclər briqadaları), բնակարանաշինություն (աղբբ.՝ mənzil tikintisi), արդյունաբերական հիմնարկ (աղբբ.՝ sənaye müəssisəsi), արտադրական ուժ (աղբբ.՝ istehsal gücü) և այլն: Հայերենում, ի տարբերություն աղբբեջաներենի, ավելի մեծաթիվ են բառապատճենման միջոցով ստեղծված նորաբանությունները, աղբբեջաներենում գերակշռում են փոխառությունները: Որպես բառակազմության հիմնական միջոց համարվել է ձևաբանականը:

Խորհրդային շրջանում հայերեն և աղբբեջաներեն լեզուներ մուտք են գործել նաև գիտատեխնիկական մեծաբանակ տերմիններ և բառակազմակերպություններ՝ հեռագրային ազդանշաններ (աղբբ.՝ telegraf signalları), հեռաչափիչ սարք (աղբբ.՝ telemetrik aparat), թռչող սարքեր (աղբբ.՝ uçuş aparatları), մանևրող տիեզերանավ (աղբբ.՝ manevrli kosmik gəmi), միջմոլորակային կայան (աղբբ.՝ planetlararası stansiya), միջմայրցամաքային հրթիռ (աղբբ.՝ global raket) և այլն: Այս և նմանատիպ բազմաթիվ այլ բառեր մինչ օրս գործածվում են, սակայն ժամանակին հայերենում ավելի շատ գործածվում էին ռուսերեն տարբերակները, մինչդեռ ԽՍՀՄ փլուզումից հետո նախապատվությունը տալիս ենք դրանց առկա հայերեն համարժեքներին:

Մամուլի բառապաշարում, ըստ էության, գերիշխողը հասարակական-քաղաքականն է: Թե՛ խորհրդահայ և թե՛ մերօրյա մամուլը պարզապես հեղեղված է հրապարակախոսության լեզվին բնորոշ գնահատողական երանգավորում ունեցող բառերով: Բոլոր այն բառերը, որոնք առնչվել են խորհրդային ապրելակերպին, իրականությանը, ունեցել են ընդգծված դրական երանգավորում, ինչպես, ասենք, պիոներ, ազատություն, հոկտեմբերիկ, կոմունիստ, հավասարություն, բոլշևիկ, բանվոր, դասակարգ, լենինյան, աշխատավոր, կարմիրբանակային, սոցիալիզմ,

կոմունիզմ, կուսակցական, եղբայրություն և հազարավոր այլ բառեր և կազմել են խորհրդահայ և խորհրդային աղբբեջանական մամուլի լեզվի անբաժանելի մասը: Հասարակական և քաղաքական կարգի փոփոխությունների, նշանակալի անդաշարժերի, տնտեսական հարաբերությունների շրջադարձերի արդյունքում նմանատիպ բառերը կորցրել են իրենց դրական երանգավորորումը, և դրանցից շատերն այսօր ստացել են այլ երանգավորում: Ամեն դեպքում, խորհրդային իրականությանն առնչվող իրողություններն արտահայտող բառերն ու արտահայտությունները մեծ մասամբ անցել են նեոբանությունների շարքը:

XX դարի վերջին և XXI դարի սկզբին ընթացող գործընթացների արդյունքում աղբբեջաներեն են ներմուծվել մեծ քանակությամբ նոր տերմիններ: Այդ գործընթացները հանգեցրել են հետևյալին. ա) օտար լեզուներից աղբբեջաներեն է ներթափանցում տերմինների մեծ հոսք, բ) լեզվի քերականական կանոնները կոպտորեն խախտվում են, գ) հաճախ առօրյա լեզվում՝ հատկապես էլեկտրոնային լրատվամիջոցներում, կիրառվում են բուրբերեն բառեր և արտահայտություններ, դ) գովազդային ցուցանակներում, վահանակներում հաճախ կարելի է հանդիպել օտար բառերի, ե) բազմաթիվ ռուսերեն բառեր, որոնք առօրյա խոսակցական բառապաշարի անքակտելի մասն էին, սկսում են աստիճանաբար փոխարինվել դրանց աղբբեջաներեն համարժեքներով:

XX դարի 80-ական թթ. վերջին և 90-ական թթ. սկզբին՝ ԽՍՀՄ փլուզման և նախկին միութենական հանրապետությունների անկախացման ժամանակաշրջանում հայ հրապարակախոսության լեզվում սկսվեցին նկատելի

տեղաշարժեր: Ազգային զարթոնքն իր հետքը թողեց հասարակական գիտակցության և հետևաբար՝ լեզվամտածողության և բառապաշարի վրա: Հայաստանի անկախացումից հետո մամուլի լեզվում որոշ լեզվական գործընթացներ նման էին ադրբեջաներենում ընթացող փոփոխություններին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու երկրները, միաժամանակ դուրս գալով ԽՍՀՄ կազմից, բռնում են զարգացման նոր, ինքնուրույն ուղի:

Վերջինս իր ազդեցությունն է թողնում լրատվամիջոցների լեզվի բառապաշարի զարգացման ընթացքի վրա: Վերջին երկուերեք տասնամյակում երկու լեզվի բառապաշար անցած հասարակական-քաղաքական ոճի բառերից առանձնացնենք մի քանիսը, որոնք գործածվում են ժամանակակից մամուլում. երդմնակալություն (ադրբ.՝ inauqurasiya) հասցեատեր, պատասխանող կողմ (ադրբ.՝ respondent), աշխարհաքաղաքական (ադրբ.՝ geopolitik), կաշառք, կոռուպցիա (ադրբ.՝ korrupsiya), նախադեպ (ադրբ.՝ presedent), բողոքի ցույց (ադրբ.՝ piket), գործող անձ (ադրբ.՝ funksioner), գաղտնի (ադրբ.՝ konfidensial), բախումնաբան (ադրբ.՝ konfliktoloq), փլուզում (ադրբ.՝ kollaps), ճեպագրույց (ադրբ.՝ brifinq) և այլն:

Նորաբանություններով հարուստ է թե՛ հայ և թե՛ ադրբեջանական մամուլի լեզուն, սակայն, ի տարբերություն ադրբեջաներենի, հայերենում որպես նորաբանությունների ստեղծման հիմնական միջոց ծառայում են բառակազմական գործող կաղապարները: Ադրբեջաներենում գերակշռում են փոխառյալ նորաբանությունները: Ադրբեջանցի լեզվաբանները փորձում են դրանք փոխարինել ադրբեջաներեն համարժեքներով, սակայն շատ հաճախ բախվում են իրենց լեզվի սահմանափակ հնարավորություններին: Արդյունքում երբեմն ստացվում են արհեստական բառեր, որոնք չեն դառնում գործածական:

Լեզվի բառապաշարի հարստացումն ու զարգացումը, *անդուշտ*, կանգ չի առնում, բայց այդ գործընթացի վրա որոշակի ազդեցություն է ունենում ժամանակի իշխող մտայնությունը՝ խոչընդոտելով կամ արագացնելով այդ ընթացքը⁷: Նորակազմ բառերի կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ *ցույց* մեջ կան ժամանակակից հայերենի բառակազմության *զեմբե* բոլոր տիպերը՝ բարդությունն իր տարբեր ներատեսակներով, ածանցումն իր կաղապարային տարբեր *ցույցորումներով*⁸ (անդրազգային, հայակենտրոն, *զեբբաղաքականացում*, գիտաօժանդակ, ուսումնա-*ռազմավարական*, լեզվաքաղաքականություն, իշխանատենչ, *ենկեղեցասիրություն*, անկախամետ, վազբուդի, քարոզչաբանակ, *ընտրախախտում*, ջրագողություն, ճեպագրույց, քրեածին և այլն): Եթե հայերենում վերոնշյալ նորաբանությունները ստեղծվում են *հիմնականում* բառաբարդման միջոցով, ապա ադրբեջաներենում *եման* նորաբանությունները կազմվում են գոյականների *կապակցության* երկրորդ ձևի միջոցով, որը թույլ է տալիս *կապակցել* երկու և ավելի գոյական ու ստանալ նոր բառակապակցություններ:

Մերօրյա հայ մամուլում կարելի է հանդիպել ն՝ *նախածանցավոր*, ն՝ *վերջածանցավոր* կազմությունների: Արդյունավետ նախածանցներից առանձնացնենք *ան-*, *սպ-*, *անդր-*, *արտ-*, *զեր-*, *ներ-*, *հակ-*, *վեր-*, *առ-* նախածանցները՝ ապակառուցողական, ներկուալիցիոն, առաջնածին, անդրազգային,

⁷ Մարության Ա., Բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցի շուրջ // Միատմա-բանասիրական հանդես, Երևան, 1997, թիվ 2, էջ 112:

⁸ Սողոմոնյան Ս., Մամուլի բառապաշարի հարստացումը ածանցավոր նորակազմություններով // ՈՒՆԲԵՐ Երևանի համալսարանի. Հայագիտություն, Երևան, 2016, թիվ 2, էջ 68:

արտադասարանական, գերավճար, հակակոռուպցիոն, հակաադանդավորական, հակաահաբեկչական, ներկառուցված և այլն: Գործուն վերջածանցներից առանձնացնենք՝ -ական, -ային, -անք, -որեն, -ություն, -ույթ, -ում, -ոտ, -որդ, -իչ. օրինակ՝ համացանցային, քրեորեն, դրամահավաքություն, ռադիոձածկույթ, ականազերծում, դիտորդ, ջրաբաշխիչ, պիտականշում, դրոշմագրում և այլն: Մեջբերում մամուլից. *Հովհաննիսյանը անդրադառնալով դպրոցներում դրամահավաքության խնդրին նշեց, որ հուրախություն բուռնի, այս տարի դրանց ահազանգերի թիվը քիչ է⁹: Ադրբեջանում իշխանության հակակոռուպցիոն քաղաքականությունը նոր և ավելի հզոր կաշառակերության աղբյուրի է վերածվել¹⁰:*

Լրագրության մեջ ամենաշատ կիրառվող տեղեկատվություն հաղորդող բառերից բացի, մամուլում, այդ թվում՝ հայ մամուլում, շատ են հատուկ անունները, անձնանունները, տեղանունները, պետությունների և միջազգային, քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների անվանումները և այլն (Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ադրբեջան, Թուրքիա, Միրիա, Ֆրանսիա, Եվրոպա, Երևան, Ստեփանակերտ, Սյունիք, Տավուշ, ՄԱԿ, ԵԱՀԿ, Մինսկի խումբ, ԵԱՏՄ, ՀՀԿ, ՌԻԱ նովոստի, Ռոյթերս և այլն): Երբեմն տեղանունների ածականացմամբ ստեղծվում են քիվեթյան, լիսաբոնյան, սանկտպետերբուրգյան, փարիզյան, նյույորքյան, վաշինգտոնյան և այլ նմանատիպ նորակազմություններ: Օրինակ՝

«Նշյալն է գնահատում փարիզյան հանդիպումը և այն ինչպիսի՞ ազդեցություն կունենա բանակցային գործընթացի վրա»¹¹:

Անդրադառնալով հայ մամուլում փոխառյալ բառերի գործածությանը՝ փաստենք, որ բազմաթիվ օտար բառերի փոխարեն գործածության մեջ են մտել մայրենիի բառերը, որոնցից շատերն այսօր համընդհանուր գործածություն են ստացել. ինտերնետ-համացանց, դիսկ-սկավառակ, գլոբալիզացիա-համաշխարհայնացում, զրանտ-դրամաշնորհ, էլիտա-ընտրանի, մետալիտետ-մտածելակերպ, տերմին-եզր, եզրույթ-բառեզր, ռեյտինգ-վարկանիշ, գեոպոլիտիկ-աշխարհաքաղաքական, ժայռուզի-շերտավարագույր, բրիֆինգ-ճեպագրույց, բիզնեսմեն-գործարար, լեզիտիմ-օրինական, էլեկտրատ-ընտրագանգված, դեկլարացիա-հոչակագիր, պրինտեր-տպիչ, քսերոքս-պատճենահանում, ինֆորմացիոն-տեղեկատվական, էքսպերտ-փորձագետ, կոմպյուտեր-համակարգիչ և այլն: Նույնը չենք կարող ասել ադրբեջաներենի մասին, որտեղ կիրառվում են հիմնականում հետևյալ փոխառյալ բառերը՝ internet-համացանց, sayt-կայք, disk-սկավառակ, grant-դրամաշնորհ, amnistiya-համաներում, alternativ-այլընտրանք, jalyuzi-շերտավարագույր, snayper-դիպուկահար, elita-վերնախավ, demokratiya-ժողովրդավարություն, mentalitet-մտածելակերպ, reytng-վարկանիշ, geopolitika-աշխարհաքաղաքականություն, printer-տպիչ, legitim-օրինական, brifing-ճեպագրույց, ekspert-փորձագետ, kompüter-համակարգիչ, dividnt-շահաբաժին, globalizasiya-համաշխարհայնացում, informasiya-տեղեկություն և այլն:

⁹ Դպրոցներում դրամահավաքության հետ կապված ահազանգերը պարզաբանվել են, 2016 // <http://henaran.am/204394.html>

¹⁰ «Ենի Մուսավաթ». «Հակակոռուպցիոն շռուի ստեղծած կոռուպցիան», 2011 // <http://www.panorama.am/am/news/2011/11/15/azerbayjan-corruption/856032>

¹¹ ԼՂ հարցով փարիզյան հանդիպում և քաղաքագետների գնահատականներ, 2014 // <http://armtimes.com/hy/article/55580>

Փաստենք, որ հայ մամուլում ևս երբեմն չեն խուսափում կիրառել օտար բառեր, որոնց մի մասի հայերեն համարժեք բառերը գոյություն ունեն ժամանակակից հայերենում: Դրանցից առանձնացնենք՝ բիզնես, ինտերնետ, ռեզյումե, ռենտգեն, օկուպացիա, ֆորմատ, տեռոր, մենթալիտետ, օրիգինալ, մոնիթորինգ/մոնիթորինգ, կոռումպացվածություն, էլիտա, ստրատեգիական բառերը և այլն: Օտարաբանություններն օտար լեզուներից վերցված այն բառերն են, որոնց հայերեն համարժեքը կա, լեզվակիրների մեծ մասն այդ համարժեքները գիտի, սակայն այս կամ այն պատճառով շարունակում են գործածել օտար բառը: Հատկապես շատ են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով վերցրած բառերը, իսկ վերջին տարիներին ավելացել են նաև անգլերեն բառերը¹²:

Դիտարկենք մոնիթորինգ բառի գործածությունը, որն ունի և՛ ստուգում, և՛ դիտարկում իմաստը: Մերօրյա մամուլում այն փոխարինվում է դիտարկում կամ մշտադիտարկում համարժեքով և գործածվում է տարբեր ոլորտներին առնչվող հրապարակումներում (ֆինանսական շուկա, մարդու իրավունքներ, ռազմական ոլորտ, լրատվամիջոցներ և այլն): Թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի լրահոսում մեծաքանակ են արցախյան հակամարտության թեմային վերաբերող բառերն ու բառակապակցությունները: Արցախյան թեմայով հրապարակումները, բնականաբար, հազեցած են նաև ռազմական տերմիններով. օրինակ՝ «Հուսով ենք՝ կողմերը կհարգեն հրադադարի ռեժիմի պահպանումը առաջիկա տոների,

հրապարակված արարողությունների և տարածաշրջանում միջազգային միջոցառումների ընթացքում»¹³:

Թեմային առնչվող ընդհանուր քաղաքական-հասարակական պրոպագանդային գործունեությունները ևս ծանրակշիռ տեղ ունեն՝ կարգավիճակ, ինքնորոշում, հանրաքվե, փուլային տարբերակ, փաթեթային տարբերակ, փոխզիջում, ազատագրված տարածքներ, տարածքների վերադարձ, տարածքների վերաբնակեցում, ռազմական հոետորաբանություն, սպառնալիքներ (հետադարձություն), ստատուս-քվո, պատերազմի վերսկում, համաձայնագրեր, համանախագահներ, սառեցված հակամարտություն, միջազգային հանրություն, բանակցային գործընթաց և այլն:

Հայ և ադրբեջանական մամուլում հաճախ անդրադարձ կատարվող թեմաներից են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գործունեության հետ կապված իրադարձությունները: Ընդ որում, երկու լեզվում համանախագահ բառը նորաբանություն է, սակայն հայերենում երբեմն գործածվում է եռանախագահ տերմինը: Օրինակ՝ ՈՏ. Բալայանը տեղեկացրել է, որ Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների և եռանախագահների փարիզյան վերջին հանդիպմանը որևէ առաջարկ ադրբեջանական կողմը չի արել¹⁴: Ադրբեջաներենում գործածվում է həmsədr-համանախագահ տարբերակը. Օրինակ՝ «ATƏT-in Minsk Qrupunun həmsədrləri və ATƏT-in fəaliyyətə olan sədrinin şəxsi nümayəndəsi bölgəyə səfərlərinin yekunlarına dair

¹² Քամայան Ա., Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, (տարբերակման փորձ)//Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Երևան, 2015, թիվ 2, էջ 66:

¹³ Գրիգորյան Հ., Ուորլիքն ակնկալում է հրադադարի պահպանում հիշատակի օրերի և տոների ընթացքում, 2015 // <http://www.azatutyun.am/a/26942703.html>

¹⁴ Բալայան Ս., Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների և եռանախագահների փարիզյան հանդիպմանն Ադրբեջանը որևէ առաջարկ չի արել, 2013 // <http://www.times.am/?p=18030&l=am>

bəyanatla çixış ediblər»¹⁵ («ԵԱՀԿ Մինսկ խմբի համանախագահները և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը տարածաշրջան իրենց այցի արդյունքների վերաբերյալ հանդես են եկել հայտարարությամբ»):

Այսպիսով, մամուլի լեզուն, հազեցած լինելով հասարակական-քաղաքական գնահատողական բառերով, ժամանակի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող զարգացումների և տեղաշարժերի արտացոլանքն է: Խորհրդային շրջանի մամուլը (այդ թվում՝ հայ և ադրբեջանական մամուլը) արտացոլում է Խորհրդային Միության տարբեր հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային իրողությունները, որոնք ընդհանուր առմամբ բնութագրում են խորհրդային իրականությունը տվյալ ժամանակաշրջանում:

ԽՍՀՄ մաս կազմող հանրապետությունների անկախացումից հետո պատկերը սկսում է փոխվել: Հայերենը՝ իր հերթին, ադրբեջաներենը՝ իր, բռնում են զարգացման առանձին, ինքնուրույն ուղիներ, որի արդյունքում լեզուների ժամանակակից գործուն բառապաշարային պատկերը սկսում է աստիճանաբար փոխվել: Հնացած ռուսական փոխառություններն աստիճանաբար դուրս են մղվում, փոխարենը ստեղծվում են նոր բառեր, և մուտք են գործում նոր փոխառություններ՝ այս անգամ նախապատվությունը տալով ոչ թե ռուսերենին, այլ արևմտաեվրոպական լեզուներին: Հայերենում մեծ թիվ են կազմում նորակազմ բառերը, որոնք փոխարինելու են գալիս փոխառյալ օտար բառերին, մինչդեռ ադրբեջաներենում էականորեն փոխառյալ բառերը գերակշռում են լեզվի ներքին հնարավորություններով ստեղծված բառերին: Որպես

ադրբեջաներենի փոխառության նոր աղբյուր, սկսում է ծառայել բառերենը:

СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ ЛЕКСИКИ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ И АЗЕРБАЙДЖАНСКОЙ ПРЕССЫ

Мовсисян Лилит
(Резюме)

В статье сделана попытка представить сравнительную общую лексикографическую картину СМИ современного армянского и азербайджанского языков. Главная научная проблема исследования состоит в том, что у армянской прессы многовековая история и богатый путь, а история азербайджанской прессы берет свое начало только в 19-м веке. Тем не менее, Армения и Азербайджан были союзными республиками, до этого входили в состав царской России, поэтому у народов есть сходства исторического развития. Во-первых, речь идет о наличии в лексике двух языков многих заимствований из русского языка. После распада СССР пути развития публицизма Армении и Азербайджана разошлись. Армянский язык постепенно избавился от многих иностранных слов, заменивших армянскими эквивалентами. В азербайджанском языке также наметились схожие процессы, но по сравнению с армянским языком, неологизмы азербайджанского языка значительно уступают и количественно, и качественно. На данном историческом этапе изменились и источники заимствований – с русского языка перешли в основном на западноевропейские языки, а для азербайджанского источником заимствований стал еще и турецкий язык.

¹⁵ ATƏT-in Minsk Qrupunun həmsədrləri bəyanatla çixış ediblər, 2017 // <http://www.azadliq.org/a/24781215.html>

**COMPARATIVE ANALYSES OF LEXICS OF MODERN
ARMENIAN AND AZERBAIJANI PRESS LANGUAGES**

Movsisyan Lilit
(Summary)

In the article it is attempted to present the general vocabulary picture of the Armenian and Azerbaijani modern press language by a comparative, compatible method. The complexity of the study first of all is that the armenian press has a rich history, past multifaceted path, whereas the azerbaijani press history began in the late of 19th century. However, taking into consideration the fact that Armenia and Azerbaijan were in the USSR as union states, and in the Russian Empire before, that period of the both nations' history had certain common things. As a result, the development of the press of both countries had features commonality. It is firstly about the richness of Russian language borrowings in the vocabulary of the press language. After the collapse of the USSR, the Armenian and Azerbaijani publicity took individual, separate ways of development. The Armenian language got gradually cleared of many foreign words from the Soviet period, replacing them with Armenian equivalents. The same process began in the Azerbaijani language but with a significant difference: the words created with the language's own possibilities are substantially subtracted from the loan words by their quantity and quality. At this stage, the source of the loan words changed, west European languages came to replace the Russian, and in the case of the Azerbaijani language Turkish as well.

*Хабидуллина Элмира**

**ЛИНГВИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ
ПЕРЕВОДОВ ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЫ С
ТАТАРСКОГО ЯЗЫКА НА ТУРЕЦКИЙ**

Ключевые слова: лингвистика, язык, перевод художественной литературы, переводческие трансформации, турецкий язык, татарский язык

Данная работа отражает особенности трансформации фразеологических единиц при переводе художественных произведений с татарского языка на турецкий. Художественная литература является богатым источником устойчивых языковых единиц, в том числе и фразеологических оборотов. Особенности их передачи при переводе даже с одного родственного языка на другой представляются актуальными. Часто именно схожесть языков порождают переводческие ошибки. Отдельные фразеологические единицы характерны только для конкретного языка и не имеют эквивалентов в другом. В работе также исследуются аспекты трансформации подобных примеров.

Перевод представляет собой сложную деятельность, даже скорее это творение, идентичное поэзии и прозе. Говоря о художественном переводе, важно отметить и то, что он самый сложный из всех литературных жанров. Художественный перевод является трансформацией на родном языке мысли, рожденной некогда на чужом языке. Перевод – это завоевание, и не только, это великое достижение, которое обогащает многоликий мир мыслей и чувств. Другой характерной особенностью художественного перевода является то, что она представляет собой неотъемлемую часть

* к.ф.н., доцент, Казанский (Приволжский) федеральный университет (Татарстан, Российская Федерация), E-mail: minabova@mail.com

духовной культуры любого народа и всего человечества. Перевод – это, прежде всего, результат языковой деятельности, и основой его является язык. Язык – фундамент и основное средство перевода. Именно поэтому перевод невозможно понять, а тем более оценить и исследовать его научную значимость, без его языковой сущности, лингвистической основы. Перевод транслируется посредством языка, и орудием переводчика также является язык. Перевод не будет иметь ценности, если в нем не будет в полной мере транслирован и отражен оригинал, так как он является лишь отражением оригинала. Чем вернее, чем целостнее это отражение, тем выше качество перевода. Согласно А.Поповичу, перевод должен не только отразить, но и пересоздать оригинал, не «скопировать» его содержание и форму, а воссоздать их средствами другого языка для другого читателя, находящегося в условиях другой культуры, эпохи, общества. Перевод не может быть понят, если не будет раскрыта его психология¹.

Когда речь идет о художественном переводе, имеют место особые правила аналогий и эквивалентности оригиналу. Язык перевода стремится к сближению с языком подлинника. Это, в первую очередь, связано с тем, что художественный перевод сотворен переводчиком и соткан из собственного языкового материала. После перевода произведение начинает жить своей новой жизнью в отличной от оригинала языковой, литературной и социальной среде. Художественный перевод отталкивается от подлинника, однако в то же время начинает обладать относительной самостоятельностью, становясь своего рода фактом языка перевода. Также необходимо помнить, что восприятие одного и того же произведения на разных языках будет отличаться. На относительную эквивалентность художественного перевода подлиннику влияет и то, как был воспринят текст самим переводчиком, а также отличия в лексической и грамматической структуре языка, различия в социально-культурной среде. Индивидуальные стилистические особенности, присущие лично

переводчику, или, по-иному, элементы переводческого стиля, тем или иным образом влияют на стиль перевода.

В процессе перевода переводчик, оказываясь лицом к лицу с областью расхождения, или областью межъязыковых контрастов, для перекодирования содержания с исходного языка на другой использует интерференцию. При переводе переводчик задается целью адекватно передать содержащуюся в исходном тексте информацию, при этом он должен осуществлять языковые трансформации таким образом, чтобы при максимальном сохранении информации текст отвечал нормам языка, на который он переводится. Основные принципы перевода для всех языков и для всех видов переводимого материала едины: они строятся на требованиях наиболее полного выражения единства содержания и формы оригинала².

При анализе переводческих трансформаций особый интерес представляет перевод фразеологических единиц. Это связано прежде всего и с тем, что перевод фразеологических единиц связан со значительными трудностями, даже на уровне родственных языков. Поэтому очень важно, чтобы исполнитель перевода хорошо знал основные типы фразеологических соответствий и способы их применения. Особенности и методы использования фразеологических соответствий во многом определяются свойствами семантики фразеологических единиц. Семантика устойчивых единиц представляет собой сложный информативный комплекс, который содержит как предметно-логические, так и коннотативные компоненты.

Одним из самых распространенных видов трансформаций при переводе фразеологических единиц выступают фразеологические кальки. Фразеологические кальки представляют собой буквальный перевод иноязычного оборота по частям и являются самой многочисленной группой среди других видов калькирования. При

² Юсупов Р., Вопросы перевода, сопоставительной типологии и культуры речи, Казань, 2005, с. 7.

¹ Попович А., Проблемы художественного перевода, Москва, 1980, с. 15.

переводе крылатых слов, идиом и фразеологических единиц основная сложность заключается в передаче образности. Когда речь идет о фразеологических кальках, т.е. дословном переводе фразеологизмов с татарского на турецкий язык, необходимо подчеркнуть, что данный прием обуславливается наличием общих черт у турок и татар в мировоззрении и принципах отображения реальности. Иногда достаточно сложно определить в каком языке изначально появился тот или иной фразеологический оборот. Вполне возможно, что он появился в обоих языках параллельно или зародился на основе существующих в татарском языке посредством калькирования.

Фразеологические обороты в художественном произведении представляют собой изобразительные средства, образы. Если в процессе выполнения перевода переводчик будет прибегать лишь к передаче содержания этих изобразительных средств или заменит их при наличии равноценными эквивалентами в турецком языке, то образы подлинника растворятся и исчезнут, а сам подлинник потеряет колоритность содержания. Поэтому можно утверждать, что дословный перевод отдельных фразеологизмов и устойчивых оборотов татарского языка вполне оправдывает себя, так как образы и изобразительные средства в переведенном тексте стали понятными для турецкого читателя и сохранили свои эмоциональность и колорит.

Однако следует помнить о том, что дословный перевод фразеологических единиц, говоря по-другому, их калькирование, может применяться лишь в тех случаях, когда в результате могут получиться выражения, образность которого может легко и правильно восприниматься читателем и при этом не создается впечатления неадекватности общепринятым языковым нормам языка перевода.

Мы рассмотрели переводы на турецкий язык некоторые рассказы и повести татарских писателей. Анализ языка переводов также показал, что наиболее широко представлены фразеологические кальки. Рассмотрим один из выявленных примеров.

• *Илдә чыпчык үлми дигәндәй, безнең Бәдретдин дә, бик кызыгып, ачка киселеп булса да, укуын энә шулай алып бара иде³ / *Ölkedeki serçe ölmez hesabı, bizim Bedrettin de çok sıkıntı çekip yarı aç gözde de işte bu şekilde tahsilini devam ettiriyordu⁴ / (Как говорится: «воробей по миру не пойдет», так и наш Бадретдин с трудом и в слезах продолжал свое образование).**

В приведенном выше примере пословица «*илдә чыпчык үлми*» приняла свою трансформацию в форме фразеологической кальки «*ölkedeki serçe ölmez*». Интересно в этом примере и то, что художественное средство в тексте, представленное пословицей «*илдә чыпчык үлми*», переведено дословно, однако яркость, образность и эмоциональная окраска от этого не стала меньше. Данный оборот не имеет своей идентичного эквивалента в турецком языке, и поэтому мы можем говорить о приеме калькирования.

В образовании подобных калькированных фразеологизмов, скорее всего, вновь сказывается родственная схожесть языков. Хотя в конечном, т.е. турецком языке и нет вышеприведенных устойчивых выражений, однако дословный перевод их с исходного татарского языка не искажает смысл произведения в целом. Использование приема калькирования, особенно при переводе с одного родственного языка на другой устойчивых единиц и фразеологических оборотов в большом количестве, является одним из показателей чрезмерного буквализма при переводе⁵.

• *Әгәр куйн йөрәк укәнсең, монда кал!..⁶ / *Eğer tavşan yürekliysen sen kal burada!⁷ / (Если ты трус, оставайся здесь).**

³ Әлирхан Ф., Сайланмаәсәрләр, Казан, 2002, с. 215.

⁴ Vasiyet. Çeviri: Fatih Kutlu, İzmir, 2005, s. 46.

⁵ Khabibullina E., Sadikova E., Substitutions At The Level Of Case Categories During The Translation Of Tatar Prose Into Turkish // Turkish Online Journal Of Design Art And Communication. - 2016. - Vol.6, Istanbul, p. 2227, Khabibullina E., Yusupova A., Grammatical substitutions used in the translation of Tatar literary prose into the Turkish language // Prof. Dr. Talat Tekin Hatıra Kitabı, Istanbul, 2017, s. 1297.

⁶ Гыйләжев А., Сайланма әсәрләр / А.Гыйләжев, Казан: Татарстан Республикасы "Хәтер" нәшрияте (ТАРИХ), 2004, б. 184.

Так, например, в предложении выше мы наблюдаем, что фразеологическая единица *куян йөрәк* (трус, досл.: заячье сердце) при переводе трансформировано путем калькирования, несмотря на то, что турецкий язык богат собственными фразеологическими единицами, обозначающими трусость.

Помимо фразеологических калек при их переводе мы встречаем и нефразеологические способы. Так, например, в отдельных случаях фразеологические единицы трансформируются при помощи лексических единиц. То есть фразеологический оборот в языке оригинала передается при переводе обычным словом или словосочетанием⁸.

• *Бай шәкерт, әйттик, туң күчән булса да...*⁹ / *Zengin şakirt cahil bile olsa da...*¹⁰ / (Хоть богатый студент и туп, как ступа...).

На примере выше мы наблюдаем, как фразеологическая единица *туңкүчән* (досл.: отморозенный стебель капусты) при переводе трансформируется лексической единицей *cahil* (глупый, необразованный).

Интересно и то, что такие способы трансформации, часто используемые в других языковых парах, как описательный перевод или анатомический перевод, в исследуемых нами переводах не встречаются¹¹. Это также объясняется тем, что пара языков татарский-турецкий являются родственной и в большинстве случаев трансформация фразеологических единиц реализуется через такие приемы как калькирование или лексические замены.

⁷ Gıyilecev A., Bir avuç toprak. Çeviri: Fatih Kutlu, Ankara, 2013, s. 70.

⁸ Khabibullina E., Yusupova A. Sh., Lexical Transformations in the Translations of the Modern Tatar Literature into the Turkish Language //Journal of Sustainable Development. ISSN 1913-9063 ISSN 1913-9071, p. 164, file:///C:/Users/User/Downloads/50501-173969-1-SM.pdf

⁹ Әмирхан Ф., Сайланма әсәрләр, Казан, 2002, б. 215.

¹⁰ Vasiyet. Çeviri: Fatih Kutlu, İzmir, 2005, s. 45.

¹¹ Хабидуллина Э., Антонимический перевод как прием лексико-грамматической трансформации (на примере переводов татарской прозы на турецкий язык) /Э. К. Хабидуллина, А. Ш. Юсупова// Актуальные проблемы изучения и преподавания татарской филологии. Сборник материалов Международной научно-практической конференции, посвященной 25-летию кафедры татарского языка и литературы (БГПУ им. М. Акмуллы, г. Уфа, 21 октября 2016 г.), с. 310.

LINGUISTIC ANALYSIS TRANSLATIONS OF ARTISTIC LITERATURE FROM TATAR LANGUAGE TO TURKISH

Khabibulina Elmira

(Summary)

This work reflects the features of the transformation of phraseological units in translation of literature works from the Tatar language into Turkish. Literary text is a rich source of sustainable linguistic units, including phraseological phrases. The peculiarities of their transfer in the translation even from one related language to another are relevant. The similarity of languages often generates translation errors. Individual phraseological units are specific only for a concrete language and do not have equivalents in the other. The article also examines aspects of the transformation of such examples.

ԹԱԹԱՐԵՐԵՆԻՑ ԹՈՒՐԶԵՐԵՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Խաբիբուլինա Էլմիրա

(Ամփոփում)

Հոդվածը արտացոլում է գեղարվեստական ստեղծագործությունների թարթարեղենից թուրքերեն թարգմանության ընթացքում դարձվածաբանական միավորումների տրանսֆորմացիայի առանձնահատկությունները: Առանձին դարձվածաբանական միավորները բնորոշ են միմյայն կոնկրետ լեզուների և չունեն համարժեքներ այլ (նույնիսկ ազգակից) լեզուներում (հոդվածում ուսումնասիրվում են նման օրինակների տրանսֆորմացիայի ասպեկտները):

Քոչարյան Հայկ, Գևորգյան Աննա*

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՂԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՂ ԳՈՐԾՈՂԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՎՐԱ

Բանալի բառեր՝ իսլամական գործոն, Աղբբեջան, շիա իսլամ, սուննիներ, սուֆիներ, ծայրահեղական իսլամական խմբավորումներ, ահաբեկչություն, անվտանգություն, տարածաշրջան, Հայաստանի Հանրապետություն

Իսլամը ներկայիս Աղբբեջանի Հանրապետության տարածք ներթափանցել է 7-րդ դարում: Պատմականորեն Արրան և Շիրվան կոչվող այս տարածքը դարեր շարունակ արաբական խալիֆայության մաս լինելով, իր վրա է կրել և շարունակում է կրել իսլամական տարբեր ուղղությունների գաղափարական զարգացումների ազդեցությունները: Իսլամը իր տարբեր դրսևորումներով՝ սուննիզմ, շիիզմ, սուֆիզմ և այլն, դարձել է ներկայումս Աղբբեջանի տարածքն ընդգրկող շրջանների մշակութային և արժեքային դաշտի անբաժանելի մաս: Աղբբեջանի անկախումից հետո իսլամական տարբեր խմբեր մրցակցում էին երկրում ազդեցություն ձեռք բերելու համար: Մի շարք խմբավորումներ Իրանից, Միջին Արևելքի այլ երկրներից, ինչպես նաև Հյուսիսային կովկասից ակտիվորեն աշխատում էին իրենց գաղափարները տարածելու ուղղությամբ: Նրանցից որոշները կապեր ունեին անգամ իսլամական զինված խմբավորումների, այդ թվում նաև «Ալ-Քաիդայի» հետ: Երկրի պաշտոնական կրոնական

* Քոչարյան Հայկ՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ, էլ. փոստ՝ hkocharyan@ysu.am
Գևորգյան Աննա՝ ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, էլ. փոստ՝ anna.gevorgyan@ysu.am

ինստիտուտները պայքարում էին այս խմբավորումներին դուրս մղելու ուղղությամբ և ներկայում, միայն թուրքական ծագմամբ խմբերն են համեմատաբար ազատորեն գործում Աղբբեջանում:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել իսլամը՝ որպես գործոն, ժամանակակից Աղբբեջանում, դրա արդի դրսևորումները, ինչպես նաև այդ գործոնի ազդեցությունը ՀՀ անվտանգային շահերի վրա: Հետազոտության ծավալից և նպատակից ելնելով՝ իսլամը որպես գործոն դիտարկվում է երկու՝ քաղաքականության և ինքնության տեսանկյունից:

Բնակչության դավանաբանական կազմն ու խճանկարը

ԱՄՆ Պետդեպարտամենտի «Աշխարհում կրոնական ազատությունների վիճակի մասին» 2018 թ. զեկույցի համաձայն՝ Աղբբեջանի 10,046,516¹ բնակչության մոտ 96,9%-ը մուսուլման է²: Ըստ Աղբբեջանի «Կրոնական կառույցների հարցով պետական կոմիտեի»՝ մուսուլման բնակչության մոտ 65%-ը շիական իսլամի հետևորդ է, իսկ մոտ 35%՝ սուննիական³: Ընդհանուր առմամբ սակայն, բնակչության մեծամասնությունը կրոնական պրակտիկաների ակտիվ մասնակից չէ և նրա ինքնությունը առավելապես հիմնված է մշակութային և էթնիկ պատկանելիության վրա:

Դեռ 2007-2008 թվականներին «Gallup» կազմակերպության անցկացրած հարցման համաձայն՝ Աղբբեջանի բնակչության մոտ

¹ Azerbaijan, World Factbook, <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/aj.html> (հուլիս 18, 2018),
² United States Commission on International Religious Freedom 2018 Annual Report <https://www.uscirf.gov/sites/default/files/2018USCIRFAR.pdf> (սալիլի 10, 2018)
³ Նույն տեղում:

21%-ն է⁴ կրոնը առօրյա կյանքի կարևոր բաղկացուցիչ համարում և միայն 14%-ն է ամենօրյա աղոթք կատարում⁵: Իսկ արդեն 2018 թվականին Բահայի նախաձեռնության համադրական տվյալներով՝ Ադրբեջանի բնակչության 34%-ն է իրեն կրոնավախ համարում⁶: Դեռ 2010 թվականի ուսումնասիրությունները ցույց էին տալիս, որ իսլամական արժեհամակարգը աստիճանաբար առավել կարևոր դեր էր ստանձնում երիտասարդ սերնդի (մինչև 29 տարեկան) մոտ, որոնց ինքնությունը ձևավորվել է արդեն անկախ Ադրբեջանում⁷:

Ադրբեջանում՝ շիա իսլամի հետևորդները, առաջնորդվում են ջաֆարիական կրոնափրավական դպրոցի (մազհաբի) կողմից մշակված «իրավանորմատիվ» դաշտով: Իսկ Ադրբեջանի սուննիների մեծամասնությունը հետևում է հանաֆիական մազհաբին: Սուննի ադրբեջանցիները հիմնականում թյուրքական ծագում ունեցողներն են, իսկ էթնիկ փոքրամասնություն կազմող և ոչ թյուրքական ծագում ունեցող ադրբեջանցի մուսուլմանները հարում են շաֆիական մազհաբին: Միաժամանակ, իսլամի հիմնական երկու ուղղություններից գատ, 19-րդ դարում ներկայիս Ադրբեջանի տարածք է ներթափանցել նաև սուֆիական նակշբանդիական ուղղությունը և լայն տարածում գտել թե՛ հանաֆիական, և թե՛ շաֆիական մազհաբների շրջանում:

⁴ Steve Crabtree and Brett Pelham, What Alabamians and Iranians Have in Common, <http://www.gallup.com/poll/114211/Alabamians-Iranians-Common.aspx> (ապրիլի 10, 2011)

⁵ Gallup: Azerbaijan is One of Least Religious Nations, <http://crrc-caucasus.blogspot.com/2009/02/gallup-azerbaijan-is-one-of-least.html> (ապրիլի 10, 2011)

⁶ Mapped: The world's most (and least) religious countries <https://www.telegraph.co.uk/travel/maps-and-graphics/most-religious-countries-in-the-world/> (մայիս 4, 2018):

⁷ Balci B., Goyushov A., "Azerbaijan", *Yearbook of Muslims in Europe*, v. 2, ed. by Jorgen S. Nielsen and others, Brill, Leiden-Boston, 2010, p 43-44.

Խորհրդային Միության փլուզումից հետո իսլամական դավանաբանական խճանկարը Ադրբեջանում համալրվել է նոր տարրերով: Իսլամական վերածննդի հոսանքի ներքո Ադրբեջան են ներթափանցում այնպիսի ուղղություններ, ինչպիսին են սալաֆիական իսլամը և նուրսիների շարժումը, որոնց հիմնական համակիրները քաղաքաբնակ ադրբեջանցի երիտասարդության ներկայացուցիչներն էին:

Ադրբեջանում իսլամ դավանողներին այսօր կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի: Դրանք են՝ ա) շիա իսլամ դավանողներ, որոնք հետևում են կրոնական այնպիսի հեղինակությունների, ինչպիսին են այաթոլլահ Խամենեին, այաթոլլահ Միսթանին և այլոք, բ) սուննիներ, որոնք պատկանում են թյուրքական ծագում ունեցող տարբեր սուֆիական ուղղություններին (օրինակ՝ նուրսիներ, նակշբանդիներ, սուլեյմանիներ և այլոք), և գ) արմատական իսլամին՝ սալաֆիականությանը/վահաբականությանը հարողներ:

Շիա իսլամ դավանողներ

Ադրբեջանի Հանրապետության մուսուլման բնակչության մեծամասնությունը շիա իսլամի հետևորդներ են: Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած գաղափարական վակուումը իր ազդեցությունն ունեցավ նորանկախ խորհրդային հանրապետությունների, այդ թվում նաև Ադրբեջանի վրա: Ինքնության փնտրտուքները ադրբեջանական հասարակության մեջ հանգեցրին նրան, որ հանրային խոսույթը սկսեց կառուցակցվել՝ հիմքում ունենլով ինքնության երկու բաղադրիչներ: Մի կողմից

սկսեց ակտիվանալ էթնիկ՝ թյուրքական ինքնությունը⁸, իսկ մյուս կողմից՝ կրոնական՝ իսլամական ինքնությունը⁹:

Պետք է նշել, որ իսլամի զարգացումը Ադրբեջանի տարածքում ստեղծել էր մի իրավիճակ, որ գերակա ուղղություն էր դարձել շիական իսլամը՝ իր իսնաաշարիա (տասներկուիմամական)¹⁰ ուղղությամբ: Իսնաաշարիա շիա իսլամը նաև Իրանի Իսլամական Հանրապետության պետական գաղափարախոսության հիմնասյունն է:

Շիական կրոնական ինքնության ընդհանրությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց Իրանի Իսլամական Հանրապետության համար 1990-ականներին ակտիվացնել իր գործունեությունը Ադրբեջանի տարածքում: Իրանական ակտիվությունը Ադրբեջանում արտահայտվում էր քաղաքական կուսակցությունների ստեղծմամբ և ֆինանսավորմամբ, ինչպես նաև ադրբեջանցի երիտասարդների կրթությունը իրանական կրոնական հաստատություններում կազմակերպելով:

1990-ականներին Իրանի հովանու ներքո Ադրբեջանում գործում էին բազմաթիվ քարոզչական խմբեր, կազմակերպություններ և կրոնաքաղաքական բնույթի այլ կառույցներ (օրինակ՝ «Իմամիյա», «հուսեյնիյա», «ահլ ալ-բեյթ» և այլն): Միաժամանակ, երկրի տարբեր մասերում գործում էին

⁸ Թյուրքական ինքնության ակտուալացման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ այն համեմատված է յուրահասուկ կրոնական (իսլամական) գործունեության ակտիվացման հետ: Այս ուղղությունը կայացել է 9-րդ դարում և աչքի է ընկնում իր չափավոր հայացքներով:

⁹ Անկախության ձեռքբերումից հետո Ադրբեջանում ակտիվորեն սկսեցին վերաբացվել մզկիթները, որոնց թիվը այսօր անցնում է 2000-ից:

¹⁰ Այլ կերպ անվանվում են նաև իմամականներ: Այս ուղղությունը կայացել է 9-րդ դարում և աչքի է ընկնում իր չափավոր հայացքներով:

ավելի քան 150 «մադրասաներ» (իսլամական կրոնական կրթօջախներ):¹¹

Իրավիճակը շտկելու և պետական վերահսկողությունը ուժեղացնելու համար, 2000 թ.-ին Ադրբեջանը ավելի է խստացնում վերահսկողությունը տարատեսակ կրոնական կազմակերպությունների նկատմամբ, ինչի հետևանքով կազմակերպությունների զգալի մասը օրենքից դուրս են հայտարարվում:

2001թ. ստեղծվում է Կրոնական կառույցների հարցով Ադրբեջանի պետական կոմիտեն, որի իրավասության սահմաններում է հայտնվում Ադրբեջանում գործող բոլոր կրոնական կառույցների գործունեությունը: Կոմիտեի նախաձեռնած վերազրանցման գործընթացը խիստ բացասական է անդրադառնում տարատեսակ իսլամական կառույցների, այդ թվում նաև իրանական հովանավորություն ունեցող շիական կառույցների վրա:

Ադրբեջանում շիայական (իրանական) ազդեցության և քարոզի կենտրոն է համարվում Բաքվի Ջումմա մզկիթը, որի առաջնորդ, Իրանում կրթություն ստացած Հաջի Իլգարը, ամենահայտնի շիա քարոզիչն է Ադրբեջանում: 2001 թվականին, հրաժարվելով անցնել Կոմիտեի նախաձեռնած վերազրանցման գործընթացը, Ջումմա մզկիթի շուրջ համախմբված համայնքը հայտնվեց օրենքից դուրս կարգավիճակում և դուրս մղվեց Բաքվի կենտրոնական շրջաններից, իսկ առաջնորդ Հաջի Իլգարը 2003

¹¹ Goyushov A., Islamic Revival in Azerbaijan, *Current Trends in Islamist Ideology*, vol. 7, 2005, p 73-74

թվականին անցկացված նախագահական ընտրությունների արդյունքները վիճարկելու համար անգամ բանտարկվեց¹²:

Ադրբեջանում խորհրդային գաղափարախոսության ազդեցությամբ պայմանավորված, սակայն, շիայական մի շարք կարևոր սկզբունքներ դուրս են մնացել կրոնական պրակտիկաների համախմբից: Մասնավորապես, շիայական կարևորագույն «մարջախի»¹³ սկզբունքը միշտ նվազ կարևորություն է ունեցել Ադրբեջանի շիաների շրջանում: 1980-ականներին, սակայն, Իրանի Իսլամական հեղափոխության արձագանքները Ադրբեջանում և հատկապես Նարդարանում, որտեղ միշտ բարձր է եղել կրոնական ծեսերի պահպանման մակարդակը, կրոնական մի խումբ իսլամագետների շրջանում

¹² Balci B., *Islam in Central Asia and the Caucasus Since the Fall of the Soviet Union*, Oxford University Press, 2018, p. 93-94.

¹³ Ըստ շիա մուսուլմանների՝ շիայական համայնքի կրոնական, քաղաքական ու հոգևոր առաջնորդությունը մարգարեն պատվիրակել է իմամներին: Թաքուցման մեջ գտնվող տասներկուերորդ իմամը, սակայն, շիայական համայնքը թողել է առանց առաջնորդի: Հեղինակության ու առաջնորդության այս բացը լրացնելու համար 1864 թվականին, ժամանակի Իրանի ամենահեղինակավոր կրոնական հեղինակություններից մեկը՝ Սորթեգա ալ-Անսարին ձեռնարկում է «մարջախի»-ի ինստիտուտի ձևավորումը: Ըստ Ալ-Անսարիի՝ մինչև թաքուցման մեջ գտնվող իմամ Մահդիի վերադարձը, շիայական համայնքի կրոնական ու քաղաքական առաջնորդությունը պետք է ստանձնի կրոնական որևէ հեղինակություն, որը պետք է ընկալվի որպես «ընդօրինակման աղբյուր»՝ «մարջայե թաղիդ»: Այսպիսով, բոլոր հավատացյալները պիտի հետևեն այդ հեղինակությանը՝ իրենց կրոնական պարտավորությունները կատարելիս: Արդյունքում, շիայական աշխարհում, հատկապես՝ Իրանում, Իրաքում ու Լիբանանում, մի շարք կրոնական հեղինակություններ ստացան «մարջայե թաղիդի» տիտղոսը և հետևորդների հսկայական բանակ ձեռք բերեցին: Ներկայում ողջ շիայական աշխարհում քսան «մարջայե թաղիդ» կա, որոնց մեծամասնությունը հաստատված են շիայական խոշոր կենտրոններում՝ Դոմում, Նաջաֆում ու Քերբալայում: «Մարջայե թաղիդը» պիտի հետևորդների մեծ թիվ ունենա, հրատարակի իր անհատական կրոնական ուղեցույցը՝ «ոեսալեն», ունենա մի քանի գրասենյակ՝ «դաֆթարներ», որտեղ իր ուսանողները կքարոզեն իր գաղափարները, և «մարջայե թաղիդն» է միայն, որ իրավասու է շիայական հարկ «խումս» հավաքագրելու:

ակտում են զարգացում ապրել «մարջախի»-ի կարևորության մասին պատկերացումները:

Ադրբեջանում այդպիսով, քիչ էին կարևորում կրոնական հեղինակությունների դերը, թեև Իսլամական հեղափոխության առաջնորդ, այաթոլլահ Խոմեյնին որոշակի հեղինակություն էր վայելում Ադրբեջանի կրոնական վերնախավի ներկայացուցիչների մոտ: Հետագայում՝ անկախությունից հետո Ադրբեջանի հարաբերությունները Իրանի, նվազ չափով նաև Իրաքի ու Լիբանանի հետ, ինչպես նաև կրոնական ուսանողներին Իրան ուղարկելու պրակտիկան, նպաստեցին «մարջախի» հասկացության հետագա զարգացմանը երկրում:

Քանի որ Ադրբեջանի շիաները առօրյայում աշխարհիկ կյանք էին վարում, նրանց մեծամասնությունը բացարձակ անտեղյակ էին «մարջայե թաղիդի» սկզբունքի մասին: Մինևնայն ժամանակ, կրոնական ծեսերը պահպանող և հատկապես ամենօրյա հինգանգամյա աղոթքներն անող շիա մուսուլմանների համար «մարջայե թաղիդին» հետևելը հատուկ նշանակություն ուներ:

Դժվար է միանշանակորեն ասել, թե որ «մարջայե թաղիդն» ունի ամենամեծ ազդեցությունը Ադրբեջանում: Իրանի դեսպանատունն ու հատկապես դեսպանատան Մշակույթի կենտրոնը մշտապես լծված են Իրանի պաշտոնական «մարջայե թաղիդ» Ալի Խամենեյիի գաղափարների տարածման գործին: Չնայած դրան՝ Ադրբեջանում Ալի Խամենեյին չափազանց հեռու է ամենաազդեցիկ շիա հոգևորականը լինելուց: Ալի Միսթանին այստեղ էլ, ինչպես ողջ շիա աշխարհում, շատ ավելի ազդեցիկ է: Միսթանին, որի գրքերը առկա են երկրի մայրաքաղաքի ու

գավառների գրախանութներում, առանձնահատուկ ժողովրդականություն է վայելում Ադրբեջանում¹⁴:

Եվս երկու «մարջայե թաղլիդներ» նշանակալի ազդեցություն ունեին Ադրբեջանում մինչև իրենց մահկանացուն կնքելը: Ղումում հաստատված Ֆազլի Լենքորանին «Իմամ Խումեյնի» կամ «Հոջաթիե» մադրասաներում սովորող բազում ադրբեջանցի ուսանողների էր գրավում, որոնք խանդավառությամբ մասնակցում էին նրա դասախոսություններին: Նրա ստեղծագործությունների մեծ մասը իր ուսանողների կողմից թարգմանվել է պարսկերենից ադրբեջաներեն ու տարածվել Ադրբեջանում: Նույն կերպ, Ղումում հաստատված մեկ այլ ատրպատականցի՝ Ջավադ Թաբրիզին, որոշակի հեղինակություն ուներ Ադրբեջանում: Սակայն նրանց մահից հետո (Թաբրիզին մահացել է՝ 2006թ., Լենքորանին՝ 2007թ.), նրանց հետևորդները հայացքն ուղղեցին դեպի այլ «մարջայե թաղլիդներ», հատկապես դեպի Մեքարիմ Շիրազի և Վահդի Խորասանի¹⁵:

Շիական իսլամը, լինելով դոմինանտ ուղղություն Ադրբեջանում, նաև ներկայացված է պետական ինստիտուտներով, որոնց մասին կխոսվի պետություն-կրոն հարաբերությունների հատվածում:

Սուննիներ

ԽՍՀՄ փլուզումից հետո սուննիական չափավոր իսլամի քարոզչությունը Ադրբեջանի տարածքում հիմնականում իրականացվում էր Թուրքիայից ժամանած քարոզիչների կողմից: Թուրքական ինքնության ակտուալացումը Ադրբեջանում անմիջական կապ ունի ադրբեջանական քաղաքական գործիչ,

Ադրբեջանի երկրորդ նախագահ (1992-1993թթ.) Էլչիբեյի պանթյուրքական «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության գործունեության հետ:

Սուննի իսլամի առաջին քարոզիչներից էին նաև սուֆիական «Նակշբանդիյա» միաբանության (տարիկաթի) ներկայացուցիչները: 1995 թվականին, սակայն, միաբանության առաջնորդը մեղադրվեց հեղաշրջման փորձ կատարելու մեջ և արտաքսվեց, իսկ միաբանության գործունեությունը կասեցվեց: 2004 թվականի տվյալներով՝ այս միաբանությունը ընդհատակյա գործունեություն էր ծավալել հիմնականում Նախիջևանում և Ղազախի մարզում¹⁶:

1990-ականներին «Նակշբանդիների» գործունեությանը զուգահեռ Ադրբեջանում սկսում են գործել նաև «Սուլեյմանիյա» և «Մսլենա» միաբանության ներկայացուցիչները, որոնց գաղափարների տարածման հիմնական թիրախները Ադրբեջանում սովորող թուրք ուսանողներն էին:

Ադրբեջանական հասարակության վրա իր ազդեցությամբ առավել աչքի են ընկնում այսպես կոչված «նուրսիները», որոնք Սաիդ Նուրսիի (1873-1960) գաղափարների ջատագովներն են: Ըստ էության՝ այս սուննիական շարժումը լայն թափ ստացավ 1960-ականների վերջում, երբ համայնքի ղեկավարումը ստանձնեց մրիարդատեր Սուհամմադ Ֆեթուլլահ Գյուլենը: Խորհրդային Միության փլուզումը նոր հնարավորություններ ստեղծեց շարժման համար սեփական գաղափարները իսլամական և թյուրքական նոր միջավայրերում (Ադրբեջան, Ղազախստան, Արդըզստան, Ուզբեկստան, Տաջիկստան և այլն) տարածելու համար:

¹⁴ Balci B., Islam in Central Asia and the Caucasus Since the Fall of the Soviet Union, Oxford University Press, 2018, էջ 97

¹⁵ Նույն տեղում

¹⁶ Ավելի մանրամասն տե՛ս Юнусов А., Ислам в Азербайджане, Баку, 2004, г.

Հասկանալի է, որ «նուրսիները» իրենց քարոզչությունը իրականացնում են հիմնականում ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի միջոցով: Նուրսիական կապիտալով հիմնված կրթական օջախների աշխարհագրությունը ընդգրկում է Ադրբեջանի ողջ տարածքը: 2003 թվականի տվյալներով՝ Ֆ. Գյուլենի շարժման կողմից ֆինանսավորվող դպրոցներում սովորում էր 3000-ից ավել աշակերտ¹⁷, որոնց թիվը 2003-2010 թթ. աճել է մի քանի անգամ, քանի որ ադրբեջանական հասարակության մեջ այս դպրոցները լայն մասսայականություն են վայելում առաջին հերթին իրենց հասանելիության, ինչպես նաև կրթության բարձր որակի շնորհիվ: Բացի դպրոցներից գործում են նաև միջին մասնագիտական և առնվազն մեկ բարձրագույն («Կավկազ» համալսարան) ուսումնական հաստատություններ, ինչպես նաև ինտերնատներ:

Մինչև 2009 թվականը թուրքամետ կողմնորոշում ունեցող հանրության հիմնական կենտրոն էր համարվում 1990-ականներին կառուցված «Նահատակների մզկիթը» Բաքվում, որը նաև Թուրքիայի դեսպանատան կրոնական գործերով կցորդի պաշտոնական նստավայրն էր¹⁸:

Թուրքիայում ձոնողված հեղաշրջման փորձից հետո, երբ պաշտոնական Անկարան մեղադրանք առաջադրեց գյուլենական շարժման ներկայացուցիչներին և նրանց առաջնորդ Ֆեթուլահ Գյուլենին, Ադրբեջանում գյուլենական ֆինանսական միջոցներով գործող կառույցները և ծրագրերը հայտնվեցին փակման եզրին: Մասնավորապես, հայտարարվեց «Կավկազ» համալսարանի փակման մասին՝ չնայած այն հանգամանքին, որ այն բարձ

վարկանիշ ունեւր Ադրբեջանի կրթական համակարգում: Արգելվեց նաև գյուլենական շարժման հետ ասոցացվող ակադեմիական ջրբանակների ներկայացուցիչներին ճամփորդել արտերկիր¹⁹:

Արմատական իսլամ

Ադրբեջանի տարածքում սուննիական իսլամի տարածման գործում որոշակի դերակատարություն են ունեցել նաև «Սալաֆիական» քարոզիչները²⁰, որոնք հիմնականում առաձայնում են գալիս Պարսից ծոցի երկրներից և Սաուդյան Արաբիայից: 1990-ականների առաջին կեսին արաբական ծագում ունեցող իսլամական տարբեր բարեգործական կազմակերպություններ իրենց մասնաճյուղերն են բացում Ադրբեջանի ողջ տարածքով մեկ²¹: Թեև Սալաֆի քարոզիչները պարարտ հող գտան հիմնականում Ադրբեջանի հյուսիսում, որտեղ բնակչությունը ավանդաբար սուննիական իսլամի հետևորդ է, այդ թվում նաև Ռուսաստանի Դաշնության սահմանի երկայնքով բնակվող էթնիկ փոքրամասնությունների (լեզգիներ, ավարներ, ծախուրներ և այլն) շրջանում: Սալաֆիական քարոզի կենտրոններ են ստեղծվում նաև այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Բաքուն և Սումգաիթը:

¹⁷ Safarova D., Azerbaijan: University, Paper Closed as Anti-Gülen Cleanup Continues, Jul 20, 2016, <https://eurasianet.org/azerbaijan-university-paper-closed-anti-gulen-cleanup-continues>

²⁰ «Սալաֆիներ» ընդհանրական անվամբ իսլամի պատմության տարբեր փուլերում անվանվել են այն գործիչները, որոնք կոչ են արել վերականգնել վաղ իսլամական ումման, այսինք՝ մաքուր իսլամը առանց նորարարությունների: Այս խմբի մեջ են մտնում նաև վահաբականները:

²¹ Goyushov A., Islamic Revival in Azerbaijan, *Current Trends in Islamist Ideology*, vol. 7, 2005, p 75

¹⁷ Balci B., Fethullah Gülen's Missionary Schools in Central Asia and their Role in the Spreading of Turkism and Islam, *Religion, State & Society*, Vol. 31, No. 2, 2003, p 156

¹⁸ Balci B., Goyushov A., "Azerbaijan", *Yearbook of Muslims in Europe*, v. 2, ed. by Jorgen S. Nielsen and others, Brill, Leiden-Boston, 2010, p 47.

1995 թվականին Բաքվում հիմնվում է առաջին վահաբական մզկիթը: Ծայրահեղ իսլամական գաղափարների զարգացումը և տարածումը Ադրբեջանում 1990-ականների երկրորդ կեսում պայմանավորված է հիմնականում չեչեն փախստականների ներհոսքով: Այս նույն ժամանակահատվածում քուվեյթյան կապիտալով Բաքվի Նարիմանովի շրջանում կառուցվեց հետագայում «Աբու Բաքրի» անվանումը ստացած մզկիթը: Մզկիթի իմամ Գամետ Մուլեյմանովի գործունեության շնորհիվ Նարիմանովի շրջանում գտնվող այս մզկիթը դարձավ վահաբական իսլամի գաղափարախոսության քարոզի կենտրոն Ադրբեջանում:

2001 թվականի սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո, ահաբեկչության դեմ զլոբալ պայքարի դրոշի ներքո, ադրբեջանական պետական մեքենան սկսեց կանխարգելիչ գործողություններ ձեռնարկել և սահմանափակել վահաբական քարոզիչների ազդեցությունը ադրբեջանական հասարակության վրա: Մասնավորապես, 2008 թ. օգոստոսին փակվեց «Աբու Բաքրի» մզկիթը, այն բանից հետո, երբ այնտեղ ահաբեկչական գործողությունների արդյունքում սպանվեց երկու և վիրավորվեց տասը հոգի, այդ թվում նաև Հաջի Գամետը: Մյուս կողմից ահաբեկչության դեմ պայքարը Ադրբեջանի կողմից օգտագործվեց ընդդիմադիր քաղաքական շրջանակների նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար:

Որպես իսլամական գործոնի ծայրահեղ դրսևորման օրինակներ կարելի է դիտարկել նաև Նարդարանում պարբերաբար տեղի ունեցող բողոքի ցույցերն ու Գանձակում 2018 թ. -ին հուլիսի երեքին տեղի ունեցած մահափորձը քաղաքապետի նկատմամբ: Այս մահափորձից հետո տեղի ունեցած բողոքի ցույցի ընթացքում սպանված երկու ոստիկանների սպանության համար ևս, պետությունը մեղադրեց իսլամիստական կազմակերպություններին ու նրանց աջակցող ընդդիմադիր ուժերին՝ նպատակ ունենալով

առան հաջորդող ընտրությունների ժամանակ հավելյալ քվեներ առանալ: Միաժամանակ, ցույցի վերաբերյալ հայտարարության մեջ իշխանությունը այն բնութագրում էր որպես «ծայրահեղականների հավաք և նրանց կողմից ոստիկանի սպանություն»²²: Ադրբեջանական իշխանությունները փաստեր էին բերում, որ ապանության մեջ մեղադրվող Մաֆարովը ամիսների ընթացքում վերապատրաստում է անցել Իրանում ու Միդիայում:

«Իսլամական պետություն» կազմակերպության ի հայտ գալուց ի վեր, Ադրբեջանը ջանում է հսկողության տակ պահել Միդիայից ու Իրաքից ահաբեկիչների հոսքերը: Մի շարք իրավական կարգավորումների բարեփոխումներ 2009-2015 թթ.-ի ընթացքում նպատակ են ունեցել ահաբեկչական սպառնալիքի կանխարգելումն ու դրա հետագա տարածումը հնարավորինս հեշտացնելու: Մասնավորապես, քրեական օրենսգրքում արված հավելման համաձայն՝ Միդիա մեկնող «օտարերկրյա զինվորների» պատիժը սահմանվել է 15 տարվա ազատազրկում: Նույն օրենսգրքի մեկ այլ փոփոխության համաձայն՝ կրոնական քարոզչության համար պատիժը սահմանվել է երկու տարի, նախկին մեկ տարվա փոխարեն:

Իսլամ – պետություն հարաբերություններ

Իսլամ-պետություն հարաբերություններն Ադրբեջանում կարգավորվում են սահմանադրությամբ և օրենքներով:

²² Baş Prokurorluq: Sosial şəbəkələrdə və bəzi saytlarda təxribat xarakterli çağırışlarla əlaqədar cinayət işləri başlanılıb, 09.07.2018, https://azertag.az/xeber/Bas_Prokurorluq_Sosial_sebekelerde_ve_bezi_saytlarda_texribat_xarakterli_chagirishlarla_elaqedar_cinayet_isi_baslanilib-1178164, Safarova D., Attacks in Azerbaijan raise accusations of Islamist extremism, government skullduggery, Jul 11, 2018, <https://eurasianet.org/attacks-in-azerbaijan-raise-accusations-of-islamist-extremism-government-skullduggery>

Ադրբեջանի սահմանադրության 6-րդ հոդվածով երկիրը հռչակված է աշխարհիկ պետություն, իսկ 19-րդ հոդվածը հաստատում է կրոնի և պետության տարանջատվածության սկզբունքը: 1992 թ. ընդունված «Խղճի ազատության և դավանանքի մասին» օրենքում բազմաթիվ անգամներ լրացումներ են կատարվել: 2009 թվականի լրացումից հետո, Ադրբեջանի տարածքում արգելվեց կրոնական քարոզչական գործունեություն ծավալել առանց Կրոնական միությունների հարցով Ադրբեջանի պետական կոմիտեի որոշման: Կրոնական ծիսակատարություն անցկացնելու իրավունք են ստանում միայն այն մոլլաները, որոնք կրոնական կրթություն են ստացել Ադրբեջանում²³:

Պետություն - իսլամ հարաբերությունների կարգավորման իրավասություն ունի նաև Կովկասի մուսուլմանների հոգևոր խորհուրդը: Խորհուրդը 1980 թ.-ից ղեկավարում է շիա հոգևորական Ալլահշուբուր Փաշազադեն, որը ներգրավված է շիայական ազգաբնակչության հետ աշխատանքները կոորդինացնելու գործում: Նրա տեղակալը «մուֆթիի» կարգավիճակով համակարգում է Ադրբեջանի սուննիական համայնքի աշխատանքները: Բոլոր մուսուլմանական համայնքները օրենքով պարտավոր են ընդունել Կովկասի մուսուլմանների հոգևոր խորհրդի իշխանությունը: Գրանցվելու համար մուսուլմանական համայնքը պարտավոր է իր հայտը ներկայացնել Կովկասի մուսուլմանների հոգևոր խորհրդին, որը քննարկելուց հետո այն ուղղում է Կրոնական միությունների հարցով Ադրբեջանի պետական կոմիտեին տվյալ համայնքը գրանցելու համար: Դե յուրե Կովկասի մուսուլմանների հոգևոր խորհուրդը լիազորված է մզկիթներում մոլլաների և իմամներ

²³«Խղճի ազատության և դավանանքի մասին» օրենքում տեղ գտած փոփոխություններին և դրա վերաբերյալ քննարկումներին ծանոթանալու համար տե՛ս http://www.forum18.org/Archive.php?article_id=1320

կրոնակել, սակայն դե ֆակտո անհրաժեշտ է լինում ստանալ կրոնական միությունների հարցով Ադրբեջանի պետական կոմիտեի պաշտոնական հավանությունը:

Պետք է նշել, որ Կովկասի մուսուլմանների հոգևոր խորհուրդը մեծ հեղինակություն չի վայելում ազգաբնակչության շրջանում և ասոցացվում է պետական ռեպրեսիվ ապարատի հետ: Ադրբեջանական հասարակությունում, առհասարակ, կրոնական ինստիտուտների հանդեպ վստահությունը գտնվում է չորրորդ տեղում՝ զիջելով նախագահի, բանակի, ռուսիկանության ինստիտուտների հանդեպ վստահության մակարդակին²⁴: Այս հանգամանքը, սակայն, չի խանգարում «Կովկասի մուսուլմանների խորհրդին»՝ Ալլահշուբուր Փաշազադեի գլխավորությամբ, ընդլայնել իր ազդեցությունն ու իր նյութական ռեսուրսները: Ադրբեջանում գործող մզկիթներից մեծ մասը գտնվում են «Կովկասի մուսուլմանների խորհրդի» անմիջական ղեկավարության ներքո: Այս գործընթացը աջակցություն է ստանում պետության կողմից, քանի որ հնարավորություն է առաջարկում ստեղծված ցանցի միջոցով կառավարելի դարձնել նաև օտարերկրյա ֆինանսական ու նյութական հոսքերը: Մեծամասամբ, սակայն, մզկիթները ստիպված են ինքնաֆինանսավորվել՝ կրոնական ծեսերից գոյացած եկիրատվություններով: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ արամաբանական է, որ օտարերկրյա մոլլաներն ու իմամները չեն ազդում խորհրդի կողմից և համարվում են ֆինանսական աղբյուրների մրցակիցներ: Այս մրցակցությունից հաղթանակած գուրսու գալու համար էլ Խորհուրդը կարողացել է պետությունից

²⁴ Charles R., *Religiosity and Trust in Religious Institutions: Tales from the South Caucasus (Armenia, Azerbaijan and Georgia)*, Summer 2009, p 14. <http://iseees.berkeley.edu/sites/default/files/u4/2009-08-Charles.pdf> (ապրիլի 25, 2011)

վետոյի իրավունք կորզել՝ կրոնական կազմակերպությունների գրանցման հարցում:

Ադրբեջանում 2014-2015 թթ.-ին արված իրավական փոփոխությունները, ընդհանուր առմամբ, ամրապնդում են օտար երկրներում կրթություն ստացած հոգևորականների քարոզի արգելքը (բացառությամբ նրանց, որ սովորել էին պետության կողմից հաստատված օտարերկրյա հաստատություններում): Փոփոխություններից մեկն էլ Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի կոմիտեին մենաշնորհ էր տալիս ծխական արարողությունների կրթություն իրականացնելու մասով: Հոգևորականներին վերապատրաստող կազմակերպությունների բացը լրացնելու համար պետական այդ կոմիտեն ընդլայնել էր իր գործառույթներն ու միայն 2015-2016 թթ.-ին ավելի քան 30,000 վերապատրաստման դասընթաց անցկացրել²⁵:

Օրենքների այս փոփոխությունները, սակայն, հետադարձ ուժ չունեին, ինչը նշանակում է, որ նախկինում այլ կազմակերպությունների կողմից վերապատրաստում անցած հոգևորականները չէին զրկվում որակավորումից: Իսկ ըստ պաշտոնական տվյալների՝ դրսում վերապատրաստված հոգևորականների թիվը մոտավորապես 1,800 է, իրական թիվը, սակայն, կարող է ավելի մեծ լինել²⁶:

Կարելի է առանձնացնել Ադրբեջանում գործող իսլամական մի շարժում ևս: Այսպես կոչված «մուսուլման ինտելեկտուալներ», որոնք ձևավորվում են համալսարանական և ակադեմիական միջավայրում աշխատող արևելագետներից: Այս շարժման

²⁵ Cornell S. Karaveli H., Ajeganov B., Azerbaijan's Formula: Secular Governance and Civic Nationhood, 2016, pp. 77-81

²⁶ Azerbaijan: The American Foreign Policy Council's World Almanac of Islamism, 2018, p. 6
<http://almanac.afpc.org/sites/almanac.afpc.org/files/Azerbaijan%202018%20Website.pdf>

ներկայացուցիչները պարբերաբար հանդես են գալիս մասնագիտական դիրքից՝ մեկնաբանելով իսլամի որոշ դրույթներ, վիճարկելով շարիաթի ինչ-ինչ սկզբունքներ և, ընդհանրապես վերջ կատարում իրան հանդիսանալ Ադրբեջանում իսլամի քարեփոխման և արդիականացման համար:

Իսլամի գործոնը դարաբաղյան հակամարտության համատեքստում

Ղարաբաղյան հակամարտության ընթացքում, ինչպես ռազմական գործողությունների ակտիվ փուլում, այնպես էլ 1994 թ. կնքված զինադադարից հետո ադրբեջանական կողմը ակտիվորեն օգտագործել և օգտագործում է իսլամի գործոնը իր դիրքերը վիճազգային ամենատարբեր հարթակներում ամրապնդելու համար:

Դեռ դարաբաղյան պատերազմի սկզբնական շրջանում Ադրբեջանը փորձել է ձեռնարկել այն ներկայացնել քրիստոնյա-մուսուլմանական պայքարի համատեքստում, ինչի արդյունքում կարողացել է մարտական շփման գծում հայկական ուժերի դեմ մտքիլիզացնել մուսուլման վարձկաններին Աֆղանստանից, Թուրքիայից, Չեչնիայից և այլ երկրներից: Միաժամանակ, Ադրբեջանը Իսլամական Համագործակցության Կազմակերպության (ԻՀԿ) շրջանակներում բազմիցս փորձել է շրջանառության մեջ դնել հակահայկական բանաձևեր²⁷:

Կարելի է ենթադրել, որ դարաբաղյան հակամարտության համատեքստում Ադրբեջանը չի հրաժարվելու «իսլամի» գործոնի օգտագործումից: Իսլամական գործոնի ակտիվացման և

²⁷ Տե՛ս օրինակ Փաշայան Ա. Հայ-Ադրբեջանական հակամարտությունը իսլամական Կոնֆերանսի օրակարգում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=445&phrase_id=7618

իսլամիստական ուժերի ներգրավման և մոբիլիզացիայի պարագայում կարելի է ենթադրել, որ պատերազմական գործողությունների վերսկսման և երկարատևության պարագայում հայկական ուժերը կարող են առերեսվել «շահիդության» երևույթի հետ:

«Շահիդների» մասնակցության թիվը կտրուկ կարող է մեծանալ, եթե հաշվի առնենք, որ Սիրիայում և Իրաքում ռազմական փորձառություն ստացած ադրբեջանցի զինյալների թիվը հասնում է մի քանի հազարի: Մյուս կարևոր գործոնը կարող է լինել ռազմական գործողությունների վերսկսման ժամանակ այլ տարածաշրջաններում այսպես կոչված «քրիստոնյա-մուսուլման» հակամարտությունների բացակայությունների հանգամանքը: Չի բացառվում նաև որպես ծայրահեղ միջոց, դարաբաղյան հակամարտությունը կրոնական դաշտ տեղափոխելու համար, Ադրբեջանի կողմից (առնվազն բարձրաստիճան կրոնականների շուրթերով) ցիհադի հայտարարումը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ:

Եզրակացություն

21-րդ դարի առաջին տասնամյակում ադրբեջանական հասարակական կյանքում մեծանում է իսլամի դերը ընդհանրապես, ինչի մասին վկայում են պետության կողմից ոլորտը կարգավորելու համար նախաձեռնած քայլերի թիվն ու հաճախականությունը:

Փակ և ավտորիտար այնպիսի համակարգերում, ինչպիսին է Ադրբեջանը, կրոնը սկսում է լիզիտիմության հավելյալ աղբյուր դառնալ: Այն պետությունում, որի բնակչության մեծամասնությունը հավատացյալ մուսուլմաններ են, անկախ գերագույն իշխանության տիպից (տոտալիտար, ավտորիտար համակարգ և այլն), կրոնի մարմնավորողը որոշակի

լիզիտիմություն է ստանում, քանի որ ընկալվում է Ալլահի կամքի արտահայտման համատեքստում:

Ադրբեջանում իսլամը միատարր չէ և ներկայացված է իրար հակասող ուղղություններով, և այդ ուղղություններից յուրաքանչյուրը հիմնված է այս կամ այն (կրոնական կամ էթնիկ) ինքնության ակտուալիզացման վրա:

Կրոնական ինստիտուտների հանդեպ վստահության ցածր մակարդակը ստեղծում է մի իրավիճակ, որում զարգանում է «ժողովրդական իսլամը»: Սա իր հերթին համադրվելով Ադրբեջանում իսլամի տարատեսակ դրսևորումների առկայության հետ, կենտրոնական իշխանությունների թուլացման պարագայում իսլամի ազդեցության տեսանկյունից կառաջացնի երեք գոտի: Դրանք են. 1) թուրքական իսլամի տարածում Նախիջևանում և կենտրոնական շրջաններում, հատկապես Բաքվում, 2) շիաական իսլամի ակտիվացում հարավային և հարավ-արևմտյան շրջաններում և, վերջապես, 3) արմատական իսլամի սահմանափակ դրսևորումներ Ադրբեջանի հյուսիսում և դրա ցանցային արտահայտում երկրով մեկ:

Պետք է արձանագրել, սակայն, որ ներկա փուլում ազդեցությունը տարածելու տեսանկյունից, հաջողություններ է արձանագրում հիմնականում թուրքական սուննիական իսլամը, ինչը չի բխում Հայաստանի շահերից, քանի որ, չնայած իր կրոնական բնույթին, այդ ներգործությունը տարածաշրջանի վրա կոնսոլիդացնում է թուրքական տարրը:

The Islamic factor in Azerbaijan and its influence on the security interests of Armenia

**Kocharyan Hayk, Gevorgyan Anna
(Summary)**

After the independence of former Soviet Republic of Azerbaijan several Islamic groups from Iran, from other countries of Middle East and also from the North Caucasus were competing for spreading their ideas in the country. The state religious institutions were forced to fight for their dominance and during the years they managed to expel most of them: Nowadays only some groups of Turkic origin have relatively successful activity. The article aims to reveal the role of Islamic factor in Azerbaijan by examining the state policy towards Islamic groups and institutions, including extremist ones, as well as by evaluating the possible influence of that factor on the security of Armenia.

Исламский фактор в Азербайджане и его влияние на интересы безопасности Армении

**Кочарян Айк, Геворгян Анна
(Резюме)**

После независимости прежней советской республики Азербайджана некоторые исламские группы из Ирана, из других стран Среднего востока, а также из Северного Кавказа соперничали для распространения своих идей в стране. Государственные религиозные институты были вынуждены сражаться за превосходство и со временем им удалось выселить большинство из них: в наши дни только несколько групп турецкого происхождения имеют сравнительную активность. Целью статьи является выявления роли исламского фактора в Азербайджане анализируя государственную политику по отношению к исламским группам и институтам, включая экстремистские группировки, а также оценивая возможное влияние этого фактора на безопасность Армении.

ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Vardanyan Aharon*

SOME REMARKS ON THE SOCIOLINGUISTIC SITUATION IN XALXĀL*

Keywords: *New Azari dialects, sociolinguistic situation, Xalxāl region, trilingualism, Ardabil, Šāhrud, Iranian languages, Iranian linguistics*

General Description

The research was carried out of the 19 (Asbū, Askestān, Derav, Kolūr, Šāl, Dīz, Qšlāq-e Dīz, Gīlavān, Qšlāq-e Gīlavān, Xāneqāh-e Gīlavān, Karīn, Lerd, Tīl, Kehel, Kehel-Dašt, Ṭahārom-Dašt, Gelūzān, Gandomābād, Deylamābād) 34 villages of Šāhrūddistrict. The inhabitants of the about villages speak the local New Azari dialects (NAD)¹ as their mother tongue but also have a good command of Persian and Azerbaijani Turkic (AT)².

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ aharon.vardanian@ysu.am

¹ This article is completely based on the materials, gathered during the fieldwork in 2013-2014. People of different ages and social status from all of these villages were involved in the work as informants. Our informants in Kolūr was Mr. Bahman Moazenzadeh, a 46 years old man with a higher education, who worked in Kolūrvillage Government), in Lerd— Mr. Sultan Ali Tabaruki (64 years old, secondary education), and Mr. Baratelli Turani (45 years old, secondary education), in Karīn—Mrs. Mariam Pasebani (according to her appearance, about 40-45 years old, Head of Karīn village), in Asbū—Mr. Javad Mohammad (60 years old, secondary education), in Askestān—Vahab Hašeminežad (75 years old, secondary education), in Derav—Mr. Seyed Nezam Hayati (50 years old, partially completed higher education), in Gīlavān—Hasan Yaldani (26 years old, partially completed higher education).

² The abbreviations in the article are the following, NAD-New Azari dialects, AT-Azerbaijani Turkic, NP-New Persian, kol.-Kolūr dialect, drv.-Derav dialect, šal.- Šāl dialect, lrd.- Lerd dialect, krn.- Karīn dialect, asb.- Asbū dialect, ask.- Askestān dialect, tal.- Talyshi, ir.- Iranian.

³ Of particular interest are the correlations between patterns of language use and social isolation. Interviews, observations, questionnaires, and Persian Sentence Repetition Test (On this Sociolinguistic method see Radloff C., 1991. "Sentence Repetition Testing for Studies of Community Bilingualism". Dallas: SIL International and University of Texas at Arlington) were included in the field work. The research presented in this report was made from July-August 2013 till August 2014. Two trips lasting of four-six weeks were made in the Šāhrūd region during this period. In addition, we interviewed individuals in Rezvānšāhr. The research trips were carried out in two stages. During the first stage 19 villages were visited. Each of these visits was one or two days in length. During the second stage, we conducted more extensive research in 10 of the villages visited during stage one.

Depending on some non-linguistic phenomena, such as urbanization, industrialization, etc., not are gradually dying and pushed out, being replaced by Persian and AT³ caused by the linguistic environment however, they are still alive in Xalxāl showing a resisted transformation. The speakers of the Xalxāl dialect group can be divided into some subdivisions taking in to consideration the factors of age and geographical location:

- 1) The speakers, for whom the NAD are their mother tongue and who have no good command of Persian are forming the age group alter than 70 years old (Table 1).
- 2) The speakers, for whom NAD are a mother tongue as well but who speak also Persian and AT as there second or third language consisting of the group elder than 40 years old (Table 1).
- 3) The speakers who have a good command of NAD but who cannot figure out which language is their mother tongue — Persian or NAD⁴. Here we deal with people of 25-40 years old (See Table 1).
- 4) The speakers for whom Persian is a mother tongue but having also the NAD as their Fatersprache. This means that the NAD changed their assumption and are considered only as 'the language of our grandparents'. AT is not spoken widely. Here we are faced with people of 25 years old (Table 1).




Table 1. The diffusion of the languages in Xalxāl region, according to the speakers' age

³ The statement that Xalxāl is already a Turkic-speaking area, must be rejected (for details see G. Asatrian, V. Arakelova, 'Atrpatakani tyurk'ereni u tarack'i iranakan barbařarneri poxharaberutyunneri nerka vičakə Harzandat'i orinaki vra', *Orientalia*, vol. 16, (Yerevan, 2015), p. 19.

⁴ For these group AT, as well as NP, is a language of communication with neighboring villages and districts. That's why they speak AT fluently.

In now one of this groups AT is used as a vernacular language in intercommunity communication playing a role of a kind of linguafranca between the Xalxāli inhabitants and adjacent Turkic speaking villages.

Patterns Reported In Group Interviews

Reported patterns of language use in various physical domains were relatively uniform in homogenous NAD communities and are summarised in table 2. Where the languages are listed, the first is more prevalent.

Table 2. Reported Language Use in Physical Domains

NP	District Center School: Teachers/ Students, outside class School: In Class Kindergarten: Teachers/ Students, outside class Library Religious Ceremonies
AT	Outside Village Kindergarten A: In Class House of Culture Street Bazaar Store Tea House
NAD	Street Bazaar Mill Store Home Tea House
NAD/ AT/	Outside Village Street Bazaar Mill Library
NP/AT/ NAD	School: Students, outside class School: Teachers, outside class

	Kindergarten: Teachers, outside class Kindergarten: Students Tea House Post office Hospital/Clinic Store Home
--	---

In the cases two languages are spoken, the less prevalent language is only used when one of the individuals does not know the other one. This is especially seen among the children and in public locations. In kindergarten, children often do not know. AT well and therefore teachers use NAD and Persian to communicate. In public places like the post office, store, hospital, mosque, and bazaar, AT is used by the individuals who are not NAD speakers or greatly deal with Turkic-speaking neighbors.

Several individuals, especially educators, essentially summarized the use of language in these domains as follows. Persian is used in formal situations where nonlocal people are present, while NAD is used in informal situations when only local people are present. These two sets of conditions form ends of a continuum. Many situations fit between these two, having varying levels of formality or differing mixtures of individuals present at different times or under different circumstances. A combination of languages is used in these situations. The only domain that does not fit into this account is the home. The situation in the home is informal, and all the participants speak NAD. The explanation for the use of Persian in the home was that parents speak Persian with children to prepare them for school.

In the linguistically mixed communities, it was reported that only Persian is used in all locations except the home and the street. While NAD-speaking individuals used in the home and in the street, even they use Persian in these domains more frequently than do NAD-speaking individuals in homogenous communities. As was the case in physical domains of language use, its reported patterns in various functional domains were relatively

In now one of this groups AT is used as a vernacular language in intercommunity communication playing a role of a kind of lingua franca between the Xalxāli inhabitants and adjacent Turkic speaking villages.

Patterns Reported In Group Interviews

Reported patterns of language use in various physical domains were relatively uniform in homogenous NAD communities and are summarised in table 2. Where the languages are listed, the first is more prevalent.

Table 2. Reported Language Use in Physical Domains

NP	District Center School: Teachers/ Students, outside class School: In Class Kindergarten: Teachers/ Students, outside class Library Religious Ceremonies
AT	Outside Village Kindergarten A: In Class House of Culture Street Bazaar Store Tea House
NAD	Street Bazaar Mill Store Home Tea House
NAD/ AT/	Outside Village Street Bazaar Mill Library
NP/AT/ NAD	School: Students, outside class School: Teachers, outside class

	Kindergarten: Teachers, outside class Kindergarten: Students Tea House Post office Hospital/Clinic Store Home
--	---

In the cases two languages are spoken, the less prevalent language is only used when one of the individuals does not know the other one. This is especially seen among the children and in public locations. In kindergarten, children often do not know. AT well and therefore teachers use NAD and Persian to communicate. In public places like the post office, store, hospital, mosque, and bazaar, AT is used by the individuals who are not NAD speakers or greatly deal with Turkic-speaking neighbors.

Several individuals, especially educators, essentially summarized the use of language in these domains as follows. Persian is used in formal situations where nonlocal people are present, while NAD is used in informal situations when only local people are present. These two sets of conditions form ends of a continuum. Many situations fit between these two, having varying levels of formality or differing mixtures of individuals present at different times or under different circumstances. A combination of languages is used in these situations. The only domain that does not fit into this account is the home. The situation in the home is informal, and all the participants speak NAD. The explanation for the use of Persian in the home was that parents speak Persian with children to prepare them for school.

In the linguistically mixed communities, it was reported that only Persian is used in all locations except the home and the street. While NAD-speaking individuals used in the home and in the street, even they use Persian in these domains more frequently than do NAD-speaking individuals in homogenous communities. As was the case in physical domains of language use, its reported patterns in various functional domains were relatively

uniform in homogenous NAD communities. Among the linguistically mixed communities, common patterns were also reported. The reported patterns are summarized in table 3. Where two languages are used, the one that is less prevalent is indicated by a lower case '+'

Table 3: Reported Language Use in Functional Domains

Domains	Homogenous Communities			Mixed Communities		
	NAD	P	AT	NAD	P	AT
Outside Home/Work – Nonofficial	+	+	-	+	+	+
First Learned	+	+	-	+	+	+
Spoken Most Fluently	+	-	-	+	-	+
Arguing	+	+	-	+	-	+
Cursing	+	+	-	+	-	+
Outside Home/Work – Official	-	+	-	-	+	-
Easiest to Understand When Read	+	+	-	+	-	+
Read Most	-	-	-	-	+	+
Write Letters	-	+	-	-	+	+
Write Official Papers	-	+	-	-	+	-
Easiest to Write in	-	+	-	-	+	+
Singing	+	-	-	+	+	+
Listened to Most on Radio	-	+	+	-	+	+
TV Most Watched	-	+	+	-	+	+

All of the functional domains were said to be relevant for all sections of the population with three exceptions: 1) Men are reported to listen to radio more than women and adult men more so than those under 30. 2) Men are said to read slightly more than women. 3) Women are said to be less likely to participate in formal occasions outside of work and the home.

Similarly, adults are said to be more likely to participate in formal occasions than children.

Interdialectal differences

In Xalxāl region there are dialectal differences not only between villages and people of different ages, but even among the parts of the same village. Particularly, in the *mahalla* of Meliat, a district of Kolūr village, in the proverb *asbagafānakalaknāvare* 'there is no rain by order of a dog', the word *kalakis* translated as *rain*, but in the *mahalla* of Baney, another part of the same village, it means 'hail'. It is a very interesting linguistic case. According to linguistic rules, instead of *kalak* for the rain, there should be *vārān*, as in this dialect the initial *v-remains *v-, for example *kol.*, *drv.*, *shal.* *asb.*, *ask.* *vārān*, *vārān* 'rain', *lrd.*, *krn.* *Vārān* 'rain', *bevāriast* 'it is raining', *tal.* *voš.*, etc. <Ir. *var, kol. var<Ir. *vafra (OIYA 1991: 130)⁵:

This phenomenon (different words in different parts of the village) is also seen in other villages of Šahrūd, especially in its central village, Kolūr, which most likely, is the results of Kolūr's inhabitants' close relations with Persian and Turkic speaking population of the neighboring towns and villages and their linguistic impact. For example, in the *mahalla* of Upper district we have *berbinden* 'cut', *veškenja* 'sparrow', *nāngun* 'pinch', while for the same words in the *mahalla* of Lower district we have *bervinden*, *mešgenja*, and *andnāngur*. In the *mahalla* of Upper district of Gīlavān we meet *bohār* 'spring', and *andnāng* 'foot' and, on the contrary, in other three districts of the same village we have *vahār* and *lāng*:


It must be admitted that the second kind of the differences in each dialect is, most likely, result of the temporal historical development and not a regional difference. The older generation preserves more archaic types of vocabulary. For example, the expression *hāvr-on-eš-a* 'his sisters' in Gīlavān dialect is understood as the archaic form of the expression *hāv-on-eš-a*.

Taking into consideration all mentioned facts, it should be concluded that the New Azari dialects of Xalxāl region are preserved as an isle of Iranian

⁵ OIYA, vol.1, p. 101, Moscow, 1991.

speech controversy with the growing expansion of NP as the state language and AT as a kind of local lingua franca. Geographically, these dialects are surrounded by South Talyshi in East, Persian, AT and NAD of Zanjan in South, and AT dialects and Persian in West (see the map).

New Azari dialects of Xalxāl and neighboring languages



ՈՐՈՇ ՆՎԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԽԱԼԽԱԼԻ ՇՐՋԱՆԻ
ՀԱՆՐԱՆԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարդանյան Ահարոն
(Ամփոփում)

Հոդվածը նվիրված է Իրանի Իսլամական Հանրապետության Արդաբիլ նահապի Խալխալի շրջանի Շահռուդ գավառակում հանրալեզվաբանական (sociolinguistic) իրավիճակին: 2013-2014 թթ. նշված տարածքներում մեր կողմից կատարված դաշտային

աշխատանքների արդյունքում հավաքվել և փաստագրվել է հարուստ լեզվական և ազգագրական նյութ: Խալխալի շրջանում, հատկապես Շահռուդ գավառակում, թյուրքական բարբառները տարածված չեն: Չավառակն ունի 34 գյուղ, որոնցից 19 (Ասբու, Ասքեստան, Դերավ, Զորար, Շալ, Դիգ, Խշլաղ-է Դիգ, Գիլավան, Խշլաղ-է Գիլավան, Խանեղահ-է Գիլավան, Քարին, Լերդ, Թիլ, Քեհեյ, Քեհեյ դաշտ, Զահարոն դաշտ, Գըլավոզան, Գյանդոմաբադ, Դեյլամաբադ) գյուղերից հավաքվել և ուսումնասիրվել են համապատասխան կաթերը: Վստահաբար կարելի է ասել, որ վերոնշյալ 19 գյուղերի բնակիչները խոսում են իրենց մայրենի լեզվով՝ տեղի նոր ազարիական խոսվածքներով և պարսկերենով:

НЕКОТОРЫЕ ЗАМЕТКИ ОБ
СОЦИОЛИНГВИСТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ
В ОБЛАСТЕ XALXĀL

Варданян Ахарон
(Резюме)

Эта статья посвящена социолингвистической ситуации в регионе Халхал. В ней обсуждаются различные проявления языка между разными группами людей по их возрасту. Некоторые различия присутствуют и в разных частях того же села. И так, можно сделать вывод, что мы не можем говорить о полной тюркизации этого региона. Несмотря на то, что тюркский язык распространен здесь (в большей части среди людей до 25 лет), это не доминирующий язык, и население Халхала говорит на своем родном языке, новоазарийском диалекте. Все материалы в статье собраны во время полевых работ автора в 2013-2014 гг.

Տոնոյան Արսոյով

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ ԲՈՒՆ ԱՊԱՌՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ¹

Բանայի բառեր՝ Կովկասյան պարսկերեն, իրանական բարբառագիտություն, Ապշերոնի բարբառ, բուն ապառնի, տիպաբանություն, քերականացում, արեալային շփումներ

Կովկասյան պարսկերենի տարբեր բարբառներում ապառնի ժամանակն² արտահայտվում է տարբեր միջոցներով: Անջատված լինելով պարսկերենի՝ միջինից վաղ դասական փուլին անցման շրջանից՝ կովկասյան պարսկերենը մի կողմից պահել է սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի կրած իմաստային լիցքը, որը թե՛ միջին պարսկերենում և թե՛ վաղ դասական պարսկերենում միաժամանակ արտահայտում էր նաև ապագայում ստուգապես կատարվելիք գործողության իմաստ և, փաստացիորեն լինելով սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևի արտահայտման միակ միջոցը³՝ մասնագետների

^{*} ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, Բ.Գ.Թ., artyom.tonoyan@ysu.am

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18Տ-6Ֆ376 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² «Ապառնի» եզրն այստեղ գործածված է երեք համընդհանուր ժամանակների՝ անցյալի, ներկայի և ապառնիի՝ միմյանց հանդեպ ունեցած ժամանակային հակադրության իմաստով՝ մի կողմ թողնելով բայի եղանակային և ժամանակային քերական կարգերում սրա բոլոր դրսևորումները:

³ Չնայած ժամանակակից պարսկերենում կա սահմանական եղանակի ապառնի ժամանակի արտահայտման համար հատուկ կառույց, որը կազմվում է ըզձական ապառնի ժամանակաձևում x*astan «ուզել, ցանկանալ, կամենալ» եղանակավորող բայի խոնարհումից և հիմնական բայի հատած անորոշ դերբայից, սակայն

կողմից անվանվել է ներկա-ապառնի ժամանակ⁴՝ իսկ մյուս կողմից այս լեզվին անձանոթ է դասական պարսկերենի սահմանական եղանակի բուն ապառնիի կառույցը, որ կազմվում է x*astan եղանակավորող բայի օգնությամբ: Սա ինքնին քերականական նորաբանություն էր դասական պարսկերենում⁵, քանի որ նշված եղանակավորող բայն իր ծագման նախնական շրջանում թերևս կատարել է միայն եղանակավորող բայի գործառույթ⁶, և սրա, որպես բայի հստակ ժամանակաձև,

սահմանական ապառնու իմաստի արտահայտման՝ միջին և դասական պարսկերեններից եկող պատմական ձևը (mi (< me < hame) բայական ետխամասնիկ + բայի ներկայի հիմք + դիմային վերջավորություններ), պահպանվում է նաև ժամանակակից պարսկերենում, ինչպես օր.՝ miravam «գնում եմ», «կգնամ», որոշ դեպքերում նաև՝ «գնալու եմ»:

⁴ Расторгуева В., Среднеперсидский язык, Москва, 1966, с. 92; Ефимов В., Расторгуева В., Шарова Е., Персидский, таджикский, дари, в кн.: Основы иранского языкознания. Новоиранские языки: западная группа, прикаспийские языки (отв. ред. Расторгуева В.), Москва, 1982, с. 155.

⁵ Ապառնիի արտահայտման եղանակային ձևերից անցումը ապառնի ժամանակի քերականական կարգի նորաբանություն է ոչ միայն դասական պարսկերենի համար: Հր. Աճառյանը այս առթիվ գրում է. «Ներկան և անցյալը իբրև իրողություն, որոշ օբյեկտիվ գաղափարներ են, բայց ապառնին իբրև չեղած, զուցե և չլինելիք մի բան, միշտ եեթակա է որոշ վերապահության: ... Ամեն լեզվի մեջ էլ կա ներկա և անցյալ ձև, բայց նույնիսկ հարուստ խոնարհունք ունեցող լեզուների մեջ պատահում է, որ ապառնին հատուկ ձև չունենա, ինչպես սեմական լեզուներում, գոթերենում, հին գերմաներենում և այլն» (Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, մաս Բ, Երևան, 1961, էջ 119-120):

⁶ Այս համատեքստում պրակ. x*astan եղանակավորող բայի օգնությամբ սահմանական եղանակի բուն ապառնի ժամանակաձևի կազմությունը տիպաբանական ընդհանրություն ունի անգլերենի հետ, որտեղ երկրորդ և երրորդ դեմքերում սահմանական ապառնին կազմվում է will «ուզել, ցանկանալ» եղանակավորող բայի օգնությամբ, և այս ձևն անգլերենում նախապես չի ընկալվել որպես ապառնիի ժամանակաձև (մանրամասն տե՛ս Գաբրիելյան Վ., «Ապառնի ժամանակը և եղանակավորությունը անգլերենում և հայերենում», Լրաբեր հասարակական գիտությունների, 1993 (4), էջ 82-96): Պարսկերենում ապառնու կազմության այս կառույցն Աճառյանը համեմատել է միջին հայերենում գործածական կամիմ + անորոշ դերբայ կառույցի հետ, ապա նաև լատ. volo և

քերականացման գործընթացը նույնիսկ դեռ 16-րդ դարում վերջնականապես ավարտված չէր⁷: Կովկասյան պարսկերենը չունի ապառնի ժամանակի արտահայտման որևէ միջոց, որն ընդհանուր կլիներ այս լեզվի բոլոր բարբառների համար: Տարածված լինելով աշխարհագրական տարբեր միջավայրերում, հետևաբար ենթարկվելով տարբեր լեզվական ազդեցությունների՝ կովկասյան պարսկերենի բարբառները հանդես են բերել ապառնիի արտահայտման տարբեր միջոցներ, որոնք իրենց խայտաբղետությամբ, թվում է, հարևանությամբ խոսված այն լեզուների դրոշմներն են, որոնց հետ կովկասյան պարսիկներն ունեցել են և որոշների հետ այժմ էլ ունեն շատ մերձ լեզվական շփումներ: Ապառնի ժամանակի արտահայտման ձևերն, ըստ այս լեզվի բարբառների, այնքան տարբեր են, որ առաջարկվել է նույնիսկ այն սահմանել որպես քերականական տարբերակիչ՝ ի շարս այլ քերականական, հնչյունական և բառային տարբերակիչների, որոնք հարկ է եղել կիրառել կովկասյան պարսկերենի բարբառային բաժանումն իրականացնելիս⁸:

Դասական պարսկերենի սահմանական եղանակի ներկա-ապառնի ժամանակաձևը ժառանգել են կովկասյան պարսկերենի բոլոր բարբառայինները, մի տարբերությամբ, որ ժամանակի

անզլ. I will ձևերի հետ (Աճառյան 1961, նշվ. աշխ., էջ 131): Եթե ճիշտ է այն տեսակետը, համաձայն որի հայերենի «կը» եղանակիչը սերում է գրաբարյան «կամիմ» եղանակավորող բայից և առաջին անգամ «կու» տեսքով վկայված է 10-րդ դարում Կեղծ Շապուհ Բագրատունու պատմության մեջ (մանրամասն տե՛ս Մարգարյան Ա., «Կը» եղանակիչի ծագման մասին», Պատմա-բանասիրական հանդես, 1961(1), էջ 162), ապա հետաքրքիր ժամանակագրական համընկնում կա հայերենի «կամիմ» և պարսկերենի x^aaāstan «կամենալ, ուզել» բայերի քերականացման գործընթացի սկզբնավորման հետ կապված, որը կարող է դառնալ առանձին հետազոտության առարկա:

⁷ Lenepveu-Hotz A., Étude diachronique du système verbal persan (Xe-XVIIe siècles): d'un équilibre à l'autre (dissertation), Paris, 2012, p. 240.

⁸Տոնոյան Ա., Կովկասյան պարսկերեն. պատմահամեմատական ուսումնասիրություն (թեկն. ատենախոսություն), Երևան, 2015, էջ 21, (անստիպ):

ընթացքում, ներկայում կատարվող, տեղի ունեցող, ընթացքի մեջ գտնվող գործողությունների արտահայտման համար ստեղծելով նոր կառույցներ, պահպանել են միայն դրա երկրորդ՝ ենթադրական եղանակի արտահայտման գործառույթը, ինչպես օր.՝ դեմ. *pir mikufum* «կթոնեմ»⁹, մադր. *mevagenem* «կվերցնեմ», զոնադ. *mizanüm* «կխփեմ» և այլն: Դասական պարսկերենում վկայված է նաև սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի կազմության մի ձև, երբ բայի ներկայի հիմքին նախորդում են միաժամանակ երկու բայական նախամասնիկներ՝ *hamē-* և *bi-*, ինչպես օր.՝ *Hamē bitarsam ki mabādā dēv ma-rā vasvasa kunaδ* «Վախենում եմ, որ Աստված չանի՝ դնն ինձ զայթակղի»¹⁰: Ընդ որում, ըստ Ժ. Լազարի, այս ձևն ունեցել է երկու հիմնական գործառույթ՝ մատնանշելով.

- ա) տվյալ պահին կատարվող, ընթացող գործողություն¹¹,
- բ) մոտ ապագայում կատարվելիք գործողություն¹²:

⁹ Սույն հոդվածում կովկասյան պարսկերենի տարբեր բարբառների և խոսվածքների համար կիրառվել են հետևյալն հապավումները՝ դեմ.՝ Դեմիրչիի խոսվ., մադր.՝ Մադրասայի բբբռ., զոնադ.՝ Դոնադքենդի խոսվ., ապշ.՝ Ապշերոնի բարբառախումբ, սուր.՝ Սուրախանիի խոսվածք:


¹⁰ Lazard G., La langue des plus anciens monuments de la prose persane, Paris, 1963, p. 284.

¹¹ Հնավանդ այս ձևը պահպանել է դասական պարսկերենի իր հիմնական գործառույթը (սահմանական եղանակի ներկա-ապառնի ժամանակաձևի կազմություն) տաջիկերենում երկու՝ *omadan* և *ovardan* բայերի դեպքում, ինչպես *mebiyoyad* «գալիս է, կգա» կամ *mebiyorad* «բերում է, կբերի» (տե՛ս Семенов А., Краткий грамматический очерк таджикского языка, Ташкент, 1927, с. 9), իսկ միայն հարկադրական ապառնու կազմության գործառույթով արձանագրված է Ֆերդանայի և Իսթարավշանի (նախկ. Ուրա-Թյուրե) տաջիկական բարբառներում դարձյալ որոշ բայերի դեպքում, ինչպես օր.՝ *mebiravam* «գնալու եմ, պետք է գնամ» (տե՛ս Розенфельд А., Глагол. Очерки по грамматике современного таджикского языка, Сталинабад, 1953, с. 20):

¹² Lazard G., op. cit., p. 284-285.

Կովկասյան պարսկերենի՝ Ապշերոնի և Մադրասայի բարբառներում ապառնի ժամանակն արտահայտող քերականական ձևերն ամենայն հավանականությամբ գալիս են դասական պարսկերենի նշված կաղապարից՝ երկու բարբառներում հանդես բերելով տարբեր հնչյունական դրսևորումներ (տե՛ս գր. 1):

Գրաֆիկ 1



Ի տարբերություն ապշերոնյան բարբառախմբի՝ Մադրասայի բարբառում ապառնի կազմության այս ձևը կիրառվում է ոչ բոլոր բայերի դեպքում, մասնավորապես այս ձևով բուն ապառնի ժամանակաձև կազմելուց դուրս են մնում բոլոր նախածանցավոր բայերը, և երբեմն նաև պարզ և բաղադրյալ բայերը, որոնք ապառնի ժամանակաձևը կազմում են պարզապես *me* նախամասնիկի միջոցով, ինչպես օր.՝ *meduzum* «կարելու են», *mevinem* «տեսնելու են», *megardem* «փնտրելու են», *mevagenem* «վերցնելու են»:

Meb-//mebi-//mebü- նախածանցային կապակցության փոխարեն *me-* ձևի գործածությունը ապառնու կազմության ժամանակ Մադրասայի բարբառում, կարող է բացատրվել *bi-*(/i-) բայական նախամասնիկի անկմամբ բոլոր բաղաձայնասկիզբ

բայերի դեպքում, բացառությամբ *r-* և *k-* բաղաձայնով սկսվող որոշ պարզ բայերի, ինչպես օրինակ՝ *mebükšüm* «սպանելու են», *mebükünüm* «շինելու են (հայիոյանք)», *mebram* «գնալու են» և այլն: Զախավորասկիզբ բայերի դեպքում *mebi-/mebü-* կապակցության մեջ *bi-/bü-* նախամասնիկը պահպանվում է առանց բացառության, ինչպես օրինակ *mebofum* «գտնելու են» (տե՛ս աղ. 1), *mebiom* «գալու են», *mebiarund* «բերելու են» և այլն¹³:

Ապշերոնի և Մադրասայի բարբառներում դասական պարսկերենի սահմանական ներկայի այս երկրորդ գործառույթը ժամանակի ընթացքում ձեռք է բերել բացարձակ ապառնիի հատկություն և այժմ գործածվում է ապագայում ստուգապես կատարվելիք գործողություն ցույց տալու համար (տե՛ս աղ. 1):

Աղյուսակ 1

		Մադրասայի բարբառ		Ապշերոնյան բարբառ ¹⁴	
bq	1	mebofum «գտնելու են»	գտնել	yebsaxum «անելու են»	saxtan - անել
	2	mebofi «գտնելու են»	oftan	yebsaxi «անելու են»	

¹³ Ս. Ղալթախյանը կովկասյան պարսկերենի Մադրասայի բարբառին նվիրված իր առեկախոսության մեջ նշում է, որ այստեղ սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևը կազմվում է *me-* բայական նախամասնիկի օգնությամբ՝ չիճատակելով *me-* + *b(i-/ü-)* կաղապարի որևէ օրինակ, որի արդյունքում դասական պարսկերենից եկող հնավանդ այս կառույցի առկայությունը հեղինակի մոտ մնացել է աննկատ (տե՛ս Калтачян С., Татский язык матрасинцев, автореф. диссер., Ереван 1972, с. 13):

¹⁴ Օրինակները բերված են ապշերոնյան բարբառախմբի Սուրախանիի խոսվածքից (բանասաց Շահին Ռզան, ծնված 22.04.1965 թ. ներկայիս ԱՀ Յենի Սուրախանի ավանում: Նյութը գրառվել է 02.03.2016 թ.):

	3	mebofu «գտնելու է»		yepsaxü «անելու է»
Հոգն.	1	mebofink «գտնելու ենք»		yepsaxim «անելու ենք»
	2	mebofind «գտնելու եք»		yepsaxind «անելու եք»
	3	mebofund «գտնելու են»		yepsaxünd «անելու են»

Սա մի դեպք է, որ երկու բարբառների ուսումնասիրողների կողմից երբևէ չի նկատվել, ավելին՝ տրվել են սխալ մեկնաբանություններ: Մասնավորապես Գ. Հուսեյնովան նշում է, որ թաթերենի ապշերոնյան բարբառախմբում ապառնի ժամանակը կազմվում է բայահիմքին *i-* մասնիկի նախահավելմամբ, ինչպես օր.՝ *iburom* «զնալու են», *ibirey* «զնալու ես», *ibirov* «զնալու է»¹⁵, իսկ ըստ Իլ. Բերեզինի՝ Ապշերոնի բարբառում ապառնին կազմվում է *bi-* բայական նախամասնիկի հավելմամբ¹⁶: Ընդհանուր առմամբ, եթե Մադրասայի բարբառի դեպքում կա բավական տեսանելի հնչյունական կապ դասական պարսկերենի համապատասխան ձևի հետ, ապա ապշերոնյան բարբառում հանդիպող ձևը կարիք ունի որոշակի մեկնաբանության: Ի տարբերություն Մադրասայի բարբառի, որտեղ դասական պարսկերենի շարունակականություն հաղորդող *hamē* բայական նախամասնիկը ժամանակի ընթացքում, ինչպես ուշ դասական, ապա և ժամանակակից պարսկերենում դարձել է *mē-/mī-*՝ Սուրախանիի խոսվածքում այն ենթարկվել է այլ

հնչյունական զարգացման՝ դառնալով նախ *em-* (*me-* ձևի պրոֆոնոլոգիայով), հետո՝ *e-*, ապա՝ *ye-* (*em > e > ye*)¹⁷:

Արիսթյուշի և Դադրուշիի կենտրոնական թաթական բարբառներում և սրանց համեմատաբար մոտ տարածվող նորսիսային բարբառախմբի որոշ խոսվածքներում (Գենդաբ, Ղզրասանգ, Քունչալ, Չարադ) բուն ապառնին կազմվում է ապառնու դերբային ներկայի դիմային վերջավորությունների հավելմամբ¹⁸, ընդ որում այս կառույցն ունի լայն կիրառություն նաև հրեական թաթերենում¹⁹ (տե՛ս աղ. 2): Ապառնու դերբայը, կենտրոնական թաթական բարբառներում կազմվում է անորոշ դերբային ածականակերտ *-i* (< դաս. պրսկ. *-ī* < միջ. պրսկ. *-īg*) վերջածանցի հավելմամբ²⁰, և ապառնու կազմության այս եղանակը աֆալաբանական ընդհանրություն ունի Ղարաբաղի բարբառի

¹⁵ Հովկասյան պարսկերենի տարբեր բարբառներում *mi-* (< դաս. պրսկ. *mē-*) բարբառական նախամասնիկը վկայված է *ma -//me-//mū //mu-//mī-* ձևերով, իսկ եթե նախորդում է շրթնային բաղաձայնի, ապա՝ *im-, um-, -im, in-, un-, ām-, ān-* (Մրոնբերգ Ա., «Система глагола в татском языке», Иранский сборник, (К десятилетиям проф. И. И. Зарубина), Москва, 1963, с. 129), ինչպես օր.՝ *imbardan* «տանում է», *imbošu* «լինում է» և այլն: Սուրախանիի խոսվածքի դեպքում *-mb-* բաղաձայնական խմբի պարզեցման հետևանքով տեղի է ունեցել երկշրթնային բաղաձայններից մեկի՝ *m-* ի անկում, որի արդյունքում, օրինակ, **mbsaxūm > *ebsaxūm > yepsaxūm* «անելու են»:

¹⁶ Չուպած Ալ. Գրյունբերգը նշում է, որ այս բարբառներում ապառնին կազմվում է կամ անորոշ դերբայի կամ ապառնի դերբայի օգնությամբ, սակայն, ենթադրաբար, ընդլի զարգացման ընթացքում ապառնու՝ *-i* դերբայակերտի սղման արդյունքում մեթաֆորական տեսքի փոփոխությունը և համընկնումը անորոշ դերբայի հետ շփոթի պատճառ է դարձել Ալ. Գրյունբերգի համար: Սա հաստատվում է նույնիսկ նեց Գրյունբերգի բերած օրինակներով, որտեղ եզակի թվի երկրորդ դերբում եղված է երկու ձևի միաժամանակ գործածություն՝ *raftani // raftaniyi* «զնալու ես» (Մրոնբերգ Ա., указ. раб., էջ 71):

¹⁷ Authier G., Grammaire juhuri, ou judéo-tat, langue iranienne des Juifs du Caucase de Test, Wiesbaden, 2012, p. 95.

¹⁸ Համապատասխանում է հայերենի *-ական, -ային, -յան* ածականակերտ վերջածանցներին:

¹⁵ Hüseynova G., Lahic tatların dili, Bakı, 2002, s. 109.

¹⁶ Beresine I., Recherches sur les Dialectes Persans, Casan, 1853, p. 13.

սահմանական եղանակի ապառնիի կազմության հետ²¹ (տե՛ս աղ. 2):

Աղյուսակ 2

Դեմք	Թիվ	Գենտրոն. բարբառ	Հյուսիս. դրոշ խոսվ.	Հրեական թաթերեն	Ղարաբաղի բարբառ
Եզ.	1	Rāftanüm	Rāftanim	Soxdeninüm	մրոնըլակա ն ըմ
	2	rāftaniyi / raftani	Rāftanind	Soxdenini	մրոնըլակա ն ըս
	3	Rāftanü	Rāftanünd	Soxdenini	մրոնըլակա ն ա
Հնդկ.	1	Rāftanim	Rāftaniyim	Soxdeninim	մրոնըլակա ն ընք
	2	Rāftanind	Rāftanind	Soxdeninit	մրոնըլակա ն ըք
	3	rāftanünd	Rāftanund	Soxdeninüt	մրոնըլակա ն ըն

Աղբբեջաներենում *-malı/-məli* բայական ածանցով ապառնու դերբայից կազմվող հարկադրական եղանակը նույնպես տիպաբանական ընդհանրություն կարող է ունենալ աղյուսակում բերված ձևերի, հետ, եթե ճիշտ է այն վարկածը, ըստ որի թյուրքական լեզուների օղուզական խմբում հանդիպող հարկադրականության *-malı* բայածանցը բայանվանակերտ *ma-* և պատկանելության *li-/liq-* ցուցիչների բաղաբկման արդյունքում առաջացած ձև է²²:

²¹ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940: 315; Ղազարյան Լ., Պարսկերենի և հայերենի բայական համակարգերի գուգադրական քննություն (ատենախոսություն), Երևան, 2004, էջ 84-85, (անստիպ):

²² Тенишев Э. (глав. ред.), Сравнительно-историческая грамматика тюркских языков: морфология, Москва, 1988, с. 357-358: Թյուրքական լեզուների և կովկասյան պարսկերենի միջև նկարագրված տիպաբանական կապի գոյության

Ապառնու կազմության երրորդ տիպը, որը գործածական է բաթերենի Լահիջի և հյուսիսային բարբառախմբերում, կազմվում է հարկադրական եղանակ արտահայտող *bayistan* «պետք լինել, անհրաժեշտ լինել» բայի հնչյունական տարբեր ձևերից, ինչպես՝ *bistan, bista, basta, sa, san*²³ և հիմնական բայի ստորադասական եղանակի ներկա ժամանակաձևով խոնարհումից (տե՛ս աղ. 3): Կովկասյան պարսկերենի Լահիջի և Ղուբայի բարբառախմբերում բուն ապառնի ժամանակը առաջացել է նախնական փուլում տվյալ ժամանակաձևի իմաստն արտահայտող եղանակավորող բայի քերականացման ճանապարհով, այլ կերպ ասած տեղի է ունեցել հարկադրական եղանակի միաձուլում սահմանական եղանակի հետ, և լեզվի զարգացման արդի փուլում բարբառակիրների կողմից պատմականորեն հարկադրականություն նշող այս կառույցն այլևս ընկալվում է բացարձակ ապառնու իմաստով, իսկ հարկադրական եղանակի արտահայտման համար կիրառվում են այլ միջոցներ²⁴:

հնարավորությունն առաջին անգամ նկատել է բ.գ.թ., դոց. Վ. Ոսկանյանը 2016թ., ֆեետրվարին՝ մի քննարկման ժամանակ:

²³ Грюнберг А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963, с. 71.

²⁴ Հարկադրական եղանակը Լահիջի բարբառում արտահայտվում է երկու եղանակով: Առաջինն՝ աղբբեջաներեն *gəɾək* «պետք, անհրաժեշտ» եղանակավորող բառի, իսկ երկրորդը ապառնու դերբայի միջոցով է կազմվում (Hüseynova G., նշվ. աշխ., էջ 112-113), որը ձևաբանական տեսքով համընկնում է կենտրոնական թաթական բարբառների բուն ապառնի ժամանակի հետ: Մա թույլ է տալիս ենթադրել, որ կենտրոնական թաթական բարբառներում ևս բուն ապառնի ժամանակը ձևավորվել է հարկադրական եղանակի հիմքի վրա: Իսկ Մադրասայի թաթախոս հայերի լեզվում այն արտահայտվում է *mistir* եղանակավորող բայի օգնությամբ, որն, ըստ ամենայնի, հանգում է դաս. պրակ. *mibäyestid* «պետք է, անհրաժեշտ է» հարկադրական եղանակ արտահայտող բային, որտեղից միջնակականի հավելմամբ նախ՝ **mistid*, ապա լեզվում գործող ռոտացիզմի անշեղ կանոնով՝ *mistir*:

Աղյուսակ 3

Թիվ	Դեմք	Լահիջ ²⁵	Ղուրա (Ղոնաղքենդ)
Եզ.	1	san jürüm «փնտրելու են»	bistan buram «զնալու են»
	2	san jüri «փնտրելու են»	bistan buroyi «զնալու են»
	3	san jüri «փնտրելու է»	bistan buray «զնալու է»
Հոգվ.	1	san jürim «փնտրելու ենք»	bistan burayim «զնալու ենք»
	2	san jürind «փնտրելու էք»	bistan burayind «զնալու էք»
	3	san jürund «փնտրելու են»	bistan burayund «զնալու են»

Սահմանական ապառնու կազմության նման տիպաբանությունը հաստուկ է նաև արևմտահայկական բարբառներին, որոնցում «պեսոք է, պիտի» եղանակիչը չունի հարկադրականության իմաստ²⁶, այլ գործածվում է միայն ապառնու իմաստով, ընդ որում բառը առանց հնչյունական փոփոխության պահել են Վանի, Կարինի և Սշո բարբառները²⁷: Տարբեր, այդ թվում և արևելահայկական որոշ բարբառներ պահպանում են սրա կրճատված ձևը, ինչպես *պիտ, պի, տի, պ, տ*

²⁵ Hüseynova G., նշվ. աշխ., էջ 109:

²⁶ «Պիտի» բառի եղանակիչ իմաստով կիրառությունները թե արևմտահայ և թե արևելահայ գրական լեզուներ անցել են միջին հայերենից իմաստային մի տարբերությամբ. առաջինում պիտի + դիմավոր բայ կառույցը պարզապես ապառնի է ցույց տալիս, իսկ երկրորդում՝ արևելահայ գրականում՝ պարտավորական, հարկադրական իմաստ է արտահայտում (Անթույան Ս., «Աշխարհաբարի ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների առաջացումն ու զարգացումը», Լրաբեր հասարակական գիտությունների, 1974 (10), էջ 52):

²⁷ Աճառյան 1961, նշվ. աշխ., 139:

ն այլն²⁸: Հետաքրքիր է, որ արևելահայկական բարբառներից Լոռվա և Շամշադին-Դիլիջանի խոսվածքներում *պիտիմ, պիտիս, պիտի, պիտինք ...* ձևերը կրճատվելով դառնում են *դեմ, դես, դի, դենք, դեք, դեն* (տես աղ. 4):

Աղյուսակ 4

«Պիտի» եղանակավորող բայով ապառնի ժամանակվածը արևմտահայկական և արևելահայկական բարբառներում ²⁹					
Թիվ	Դեմք	Սշո բարբառ	Կարնո բարբառ	Շամշադին- Դիլիջանի խոսվածք	Լոռու խոսվածք
Եզ.	1	բըդի կարիմ	պիդի աշեմ	հաքնիլ դեմ	հաքնիլ տեմ
	2	բըդի կարիս	պիդի աշես	հասնիլ դես	հաքնիլ տես
	3	բըդի կարե	պիդի աշե	հասնիլ դի	հաքնիլ տի
Հոգվ.	1	բըդի կարինք	պիդի աշենք	հասնիլ դենք	հաքնիլ տենք
	2	բըդի կարիք	պիդի աշեք	հասնիլ դեք	հաքնիլ տեք
	3	բըդի կարին	պիդի աշեն	հասնիլ դեն	հաքնիլ տեն

²⁸ Անթույան Ս., նույն տեղում:

²⁹ Հայ բարբառագետների մի մասը «պիտի» եղանակավորող բայով կազմված կառույցները խնդր առարկա բարբառներում ներկայացրել են հարկադրական եղանակի տակ (տե՛ս Մեծունց Բ., Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Երևան, 1989, էջ 97; Ասատրյան Ս., Լոռու խոսվածքը, Երևան, 1968, էջ 132; Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Երևան 1952, էջ 74 նն), իսկ որոշ բարբառագետներ ներկայացրել են սահմանական եղանակի տակ (տե՛ս, օրինակ, Բաղդասարյան – Թափալցյան Ս., Սշո բարբառը, Երևան 1958, էջ 129):

Դժվար է բացատրել, թե կովկասյան պարսկերենի և հայկական բարբառների միջև տիպաբանական այս ընդհանրությունն ինչ ճանապարհով է առաջացել. համենայն դեպս այս լեզուների հարևանությամբ տարածված թե թյուրքական լեզուներում և թե պարսկերենում, կան ապառնիի կազմության ինքնուրույն միջոցներ, և պրսկ. *bāyad* եղանակիչով և թուրք. *mal-/meli-* «պիտի» բայածանցով կառույցները կարող են փոխանցել ապառնու իմաստ այս լեզուներում ճիշտ այնքան, որքան «պետք է պիտի» բառերը արևելահայերեն գրական լեզվում: Համենայն դեպս «պիտիս» եղանակիչից նշված բոլոր ձևերի հնչյունական տեսքերի և համապատասխան գործառույթների առաջացումը հայերենում տեղի է ունեցել բավական տևական գործընթացների արդյունքում, և պետք է հաշվի առնել, որ «պիտի» բառի բարբառային մաշված տարբերակներից մեկը՝ «տի»-ն ունի վկայություններ նույնիսկ դեռևս միջին հայերենում, մասնավորապես գործ է ածված այդ տեսքով Վ. Այգեկցու (XII-XIII դդ.), Մ. Նաղաշի (XV դ.) և Հ. Թլկուրանցու (XIV-XV դդ.) մոտ³⁰:

Ընդհանրացնելով պետք է ասել, որ կովկասյան պարսկերենի տարբեր բարբառները, տարածված լինելով միմյանցից հեռու, հաճախ առանձին կոզյակների տեսքով, բուն ապառնի ժամանակաձևի իմաստը փոխանցում են տարբեր միջոցներով: Լեզուն իր որոշ բարբառներում կարողացել է պահել բնիկ ձևեր, որոնք նույնիսկ չեն պահպանվել ժամանակակից պարսկերենում, բայց մյուս կողմից համալրվել է ապառնի ժամանակի արտահայտման նոր միջոցներով, որոնք պամանավորված են թե լեզվի ներքին զարգացման օրինաչափություններով, և թե

³⁰ Մարգարյան Ա., նշվ. աշխ., 170-171:

արտաքին ազդեցություններով: Կովկասյան պարսկերենում բուն ապառնու կազմության 3 հիմնական տիպ է առանձնանում՝

1. Դասական պարսկերենին հանգող հնավանդ ձև *hamē- + be-* բայական նախդիրների համատեղ գործածությամբ կառույց,
2. ապառնի դերբայով կազմության ձև, որը տիպաբանորեն ընդհանրական է միաժամանակ նաև պարսկերենի, թյուրքական լեզուների և հայկական որոշ բարբառների հետ,
3. հարկադրականություն արտահայտող *bāyistan* «պետք լինել» եղանակավոր բայի քերականացում, որն իր հերթին տիպաբանորեն ընդհանուր է հայկական որոշ բարբառների հարկադրական ապառնու կազմության համապատասխան կառույցի հետ:

Ապառնու կազմության կովկասյան պարսկերենի այս խայտաբղետ քարտեզը հաստատում է խնդրո առարկա լեզվի առումնասիրության գործում տիպաբանական համեմատությունների մեթոդի կարևորությունը: Ի շարս հնչյունական և բառային միջոցների, սա նոր հետաքրքիր քերականական ապացույց է այն բանի, որ կովկասյան պարսկերենը անջատվել է պարսկերենի վաղ դասական փուլից, երբ *x'āstan* բայը պարսկերենում ուներ միայն եղանակավորող բայի գործառույթ և որպես սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևի կազմության անբաժան միավոր դեռևս քերականացած չէր, և սա է պատճառը, որ կովկասյան պարսկերենում չունենք այս բայով ապառնիի կազմության և ոչ մի զեպ:

**ON SOME PECULIARITIES OF THE FORMATION OF
CATEGORICAL FUTURE TENSE IN CAUCASIAN PERSIAN
LANGUAGE**

**Tonoyan Artyom
(Summary)**

This article discusses some aspects of different structural formations of the categorical future in the Caucasian-Persian (Tati) language. The relations of some structures of Iranian origin with those of Classic Persian are revealed by applying the historical-comparative method. The fact, that in the late Classical Persian the verb *x'āstan* was used in the formation of the future tense of indicative mood while that verb doesn't have this function in the Caucasian-Persian language, proves that Tati language has separated from the Persian continuum in the early classical period. The comparative studies bring out typological identities between some future tense structures in the Tati language and other languages of the region, particularly in Persian, Turkic languages and a number of Armenian dialects.

**О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ОБРАЗОВАНИЯ
КАТЕГОРИЧЕСКОГО БУДУЩЕГО ВРЕМЕНИ В КАВКАЗСКО-
ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ**

**Тоноян Артем
(Резюме)**

В статье рассматриваются некоторые аспекты разных структурных образований категорического будущего времени в кавказско-персидском языке. Применением историко-сравнительного метода выявлены связи некоторых структур иранского происхождения с классическим персидским. Фактом отсутствия грамматизации модального глагола *x'āstan* в татском языке при образовании будущего времени было обосновано доказательство выделения татского от общеперсидского континуума в раннем этапе классического периода, когда еще *x'āstan* имел только модальное использование. В результате сопоставительного исследования некоторые структуры образования будущего времени в татском языке оказались типологически едиными для других языков региона, в особенности – для персидского, тюркских языков и ряда армянских диалектов.

*Բիանջյան Հասմիկ**

**ՄԵՅՅԵՂ ՄՈՂԱՄՄԱՂ ԱԼԻ ՋԱՄԱԼՋԱՂԵԻ ԴԵՐՈՂ 19-Դ ԴԱՐԻ
ՎԵՐՋԻ և 20-Դ ԴԱՐԻ ՄԿՋԲԻ ՊԱՐՄԻՑ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՎԻ
ՆՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

*Բանալի բառեր՝ պարսից գրական լեզվի նորացում,
առավորական շարժում, Մոհամմադ Ալի Ջամալզադե, նոր
գրականության զարգացման մանիֆեստը, ժողովրդա-խոսակցական
լեզու, նովելի ժանրի հիմնադիր*

19-րդ դարի վերջին քառորդում Իրանում առաջադեմ առավորականության առջև ծառայան նոր խնդիրներ. այս խնդիրների լուծումներն էլ իրենց հերթին գեղարվեստական առեղծագործության լեզվի, ոճի և ձևի փոփոխության ահիբաժեշտություն առաջացրեցին: Սակայն հին գրականության նորին անցնելու գործընթացն այնքան էլ հեշտ չէր, քանի որ խնդիր կար, օգտագործելով գրականության հին ավանդույթները, առեղծել նորը՝ հնարավորինս մոտեցնելով այն արևմտաեվրոպական գրականությանը: Իրանցի գրողները ձգտում էին առաջին հերթին մաքրել գրական պարսկերենն արաբիզմներից, մոտեցնել ժողովրդական լեզվին: Հարկ ենք համարում նշել, որ այս գործընթացը գեղարվեստական արձակում նկատելի էր դեռևս 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին, երբ Ղայեմ-Մաղամ Ֆարահանին (1779-1835) և Յազմա Ջանդաղին (1782-1860) իրենց նամակներում հրաժարվում էին վերամաքած

* ԵՂՂ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ ha.bianjyan@ysu.am

ոճից, արաբիզմներից և օգտագործում խոսակցական լեզվից փոխառնված բառեր, արտահայտություններ, դարձվածքներ:

19-րդ դարի երկրորդ կեսն Իրանում համարվում է լուսավորական շարժման սկիզբը: Շարժում, որն իր հետ բերեց գրականության թարմացում և հիմք դրեց լուսավորական ռեալիզմին: Այս շարժման ներկայացուցիչներից հայազգի Մելքում խանը, Աբդուտահիմ Թալեբովը, Ջեյն ալ Աբադին Մարաղեին արտահայտալով ժողովրդի լայն զանգվածների շահերը, խիստ քննադատում էին տիրող հասարակական արատները և հավատում էին, որ Իրանում ավատական հարաբերությունների բարեփոխումն ու սահմանադրական միապետության հաստատումը կբերի երկրի վիճակի արմատական փոփոխության:¹

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Իրանում հիմնական խնդիրը շահի միահեծան իշխանության սահմանափակումն էր: Այս հարցի շուրջ հասարակության ռեակցիոն շրջանների և ժողովրդի ազատասիրական ձգտումներն արտահայտող առաջադեմ ուժերի միջև պայքարն ընթանում էր հասարակական կյանքում և, իհարկե, գրականության մեջ: Բուռն զարգացումների համապատկերում Իրանում պարբերական մամուլը ստանձնել էր ժողովրդական զանգվածների ակտիվությունը խթանողի դերը: 1905-1911թվականներին «Իրան-է Նոու», «Թեաթր», «Քաշքուլ», «Թոուֆիդ», «Նասիմ-է շոմալ», «Մուր-է Էսրաֆիլ» պարբերականներից հատկապես այցի էր ընկնում վերջինը: «Մուր-է Էսրաֆիլ» շաբաթաթերթի գաղափարախոսությունն արտահայտված էր նրա «Ազատություն, հավասարություն և

եղբայրություն» խոսուն նշանաբանով:² Թերթի գրական սյուններից մեկն էր հայտնի բանաստեղծ, տաղանդավոր երգիծաբան և հասարակական քննադատ ղազվինցի Միրզա Ալի Աբբար Դեհխոդան (1870-1956), ով հայտնի էր Դախոու կեղծանվամբ: Նա բազմակողմանի կրթված մարդ էր, շատ էր ճանապարհորդել Եվրոպայում: Հայրենիքում Դեհխոդան հարում էր սահմանադրության կողմնակիցներին, ընտրվել էր մեջլիսի երկրորդ նստաշրջանի պատգամավոր, իսկ հետո նաև Իրանի լեզվի ու գրականության Ակադեմիայի անդամ: Դեհխոդան իրանական գրականություն ներմուծեց «Չարանդ օ փարանդ» (Դեսից դենից) երգիծական փոքր պատմվածքի ժանրը:³ Իրանցի պրոֆեսոր Հասան Ահմադի Գիվին «Չարանդ օ փարանդ»-ը գնահատում է որպես այն ժամանակի Իրանի հասարակական կյանքի հայելի:⁴

Գրական լեզվի նորացման գործընթացում մեծ էր նաև 1850-ական թվականների սկզբին ծայր առած «թարգմանական շարժման» դերը: Թարգմանվում էին հատկապես ֆրանսիական և անգլիական գրականության լավագույն նմուշները՝ Ալեքսանդր Դյումայի, Ժյուլ Վեռնի, Դանիել Դեֆոյի ստեղծագործությունները, Ջեյմս Մորիերի «Սպահանցի Հաջի Բաբայի արկածները» և այլ գործեր: Հատկանշական է, որ իրանցի ընթերցողին հետաքրքրելու միտումով, ինչպես նշում է արևելագետ Կոմիսարովը. «Թարգմանիչներն իրենց աշխատանքներում հաճախ ներառում էին բնագրերում բացակայող իրանական ասացվածքներ, թևավոր

¹ Բուդաղյան Ա., Պարսկական գեղարվեստական արձակի ակունքները, Սոցիալական մոտիվները ժամանակակից պարսկական արձակում (ժող.), Երևան, 1970, էջ 5:

² Комиссаров Д., Очерки современной персидской прозы, Москва, 1960, с. 35.

³ Բուդաղյան Ա., Պարբերական մամուլ: Դեհխոդա, Սոցիալական մոտիվները ժամանակակից պարսկական արձակում, Երևան, 1970, էջ 45:

⁴ Ahmadi Givi H., Gozide-ye asar-e Dehxoda, Tehran, 1995, p. 22.

խոսքեր, անգամ բանաստեղծական տողեր»⁵ 20-րդ դարի սկզբում, Իրանում սոցիալական հակասությունների կտրուկ աճով, իմպերիալիզմի և Իրանի ժողովրդի ազգային անկախության ձգտումների միջև հակադրություններով, ինչպես նաև առաջադիմական հայացքների ձևավորումով պայմանավորված, հեղափոխական շարժման նախապայմաններ էին հասունացել, որոնք էլ 1905 թվականին հանգեցրեցին նախ ժողովրդի ընդվզման ելույթների, իսկ կարճ ժամանակ անց նաև սահմանադրական հեղափոխական շարժման: Շարժում, որի մեջ ընդգրկված էին ժողովրդի ամենատարբեր շերտերի ներկայացուցիչներ: Բնական է, որ գրականությունը ևս չէր կարող անտարբեր մնալ երկրում ծավալվող ու ժողովրդի համար վճռորոշ այդ իրադարձությունների հանդեպ: Այսպիսով 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը իրանական գրականության, հատկապես գեղարվեստական արձակի զարգացման համար նոր փուլ հանդիսացավ: Իրանական լուսավորական շարժումը, անդրադառնալով ժամանակի որոշակի խնդիրներին՝ այն է պայքար լուսավորության, մարդու ազատության համար, պայքար ժամանակի իրավիճակի դեմ, կարևոր դեր ունեցավ ժամանակակից իրանական գրականության մեջ նոր ուղղության՝ քննադատական ռեալիզմի ձևավորման ճանապարհին: Ինչպես նշում է վրացի արևելագետ Լյուդմիլա Գիունաշվիլին. «...այս ուղղությունն անքակտելիորեն կապված է իրանական լուսավորականության հետ՝ հանդիսանալով այդ գործընթացի նախաբանը և ամրագրելով նրա գոյության ու զարգացման իրավունքը»⁶ Այսպիսով լուսավորական ռեալիզմը դարձավ 1905-1911 թվականների Սահմանադրական հեղափոխության համար

հող նախապատրաստող շրջադարձերից մեկը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի լուսավորական շարժման կարևորագույն մասն էր կազմում նոր գրական ժանրերի, լեզվի ու ռեալիստիկության համար մղվող պայքարի հետ կապված պարսից գեղարվեստական արձակի ձևավորման գործընթացը: Այս գործընթացի մեջ կարևոր դերակատարումը վերապահված է 20-րդ դարի իրանցի հայտնի արձակագիր Մեյլեդ Մոհամմադ Ալի Ջամալզադեին: Նա իրապես դարձավ այն գրողը, որին պատմության զարգացման հրամայականով վիճակված էր արմատական լուծումներ գտնել պարսից գրականության, և հատկապես գրական լեզվի նորացման ճանապարհին:

Ջամալզադեն ծնվել է 1895 թվականին, հոգևորական քարոզիչ Մեյլեդ Ջամալ Էդ Դին Վաեզ Էսֆահանիի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում՝ Մպահանում: 1908 թվականին հայրը պատանի Ջամալզադեին ուսանելու նպատակով ուղարկում է Բեյրութ: Այնուհետև ապագա գրողը կրթությունը շարունակում է Լոզանում և իրավաբանի վկայական է ստանում ֆրանսիայի Դիժոն քաղաքում: 1915-ից 1930 թվականներին՝ Բեռլինում բնակվելու ժամանակ, Ջամալզադեն աշխատակցում է հասարակական, քաղաքական, գրական «Քավեհ» ամսագրին, որի հիմնադիրներն էին իրանցի քաղաքական գործիչ Մեյլեդ Թաղիզադեն և բանասեր Մոհամմադ Ղազվինին: Հենց այս ամսագրում էլ լույս են տեսնում երիտասարդ Ջամալզադեի առաջին ստեղծագործությունները: Գրողը, ով կյանքի մեծ մասն ապրեց և ստեղծագործեց Եվրոպայում՝ հայրենիքից հեռու, իր մահկանացուն կնքեց Ժնևում 105 տարեկան հասակում:

⁵ Комиссаров Д., Очерки современной персидской прозы, Москва, 1960, с. 24.

⁶ Гиунашвили Л., Проблемы становления и развития реализма в современной персидской прозе, Тбилиси, 1985, с. 295.

Ջամալզադեի գրական գեղարվեստական ողջ ժառանգությունը ներկայացված է հեղինակի ութ ժողովածուներում. 1.1922թ. «Յեքի բուդ օ յեքի նաբուդ», 2.1941թ. «Ամու Հոսեյն Ալի», 3.1955թ. «Թալիս օ շիրին», 4.1959թ. «Քոհնե վա նօու», 5.1961թ. «Ղեյր ազ խոդա հիչքաս նաբուդ», 6.1965թ. «Ասման օ ոխսման», 7.1974թ. «Ղեսեհա-յե քութահ բարայ-ե բաչչեհա-յե ոիշդար», 8.1978թ. «Ղեսե-յե մա բե սար ոեսիդ»: Ջամալզադեի գիտաքաղաքական ուսումնասիրություններից հատկապես արժևորվել են «Իրանի տնտեսագիտության պատմություն», «Իրանի և Ռուսաստանի հարաբերությունների պատմություն» (անավարտ) աշխատությունները և «Խոսակցական լեզվի բառարանը», որ պարունակում է մոտ 700 բառ ու դարձվածք⁷: Պարբերական մամուլի էջերում հրապարակվել են գրողի 300-ից ավելի հոդվածները, որոնց մեծ մասը նվիրված է Իրանի պատմության ու գրականության հարցերին: Ջամալզադեն զբաղվել է նաև թարգմանական գործունեությամբ: Գերազանց տիրապետելով ֆրանսերենին, արաբերենին և գերմաներենին, նա պարսկերեն է թարգմանել Բեռնարդեն դը Սեն Պիեռի «Սուրաթի սրճարանը կամ 72 ազգի պատերազմ», Ժան Բատիստ Մոլիերի «Մլատը», Ֆրիդրիխ Շիլլերի «Դոն Կառլոս» և «Վիլհելմ Թեյ», Հենրիկ Իբսենի «Ժողովրդի թշնամին», Ալֆոնս Դոդեի «Վերջին դասը» գործերը, ինչպես նաև Մաքսիմ Գորկիի, Ֆրիդրիխ Նիցշեի, Անտոն Չեխովի, Անատոլ Բրամսի շատ ստեղծագործություններ: Ջամալզադեն նաև պարսից լեզու և գրականություն է դասավանդել Ժնևի ինստիտուտի թարգմանչական ֆակուլտետում⁸: 1922 թվականին Բեռլինում լույս է տեսնում

Ջամալզադեի պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Լինում է, չի լինում» վերնագրով, և հենց նույն տարում էլ գիրքը հայտնվում է Թեհրանի գրախանութներում: Երիտասարդ, այն ժամանակ դեռևս անհայտ գրողը հանդգնություն էր ունեցել իր պատմվածքներում ցույց տալ Իրանի քաղաքական վերնախավի ու հոգևորականների շահամոլությունը, ներկայացնել պետական վարչակարգի ծախու, կաշառակեր էությունը, օտարերկրացիների նկատմամբ առորաբարձ վերաբերմունքը, պարսիկ կնոջ նվաստացած ֆիճակը, պատկերել իր թշվառ, աղքատ հայրենիքն ու ժողովրդին: Վեց պատմվածք ներառող այս ժողովածուն առանձնանում էր ոչ միայն օրախնդիր թեմատիկայով, այլև՝ նյութի շարադրանքի լեզվով: Խորհրդային ճանաչված արևելագետներ Դանիել Կոմիսարովը և Ջահանգիր Դորրին, ժողովածուից առանձնացնում են հատկապես «Ռաջոլ-ե սիասի» /«Քաղաքական այրը»/ և «Բելա դիգ, բելա չոդոնդար» /«Մեկը մյուսին արժեն»/ պատմվածքները: Այստեղ նկարագրված ու քննադատված իրողությունները, մեր համեստ կարծիքով, հատուկ են ոչ միայն ջամալզադեական Իրանին, այլև՝ տարբեր երկրների ու ժամանակների նմանատիպ վարչակարգերին՝ ընդհուպ մինչև մեր օրերը: «Ֆարսի շեքար ասթ» /«Մեր քաղցրահունչ պարսկերենը»/ ծրագրային պատմվածքում Ջամալզադեն ակնառու ձևով ներկայացրել է իր մտահոգությունը՝ կապված ժամանակի պարսից գրական և ժողովրդախոսակցական լեզուների միջև ծագած անջրպետի ու դրա հետևանքների հետ:

«Լինում է չի լինում» ժողովածուի պատմվածքների մեծ մասը երգիծական բնույթ ունի: Ջամալզադեի հայրենիքում գիրքն անսովոր ճակատագիր ունեցավ. այն հրապարակայնորեն այրեցին Թեհրանի գլխավոր հրապարակում: Բայց այդ հաշվեհարդարը գրքի լավագույն գովազդը դարձավ՝ նպաստելով

⁷ Ջամալզադեի կյանքի և ստեղծագործության մասին հակիրճ տես՝ Iraj Afzar, Zendege name-ye Mohammad Ali Jamalzadeh, Jamalzade M, Yeki bud o yeki nabud, Tehran 2000, pp 189-205.

⁸ Дорри Дж., Мохаммад Али Джамаль-заде, Москва, 1983, с. 111-112.

հեղինակի համընդհանուր ճանաչմանը:⁹ Ժողովածուն իսկական հեղաշրջում առաջացրեց պարսկական գրականության մեջ: Այս առումով խորհրդային հայտնի իրանագետ Չայկինը գրում է. «Այն ռեալիստական նոր դպրոցը, որ թարմ հուշարձաններ է տվել պարսկական արձակին, սկիզբ է առնում «Յեքի բուդ օ յեքի նաբուդ» գրքից: Միայն այս պահից կարելի է խոսել Իրանի հազարամյա գրականության մեջ նովելի ժանրի հայտնվելու մասին. գրականություն, որ վերջապես վճռել էր հրաժեշտ տալ միստիկական շղարշին, ստեղծագործական վերամբարձ ոճին և անվերջանալի շարլոն վարդերին, սոխակներին ու թիթեռնիկներին՝ կենդանի, ռեալ իրականությանն ավելի մոտիկից շփվելու համար»:¹⁰ Ջամալզադեի այս ժողովածուի 15 էջանոց՝ բավականին ընդարձակ, առաջաբանը համարվում է Իրանի ժամանակակից գրականության զարգացման մի յուրօրինակ մանիֆեստ, որտեղ հեղինակը՝ դիմելով հատկապես իր հայրենակից երիտասարդ ստեղծագործողներին, ներկայացնում է պարսից ռեալիստական արձակի զարգացման գեղագիտական և լեզվաոճական հիմունքների իր հայեցակետը: Հենվելով իր նախորդների, մասնավորապես Դեհխոդայի (1880- 1956թթ.), ինչպես նաև եվրոպական՝ հատկապես ֆրանսիական նովելագրության փորձի վրա, Ջամալզադեն իր գրքի առաջաբանում հիմնավորում է պարսից գեղարվեստական արձակում նոր ժանրերի, մասնավորապես նովելի, պատմվածքի զարգացման անհրաժեշտությունը: Ըստ նրա միայն արձակի լայն թափով զարգացումն էր ի գորու իրանական գրականությունը դուրս բերել լայն ճանապարհ՝ ներառելով ժամանակի հասարակայնությանը հուզող հարցերն ու ցավոտ խնդիրները:¹¹ Ջամալզադեն իր «Խոսակցական բառերի բացատրական

⁹ Дорри Дж., Персидская сатирическая проза, Москва, 1977, с. 93.

¹⁰ Նույն տեղում, էջ 89:

¹¹ Jamalzadeh M., Yeki bud o yeki nabud, Tehran, 2000, pp. 13-28.

առաջաբանի» նախաբանում գրել է. «Դարձվածքները, առակներն ու ասացվածքները, որոնք մեր լեզվի հարստության աղբյուրն են, եթե չգործածվեն, կամաց-կամաց հիշողությունից ջնջվելով, կկորչեն՝ լեզվին աղքատացման դատապարտելով: Բանաստեղծների և գրողների պարտականությունն է՝ հնարավորինս կանխել այս երևույթը»:¹² Իր գրչակիցների համար որպես օրինակ, գրողը երբեմն առաձներն ու ասացվածքներն իր ստեղծագործությունների վերնագրեր էր դարձնում: Այսպես «Բելա ռիբ Բելա չողոնդար» ասացվածքի սկզբնաղբյուրը նույնանուն իրանական գրույցն է, որ շրջանառվել է Մպահանում՝ Մեֆյան շահ Աբբասի ժամանակ: ¹³ Ջամալզադեի ստեղծագործությունների հենքը խոսակցական արտահայտություններով, դարձվածքներով հարուստ, գունագեղ, դիպուկ, անսպասելի համեմատություններով համեմված ժողովրդական կենդանի լեզուն է, գրողի իսկ բնորոշմամբ՝ «բազարի լեզուն»: Մինչև Ջամալ Ջադեն լուսավորական գրականությունն Իրանում գրեթե կեսդարյա ճանապարհ էր անցել, ճանապարհ, որն արգասավորվել էր ժանրային նորացումներով (վեպ, մեմուարային տարբեր ենթաժանրեր, թատերգություն), հասարակական տարբեր թեմաների արծարծումով: Այսուհանդերձ, ինչպես մեկնաբանում է վրացի արևելագետ Լյուդմիլա Գիունաշվիլին, պարսից լուսավորական գրականությունը դեռևս չէր իջել հասարակական «...կառույցի «ներքնահարկերը» որտեղ կյանքն ընթանում էր իր խորքային հունով, որը և նա պետք է ի ցույց հաներ, տեսանելի դարձներ»:¹⁴ Այդ «ներքնահարկերն» իջնողը եղավ Ջամալզադեն:

¹² Jamalzadeh M., Farhang-e loqat-e amiane, Tehran, 1963, p. 81.

¹³ Mahdi Azaryazdi, Qesseha-ye taze az ketabha-ye kohne, daftar-e haftom (7), Tehran, 1966, pp. 25-27.

¹⁴ Гиунашвили Л., Проблемы становления и развития реализма в современной персидской прозе, Тбилиси, 1985, с. 30.

հեղինակի համընդհանուր ճանաչմանը:⁹ Ժողովածուն իսկական հեղաշրջում առաջացրեց պարսկական գրականության մեջ: Այս առումով խորհրդային հայտնի իրանագետ Չայկինը գրում է. «Այն ռեալիստական նոր դպրոցը, որ թարմ հուշարձաններ է տվել պարսկական արձակին, սկիզբ է առնում «Յեքի բուդ օ յեքի նաբուդ» գրքից: Միայն այս պահից կարելի է խոսել Իրանի հազարամյա գրականության մեջ նովելի ժանրի հայտնվելու մասին. գրականություն, որ վերջապես վճռել էր հրաժեշտ տալ միստիկական շղարշին, ստեղծագործական վերամբարձ ոճին և անվերջանալի շարլոն վարդերին, սոխակներին ու թիթեռնիկներին՝ կենդանի, ռեալ իրականությանն ավելի մոտիկից շփվելու համար»:¹⁰ Ջամալզադեի այս ժողովածուի 15 էջանոց՝ բավականին ընդարձակ, առաջաբանը համարվում է Իրանի ժամանակակից գրականության զարգացման մի յուրօրինակ մանիֆեստ, որտեղ հեղինակը՝ դիմելով հատկապես իր հայրենակից երիտասարդ ստեղծագործողներին, ներկայացնում է պարսից ռեալիստական արձակի զարգացման գեղագիտական և լեզվաոճական հիմունքների իր հայեցակետը: Հենվելով իր նախորդների, մասնավորապես Դեհխոդայի (1880- 1956թթ.), ինչպես նաև եվրոպական՝ հատկապես ֆրանսիական նովելագրության փորձի վրա, Ջամալզադեն իր գրքի առաջաբանում հիմնավորում է պարսից գեղարվեստական արձակում նոր ժանրերի, մասնավորապես նովելի, պատմվածքի զարգացման անհրաժեշտությունը: Ըստ նրա միայն արձակի լայն թափով զարգացումն էր ի գորու իրանական գրականությունը դուրս բերել լայն ճանապարհ՝ ներառելով ժամանակի հասարակայնությանը հուզող հարցերն ու ցավոտ խնդիրները:¹¹ Ջամալզադեն իր «Խոսակցական բառերի բացատրական

⁹ Дорри Дж., Персидская сатирическая проза, Москва, 1977, с. 93.

¹⁰ Նույն տեղում, էջ 89:

¹¹ Jamalzadeh M., Yeki bud o yeki nabud, Tehran, 2000, pp. 13-28.

բառարանի» նախաբանում գրել է. «Դարձվածքները, առակներն ու ստեղծվածքները, որոնք մեր լեզվի հարստության աղբյուրն են, եթե ստեղծվեն, կամաց-կամաց հիշողությունից ջնջվելով, կկորչեն՝ լեզվին աղքատացման դատապարտելով: Բանաստեղծների և գրողների պարտականությունն է՝ հնարավորինս կանխել այս երևույթը»:¹² Իր գրչակիցների համար որպես օրինակ, գրողը երբեմն առաձներն ու ասացվածքներն իր ստեղծագործությունների վերնագրեր էր դարձնում: Այսպես «Բելա զիզ բելա չոդոնդար» ասացվածքի սկզբնաղբյուրը նույնանուն իրանական գրույցն է, որ շրջանառվել է Սպահանում՝ Մեֆյան շահ Աբբասի ժամանակ: ¹³ Ջամալզադեի ստեղծագործությունների ներքը խոսակցական արտահայտություններով, դարձվածքներով հարուստ, գունագեղ, դիպուկ, անսպասելի համեմատություններով համեմված ժողովրդական կենդանի լեզուն է, գրողի իսկ բնորոշմամբ «բազարի լեզուն»: Մինչև Ջամալ Ջադեն լուսավորական գրականությունն Իրանում գրեթե կենդարյա ճանապարհ էր անցել, ճանապարհ, որն արգասավորվել էր ժանրային նորացումներով (վեպ, մեմուարային տարբեր ենթաժանրեր, թատերգություն), հասարակական տարբեր թեմաների արձարծումով: Այսուհանդերձ, ինչպես մեկնաբանում է վրացի արևելագետ Լյուդմիլա Գիունաշվիլին, պարսից լուսավորական գրականությունը դեռևս չէր իջել հասարակական «...կառույցի «ներքնահարկերը» որտեղ կյանքն ընթանում էր իր խորքային հունով, որը և նա պետք է ի ցույց հաներ, տեսանելի դարձներ»:¹⁴ Այդ «ներքնահարկերն» իջնողը եղավ Ջամալզադեն:

¹² Jamalzadeh M., Farhang-e loqat-e amiane, Tehran, 1963, p. 81.

¹³ Mahdi Azaryazdi, Qesseha-ye taze az ketabha-ye kohne, daftar-e haftom (7), Tehran, 1966, pp. 25-27.

¹⁴ Гиунашвили Л., Проблемы становления и развития реализма в современной персидской прозе, Тбилиси, 1985, с. 30.

Նա իր ժամանակի իրականությունը ներկայացրեց ներքնահարկի բնակիչների աչքերով, նրանց ընկալումներով, նրանց լեզվով: Իրանցի ժամանակակից գրականագետ Շահրոխ Թոնդրոս Սալեհը նշելով խոսքի միջոցով կերպարները տիպականացնելու Ջամալզադեի վարպետությունը, գրում է, «որ նա, լեզվական ճկուն արտահայտչամիջոցները համապատասխանեցնելով իր ստեղծագործության թեմային, այդ կերպարների միջոցով լիարժեք արտահայտում է ասելիքն ու գաղափարները»:¹⁵ Ջամալզադեն իր հոդվածներից մեկի մեջ, դիմելով ժամանակի իրանցի սկսնակ գրողներին խորհուրդ է տալիս.«... այն մեծ ու լավագույն դպրոցի անունը, որտեղ կարելի է սովորել «Իրան երկիր ու Իրանի ժողովուրդ» է»:¹⁶ Մեյյեդ Մոհամմադ Ալի Ջամալզադեն (1892-1997թթ.) իրավամբ համարվում է Իրանում արդի արձակի ամենատարածված ժանրերից մեկի՝ պատմվածքի, նովելի ժանրի սկզբնավորողը: Գրողը, միանգամայն սթափ գնահատելով իրեն բաժին ընկած «ռահվիրայի» դերը, գրում էր .«Նոր ուղղություններն արդեն սավառնում էին օդում, եթե ես չսկսեի, դա կաներ մեկ ուրիշը»:¹⁷ Այս համեստ ինքնագնահատականն ամենևին չի նսեմացնում այն կարևոր դերն ու նշանակությունը, որ ունեցավ Ջամալզադեն պարսից գրական լեզվի նորացման գործընթացում: Նրա համոզմամբ արձակն էր գրականության այն տեսակը, որ մեծ հնարավորություն էր ընձեռում հեղինակին իր խոսքը բոլոր նրբերանգներով ու խորքով հասցնելու հասարակության լայն զանգվածներին: Փարատելով նորացման գործընթացի հանդեպ որոշ ստեղծագործողների վարանանքն ու տագնապները, Ջամալզադեն կրկին ու կրկին շեշտում էր որ, այդ ուղիով զարգանալով, «նոր գրականությունը հնի նման կդառնա

¹⁵ Šahrokh Tondrow-saleh, Neqab-e naqd, Tehran, 2004, p. 242.

¹⁶ Jamalzadeh M., Qesse nevisi, Ahamiyate roman va dastan, be kušēš-e Ali Dehbaši, Tehran, 1999, P. 51.

¹⁷ Дорри Дж., Персидская сатирическая проза, Москва, 1977, с. 93.

արարանչուր իրանցու հպարտության ու պարծանքի աղբյուր»:
Գրողի այս մտքի ապացույցն են Սադեդ Հեդայաթի, Բոգորզ Ալավիի և նրա մյուս հետնորդների ստեղծագործությունները:
Իրանցի ժամանակակից գրողներից շատերը, շարունակելով ստեղծագործել նովելի ժանրով, էլ ավելի զարգացրեցին այն ու նովելեցին պարսից լեզուն:

РОЛЬ САИДА МОХАММАДА АЛИ ДЖАМАЛЗАДЕ В ПРОЦЕССЕ ОБНОВЛЕНИЯ ПЕРСИДСКОГО ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА В КОНЦЕ 19-ОГО И В НАЧАЛЕ 20-ОГО ВЕКА

Бианджян Асмик
(Резюме)

В первые десятилетия 20-ого века в литературных кругах Ирана широко обсуждалось обновление идей персидской литературы. Надо отметить, что ещё во второй половине 19-ого века эти идеи развивались в произведениях иранских просветителей. Но именно Мохаммаду Али Джамалзаде суждено было стать тем писателем, которому удалось найти коренные решения на пути обновления персидского литературного языка. В 1922 году вышел первый сборник его коротких рассказов — жанра, ранее не свойственного персидской литературе, — под заглавием «Были и небылицы». Вопросы развития и обновления прозы обстоятельно рассмотрены в предисловии М. Джамалзаде к его сборнику рассказов «Были и небылицы», предисловие, которое в 20-х годах звучало как манифест современной иранской прозы. Касаясь вопроса обновления форм персидской литературы и обогащения ее новыми жанрами, он особенно подчеркивал необходимость развития прозаических жанров, а именно романа и рассказа, указывая, что, пользуясь этими жанровыми формами, можно лучше раскрыть насущные проблемы, дать представление о внутренней жизни разных стран. Необходимость обновления и упрощения языка персидской литературы Джамалзаде обосновывал обновлением её содержания.

Джамалзаде находил, что обогащение языка надо проводить в более широких масштабах. В этом Джамалзаде видел средство сделать язык литературы гибким, способным выражать не только новые явления, но и тонкие смысловые детали. Джамалзаде считал необходимым стимулировать развитие прозаических жанров, которые, как он указывал, в отличие от традиционных поэтических жанров представляют более широкие возможности для использования богатства средств народного персидского языка. Джамалзаде является основоположником нового жанра- новелла, который в персидской литературе возник в начале 20-ого века.

THE ROLE OF SEYYED MOHAMMAD ALI JAMALZADE IN THE PROCESS OF UPDATING THE PERSIAN LITERARY LANGUAGE AT THE END OF THE 19TH AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY

**Bianjyan Hasmik
(Summary)**

In the first decades of the 20th century, the renewal of the ideas of the Persian literature was widely discussed in the literary circles of Iran. It is to be noted that in the second half of the 19th century, these ideas were developed in the works of the Iranian enlighteners. However, Mohammad Ali Jamalzade was to become the writer who managed to find fundamental solutions on the way of the Persian literary language renewal. In 1922 the first collection of modern Persian short stories, "Once Upon a Time," was published in Berlin. The "Preface," in which, Jamalzade celebrates modernity through the development of modern literary forms is noted by many critics, as a literary manifesto for modernist Persian prose writing. Jamalzade's stories, unlike the traditional tales, are situated in a particular time and place and his characters speak in their own voice and language (colloquial language). His short story is a distinct literary genre. Jamalzade is the founder of a new genre - novella, which appeared in Persian literature at the beginning of the 20th century.

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՍՈՒԳՐԱՆ ԶԻԱՆՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր՝ թյուրքական, ստուգաբանություն, ձիանուններ, նոր, բառիմաստ, պարսկերեն միջնադարյան բառարան, ձիանատյան, փոխառություն

Թյուրքական ծագման ձիանունները պարսկերենում քանակական առումով զգալիորեն քիչ են և զիջում են բնիկ ու արաբական փոխառյալ բառերին, այսուհանդերձ կազմելով պարսկերենի ձիանվանական համակարգի բավական ուշագրավ մի շերտ: Պարսկերենում առկա ձիանունների թյուրքական շերտը ցուցիչ է այն բանի, որ այս լեզուն սկսած Կենտրոնական Ասիայում և Խորասանում իր ձևավորման վաղ փուլից ընդհուպ մինչև Իրանում պետական լեզու դառնալը, բավական սերտ շփումներ է ունեցել հարևան թյուրքական լեզուների և բարբառների հետ: Ըստ այդմ՝ պարսկերենում առկա են թե՛մ դեռևս Կենտրոնական Ասիայի թյուրքական լեզուներից փոխառյալ բառեր և թե՛ աստրպատականյան թուրքերենից այս լեզուն մուտք գործած բառամիավորներ: Հողվածում անդրադարձ կկատարվի պարսկերենում թյուրքական ծագման ձիանուններին՝ ներկայացնելով դրանց հիմնական միավորները թե՛ ժամանակակից լեզվում և թե՛ միջնադարյան բառարանագրական

* ԵՂՂ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, Էլ. փոստ՝ zara.khachatryan@ysu.am

երկերում, ինչպես նաև դրանց ենթարկելով բառակազմական և ստուգաբանական վերլուծության:

Āyyor/ayyar/oyyor¹ (ایغر/ایغر) 1. հովատակ, 2. բեղմնավորման համար պահվող ձի, 3. ազնվացեղ գտարյուն նժույգ² Բառամիավորը «Farhang-e Āmid» բառարանում հանդիպում է նաև *e(a)yyar* տարբերակով:³ Ձիանունը չի հանդիպում պարսից դասական գրականության մեջ:⁴ Ասենք նաև, որ եզրը հանդիպում է նաև հայերենում և բարբառներում:⁵

¹ Բառամիավորը համաթյուրքական է, ժամանակակից թյուրքական լեզուներում ալթր., ալթ., բաշկ., դագ., թուրքմ., գագ., իսկ. և այլն, ունի «հովատակ» իմաստը, սակայն նախնական նշանակությունը եղել է «ցանկացած կենդանու արուն» (տե՛ս Щербак А. М., Названия домашних и диких животных в тюркских языках // Историческое развитие лексики тюркских языков, Москва, АН СССР, 1961, ст. 87; Севортян Э.В., Этимологический словарь тюркских языков, (Общетюркские и межтюркские основы на гласные), Москва, 1978, т. 1, ст. 107), օսմ. *ایغر* «մատակախազ ձի» (տե՛ս Արիկեան Ս., Հնդարձակ բառարան տաճկերէն հայերէն, Կ. Պոլիս, 1892, էջ 93): Այն թուրքերենում և ուլթ. ունի նաև «մեկ հովատակին պատկանող ձիերի երամակ» նշանակությունը (տե՛ս Радлов В.В., Опыт словаря тюркских наречий, СПб, 1905, т. 1, ч. 1, ст. 15-16):

² Dehxodā, A., Loyatnāme-ye Dehxodā, Tehrān, 1993/94, I, s. 204 (այսուհետև՝ LD), տե՛ս նաև Մանսուրյան Հ., Պարսկերենից հայերեն բառարան, Թեհրան, 1384/2005, հ. 1, էջ 410 (այսուհետև՝ ՀՄ):

³ Āmid H., Farhang-e fārsī, Tehrān, 1979, j. 1, s. 115 (այսուհետև՝ ԲԱ):

⁴ Պարսից դասական գրականության մեջ բնիկ իրանական և արաբական փոխառություն ձիանուններն ունեն չափազանց ճոխ վկայություններ, ինչը չենք կարող ասել թյուրքական փոխառությունների մասին: Գրականության մեջ ձիանունների ուսումնասիրության համար ընտրվել են երեք հեղինակներ Ֆիրդուսի (10 դ.), Խաղանի (12 դ.), Նիզամի (13 դ.): Նման ընտրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նշված հեղինակներն ունեն էպիկական ժանրով գրված մեծածավալ ստեղծագործություններ, որոնցում էլ առավել հաճախադեպ են ձիանունների գործածությունները: Պարսկերենում թյուրքական ձիանուններն ունեն եզակի վկայություններ:

⁵ Եզրը հայերենում «չկրտած ձի» նշանակությունն ունի (տե՛ս Մալխասյան Ստ., Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 1, էջ 80 (այսուհետև՝ ՀԲԲ): Արցախի բարբառում *այլր*, Կարինի և Արարատյան բարբառներում՝ *այրո* են

Aryūn⁶ (ارغون) 1. արագավազ նժույգ, սրբնթաց վարգով ձի, 2. արագավազ նժույգի տեսակ, 3. թուրքական և արաբական ձիերի արագավորումից սերված ձիատեսակ (LD, II, 1580; ԲԱ, 158; FM, I, 203, 204;⁷ ՀՄ, I, 73; P, I, 657⁸): Բառամիավորը վկայված է պարսից լեզվի միջնադարյան (XVIIդ.) «Borhān-e Qāt'e»⁹ (I, 107) և «Farhang-e Rašidi»¹⁰ (I, 832) բառարաններում: Այն Օմմար Խայյամի «Nouruznāme»-ում¹¹ հիշատակվում է միայն «արագավազ նժույգ, սրբնթաց վարգով ձի» նշանակությամբ: Եզրը ժամանակակից պարսկերենում նաև թյուրքական ցեղանուն է և արական անձնանուն: Բառամիավորը պարսից գրականության մեջ վկայություններ չունի:

Akdaš/ekdaš¹² (اکدش) 1. թուրքական մատակից և արաբական հովատակից սերված արագավազ ձի, 2. խառնածին ձի (ԳԴ, 144; LD, II, 2694; FM, I, 330): Պարսկերենում նույնիմաստ են նաև *ikdaš*

անվանում չամրձատած, բարձրակարգ ձիուն, հովատակին (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀԳՍՍ, Երևան 2001, I, 53, այսուհետև՝ ՀԼԲԲ):

⁶ Բառամիավորը թուրքերենում հանգում է *аргу*, *ары* «սրաքազ ընթանալ» անորոշ դերբային: Բառանունը թյուրքական լեզուներից դրդգ. *арын* «գտարյուն արագավազ ձի», ուլթր. *ары*, *арун* «վայրի հովատակի և տնային զամբիկի խառնուրդ, եզևուլտի և կովի կամ ընդհանրապես խոշոր եղջերավոր կենդանիների խառնածին» նշանակությունն ունի: Նույն արմատին է հանգում նաև թյուրքական լեզուներում վկայված թաթ. *aryamak* «արաբական գտարյուն նժույգ», մոնղ. *арымаг*, ալթ. *argymak* և այլն, որոնք նույն արմատին են հանգում (տե՛ս Севортян Э. В., նույն տեղում, т. 1, ст. 171: Եզրը նույն է նաև ռուսերենում *аргамак* «ձիու լավագույն ցեղատեսակ Միջին Ասիայում» հ. ռուս. *аргамакъ*, իսկ հուշարձաններում՝ *оргамакъ* (Фасмер М., Этимологический словарь русского языка, М., 1986, т. 1, ст. 84):

⁷ Mo'in, M., Farhang-e fārsī, Tehrān, 1977, 4 j. (այսուհետև՝ FM):

⁸ Рубинчик Ю. А., Персидско - русский словарь, М., 1985, т. 1, ст. 657 (այսուհետև՝ P):

⁹ Xalaf-e Tabrizi M., Borhān-e Qāte, Farhang-e fārsī, Tehrān, 1997, 4 j. (այսուհետև՝ BQ):

¹⁰ Rašidi A., Farhang-e Rašidi, Tehrān, 1337/1958, 2 j. (այսուհետև՝ FR):

¹¹ Xayyām O., Nouruznāme, Tehrān, 1933, s. 111.

¹² Թուրքերենում *igdiš/igīš* «կրտած կենդանի (ձի)», տե՛ս Щербак А. М., նույն տեղում, ст. 87:

(LD, III, 3200), *yakdes* (LD, XIV, 21069), *ikdij* (LD, II, 2695) եզրերը Բառամիավորը XVդ. «Sahāh ol-Fors» բառարանում վկայված է միայն «խառնածին»¹³ նշանակությամբ, իսկ արդեն ավելի շրջանի «Farhang-e Jahāngiri» (1595-1638թթ.)¹⁴ և «Farhang-e Rašidi» (I, 141) բառարաններում այն հանդիպում է որպես «ձի» նշանակող միավոր: Եզրը հիշատակվում է նաև միջնադարյան «Do Farasnāme» ձիամատյանում¹⁵, սակայն վկայված չէ պարսից որևէ գրական երկում: Նշենք նաև, որ բառամիավորը նույն իմաստով հանդիպում է նաև հայերենում:¹⁶

Իքի¹⁷ (ایخی) 1. ձիերի երամակ, 2. չորքոտանի կենդանիներ, որոնց ազատ բաց են թողնվում դաշտում արածելու (LD, III, 3203, 3204; FM, I, 419; FA, 269; ՀՄ, I, 147), նույնն է նաև *yelxi* (LD, XIV, 21090): Պարսկերենում եզրը հանդիպում է Դեմավենդի բարբառում, որտեղ *elxi* է կոչվում «պետությանը պատկանող ձիերի երամակը» (AM, 102): Եզրը *իլիսա* տարբերակով հանդիպում է նաև հայերենում:¹⁸

¹³ Naxjavāni M., Sahāh ol-Fors, Tehrān, 1976, s. 159.

¹⁴ Inju Širāzi H., Farhang-e Jahangiri, Mousese-ye čāp o entešārāt-e danešgāh-e Mašhad, 1351/1971, j. II, s. 1500 (այսուհետև՝ F).

¹⁵ Do farasnāme. Mansur o manzum, zir-e nazar-e Mehdi-e Mohaqqaq, Mousese-ye motāleāt eslāmi-e dānešgāh-e Makgil-e šobe-ye Tehrān, 1366/1987, s. 38, 49.

¹⁶ *Իկսիշ*՝ «խառնածին՝ կրտած, մալած ձի», տե՛ս Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, 2009, Երևան, էջ 266 (այսուհետև՝ ՄՀԲ): Ձիանվան համար նույն բացատրությունն է տալիս Հր. Աճառյանը՝ *Իկսիշ* «խառնածին ձի», տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, հ. 2, էջ 240 (այսուհետև՝ ՀԱԲ):

¹⁷ Թուրքերենում նույնիմաստ են *ilx/ilxe/ilxah/yilki* ձևերը: Ժամանակակից թյուրքական լեզուներում նշանակում է «երամակ, երամակի ձի, չիեծած ձի», այլթ. *cilki*՝ «գամբիկ», *çilghi*՝ *çili* խակ. ձիու տարի (<http://home.arcor.de/marcmarti/khakas/xakbiblio.htm>)

¹⁸ Բառանունը «երամակ, ջոկ» նշանակությամբ հանդիպում է Արարատյան բարբառում, Արցախի բարբառում նաև՝ «նախիր»: Բառամիավորը *իլիսի* ձևով է վկայված Արարատյան, Արցախի, Կարինի, Մոկսի, Համշենի, Մշո (նաև *իլիի*) բարբառներում, տե՛ս ՀԼԲԲ, II, էջ 167:

Պարսկերենում *tortoqci*¹⁹ (ترتقی) հատ-հատ քայլերով ընթացող ձի (LD, IV, 5779) նշանակությունն ունի: Բառամիավորը թյուրքական լեզուներում վկայված է *tartiğci* ձևով՝ «արքային կամ իշխանավորին լուր բերող սուրհանդակ» իմաստով, որից էլ ավելի ուշ իմաստային ընդլայնման արդյունքում, այն պարսկերենում անցել է ձիու վերոնշյալ իմաստը:

Շալ²⁰ (چال) 1. ձի, 2. կարմիր և սպիտակ խառը մազերով ձի, 3. կարմիր կարմրաշիկավուն սպիտակ խայտերով ձի (LD, V, 7031; FM, I, 1268): Եզրը «Farhang-e Jahangiri» բառարանում (I, 286) հանդիպում է նաև *čāle* տարբերակով, իսկ «Borhan-e Qat'e» բառարանում այն տեղի «մտրուկ և ուղտի ձագ» իմաստները ևս (I, 613):²¹ Եզրը թյուրքական լեզուներից անցել է սլավոնականներին՝ ռուս. *чальный*՝ «մոխրագույն, մոխրագույն երանգով», ուկր. *чалий*՝ «շագանակամոխրագույն», նույն իմաստով նաև հ. ռուս. *чаль*.²² Ձիանունը եզակի բառամիավորներից է (թերևս մեր առումնասիրությունների սահմաններում), որը հանդիպում է պարսից դասական գրականության մեջ: Խաղանի Շիրվանին *čāl* և իրանական ծագման *bur* ձիանունները հիշատակում է որպես հոմանիշ բառեր՝ «կարմրաթույր ձի» (XD, 232) նշանակությամբ:

¹⁹ Clauson G., An Etymological Dictionary of Pre-Thirteenth Century Turkish, At the clarendon press, Oxford, 1972, p. 537.

²⁰ Եզրը օսմ. ունի «1. մոխրագույն, 2. սև ու սպիտակ խառը մազեր, 3. թույր ձիու համար 4. փոքր ուղտ, 5. թթվաշ համով ուղտի կաթ» իմաստները (տե՛ս Clauson, նույն տեղում, p. 417; տե՛ս նաև Древнетюркский словарь, Ленинград, 1969, p. 137; Կլաուսոնը բառը մեկնում է «Մև ու սպիտակ գույներով, երբեմն մոխրագույնի խառնուրդով մազեր», Clauson G., նույն տեղում, p. 417. տե՛ս նաև Радлов, В., Опыт словаря тюрских наречий, СПб, 1905, т. 3, ст. 1873-1874, իսկ «Տաճկերեն-հայերեն» բառարանում՝ «գորշխառն», տե՛ս Արիկեան, Ս., նույն տեղում, էջ 200:

²¹ Տե՛ս նաև Xodāparasti, F., Farhang-e jame', vājegān-e motarādef va motazād-e zabān-e fārsi, Širāz, 1997, s. 461:

²² Фасмер, М., նույն տեղում, 1987, 4, ст. 313:

«...Az bu-ye moške tebetkân Sahn-e seydgâh râst, ayešte bud bâ xāk az nâl-e bur o çālaš... Որսաստեղին Սահն լեռան հանքի Տիրեթի մուշկի բույրից, վերածվել էր փոշու, պայտի և կարմրաթույր ձիերի խառնարանի...» (XD, 232): Եզրը «խայտագորշ» իմաստով վկայված է նաև միջին հայերենում:²³

Kotal²⁴ (کتال) 1. թամբած նժույգ, որը գնում է իշխանի առջևից, որպես հանդիսություն, 2. հետևորդ ձի, պահեստի ձի (BQ, III, 1596; LD, XI, 16022; FM, III, 2906; ՀՄ, II, 825; P, II, 310), նաև «ձիերի խումբ, որը հատուկ զարդարված մասնակցում է սգո արարողությանը»: Նույնն է նաև *kutal* (LD, XI, 16464, 16467; FM, III, 3110, 31112) եզրը, որից էլ բառաբարդված է *kutalci* «ձիապան» բառամիավորը (LD, XI, 16022; FM, II, 2906; ՀՄ, II, 852): Չիանունը հիշատակվում է միջնադարյան աղբյուրներում նաև *yas* տարբերակով (FJ, II, 2043, BQ, III, 1427): Այն պարսկերենում թուրքերեն մեկ այլ փոխառության՝ *yadak* բառի իմաստային հոմանիշն է համարվում: Եզրը թուրք-մոնղոլական փոխառություն է պարսկերենում: Չիանունը հիշատակվում է նաև հայերենում:²⁵

Yām²⁶ () 1. սուրհանդակի ձի, 2. հնում փոստատան ձի, 3. ոչ ազնվացեղ ձի (LD, XIV, 20977; FM, IV, 5248; ԳԴ, 45; ՀՄ, II, 1188), բոց. «կայանատեղի, փոստատուն, ձիերի փոխանակման տեղ»: Նույնիմաստ են նաև *yāmāh* (LD, XIV, 20978), *asp-e yām*

բառամիավորները: Եզրը վկայված է նաև միջնադարյան «*Borhan-e Qat'e*» բառարանում (IV, 2421): Նույն բառից է բառաբարդված *qat'âne* «հնում փոստատուն, սուրհանդակի ձիերի կայանատեղի» բառամիավորը:

Yadak²⁷ (یادک) 1. պահեստի ձի, 2. առանց հեծյալի թամբած ձի, որը գնում է արքաների ու իշխանների ձիերին համընթաց, 3. ձի, որին պահում են արքաներին ընդառաջ գնալու համար (LD, XIV, 21012; FM, IV, 5253; ՀՄ, II, 1189), 4. ձի, որին պահում են հիմնական ձիուն համընթաց գնալու համար, հմմտ. պրսկ. *bālā / bālād / bālāda(-e) / bālāz / pālād / pālāda(-e) / bālāy / pālāy, janib* (LD, V, 6923), *janibat* (LD, V, 6923, FM, I, 1247), *rekābi* (LD, VII, 10755; FM, II, 1669), *kotal* (LD, XI, 16022; FM, III, 2906; ՀՄ, II, 825; P, II, 310), *kūtal* (LD, XI, 16464, 16467; FM, III, 3110, 31112), *navbatī/noubatī* (LD, XIV, 20155; FM, IV, 4832; ՀՄ, II, 1119): Պարսկերենում այդ բառից է բառաբարդված *yadak keš* «պահեստի ձի քաշող» եզրը: Չիանունը հիշատակվում է նաև հայերենում:²⁸

Yarāy²⁹ (یارای) 1. արագընթաց ձի, 2. զրոհի համար վարժեցրած ձի (LD, IV, 22258; FNZ, V, 549): Եզրը պարսից լեզվի միջնադարյան «*Borhan-e Qat'e*» բառարանում վկայված է նույն իմաստով (BQ, IV, 2431), իսկ «*Farhang-e Rašidi*» բառարանում ձիանունը գրության մի

²³ Չիանունը նույն նշանակությամբ վկայված է նաև XIII դարի «Բժշկարան ձիոյ և գրաստեղոյ» հանրահայտ ձիանատյանում. «Եւ կան ձիանն չալ ձի, որ լինի իր ամեն մարմինն սպիտակ ու գլուխն ու շինքն այլ գոյն», տե՛ս Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստեղոյ (ԺԳ), Երևան, 1980, էջ 57:

²⁴ Թուրքերենում *kötel* է կոչվում «հեծելագորային ձին»:

²⁵ Բառամիավորը հանդիպում է հայերենում *բոթալ*՝ «ջրեղ զարդարված ձի», տե՛ս UZF, էջ 820, *բոթալ*՝ «ձիապան», ըստ վկայությունների «բեռնաբարձ ձի», տե՛ս ՀԲԲ, հ. 4, էջ 597, *բոթալ*՝ «ձիապան», տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 604, իսկ Պարսիզակի բարբառում *կոտալ* եզրն ունի «ուժից ընկած, ծերացած ձի» նշանակությունը, տե՛ս ՀԼԲԲ, հ. 3, էջ 155:

²⁶ Բառամիավորը օսմ. ունի «փոստային ձիու» նշանակություն, տե՛ս Devellioğlu F., Osmanlica-türkçe ansiklopedik lügat, Ankara, 2002, c. 1156.

²⁷ Եզրը օսմաներենում կիրառվում է «նժույգ» նշանակությամբ (տե՛ս Գարապետեան, Պ. Ջ., նույն տեղում, էջ 944):

²⁸ Չիանունը հանդիպում է նաև հայերենում *յետեկ* ձևով՝ «ձի, որին մի ձիավոր քաշում է իր ետևից կամ գնում է ձիավորի ետևից» (տե՛ս ՀԲԲ, հ. 3, էջ 401, ՀԱԲ, հ. 3, էջ 397), «պահեստի ձի» (Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 552): Եզրը Ղարաբաղի, Գանձակի բարբառում *եղակ*, իսկ Հավարիկի, Քեսաբի բարբառում *իղակ* տարբերակներով է հանդիպում՝ «ձի, որին հեծյալը երասանից բռնած է տանում՝ հիմնական ձիուն փոխարինելու համար կամ ուրիշ ձիու ետևից հոժարությամբ գնացող ձի» նշանակությամբ (ՀԲԲ, հ. 1, էջ 363):

²⁹ Şemseddin S. Kâmûs-i Türki, Istanbul, 2006, c. 1547.

քանի տարբերակներն է հիշատակվում՝ *yarāy/yaray/yorqu* (FR, II, 1523), որը, ըստ հեղինակի, հայտնի է *yorya*³⁰ (برغه) ձևով՝ 1. արագընթաց ձի, 2. շորավարգ ձի, 3. ավանակ (LD, XIV, 21017; FM, IV, 5255, 5272; ՀՄ, II, 1194): Պարսկերենում «արագավագ, սրընթաց ձի» (LD, XIV, 21016; ԳԴ, 106; ՀՄ, II, 1190) նշանակությունն ունի նաև *yoryā* եզրը: Եզրը «ձիու արագ վարգ, ձիու շորորուն քայլք» նշանակությամբ հանդիպում է հայերենում և բարբառներում:³¹

Yavāš (يواش³²) 1. թամբած ձի, 2. մանրաքայլ, հանդարտ քայլքին ընտելացրած ձի, որն արժանի է իշխանավորների հեծնելուն (LD, XIV, 21110; FM, IV, 5272, Б, 917), բոց. «դանդաղ, մեղմիկ քայլքով»: Բառամիավորը փոխատու լեզվում չունի ձիու նշանակություն:

Այսպիսով, թյուրքական ծագման ձիանունները, թվաքանակով այնքան էլ շատ չեն պարսկերենում: Դրանք զիջում են բնիկ և արաբերենից փոխառյալ ձիանուններին ոչ միայն քանակական առումով, այլ նաև ցեղատեսակների բազմազանությամբ, ենթաիմաստային խմբերի զանազանությամբ, բառիմաստային խմբերով, ֆիզիկական արտաքին հատկանիշների

³⁰ Թուրք. *yorga* «շորավարգ ձի», *yüğrük(at)* հին թյուրք. «շորավարգ» (տե՛ս Махмуд ал-Кашғарі, *Лугат ат-Турк, Алматы, 2005, ст.775*), *йорга* թուրքմ. «արագավագ ձի», չուվ. *сърха*, գազ. *Йүрк* «մրցումների համար նախատեսված ձի» (տե՛ս Губогло М., *Гагузская терминалогия по скотоводству, Тюркская лексикология и лексикография, Москва, 1971, ст. 217-236*), տե՛ս նաև Derleme Sözlüğü, Ankara, Türk Dil Kurumu, 1979, cilt: 11 с., 11.

³¹ Հայերենում «*յորդա զնացող ձի*» երբ ձին վազելիս մերթ երկու աջ ոտքը, մերթ երկու ձախ ոտքն է բարձրացնում-իջեցնում, տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 2, էջ 104: *Յորդա* եզրը Թբիլիսիի, Ղարաբաղի(Ղզիս.), Արարատյան (Լ.), Հավարիկի, Նոր Նախիջևանի, Կարինի, Վանի բարբառներում ունի «ձիու և մի քանի այլ կենդանիների արագ սրընթաց վազք, որի ժամանակ մի կողմի գույզ ոտքերը միաժամանակ բարձրացնում ու դնում են» նշանակությունը (տե՛ս ՀԲԲ, հ. 4, էջ 118):

³² Բառամիավորը ածականական իմաստով հանդիպում է օդուզական խմբի ժամանակակից թյուրքական լեզուներում՝ մասնավորապես ատրպատականյան թյուրքերենում, որտեղից էլ, ըստ ամենայնի, մուտք է գործել պարսկերեն:

ներկայացմամբ, կառուցվածքային ու գույնի առանձնահատկություններով և այլն:

Ուշագրավ է նաև այն, որ վերոնշյալ ձիանուններից միայն մեկն է հանդիպում դասական շրջանի չափածո առեղծագործության մեջ, ի տարբերություն, դիցուք, արաբական փոխառյալ ձիանունների հսկայական բազմազանության, որն աչքի է ընկնում ինչպես դասական պարսից պոեզիայում, այնպես էլ արձակ երկերում:

НАИМЕНОВАНИЯ ЛОШАДЕЙ ТЮРКСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ В ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ

Хачатрян Заруши
(Резюме)

В персидском языке количество наименований лошадей тюркского происхождения значительно меньше по сравнению с наименованиями лошадей арабского происхождения. Тем не менее они составляют значительный слой в системе наименований лошадей персидского языка.

В персидском языке наличие тюркского слоя наименования лошадей свидетельствует о том, что этот язык, начиная с раннего периода формирования в Центральной Азии и Хорасане вплоть до становления государственным языком в Иране, имел довольно тесные связи с соседними тюркскими языками и диалектами.

Интересен тот факт, что ни один из вышеназванных наименований лошадей не встречается в стихотворных произведениях классического периода, в отличие от огромного количества арабских заимствованных наименований лошадей, которые встречаются в персидской классической поэзии, а также в прозе.

THE HORSE NAMES OF TURKIC ORIGIN IN THE PERSIAN LANGUAGE

Khachatryan Zaruhi
(Summary)

In the Persian language the number of the horse names of Turkic origin from the quantitative perspective is considerably smaller and falls behind the native and the borrowings of Arabic origin. Nevertheless, it is one of the most remarkable stratum of the Persian horse name system. The stratum of Turkic horse names in the Persian language is an indicator of the fact that this language, started from its earliest stage of formation in the Central Asia and Khorasan up to the period when it became Iran's state language, has been in quite close contact with neighboring Turkic languages and dialects. It is noteworthy that none of above-mentioned horse names is not found in any poetry work of classical period, unlike the huge variety of Arabic borrowings which are striking in classical Persian poetry, as well as in the prose.

Դավթյան Սոնա*

**ԲՈՒՑՄԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ
ՊԱՐՄԿԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԲՈՒՍԱՆՎԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ բուսանուն, մոտիվացիոն հատկանիշ, անվանման միջոց, անվանման սկզբունք, ուղղակի և անուղղակի անվանում:

Առարկայի, երևույթի անվանման սահմանումներից մեկի համաձայն այն տվյալ հասկացության ամրապնդումն է լեզվական որոշակի նշանի ներքո, որն արտացոլում է անվանվող առարկայի որևէ տարբերակիչ հատկանիշ: Այսինքն առարկայի տարբերակիչ հատկանիշը հանդիսանում է այն ելակետը, որի միջոցով անվանում է ստանում այս կամ այն առարկան, երևույթը: Առարկայի նման տիպական հատկանիշը բառապաշարի տարբեր շեմատիկ խմբերի օրինաչափությունները վերլուծող ժամասիրտլոգիական աշխատանքներում ստացել է «մոտիվացիոն հատկանիշ» անվանումը¹: Այս հատկանիշը բնութագրվում է որպես «ամենակարևոր», «ամենաեական», «ամենաակնառու»,

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ sona.davtyan@ysu.am

¹ Ն. Դ. Գոլևը մոտիվացիոն հատկանիշը սահմանում է որպես «առարկայի, երևույթի իրական հատկանիշներից մեկը, որն առանձնանում է առարկայի հատկանիշների ամբողջությունից, որպես «ներկայացուցիչ» և ի վիճակի է առավել փոքր կերպով բնութագրել տվյալ առարկան իր նման առարկաների մեջ» (Голев Н. Д. "О принципах номинации и методе их исследования", Теоретические вопросы русского языка и его говоров. Материалы межвузовской научной конференции, посвященной 50-летию образования СССР, вып. 5, Томск, 1972, с. 2.

«բավականաչափ բնորոշ»², սակայն հարկ է նշել, որ բոլորովին պարտադիր չէ, որ «ամենակարևոր» կամ «բավականաչափ բնորոշ» մոտիվացիոն հատկանիշի դերում հանդես գա առարկայի ամենաէական ու հիմնարար բնութագրիչը: Այսպես, օրինակ, բուսանունների թե՛ ժողովրդական և թե՛ գիտական եզրաբանության մեջ շատ բույսեր իրենց անվանումն են ստացել միայն արտաքին տեսքի հիման վրա, թեև այն դժվար է ամենաէական հատկանիշների թվին դասելը³:

Ընդհանուր առմամբ, թե՛ պարսկերենի և թե՛ հայերենի բուսանվանական համակարգերում անվանման մոտիվացիան՝ պատճառաբանվածությունը կարևոր դեր է կատարում: Բուսանունների ճնշող մեծամասնությունը և հատկապես բույսերի ժողովրդական անվանումները կազմվում են հենց մոտիվացիոն հատկանիշի հիման վրա: Սա ունի մի շարք պատճառներ. նախևառաջ, ժողովրդական խոսքում և բարբառներում կողավորված նորմերի բացակայության պայմաններում առավել կարևորվում է բառի կառուցվածքային և իմաստային թափանցիկությունը կամ, այլ կերպ ասած, բառի կենդանի ներքին կառուցվածքը⁴, նման բուսանուններն ավելի հեշտ են ընկալվում և

² Колшанский Г. В., “Лингвогносеологические основы языковой номинации”, Языковая номинация. Общие вопросы, Москва, 1977, с. 99-147; Голев Н.Д., указ. раб., с. 1-2; Шанский Н.М., Лексикология современного русского языка. Москва, 1964, с. 32-33.

³ Կախված նրանից, թե ինչպիսի հատկանիշ է ընկած բառի անվանման հիմքում՝ որոշ հետազոտողներ մոտիվացիոն հատկանիշները բաժանում են էական (հիմնական) և ոչ էական (պատահական) հատկանիշների (տե՛ս Войшвилло Е. К., Понятие, Москва, 1967, с. 159), սակայն այս պարագայում էլ յուրաքանչյուր դեպք ենթակա է առանձին քննության և մեկ ընդհանրական հարացույց հնարավոր չէ կազմել:

⁴ Բլինովան բառի ներքին կառուցվածքը ձևակերպում է որպես «բառի ձևաիմաստային կառուցվածք, որն արտահայտում է նրա հնչողության և իմաստի փոխկապակցվածությունը» (Блинова О. И., “Мотивационная триада как

վերարտադրվում, ավելի ամուր են նստում հիշողության մեջ: Հաջորդ պատճառն այն է, որ բույսն անվանելիս հաճախ հիմք է ընդունվում կենցաղային փորձը, շրջակա միջավայրի սեփական ընկալումը, պատկերացումներն ու հավատալիքները, ինչի հիման վրա էլ բույսի համար ընտրվում է այնպիսի անվանում, որն օգնում է ավելի հեշտ կողմորոշվել կենցաղում այդ բույսի օգտագործման, զրա հիմնական հատկանիշները մտապահելու հարցերում: Այսպես, օրինակ, «հազիդեդ» կամ «հազի խոտ» (լատ. *Tussilago farfara* L.) բուսանուններն անմիջապես հուշում են, որ այս բույսն ընկալվում է հազը բուժող հատկությամբ կամ, օրինակ «տորոն ներկիչ» կամ «գունարմատ» (լատ. *Rubia tinctorum* L.) անվանումներն ունեցող բույսն անշուշտ ունի, ներկելու, գունավորելու գործառույթ:

Հայերենի և պարսկերենի բուսանվանական համակարգերում առկա մոտիվացիոն հատկանիշների խոթավորման ու դասակարգման արդյունքում երևան են գալիս այս լեզուներում բույսերի անվանման հիմնական սկզբունքները: Դրանք են՝

1. անվանում ըստ բույսի որակական հատկանիշների՝
 - ա) *համային որակներ՝ դառը, քաղցր, թթու, կծու* և այլն. օրինակ՝ պրսկ. ترشک [toršak] (բոց.՝ «թթվաշիկ») – *Rumex* L. – հայ. *թթվաշ, թթու խոտ, փոքր ավելուկ*, պրսկ. شیرین بیان [širīn bayān] (բոց.՝ «քաղցր բիան») – լատ. *Glycyrrhiza* L., համարժեք է հայ.

«комплексная категориальная единица метаязыка и текста», Вестник Томского государственного университета. Филология, 2013, № 3 (23), с. 8):

⁵ Mozaffariān V., Farhang-e nāmā-ye giāhān-e Irān: lātini-englisi-fārsi, Tehrān, 1386/2007, s. 465 (այսուհետ տեքստում՝ (Moz., էջանիշ)): Դազարյան Ռ. Ս., Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Երևան, 1981, էջ 12 (այսուհետ տեքստում՝ (Դազ., էջանիշ)):

բաղըրարմատ բույսին⁶ (Moz., 249, Ղազ., 66), պրսկ. بیان تلخ [tabx bayān] (բոց. «դառը բիան») – լատ. Sophora L. – հայ. *դառը բիան* (Moz., 517, Ղազ., 104), հայ. *թթութթվաշ* – Berberis vulgaris L., բուսանվան հոմանիշներից են զրիշկ և ժրիշկ ձևերը, որոնք միջին իրանական փոխառություններն են, հմմտ. պրսկ. زرشک [zerešk], զիլ. zərešk և այլն:

բ) *կիրառական բնույթից բխող որակներ՝ ուտելի, ոչ ուտելի, բուժիչ, թունավոր, դեկորատիվ* և այլն. օր.՝ պրսկ. كك كوش [k'ak koš] (բոց. «լվասպան») – Pulicaria Gaertn., համարժեք է հայ. *լվախոտ* բուսանվանը, հմմտ. անգլ. fleabane, գերմ. Flohkraut n., ռուս. блошница (Moz., 442, Ղազ., 39); պրսկ. بزر البنج جنون اور / بنگ دانه [bang dāne / baḡr ol-banġ-e ĵonunāvar] (բոց. «խելագարացնող բանգի/ աղշբանգ») – Hyoscyamus insanus – հայ. *բանգի, խելառ խոտ* (Moz., 283, Ղազ., 16); պրսկ. پنیر باد خواب اور [panīr bād-e x'ābāvar] (բոց. «պանիր պատրաստող քնաբեր») – Withania somnifera (L.) Dun. կամ Physalis Alkekengi L., հայ. բշտի դեղ, հարսնախոտ, բոցոց, քաքանաջ (հմմտ. պրսկ. کاکنج [kākaŋġ]) (Moz., 409, 588, Ղազ., 56); պրսկ. توت روباهی طبی [tūt rubāhī-ye ṭebbī] (բոց. «աղվեսաթութ դեղատու») – լատ. Sanguisorba officinalis L., հայ. արյունաքամ դեղատու, արյունխամիկ դեղատու, արյունախում, արյունածուծ,

⁶ Ինչպես տեսնում ենք, այս բույսի հայերեն համարժեքը ևս անվանման մեջ պարունակում է «բաղըր» բառը: Բուսանունների նման իմաստային համընկնումները (մասնակի և ամբողջական) հայերենում և պարսկերենում բավականին շատ են և չափազանց բարդ է որոշարկել, թե որ լեզուն է պատճենման սկզբնաղբյուրը: Նման համընկնումներ կան նաև հայերենի, պարսկերենի, լատիներենի, հունարենի և այլ լեզուների բուսանունների միջև, սակայն, չհաշված առանձին մի քանի դեպքերը, երբ տվյալ բույսի և բուսանվան պատմությունը մեզ հայտնի է, կրկին դժվար է պարզել, թե առաջինը որ ժողովուրդն է տվյալ բույսն այդ կերպ անվանել: Առավել ևս, որ այդ բուսանունների մեծ մասն անվանվել են իրենց որևէ վառ արտահայտված հատկանիշի միջոցով և լիովին կարող էին իրարից անկախ առաջանալ տարբեր լեզուներում:

պարունակուլ, արյունխոտ, արյունքամ, կարմրագլխիկ, ջերմատակ, հմմտ. լատիներեն անվանումը՝ sanguis՝ «արյուն», sorbere՝ «կլանել, ներծծել», ռուս. кровохлебка лекарственная (Moz., 482, 626, Ղազ., 13, Մատ., Գևորգ., 244⁷, Թոր., 34⁸), պրսկ. کرفس وحشی [karafs-e vahšī] – *Apium graveolens* L., հայ. վայրի նեխուր, հմմտ. անգլ. wild celery (Moz., 49) և այլն:

գ) *տակտիկ հատկանիշներ՝ նուրբ, թավշյա, ծակող, մոմացնող, այրող* և այլն. այս խմբի ամենատարածված բուսանունը, թերևս, گزنه [gazane] – *Urtica* L. – եղինջն է, որի հայերեն տարանուններն են մոմուկը, կճանը, կճան խոտը, սրա պարսկերեն համարժեքը ևս նշանակում է «կճան», հմմտ. նաև կուրմ. gaz, gazk, մազ. gazene, gazne, gazīne, gaznā, gazenā, անգլ. nettle (Ղազ., 28, Moz., 568): Պարսկերենում տակտիկ հատկանիշներ արտահայտող բուսանուններ են նաև پای خرس نرم [pā-ye xers-e narm] (բոց. «նուրբ արջատոթ») – *Acanthus mollis* L. – հայ. արջամազիկ նուրբ (Moz., 9); بادام مخملی [bādām-e maxmali] (բոց. «թավշյա նշենի») – *Amygdalus trichamygdalus* (Moz., 40); انجیر چسب [anjīr-e časb] (բոց. «կպչող թուզ») – *Ficus pumila* L. (Moz., 232); گوش خر خارک دار [gūš-e xar-e xārakdār] (բոց. «փշոտ իշականջ») – *Symphytum asperum* Lepech., քարխոտ կոշտ, հայվազ, մեղրածուծ (Moz., 531, Մատ., Գևորգ., 72) և այլն:

Հայերենում նմանատիպ բուսանունների օրինակներ են՝ *կպչուկ* – *Setaria verticillata* (L.) Beauv., պարսկերենում časbak [چسبک] բառացի «կպչուկ» է կոչվում նույն բույսի մեկ այլ տեսակը՝ *Setaria viridis* (L.) P. Beauv.; *նրբախոտ* – *Leptaleum* DC., թավշածառ –

⁷ Մատուրյան Թ. Գ., Գևորգյան Ս. Լ., Հայաստանի ուտելի վայրի բույսերը, Երևան, 2007, էջ 244 (այսուհետ տեքստում՝ (Մատ., Գևորգ., էջանիշ)):

⁸ Թորոսյան Ա., Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983, էջ 34 (այսուհետ տեքստում՝ (Թոր., էջանիշ)):

Phellodendron Rupr., հինուն. անգլ. cork tree, ռուս. бархат, թավջենի – Celosia L., թավջածաղիկ – Tagetes L., հինուն. ռուս. бархатцы, գորտնուկ այրող – Ranunculus flammula L., մակարդախոտ կառչուն – Galium aparine L. (Ղազ., 64) և այլն:

դ) *հոտ արտահայտող հատկանիշներ.*

Պարսկերենում նման բուսանուններից են گل بی مرگ معطر [gol-e bīmarg-e moʿaṭar] – Helichrysum graveolens (M. B.) Sweet, (բնգ.՝ «բուրումնավետ անմեռ ծաղիկ»), ընդ որում, այս բույսի ցեղատեսակի՝ Helichrysum Mill., հայերեն և պարսկերեն անվանումները բառացիորեն համընկնում են گل بی مرگ [gol-e bīmarg] – անմեռ ծաղիկ (Moz., 265-266, Ղազ., էջ 9); برگ بویی [bargbūyī] (բնգ.՝ «բուրավետ տերև») – Daphne L. – հայ. տերևատ, գայլահատ, (Moz., 176, Ղազ., 93); برهنگ معطر [barhang-e moʿaṭar] (բնգ.՝ «անուշաբույր եզան լեզու») – Plantago media L. (Moz., 418); بنفشه معطر [banafše-ye moʿaṭar] (բնգ.՝ «անուշաբույր մանուշակ») – Viola odorata L. (Moz., 585):

Հայերենում նման բուսանուններ են՝ դուն/կիպեր անուշահոտ – Cyperus longus L. (Մատ., Գևորգ., 117), ցախակեռաս բուրավետ – Conicera caprifolium L. (Ղազ., 94-95); անթեմ գարշահոտ/ աղբանթեմ/ գարշահոտ օշոշ – Anthemis cotula L. (Ղազ., 9); տափուղոռ բուրավետ – Lathyrus odoratus L. (Ղազ., 92); հոտախոտ/ վայրի ռեհան – Clinopodium L. – պրսկ. ريحانك [reyhānak] (բնգ.՝ «փոքր ռեհան») (Ղազ., 90, Moz., 134):

2. ըստ արտաքին տեսքի

ա) ըստ գույնի

Պրսկ. زرد آلو [zardālū] – Armeniaca Duh. – բնգ. «դեղին սալոր» (Moz., 55); برهنگ تیره رنگ [barhang-e tīre rang] – Plantago atrata Hoppe – բնգ. «մուգ գույնի եզան լեզու» (Moz., 417); افراى سياه [afra-ye siyāh] – Acer negundo L. – բնգ. «սև թխկի» (Moz., 10); ال سفيد [al-e sefid] – Cornus alba L. – բնգ. «սպիտակ հնի» (Moz., 147);

e noqreī] – Ephedra sarcocarpa Aitch. et. Hemsl. – բնգ. «արծաթագույն լեռնաչամիչ» (Moz., 202); بادام خاکستری/بادام عاجی [bādām-e ājī / bādām-e xākēstārī] – Amygdalus eburnea Spach – բնգ. «փղոսկրագույն նուշ»/ «մոխրագույն նուշ» (Moz., 40); خونغون [xūngūn] – Pilostyles Guillemin – բնգ. «արնագույն» (Moz., 412) և այլն:

Հայ. կապտածաղիկ/ կապուտիկ/ տերեփուկ կապույտ – Centaurea cyanus L. (Ղազ., 93, Թոր., 256), լռչտակ սպիտակ – Bryonia alba L. (Թոր., 96), մանդիկ մսագույն – Polygonum carneum C. Koch. (Թոր., 194), այգածաղիկ ծիրանեզույն – Ipomoea purpurea L. (Ղազ., 8), մատնցուկ ժանգալին – Digitalis ferruginea L. (Թոր., 207), սպիտակ մամուռ – Sphagnum (Dill.) Ehrh. (Ղազ., 94), կարմրագլխիկ – Sanguisorba officinalis L. (Թոր., 34) և այլն:

բ) ըստ չափերի

Պարսկերեն նման բուսանուններ են اسپرس کوتوله [espars-e kūtūle] – Onobrychis acaulis – բնգ. «կարճլիկ կորնգան» (Moz., 372); ارماك مياته [armak-e miyāne] – Ephedra intermedia – բնգ. «լեռնաչամիչ միջին» (Moz., 202); بذر البنج کوتاه [baḍr ol-banj-e kūtāh] – Hyoscyamus pusillus L. – բնգ. «կարճ բանգի» (Moz., 284); بابا آدم صغير [bābā ādam-e sayir] – Arctium minus – բնգ. «փոքր կոստուկ» (Moz., 52); پلنگ كش كبير [palang koš-e kʿabīr] – Doronicum maximum – բնգ. «դարունաճ մեծ» (Moz., 191); بهار دوست كوچك [bahārdūst-e kuček] – Erophila minima – բնգ. «գարնանախոտ փոքր» (Moz., 214); پياز درشت [pīyāz-e dorošt] – Allium hymenorrhizum – բնգ. «խոշոր սխ» (Moz., 29); پياز غول [pīyāz-e gūl] – Allium giganteum – բնգ. «հսկա սխ» (Moz., 29); پياز قد بلند [pīyāz-e qadd boland] – Allium altissimum – բնգ. «բարձրահասակ սխ» (Moz., 27); برهنگ کوتوله [barhang-e kūtūle] – Plantago exigua – բնգ. «կարճլիկ եզան լեզու» (Moz., 417) և այլն:

Հայերենում նման բուսանուններ են՝ *ծիծեռնախոտ մեծ* – *Chelidonium majus* L. (Թոր., 124); *կղմուխ բարձր* – *Iluna helenium* L. (Մատ., Գևորգ., 51); *դուն երկար / կիպեր երկար* – *Cyperus longus* L. (Մատ., Գևորգ., 117); *աստղածաղիկ միջին* – *Stellaria media* (L.) Cyr. (Մատ., Գևորգ., 103); *թթվախոտ բարձր* – *Oxiria olatior* R. Br. (Մատ., Գևորգ., 202); *եզան լեզու մեծ* – *Plantago major* L. (Մատ., Գևորգ., 195, Թոր., 66); *խմրախոտ փոքր / քնձմնձուկ փոքրիկ* – *Thalictrum minus* L. (Մատ., Գևորգ., 217); *ննի մեծ* – *Carum copticum major* (Հար., 123)⁹ և այլն:

Բույսի չափերը նշող անվանումները համեմատաբար փոքր թիվ են կազմում, սակայն նման կազմությունները հատուկ չեն ո՛չ հայերենի և ո՛չ էլ պարսկերենի բուսանվանական համակարգերին: Այս բուսանունները վերոնշյալ լեզուներ են մուտք գործել հիմնականում գիտական գրականության միջոցով և բառացի թարգմանություններ են բույսերի լատիներեն անվանումներից: Այս դեպքում հայերենի համար օգտագործվում են *մեծ, փոքր, միջին, բարձր, երկար* ածականները, իսկ պարսկերենում՝ کبیر [kʰabīr] – «մեծ», کوچک [kučək] / صغير [šayīr] – «փոքր», میانه [mīyāne] – «միջին», کتوله / کتوله [kūtāh / kūtūle] – «կարճ/կարճիկ», قد بلند [qadd boland] – «բարձրահասակ» բառերը: Սակայն, դրանց կողքին, միևնույն բույսերի ժողովրդական տարանուններում բույսի չափերը չեն նշվում կամ դրանք տրվում են բարդ բառերի, ածանցների, պարսկերենում նաև ժողովրդախոսակցական լեզվին հատուկ բառաձևերի միջոցով, ինչպիսին է کتوله [kūtūle] – «կարճիկ» ձևը: Այսպես, օր., հայերենում ունենք *մանրախոտ* – *Deschampsia* P. B. (Ղազ., 25), *դդմիկ/դդմուկ/դդմաճ* – *Cucurbita pepo* var. *giraumontia* Duch. (Ղազ., 25), *խնձորուկ/երեքնուկ/երեքտերնուկ* – *Trifolium* L. (Ղազ., 29),

դաշտախոտուկ/ագրիխոտուկ – *Agrostis* L. (Ղազ., 5), *շաղգամուկ* – *Brassica campestris* L. (Ղազ., 24), խստորուկ – *Dioscorea* Decne. (Ղազ., 26) և այլն, իսկ պարսկերենում՝ بلند مازو [boland mǎzū] – *Quercus castaneaefolia* – բոց. (որպես մեկ բառ) «բարձր կաղնի» (Moz., 447), عسک آبی [aʿdasak-e ābī] – *Lemna* L. – բոց. «ջրային փոքր սուս» (Moz., 315) (հմտ. հայ. ջրսուս); بادامک [bādāmak] – *Amygdalus lycioides* Spach var. *horrida* – բոց. «փոքր բադամ, նուշ» (Moz., 40) և այլն:

զ) *ըստ կառուցվածքի*

Պրսկ. بابونه پا بلند [bābūne-ye pā boland] – *Anthemis coelopoda* Boiss. – բոց. «անթեմ երկարատ», հմտ. հայ. *բարբունաճ, պապունիճ* – *Matricaria* L. (Moz., 45, Ղազ., 29); آویشن برگ گرد [āvīšan-e barg-e gerd] – *Thimus nummularius* M. B. – բոց. «ուրց կլորատերև» (Moz., 548); بنفش دندانان اره ای [banafš-e dandāne-ye arrei] – *Pluchea arguta* Boiss. – բոց. «սղոցավոր ատամներով մանուշակ» (Moz., 420); آلاله گل ریز/کوکچ [ālāle-ye gol-e rīz/kučək] – *Ranunculus chius* D. C. – բոց. «մանր/փոքր ծաղիկներով գորտնուկ» (Moz., 450); اسفناج چهاردانه ای [esfenāj-e čhārdāneī] – *Spinacia tetrandra* Stev. – բոց. «սպանախ քառահատիկ» (Moz., 521);

Հայ. *հազարատերևուկ/բյուրատերևուկ* – *Achillea* L./ *Myriophyllum* L. – պրսկ. هزار برگ [hezār barg] (բոց. «հազար տերև»), հմտ. ռուս. тысячелистник, լատ. *Myriophyllum* – *myrios*՝ «շատ, բյուր», *phyllon*՝ «տերև» (Ղազ., 54, Հար., 119, Moz., 357, 619); *երկտերևի* – *Listera* R. Br. – պրսկ. دو برگی [do bargī] (բոց. «երկտերևի») (Ղազ., 30, Moz., 325); *կապուտակ եռաբլթակ* – *Laser trilobium* (L.) Borkh. (Մատ., Գևորգ., 29); *խինձ լայնատերև* – *Scorzonera latifolia* DC. (Մատ., Գևորգ., 58); *կաթնբեկ խորդուբորդ* – *Sonchus asper* (L.) Hill. (Մատ., Գևորգ., 59); *թզարմատ*

⁹ Հարությունյան Հ. Ս., Միջնադարյան հայկական բժշկարանների դեղաբույսեր, Երևան, 1990, էջ 123 (այսուհետ տեքստում՝ (Հար., էջանիշ)):

փնջաձև/խրձիկավոր – *Ficaria fascicularis* C. Koch. (Մառ., Գևորգ., 214)

Այս խմբի բուսանունների մեծ մասը ևս հայերեն և պարսկերեն են ներմուծվել գիտական տերմինաբանության թարգմանության միջոցով: Իսկ նմանատիպ բուսանունների ժողովրդական անվանումների մեջ մեծ թիվ են կազմում ձևի և նմանության հատկանիշներով կազմված բուսանունները:

դ) ըստ ձևի և նմանության

Պրսկ. چشم گریه ای [čāsm-e gorbeī] (բոց. «կասովի աչք») – *Nonnea medic.*, հմմտ հայ. *կատվակն* – *Galeopsis* L. (Ղազ., 47, Moz., 366); պրսկ. پای خر [pā-ye xar] (բոց. «ավանակի ոտք») – *Tussilago farfara* L. – հայ. *իշատտոտիկ* (Խոս., 23, Moz., 565); պրսկ. ستاره ای [setāreī] (բոց. «աստղ» կամ «աստղային») – *Aster* L. – հայ. *աստղածաղիկ*, հմմտ. միննույն բույսի համար՝ անգլ. starwort, ֆր. aster m., գերմ. aster f., sternblume f, ռուս. астра (Ղազ., 11, Moz., 62); հայ. զանգակ կամ կանթեղնիձ – *Campanula* L. – պրսկ. استکانی گل [gol-e estekāni] (բոց. «բաժակածաղիկ») (Խոս., 87, Ղազ., 30, Moz., 95); հայ. մատնոցուկ, մատնածաղիկ, մատնատունկ – *Digitalis* L. – گل انگشتانه [gol-e angostāne] (բոց. «մատնոց-ծաղիկ») (Թոր., 207, Ղազ., 66, Moz., 186) և այլն:

Այս բուսանունները երկու լեզուներում էլ մեծ թիվ են կազմում: Ինչպես նաև այս խմբի բուսանուններում շատ են միննույն բույսի հայերեն և պարսկերեն անվանումների համընկնումները:

3. ըստ աճելու վայրի և ծագման

ա) ըստ աճելու վայրի՝ լեռնային, ջրային, անտառային, ճահճային և այլն

Պրսկ. عروس صحرايی [a'rus-e sahrāyī] (բոց. «ղաշտի կամ անապատի հարս») – *Xeranthemum* L. – հայ. հարսնավելի (Ղազ., 10, Moz., 588); علف مردابی [a'laf-e mordāb] (բոց. «ճահճախոտ») – լատ.

Elodea canadensis Michx. – ջրածանտախոտի տեսակներից (Ղազ., 81, Moz., 200); کرفس جنگلی [karafs-e jang'ali] (բոց. «անտառի նեխուր») – *Lecockia* DC. (Moz., 315); مینای چمنی [mīnā-ye čamani] (բոց. «մարգագետնի մարգարտածաղիկ») – *Bellis* L. – մարգարտածաղիկ, *հազարդարա* (Խոս., 102, Ղազ., 66, Moz., 73); کرفیج بیابانی [karqič-e biābāni] (բոց. «անապատային քարղի») – *Hertia angustifolia* (DC.) O. Kuntze (Moz., 273); سازوی کوهستانی [sāzu-ye kuhestāni] (բոց. «լեռնային կնյուն») – *Juncus Rechargingeri* Snog. (Moz., 297) և այլն:

Հայ. *ջրասկուտեղ / ջրագուշ* – *Hydrocotyle* L. – آب بشقاب [āb-e bošqāb] (բոց. «գդալաջուր») (Ղազ., 82, Moz., 282), հմմտ. պրսկ. گوشاب [gušāb] – բոց. «ջրագուշ», որտեղ «գուշը» պրսկ. նշանակում է «անկյուն, կողմ, մոտ», բուսանունը թարգմանաբար կնշանակի «ջրի մոտ», սրա լատիներեն *Potamogeton* անվանումը թարգմանաբար նշանակում է «զետի հարևան» (*potamos* – «զետ», *geton* – «հարևան») – հայ. շերեփուկախոտ (Ղազ., 73, Moz., 427); *աշտարակախոտ* – *Turritis* L. - مناری [monārī] (բոց. «մինարեթի, աշտարակի»), հմմտ. ռուս. башенница, անգլ. tower-cress, rock cress – բոց. «աշտարակի, ժայռի կոտեմ», գերմ. Turmkraut n – բոց. «աշտարակախոտ» (Ղազ., 10, Moz., 565); տղմախոտ / տղմաբույս – *Limosella* L. – պրսկ. گل لای [golelay] (որպես մեկ բառ, բոց. «տղմածաղիկ») (Ղազ., 94, Moz., 322); *առվի մատիտեղ* – *Polygonum persicaria* L. (Ղազ., 65); *վանվառուկ ժայռային* – *Alyssum saxatile* L. (Ղազ., 90) և այլն:

բ) ըստ ծագման՝ աշխարհագրական որևէ տարածքի պատկանող՝ հայաստանյան, երևանյան, կոպկասյան, խորասանյան, եգիպտական, չինական և այլն

Պրսկ. پالنگ کش خزری [palang koš-e xazarī] (բոց. «կասալյան ընձասպան») – *Doronicum hyrcanum* Widder & Rech. f. (Moz., 191);

ایروانی پیاز [pīyāz-e īravānī] (բնգ.՝ «երևանյան սոխ») – *Allium synthamanthum* C. Koch – այսպես է կոչվել, քանի որ պարսիկներն առաջին անգամ այս բույսի հետ ծանոթացել են Երևանում (Moz., 31); ختمی قره باغی/ ختمی ارسبارانی [xatmī-ye qarebayī/ xatmī-ye arasbārānī] (բնգ.՝ «արցախյան տուղտ/ Արասբարանի տուղտ») – *Alcea sachsachanica* Iljin (Խոս., 38, Moz., 24); زنبق قفقازی [zanbaq-e qafqāzī] (բնգ.՝ «կովկասյան հիբիկ») – հայ. կովկասյան հիբիկ (Խոս., 51); یولاف / یولاف بیزانی [yūlāf-e qastantanīe/ yūlāf-e bīzānsī] (բնգ.՝ «Կոստանդնուպոլսի վարսալ/ բյուզանդական վարսալ») – *Avena byzantina* C. Koch (Moz., 68):

Հայ. եգիպտացորեն/ մսրացորեն/ Երուսաղեմի ցորեն – *Zea mays* L. (Ղազ., 27), հմմտ. գիլաբի՝ makābī¹⁰, սեմնանի՝ gondom makka, gannom make, makkeyī gannom¹¹, որոնք բոլորն էլ նշանակում են «Մեքքայի ցորեն»; հնդկեղեգ (կամ բամբուկ) – *Fagopyrum* L. (Ղազ., 58); արաբախոտ, արաբիկ – *Arabis* L., հմմտ. անգլ. Arabian mustard՝ «արաբական մանանեխ» (Ղազ., 12, Moz., 50), վրացի կոճ (կամ կեղծ դանձլամեր, ջոք) – *Veratrum* L. (Ղազ., 49); ֆրանսիական ռայգրաս (կամ վարսակախոտ) – *Arrhenatherum* Beauv. (Ղազ., 91):

Այս խմբի բուսանունները հայերենում մեծ թիվ չեն կազմում, ի տարբերություն պարսկերենի բուսանվանական համակարգի, որտեղ սրանց թիվը բավականին մեծ է:

4. ըստ ժամանակային հատկանիշի.

Պրսկ. بهارک [bahārak] (բնգ.՝ «գարունիկ») – լատ. *Corydalis Medicus* – հայ. անձխոտ, շահթառակ; شب خسب [šab xosb] (բնգ.՝ «գիշերը քնող») – *Albizzia Durazz.* – մետաքսածառ, հմմտ. մազ. šūxos, գիլ. šab xosb, šāxūs և šāqūz – «գիշերը քնող» (Moz., 22, Ղազ.,

67); یولاف نیمروز [yūlāf-e nīmrūz] (բնգ.՝ «միջօրեի վարսակ») – *Avena meridionalis* (Malz.) Roshev. (Moz., 68); شیردندان پاییزی [šīr dandān-e pāyīzī] (բնգ.՝ «առյուծատամ աշնանային») – հայ. *առյուծատամ աշնանային* (Խոս., 65); پیر بهار [pīr bahār] (բնգ.՝ «գարնան ծերունի») – *Erigeron* L. – *գարնանաթառամ, տլիփա* (Խոս., 26, Ղազ., 20, Moz., 210):

Հայ. *գատկածաղիկ / նախածաղիկ* – *Bellis* L. – պրսկ. گل بهار [gol-e bahār] (բնգ.՝ «գարնանածաղիկ») (Խոս., 88, Ղազ., 66), հմմտ. հայ. *գարնանածաղիկ* – *Primula* L. (Ղազ., 23); *գիշերածին/ ցայգազվարճ / գիշերազվարճ / գիշերածաղիկ / իրիկնածաղիկ / գիշերային գեղեցկուհի* – *Mirabilis* L. (Ղազ., 22); *միջօրածաղիկ* – *Mesembryanthemum* Dill (լատ. mesos – «միջին», embryon – «ստուղ», anthemum – «ծաղիկ» բաղադրիչներից) – گل نیم روز [gol-e nīmrūz] (բնգ.՝ «միջօրածաղիկ»), հմմտ. անգլ. mid-day flower – «միջօրածաղիկ» (Ղազ., 84, Moz., 346); *Astranida trifida* – աստղաբույս եռաբաժան բույսը Տավուշի մարզում «*վարդավառի ծաղիկ*» են անվանում, քանի որ այնտեղ այն Վարդավառին է բացվում; *ձմեռնածաղիկ / ձնածաղիկ* – *Galanthus* L. – گل برفی [gol-e barfī] گل بهمن [gol-e bahman] (բնգ.՝ «ձնածաղիկ / «բահման ամսվա ծաղիկ»), հմմտ. ռուս. подснежник, անգլ. snowdrop – «ձյան կաթիլ», գերմ. Schneeglöckchen – «ձնե զանգ» (Ղազ., 60, Ման., 881¹², Moz., 241):

Մոտիվացիոն հատկանիշը բուսանուններում կարող է արտահայտվել երկու եղանակով՝ ուղիղ (անմիջական) և

¹⁰ Pāyandeh M. L., Farhang-e Gīl va Deylām, čap-e 1, Tehrān, 1366/1987, s. 152.

¹¹ Sotūde M., Fanhange Semnānī – Sorxeī – Lāsgerdī – Sangesarī – Šahmīrzādī, j. 1, Tehrān, 1342/1963, s. 216.

¹² Մանսուրեան Հ., Պարսկերենից հայերեն բառարան, հատոր Բ, Թեհրան, 2005, էջ 881 (այսուհետ տեքստում (Ման., էջանիշ)):

անուղղակի (միջնորդավորված) անվանման միջոցով¹³: Ուղիղ անվանման դեպքում մոտիվացիոն հատկանիշն անմիջականորեն արտահայտվում է այդ հատկանիշը նշող բառով: Օրինակ՝ պրսկ. časb [چاسب] (բրգ. «սուսինձ, կպչող») – *Cordia crenata* Delile – ցորցենի, սպաստանի, հմմտ. հայ. *կպչուկ* – *Lappula Mnch.* (Moz., 146, Ղազ., 52, 95); պրսկ. haft barg [هفت برگ] (բրգ. «յոթ տերև») – *Daphne mezerium* (L.) – զայլահատ, հմմտ. հայ. *յոթնտերևուկ* – *Potentilla erecta* (L.) (Moz., 177, Ղազ., 70, Ծատ., Գևորգ., 234); պրսկ. talxak [تلخک], a'laf-e talx [علف تلخ] (բրգ. «դառնուկ, դառը խոտ») – *Picris* L. – հայ. *դառնիճ, գինեղեգ*, հմմտ. ռուս. горчак, գերմ. bitterkraut (Moz., 411, Ղազ., 25); պրսկ. hamišak [هميشك] (բրգ., այստեղ՝ «մշտադալար») – *Danae Medicus* – Ալեքսանդրյան դափնի; հայ. *դեղնուկ* – *Blakstonia Huds.* (*Chlora* L.), հմմտ. ռուս. зеленка, անգլ. yellow wort, yellow centaury (Ղազ., 25) և այլն:

Միջնորդավորված անվանման դեպքում մոտիվացիոն հատկանիշն արտահայտվում է կողմնակի, միջնորդ հանդիսացող բառերի օգնությամբ՝ ասոցացիայի հիման վրա¹⁴: Այսպես, միջնորդավորված անվանման դեպքում հաճախ տրվում է օբյեկտի հատկանիշների ընդհանրական բնութագիրը, իսկ մոտիվացիոն կապը բարդացած է լինում, քանի որ անհրաժեշտ է լինում գտնել անվանող և անվանվող առարկաների իմաստային ընդհանրությունը: Օրինակ՝ *ալումար* [alūmār] – մոլախոտի տեսակ, բրգ. «օձի սալոր», այսպես է կոչվել չափազանց դառը համ ունենալու պատճառով՝ ասոցացվելով օձի թույնի հետ; *սգ Ժնդան* [sag dandān] – *Pycnocycla Lindl.* – վայրի խոտաբույս, բրգ. «շան ատամ»,

պրսկ. և փշոտ, ոչ ուտելի լինելու համար՝ ասոցացվելով շան սուր ատամների հետ, հմմտ. մազ. šal dandān – բրգ. «շնագայլի ատամ» (Moz., 443); *šāl pestāne* [šāl pestāne] – *Melia Azedarach* L. – ազատորախտ, ազատենի, խախակ, բրգ. «շնագայլի պտուկ» – դառը գեղունի տեսակ է, ինչի համար էլ նման անվանում է ստացել (Moz., 343, Ղազ., 6); *gol-e sag* [gol-e sag] – *Roza canina* L. – շնավարդ, մաքրենի շան, ակոբուկ, բրգ. «շան վարդ» – վայրի մասրենու տեսակ է (Moz., 462, Ղազ., 65); *sag sir* [sag sir] – մոլախոտի տեսակ, որը նման է սխտորի, բառ. «շան սխտոր», նշելու համար վայրի, ոչ ուտելի լինելը: Բույսի արտաքին հատկանիշներն են նշում հետևյալ միջնորդավորված անվանումները՝ *zolf-e a'rūsān* կամ *tāj xorūs* [tāj-e xorūs] – (բրգ. «հարսի խոպոպ» կամ «հավի կատար») – *Amaranthus* L. – հմմտ. հայ. *հավակատար, գիմել* (Moz., 36, Ղազ., 55); *γάζ پا* [yāz pā] (բրգ. «սագի ոտք») – *Chenopodium* L. – հայ. *սագախոտ, թելուկ* (Moz., 121, Ղազ., 33); *dom-e gorbe* [dom-e gorbe] (բրգ. «կատվի պոչ») – *Phleum* L. – հայ. *կատվածետ, սիգախոտ*, հմմտ. մազ. bamši dem – բրգ. «կատվի պոչ» (Moz., 405, Ղազ., 86); *gol-e hezār čašm* [gol-e hezār čašm] (բրգ. «հազարաչքանի ծաղիկ») – *Hypericum* L. – սրճուկ, արևքուրիկ (Moz., 285, Ղազ., 89); պրսկ. *zangūle ai* [zangūle ai] (բրգ. «զանգակավոր») – *Onosma* L. – հայ. իջիտոտ, հավածոր (Moz., 376, Ղազ., 36); պրսկ. *koukab* [koukab] (բրգ. «աստղ, լուսատու») – *Dahlia* Cav. – հայ. գեորգենի (Moz., 176, Ղազ., 21) հմմտ. հայ. *աստղիկ, աստղան ծաղիկ* – *Stellaria* L. (Ղազ., 11, Ծատ. Գևորգ., 103) և այլն:

Այսպիսով, հայերենի և պարսկերենի բուսանվանական համակարգերի քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ երկու լեզուներում էլ բուսանունների ճնշող մեծամասնությունը կազմվում է մոտիվացիոն հատկանիշի միջոցով: Վերջինս

¹³ Ուղիղ և անուղղակի անվանման մասին տե՛ս Panasenko N., “Direct and indirect Designation in Medicinal Plants’ Names”, *International Journal of Humanities and Social Science*, vol. 2, No. 18, 2012, pp. 217-232:

¹⁴ Որոշ ուսումնասիրողներ անվանելու միջնորդավորված եղանակն անվանում են այլաբանական (մետաֆորային) և ասոցիատիվ: Տե՛ս Голев Д. Н., Способы номинации и синонимия. В сб.: Вопросы языка и его истории, Томск, 1972, с. 153:

ընդունելով այդ լեզուներին հասուկ կառուցվածքային կաղապարները՝ ձևավորում է դրանց բուսանվանական համակարգերի իմաստային շրջանակը: Բսկ մոտիվացիոն հատկանիշների խմբավորման և դասակարգման արդյունքում ձևավորած անվանման սկզբունքները երկու լեզուներում մեծամասամբ համընկնում են՝ երևան հանելով երկու հարևան ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունները:

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ НОМИНАЦИИ ФИТОНИМОВ В АРМЯНСКОЙ И ПЕРСИДСКОЙ ФИТОНИМИЧЕСКОЙ СИСТЕМАХ

Давтян Сона
(Резюме)

Номинация - когнитивно-речевой процесс укрепления концепции предмета или явления под определенным языковым знаком, который отражает одну из характеризующих признаков этого предмета. В ономаσιологических исследованиях этот признак называется мотивационным. Номинация слов происходит путем объединения лингвистических элементов на основе взаимоотношений определителя и определяемого. В результате, в каждой тематической группе формируется ограниченное число мотивационных признаков номинации. Обобщая эти признаки, получаем принципы номинации в данной тематической группе. В этой статье так же выделяются два вида мотивационной номинации - прямое и косвенное или метафорическое. На основании вышеупомянутых мотивационных признаков в статье рассматриваются названия растений в армянском и персидском языках.

THE MAIN PRINCIPLES OF PLANT NOMINATION IN THE PHYTONYMS OF THE PERSIAN AND ARMENIAN LANGUAGES

Davtyan Sona
(Summary)

The act of nomination is a speech-cognitive process of choosing a name for a thing from the available linguistic units or coining a new name considering its inherent characteristics. In onomasiology, these characteristics are called motivational features. The coining of new terms proceeds by way of combining linguistic elements based on a determinant-determinatum relationship. As a result, in each thematic group a limited number of features for designation are formed. By systematizing the similar motivational features, we can establish the principles of plant nomination in the group. There are two ways of motivational designation, direct and indirect, or metaphoric. In this article, Armenian and Persian phytonyms are discussed on the basis of the above mentioned motivational features.

Կոստանյան Վահան *

ԱՅՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ ԵՎ
ՑԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ այրումներ, էթնոնիմ, թյուրքական ժողովուրդներ, էթնիկ խմբեր, քոչվորներ

Այրումները կովկասյան տարածաշրջանում ապրող այն էթնիկ խմբերից մեկն են, որոնք հետազոտողների կողմից ամբողջապես ուսումնասիրված չեն: Նրանց բնակության արեալն ընդգրկում է ներկայիս Իրանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Վրաստանի որոշ շրջաններ: Այրումների ծագումնաբանության խնդրի վերաբերյալ մինչ օրս չկա համերաշխություն գիտական հանրության շրջանում, ինչը արդյունք է նաև նրանց վերաբերյալ հետազոտությունների սակավության: Այս խմբի մասին որոշ հետազոտական աշխատանքներ տարվել են նախորդ դարասկզբին, պահպանվել են նաև փոքրաթիվ հիշատակություններ Ցարական Ռուսաստանի շրջանի արխիվներում՝ նվիրված 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմին¹: Նման պարագայում այրում էթնոնիմի ուսումնասիրությունը և այրումական լեզենդները կարևոր դեր են խաղում լույս սփռելու այս հանրության ծագումնաբանության տարբեր վարկածների արժանահավատության վրա:

«Այրում» ցեղանվան ստուգաբանության հիմնական վարկածներից մեկը հիմք է ընդունում ադրբեջաներեն *այրում* բառը², միու վարկածում քննության է առնված դրա ծագումը Ռում (Բյուզանդիա) տեղանունը³, մեկ էլ այլ տարբերակի համաձայն՝ էթնոնիմը փորձ է արվում ստուգաբանել հիմք ընդունելով հայոց լեզուն: Մինչ խնդրո հիմնական առարկային անցնելը կներկայացնենք այրումների շրջանում տարածված մի քանի լեզենդներ, ինչը թույլ կտա պատկերացում կազմել այս ենթաէթնիկ խմբի ծագումնաբանական առասպելների մասին:

Համաձայն առասպելներից մեկի՝

«Ժամանակին այս բարձր լեռներում և կուսական անտառներում ապրում էր մի շատ դաժան և խորամանկ ժողովուրդ, որին էլ պատկանում էին այրումական հողերը: Ասում են՝ նրանք հայեր էին: Հարթավայրի բնակիչներին, ովքեր ամռանն իրենց անասունների հետ բարձրանում էին լեռներ, նրանք օր ու արև չէին տալիս: Վայ նրան, ում կովը, հայկական տարածքների կողքով անցնելիս այդտեղից թեկուզ մի խոտ պոկեր: Այդ կենդանուն դաժան չարչարանքներ էին սպասում: Հենց այդ պատճառով հայկական հողեր մտնելուց առաջ, հարթավայրի բնակիչները իրենց կենդանիների գլխին զամբյուղ էին ամրացնում, որպեսզի նրանք չկարողանան արածել այստեղ: Անասունների բերանից զամբյուղը հանվում էր միայն այն ժամանակ, երբ հայկական հողերը մնում էին մեջքի ետևում: Այս պատմության հետ կապված է մոտակայքում գտնվող մի բնակավայր անվանել են Տօճտ ցեղաբանաբար նշանակում է «զամբյուղն այլևս դրված չէ»):

² Каракашли К., Об айрумах, Издание Обществя Облседования и Изучения Азербайджана, Баку, 1929, с. 32-36.
³ Նույն տեղում, էջ 38:

* ԵՂՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ vahan.kostanyan@ysu.am
¹ Акты, собранные Кавказской археографической комиссией, Тифлис, 1870.

Մի օր էլ անհետանում է նախրարածի կույրը: Նա էլ իր կովին գտնելու նպատակով անցնում է հայկական տարածքներ, որտեղ էլ նախրապանին բռնում և պատժում են. մերկացնելով՝ մի երկար ճյուղ են ճկում և խրում նրա մեջքը: Ապա ճյուղը բաց են թողնում և նախրապանի մեջքն ամբողջությամբ մաշկազերծ է լինում:

Նախրապանը, հրաշքով ողջ մնալով, վերադառնում է իր բնակավայր և միջադեպի մասին զեկուցում Գանձակի խանին՝ Ջայրացած խանը, հավաքելով իր զորքին, արշավում և սրի է քաշում արական սեռի բոլոր հայերին, իսկ իզական սեռի ներկայացուցիչներին կնության հանձնում հայկական հողերի վերաբնակիչներին:

Մեկ այլ լեգենդի համաձայն՝ լքված հայկական տարածքներում ոչ ոք չէր ցանկանում բնակություն հաստատել: Խանը հրաման է արձակում այստեղ տեղափոխել «Ռումի» 25 բնակավայրերի բնակիչներին, ինչն էլ ի կատար է ածվում: Այսպիսով նոր բնակիչները վերարտադրվում և տարածվում են ողջ շրջակայքում: Այս մասին պատմում է 20-րդ դարի սկզբում Թուլալար գյուղի տարեց բնակիչ Քերբալայ Մուհամեդը⁵:

Մի ուրիշ լեգենդ պատմում է՝ կրոնական տարածայնությունների հողի վրա մեծ պատերազմ է բռնկվում տեղի խաների միջև: Այրումների նախնիները չէին ցանկանում մարտնչել խանի կողմից, սակայն հրաժարվել էլ չէին կարող: Այդ պատճառով դիմում են խորամանկության: Չհամարձակվելով դեմ գնալ խանի հրամանին՝ որոշում են նրան ներկայանալ ուշացումով և մարտի դաշտ են մեկնում ոչ թե ձիով, ինչպես մշտապես անում էին, այլ ցլերով: Մինչ նրանք կհասնեին մարտի

դաշտ, պատերազմն արդեն ավարտված է լինում: Դա պատճառ է դառնում, որ նրանց սկսեն վերաբերվել ինչպես դավաճանների, ինչի արդյունքում նրանց հեռու են վանում իրենցից: Այս լեգենդը բացատրում է «այրում» էթնոնիմի ծագումը, քանի որ «ayrim» արրբեջաներենից թարգմանած նշանակում է «բաժանված, խտրականության ենթարկված»⁶:

Այրումների ծագման խնդրի վերաբերյալ այս շրջանի ուսումնասիրողների տեսակետները թերևս կարելի է բաժանել պայմանական երկու խմբի: Նրանց մի մասը գտնում էր, որ այրումները հանդիսանում են Կովկասի տեղաբնիկ ժողովուրդներից մեկի ժառանգները, իսկ մյուսները պաշտպանում էին այրումների՝ արևմուտքից այստեղ ներթափացնելու վարկածը կամ նույնն է թե այրումներին վերագրում էին թյուրքական ծագում: Եթե առաջին խմբի տեսակետի հիմքում առավելապես ընկած է այրումների քաղաքակրթական լիցքի ցուցիչը, ապա երկրորդի դեպքում որպես հիմնական փաստարկ է ծառայում այս ժողովրդի թյուրքախոսությունը⁷:

Այն փաստը, որ այրումների վերաբերյալ ուսումնասիրությունները ներկայումս լայն տարածում չունեն արևելագիտական շրջանակներում, ստիպում է ստորև ներկայացնել գոյություն ունեցող վարկածները՝ հիմք ընդունելով նախորդ դարասկզբում կատարված հետազոտությունները և այս աշխատանքի շրջանակներում դաշտային աշխատանքի միջոցով ձեռք բերված տեսակետները:

⁶ Карашли К., Об айрумах, Издание Общество Облседования и Изучения Азербайджана, Баку, 1929, с. 32-36.

⁷ Oberling P., Āyromlū, Enciclopedia Iranica <http://www.iranicaonline.org/articles/ayrimlun>

⁴ Որոշ պատումներում նշվում է Լենկ Թեմուրի, ուրիշներում՝ Ջավադ խանի անունը:

⁵ Карашли К., Об айрумах, Издание Обществя Облседования и Изучения Азербайджана, Баку, 1929, с.31.

Մինչ դրանց անցնելը հարկ է նշել, որ ադրբեջանական հանրապետության՝ երկրի տարածքում ապրող տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ կիրառվող ադրբեջանականացման քաղաքականությունը իր դրսևորումն է գտել նաև այրումների պարագայում, ինչի արդյունքում հանրամատչելի աղբյուրներում նրանք ներկայացվում են որպես ադրբեջանցիների բաղկացուցիչ մի խումբ, իսկ երկրում տեղի ունեցած ոչ մի մարդահամարի արդյունքներում այրումները որպես առանձին էթնիկ խումբ չեն գրանցվել:

Հարկ է նշել, որ 18-19-րդ դարերում և մասամբ 20-րդ դարի սկզբին Կովկասում իսլամադավան ժողովուրդները որպես ինքնության առաջնային ցուցիչ ճանաչում էին իսլամը՝ համապատասխանաբար իրենց անվանելով մուսուլմաններ⁸: Նույն տրամաբանությունը արդի է եղել նաև այրումների դեպքում, ինչի արդյունքում էլ նրանք իրենց ծագումը ավանդազրուցային մակարդակում փորձ են արել կապել միջնադարյան մի շարք խոշոր դեմքերի՝ իմամ Հուսեյնի, Լենկ Թեմուրի, Ջավադ խանի և այլոց հետ: Այս իրողությունը տպավորություն է ստեղծում, որ գործ ունենք մի ժողովրդի հետ, որը բռնի կերպով իսլամացվել է և կորցրել իր էթնիկ ինքնության հիմնական ցուցիչը, որն, ըստ ամենայնի, ունեցել է կրոնական-հավատալիքային հենք, ինչից հետո նոր ինքնության ձևավորման շրջանակներում վերջիններիս ծագումը հասցվել է միջնադարյան վերոնշյալ կերպարներին՝ փորձ անելով ինքնությանը հաղորդել պրեստիժային բնույթ:

Ադրբեջանաբնակ այրումների սակավաթիվ սոցիալական խմբերում փորձ է կատարվում առաջ քաշել այն գաղափարը, որ

⁸ Варданян Т., «Азербайджанцы. История одного незавершенного народа», Москва, 2012, с. 17-23.

նրանք հանդիսանում են օդուզական ցեղերի 20-րդ սերունդը⁹: Այս տեսակետը, համաձայն որի այրումները հանդիսանում են բթուրքական էլմուր ցեղի ներկայացուցիչները, սատարում է գտել նաև Ադրբեջանի ազգայնական շրջանակների կողմից¹⁰, ինչը թույլ է տալիս պնդել, որ այրումներն ունեն մաքուր թյուրքական ծագում: Նման տեսակետ է պաշտպանում նաև ադրբեջանցի հեղինակ Վելիևը¹¹: Ըստ հեղինակի՝ այրումների նախնիները ներկայիս բնակչության շրջան են տեղափոխվել 1301 թվականին:

Խորհրդային արևելագետ Մինորսկին իր հերթին կարծիք է հայտնում, որ այրումներն այս տարածաշրջան են փոխադրվել Իրանից 17-րդ դարի թուրք-պարսկական պատերազմների ընթացքում¹²: Համաձայն նրա կողմից առաջ քաշված տեսակետի՝ այրումները մաս են կազմել Իրանում ձևավորված շահսևանների ցեղի, որն, ինչպես հայտնի է, արհեստականորեն ձևավորված էթնիկ ցեղամիավոր էր¹³: Այսօր էլ Իրանի Իսլամական Հանրապետությունում գոյություն ունեն այրումներով բնակեցված շրջաններ: Հայտնի է՝ այրում ժողովրդի ներկայացուցիչներ են բնակվում Մակուում: Պետք է ընդգծել, որ իրանաբնակ այրումները իրենց ժողովրդի մասին խոսելիս գործածում են «qoum» եզրույթը՝ խուսափելով թյուրքական ծագում ունեցող «il» բառից¹⁴:

⁹ Դաշտային աշխատանք համացանցով:

<https://www.facebook.com/groups/314004358712086/permalink/383287978450390/>

¹⁰ Айрумы: Неизвестные соседи

http://azeri-nationalist.blogspot.com/2015/01/blog-post_23.html

¹¹ Велиев М. Г. (Бахарлы), Азербайджан (Физико-географический, этнографический и экономический очерк), Баку, 1921, с. 36.

¹² Минорский В. Ф., История Ширвана и Дербенда, Москва, 1965, с. 108-113.

¹³ Tapper R., Shahsevan, Encyclopedia Iranica
<http://www.iranicaonline.org/articles/shahsevan>

¹⁴ Դաշտային աշխատանք համացանցով:

Հաշվի առնելով՝ այրումների բնորոշ խորը մշակութային շերտը, կենցաղի, հագուստի և մի շարք այլ առանձնահատկություններ, կարելի է պնդել, որ այս խմբին ամենևին բնորոշ չեն քոչվոր կյանք վարող թյուրքական ցեղերի սոցիալ-կենցաղային տարրերը:

Հայ մատենագրության մեջ պահպանվել են վկայություններ, որ դեռևս միջնադարում այսօր այրումաբնակ տարածքներում ապրող հայերը և աղվանները վրացական եկեղեցու ազդեցության տակ ընդունում են քաղկեդոնականություն: Ամբողջապես հայկական մշակութային լիցք ունեցող այս բնակչությունը կրում էր հայ-հռոմներ անունը, որոնք էլ հետագայում տարածաշրջանում իսլամական գործոնի ազդեցության մեծացման և հայ առաքելական եկեղեցու ծիրից դուրս լինելու հետևանքով ենթարկվել են բռնի իսլամացման, ինչի մասին են խոսում հենց այրումների շրջանում տարածված լեզենդները, իսկ նրանց կապը իմամ Հուսեյնի և այլ դեմքերի հետ, կարծում ենք, արհեստածին է: Այրումական գյուղերում առանց պղծվելու պահպանվել են հայկական մշակութային հուշարձաններ, ինչը խոսում է վերջիններիս շրջանում հայկական մշակույթի հանդեպ ունեցած հատուկ վերաբերմունքի մասին: Այս դեպքում թերևս կարելի է գուցահեռներ տանել ակնկալություն դավանող նախկին դերսիմահայերի հետ, որոնք էլ իրենց հերթին պահպանել են հատուկ վերաբերմունքը հայկական ժառանգության նկատմամբ¹⁵:

Այրումների ծագման օղուզական թեզը նրանց շրջանում ամրապնդելու համար փորձ է կատարվում ներդնել նաև *eymur*,

imer, imir ցեղանվան տարբերակները, որոնք ակնհայտորեն արհեստածին են¹⁶:

Նշենք, որ ներկայումս «այրում» էթնոնիմը ադրբեջանական հասարակությունում ձեռք է բերել քամահրական լիցք՝ կիրառվելով «անկիրթ, ապրկար, բռի, տգետ» իմաստներով:

Սա հաստատելու են գալիս նախորդ դարասկզբին Ղազախի շրջանում թյուրքալեզու բնակչության մեջ տարածում գտած մի շարք պատմություններ:

Դրանցից մեկը պատմում է.

«Երբ երկու կին լողանք են ընդունում գետում նրանցից մեկը նկատում է մոտեցող տղամարդու և զգուշացնում մյուսին.

- Ծածկվի՛ր, տղամարդ է մոտենում:

- Դե լավ, դու էլ, և սա տղամա՛րդ է: Սա այրում է՞»¹⁷:

Գանձակի քաղաքաբնակների շրջանում կար տարածված մի սույթ «Արջը հասկացավ, այրումը չհասկացավ»: Սա հաստատելու է գալիս նաև այրումների շրջանում տարածված այն մտայնությունը, թե «այրումը» դարձել է վայրի կենդանիների հոմանի և ամոթալի է, որ Աստված իրենց նման ցեղանուն է տվել¹⁸:

Ստորև ներկայացնում ենք «այրում» էթնոնիմի ծագման վերաբերյալ շրջանավոր մի քանի այլ թեզերի հակիրճ բնութագրերը:

Հայտնի տեսակետներից մեկի համաձայն՝ այս էթնիկ միավորի անվանումը ծագում է ադրբեջաներեն «*ayrmak*» բայից, ինչը թարգմանաբար նշանակում է «բաժանվել, առանձնանալ»,

¹⁵ Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 78.

¹⁶ Кобычев В., Советская этнография, Айрумы (К вопросу происхождения этнонима), Москва, 1962, с. 138-147.

¹⁷ Валиев В., Ајрым бозэмлари, Баку, 1983, с. 12.

¹⁸ Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 78.

համապատասխանաբար «*ayrim*» իր հերթին կրում է «բաժանված, առանձնացած» իմաստը:

Այս վարկածը զուգակցվում է արդեն իսկ շարադրված այրումական լեզենդի հետ, որը պատմում էր այս ժողովրդի նախնիների պատերազմից խուսափելու, դասալքության մեջ մեղադրվելու և հարակից բնակչությունից տարանջատվելու մասին:

Ղարաքաշլիի առաջ քաշած վարկածի համաձայն՝ այրումները որպես առանձին խումբ կարող էին ձևավորվել տարբեր ցեղատոհմային միավորներից վտարված ընտանիքների միավորման արդյունքում¹⁹:

Մեկ այլ վարկածի համաձայն՝ «այրում» էթնոնիմը մեկնաբանվում է որպես «Ա՛յ Ռում», որտեղ «այ» մասնիկը հանդես է գալիս ձայնարկություն դերում, իսկ «Ռում»-ը՝ աշխարհագրական տեղանքի ցուցի:

Իր հերթին առանձին գիտական բանավեճի առարկա է հանդիսանում էթնոնիմի ստուգաբանության նման տարբերակում «Ռում» աշխարհագրական վայրի տեղայնացումը: Այրումների ծագման թյուրքական և իրանական տեսակետերի կողմնակիցները փորձ են կատարում տեղայնացնել «Ռում» տոպոնիմը համապատասխան իրենց իսկ կողմից առաջ քաշած ծագումնաբանական վարկածին:

Մյուս վարկածը պաշտպանողներն էլ կարծիք են հայտնում, որ խոսքը Ուրմիա լճի մասին, հետևաբար այրումների բնօրրանն էլ համարվում է հենց այս լճի մերձափնյա շրջանը: Հատկանշական է, որ այս պարագայում նույնպես այրումներին վերագրվում է թյուրքական ծագում՝ մասնավորեցնելով, որ խոսքը գնում է Ուրմիայի մերձակայքում ապրող թյուրքական էթնիկ տարրի

¹⁹ Каракашли К., Об айрумах, Издание Общества Облседования и Изучения Азербайджана, Баку, 1929, с. 38.

մասին: Նման ստուգաբանության համաձայն, գործ ունենք «*Urmia*» արմատի հետ, որտեղ «*urm*» ձևույթը դրափոխության արդյունքում վերածվել է «*rum*»-ի: Այս վարկածի քննադատները արդարացիորեն նշում են, որ «Ռում» արմատը նույն հավանականությամբ կարող է կապվել Ռումինիա, Հոմ, Ռումելիա և այլ տեղանունների հետ:

Շրջանառության մեջ գտնվող մեկ այլ տեսություն «այրում» էթնոնիմի ծագումը փորձում է ստուգաբանել արդեն հայերենի վիջոցով: Համաձայն դրա՝ «այրում» էթնոնիմը ծագում է հայերեն «այր»՝ քարանձավ բառից: Տեսության կողմնակիցները նման ստուգաբանությունը կապում են այն փաստի հետ, որ այս էթնիկ լիմբի հիմնական կացարանները իրենց տեսքով և ներքին պայմաններով նման են քարանձավների:

Վերջին վարկածը, որն առավել տրամաբանակ զուգահեռներ ունի տարածաշրջանի պատմության հետ, պնդում է, որ էթնոնիմը առաջացել է «հայ-հոռոմ» ձևից, ինչին անդրադարձ է կատարվել վերևում: Կարծում ենք, որ «հայ-հոռոմ» ձևը ենթարկվել է հնչյունական փոփոխությունների, ինչն էլ հանգեցրել է «այրում» ցեղանվան առաջացմանը²⁰:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է եզրակացնել, որ իրականում կամ գործ ունենք կովկասյան տեղաբնիկ ժողովրդի հետ, կամ էլ ավելի հավանական է նաև այրումների հայկական ծագումը:

²⁰ Ամենայն հավանականությամբ «այ» բառամասնիկն առաջացել է «հայ» բառում «հ» հնչյունի ընկնելու արդյունքում, իսկ «րում»-ը՝ «հոռոմ» բառում շեշտակիր երկորդ «օ» հնչյունի ազդեցությամբ առաջին վանկի ընկնելու արդյունքում:

THE GENEALOGICAL MYTHS OF THE AYRUMS AND THE
ETYMOLOGY OF THE ETHNONYM

Kostanyan Vahan
(Summary)

Ayrums are an ethnic group, which is settlement are includes territories of Iran, Azerbaijan, Turkey and Georgia. There is no agreement among academia about origins of this group and in this regard study of *ayrum* ethnonym and ayrum legends could be useful. Currently there are three main options in academia on ethymology of ethnonym. One is based on Azerbaijani word ayrim, second is examining toponym Rum and the last one tries to apply Armenian in order to study the ethnnym. Having a holistic view on legends and options of ethymology it could be stated that ayrums are autochthonous group living in Caucasus and the hypothesis of Armenian origins of Ayrums is quite valid.

ГЕНЕАЛОГИЧЕСКИЕ МИФЫ АЙРУМОВ И ЭТИМОЛОГИЯ
ЭТНОНИМА

Костанян Ваган
(Резюме)

Айрумы- этническая группа, которая проживает на территориях Азербайджана, Ирана, Турции и Грузии. В востоковедении вопрос происхождения айрумов не имеет всеми принятый ответ и среди с этим исследование этимологии этнонима и легенд про айрумов имеет большую практическую ценность. Одна из гипотез основана на азербайджанском слове ayrim, вторая- этноним связывает с томонимом Рум, а по третьей версии этноним связан с армянским языком. Положив вместе все эти верисс о легенды, можно прийти к заключению, что имеем дело с коренной этнической группой Кавказа, которая по большой вероятности имеет армянские корни.

Գեղամյան Աստղիկ՝

ՄԻՐԱՅԻՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ «ՇԱՀՆԱՄԵ»-ՈՒՄ

Բանալի բառեր՝ բանահյուսություն, վիպական գրույց, առասպել, պատմություն, իրանական էպոս, սիրային մոտիվ, սիրավեպ

Իրանական էպոսը՝ «Շահնամեն», արտացոլում է իրանցիների ազգային մտածողությունն ու բնավորության ուրույն գծերը, նրա բարոյական ըմբռումներն ու ընկալումները, պատմական ճակատագիրը: Էպոսի առանձին կերպարներում (*Ջալ, Ռոստամ, Գուշտասպ, Միհավուշ*) խտացած են այդ ժողովրդի հայրենասիրությունը, իղձերը, նրա լավատեսությունն ու հավատը, կերպարներ, որոնք իրենց ինքնօրինականության և ազգայինի մեջ բովանդակում են նաև համընդհանուրը, համամարդկայինը: Այս իմաստով «Շահնամեն» իր ճանաչողական, գաղափարական և գեղարվեստական նշանակությամբ ուրույն տեղ է զբաղեցնում ինչպես իրանական, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ:

Իրանական էպոսն իր ընդգրկունությամբ հանրագիտարանային բնույթի ստեղծագործություն է, որ պահպանել է արժեքավոր տեղեկություններ ոչ միայն Իրանի, այլև հարևան ժողովուրդների հոգևոր մշակույթի, ավանդույթների և պատմության վերաբերյալ: Ֆիրդուսին իր հանճարի մեծությամբ ի մի է բերել և գրական մշակման ենթարկել բանավոր կերպով

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ geghamyanastghik@ysu.am

սերնդեսերունդ փոխանցված վիպական գրույցներն առասպելները, օգտագործել պահպանված գրավոր աղբյուրները²։

Էպոսի առանցքը բարու հաղթանակի և չարի պարտության գաղափարն է, հերոսների անհուն հայրենասիրությունն անձնվիրությունը հայրենի երկրի ազատության և հարազատ ժողովրդի երջանկության համար։ Իր ընդգրկումներով, ծավալով³ և շանակությամբ լինելով խոշորագույնը բանահյուսական ժանրերի մեջ՝ այն ժողովրդական հանճարի ամենավաղ արտահայտությունն է, որը մարմնավորում է նրա պատմության հերոսական էջերը, պայքարն ու իդեալները, ազատության և արդարության ձգտումները։ Էպոսի կարևորագույն հատկանիշներից մեկը բովանդակության հերոսականությունն է սակայն դրա հետ միասին նրան հատուկ են նաև հանդիսավորությունը, վեհությունն ու կոթողայնությունը, որոնք գուժակցվում են ժողովրդական արվեստի պարզության ու բնականության հետ։ Ամենայն հայոց բանաստեղծի բնորոշմամբ, ժողովուրդները ոչ մի բանի մեջ ենթան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ³։

¹ Այդ հարցերը բավականին հանգամանորեն քննարկվել են 2012 թ. Թեհրանում կայացած գիտաժողովի շրջանակներում՝ նվիրված Ֆիրդուսիի ծննդյան հազարամյակին, որի նյութերը հրատարակված են «Ֆիրդուսին և շահնամեսացությունը» խորագրով ժողովածուում (Ferdousi va šāhnāmesarāyī, Bargozide-ye maqālāt-e dānešnāme-ye zabān va adab-e fārsī, be monāsebat-e hemāyeš-e beīnolmelali-ye hezāre-ye šāhnāme-ye ferdousi, Farhangestān-e zabān va adab-e fārsī, Tehrān, 1390/2012)։

² Ֆիրդուսին իր քնարական շեղումներում ասում է, որ «Շահնամեն» բաղկացած է 60.000 բեյթից, այսինքն՝ 120.000 բանաստեղծական տողերից։ Մակայն «Շահնամե»-ի մինչ այժմ պահպանված ձեռագրերը պարունակում են 40-ից 50.000 բեյթ (տե՛ս Barrasi-ye beythāyī az šāhnāme dar virāyesh-e Jalāl Xāleqi-ye Motlaq, Kohannāme-ye adab-e pārsī, Pajuhešgāh-e olum-e ensāni va motāle'āt-e farhangī, sāl-e sevom, šomāre-ye dovom, pāyiz va zemestān, 1391/2013, ss. 49-66 (http://classicalit.ihts.ac.ir/article_555_8b14e3afae73f03074720dd80f0667b1.pdf?fbclid=IwAR042sBKPSBeHCREIcwmXUO5u5sjXOc0eJXc-btInzE2qLn73CvtXi3bSaI)։

³ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, Երևան, հ.4, 1951, էջ 392։

Սովորաբար, եթե վեպում սահմանափակում հիմնական նյութ է նախադրում հերոսների անձնական կյանքը, մարդը՝ իր առօրյա քրոջություններով ու ձախողումներով, ապա պայքարի ցուցաբերության առանցքում շրջակա աշխարհի հետ մարդու մշտական պայքարն է, հերոսների մարտական փորձագործությունները, իսկ նրանց բնավորությունները նախապես սահմանված են անփոփոխ՝ կամ դրական են, կամ բացասական։ Մակայն այս իմաստով «Շահնամեն» ինչ-որ առումով կարող ենք բացատրություն համարել։ Ֆիրդուսին ջանացել է ներկայացնել նաև իրանական հերոսների անձնական-ընտանեկան կյանքը, թեև համեմատած հերոսականի և պատմականի՝ վերոնշյալին քիչ տեղ է հատկացված և այն լուսաբանված է այնքանով, որքանով ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվում է Իրանի և Թուրանի հարատև պատերազմներին։ Այդպիսին է շահնամեսական հերոսներ Ջալի և Ռուդաբեի սիրո պատմությունը, որը դյուցազնավեպի հիմնական նյութի հետ կապվում և ներկայացվում է այն չափով, որ առիթ է դառնում մի կողմից Քարուլի և Իրանի հաշտության, մյուս կողմից հող է նախապատրաստում Ռոստամ Ջալի ողբերգական վախճանի համար։

Այս ամենով հանդերձ, Ֆիրդուսին, դուրս չգալով էպոսի ժանրային սահմաններից, կարողացել է պատկերել հերոսների ներաշխարհը, ի ցույց դնել նրանց անհատական հատկանիշները։ Նրա հերոսները միայն տիտանական ուժի տեր մեխանիզմներ չեն, առասպելական, ոչ երկրային էակներ, այլ միս ու արյուն ունեցող մարդիկ, իրենց առավելություններով և թուլություններով։ Օրինակ, եթե Ֆիրդուսին պատկերեր իր սիրելի հերոսին՝ Ռոստամին, միայն որպես առասպելական հսկայի, որը ընդունակ է միայնակ մեկ վայրի էջ ուտել և ձեռքի ծանրության տակ սպանել ցանկացած

կենդանու (միայն Ռախշն էր, որ դիմացավ այդ «փորձությանը»), ապա այս հերոսը չէր ունենա այն ճանաչելիությունն ու հոչակը, ինչը որ այսօր նա վայելում է Արևելքի շատ ժողովուրդների շրջանում: Այս կերպարի գրավչությունը նրա մարդ լինելու մեջ է, սովորական ու առօրյա մարդ՝ իր զգացմունքներով ու խոհերով: Դա պարզ երևում է այնտեսարանում, երբ Մազանդարան գնալու ճանապարհին Ռուստամը երաժշտական գործիքի ուղեկցությամբ երգում ու զանգասովում է, որ իր կյանքը անցնում է միայն սխրագործություններում, իսկ երջանկություն համար իր կյանքում, այդպես էլ, տեղ չկա:

Ֆիրդուսիի կերտած հերոսները սիրում են, տառապում, պայքարում ու մարտնչում, երբեմն նաև պարտվում: Այլ կերպ ասած, Ֆիրդուսիի մարդուն պատկերել է իր ամբողջի մեջ՝ սրտի թուլությունից մինչև զարկի ուժը: Իսկ դա արդեն բացառիկ երևույթ էր 10-րդ դարի ոչ միայն իրանական, այլև համաշխարհային գրականության մեջ:

Ֆիրդուսիի՝ մարդկային իրական բնավորություններ կերտելու վարպետությունն առավելապես դրսևորվում է «Շահնամե»-ի սիրային պատումներում: «Զալ և Ռուդաբե», «Բիժան և Մանիժե» սիրային պատումները, Մասանյան Խոսրով արքայի և հայուհի Շիրինի սիրային պատմությունը սիրավեպի յուրօրինակ մշակումներ են՝ հերոսների մարդկային նկարագրով կինչ-որ իմաստով նաև հոգեբանական ընդհանրացումներով: Պոետը պատկերել է հերոսներ-հերոսուհիների սիրելու կարողությունը, սիրո համար պայքարելու, սիրուն զրկանքների գնով հավատարիմ մնալու կամքը:

Ուշագրավ է, որ Ֆիրդուսին կտրուկ սահման չի դնում կին և տղամարդ հերոսների միջև⁴: Նրա հերոսուհիները ընդունակ են սիրել և պայքարել՝ արժանի իրենցյուցագուններին: Նրանք ոչ միայն չեն զիջում տղամարդկանց իրենցուժով, խելքով և հնարամտությամբ, այլ նույնիսկ երբեմն գերազանցում են նրանց: Ֆիրդուսիի կերտած կանայք մի կողմից օժտված են ֆիզիկական ուժով և մարտական կարողություններով, մյուս կողմից բարոյական ուժի, հոգու վեհության ու առաքինության մարմնացումներ են⁵:

«Շահնամե»-ում առկա սիրային պատումների սյուժեների մի մասը, հավանաբար, ինքնահնար է, բանաստեղծի քեթողական երևակայության արգասիքը (ինչպես «Զալ և Ռուդաբե» սիրային գրաթանը), իսկ մյուս հատվածը պոետը քաղել է իրանական բանահյուսությունից և գրավոր աղբյուրներից (ինչպիսիք են՝ «Գյուլնար և Արդաշիր», «Խոսրով և Շիրին»)⁶:

Ռուս արևելագետ Ե. Բերտելսը հաստատում է իրանական հնագույն բանահյուսության մեջ տարածանք ասքերի շարքում նաև սիրային պատումների առկայությունը⁷: Մերնդեսերունդ բանավոր փոխանցվող խոսքի առանձին պատառիկներ սասանյան դարաշրջանում տեղ են գտել իրանական արքաների մասին էջուրված հնագույն ասքերի հեղինակային մշակումներում: Նրանք,

⁴ Гиунашвили Л., Коротко о женских образах «Шахнаме», Иран-наме, № 2 (18), Тбилиси, 2011, стр. 174.

⁵ Чернышевский Н., Повести в повести (Полное собрание сочинений), т. XII, Москва, 1949, стр. 132.

⁶ «Բիժան և Մանիժե» սիրային պատմի նախերգանքում Ֆիրդուսին հայտնում է, որ այս գեղեցիկ ու հուզիչ պատմությունը լսել է իր սպասուհուց և ինքը նույնությամբ վերապատմում է այն՝ բանաստեղծական չափի վերածելով (Фирдоуси, Шахнаме, т. 3, Москва, 1994, сс. 111-113):

⁷ Бертельс Е., История персидско-таджикской литературы, Москва, 1960, стр. 239-240.

ըստ իրենց հայեցողության, նյութը հարմարեցրել են ժամանակի պահանջներին և գեղագիտական նորմերին: Ըստ երևույթին, այդ երկերի հեղինակները մասամբ են պահպանել սիրային հնագույն պատումները: Կամ ակնհայտ է, որ նման բովանդակությամբ հուշարձաններն առհասարակ չեն պահպանվել: Հավանաբար, արքաների քաղաքական գործունեությունը շարադրելիս նրանք խուսափել են արքաների անձնական կյանքի մանրամասները հանրության սեփականությանը դարձնելուց: Այդ են վկայում, թերևս, Արտաշիր Պապականի սիրային պատմությունը, Ունսուրիի «Վամեղ և Ագրա», Ֆախրեղդին Գորգանիի «Վիս և Ռամին» պոեմների՝ անհետացած պահլավական տարբերակները, Շահնամեի սիրային պատումները, «Ֆարհադ և Շիրին», «Բահրամ և Գուլանդամ» սիրային դասթանները, որոնք, հավանաբար, բանահյուսական հին երկերի հեղինակային մշակումներ են:

Անձնագոհ և վեհ սիրո գաղափարն առկա է բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների աշխարհընկալումներում՝ գեղարվեստական արտահայտություն գտնելով խոսքարվեստի տարբեր ժանրերում: Այն մինչև ժանրային որոշակի արտահայտություն ստանալը իր կենսունակությունը պահպանել է պատմական, կեղծ պատմական կամ առասպելական անձանց կյանքի մասին պատմություններում: Արդեն գրավոր ավանդույթի ձևավորումից հետո իրանական բանահյուսական սիրային պատումները, միախառնվելով առասպելական և պատմական իրադարձություններին, ներթափանցել են նաև պատմագրության ոլորտ: Հույն պատմիչների երկերում վկայված է, որ իրանական հնագույն բանահյուսությունը «ռազմական, հերոսական էպոսներից» զատ ստեղծել է նաև «ռոմանտիկ, սիրային» բնույթի ասքեր: Մ.թ. 3-րդ դարի հույն պատմիչ Աթենեսի երկում հիշատակված է «Զարիադր և Օդատիս» լեգենդը, որը Իրանի ժողովրդական հնագույն սիրային

պատումներից է*: Պատմիչը գրում է, որ սիրո այս հին պատմությունն իրեն հայտնի է մ.թ.ա. 4-րդ դարի հույն պատմիչ Հարես Միտելենացու հաղորդումից, որը պարսից սովորությունների գիտակ էր և ուղեկցում էր Ալեքսանդր Մակեդոնացուն նրա պարսկական արշավանքների ժամանակ⁹: Լեգենդն իրանցի արքայազն Զարիադրի և սակերի արքայադուստր Օդատիսի սիրո պատմությունն է: Վեպում հերոսները հանդես են գալիս որպես պատմական անձինք. Զարիադրը մարերի արքա Գուշտասպի եղբայրն է՝ Կասսյան դարպասների և Սիրդարյայի միջև ընկած շրջանների տիրակալը, իսկ Օդատիսը Սիրդարյայից այն կողմ գտնվող շրջանների կառավարիչ Օմարտի դուստրը: Երագում սիրահարվելով միմյանց՝ նրանք փնտրում են իրար, սակայն Օդատիսի հայրը մերժում է այլազգի Զարիադրի ուղարկած ինամախոսներին: Արքան դստերը շտապ ամուսնացնելու նպատակով փեսատեսի խնջույք է կազմակերպում: Օդատիսը, դեմ լինելով հոր ցանկությանը, գաղտնի լուր է ուղարկում Զարիադրին: Սակ զինվորի տեսքով Զարիադրը ներկայանում է խնջույքին, որտեղ աղջիկը ճանաչում է երագում տեսած ասպետին և ի նշան իր ընտրության՝ զինով լի ոսկյա գավաթը մեկնում նրան: Ի վերջո, Օդատիսը Զարիադրի հետ փախչում է հայրական տնից:

Ռուս արևելագետ Վ. Նիկիտինայի կարծիքով Հարես Միտելենացու երկում պահպանված ավանդազրույցը հին իրանական էպիկական ավանդույթում ձևավորված Զարեր դյուցազունի սիրո պատմությունն է, պարզապես հույն պատմիչը

* Ошерова С., Афиней, 1961, сс. 449-473.

⁹ Амбарцумян А., Древнеиранская легенда о Зариадре и Одатиде как иллюстрация обряда инициации, Модернизация и традиция, XXVI Международная конференция источниковедение и историография стран Азии и Африки, 20-22 апреля 2011г., СПб, стр. 331.

Զարերին անվանում է Զարիադրիս՝ հունական *esadանցի* հավելվամբ¹⁰: Այս վարկածն ավելի համոզիչ է դառնում գերմանացի իրանագետ Վ. Գեյզերի այն տեսակետի համադրությամբ, ըստ որի սկզբնապես գոյություն են ունեցել Զարերի մասին ասքի առանձին պատումներ, որոնցից և մեզ հասել է «*Ayādgār-ī Zarērān*» (Հիշատակարան Զարերի) պոեմի տարբերակը¹¹: Հուշարձանի պարթևական տեքստի սկզբնաղբյուրը, հավանաբար, եղել է Ավեստայի կորսված յաշտերից մեկը, ինչ և վկայում է նաև Աքեմենյանների օրոք դրավիպական բանավոր տարբերակների գոյության մասին¹²:

Այսպիսով, Հարես Միտելենացու պահպանած պատմության որոշ մոտիվներ և հերոսների անուններ մենք հանդիպում ենք նաև «Շահնամե»-ում, սակայն Հարեսի պատմությունը իր մանրամասներով տարբերվում է Ֆիրդուսիի մեջգրեթե պատմից: Ֆիրդուսիի մոտ արտերկիր է մեկնում ոչ թե Զարերը՝ Զարիադրը, այլ Գուշտասպը՝ Գիստասպը, ու ոչ թե արևելք՝ Ամու-Դարայից այն կողմ, այլ արևմուտք՝ մեծ ծովով, և ամուսնանում ոչ թե սակերի արքայադստեր, այ հոռմեական կայսեր դստեր հետ: Հարեսն ավելացնում է, որ այս պատմությունը շատ հայտնի է եղել «Ասիայում բնակվող բարբարոսների շրջանում», որոնք տաճարներում, արքունիքներում, անգամ հասարակ տների պատերին պատկերում էին այդ սիրավեպի հերոսներին: Անգամ իշխաններն իրենց դստերին անվանակոչում էին Օդատիս¹³:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ֆիրդուսին պահպանել է սիրային շատ սյուժեներ, սակայն դրանք այնքանով են անհրաժեշտ

եղել մեծ մարդերգակին, որքանով որ նա ցանկացել է ցույց տալ իր հերոսների ոչ միայն գերբնական ուժը, այլ նաև նրանց մարդկային հատկանիշները՝ իրենց բնավորության լավ և վատ կողմերով, հակումներով և զգացմունքներով: «Շահնամե»-ում առկա այս սիրային դրվագները հիմք են տվել անցյալ դարասկզբին իրանագիտության մեջ հիմնավորել այն տեսությունը, թե իրանական ազգային էպոսը սկզբնաղբյուր է համարվել գրական որոշ ժանրերի, այդ թվում նաև սիրավեպի համար: Ըստ գերմանացի արևելագետ Հ. Էթեի՝ իրանական էպոսի սիրային դասթանները գրական այն հենքն են, որի վրա էլ հետագայում կազմավորվել են իրանական սիրային էպիկայի գլուխգործոցներ «Խոսրով և Շիրին» և «Լեյլի և Մեջնուն» պոեմները¹⁴: Եվ իսկապես, «Շահնամե»-ում «Զալ և Ռուդաբե», «Բիժան և Մանիժե», «Գոլնար և Արդաշիր», «Խոսրով և Շիրին» և այլ սիրային պատմություններ բովանդակային և կառուցվածքային տեսանկյունից կարծես թե հիմնավորում են գերմանացի գիտնականի տեսության ճշմարտացիությունը: Սակայն XX դարի 50-ական թթ. գտնված նյութերը՝ Այուկիի «Վարդա և Գուշահ» և Ունսուրիի «Վամեդ և Ագրա» պոեմների հատվածները թույլ են տալիս սիրավեպի պատմությունն ավելի ետ տանել, քանի որ այդ պոեմները Ղազնավյան ժամանակաշրջանի հուշարձաններ են¹⁵:

Այսպիսով, Ֆիրդուսիի պոեմի համամարդկային բնույթն առիթ դարձավ, որնրա գաղափարները տարածում գտնեն ոչ միայն իրանական, այլ նաև ողջ մերձավորարևելյան տարբեր ժողովուրդների գրական մշակույթում, ուղենշային

¹⁰ Никитина В., Литература Ирана, Литература Древнего Востока, М., 1971, стр. 132.

¹¹ История всемирной литературы, т. 2, Москва, 1984, стр. 251.

¹² Խորշուդյան Է., Հիշատակարան Զարերի, Իրան-Նամե, №22-23, 6 (1996) - 1(1997), Երևան, էջ 33:

¹³ Амбарцумян А., укр. соч., стр 331.

¹⁴ Мелетинский Е., Средневековый роман, Происхождение и классические формы, Москва, 1983, сс. 157-158.

¹⁵ Тупалов Г., Идеино-художественные особенности поэмы «Варка и Гулшах» Айюки, Автореферат, Душанбе, 2013, стр. 14.

դերակատարություն ունենան զրական նոր ուղղությունների սկզբնավորման համար: Իզուր չէ, որ այդ սիրային պատումներից շատերը զրական վերամշակման ենթարկվեցին ոչ միայն միջնադարում, այլ նաև նոր ժամանակներում:

ЛЮБОВНЫЕ МОТИВЫ В «ШАХНАМЭ»

Гегамян Астхик
(Резюме)

До первой половины XX века в литературоведении была создана теория, согласно которой такие любовные эпизоды «Шах-наме», как «Заль и Рудабэ», «Бижан и Манижэ», — образцы, по которым строилась в дальнейшем вся иранская романтическая поэзия, пришедшая позднее к таким поэмам, как «Хосров и Ширин», «Лайли и Маджнун». В статье делается попытка указать значение и место любовных мотивов «Шахнаме» в изучении истории персидского романического жанра.

LOVE STORIES IN “SHAHNAME”

Geghamyan Astghik
(Summary)

Until the 20th century, there was a popular misconception that the emergence of the genre of romance in Iranian literature was due to the separation of some poems from the epic cycle. Such love stories as “Zal and Rudabe”, “Bijan and Manije” in “Shahname” are the literary base on which the Iranian epic poetry was later built, and such wonderful masterpieces as “Khosrov and Shirin” or “Leyli and Mejnun” were created. This article is an attempt to present the place and role of love stories in “Shahname” in the study of the Persian romance.

Պետրոսյան Լիանա *

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒՑԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՃԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2005-2013 թթ.)

Բանալի բառեր՝ Իրանի Իսլամական Հանրապետություն, Մահմուդ Ահմադինեժադ, իրանական ազգայնականություն, իսլամիզմ, հեղափոխական հակակայսերապաշտություն

Թեև ազգային ինքնության խնդիրը Իրանում դարերի պատմություն ունի, սակայն 20-րդ դարասկզբից ի վեր իրանական ներքին և արտաքին հարաբերությունների հիմնական բնութագրիչներից մեկը ազգայնականությունն է եղել: Իրանական ազգայնականության ձևավորումն ու կիրառումը մշտապես կապված են եղել Իրանում իշխանության համակարգի ձևի և բնույթի հետ: Տարբեր ժամանակաշրջաններում այս երկրում իշխող դինաստիաների թիվ մեկ նպատակը երկիրը տարածաշրջանային գերտերության վերածելու ձգտումն է եղել, որի իրագործման ճանապարհին հատուկ նշանակություն էր տրվում ազգայնականության գաղափարին: Այս առումով հետաքրքրական են նախագահ Մ. Ահմադինեժադի կառավարման տարիները (2005-2013 թթ.), քանի որ վերջինս այն եզակի նախագահներից էր, ով, չլինելով հոգևոր դասի ներկայացուցիչ, նախագահության տարիներին իրանական ազգայնականությունն

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հայցորդ, իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, էլ. փոստ՝ lianapetrosyan@ysu.am

ու աշխարհիկ իշխանությունը փորձել է համադրել իսլամական կառավարման համակարգի հետ:

Մ. Ահմադինեժադի նախագահության տարիներին միջազգային հանրության և լրատվամիջոցների ուշադրությունը սևեռված էր իրանական միջուկային ծրագրի և երկրի արտաքին քաղաքականության վրա: Չնայած վերոնշյալի կարևորությանը, կարևու մի հանգամանք, որը կարող էր վճռական ազդեցություն ունենալ Իրանի ապագայի վրա: Խոսքը իրանական քաղաքացիական հասարակության և դրա շարունակական արմատական փոփոխության մասին է: Մ. Ահմադինեժադի նախագահությանը նախորդած վերջին 18 տարիները նշանավորվեցին Իրանում սոցիալական, քաղաքական և մշակութային իրազեկման հետ միասին քաղաքացիների նոր սերնդի ձևավորմամբ, ինչի հետ մեկտեղ նաև ժողովրդավարության, ազգայնականության և աշխարհիկության հետ կապված նոր գաղափարների առաջացմամբ:

Արդեն Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներից Իրանի Իսլամական Հանրապետությունը կանգնեց կարևոր ներքին հասարակական սերնդափոխության առաջ, որը կարող էր փոխել երկրի քաղաքական ապագան: Իրանի 75 միլիոն բնակչությունից գրեթե 50 միլիոնը 40 տարեկանից ցածր էին՝ կրթված և առաջադեմ երիտասարդներ, որոնց մի մասը ընդունել և առաջնորդվում էր աշխարհիկության և ազգայնականության գաղափարներով՝ փորձելով հասնել քաղաքական այնպիսի նպատակների, ինչպիսիք են ժողովրդավարությունը և խոսքի ազատությունը¹: Ուստի 2005 թ. ստանձնելով նախագահի պաշտոնը՝ Մ. Ահմադինեժադը իր քաղաքականության մեջ ընդգծում էր հետհեղափոխական շրջանի իսլամական արժեհամակարգի

վերականգնման անհրաժեշտությունը: Մրա վառ օրինակ է այն փաստը, որ 2011 թ. հաստատված «6-րդ հնգամյա ծրագրում» Իրանի մշակութային խնդիրներն առաջին տեղում էին դրված և դրա զարգացման հեռանկարները ներկայացված էին «Իսլամական-իրանական մշակույթ» անվամբ առաջին բաժնում: Դրանում նշվում է, որ ԻԻՀ մշակութային զարգացումը պետք է ընթանա հետևյալ ուղղություններով.

1. ստեղծել մշակութային զարգացման ծրագրեր (արվեստի, գիտության, կրթության, կրոնի ոլորտի),
2. մշակութային գործունեության արդյունքների իրացման ուղիների պլանավորում (օրինակ հրատարակչական ոլորտ),
3. մշակութային խնդիրներով զբաղվող հաստատությունների և կառույցների ստեղծում²: Այս ամենը պետք է նպաստեր իրանական ազգայնական արժեհամակարգի դիրքերի առավել ամրապնդմանը:

Իրանական ազգայնական դրսևորումները հատկապես նկատելի էին ԻԻՀ նախագահի ելույթներում, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում հատուկ շեշտադրվում էր իրանական ազգային ինքնության գաղափարը, որը չէր կարող դերակատարություն չունենալ երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ձևավորման մեջ: Դեռևս առաջին նախընտրական քարոզարշավի ընթացքում նախագահի թեկնածու Մ. Ահմադինեժադը իրանցիներին կոչ էր անում վերադառնալ հեղափոխության մաքուր իսլամական արժեքներին և ընդգծում էր Իրանի Իսլամական կառավարման գերակայությունը այլ կառավարությունների համակարգերի

¹ Bos D., Identity in Speech: An Analysis of Ahmadinejad's words, Presented at the School of International Relations, Tehran, 2007, p. 6.

² Мамедова Н. М., ИРАН при М. Ахмадинежаде: Памяти А. З. Арабаджяна, ИВ РАН, Москва, 2013, стр. 169.

նկատմամբ: Վերջինիս գրեթե բոլոր ելույթներում նկատելի էին Իրանը տարածաշրջանային գերտերության վերածելու ձգտումը, որով էլ պայմանավորված, մեծ շեշտադրում էր կատարվում Պաղեստինյան հիմնախնդրին, ցայտուն դրսևորում էին ստանում հակաարևմտյան դիրքորոշումները և այլն: Տարածաշրջանային հարաբերություններին վերաբերող ելույթներում մեծ դեր ունեն պատմական անցյալում արձանագրված պարսից փառավոր հաղթանակները: Հետագայում արդեն նախագահ դարձած Մ. Ահմադինեժադը տարբեր առիթներով հաճախ էր ընդգծում, որ հզոր Իրանը հարևան երկրների լավագույն բարեկամն է և տարածաշրջանային անվտանգության լավագույն երաշխավորողը³: Պաղեստինի և Իսրայելի մասին խոսելիս Մ. Ահմադինեժադը կարևորում է ազատ Պաղեստինի համար պայքարում բոլոր մուսուլմանական երկրների դերը: Ստացվում է, որ Իրանի իսլամական ինքնությունը մեծապես ազդում է երկրի արտաքին քաղաքականության վրա, մինևույն ժամանակ իր մեջ ներառելով նաև իրանական ազգայնականության տարրեր:

Ինչ վերաբերում է Իրանի միջուկային ծրագրին, ապա արևմտյան տերությունները այդ ժամանակահատվածում ձգտում էին կասեցնել կամ դանդաղեցնել իրանական միջուկային ծրագրի իրականացումը, որն էլ գրեթե բոլոր հարթություններում առնչվում է իրանական ազգայնականությանը⁴: Ուստի Մ. Ահմադինեժադի՝

միջուկային խնդրին առնչվող գրեթե բոլոր ելույթներն առատ են հակակայսերապաշտական արտահայտություններով և նախագահը հաճախ էր նշում, որ «գերտերությունները փորձում են Իրանին զրկել սեփական օրինական իրավունքից»⁵: Իսկ այն փաստը, որ Իրանը հաջողության է հասել միջուկային էներգիայի ստեղծման ոլորտում՝ համարվում է իրանական մեծ քաղաքակրթության և «ազնիվ ու խիզախ ժողովրդի» ժառանգություն:

Ազգայնական և աշխարհիկ միտումները որոշակիորեն դրսևորվեցին նաև 2009 թ. «Կանաչների շարժման» ժամանակ, որը հիմնականում բաղկացած էր նոր, հետհեղափոխական սերնդի երիտասարդներից: Թեպետ շարժման առաջացման պատճառ էր դարձել նախագահական ընտրությունների արդյունքների հետ բնակչության որոշակի հատվածի անհամաձայնությունը, սակայն գաղափարական մակարդակում այն բաժանված էր երկու բևեռների՝ աշխարհիկ և իսլամական ժողովրդավարների: Առաջինները կոչ էին անում Իրանում աշխարհիկ ժողովրդավարություն ստեղծել, մինչդեռ երկրորդները Իսլամական ժողովրդավարության կողմնակիցներն էին: Ամեն դեպքում երկու խմբերն էլ նույն պահանջներն ունեին՝ օրենքի գերակայությանը համապատասխան ժողովրդավարական պետության ինստիտուտ, կրոնի և քաղաքականության բաժանում, բոլոր փոքրամասնությունների պաշտպանություն և խոսքի ազատություն: Ցուցարարների հիմնական պահանջներից էր «Իսլամական Հանրապետություն»-ը վերանվանել «Իրանական Հանրապետության», որը ամբողջությամբ ժողովրդավարական

³ Surk B., Ahmadijad: Iran, Gulf Nations Unite, http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2007/12/03/AR2007120300807_pf.html?noredirect=on, (03, 12, 2007)

⁴ Ուշաբժան է այն հանգամանքը, որ Իրանի միջուկային ծրագիրը պետք է դիտարկել ոչ միայն որպես Իրանի Իսլամական Հանրապետության ռազմաքաղաքական անվտանգության ապահովման ռազմաբաղադրիչ, այլ նաև գործիք իրանական աշխարհայացքում ամրակայված՝ Իրանը մշտապես տարածաշրջանային գերտերության կարգավիճակում տեսնելու համատեքստում: Չնայած պաշտոնական մակարդակում այն ներկայացվում է որպես իրանական ժողովրդի և պետության իրավունքների հաստատագրում:

⁵ "Мы настроены решительно", Интервью президента Ирана Ахмадинежада "Шпигелю", <http://hedrook.vho.org/library/ahmadi3.htm>, (30, 05, 2006)

կլիներ՝ հիմնված իրանական, այլ ոչ թե արաբա-իսլամական արժեքների վրա⁶:

Նախագահության երկրորդ շրջանից՝ 2009 թ. ի վեր ԻԻՀ նախագահ Մ. Ահմադինեժադը հանդես էր գալիս Իրանի նախաիսլամական պատմության արժևորման կոչերով: Մ. Ահմադինեժադը հաճախ էր հղումներ կատարում պարսից ազգայնական սիմվոլներին, օրինակ ի դեմս Կյուրոս Մեծի: Նրա նախագահության տարիներին էր, որ Իրանը Բրիտանական թանգարանի հետ համաձայնության արդյունքում հնարավորություն ունեցավ վեց ամսով Թեհրանում պահել Կյուրոս Մեծի⁷ գլանը⁸: Պատահական չէ, որ մամուլում անգամ լուրեր էին պատվում, թե Մ. Ահմադինեժադը ցանկանում է իրանական ամանորը՝ Նովրուզը տոնել հենց Կյուրոս Մեծի դամբարանում:

Ըստ էության սա ներքին քաղաքականության տիրույթում բարձրաստիճան հոգևորականների իշխանության և շարիաթի օրենքի իրավական սահմանափակումներից ազատված աշխարհիկ ազգայնականության ձևավորման փորձ էր, ինչը կարող էր նպաստել նաև կրոնական փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական և իրավական արտոնությունների ընդլայնմանը:

⁶ Bos D., նշված աշխ., էջ 14-15.

⁷ Mehr News Agency, Iranian MP criticizes Ahmadinejad for praising Cyrus The Great, <http://www.payvand.com/news/10/sep/1173.html>, (18, 09, 2010)

⁸ «Կյուրոս Մեծի գլան»-ը կավե գլան է, որի վրա Աքքեմենյան հզոր արքան պատվիրել էր փորագրել իր ռազմական հաջողությունների և բարեգործությունների ցանկը, ինչպես նաև թվարկել իր նախնիներին: Գլանը հայտնաբերվել է Բաբելոնի պեղումների ժամանակ 1879 թ. և տեղափոխվել Բրիտանական թանգարան: Գլանը մեծ հռչակ է ստացել 1960-ականներին, երբ Մոհամմադ Ռեզա Փաիլավի շահը դրա տեքստը սահմանել է որպես մարդու իրավունքների առաջին հռչակագիր, որում ընդգծվում էր նաև ստրկության վերացման և կրոնական ազատության անհրաժեշտությունը:

2009 թ., այսինքն Մ. Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանից սկսած մեծ ուշադրություն է դարձվում կրոնական նրբերանգից առանձնացված հենց իրանական ազգայնականության գործոնին, որը պարսից լեզվում մեկնաբանվում է որպես «իրանականություն» («իրանիյաթ»), որն էլ լրատվամիջոցներին թույլ էր տալիս խոսել նախագահի և նրա թիմի նոր տեսակի քաղաքականության անցման մասին⁹: Մա խոսում է իրանական հասարակության մեջ ամրապնդվող ազգայնական միտումների մասին:

Ըստ էության, Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին իրանական ազգայնականության խոսույթը իր մեջ ներառում էր 3 հիմնական տարրեր՝ պարսկական ազգայնականությունը, իսլամիզմը¹⁰ և հեղափոխական հակակայսերապաշտությունը, որոնք ունեին հետևյալ դրսևորումները.

- շարունակել Իրանի միջուկային ծրագրի զարգացումը՝ երկիրը վերածելով տարածաշրջանային գերտերության,
- շարունակել պայքարը մուսուլմանական հողերը զավթած Իսրայել պետության դեմ,

⁹ Мамедова Н. М., նշված հոդ., էջ 170.

¹⁰ Որքան էլ պարադոքսալ թվա, սակայն Մ. Ահմադինեժադը ԻԻՀ այն նախագահներից էր, ով իր ներքին և արտաքին քաղաքականության իրականացման ճանապարհին առաջնորդվում էր միաժամանակ իրանական ազգայնականության և իսլամական արժեհամակարգի պահպանման համադրմամբ: Վերջինս մի կողմից հայտարարում էր թաքուցյալ Իմամ Մահդիի վերադարձի մասին, մյուս կողմից մեծարում և խոնարհվում էր պարսից փառավոր անցյալը, ի դեմս Կյուրոս Մեծի, կերտողների առաջ: Վերոնշյալի համատեքստում հարկ ենք համարում ընդգծել, որ ազգայնականությունն ու իսլամիզմը միմյանց չեն հակասել Մ. Ահմադինեժադի վարած քաղաքականության մեջ, ընդհակառակը, վերջինս իսլամը որպես գործիք է ծառայեցրել իրանական ազգայնականությանը վերաբերող զաղափարներին:

ДИСКУРС ИРАНСКОГО НАЦИОНАЛИЗМА ВО ВРЕМЕНА ПРАВЛЕНИЯ М. АХМАДИНЕЖАДА (2005-2013 ГГ.)

**Петросян Лиана
(Резюме)**

Несмотря на то, что дискурс национальной идентичности в Иране имеет многовековую историю но с 20-го века основной характеристикой внутренних и внешних связей страны был национализм. Различные элементы иранского национализма, в зависимости от ситуации, сыграли особенную роль в формировании политики Махмуда Ахмадинежада. Почти во всех выступлениях М. Ахмадинежада было заметно стремление Ирана стать региональной сверхдержавой. В основном, во времена провления М. Ахмадинежада дискурс иранского национализма содержал три основных элемента: персидский национализм, ислаимзм и революционный антиимпериализм.

THE DISCOURSE OF IRANIAN NATIONALISM UNDER THE PRESIDENCY OF M. AHMADINEJAD (2005-2013)

**Petrosyan Liana
(Summary)**

Though the discourse of national identity has a history of centuries in Iran, the main characteristic of the Iranian domestic and foreign relations since the 20th century was the nationalism. Different elements of Iranian nationalism, depending on the situation, have played a different role in the formation of Mahmoud Ahmadinejad's policy. Almost in all speeches of M. Ahmadinejad was noticeable Iran's aspiration to become a regional superpower. In essence, during the presidency of M. Ahmadinejad, the discourse of Iranian nationalism was containing three main elements: Persian nationalism, Islamism, and revolutionary anti-Imperialism.

• նախանշելով երկրորդ Իսլամական հեղափոխության զարուստը՝ հող նախապատրաստել թաքուցյալ Իմամի վերադարձի համար և պայքարելով Իրաքի սուննիական վերնախավի դեմ՝ հասնել շիա մուսուլմանների միասնությանը.

• Արևելք-Արևմուտք հակադրության պայմաններում վերացնել ԻԻՀ մշակույթին առնչվող յուրաքանչյուր արևմտյան դրսևորում:

Ամփոփելով պետք է եզրակացնել, որ հետհեղափոխական Իրանում քաղաքական ամենաբարձր վերնախավի մակարդակում իրանական ազգայնականության՝ քաղաքական խոսույթի դաշտ տեղափոխելու միտումը նկատվել է հենց նախագահ Մ. Ահմադինեժադի կառավարման տարիների ընթացքում: Ընդ որում, նշված հանգամանքը շատ ավելի վառ արտահայտվել է Մ. Ահմադինեժադի կառավարման երկրորդ շրջանում, ինչի համար ամենայն հավանականությամբ խթան է հանդիսացել 2009 թ. հետընտրական գործընթացներում ընդդիմության կողմից իրանական ազգայնականության և ինքնության ընդգծված արձարծումը: Ուշագրավ է նաև, որ անկախ ԻԻՀ նախագահ Մ. Ահմադինեժադի ներքին և արտաքին քաղաքական ուղեգծի հանդեպ այժմ Իրանում առկա ոչ միանշանակ մոտեցումներից, հենց նա էր, որ իրանական ազգայնականության որոշակի տարրեր ներմուծեց բացառապես «իսլամական օրենսգետի կառավարման» (վելայաթե ֆադիհ) համակարգի քաղաքական խոսույթ:

Կոստանյան Վահան *

ԱՅՐՈՒՄԱԿԱՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Քանալի քառեր՝ այրումներ, կացարան, տեղաբնիկ ժողովուրդներ, ծագումնաբանություն, Աղբրեջան

Այրումները էթնիկ խումբ են, որոնց բնակեցման տարածքն ընդգրկում է Հայաստանի և Արցախի Հանրապետություններին սահմանակցող տարածքները, աղբրեջանական հանրապետության Ղազախի և Դաշքեսանի շրջանները¹: Այրումական խմբեր են ապրում նաև Թուրքիայի Հանրապետության Իզմիրի շրջանում, Իրանի Իսլամական Հանրապետության Մակվի հատվածում, Վրաստանի հարավային մասում²: Այրումաբնակ գյուղեր են եղել նաև ներկայիս Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան և Արցախի Հանրապետության արևելյան շրջաններում³:

Այրումները հանդիսանում են Կովկասի քիչ ուսումնասիրված հանրություններից մեկը: Նրանց մասին որպես առանձին էթնիկ խմբի, հիշատակումներ չեն պահպանվել Խորհրդային Միությունում անցկացված մարդահամարներում: Սակավ ուսումնասիրված լինելու պատճառով գիտական հանրության շրջանակում չկա միասնական կարծիք այս խմբի ծագումնաբանության վերաբերյալ: Այս առնչությամբ որոշակի եզրահանգումներ կատարելու համար կարևոր է այրումական կացարանների և կենցաղի ուսումնասիրությունը, ինչը թույլ է տալիս կատարել որոշակի օբյեկտիվ եզրահանգումներ:

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ vahan.kostanyan@ysu.am

¹ Кобычев В. П., Айрумы, Советская этнография, Москва, 1962, с. 13.

² Минорский В. Ф., История Ширвана и Дербенда, Москва, 1965, с. 108-113.

³ Акты, собранные Кавказской археографической комиссией, Том 1, Тифлис, 1870, с. 597.

Այրումական կացարանները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ Քօթ, Տեթթալու, Տիրանի կամ Balıxbeli: Դրանցից հնագույնը համարվում են հողաշեն Քօթ-ները, որոնք ունեն հարթ տանիք, ինչի պատճառով էլ տեղացիների կողմից դրանք անվանվում են Yastıey՝ թարգմանաբար «հարթտուն»: Սրանց հարկի տակ ժամանակին ապրում էին այրումներն իրենց ընտանի կենդանիների հետ միասին: Նրանց կեցավայրերն իրարից բաժանված են եղել մի քանի գերանների միջոցով կամ կենդանիներն ուղղակի կապվել են սրահի անկյուններից մեկում: Հետագայում այս կացարանների կառուցվածքային զարգացումը բերել է նրան, որ մեկ հարկի տակ կառուցվում էին կիրառական տարբեր նշանակություն ունեցող մի քանի խցեր, որոնց թիվն արդեն կախված էր ընտանիքի մեծությունից և բարեկեցության աստիճանից: Նման կացարաններում ընտանի կենդանիները և բնակիչները շարունակում էին օգտվել միևնույն մուտքից, որի միջոցով էլ կատարվում էր օդափոխությունը: Նման տներն աչքի չէին ընկնում իրենց ամրությամբ, իսկ հարթ տանիքն իր հերթին չէր կարողանում բնակիչներին պաշտպանել անգամ թույլ ուժգնության անձրևից: Դրանք առավելապես նախատեսված են եղել ձյունից և սառնամանիքից պաշտպանվելու համար: Հետագայում ավելի բարդ շինարարական միավորների ի հայտ գալու հետ մեկտեղ թօթ-ն սկսում է օգտագործվել որպես ախոռ մանր և խոշոր եղջերավոր անասունների համար:

Կացարանի դեր կատարող երկրորդ՝ ավելի ուշ շրջանի կառույցները կրկին հողաշեն էին և արդեն ունեին հավասար քառանկյան տեսք: Դրան տեղացիներն անվանում էին Տեթթալու⁴: Դրանք առանձնանում են գետնից վեր բարձացող իրենց կոնանման տանիքներով: Այս շինությունները աչքի են ընկնում համեմատաբար ավելի բարձր դիմացկունությամբ և հարմարավետությամբ՝ գերազանցելով նաև հետագայում

⁴ Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 78.

կառուցված կացարանների երրորդ տիպին: Սրանց կառուցումը սկսվում էր հողահարթեցման աշխատանքներից (ինչը որոշ դեպքերում անգամ չէր կատարվում), ապա նշագծվում էր քառակուսին, որը սովորաբար ուներ 1-1,5 մետր երկարություն և 2,5-3 մետր լայնություն, և դրան հաղորդվում էր որոշակի խորություն: Փորման աշխատանքների կատարումից հետո բոլոր կողմերում տեղադրվում էին 4-ական գերաններ հիմքն ամրացնելու համար, ապա արդեն 18 այլ գերաններ բրգաձև շարելով՝ վեր էր խոյանում կացարանը: Շինության վերնամասում շինարարը թողնում էր քառակյուն երթիկ, որը պիտի ծառայեր օդափոխության և ծխի հեռացման համար: Շինությանն էրում մնացած հողային զանգվածը դուրս էր բերվում, ոչ թե բացված դռնից, այլ բահերով դուրս էր նետվում տանիքին բացված պատուհանից: Տանիքի հողով պատվելու արդյունքում կացարանը, որն արտաքինից փոքր հողաթումբ էր հիշեցնում, դառնում էր էլ ավելի ջերմակայուն:

Կացարանների երրորդ խումբն իր տեսքով նման է առաջին խմբին՝ տարբերությամբ, որ ունեն ոչ թե թօթ-ին հատուկ հարթ տանիք, այլ՝ բրգաձև: Սրանք տեղացիներն անվանում են Տիրվանի կամ Balıxbeli (թարգմանաբար՝ ձկան մեջք): Կացարանի այս տեսակը, չնայած ավելի ուշ հայտնվելուն, չի գերազանցում նախորդներին իր հարմարավետությամբ և դիմացկունությամբ: Այն չի համապատասխանում այրումների կենսակերպին և իրենց կենցաղավարման ոճին: Նման կացարանների ի հայտ գալը բացատրվում է դրանց շինարարական գործընթացում նյութական և մարդկային պակաս ռեսուրսների ներգրավմամբ:

Բոլոր երեք տեսակի հողաշեն այս կառույցները ունեն էլք ոչ թե անմիջապես բակ, այլ մի նեղ երկար միջանցք, որը ծածկված է ծառերի ճյուղերով, և տեղացիներն այն անվանում են Çardax⁵: Հարկ է նշել, որ տնտեսության զարգացման արդյունքում այրումական ընտանիքի բուն կենսատարածքը, նրանց կենցաղավարման պայմանները և կենդանիների ախտատեղին առանձնացվեցին

իրարից, ինչը թույլ տվեց լուծել ոչ միայն առողջական-սանիտարական, այլև մշակութային մի շարք հարցեր: Մասնավորապես այն հանգամանքը, որ նախկինում մանկահասակ երեխաները ակամա ականատես էին դառնում կենդանիների բազմացման, ծննդաբերության և այլ ակտերի, ինչն իր անդրադարձն էր գտնում նրանց՝ սեփական վարքագծի զանազան դրսևորումների մեջ: Սակայն անգամ նման փոփոխությունները մեծապես չփոխեցին այրումների կենցաղը: Բոլոր երեք տիպի կացարանները չէին երաշխավորում դրանց բնակիչների պաշտպանվածությունը տեղումնառատ եղանակից և զանազան հիվանդություններից: Անձրևային եղանակի ժամանակ դրանցում ապրելը անհնարին էր դառնում. տանիքը կաթում էր, իսկ պատերը ժամանակի ընթացքում դանդաղորեն փլուզվում էին:

Այրումների կողմից կառուցված այս տները աչքի են ընկնում իրենց պարզությամբ և ավելի շատ հիշեցնում էին քարանձավներ: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել Ղարաքաշլիի կողմից գրի առնված «айрум, который живет в айруме» արտահայտությունը⁶, որում հիշատակված երկրորդ այրում բառի հիմքում ընկած է հայերեն այր, քարայր բառը:

Այրումական գյուղերում 20-րդ դարի սկզբում կատարված գիտարշավների ընթացքում գրանցվել են նաև բարդ քարաշեն տների օրինակներ, որոնք բոլորն անխտիր, տեղացիների վկայությամբ, կառուցված են եղել հարևանությամբ ապրող հայ արհեստավորների կողմից: Այս կառույցները տեղացիների կողմից ստացել են օտաճ անվանումը: Դրանք ունեին կամ բրգաձև, կամ հարթ տանիք: Նման կառույցները կազմում էին այրումական գյուղական բնակարանային ֆոնդի 2-3%-ը: Պետք է նշել, որ ոչ միայն բնակարանային ֆոնդի պարագայում, այլև գյուղատնտեսական և կենցաղային իրերի առումով, այրումները

⁵ Նույն տեղում էջ 80.

⁶ Каракашли К., Об айрумах, Издание Обществя Облседования и Изучения Азербайджана, Баку, 1929, с. 26.

որակյալ գործիքներ ձեռք բերելու համար մշտապես դիմել են հարևանությանը ապրող հայերին:

Ալեկքերովի կողմից կատարված գիտարշավի արձանագրած արդյունքների համաձայն՝ զուտ այրումական ծագում ունեցող կացարանները կոչվում են «ղարաղամ», որտեղ «ղարա» բառային մասնիկը հեղինակը ստուգաբանում է ոչ թե որպես «սև», այլ «պարզ, պրիմիտիվ»⁷⁷: Այս կացարանի նկարագրությունը ի մեծի մասամբ համընկնում է Ղարաքաշլիի կողմից նկարագրված կացարանների երկրորդ տիպին: Հեղինակի հետազոտության համաձայն՝ այրումներն իրենց կացարանները կառուցում էին լեռների արևկող շրջանում, ջրային որևէ ավազանի մոտակայքում: Ղարաղամի դուռը նայում էր դեպի հարավ կամ հարավ-արևմուտք: Այսպիսի կացարանների կառուցումը, հաշվի առնելով շինարարական տեխնիկան, կարող էր հատուկ լինել միայն նստակյաց կյանքի խորը ավանդույթներ ունեցող ժողովրդին, ինչն էլ հակափաստարկ է հանդիսանում այն տեսությանը, համաձայն որի՝ այրումները օդուզական ցեղերի հետնորդներ են: Նման կացարանների նախնական զարգացման արեալ համարվում են անտառային շրջանները՝ մասնավորապես տեղայնացնելով այն Ղարաբաղի և Գանձակի շրջակայքում: Հաշվի առնելով, որ այրումների հայ-հոռոմներից ծագման վարկածը բավականին ծանրակշիռ է, թույլ կտանք մեզ ենթադրել, որ այս բնակավայրերի նախնական զարգացման արեալ կարող է հանդիսացած լինել նաև ներկայիս ՀՀ Տավուշի մարզի անտառային շրջանները:

Այս կացարանների հիմնական առանձնահատկությունը համարվում է դրանց տանիքը: Կացարանի կառուցումը սկսվում է ոչ թե հիմքի և պատերի կառուցումից, այլ հարթ տարածության վրա դրա տանիքի ամրացումից: Տանիքի կառուցվածքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն բաղկացած է մեկը մյուսի վրա բարձրացող 4 խորանարդներից, որոնցից յուրաքանչյուրն ունի հստակ չափսեր, որոնց պահպանումն էր երաշխավորում կացարանի հարաբերական ամրությունը:

⁷⁷Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 77

Առանձնահատուկ պետք է նշել, որ հեռվից այս կացարանները և այրումական գերեզմանները շատ բարդ է տարբերել մեկը մյուսից, եթե դրանք դիտարկել հյուսիսային ուղղությունից, որտեղից չի երևում կացարանների դուռը: Կացարաններ հիշեցնող նման գերեզմանները հատուկ են եղել միայն բազմադարյա նստակյաց կյանք վարած ժողովուրդներին, որոնք ձգտում էին ստեղծել նույն հարմարավետ պայմանները հանգուցյալի համար նաև մահվանից հետո: Եվ այդ իսկ պատճառով նրանց հուղարկավորում էին կացարաններ հիշեցնող գերեզմաններում, ուր, ի դեպ, հանգուցյալին մտցնում էին դռնից, այլ ոչ թե իջեցնում վերնից: Թաղման նման ծեսի ու գերեզմանների տեսքը, ևս մեկ ապացույց է, որ այրումները հանդիսանում են տեղաբնիկ ժողովուրդ: Այսօր նմանօրինակ գերեզմաններ են պահպանվել աղբրեջանական հանրապետության տարածքում գտնվող Խաշբուլախ գյուղում: Հարկ է նշել, որ այսպիսի մի գերեզմանատուն էլ պահպանվել է այսօր հայկական Բաղանիս և Ոսկեպար գյուղերի՝ Աղբրեջանի հետ սահմանակցող գոտում⁷⁸: Դրանց՝ աղբրեջանական կրակի տակ գտնվելու փաստը դժվարեցնում է վերջիններիս ստույգ ուսումնասիրությունը, սակայն տեղացիների նկարագրությունները համապատասխանում են Խաշբուլախի գերեզմանների՝ մեզ հասած նկարներին:

Ամփոփելով կարող ենք նշել, որ այրումական կացարանների կառուցվածքի քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ի դեմս այրումների՝ գործ ունենք նստակյաց կյանքի ավանդույթ ունեցող էթնիկ միավորի հետ, ինչն ուղղակիորեն ապացուցում է, որ թյուրք այրումական ծագումնաբանության օդուզական վարկածը⁷⁹:

⁷⁸ Դաշտային աշխատանք:

⁷⁹ Велиев М. Г. (Бахарлы). Азербайджан (Физико-географический, этнографический и экономический очерк), Баку, 1921, с. 36.

ОПИСАНИЕ АЙРУМСКОГО ЖИЛЬЯ

Костанян Ваган
(Резюме)

Айрумы-этническая группа, представителями которого населены ареалы в Иране, Азербайджане, Турции и Грузии. Нужно отметить, что до распада Советского Союза айрумонаселенные пункты были и на территории нынешней Республики Армения. Одним из методов выяснения этногенеза айрумов является исследование айрумского жилья, которые делятся на 3 группы. Анализ этих конструкций показывает, что мы имеем дело не с кочевниками и версия тюркского происхождения айрумов отрицается.

OVERVIEW OF AYRUM HABITATION

Kostanyan Vahan
(Summary)

Ayurms are an ethnic group located in Azerbaijan, Iran, Turkey and Georgia, There were villages populated with Ayurms in the territory of the Republic of Armenia before the collapse of Soviet Union. One of the methods of study of ethnogenesis of Ayurms is the research of Ayrum habitation, which could be divided into 3 groups Pəyə, Şeşəəyluy, Şirvani or Balıxbeli. The study of constructions clearly proves, that Ayurms could not be nomad tribe and consequently the version of Turkic origins of Ayurms could not be proved.

Брутян Ануш*

ПЕРСПЕКТИВЫ РОССИЙСКО-ИРАНСКОГО
СОТРУДНИЧЕСТВА ПОСЛЕ ПОДПИСАНИЯ СВПД

Ключевые слова: Иран, ИРИ, Россия, РФ, СВПД, двусторонние отношения, ядерная программа, ЯП

Достижение в 2015 году Совместного всеобъемлющего плана действий (СВПД), который стал результатом многолетних переговоров постоянных членов Совета Безопасности ООН и Германии с одной стороны и Исламской республики Иран с другой, стало довольно значимым событием международного масштаба. С началом реализации достигнутого соглашения и отмены санкций, введенных в результате ряда резолюций СБ ООН, у Ирана появились многочисленные возможности для налаживания или/и углубления сотрудничества с различными акторами (государствами, международными организациями, транснациональными корпорациями и т.д.). Январь 2016 г., ознаменовавшийся началом реализации СВПД (после принятия в 2015 году резолюции СБ ООН 2231, которая одобрила СВПД), стал отправной точкой также для укрепления российско-иранского взаимодействия.

Директор Московского центра Карнеги Д. Тренин в статье *Russia and Iran: Historic Mistrust and Contemporary Partnership*¹ упоминает, что даже кратковременное использование Россией в августе 2016 г. иранской авиабазы Шахид Ноже у г. Хамадан для нанесения точечных бомбовых ударов на территории Сирии символизирует, что российско-иранские отношения вступили в новую

* Магистр международных отношений, старший лаборант ЦЦКИ ЕГУ, E-mail: anush.brutyanyan@gmail.com

¹Trenin D., *Russia and Iran: Historic Mistrust and Contemporary Partnership*, <https://carnegie.ru/2016/08/18/russia-and-iran-historic-mistrust-and-contemporary-partnership-pub-64365>

фазу, Д. Тренин особо подчеркивает тот факт, что «Иран впервые с 1979 года разрешил иностранным военным действовать с его территории»². Но на том же примере с авиабазой можно вспомнить, что данное событие впоследствии получило негативную огласку³, что доказывает разнонаправленную динамику сотрудничества.

На сегодняшний день одной из наиболее перспективных и отчасти реализованных возможностей сотрудничества между Ираном и Россией является взаимодействие в сфере ВПК. История, связанная со срывом поставок ЗРС (зенитно-ракетных систем/ комплексов) С-300 которая произошла после принятия СБ ООН резолюции 1929 в 2010 году, была ярко окрашена в политический оттенок. Решение этого проблемного вопроса, которое было найдено спустя 5 лет, демонстрирует позитивный сдвиг в двусторонних отношениях, но необходимо также отметить, что Иран в связи со срывом поставок подал иск в Международный суд, хотя позже он был отозван. В течение последних двух лет появилась информация о том, что Иран заинтересован в поставках ЗРК С-400⁴. Информация попала в новостные сайты на фоне проведения переговоров по поставкам того же ЗРК в Саудовскую Аравию. Заявления различных СМИ о достигнутых в ходе визита короля Саудовской Аравии Салмана Аль Сауда в Россию в октябре 2017 года соглашениях оказали значительное влияние на выражение беспокойства со стороны Израиля и Ирана, тем более учитывая, то, что в мае того же года Саудовская Аравия подписала крупнейший контракт с США на закупку вооружений на сумму 110 млрд. долл.⁵ Пока что нет официальных подтверждений относительно поставок ЗРС С-400 ни в Иран, ни в Саудовскую Аравию. Но можно сказать, что перспективы сбыта продукции российского ВПК на территории Ирана более

² Там же.

³ Кожанов Н., Российская база в Иране: почему Тегеран передумал, <https://carnegie.ru/commentary/64407>

⁴ Кампер Г., Поставки вооружений в Иран: как ракеты Путина меняют мир, <https://inosmi.ru/politic/20160220/235487338.html>

⁵ "U.S.-Saudi Arabia sign immediate \$110B arms deal". NBC News, <https://www.cnbc.com/2017/05/20/us-saudi-arabia-seal-weapons-deal-worth-nearly-110-billion-as-trump-begins-visit.html>

высоки, чем в Саудовской Аравии.

Еще одна перспективная линия для углубления сотрудничества, которая вновь стала актуальной в особенности после достижения СВПД – взаимодействие в ядерной сфере. Первый энергоблок Бушерской АЭС был окончательно передан Ирану в эксплуатацию в апреле 2016 года. Состоявшийся в марте 2017 года визит иранского президента Х. Роухани в Россию, ознаменовался многочисленными договоренностями. Были затронуты темы Бушерской АЭС, проекта строительства ТЭС «Сирик», и иные проекты в области энергетики, всего было подписано 16 двусторонних соглашений. Обсуждались нефтегазовые проекты, в сумме достигающие отметки в 10 млрд. долларов⁶. Интенсификация отношений и визит иранского президента в Москву в 2017 году, наряду с предвыборной активизацией также можно связать с тем, что компания Атомстройэкспорт начала работы по строительству второго энергоблока на АЭС (Бушер-2) и в октябре 2016 года состоялась закладка первого камня. Если все пройдет согласно предварительным договоренностям, то это будет довольно прибыльный контракт, но если возникнут проблемы, это может подорвать реализацию строительства и введения в эксплуатацию планируемого (третьего) энергоблока, следовательно, в дальнейшем Росатом при отсутствии заинтересованности иранской стороны может упустить возможность реализации достаточно прибыльного проекта. Особую значимость ядерных проектов ИРИ для Росатома можно понять благодаря тому, что у Атомстройэкспорта всего 11 представительств в восьми зарубежных странах и одно из них с 1999 г. открыто в Тегеране⁷.

Наряду с тем, что России и Ирану, несмотря на сложности, удалось реализовать введение Бушерской АЭС в эксплуатацию, стоит отметить, что и у КНР есть немалые возможности для углубления

⁶ Брутян А., Чего ждать дальше: перекрестные встречи, <https://novostik.com/chego-zhdat-dalshe-perekrestnye-vstrechi>

⁷ Страны присутствия, официальный сайт Атомстройэкспрта <http://www.ase.atomstroyexport.ru/about/countries/>

взаимодействия с ИРИ в области ядерной энергетики, в особенности после подписания СВПД. Как сообщает ресурс «Тасним ньюз», уже к 2016 году было соглашение о том, что Китай будет строить 2 энергоблока АЭС в прибрежной полосе Мекран на юго-востоке страны (на берегу Оманского залива)⁸. Согласно статье Nuclear Chief: Tehran Open to Nuclear Cooperation With Tokyo⁹ глава ОАЭИ (Организация по атомной энергии Ирана) А. Салехи в сентябре 2016 года вел переговоры относительно сотрудничества в области строительства АЭС с Японией, которая выражала готовность реализовать совместные проекты еще 6 лет назад. Сотрудничество ИРИ в сфере развития мирного атома с рядом европейских стран также может укрепиться и стать альтернативой российскому, поэтому сегодня российские компании должны прилагать усилия, чтобы остаться одними из основных партнеров ОАЭИ в этой области.

Важной датой с точки зрения взаимодействия стал также октябрь 2017 г., когда Комитет Государственной Думы по энергетике и Комиссия по энергетике Меджлиса Исламского Совета Ирана договорились о создании совместной рабочей группы по вопросам энергетике¹⁰ и подписали «дорожную карту» российско-иранского сотрудничества в энергетической сфере. Тогда же обсуждался широкий спектр вопросов двусторонней энергетической повестки, в том числе в газовой, нефтяной сферах и электроэнергетике.¹¹

Все более актуальной становится тема кибер- и информационной безопасности, особенно если это касается столь чувствительной сферы как ядерная энергетика. В этом контексте

⁸ Nuclear Chief: Tehran Open to Nuclear Cooperation With Tokyo, Financial Tribune, <https://financialtribune.com/articles/energy/49725/nuclear-chief-tehran-open-to-nuclear-cooperation-with-tokyo>

⁹ China to Build 2 Nuclear Power Plants in Iran: AEOI Chief, Tasnim News Agency, <https://www.tasnimnews.com/en/news/2016/01/19/975906/china-to-build-2-nuclear-power-plants-in-iran-aeoi-chief>,

¹⁰ Комитет Государственной Думы по энергетике, электронный доступ <http://www.komitet2-13.km.duma.gov.ru/Novosti-Komiteta/item/14500401/> от 15, 04, 2018

¹¹ Министерство энергетики, электронный доступ <https://minenergo.gov.ru/node/8236> от 15, 04, 2018

наиболее показательным является имевший место в 2010 году случай с вирусом Stuxnet, который нанес серьезный урон иранской ядерной программе, интересным являлся тот факт, что стратегически важный объект оказался уязвим и понес значительный ущерб из-за неосторожности сотрудника. Учитывая ускоренное развитие IT и наличие в Иране и России высококвалифицированных специалистов в технической сфере и специалистов в области безопасности – эта сфера взаимодействия также может стать довольно перспективной.

Сфера гражданской авиации может стать направлением сотрудничества, в которой и Россия, и Иран одинаково заинтересованы. Крушение воздушного судна в Исфахане в феврале 2018 года в очередной раз показало, что от санкций часто страдают простые жители страны, никак не связанные с ядерной программой. После достижения СВПД Ирану удалось договориться с западными странами о поставках европейского Airbus¹², ATR¹³ и американского Boeing, в 2017 году началась реализация договоров. Но после выхода США из ядерного соглашения и введения вторичных санкций, Airbus и Boeing отказались от уже достигнутых договоренностей по поставкам воздушных судов¹⁴. Казалось бы, появляется возможность у российского Sukhoi Superjet 100, но при его сборке используются иностранные комплектующие, в том числе и создаваемые американскими компаниями, следовательно, для поставок воздушных судов в ИРИ необходимо согласие Управления по контролю над иностранными активами (подразделение Министерства финансов США),¹⁵ вопрос до сих пор остается открытым.

Иранский нефтегазовый рынок – также довольно перспективная отрасль для развития отношений. 4 октября 2017 г. российская

¹² Иран получил первый Аэробус, Иран Сегодня, <http://iransegodnya.ru/post/view/934>

¹³ В Иране поставлены первые четыре самолета ATR, ИА Pars Today, <http://parstoday.com/ru/news/iran-i66490>

¹⁴ Boeing не долетит до Ирана, Коммерсант, <https://www.kommersant.ru/doc/3651391>

¹⁵ Иран надеется, что Россия как можно скорее решит вопрос о поставке SJS-100, РИА Новости <https://ria.ru/economy/20180207/1514132313.html>

нефтяная компания Лукойл и иранская НИОС подписали меморандум о геологоразведке. Тогда Лукойл особо интересовался работой на двух иранских месторождениях — Аб-Теймур и Мансури в провинции Хузестан¹⁶. Но после введения вторичных санкций со стороны США Лукойл предпочел уйти из Ирана¹⁷, чтобы не попасть под действие санкций. С другой стороны отношения в нефтяной сфере могут укрепиться благодаря механизму «нефть в обмен на товары»¹⁸, который прорабатывался сторонами до достижения СВПД. Но необходимо отметить, что с началом реализации СВПД в январе 2016 г. роль данной программы для ИРИ значительно снизилась, но после выхода США из СВПД и ужесточения односторонних санкций данный механизм снова может стать актуальным. Торговый представитель России в Иране А. Луганский после тестирования механизма пояснил, что в первую очередь в качестве «товаров» из России осуществляются поставки рельсов, локомотивов, производится электрификация железной дороги¹⁹. В этом направлении с Ираном взаимодействуют такие компании как ГАЗ, Камаз, Уралвогонзавод, Трансмашхолдинг, последний еще в 2017 году заключил с Организацией промышленного развития и реновации Ирана соглашение об открытии совместного предприятия для вагонов метро и их компонентов²⁰. Ведущий научный сотрудник Центра Азии и Ближнего Востока РИСИ В. Иваненко отмечает, что российская тяжёлая техника (например, экскаваторы и карьерные самосвалы, челябинские и чебоксарские бульдозеры, трубоукладчики, погрузчики) весьма популярны в Иране, и в связи с этим было бы

полезным создать, скажем, на севере ИРИ в свободной экономической зоне (СЭЗ) Энзели совместное предприятие с выставочным центром²¹. Важным шагом для реализации потенциала иранской свободной экономической зоны «Энзели» и российской особой экономической зоны «Лотос» в Астрахани можно считать подписанное соглашение²², согласно которому астраханская ОЭЗ бронирует земельный участок площадью в 20 Га сроком на 6 месяцев для размещения промышленных предприятий Ирана (в основном в сфере строительства и обслуживания морских судов и портов).

Иран и Россия стараются активизировать сотрудничество в экономической сфере; в мае 2015 года было сделано «Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики о сотрудничестве по сопряжению строительства Евразийского экономического союза и Экономического пояса Шелкового пути»²³. Если учесть тот факт, что Мегри в 2017 году стала Свободной экономической зоной и что в 2018 году между ИРИ и ЕАЭС подписано Временное соглашение, ведущее к образованию ЗСТ, то можно отметить, что Иран прекрасно вписывается в оба проекта (ЭПШП²⁴ и ЕАЭС) в качестве одного из объединяющих звеньев. ИРИ ощутит положительные последствия как от участия в ЭПШП, так и от будущего создания ЗСТ с ЕАЭС, это предоставит Ирану не только дополнительные и политические экономические рычаги в ряде регионов, где Иран традиционно присутствует: на Южном Кавказе, Ближнем Востоке, в Центральной Азии, но и откроет возможности

¹⁶ «Лукойл» и иранская компания НИОС подписали меморандум о геологоразведке, Иран Сегодня, <http://iransegodnya.ru/post/view/1975>

¹⁷ «Лукойл» прекратил закупки нефти у Ирана, Интерфакс, <https://www.interfax.ru/russia/631871>

¹⁸ РФ подтвердила интерес к программе "нефть в обмен на товары" с Ираном, Интерфакс, <https://www.interfax.ru/business/620900>

¹⁹ Перцова В. Натуральный обмен. Зачем Россия импортирует нефть из Ирана, Форбс, <http://www.forbes.ru/biznes/356741-naturalnyy-obmen-zachem-rossiya-importiruet-neft-iz-irana?photo=1>

²⁰ Трансмашхолдинг и IDRO открывают совместное предприятие по созданию и обслуживанию вагонов метро, https://www.tmholding.ru/press_office/events/8106.html?sphrase_id=14141

²¹ Иваненко В. Иранская ядерная программа и российско-иранские отношения, //Проблемы национальной стратегии № 1 (34) 2016//, с. 109-131 https://riss.ru/images/pdf/journal/2016/1/08_.pdf

²² Иранская СЭЗ «Энзели» будет привлекать резидентов в астраханскую ОЭЗ «Лотос», <http://www.sezlotos.ru/press-tsentr/astrahanskaya-oez-lotos-i-iranskaya-sez-enzeli-dogovorilis-o-sotrudnichestve/>

²³ Полный текст документа «Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики о сотрудничестве по сопряжению строительства Евразийского экономического союза и Экономического пояса Шелкового пути», <http://kremlin.ru/supplement/4971>

²⁴ В рамках проекта «Один пояс и один путь»

для налаживания отношений со странами Юго-Восточной Азии. Здесь стоит отметить и то, что Армения в случае создания ЗСТ ЕАЭС - Иран получит через территорию Ирана прямой (хотя и не сухопутный) выход к странам-членам ЕАЭС.

Как возможность для развития российско-иранских отношений уже несколько лет подряд обсуждается идея использования национальных валют во внешнеэкономических расчетах²⁵, стоит отметить, что Иран уже заявил об отказе от использования долларов во внешней торговле в пользу евро²⁶. Вполне возможно, что в будущем государства перейдут на национальные валюты во взаимных расчетах. Но девальвация иранского риала с начала 2018 года²⁷, (к примеру на начало года доллар США можно было купить за 43,000 риалов, тогда как в сентябре того же года на черном рынке доллар стоил 138,000²⁸) и зависимость обеих валют от введенных санкций придает большой фактор неопределенности, именно поэтому пока наиболее оптимальной валютой для взаимных расчетов остается евро.

Региональная безопасность – та сфера, в которой государства взаимодействуют довольно тесно, ярким примером может служить Астанинский формат, который, несмотря на сложность отношений среди самих стран-гарантов перемирия в Сирии (ИРИ, Россия и Турция) с марта 2013 года является довольно действенной платформой для поиска путей выхода из сирийского кризиса. ИРИ и РФ в вопросах безопасности сотрудничают и в рамках международных организаций, примером может служить ШОС (Россия – член, Иран - наблюдатель). Иран наряду с Китаем также

сотрудничает со странами-членами ОДКБ в области борьбы с терроризмом.

Обращаясь к многостороннему формату и региональным вопросам, необходимо подчеркнуть, что подписание Конвенции о правовом статусе Каспийского моря в августе 2018 года является немаловажным достижением. Например, ст. 3.6 утверждает, что деятельность Сторон на Каспийском море будет осуществляться на принципе неприсутствия на Каспийском море вооруженных сил, не принадлежащих Сторонам, в Конвенции также затронут ряд экологических тем наряду со строительством подводных кабелей и трубопроводов. На самом деле документ состоит из ряда пунктов, создающих общие рамки взаимодействия, в Конвенции также предусмотрен ряд гибких механизмов по решению спорных вопросов и введению дополнительных положений.

Говоря о двустороннем взаимодействии, стоит принять во внимание тот факт, что Иран после достижения СВПД в 2015 году, старался в первую очередь наладить диалог с Западом. В России в тот же период (в особенности после крымских событий в марте 2014 года) наблюдалась обратная тенденция: накапливалось все больше противоречий с Европейскими странами, и становилось очевидным стремление РФ сотрудничать с «незападными» странами.

С другой стороны на российско-иранском сотрудничестве негативно сказываются вопросы, касающиеся взаимодействия России с Израилем или Саудовской Аравией. В настоящий момент в отношениях ИРИ и России настораживает то, что они во многом основаны на негативном восприятии США, что в свою очередь не может стать надежной базой для конструирования длительного стабильного партнерства. Для поднятия взаимодействия на более качественный уровень необходимо попытаться активизировать второй трек дипломатии (так называемая экспертная д.), который является довольно действенным инструментом для налаживания связей.

Можно сказать, что у ИРИ и РФ есть довольно много

²⁵ Россия и Иран откажутся во взаимных расчетах от доллара, <http://www.armbanks.am/2014/09/30/79916/>

²⁶ Jalili S., Iran to replace US dollar with euro in financial reports, <https://www.aljazeera.com/news/middleeast/2018/04/iran-replace-dollar-euro-financial-reports-180418183855096.html>

²⁷ Стоит отметить, что в конце 2017- начале 2018 гг. в Иране пошла протестная волна, одной из ее причин явилось недовольство населения социально-экономическим положением.

²⁸ Dehghanpisheh B., Iranian rial hits record low at 138,000 to dollar: Bonbast website, <https://www.reuters.com/article/us-iran-economy-rial/iranian-rial-hits-record-low-at-138000-to-dollar-bonbast-website-idUSKCN1LK1MY>

перспективных направлений сотрудничества, но на сегодняшний день реализуется лишь малая их часть – в основном осуществляется продажа продукции военно-промышленного комплекса и реализуются совместные работы в сфере ядерной энергетики, большую долю товароборота составляют также пищевые продукты (злаки, фрукты и овощи)²⁹. Интересно и то, что в период с 2013 по 2018 гг. наибольший товарооборот был достигнут в 2016 году³⁰ (более 2 млрд. долл. США), что также можно связать с реализацией договоренностей по поставкам ЗРК С-300 после принятия СБ ООН резолюции 2231 (2015).

Продолжая экономическую тему стоит подчеркнуть, что согласно гравитационной модели Э. Роза³¹ большое значение в выстраивании торгово-экономических отношений наряду с различными факторами (среди которых также общий язык, расстояние, история, религия, наличие общих протяженных границ, отсутствие войн) имеет количество дипломатических представительств. РФ в Иране имеет посольство, 2 генеральных консульства в Реште и Исфахане, торговое представительство в Тегеране; на территории РФ действует посольство ИРИ, а также 2 генеральных консульства в Астрахани и Казани. Очевидно, что учитывая нулевые показатели по таким факторам как: наличие общего языка, истории и отсутствие сухопутной границы, чтобы достичь более высоких показателей уровня товароборота, необходимо улучшить функционирование уже существующих представительств и/или увеличить их количество.

При выстраивании двусторонних отношений немаловажную роль играл и играет уровень взаимодействия с США. Стоит отметить, что в Стратегии национальной безопасности США от 2017 года Иран и Россия наряду с Китаем включены в список сил, бросающих вызов

²⁹ Внешняя торговля России с Ираном за 9 месяцев 2018 г. , <http://russian-trade.com/reports-and-reviews/2018-11/vneshnyaya-torgovlya-rossii-s-iranom-za-9-mesyatsev-2018-g/>

³⁰ Там же.

³¹ Rose K., "The Foreign Service and Foreign Trade: Embassies as Export Promotion", 2007, The World Economy, Blackwell Publishing, vol. 30(1), pages 22-38.

существующему миропорядку; а 2018 год ознаменовался торговой войной крупнейших экономик мира – КНР и США. Все эти факты вписываются в русло совместного заявления³² властей Китая и России (после выхода США из СВПД) о приверженности СВПД и МАГАТЭ как независимой структуры, которая заявляет, что Иран соблюдает взятые на себя международные обязательства. Очевидно, что Китай играет значительную роль в выстраивании политического и экономического вектора РФ и ИРИ. Например, объем товароборота между Китаем и Ираном в 2017 году превысил 37 млрд. долл.³³, тот же показатель для Ирана и России в 2017 году равнялся всего 1,7 млрд. долл., в 2017 г. Китай являлся ведущим торговым партнером России³⁴ и Ирана, скорее всего, эта тенденция останется актуальной в ближайшие годы.

Итак, подводя итоги, можно отметить, что на самом деле ИРИ и РФ обладают довольно внушительным потенциалом для развития отношений в самых различных сферах и на различных площадках. Несмотря на это, существует ряд проблем, связанных как с внутренней и внешней политикой стран, схожей структурой экономик, так и с деятельностью иных акторов. Добиться улучшения сотрудничества можно не только при помощи экономических и политических проектов, но и с помощью развития туризма и использования «мягкой силы», интересно, что в начале 2018 года ярко выделилась такая статья экспорта России в Иран, как кино-

³² Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики на второй сессии Подготовительного комитета Конференции 2020 г. по рассмотрению действия ДНЯО по вопросу Совместного всеобъемлющего плана действий по урегулированию ситуации вокруг иранской ядерной программы, Женева, 2018, http://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/3209161

³³ Iran, China plan to increase mutual trade to \$50 billion in 2018, <https://www.mehrnews.com/>

³⁴ О текущей ситуации в экономике Российской Федерации в январе 2018 г. в части внешнеэкономической деятельности, 2018, http://www.ved.gov.ru/monitoring/foreign_trade_statistics/monthly_trade_russia/

фототовары³⁵. Известно, что у Ирана довольно тесные отношения также и с такими российскими городами, как например, Астрахань, где, как уже упомянуто, есть генеральное консульство. Президент Х. Роухани в своих интервью неоднократно говорил о возможном введении русского языка как иностранного в большом количестве школ. Такой шаг может стать действенной платформой для создания важнейшего демографического ресурса для дальнейшего сотрудничества.

Анализ состояния двусторонних отношений показал, что существует огромный потенциал для их развития, но, к сожалению, есть и определенные сложности, которые включают в себя как относительное недоверие сторон, что обусловлено многовековой историей, так и отсутствие идеи развития двустороннего сотрудничества в качестве одного из приоритетных направлений внешней политики обеих стран. Но ряд международных кризисов, сложности в построении отношений с иными акторами, стремление развивать энергетику, взаимодействие в сфере ВПК, желание вести относительно независимую внешнюю политику привели к заметному улучшению двустороннего взаимодействия России и Ирана в последние годы.

В углублении развития двусторонних отношений РФ и ИРИ особое место принадлежит ядерной сфере. В 2018 г., казалось бы решенный после достижения СВПД вопрос ядерной программы ИРИ вновь встал на повестке дня в связи с выходом США из СВПД и введением вторичных санкций. Данный фактор также сближает Россию и КНР с ИРИ. Укреплению сотрудничества между ИРИ, РФ и КНР способствует также их общая позиция относительно приоритета суверенитета. Так называемый поворот Ирана на Восток обусловлен также тем, что КНР и РФ, в отличие от европейских стран не требуют отказа от идеи экспорта Исламской революции и не делают

негативных заявлений о ситуации с правами человека³⁶ в ИРИ.

В последние годы в развитии двусторонних отношений отмечается положительная динамика, но достигнутый уровень далек от стратегического партнерства. С другой стороны вопрос стремления к стратегическому партнерству, скорее всего не стоит, а в случае России может поставить под удар развивающееся взаимодействие с Израилем и Саудовской Аравией. Россия и Иран имеют еще одну основу для тесного взаимодействия – стремление к обеспечению региональной безопасности при участии исключительно региональных акторов. Центральная Азия, Южный Кавказ, Ближний Восток – все это регионы, в которых оба государства имеют свои интересы, которые не всегда, и скорее, не часто совпадают. Такие акторы как КНР и ЕС и США являются важнейшими при выстраивании отношений России и Ирана, поэтому динамика двустороннего взаимодействия во многом зависит от сотрудничества с иными акторами, и это показатель не достаточно устойчивого партнерства. В немалой степени углублению взаимодействия двух стран в торгово-экономической сфере мешает коррупция, которая и без того комплексные процессы делает практически нереализуемыми без финансовых вливаний. Посол ИРИ в РФ М. Санаи указывает на низкий уровень развитости туризма между странами³⁷. Развитие туризма поможет интенсифицировать применение такого инструмента, как народная дипломатия, что может сыграть ключевую роль в укреплении двусторонних отношений.

Описанные выше выводы можно сгруппировать следующим образом:

- ✓ У обоих государств близкие позиции по ряду региональных вопросов
- ✓ Санкции, введенные против ИРИ или РФ, могут сказаться на

³⁵ Внешняя торговля России с Ираном за 9 месяцев 2018 г., <http://russian-trade.com/reports-and-reviews/2018-11/vneshnyaya-torgovlya-rossii-s-iranom-za-9-mesyatsev-2018-g/>

³⁶ Rezai F., Iran's Foreign policy After the Nuclear Agreement, Middle East Today, 2017, p. 54.

³⁷ "Мнение": посол Ирана Мехди Санаи о взаимоотношениях с Россией, <https://www.vesti.ru/videos/show/vid/744605/cid/5/>

- двусторонних отношениях как позитивно, так и негативно
- ✓ Ярче выражена зависимость характера российско-иранского сотрудничества от развития ситуации вокруг ЯП ИРИ
- ✓ Выход США из СВПД и ужесточение односторонних санкций сближает позиции КНР, РФ и ЕС в вопросе ЯП ИРИ
- ✓ Существующий уровень отношений нельзя назвать стратегическим партнерством
- ✓ При выстраивании двусторонних отношений высока роль таких акторов как ЕС, США, КНР, а также ряда компаний, связанных с добычей, переработкой и транспортировкой углеводородов
- ✓ Особая роль в российско-иранском сотрудничестве принадлежит энергетической и военно-технической сфере

**ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՄԱԼԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՂ ՊԼԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

**Բրուտյան Անուշ
(Ամփոփում)**

«Համատեղ գործակցության համապարփակ պլանի» (ՀԳՀՊ) ստորագրումը կարևոր էր ոչ միայն Իրանի, այլ նաև մի շարք միջազգային դերակատարների համար: Այս հոդվածում ուսումնասիրվել են Ռուսաստանի և Իրանի միջև համագործակցության հիմնական ուղղությունները, նշվել են փոխհարաբերությունների հիմնական ոլորտները, ինչպես նաև ընդգծվել են այն գործոնները, որոնք կարող են և դրական, և բացասական ազդեցություն ունենալ երկկողմ հարաբերությունների վրա: Հատուկ ուշադրություն է դարձվել երկկողմ հարաբերություններում նոր հեռանկարների հնարավորություններին, որոնք բացվեցին 2018 թ.-ի մայիսին

ստորագրված Ժամանակավոր պայմանագրի (ինչն էլ պետք է հանգեցնի ԵԱՏՍ և Իրանի միջև Ազատ առևտրի գոտու ստեղծմանը), ինչպես նաև Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին Կոնվենցիայի ստորագրման արդյունքում: Հատուկ շեշտադրում է արվում այն հանգամանքին, որ միջազգային քաղաքական իրադրությունը որոշիչ գործոն է, ուստի ռուս-իրանական երկկողմ հարաբերությունները պետք է դիտարկվեն աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների համատեքստում:

**PERSPECTIVES FOR RUSSIA-IRAN COOPERATION
AFTER THE JCPOA**

**Brutyán Anush
(Summary)**

The JCPOA achievement became an important occasion not only for the IRI but also for the group of other international actors. The author has examined alternative spheres for cooperation and highlighted the existing ones that may be boosted via range of tools. In this paper different factors are considered as leverages that may have both positive and negative impacts on bilateral relations. The US withdrawal from the Iran nuclear deal and new package of sanctions have affected on the positions of different actors. During 2018 Iran and Russia have become more tied via the Interim agreement signed between the EAEU and Iran and the Convention on the legal status of the Caspian Sea. Two states have enlarged their cooperation in the frames of the Astana format and numerous other arrangements. It is highlighted in this article that in order to understand perspectives for cooperation we should take into consideration the existing narrative, background and different current flows of interaction in numerous spheres.

ON THE LOCATION OF THE HEPHTHALITES

Key words: Hephthalites, Chionites, "Red-Hyons", "White Hyons", Alkhons, Valkhons.

The primary sources about the Hephthalites contain numerous records which are extremely contradictory and ambiguous. Procopius of Caesarea, calling Hephthalites "White Huns" writes down: "Although the Hephthalites are a Hunnish people and are so called, they do not mix and associate with those Huns whom we know, for they do not share any frontier region with them and do not live close to them... They are not nomadic like the other Hunnish peoples, but have long since settled on fertile land... They alone of the Huns are white-skinned and are not ugly. They do not have the same way of life and do not live such bestial lives as the other Huns, but are ruled by one king and possess a legal state structure, observing justice among themselves and with their neighbours in no lesser measure than the Byzantines and Persians"¹. It is clear from the record of the historian that geographically Hephthalites were located far from the so-called Western Huns and had nothing common with the latter, but at the same time were distinguished by their white complexion and not ugly appearance. Procopius of Caesarea considers Hephthalites as a settled people who were ruled by one king and had a legitimate state. Information provided by the Byzantine historian shows that Hephthalites differed from other Huns not only in appearance but also in living, and they yielded to neither Romans nor Persians with respect to the level of state governance. The detailed and well-grounded messages of the well-informed historian

* Leading Researcher of the Institute of Oriental Studies, Candidate of Historical Sciences, PhD, Docent (National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan, Armenia); E-mail: hovhkor78@mail.ru

¹ Procopius. ex recensione G. Dindorfii, Vol. I, Bonnae, 1833, De Bello Persico, I, 3, pp. 15-16. Another Byzantine historian Agathias briefly writes: "The Hephthalites are a Hunnish people" (Agathiae Myrinaei Historiarum libri quinque, Bonnae, 1828, p. 267).

have exceptional significance. Still, despite all this the author says nothing about the origin of Hephthalites. From the description given by Ammianus Marcellinus (19, 1, 7; 19, 2, 3) and Procopius, it is obvious that the Chionites and Hephthalites presented to them different from the Huns. Giving them a common name "White Huns" brings those names together². "White Huns", Hephthalites in Procopius' view, inhabit the areas north of Gorgo (Gurgan), also known to Priscus of Panium as areas inhabited by Kidarites³.

Menander and Theophanes of Byzantium also give important information about the Hephthalites. Menander saved a message of the Turkish Embassy saying that the Hephthalites are an "urban tribe". According to him, Turks who won over the Hephthalites, became "masters of their cities"⁴. Theophanes of Byzantium says, that after the victory over the Persians, the Hephthalites became masters of the cities and harbours formerly owned by the Persians. Soon after, the Turks defeated them in a battle and took those of them⁵.

But Chinese chronicles convey a different message. Ye-da-Hephthalites "do not have cities and live in places free from grass and water in the felt tents". Traveler Song Yun writes that Ye-da-Hephthalites do not possess fortified towns, they live a nomadic life⁶. These two conflicting messages are joined in the story about Hsi-mo-ta-lo (a Sanskritized form of the ethnonym, Heptal) by Hsüan-tsang. The inhabitants of this region, that is Hephthalites, lived in tents made of

² Pigulyevskaya N., Siriyskie istochniki po istorii narodov SSSR [Syrian sources on the history of the nations of the USSR], M.-L., 1941, pp. 37, 47.

³ Procopius, I, 3; Müller C., Fragmenta Historicorum Graecorum, Vol. IV, Parisii, 1868, pp. 105, fr. 31; 106, fr. 33.

⁴ Ibid., pp. 225-226, fr. 18.

⁵ Ibid., pp. 270-271, fr. 3. "And Ephtalan, king of Hephthalites, from whom the whole kin got the appellation, defeated Peroz and Persians". Perhaps the word "Ephtalan" (Chinese Yen-tai-i-li-t'o) formed a sort of a throne name which was added to the proper name of the ruler, just as the Parthian kings were named Arshak (Masson V., Romodin V., Istorija Afganistana [The History of Afghanistan], Vol. I, M., 1964, p. 205.

⁶ Beal S., Buddhist records of the Western World, Vol. I, London, 1906, pp. XC-XCI; Enoki K., On the Nationality of the Hephthalites, "Memoirs of the Research Department of the Toyo Bunko", Tokyo, 1959, № 18, p. 50.

animal skins and roamed from place to place. However, it is reported that in the past they had conquered a lot of countries where “they ruled over a great number of highly reinforced towns and settlements”⁷. Thus, it is not excluded that the Western writers perceived Hephthalites as an urban population, as they possessed cities, and at a later stage Hephthalitian nobility were apparently settled in cities⁸. In our opinion contradiction among the sources is conditioned by the fact that the messages relate to not only Hephthalites as such, but also to different tribes and peoples that were part of the huge state created by Hephthalites, who despite their ethnic origin were perceived by some ancient authors as Hephthalites, thus causing numerous contradictions. And this is true only for those nomadic and gang tribes who used to roam along the country’s borders and raid on neighbouring states. So, these tribes could have been called Hephthalites in ancient sources, meantime some sources, mainly Byzantine ones, considered Hephthalites as a sedentary people.

The Chinese sources contain a lot of theories about the origin of Hephthalites. However, they lack unanimity. Information of Chinese sources can be divided into the following groups: a) Hephthalites are descendants of Yuezhi; b) Hephthalites are a branch of the Turkic Gaoju tribes; c) Hephthalites descended from Ch’e-shih tribes (Turfan); d) they are descendants of K’ang-chü⁹. One of the ancient Chinese authors, referring to the origin of Hephthalites, states: “Information received from distant countries and [peoples speaking] foreign languages, is subject to misunderstanding and distortion, and also refer to the events of very ancient times. Consequently, we do not know how exactly it was. [This way] it is impossible to resolve [the issue of] the origin of Hephthalites”¹⁰. Japanese scientist K.Enoki had to come to an absolutely analogous conclusion: the

Chinese authors did not know the true origin of Hephthalites, and their theories have a “bookish and as a rule quite an arbitrary character”¹¹.

Some scholars consider Hephthalites as descendants of the Yüeh-chih, others think they descended from the Huns, belong to ancient Turks or Mongols. There is also a theory regarding their Iranian-speaking origin. According to some researchers, they are a nation very different from the Chionites, while others prove their identity or consider Hephthalites as the “ruling class” of Chionites¹².

In addition to “White Huns”, Hephthalites are called differently in different sources. In Syrian sources, they are named *Abdel* and *Eptalit*; in Greek-language sources- *Abdel* and *Hephthalites*; in Armenian-*heptal*, *Idal*, *tetal*; in Middle Persian-*eftal* and *heftal*, in Arabic-*haital* and *yaftal*, in Tajik-Persian-*hetal* and *Haital*; in Chinese -*Ye-da* (which in ancient times sounded **iep-tat*) and *I-tien* (in ancient times sounded **iep-t’ien*)¹³. In

¹¹ Ibid., pp. 1-14; Enoki K., The Origin of the White Huns or Hephthalites, “East and West”, VI, 1955, № 3, pp. 232-235.

¹² Ghirshman R., Les Chionites-Hephthalites, Le Caire, 1948, pp. 10-21, 115; Enoki K., On the Nationality of the Hephthalites, pp. 15-23; Gafurov B., The Tajiks..., p. 206. “It has been argued that the Chionites were Iranians, based on the derivation of their name in Pahlevi, *Hyon*, from Avestan *Hyaona*” (Wolfgang F., Chionites, in Ehsan Yarshater, ed., Encyclopaedia Iranica, 5. Costa Mesa: Mazda Publishers, p. 485 and others). “The name Hephthalites, which appears in Chinese as well as Greek sources, was the dynastic appellation, adopted towards the end of the 5th century, either of a people or-less likely-of a country called Avar or Var. The Chinese transcription of the name (modern *hua*) would allow both readings. ...the Hephthalites were not invaders but had been, for some time, part of the region’s population” (“The Cambridge History of Early Inner Asia”, Cambridge University Press, 1994, pp. 298-299). Analyzing the sources of the 4-7th centuries, K. Trever came to the conclusion that “at the time of Hephthalites the country and the people continued to be called Kushan, and Hephthalite were the army and the king, i.e. the top of the society and some part of the troops apparently belonging to a different tribal union” (Trever K., Kushany, khionity i eftality po armyanskim istochnikam IV-VII vv. [Kushans, Chionites, Hephthalites according to Armenian sources of the IV-VII centuries], “Soviet Archaeology”, Vol. XXI, M.-L., 1954, pp. 135, 143.

¹³ Pigulevskaya N., Syrian Sources on the History of the Peoples of the USSR, p. 49; Gafurov B. Tajiks..., p. 206. Some researchers believe that the name of Hephthalites is preserved in the name of the largest group of Afghan tribes-Abdal. See Marquart J., *Erānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac’i*, Berlin, 1901, S. 253; Gankovskiy Y., *Narody Pakistana (Osnovnye etapy etnicheskoi istorii)* [The Peoples of Pakistan (The Main Stages of the Ethnic History)], Moscow, 1964, pp. 129-130.

⁷ Enoki K., On the Nationality of the Hephthalites, p. 35.

⁸ Gafurov B., *Tadzhiki. Drevneishaya, drevnyaya i srednevekovaya istoria* [The Tajiks: Prehistory, Ancient and Medieval history], Moscow, 1989, p. 210.

⁹ Ibid., p. 205.

¹⁰ Enoki K., On the Nationality of the Hephthalites, p. 7.

Pahlavi-Zoroastrian sources, they sometimes stand out as *hyons*, in Indian as *huna*, the Arab sources often by mistake call them Turks, and ancient Armenian sources mix them with the Kushans. F. Altheim tries to deduce this ethnonym from a Turkic root meaning “to do”, “to perform”¹⁴, but this etymology seems unlikely. Another explanation – deriving from Iranian-*hapta* (“seven”) – is also proposed¹⁵.

In the X century Balami wrote: “*Heyatele* is the plural of *Haital*, which in the language of Bukhara means “a strong man”. “Force” in the language of Bukhara is *haital*, and this word in the Arabic language has changed into “*haital*”¹⁶. Indeed, the closest word in the Eastern Iranian Khotanese Saka language means “brave, valiant”¹⁷.

From the inscriptions on the Hephthalite coins we can infer the following regarding the issue: The Hephthalites originally called themselves Hyon (OIONO on coins = Hyon¹⁸), therefore Hephthalites are one of the branches of Chionites who were Iranian-speaking tribes of the Central Asian origin¹⁹. Judging by the coins, Bactrian remained the official language of Hephthalites in their Tokharistan possessions. Self-evident Bactrian titles are read in coin legends²⁰.

One should also dwell on the division of Hephthalites into two parts. In contemporary literature this issue was most thoroughly and in details investigated by H. Bailey. The Pahlavi texts were the starting point for his

¹⁴ Altheim F., *Geschichte der Hunnen*, Bd. I, 1959, S. 44.

¹⁵ Maenchen-Helfen O., *The Ethnic Name Hun*, “*Studia Serica Bernhard Karlgren dedicate*”, Copenhagen, 1959, p. 231.

¹⁶ *Chronique de Tabari*, traduite sur la version persane Bel’ami, ed. H. Zotenberg, tom deuxième, Paris, 1869, p. 128.

¹⁷ Livshits V., *K otkrytiyu baktriyskikh nadpisey na Kara-Tepe* [On the opening of the Bactrian inscription at Kara-Tepe], “*The Buddhist caves in Old Termez. The resume of the works of 1963-1964. Inscriptions, terracotta, stone*”, Moscow, 1969, p. 67, note 103.

¹⁸ Frye R., *Nasledie Irana* [The Heritage of Persia], Moscow, 1972, p. 310.

¹⁹ Frye R., *The Heritage of Persia*, p. 311; Gafurov B., *Tajiks...*, p. 205. See also Ambartsumian A., *Khionity i eftality po dannym srednepersidskikh istochnikov* [The Chionites and Hephthalites according to the middle persian sources], “21st International Conference on Source Study and Historiography of Asian and African countries”, Saint Petersburg State University, April 3-5, 2001, pp. 1-2.

²⁰ Henning W., *The Bactrian inscription*, “*Bulletin of the School of Oriental (and African) Studies*”, Vol. XXIII, part 1, London, 1960, p. 51; Livshits V., *On the opening of the Bactrian inscription at Kara-Tepe*, pp. 67-71.

arguments. “*Jamasp-Nameh*” (96) contains information about the battle between Iran and the “White Hyons”. Then (104) a success report is given, “(ud druwandān ud dēw ud hyōnān ēdōn bē abesihēnd...) Carriers of evil, the Devils and Hyons were destroyed, just as the winter wind blows the leaves from the trees”²¹. “*Bahman-Yasht*” (II, 49), on the contrary, reports of the Sassanid defeats: “The kingdom and the sovereignty passed to the slaves who were not Iranians, they were like *Hyōn*, Türk, Heftal, Tibetans, Mountaineers, Chinese, Sogdians, Byzantines, *Red Hyōns and White Hyōns*. They became kings in Iran, my homeland”²². If the first of the above mentioned texts speaks of “White Hyons” only, the second mentions just Hyons (standing by the Turks), as well as “Red Hyons” (Karmir Hyon) and “White Hyons” (Spet Hyon). According to the commentator of “*Bahman-Yasht*”, they owe the appellation “Red Hyons” to red headgear, red armor and a red flag. Indian sources also contain records of the red (or dark) *huna* and white *huna* (in Indian sources *Huna* are Hephthalites). Finally, in the poem of the VII century in the Khotanese Saka language there is a reference to some nation the name of which deciphers as *Red Caps*. H. Bailey identifies it with the *red hyons*. In this connection it is also necessary to call to Western data sources (for example, Procopius of Caesarea, I, 3). At the same time, some Kermihions (Κερμιχίωνες) figure in the works of Byzantine authors. As H. Bailey showed it is the same nation that in Pahlavi sources is called *Karmir Hyon*²³. Chinese sources know the “Huni”-Chionites in the country of Sughd, over which they ruled. The Persians later passed the name Chionites to Turkuts who were subordinate to them and whom they called “Kermihion” (worms-Chionites). In 563 an

²¹ Ambartsumian A., *Problema plemeni khyaona po dannym drevneiranskikh i sredneiranskikh istochnikov* [The Problem of the Hyaona tribe according to the old iranian and middle iranian sources], “*Acta Institutionis Orientalis*”, № 2 (12), Vol. 6. St. Petersburg, 2000, p. 9.

²² Bailey H., *Iranian studies*, “*Bulletin of the School of Oriental and African Studies (BSO(A)S)*”, Vol. XI, pt. 4, 1932, pp. 945-946.

²³ Bailey H., *Hārahūna*, “*Asiatica. Festschrift Fr. Weller*”, Leipzig, 1954, pp. 13-20. Theophanous of Byzantium writing about “Kermihion” reports (Κερμιχίωνός fr. 2) that to the East of Tanais are the Turks who in ancient times were called Massagetae; on the language of Persians these Turks were called Kermihion.

embassy from Kermihions²⁴ living near the Ocean among the Avars came to Constantinople. In this case, Turkuts who lived in the land of the Avars in the Aral-Caspian steppes are meant. The Ocean stands for the Caspian Sea, which was considered to be the bay of the ocean surrounding the land and mingling with the Aral Sea²⁵.

We hardly know anything about these two groups of Hephthalites: whether they were different tribes forming part of a general confederation or they were some ethno-anthropological types within a single tribal massif²⁶. Meantime, it is significant that in mural painting recently opened in Afrasiab (in Samarkand) showing the arrival of the embassy, there are figures of two ambassadors, distinguished primarily by the skin color ("red-faced" and "white-faced"). According to V. Livshits, it is reasonable to compare these images with "Red-Hyons" and "White Hyons"²⁷. On the basis of Byzantine sources, especially those of Procopius of Caesarea, we think that the mentioned characteristics describe two different ethno-anthropological types, one of which "Red Hyons" are probably related to Huns, that is Turkic or Mongolic anthropological type, and the "white Hyons" referring to the Eastern Iranian tribes.

The Hephthalite script is a direct continuation of the Kushan (Bactrian) and it differs from the Kushan by a more developed italic type²⁸. It was about the Hephthalite written language that Hsüan-tsang wrote: "[Their] language and letters differ somewhat from those of other countries. The number of radical letters is twenty-five; by combining these they express all objects around them. Their writing is across the page, and they read left to right. Their literary records have increased gradually, and

exceed those of [the people of] Su-le or Sogdiana"²⁹. However, few of these "literary works" are left. Hephthalite, in particular, are fragments of manuscripts from Eastern Turkestan³⁰. Some of them are apparently dated the VII-VIII centuries, but all trials to read connected text have failed. Some linguists consider their language to be Saka, others-Bactrian³¹. Hephthalite inscriptions were found in Central Asia³².

In many ways reading of inscriptions on Hephthalite coins and gems remains controversial. The interpretation of this material is usually possible with the help of Iranian etymologies and indicates that the language was East-Iranian³³. Given this, the supporters of Hunnish-Turkic origin of Hephthalites now explain the presence of clearly Iranian words by the fact that some elements of the language of the Iranian population subordinate to them penetrated into the language of Hephthalites which was originally Turkic (or Mongolic)³⁴. There is practically no serious reason to consider Turkic³⁵ (or Mongolic) as the language of Ephtalites, it was almost

²⁴ "The Cambridge History of Early Inner Asia", p. 302.

²⁵ Artamonov M., *Istoriya khazar* [History of the Khazars], Leningrad, 1962, p. 107.

²⁶ Gafurov B., *Tajiks...*, p. 207.

²⁷ Livshits V., *Nadpisi na freskakh iz Afrasiaba* [Inscriptions on the frescoes from Afrasiab], "Theses of session reports on history of painting in the Asian countries", Leningrad, 1965, p. 6.

²⁸ Sims-Williams N., *The Sasanians in the East. A Bactrian archive from northern Afganistan*, "The Sasanian Era. The Idea of Iran", Vol. III, ed. by V. S. Curtis and S. Stewart, London, 2008, p. 88.

²⁹ "History of Civilizations of Central Asia", Vol. III, Editor: B. A. Litvinsky, UNESCO Publishing, Paris, 1996, p. 136; Beal S., *Buddhist records of the Western World*, p. 38; Pelliot P., *Tokharien ou Koutchéen*, "Journal Asiatique", t. CCXXIV, 1934, p. 50.

³⁰ Hansen O., *Die Berliner Hephthaliten-Fragmente*, "F. Altheim. Aus Spätantike und Christentum", Tübingen, 1951; Gershevitch I., *Bactrian inscriptions and manuscripts*, "Indogermansiche Forschungen", "Zeitschrift für Indogermanistik und allgemeine Sprachwissenschaft", 72 Bd., ½, Hft. Berlin, 1967, pp. 27-57; Livshits V., *Cusano-Indica*, "Hellenistic Near East, Byzantine Empire and Iran. History and Philosophy. Collection in honour of N. Pigulevskaya", Moscow, 1967, p. 163.

³¹ Gafurov B., *Tajiks...*, p. 208.

³² *Ibid.*, p. 208.

³³ Bailey H., *Thaugara*, "BSO(A)S", Vol. VIII, pt. 4, 1937, pp. 892-893 (titles of the coin legends is Iranian); Enoki K., *On the Nationality of the Hephthalites*, p. 39-45; Ghirshman R., *Les Chionites-Hephthalites*, pp. 67, 117-118; Maenchen-Helfen O., *The ethnic Name Hun*, pp. 227-231; Gumilev L., *Eftality i ikh sosedi v IV v.* [Hephthalites and their Neighbours in the IV century], "Review of Ancient History", 1959, № 1, p. 132; Enoki K., *On the Nationality of the Hephthalites*, pp. 1-58.

³⁴ Altheim F., *Geschichte der Hunnen*, I, SS. 41-54; Pulleyblank E., *The Consonantal System of Old Chinese*, "Asia Major", N. S., Vol. IX, pt. 1, 1962, pp. 259-260.

³⁵ In the illustration of Pei shih there is a direct indication that the language of Hephthalites is not Turkic. See Pelliot P., *L'origine de T'ou-kiue, nom chinois des Turcs*, T'oung Pao, 1915, p. 688.

undoubtedly East-Iranian³⁶. Therefore, as R. Frye thinks we may consider the Hephthalite Empire of the Eastern Iran and Northwestern India as predominantly Iranian³⁷.

It is also necessary to address the question of the place of addition of Hephthalites. A. Bernshtam, speaking of ethnogenesis and the addition of statehood of Hephthalites, pointed out two centers: the middle and lower Syr-Darya on the one hand and Amu-Darya upper basin on the other³⁸.

Japanese scientist K. Enoki not only made a critical revision of the entire set of existing material, but also brought new data from Chinese sources. K. Enoki's findings were as follows: a) The original homeland of Hephthalites was near the eastern edge of Badakhshan, and b) their culture contained some Iranian elements. Without adding new arguments to the concept of K. Enoki, L. Gumilev³⁹ develops a similar idea about the origin of Badakhshan Hephthalites. In the final analysis this hypothesis also originates in Chinese sources, exactly to the tradition that was saved by Hsüan-tsang in the story about Badakhshan country of Hsi-mo-ta-lo (the Sanskritized form of the word "Hephthalite" or any of its variants), the king of which won many countries⁴⁰. However, this tradition may date back to the tradition of Yuezhi conquests, and then, consequently, one cannot rely on it as a proof of the extension of power of Badakhshan Hephthalites⁴¹. To

³⁶ Frye R., *The Heritage of Persia*, p. 311; Gafurov V., *Tajiks...*, p. 208; Masson V., Romodin V., *History of Afghanistan*, pp. 206-207; Gankovskiy Y., *Peoples of Pakistan*, pp. 129-130; Gumilev L., *Eftality-gortsy ili stepnyaki?* [Hephthalites –mountain dwellers or steppe inhabitants?], "Review of Ancient History", 1967, № 3, pp. 91-99; "History of Civilizations of Central Asia", Vol. III, pp. 135, 148; A. N. Garkavets, *Velikaya step' v antichnykh i vizantiyskikh istochnikakh. Sbornik materialov* [The Great Steppe in the Ancient and Byzantine Sources. Collected Materials], Almaty, 2005, p. 556

³⁷ Frye R., *The Heritage of Persia*, p. 311; Frye R., *The History of Ancient Iran*, München, 1983, p. 347.

³⁸ Bernshtam A., *Ocherk istorii gunnov* [Essay on the History of the Huns], Leningrad, 1951, p. 197.

³⁹ Gumilev L., *Hephthalites and their Neighbours in the IV Century*, pp. 129-140; Gankovskiy Y., *Peoples of Pakistan*, pp. 82-83. The toponym Yaftal in Badakhshan and probably that of Medieval Huttalyan estate in Southern Tajikistan came from the name of Hephthalites ("Osnovy iranskogo yazykoznanija. Sredneiranskije yazyki ["Fundamentals of Iranian linguistics. Middle Iranian languages"], Moscow, 1981, p. 316.

⁴⁰ Enoki K., *On the Nationality of the Hephthalites*, p. 35; "An Historical Atlas of Central Asia", by Y. Bregel, Brill, Leiden, Boston, 2003, p. 12.

⁴¹ Gafurov B., *Tajiks...*, p. 209.

confirm the Badakhshan hypothesis further facts⁴² are required. Perhaps archaeology will provide them⁴³.

R. Frye does not accept Badashkhan as a homeland of Hephthalites. In his opinion, the appellation "Hephthalite" and the name of Hephthalite king Akhshundar may be explained as Iranian, the Turkic etymology of the name Akhshundar–*axsung er* mentioned by Mahmud al-Kashgari (I, 106, 3) is hardly reliable. The name of another Hephthalite king, Varz should probably be read as Varaz, as during the Arab conquest the name was quite common in Hephthalite princes, whose possessions bordered with the Sassanid Iran in the areas of Merv and Merve-Rud. One may recall the Sassanid feudal clan of Varaz, the appellation of which the Byzantine authors often mistook as a title⁴⁴.

In pre-revolutionary Russian literature K. Inostrantsev paid attention to the similarity of the stone vaults–"mughona" with sepulchral structures, which, according to written sources, Hephthalites possessed⁴⁵. Studying "mughona" and other types of sepulchral structures, in particular barrows burial in wooden coffins (according to Chinese sources, they were also common with Hephthalites), as well as looking at some other facts B. Litvinsky came to the conclusion that the tribes of the piedmont areas of Fergana, who had exactly these kinds of burials played a significant role in the addition of Hephthalite tribes⁴⁶.

S. Tolstov believes that Hephthalites are natives of the Aral Sea region. In the last statement of this theory, he wrote: "We must assume that in the IV-V centuries deltas of Amu-Darya and Syr-Darya were the center

⁴² Gumilev L., *Hephthalites –mountain dwellers or steppe inhabitants?*, pp. 91-99.

⁴³ Babaev, A., *Kreposti i pogrebal'nye sooruzheniya drevnego Vakhana (Ishkashimskiy rayon GBAO)* [Castles and Burial Structures of the Ancient Wakhan (Ishkashim Region)], Ph.D.dissertation, Dushanbe, 1965, pp. 16-18.

⁴⁴ Frye R., *The Heritage of Persia*, pp. 311-312; Frye R., *The History of Ancient Iran*, p. 316; Christopher I. B., *Empires of the Silk Road*, Princeton University Press, Princeton and Oxford, 2009, p. 123.

⁴⁵ Inostrantsev K., *O drevneiranskikh pogrebal'nykh obychayakh i postroykakh* [On the Ancient Iranian Burial Customs and Buildings], "Journal of the Ministry of Public Enlightenment", № 3-4, St.Petersburg, 1909, pp. 116-120.

⁴⁶ Gafurov B., *Tajiks...*, p. 209.

of the “barbaric state” of Chionites-Hephthalites that emerged in the ancient Sako-Massagetian substrate with a strong admixture of Eastern Hunno-Turkic elements⁴⁷. Despite S. Tolstov’s assertion, the Aral-forland has never been the center of the state of Chionites or Hephthalites⁴⁸.

L. Gumilev believed that Hephthalites were not nomads of the Central Asian steppes but mountain dwellers of the Pamirs and Hindukush⁴⁹.

In the long recension of the Armenian *Ašxarhacoyc* (Geography) after the Hephthalites the Alkhons and the Valkhons are mentioned. They lived in the cities of the same name near a great river called Dumos. It becomes clear from the source that the mentioned peoples were situated in mountaneous areas. The Hephthalites, Alkhons and Valkhons are mentioned after the Tokhars. The Hephthalites mentioned after the Tokhars are placed in Badakhshan, in the neighbourhood of Tokharstan, which is accepted by some other researchers as well. From the records of *Ašxarhacoyc* it is clearly seen that under the name of Hephthalites the author meant not the area of the state established by Hephthalites, but their narrow circle of habitation. Moreover, in *Ašxarhacoyc* Turkestan implying Northern countries is placed to the north of Sogdiana and Hephthalites⁵⁰.

In specialized literature the Valkhons are identified⁵¹ with *Uar and Huni tribes⁵² mentioned by Theophylactus Simocatus and with *Οὐαρχῶνται* mentioned by Menander⁵³. The Avars that appeared in Europe

represented part of the Ogor-Ugrians fleeing from Turkuts and consisting of Uar and Huni tribes. The name of the first of them is consonant with the name Avar, thus causing inaccuracy advantageous for the fugitives⁵⁴.

There are also such opinions about Alkhons. R. Göbl has worked extensively on the coinage of the east in the immediate pre-Islamic period, and he appears to be correct in postulating a series of “waves” of Central Asian invaders, whom he calls the Iranian Huns, beginning with the Chionites and Kidara, but followed by a tribe which he calls “Alkhon” from legends in debased Greek script on coins, and from the sole mention of their name as a Central Asian people in the Armenian geography which purports to be a re-working of Ptolemy. This identification, however, was opposed by Harmatta who claimed that the legend on the coin is to be identified with *rājā lakhāna*, perhaps a king of Kashmir mentioned in the Sanskrit chronicle of the kings of Kashmir, the *Rājataranginī*, and he further-more points to the coin with a bi-lingual legend where Bactrian *ΛΑΧΟΝΟ* has *rājā lakhāna* in Brahmi characters. Therefore, it is difficult to follow Göbl’s reconstruction of a dynasty of tribal chiefs of the Alkhon, with a reverse wandering of them from India back to Afghanistan after the year 600. Although probably a series of invasions of different peoples from Central Asia did take place in the period from 350 to 450, and there may have been a tribe called Alkhon, there is not enough evidence to do anything with a notice in an Armenian geography⁵⁵.

In the short recension of *Ašxarhacoyc* Alkhons and Valkhon are not mentioned. Only Hephthalites and other nameless tribes are mentioned there⁵⁶. The River Dumos as one of the tributaries of Iaxartes-Syr Darya is mentioned under the names Dymos⁵⁷ by Ptolemy and Dymas⁵⁸ by

⁴⁷ Tolstov S., *Po drevnim del'tam Oksa i Yaksarta* [Along Ancient Deltas of Oxus and Jaxartes], Moscow, 1962, p. 244. Cf. “Narody Srednei Azii i Kazakhstana” [“Peoples of Central Asia and Kazakhstan”], I, ed. by S. Tolstov, Moscow, 1962, p. 72; Masson V., Romodin V., *History of Afghanistan*, p. 200.

⁴⁸ Gafurov B., *Tajiks...*, p. 210.

⁴⁹ Gumilev L., *Hephthalites and their Neighbours in the IV century*, pp. 135-140.

⁵⁰ *Matenagirq Hayots* [Armenian Authors], Vol. II, Antilias-Lebanon, 2003, p. 2159; “The Geography of Ananias of Shirak (*Ašxarhacoyc*)”, *The Long and the Short Recensions*, Introduction, translation and commentary by R. H. Hewsen, Wiesbaden, 1992, p. 75.

⁵¹ Marquart J., *Erānšahr...*, S. 157.

⁵² *Theophylacti Simocatae Historiae*, ed. C. de Boor, Lipsiae, 1887, VII, 8, p. 258. By the ethno name “uar” used by Simocatus one should imply people, occupying area in the region of Kunduz city in Northern Afghanistan. The term “Huni” refers to the Hunnic tribes settled in Bactria. Haussig H., *Theophylaktis Exkurs über die skythischen Völker*, “Byzantion”, t. XXIII, 1953, SS. 304-305, 345-362, 413-429.

⁵³ Müller C., *Fragmenta Historicorum Graecorum*, Vol. IV, p. 246.

⁵⁴ Artamonov M., *History of the Khazars*, pp. 106-107.

⁵⁵ Frye R., *The History of Ancient Iran*, p. 348.

⁵⁶ *Matenagirq Hayots* (Armenian Authors), pp. 2174, 2191. See also “Ashkharhatsoits Vardanei Vardapeti [“The Geography (*Ašxarhatsoyc*) of Vardan Vardapet”], ed. H. Perperea, Paris, 1960, p. 70.

⁵⁷ Humbach H., Ziegler S., *Ptolemy Geography*, book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998, pp. 166-167.

Ammianus. Probably, to wide extend under the River Dymos one should understand the River Syr-Darya in the upstream known as Karadarya. Judging by the short recensions of Ašxarhacoyc Alkhons and Valkhons should be placed not in the neighbourhood of Hephthalites, but to the north of them. Reference of the River Dymos, as well as the description of Scythia in the long recension of Ašxarhacoyc to a certain extent carry the impact of Ptolemy Geography, consequently the Alkhons and the Valkhons should be searched with Ptolemy. It is interesting to mention that Hephthalites, Alkhons and Valkhons, according to the long recension, resided in cities bearing the same name. Consequently, the names of these cities should be looked for in Ptolemy Geography. The city of Alkhons may correspond to either Χοάνα or Αλιχόρδα⁵⁹. The city of Valkhons corresponds to the royal residence of Bactra⁶⁰, seat of kings also known as Bahl-Balkh. In case of this kind of identifications one should keep in mind that the River Dymos corresponds to not only Syr-Darya but also Amu-Darya as for example to the tributary of the latter, Zeravshan River. One should certainly bear in mind the fact that Ptolemy coordinates were formed based on the data from various guide-books and they are generally relative or simply incorrect, as the geographer has tried to adjust material of different eras. Accordingly, Ptolemy's records were not always identically reflected in the Armenian Ašxarhacoyc, thus causing numerous discrepancies. For example, instead of Ptolemy's Oxus River, the author of Ašxarhacoyc also mentions the name of the Wehrot River⁶¹ having in mind

⁵⁸ Ammianus Marcellinus, with an English translation by J. C. Rolfe, Vol. II, Cambridge, Mass.-London, 1972 (Loeb Classical Library), p. 381.

⁵⁹ Claudii Ptolemaei Geographia, ed. C. F. A. Noebbe, t. II, Lipsiae, 1845, VI, 11, 8; Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 158, 160. Ammianus mentions Αλιχόρδα by the name Alicodra (see Ammianus Marcellinus, p. 381).

⁶⁰ Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, p. 160. "Most likely in the view of Ptolemy or his source, there were two settlements called Bactra. First, the metropolis Bactra/Zariaspa identical to Balkh, and second, the royal residence of Bactra (Darapsa), identical to Baghlan and Surkh-Kotal, dynastic sanctuary of the Great Kushans (see Gumbakh G., Ptolemei I Tsentral'naya Aziya v kushanskuyu epokhu [Ptolemy and Central Asia in the Kushan Period], "Central Asia in the Kushan Period", Vol. II, Moscow, 1975, pp. 74-75.

⁶¹ The Geography of Ananias of Širak (Ašxarhacoyc), p. 74.

Amu-Darya and also knows Iaksartes⁶². In general, information relating to the Alkhons, Valkhons and the River Dymos is so obscure for the later writers of Ašxarhacoyc that this episode was not reflected in the short recension. And this happened in case when the Armenian sources could be informed in more details about these faraway lands for the only reason that the Armenian troops guarded the faraway borders of the Sassanid Empire. It so turned out as if some tribes were hid under the name of Alkhons and Valkhons. Observing the issue from this angle the following theory can be proposed. Having in view the rapid ethno-political developments taking place in Central Asia in the IV-VI centuries (and not only), one may assume that the Alkhons and Valkhons mentioned in Ašxarhacoyc is the collective name of barbarian tribes and nations of various origins in a pejorative sense, as the names of barbarian tribes Gog and Magog in Christian and Muslim traditions. For example, in the Armenian "History of the Country of Aluank"⁶³ Hephthalites are mentioned in line with the tribes living in the Northern Caucasus⁶³, but the Hephthalites resided in Central Asia and the ethnonym Hephthalites is used in a pejorative sense⁶⁴.

Thus, it is not excluded that the record about the Alkhons and Valkhons in the long recension of Ašxarhacoyc was added much later, when nomadic tribes moving from East to West in different eras were collectively called Alkhons-Valkhons, consequently their identification with concrete ethnoses is unacceptable and unfounded.

⁶² Ibid., p. 45.

⁶³ "The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranc'i", translated by C. J. F. Dowsett, London, 1961, p. 55.

⁶⁴ Hakobian A., Albaniya-Aluank v greko-latinskikh i drevnearmyanskikh istochnikakh [Albania-Aluank in the Greco-Latin and Ancient Armenian Sources], Yerevan, 1987, p. 73.

ՀԵՓԹԱՂՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

**Խորիկյան Հովհաննես
(Ամփոփում)**

Հեփթաղների կամ սպիտակ հոների մասին սկզբնաղբյուրներն ունեն բազմաթիվ տեղեկություններ, որոնք չափազանց հակասական են և ոչ միանշանակ: Հեփթաղներն էթնիկապես տարբեր են եղել արևմտյան հոներից և ունեցել են պետական կազմակերպվածության բարձր մակարդակ: Հողվածում մանրամասն քննվում են հեփթաղների տեղադրության տարբեր տեսակետները, ընդ որում՝ հայոց «Աշխարհացոյց»-ում հեփթաղներից հետո հիշատակվող Ալխոն և Վալխոն ժողովուրդների անուններն օգտագործվել են հավաքական առումով, ինչպես, օրինակ, Գոգ և Մագոգ բարբարոսական ցեղերի անունները քրիստոնեական և իսլամական ավանդություններում:

К ЛОКАЛИЗАЦИИ ЭФТАЛИТОВ

**Хорикян Ованнес
(Резюме)**

Первоисточники об эфталитах или белых гуннах содержат много информации, которые крайне противоречивы и неоднозначны. Этнически эфталиты отличались от западных гуннов и имели высокий уровень государственной организованности. В статье подробно исследуются различные мнения о местоположении эфталитов, кроме того в армянском «Ашхарацуйц»-е («Армянская География») упомянутые после эфталитов названия народов Алхон и Валхон собирательно использовались, как, например, имена варварских племен Гог и Магог в христианских и мусульманских традициях.